
Ա. Ա. Հակոբյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԼԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1921–1925 թթ.)




ՀԱՅԱՍՏԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. М. АКОПЯН

СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ПЕРИОД ВОССТАНОВЛЕНИЯ НАРОДНОГО ХОЗЯЙСТВА

(1921—1925 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

338 (

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1921—1925 ԹԹ.)

ՀԱՅԿ ԳԱՍՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Ա Պ
Ո347

ՍՈՎԵՏԱԿԱՆ

Մեր մեծ Հայրենիքում՝ Սովետական Միությունում, նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող առանձին ազգային սովետական հանրապետություններում սոցիալիստական շինարարության գործում տեղի ունեցած վիթխարի վերափոխությունների գիտական պատմության ստեղծումը Կոմունիստական պարտիայի կողմից սովետական պատմագիտության առաջ դրված է որպես նրա առաջնակարգ և անհետաձգելի խնդիրներից մեկը:

Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, նույնպես նրա իրավահավասար անդամը հանդիսացող Սովետական Հայաստանում տեղի ունեցած սոցիալիստական շինարարության պատմության գիտական ուսումնասիրությունն ունի արդիական կարևոր նշանակություն թեորիական և պրակտիկ տեսակետից, աշխատավորական մասսաներին այդ շինարարության հարուստ փորձով դաստիարակելու, կոմունիզմի համար մղվող պայքարում նրանց հայրենասիրական սխրագործությունները բազմապատկելու տեսակետից:

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում տեղի ունեցած խոշորագույն արմատական վերափոխությունների օրինակով ցայտուն կերպով երևում է, թե ինչ է տվել Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային հարատուն քաղաքականության կենսագործումը նախկինում դարեր շարունակ օտար զավթիչների և տիրող դասակարգերի կողմից շահագործված, ճնշված ու կործանման դատապարտված փոքր ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին:

Տնտեսական, քաղաքական և կուլտուրական բուռն վերելք ապրող Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի օրինակով իրենց մոտ սոցիալիզմ են կառուցում ժողովրդական դեմոկրատիայի երկրների աշխատավորները: Սովետական երկրի ժողովուրդների հաղթանակներով ոգեշնչվում, շա-

հագործողների տիրապետության դեմ վճռական պայքարի են դուրս գալիս կապիտալիստական երկրների աշխատավորները, իմպերիալիստական չքի տակ հնծող կախյալ և գաղութային երկրների ժողովուրդները:

Այստեղից էլ հասկանալի է, որ Հայաստանում, ինչպես և մյուս բոլոր ազգային սովետական հանրապետություններում, ամբողջ Սովետական Միությունում սոցիալիստական շինարարության գործում ձեռք բերված վիթխարի նվաճումների պատմությունն ունի նաև միջազգային կարևոր նշանակություն:

Կոմունիստական հասարակության համար մղվող պայքարի, սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովրդի ստեղծագործական աշխատանքի պատմության մեջ կարևորագույն տեղ են գրավում սոցիալիստական շինարարության առաջին տարիները՝ 1921—1925 թվականները: Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ հաղթահարելով ներքին և արտաքին կարգի բազմապիսի դժվարություններ, պատմականորեն այդ կարճ ժամանակամիջոցում, հայ ժողովուրդը կարողացավ ավարտել երկրի ծայրահեղ հայհոյված ժողովրդական տնտեսության վերականգնումը, որով ուղի հարթեց սոցիալիստական շինարարության հետագա ծավալման համար:

Ձեռնամուխ լինելով «Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.)» թեմայի ուսումնասիրությանը, նպատակ ենք դրել սույն մենագրությամբ լուսաբանել Սովետական Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի պատմությունը, ցույց տալ հանրապետության բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության և ինտելիգենցիայի ստեղծագործական աշխատանքը երկրի հայհոյված արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի վերականգնման, կուլտուրական շինարարության ծավալման գործում:

Անհրաժեշտ փաստական նյութի օգտագործումով մենագրության մեջ հիմնական գծերով լուսաբանված են Սովետական Հայաստանի հետամնաց և ծայրահեղորեն հայհոյված արդյունաբերության վերականգնման, դրան զուգընթաց արդյունաբերական նոր ձեռնարկությունների ու հյուղերի ստեղծման, գյուղատնտեսության վերականգնման, նրանում սկիզբ առած սոցիալիստական վերափոխությունների, կուլտուրական շինարարության, աշխատավորների հյութական բարեկեցության բարելավման հարցերը:

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի պատմությունը մեր կողմից ընկալվում է ամբողջ Սովետական Միության տվյալ ժամանակաշրջանի պատմության հետ անբաժան շաղկապված, մեր մեծ Հայրենիքի բազմազգ ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության լույսի տակ: Ցույց է տրված ռուս մեծ ժողովրդի դերը այդ բարեկամության հաստատման և ամրապնդման գործում, նրա անշահախնդիր եղբայրական օգնությունը Հայաստանի բանվորներին և գյուղացիներին ժողովրդական տնտեսության վերականգնման գործում:

Մենագրությունը պատրաստելիս ղեկավարվել ենք Վ. Ի. Լենինի և նրա աշակերտ ու գործի մեծ շարունակող Ի. Վ. Ստալինի աշխատություններով:

Մեր հետազոտական աշխատանքների ընթացքում օգտագործել ենք Կոմունիստական պարտիայի համագումարների, պարտիական կոնֆերանսների, Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումների որոշումները:

Փաստական ամբողջ նյութը հավաքված է արխիվներից, ինչպես նաև հրատարակված պաշտոնական ժողովածուներից, հաշվետվություններից, կառավարական դեկրետներից: Արխիվներում կատարված հետազոտությունների ընթացքում մեզ հաջողվել է ուսումնասիրվող բնույթի վերաբերյալ հավաքել զգալի բանակությամբ նոր փաստական նյութեր, որոնց խոշոր մասը օգտագործվել է մենագրության մեջ:

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի վերաբերյալ հրապարակված պաշտոնական նյութերից օգտագործել ենք Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների համագումարների արձանագրությունները, Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարիատների հաշվետվությունները, Հայկական ՍՍՌ դեկրետների և հրամանների ժողովածուները, Հայկական ՍՍՌ Պետպլանի և Կենտրոնական վիճակագրական վարչության վիճակագրական տեղեկատուները, հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուները և այլն: Օգտագործել ենք նաև Աճեդիովկայան Ցենզուսացիայի գծով հրատարակված մի շարք նյութեր:

Այդ աղբյուրներում բնույթի վերաբերյալ կա զգալի բանակությամբ փաստական նյութ: Սակայն նրանց խոշոր մասը տատապում է էական այնպիսի թերությամբ, ինչպիսին է նյութերի և փաստա-

բղրերի անհրաժեշտ գիտական մշակման բացակայությունը: Ավելին, մի շարք աղբյուրներում առանձին հարցերի վերաբերյալ հանդիպում ենք տարբեր, երբեմն հակասական թվերի, որի հետևանքով ուսումնասիրության ընթացքում առաջացել են որոշ դժվարություններ: Նկատի ունենալով այդ և մի շարք այլ հանգամանքներ, վերհիշյալ սկզբնաղբյուրները օգտագործել ենք ընդհատաբար:

Արխիվային նյութերին և սկզբնաղբյուրներին զուգընթաց օգտագործել ենք նաև կենտրոնական, երկրամասային և հանրապետական մամուլը:

Հեղինակի կողմից հաշվի են առնված Սովետական Միության պատմագիտության հաջողությունները, բեմայի հետ առնչվող բոլոր հիմնական աշխատությունները (որոնք հրատարակվել են Ռուսաստանում և եղբայրական մյուս հանրապետություններում) և անմիջականորեն բեմային վերաբերող առանձին ուսումնասիրությունները, որոնք կատարվել են Սովետական Հայաստանի որոշ պատմաբանների ու տնտեսագետների կողմից:

Չնայած ուսումնասիրվող բեմայի ակտուալությանը և կարևորությանը, մինչև այժմ նրա գիտական ուսումնասիրության ուղղությամբ մեզ մոտ բիչ աշխատանք է կատարվել, որի հետևանքով հրապարակում նրա վերաբերյալ կա խիստ սակավ գրականություն, իսկ մենագրական աշխատություններ առհասարակ բացակայում են:

Հարկ ենք համարում նշել, որ բեմայի վերաբերյալ եղած գրականությունը, չնայած էական բերություններին, այնուամենայնիվ օգնել է հեղինակին սույն աշխատությունը պատրաստելու գործում:

Այն կարծիքին չենք, որ սույն մենագրությամբ ավարտված կարելի է համարել Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի՝ 1921—1925 թվականների հարուստ պատմության ուսումնասիրությունը: Մեր կողմից միայն փորձ է կատարվել ընդհանրացնելու և հիմնական գծերով տալու այդ պատմությունը, որի ուղղությամբ հետագայում աշխատանքները պետք է շարունակվեն:

Ա. Հ.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՆԱԿԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ ժողովուրդը Սովետական Միության ամենահին ժողովուրդներից է: Նրա պատմությունն ընդգրկում է մոտ երեք հազար տարվա ժամանակաշրջան և հարուստ է մեր ժողովրդի բազմատեսակ տառապանքներով ու հերոսական պայքարով՝ իր ազատության ու անկախության համար:

Աշխարհագրական դիրքով լինելով առևտրական և ռազմական ուղիների հանգույց Արևմուտքի և Արևելքի միջև, Անդրկովկասը, նրա մի մասը կազմող Հայաստանը հանդիսացել են ժամանակի զորեղ տերությունների անվերջ պատերազմների թատերաբեմ: Իրենց նվաճողական արշավանքներով հռոմեացիք, պարսիկները, արաբները, բյուզանդացիք, սելջուկները, մոնղոլները, օսման թյուրքերը ոտնակոխ են արել, հրդեհել ու ոչնչացրել են Հայաստանի քաղաքներն ու դյուղերը, հսկայական նյութական ու մարդկային վնասներ պատճառել հայ ժողովրդին:

Իր ազատությունն ու ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար հայ ժողովուրդը բազմաթիվ անգամ է բարձրացել օտարերկրյա նվաճողների դեմ, անհավասար կռվում հաճախ ձեռք բերելով նշանակալից հաղթանակներ: Սակայն այդ հաղթանակները ժամանակավոր են եղել, որոնց հետից հաջորդել են ծանր ղրկանքներն ու տառապանքները:

Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդին, երկար ժամանակ սպառնացել է ֆիզիկական ոչնչացման վտանգը, որը ավելի էր ուժեղացել սկսած 15-րդ դարից՝ երբ

Հայաստանը բաժանվում է պարսկական ու Թյուրքական իշխանությունների միջև: Պարսկական և Թյուրքական զավթիչները ամենադաժան վերաբերմունք հարատևողությամբ էին անում Անդրկովկասի ժողովուրդներին: «... Պարսկական ու Թյուրքական ասիմիլյատորները հարյուրավոր տարիներ ծվատում, խաշտանդում ու բռնաջնջում էին հայ և վրացի ազգերին,— ասում է Ի. Վ. Ստալինը,— բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլ— ընդհակառակը — հարկադրված եղան նույնպես տեղի տալու»[1]:

XIX դարի առաջին քառորդում ավարտվում է Անդրկովկասի միացումը Ռուսաստանին: Դա մի նշանակալից իրադարձություն էր երկրամասի ժողովուրդների պատմության մեջ և պրոդրեսիվ խոշոր նշանակություն ունեցավ նրանց կյանքում: Միացման շնորհիվ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդները փրկվեցին պարսկական և օսմանյան դեսպոտիզմի կողմից սպառնացող ֆիզիկական բնաջնջման ահեղ վտանգից: Այդ անպաշտպան ու փոքրիկ ժողովուրդները ազատվեցին արտաքին ուժերի մշտական արշավանքներից ու նրանց կործանիչ հետևանքներից: Մյուս կողմից՝ հետագա զարգացման ժամանակաշրջանում, հանձին կապիտալիստական հարաբերությունների ծավալման, Հայաստանի ու ամբողջ Անդրկովկասի համար անհետևանք ու կուլտուրական զարգացման համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Երկրամասի ժողովուրդները հնարավորություն ստացան ավելի ամուր կապեր հաստատելու ռուս մեծ ժողովրդի, նրա ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքների, նրա առաջավոր-դեմոկրատական կուլտուրայի հետ:

Այդ միացման շնորհիվ պատմական զարգացման հետագա շրջանում Անդրկովկասի ժողովուրդների պայքարն ընդդեմ շահագործողների արիստոկրատության անխզելիորեն շաղկապվեց Ռուսաստանի բանվոր դասակարգի և նրա մարտական ավանգարդի՝ Կոմունիստական պարտիայի գլխավորած մեծ պայքարի հետ ու ավելի իր վրայում արդյունքները, որոնք անհնարին էին առանց ռուս մեծ ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնության:

Հայ ժողովրդի պատմության մի նոր, մասյալ շրջան հանդիսացավ 1918 թվականից մինչև 1920 թվականի վերջերը ընկած ժամանակաշրջանը, երբ Ռուսաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո ժողովրդի ոխերիմ թշ-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 11, Հայպետհրատ, Երևան, 1949, էջ 395:

նամի պաշտոնները, մուսավաթիստները և մենշևիկները, գերմանո-թյուրքական և ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական զավթիչների ընդարձակով ու անմիջական օգնությամբ Անդրկովկասյան անջատական Սեյմատական Ռուսաստանից։ Դաշնակները 1918 թ. մայիսից Հայաստանում հաստատելին իրենց մարիոնետային սիրատպետությունը, այսպես կոչված, «ազգային կառավարությունը»։ Նույնպես «կառավարությունները» հաստատելին մենշևիկները Վրաստանում, մուսավաթիստները՝ Ադրբեջանում։

Հյուծ և հավատարիմ ծառայելով հայ բուրժուազիային և օտարերկրյա իմպերիալիստներին, դաշնակներն իրենց ավանտյուրիստական քաղաքականությամբ երկիրը և նրա ժողովրդին տանում էին դեպի կործանում։

Մերկացնելով Ռուսաստանի ծայրամասերում, այդ թվում նաև Անդրկովկասում ստեղծված «ազգային կառավարությունների» կոնտրռևոլյուցիոն էությունը, Ի. Վ. Ստալինը 1918 թ. նոյեմբերին գրել է.

«Բանն այն է, որ այդ «ազգային կառավարությունները» լսել անգամ չէին ուզում սոցիալիստական ռևոլյուցիայի մասին։ Իրենց բնությամբ բուրժուական՝ նրանք ամենևին չէին ուզում կործանել հին, բուրժուական կարգը,— ընդհակառակը, նրանք իրենց պարտքն էին համարում այն պահպանել ու ամրացնել բոլոր ուժերով։ Իրենց էությամբ իմպերիալիստական՝ նրանք ամենևին չէին ուզում կապերը խզել իմպերիալիզմի հետ,— ընդհակառակը, նրանք երբեք էլ դեմ չէին զավթելու և իրենց ենթարկելու «ուրիշ» ազգությունների տերիտորիաների կտորներ ու պատառներ, եթե հնարավորություն էր ներկայանում այդ անելու։ Զարմանալի չէ, որ «ազգային կառավարությունները» ծայրամասերում պատերազմ հայտարարելով կենտրոնի սոցիալիստական կառավարությանը։ Իսկ պատերազմ հայտարարելով՝ նրանք, բնականաբար, զրկում էին ռևակցիայի օջախներ, որոնք իրենց շուրջն էին հավաքում այն ամենը, ինչ կոնտրռևոլյուցիոն էր Ռուսաստանում»[1]։

Վարելով այդպիսի կոնտրռևոլյուցիոն քաղաքականություն, դաշնակները օրըստօրի ուժեղացնում էին ռևակցիան և դրանով իսկ ավելի ու ավելի ծանրացնում Հայաստանի բանվորների ու գյուղացիների վիճակը։

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, Հայպետհրատ, Երևան, 1948 էջ 178—179։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները այս ծանր օրերին ևս չխոնարհեցին իրենց դլուխը։ Հավատով լի դեպի հաղթանակը, նրանք շարունակեցին հերոսական պայքարը դավաճանների ու սարկացնողների դեմ։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի ազդեցության տակ, ինչպես Ռուսաստանի բոլոր ազգային շրջաններում ու ծայրամասերում, նույնպես և Անդրկովկասում մինչև այդ չտեսնված լայն ծավալ ստացավ ռևոլյուցիոն շարժումը օտարերկրյա իմպերիալիստների ու նրանց կամակատար պաշնակցական, մենշևիկների ու մուսավաթիստների բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային կառավարությունների դեմ։ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, համախմբելով իրենց մարտական շարքերը, ուս ուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ հերոսական պայքարի դուրս եկան Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Անդրկովկասում իրականացնելու, իրենց ազատությունն ու անկախությունը ձեռք բերելու համար։

Սակայն Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, Սովետական իշխանության հաղթանակի համար մղած պայքարում կային մի շարք լուրջ դժվարություններ և խոչընդոտներ, որոնց հետևանքով այդ պայքարը երկրամասում ընդունեց սուր և ավելի երկարատև բնույթ։ Այդ դժվարություններն ու խոչընդոտները հիմնականում արտահայտվում էին հետևյալում։

Նախ, երբ Ռուսաստանում հաղթեց պրոլետարական ռևոլյուցիան, այդ ժամանակաշրջանում Անդրկովկասում իշխանության դլուխ էին կանգնած բուրժուա-նացիոնալիստական պարտիանները՝ մենշևիկները, դաշնակները և մուսավաթիստները՝ սկզբում հանձին Անդրկովկասի կոմիսարիատի և Անդրկովկասի սեյմի, իսկ հետո՝ ազգային, «անկախ» կառավարություններին։ Բոլոր ուժերով ու միջոցներով մղելով ձդտելով Ռուսաստանում ձախողել սոցիալիստական ռևոլյուցիայի տարածումը և ամրապնդումը, Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները և մյուս բոլոր կոնտրռևոլյուցիոն թափթփուկները իրենց առջև խնդիր էին դրել Անդրկովկասը անջատել Սովետական Ռուսաստանից, այն դարձնել օտարերկրյա իմպերիալիստների դաղութ և պայքարի բազա ընդդեմ Ռուսաստանի սոցիալիստական պետության։ Այդ նպատակով նրանք մեկ կողմից Անդրկովկասի դռները բաց էին արել

օտարերկրյա զավթիչների՝ նախ գերմանո-թյուրքական, ապա ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների առաջ, մյուս կողմից Անդրկովկասի ժողովուրդներին անջատելով միմյանցից, նրանց մեջ սերմանելով նացիոնալիզմն ու շովինիզմը, այդ ժողովուրդների միջև հրահրում էին եղբայրասպան պատերազմներ, դասակարգային պայքարը քողարկելով ազգային դրոշակներով ու պաճուճանքներով։

Նման պայմաններում Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջ լուրջ ու դժվարին խնդիրներ էին դրված՝ հետևողականորեն վարելով ինտերնացիոնալիզմի քաղաքականություն և սոցիալիստական ռևոլյուցիայի դրոշի շուրջը համախմբելով Երկրամասի բոլոր ազգերի ու ժողովուրդների աշխատավորներին, մինչև վերջ և անողոքաբար մերկացնել ու ջախջախել բուրժուա-նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն ուժերին, Անդրկովկասում հաստատել սովետական կարգեր։

Երկրորդ, դա Անդրկովկասի տնտեսական հետամնացության փաստն էր։ «Անդրկովկասի մյուս, ոչ-պակաս բնորոշ գիծը նրա տնտեսական հետամնացությունն է,— գրել է Ի. Վ. Ստալինը 1918 թվականին,— եթե չհաշվենք Բաքուն, Երկրամասի այդ արդյունաբերական օազիսը, որը գլխավորապես արտաքին կապիտալով է շարժվում, ապա Անդրկովկասը ներկայացնում է մի ագրարային երկիր ավելի կամ պակաս զարգացած առևտրական կյանքով ծայրամասերում, ծովերի ափերին, և զուտ ճորտատիրական կացութաձևի գերևս ամուր մնացորդներով կենտրոնում»[1]։

Տնտեսական թույլ զարգացման հետևանքով, ինչպես ամբողջ Անդրկովկասում, նույնպես և Հայաստանում Ռուսաստանի համեմատությամբ ավելի պակաս էր պրոլետարիատը, որը նույնպես որոշ դժվարություններ էր ստեղծում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված պայքարում։ Ինչպես նշված է «Քաղաքացիական կռիվների պատմությունը ՍՍՌՄ-ում» աշխատության 2-րդ հատորում, պրոլետարական կադրերի համեմատաբար քչությունը չէր կարող իր հերթին չանդրադառնալ բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի վրա[2] որոշ դժվարություններ առաջացնելու տեսակետից, որոնք, սակայն, հաղթահարվում են

---

[1] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 58—59։*

[2] *Տե՛ս* История гражданской войны в СССР, том 2, 1947, стр. 113.

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բոլշևիկների կողմից։

Երրորդ՝ այդ այն փաստն էր, որ շնորհիվ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների՝ դաշնակների, մենշևիկների և մուսավաթիստների քաղաքականության, կենտրոնի համեմատությամբ Անդրկովկասում ավելի ուժեղ էր օտարերկրյա իմպերիալիստների ճնշումը, որոնք, ինչպես տեսանք, օգտագործելով այդ կոնտրռևոլյուցիոն ուժերին, փաստորեն հանդիսանում էին Անդրկովկասի տերերը։

Հաստատվելով Անդրկովկասում, նախ գերմանո-թյուրքական զավթիչները, ապա ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստները ամեն կերպ օգնում էին դաշնակների, մենշևիկների ու մուսավաթիստների մարիոնետային կառավարություններին ճնշելու Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը իրենց ազատության համար, Անդրկովկասում սովետական կարգեր հաստատելու համար։ Օտարերկրյա իմպերիալիստների կողմից ցույց տրված օգնության շնորհիվ Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին հաջողվում է որոշ ժամանակով երկարաձգել իրենց իշխանությունը, որը սակայն չկարողացավ երկարատև ու հաստատուն լինել։ Հակառակ ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերի կողմից ամեն տեսակի հալածանքների ու ճնշումների, կոմունիստական կազմակերպությունների գլխավորությամբ երկրամասում բարձրանում էր հզոր ռևոլյուցիոն շարժումը հանուն սովետական կարգերի հաղթանակի։

1917 թ. սեպտեմբերի 16-ին Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի նիստում քննարկվում է Կովկասում ստեղծված դրության հարցը, որի մասին զեկուցում է Ի. Վ. Ստալինը։ Դրանից երկու օր հետո, սեպտեմբերի 18-ին ընդունվում է ժողկոմսովետի դեկրետը Ս. Շահումյանին Կովկասի Գործերի ժամանակավոր Արտակարգ Կոմիսար նշանակելու վերաբերյալ։ Անցնելով իր պարտականությունների կատարմանը, Կովկասյան Գործերի ժամանակավոր Արտակարգ Կոմիսար Ս. Շահումյանը Կոմունիստական պարտիայի անունից մարտական կոչ է ուղղում Կովկասի բանվորներին, գինվորներին և գյուղացիներին՝ պարտիայի գլխավորությամբ շարունակելու հերոսական պայքարը հանուն սովետական կարգերի հաստատման երկրամասում։ Կոչում ասված է.

«Սովետական իշխանությունը Կովկասում պետք է ստեղծել ան-

հաղթող։ Ռուսաստանում ոչ մի տեղ ռևոլյուցիայի գործն այնպիսի վտանգի մեջ չի դտնվում ներկայումս, ինչպես մեզ մոտ՝ Կովկասում։ Հյուսիսային Կովկասում ծայր առած կոնտռռևոլյուցիայից անմիջապես հետո, բացահայտորեն դլուխ է բարձրացրել կոնտրռևոլյուցիան Անդրկովկասում։

...Միակ ելքն այդ փակուղուց, ազգամիջյան կռիվների և կովկասյան ժողովուրդների փոխադարձ ոչնչացման սարսափների առաջն առնելու միակ միջոցը, եթե արդեն ուշ չէ— Կովկասում Սովետական իշխանություն ստեղծելն է։

...Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցե՛ք նրան։ Ստեղծեք այստեղ ինտերնացիոնալ Բանվորա-Գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու Ժողովրդական Կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի կոնտռռևոլյուցիային և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[1]։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Վրաստանի ու Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների հետ միասին, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ ծավալուն պայքար են սկսում հանուն սովետական կարգերի, ընդդեմ դաշնակների, մենշևիկների, մուսավաթիստների և մյուս բոլոր կոնտռռևոլյուցիոն ուժերի, ընդդեմ օտարերկրյա զավթիչների։ Անդրկովկասում Սովետական իշխանության համար ծավալված պայքարը հանդիսում է ներքին և արտաքին կոնտռռևոլյուցիոն ուժերի կատաղի դիմադրությանը, որոնք, ինչպես տեսանք, իրենց առաջ նպատակ էին դրել Անդրկովկասը անջատ պահել Սովետական Ռուսաստանից, այն դարձնել օտարերկրյա իմպերիալիստների դաղութ և պայքարի բազա ընդդեմ Սովետական Ռուսաստանի։

Երկրամասում ծավալվող ռևոլյուցիոն շարժումը խեղդելու նպատակով ստեղծվում է Անդրկովկասի կոնտռռևոլյուցիոն ուժերի հակասովետական կոալիցիա։ Այդ կոալիցիայի արտահայտությունը հանդիսացավ 1917 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում մենշևիկների, էսեռների, մուսավաթիստների ու դաշնակների ներկայացուցիչներից կազմված կոնտռռևոլյուցիոն «կառավարությունը»՝ Անդրկովկասյան կոմիսարիատը։ Այդ «կառավարությունն» իր գործունեությունն սկսեց

---

[1] *Ս ա. Շ ա հ ու մ յ ա ն, Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան, 1943, էջ 525—526, 528։*

զինված բանդաներ կազմակերպելով՝ երկրամասում ռևոլյուցիոն շարժումը խեղդելու, առաջին հերթին Սովետական իշխանության դրոշը բարձրացրած պրոլետարական Բաքվի վրա հարձակվելու համար։ Անդրկովկասյան կոմիսարիատի հրամանով 1918 թ. հունվարին Շամխոր կայարանի մոտ, նրա զինված բանդաները ամազակային հարձակում են գործում թյուրքական ռազմաճակատից Ռուսաստան վերադարձող զինվորների վրա, զինաթափում են նրանց և կոտորում հազարավոր ռևոլյուցիոն զինվորների։

Կենսագործելով պարտիայի Կենտրոնական Կոմիտեի, մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի ցուցումները, Ստ. Շահումյանի, Մ. Ազիզբեկովի, Ա. Ջապարիձեի և Ա. Միկոյանի գեկավարությամբ Բաքվի պրոլետարիատը շարունակում էր համառ ու հերոսական պայքարը սովետական կարգերի հաղթանակի համար։ 1918 թ. մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը Բաքվում տեղի են ունենում քաղաքացիական ուժեղ կռիվներ, որոնց երկու կողմից մասնակցում էին ավելի քան 20 հազար մարդ[1]։ Այդ կռիվներում հաղթում են ռևոլյուցիոն ուժերը, որի շնորհիվ ծնվում է Բաքվի հերոսական կոմունան՝ առաջին Սովետական իշխանությունը Անդրկովկասում։ Հակառակ ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերի ամենաճարպիկ դիմադրությանը, իր գոյության կարճ ժամանակամիջոցում (1918 թ. ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ը) Բաքվի կոմունան կենսագործելով Ռ(բ)Կ Կենտկոմի ցուցումները, խոշոր գործ կատարեց։

Ողևորված Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ Բաքվի պրոլետարիատի հերոսական պայքարով ու հաղթանակով, Հայաստանի բանվորներն ու դյուղացիները նոր, ավելի մեծ թափով ծավալուն պայքար են սկսում դաշնակների տիրապետության դեմ։

Այդ պայքարում դնալով ավելի ու ավելի էր ուժեղանում կոմունիստների ազդեցությունը մասսաների վրա։

Դաշնակների տիրապետության հենց առաջին ամիսներից, բացի բանվորական և դյուղացիական շրջաններից, խիստ ուժեղացել էր կոմունիստների ազդեցությունը նաև նրանց բանակում։ Բանակի շատ մարտիկներ, նույնիսկ առանձին զորամասեր, գնում էին կոմունիստների հետևից։ Հազարավոր ու տասնյակ հազարավոր աշխատավորներ, որոնք հակառակ իրենց կամքի քշվել էին բանակ՝ մասնակցելու եղբայրասպան և նվաճողական պատերազմներին,

---

[1] *Տե՛ս Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1948, էջ 565։*

Բողնելով դաշնակների բանակը, անցնում էին ռևոլյուցիոն բանվոր դասակարգի ու գյուղացիության կողմը։

Մյուս կողմից, դաշնակների բանակում չտեսնված չափերի էր հասել դասալքությունը։

Դաշնակների կառավարության Մինիստրների խորհուրդը 1918 թվականի օգոստոսից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակամիջոցում երեք անգամ իր նիստերում քննության է առել բանակում ծավալվող դասալքության հարցը և ընդունել մի շարք որոշումներ՝ որոնք խիստ միջոցառումներ էին նախատեսում դասալքության դեմ։ Միաժամանակ խոշոր գումարներ են բաց թողնվում դասալքության դեմ պայքար ծավալելու համար[1]։

Սակայն ո՛չ որոշումները, ո՛չ ամեն տեսակի ճնշումները, ո՛չ բանտն ու աքսորը և ո՛չ էլ մահապատիժները չօգնեցին դաշնակներին՝ թեկուզ չնչին չափով պահպանելու կամ կանխելու դասալքությունը։ Ընդհակառակը, որքան երկարանում էր դաշնակների տիրապետության ժամանակը, այնքան լայն չափեր էր ընդունում դասալքությունը նրանց բանակում։ 1919 թ. դեկտեմբերի 19-ին Մինիստրների խորհրդի նախագահին ուղղած իր զեկույցում Ներքին գործերի մինիստրը խուճապահար հաղորդել է, որ Հայաստանում 1919 թ. հունվարից մինչև նոյեմբեր բանակից դասալիքների թիվը հասնում էր 17665 հոգու[2]։ Պետք է ենթադրել, որ այդ թվերը լրիվ չեն և բավական պակասեցված են։ Սակայն, նրանք լիակատար պատկերացում են տալիս դաշնակցական բանակի մասին, մի բանակ, որի մեծագույն մասը չէր ցանկանում ծառայել ժողովրդի թշնամի դաշնակներին և նրանց տեր օտարերկրյա իմպերիալիստներին։

Դաշնակների տիրապետության առաջին իսկ օրերից ընդդեմ այդ տիրապետության, Հայաստանի տարբեր քաղաքներում ու գավառներում բոլշևիկների զեկավարությամբ տեղի են ունենում բանվորների, զինվորների ու գյուղացիների մի շարք ելույթներ, որոնք հաճախ վեր են ածվում զինված ընդհարումների։

1918 թ. վերջերին Դիլիջանի շրջանի Միխայլովկա գյուղում կանգնած էր դաշնակցության բանակի 6-րդ գունդը։ Գնդի հրամանատարությունը, սպաները և զինվորների ռեակցիոն մասը բացարձակ կերպով կողոպտում էին գյուղացիներին, հարկադրելով վեր-

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական Արխիվ, ֆոնդ 68c/200, գ. 62, թ. 5, 37։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆոնդ 67/199, գ. 29, թ. 346—347։

680—2

ջիններիս իրենց հանձնելու ամեն տեսակի մթերքները, իսկ ով չէր կատարում այդ, պատժում էին տեղն ու տեղը: Այդ պատճառով էլ գյուղացիներն սկսում են կազմակերպվել՝ նպատակ ունենալով զինված ելույթով պաշտպանվել դաշնակցական թալանչիներից: Անհանդատանալով նախապատրաստվող զինված ելույթների վորձերից, դաշնակցական բանակի գեներալ Բազդասարովը 1919 թ. հունվարի 10-ին Դիլիջանից Երևան՝ զինվորական շտաբին հեռագրում է հետևյալը:

«Միխայլովկա գյուղի բնակիչները որոշել են զենքով դիմադրել իշխանությանը: Այդ շրջանն եմ ուղարկելու մեկ գումարտակ և երկու հրանոթ: Խնդրում եմ գործուղեք զինվորական քննիչ»[1]:

Այդ գեկույցների կապակցությամբ Դիլիջանի գավառային կոմիսարը հատուկ ներկայացուցիչ է ուղարկում Միխայլովկա գյուղը, որը տեղում ծանոթանալով դրությանը, շտապում է զեկուցել իր պետերին: Զեկուցման մեջ վերջինս նշել է, որ Միխայլովկա գյուղում զինված գյուղացիների քանակը հասնում է 400-ի, որ ամեն օր կատարվում է ռազմական ուսուցում, ըստ որում առաջարկել է արված շրջակա գյուղերին՝ պաշտպանել այդ զինված ելույթը և օգնել զինամթերքներով: Դաշնակցական կոմիսարը Միխայլովկա գյուղի մասին իր զեկուցումը վերջացնում է հետևյալով. «Նման ղեղությունը իր ընդհանուր բարդություններով, արագ և եռանդուն միջոցներ ձեռք չառնելու դեպքում, կարող է առեղծել ուժեղ անարխիա հիշյալ շրջանում»[2]:

Ձեռք առնելով բոլոր միջոցները, դաշնակներին հաջողվում է Միխայլովկա գյուղում նախապատրաստվող զինված ելույթի վորձը ճնշել՝ դեռ այն չսկսված:

1919 թ. փետրվարի վերջերին Նոր Բայազետի գավառի Ջոդ գյուղում զինված ընդհարում է տեղի ունենում գյուղացիների և դաշնակցական զորքերի միջև, որի ընթացքում հայ և ադրբեջանցի գյուղացիները միանալով պայքարում են դաշնակների դեմ: Այդ զինված ընդհարումը բավական լուրջ բնույթ էր կրում: Դաշնակների կառավարության Մինիստրների խորհուրդը իր նիստում լսում է ներքին գործերի մինիստրի տեղակալի զեկուցումը Ջոդի դեպքերի մասին և որոշում արտակարգ քննիչ հանձնաժողով ուղարկել հանցավորներին տեղում հայտնաբերելու և խիստ պատժելու համար:

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. 242, թ. 9:

[2] Նույն տեղում, թ. 13:

Հանձնաժողովը մեկնելով Ջոդ, հանդիպում է ապստամբ դյուղացիների ղեմատրությանը և հնարավորություն չի ունենում սկսելու իր աշխատանքները: Մարտի 17-ին Մինիստրների խորհուրդը որոշում է պատժիչ զորամաս ուղարկել Ջոդ դյուղը: Որոշման մեջ ասված է.

«ա) քննիչ հանձնաժողովը թողնել տեղում, որպեսզի հնարավորություն ստեղծվելուն պես նա անմիջապես անցնի գործի.

բ) հանձնարարել զինվորական մինիստրին կարգադրելու գեներալ Փիրումովին, որ նա անմիջապես իր հայեցողությամբ հարկ եղած պատրաստությունները տեսնելուց հետո, զինվորական ուժերը շարժի դեպի ապստամբ վայրը»[1]:

Գնալով դյուղացիական ելույթները ծավալվում էին Նոր Բայազետի գավառի նաև մյուս դյուղերում, որի հետևանքով գաշնակների «կառավարությունը» լիազորում է զինվորական մինիստրին Նոր Բայազետի գավառում հիմնել զինվորա—դաշտային դատարաններ՝ ամենակատաղի դատաստան տեսնելու համար ռևոլյուցիոն դյուղացիների հետ[2]:

Մոբիլիզացնելով մեծ ուժեր և գործադրելով բոլոր միջոցառումները, դաշնակները ճնշում են զինված ելույթները Ջոդում և Նոր Բայազետի գավառի մյուս դյուղերում:

Հայաստանի տարբեր գավառներում դյուղացիների զինված ելույթները դաշնակների տիրապետության դեմ ավելի լայն չափեր են ընդունում 1919 թ. ամռանը: Այդ ելույթների հետևանքով այնքան լուրջ սպառնալիք էր ստեղծված, որ դաշնակցական «կառավարության» Մինիստրների խորհուրդը 1919 թ. հուլիսի 27-ի նիստում լսում է հատուկ զեկուցում Հայաստանի «մի քանի վայրերում (անունները չի հիշատակված — Ա. Հ.) ծագած ապստամբությունների դեմ միջոցներ ձեռք առնելու մասին[3]: Հետաքրքրական է այն փաստը, որ դաշնակները մեծ վախ զգալով այդ ելույթներից և վստահ չլինելով իրենց զինված ուժերի վրա, զեկուցման առթիվ ընդունած մի շարք միջոցառումների շարքում, որոշում են արտակարգ զորահավաք կատարել[4] և ճնշել դյուղացիական ելույթները Հայաստանի տարբեր գավառներում՝ Նոր Բայազետում, Ջանգեզուրում, Դիլիջանում և այլն:

1920 թ. հունվարին Ալեքսանդրոպոլում (այժմ Լենինական)

---

[1] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. 218, թ. 48:*

[2] *Նույն տեղում, թ. 53:*

[3] *Նույն տեղում, թ. 180:*

[4] *Նույն տեղում:*

տեղի է ունենում երկաթուղային բանվորների մեծ դործադուլ, որը վեր է ածվում դեմոնստրացիայի և ընդհարումների դաշնակցական բանդաների հետ։

Սակայն Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը հանուն Սովետական իշխանության նոր թափ է առնում 1920 թ. գարնանը։

1919 թ. վերջերին՝ 1920 թ. առաջին ամիսներին Ռուսաստանի հարավում և Անդրկովկասում տեղի ունեցան խոշոր հրադարձություններ, որոնք մեծ չափով նպաստեցին ռևոլյուցիոն շարժման էլ ավելի ծավալմանը Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում։ Այդ ժամանակ Ի. Վ. Ստալինի մշակած և Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի կողմից հաստատված ստրատեգիական պլանի կենսագործման շնորհիվ, Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակի հուժկու հարվածների տակ ջախջախվեց Դենիկինի բանակը և ձախողվեց նրա արշավանքը հարավից դեպի Մոսկվա, արշավանք, որը քաղաքացիական կռիվների պատմության մեջ հայտնի է որպես 14 պետությունների արշավանք ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ Այդ արշավանքին մասնակցում էր նաև դաշնակիների կառավարությունը, որը Դենիկինին ցույց էր տալիս ամենադործնական օգնություն և նրանից վերադարձարար ստանում համապատասխան օգնություն։ Դենիկինին օգնելու նպատակով դաշնակիները նույնիսկ հանեցին Կարսի ամրոցի հրանոթները և ուղարկեցին Հյուսիսային Կովկաս՝ Կարմիր Բանակի դեմ։

Իր ջախջախված բանակի մնացորդներով դեներալ Դենիկինը խուճապահար նահանջում էր դեպի հարավ, հետապնդվելով հարձակվող Կարմիր Բանակի կողմից։ 1920 թ. սկզբին ամբողջ Ուկրաինան և Հյուսիսային Կովկասը ազատագրվեցին սպիտակդվարդիական բանդաներից։

Այդ ժամանակ Դենիկինի բանակում դաշնակների կառավարության ներկայացուցիչը ստիպված էր մի զեկուցագիր է ուղարկում իր կառավարությանը, ուր ասում է Դենիկինի բանակի անհաջողությունները և նախազդուշացնում, որ դա միաժամանակ իրենց անհաջողությունն է, որ պետք է դիմել բոլոր միջոցներին երկարաձգելու իրենց տիրապետությունը։

Ջախջախելով Դենիկինի զորքերին, հերոսական Կարմիր Բանակը 1920 թ. գարնանը ընդհուպ մոտեցել էր Անդրկովկասի դռներին։ Այդ ավելի ոգևորեց Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի բանվորներին ու գյուղացիներին, որոնք Կոմունիստական պարտիա-

յի, նրա ականավոր գործիչներ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Ա. Միկոյանի ղեկավարությամբ շարունակում էին պայքարը հանուն սովետական կարգերի հաստատման։

1920 թ. մարտի 17-ին Ս. Օրջոնիկիձեի անունով ուղարկած հեռագրում Վ. Ի. Լենինը գրում էր, որ Կարմիր Բանակը պետք է օգնություն ցույց տա Ադրբեջանի աշխատավորությանը[1]։

Պարախալի Կենտրոնական Կոմիտեի ցուցումների հիման վրա, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը և Ա. Միկոյանը Ադրբեջանի կոմունիստների հետ միասին մշակում են ղինված ապստամբության պլանը և բոլշևիկացմանը նախապատրաստում այն։ Համաձայն այդ պլանի, 1920 թ. ապրիլի 27-ի լույս 28-ի գիշերը տեղի է ունենում Բաքվի պրոլետարիատի ղինված ելույթը ընդդեմ մուսավաթիստների իշխանության։ Ապստամբությունը ծավալվում է մեծ արագությամբ և ավարտվում հաղթանակով։ Ադրբեջանում հաստատվում են սովետական կարգեր։

Կարմիր Բանակի հաղթանակները Ռուսաստանի հարավում և սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում ավելի ու ավելի ոգևորեցին Հայաստանի բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը սովետական կարգերի համար մղած պայքարում։ Այդ ժամանակ Հայաստանում Սովետական իշխանության համար մղվող պայքարը դուրս գալով առանձին գավառների ու քաղաքների շրջանակներից, ընդգրկեց համարյա ամբողջ երկիրը։ Դա 1920 թվականի մայիսյան հզոր ապստամբությունն էր։

Այդ թվականի մայիսմեկյան տոնակատարությունը Հայաստանի բոլոր խոշոր կենտրոններում անցավ կոմունիստների ղեկավարությամբ և նրանց լոզունգներով։ Մայիսի 10-ին Ալեքսանդրոպոլի կոմունիստական կազմակերպությունները, քաղաքի բանվորները և ղինվորները Ս. Մուսայելյանի, Բ. Ղարիբջանյանի և Ե. Սևյանի ղեկավարությամբ սկսեցին ղինված ապստամբություն, որի հաղթանակով Ալեքսանդրոպոլում հաստատվեց Սովետական իշխանություն։ Շուտով դաշնակիներն իրենց պլխավոր ուժերը ուղղում են Ալեքսանդրոպոլի վրա։ Մայիսի 11-ից մինչև 13-ը տեղի են ունենում անհավասար ու կատաղի մարտեր։ 14-ին այստեղ ապստամբությունը ճնշվում է։

Ընդդեմ դաշնակների, ղինված ապստամբություններ տեղի են ունենում նաև Հայաստանի մյուս քաղաքներում և շրջաններում։ Կարսում ապստամբության գլուխ կանգնած էր կրակոտ ռևոլյու-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 35, Երևան, 1952, էջ 480։

ցիոներ Դ. Դուկասյանը։ Այստեղ մայիսի 11-ից 13-ը ապստամբները իշխանությունը նույնպես իրենց ձեռքն են վերցնում, բայց կտրված լինելով մյուս շրջաններից և չստանալով օգնություն, նրանք այն չեն կարողանում պահել։ Նույնպիսի ապստամբություններ են տեղի ունենում Սարիղամիշում (մայիսի 11-ից 18-ը), Նոր Բայազետում (մայիսի 13-ից 19-ը՝ Հ. Սարուխանյանի գնկավարությամբ)։ Մայիսի 20-ին Ջանդելուրում սկսված ապստամբության ծավալումով մի քանի օրվա ընթացքում ամբողջ Ջանդելուրում Սովետական իշխանություն է հաստատվում, որը սակայն երկար չի տևում։ Կատաղի կռիվներից հետո դաշնակներին հաջողվում է մայիսի վերջերին այդ ապստամբությունը ևս ճնշել։

Համարյա բոլոր վայրերում ապստամբություններին ամենաակտիվ մասնակցություն են ունեցել ռևոլյուցիոն գինվորները, որն առանձնապես ցայտուն կերպով արտահայտվել է Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և Նոր Բայազետում։

Մայիսյան օրերին գինված ապստամբության փորձեր են լինում նաև Ղարաքիլիսայում (այժմ Կիրովական), Կաղզվանում, Իգդիրում և այլ վայրերում։

Քարվանսարայի (այժմ Իշխան) և Շամշադինի շրջաններում ապստամբությունը սկսվում է մայիսի 18-ին։ Դրավելով այդ շրջանները և առաջ շարժվելով, ապստամբները մայիսի 22-ին իրենց ձեռքն են վերցնում Դիլիջանը, այնտեղ հաստատելով Սովետական իշխանություն, որը դոյություն է ունենում մինչև մայիսի վերջերը։ Շուտով դաշնակցական բանդաները անցնում են հարձակման։ Տեղի են ունենում կատաղի կռիվներ, որոնց ընթացքում դաշնակները այդ շրջանում նույնպես վերահաստատում են իրենց իշխանությունը։ Ապստամբների մի մասը, թողնելով Հայաստանը, անցնում է Սովետական Ադրբեջան։ Դաշնակների հետապնդումից և գաղանային ճնշումից պաշտպանվելու նպատակով Սովետական Ադրբեջան են անցնում նաև Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Ջանդելուրի ապստամբների որոշ մասը։

Մայիսյան ապստամբությունը, որն ընդգրկեց ամբողջ երկիրը, վայրկյան կերպով ապացուցեց Ռուսաստանի ծայրամասերից մեկի՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների սոցիալիստական դաշինքի ամրապնդումը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ իշխանությունն իրենց ձեռքը վերցրած Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ, ընդդեմ կոնտռևոլյուցիոն ուժերի դաշինքի։

«Հոկտեմբերյան հեղաշրջումը,— գրում է Ի. Վ. Ստալինը,— միայն ամրապնդեց ծայրամասերի բանվորների ու գյուղացիների դաշինքը Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ՝ ոգեշընչելով նրանց սոցիալիզմի հաղթանակի հավատով։ Իսկ «ազգային կառավարությունների» պատերազմը Սովետական իշխանության դեմ ազգային մասսաների կոնֆլիկտն այդ «կառավարությունների» հետ հասցրեց կապերի կատարյալ խզման նրանց հետ, բացահայտ ապստամբության նրանց դեմ։

Այսպես կազմվեց ամբողջ Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների սոցիալիստական դաշինքը Ռուսաստանի ծայրամասերի ազգային-բուրժուական «կառավարությունների» կոնտրռևոլյուցիոն դաշինքի դեմ»[1]։

Խաղաղությունը, ազրարային հեղաշրջումը և ազգությունների ազատությունը,— ահա սրանք էին այն հիմնական հարցերը, նշում է Ի. Վ. Ստալինը,— որոնք ռուսական պրոլետարիատի կարմիր դրոշի շուրջը համախմբեցին անծայրածիր Ռուսաստանի բոլոր ազգությունների աշխատավորներին։

Մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո Հայաստանի բոլոր գավառներում ու շրջաններում դաշնակները սկսեցին կատաղի հարձակումը կոմունիստական կազմակերպությունների և նրանց հետևից գնացող ռևոլյուցիոն մասսաների դեմ։ Ապստամբության ժամանակ և նրանից հետո դաշնակ խմբապետների ձեռքով սպանվեցին ապստամբության հերոս զեկավարներ Դ. Դումիսյանը, Ս. Ալալեոդյանը, Բ. Ղարիբջանյանը, Ե. Սևյանը և շատ ուրիշներ։

Մայիսյան հերոսական ապստամբության ճնշման և դրանից հետո երկրում ավելի դաժան տեռորիստական ռեժիմ հաստատելու գործում դաշնակները մեծ օգնություն են ստանում ամերիկյան և անգլո-ֆրանսիական իմպերիալիստներից։ Դեռ ապստամբության նախօրյակին, 1920 թ. ապրիլին, երբ ռևոլյուցիոն շարժումը լայն ծավալ էր ընդունել երկրում, գենիկինյան բանակում դաշնակցական կառավարության ներկայացուցիչը դիմում է նույն բանակում անգլիական կառավարության ներկայացուցիչ գեներալ Պերսին, խնդրելով նրանց օգնություն։ «Քանի դեռ Հայաստանը չի անջատված (այսինքն քանի դեռ դաշնակների տիրապետությունը չի տապալված — Ա.. Հ.),— ասված է դիմումի մեջ,— պետք է փոխադրել այնտեղ զենքեր, արկեր, զինապաշար, տեխնիկական միջոցներ և

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 179—180։

հաղուստ, այն հաշվով, որ նա բավարարի մինիմում 60 հազարանոց. մաքսիմում 100 հազարանոց բանակի...

Բոլշևիզմի ալիքը անարդել կերպով տարածվում է ամբողջ Արևելքում»[1],— *խուճապահար վերջացնում է իր դիմումը դաշնակների «կառավարության» ներկայացուցիչը։*

Դրան որպես պատասխան, Անտանտայի պետությունները նույն թվականի հունիսին ռազմական մեծ օգնություն են ցույց տալիս դաշնակներին, որպեսզի վերջիններս ճնշեին ռևոլյուցիոն շարժումները և պահպանեին իրենց իշխանությունը։ Անգլիան հատկացնում է 40 հազար հոդու սպառազինությունն ապահովելու համար բոլոր զենքերն ու այլ միջոցները, Ֆրանսիան տալիս է 10 հազար հրացան, 10 միլիոն փամփուշտ, Հունաստանը խոստանում է տալ 10 հազար հրացան, 4 միլիոն փամփուշտ և այլն[2]։

Իր դոյության երկու և կես տարիների ընթացքում դաշնակների կառավարությունը միայն անգլո-ամերիկյան իմպերիալիստներից որպես ֆինանսական օգնություն, պարարի ձևով ստացել է 17,4 միլիոն դոլար, որից 13 միլիոնը ԱՄՆ-ից, 4,4 միլիոնը Անգլիայից[3]։ *Անգլո-ամերիկյան իմպերիալիստները պարարների անվան տակ այդպիսի գումարներ տրամադրելով դաշնակներին, ինչպես նաև մենշևիկներին ու մուսավաթիստներին, վերջիններիս օգտագործելով որպես իրենց կամակատարները, նպատակ էին դրել ամրացնել իրենց տնտեսական և ռազմա-ստրատեգիական դիրքերը Անդրկովկասում, այն դարձնել իրենց դաղութը և օգտագործել որպես նոր արշավանքի բազա ընդդեմ Սովետական Ռուսաստանի։*

Սակայն նրանց չհաջողվեց խեղդել Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը, թուլացնել կամ ոչնչացնել վերջիններիս սոցիալիստական դաշինքը Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ։

1920 թ. հուլիսին Զանգեզուրի բանվորներն ու գյուղացիները կոմունիստների գլխավորությամբ նորից բարձրացրին ապստամբության դրոշը հանուն սովետական կարգերի։ Ապստամբությունը սկսվում է Ղափանում և Շիկահեր գյուղում։ Շուտով այն ծավալվում է ամբողջ Զանգեզուրում։ Տապալելով դաշնակների տիրապե-

---

[1] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. 453, թ. 65։*

[2] *Նույն տեղում, թ. 66։*

[3] *Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Ժողովածու, Հրատ. ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի, Երևան, 1926, էջ 3։*

տությունը և Զանգեզուրից դուրս շպրտելով դաշնակցական հրոսակախմբերին, ապստամբները Դորիսի, Ղափանի և Սիսիանի շրջաններում հաստատում են Սովետական իշխանություն, որը դադարություն է ունենում մինչև նույն թվականի հոկտեմբեր ամիսը։ Սակայն օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ դաշնակներին հաջողվում է այստեղ ևս ժամանակավորապես վերականգնել իրենց իշխանությունը։

Նման ծանր պայմաններում Հայաստանի Կոմունիստական պարտիան համախմբում էր երկրի ռևոլյուցիոն ուժերը և նրանց նախապատրաստում նոր, վճռական գոտեմարտերի։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի՝ 1920 թ. հոկտեմբերին Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին ուղղված կոչերից մեկում ասված է.

«Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովին ու դասակարգային գիտակցությանը՝ կազմակերպվելու կոմունիստական կուսակցության դրոշի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերը, որպեսզի ձեռք-ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ, միահամուռ խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշը Հայաստանում։

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը»[1]։

Կուսակցության շարքերով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները նախապատրաստվում էին նոր, վճռական գոտեմարտերի հանուն Սովետական իշխանության հաղթանակի։

Դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետեվանքով, դնալով ավելի ու ավելի բարդանում էր երկրի ներքին և արտաքին դրությունը։ Այդ առանձնակի սրությամբ արտահայտվեց 1920 թ. աշնանը։

Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում իրենց իմպերիալիստական նպատակները իրականացնելու համար Անտանտայի իմպերիալիստները, այստեղ, Անդրկովկասում հրահրում էին նոր պատերազմ։ Դրա համար դաշնակների մարիոնետային կառավարությունը հարմար գործիք էր նրանց ձեռքում։ Անտանտայի իմպերիալիստները,— ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը,— դաշնակներին

---

1 *ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ 1, գործ 4, թ. 23—24։*

դրգռեցին Թյուրքիայի դեմ, հրահրեցին հայ-թյուրքական պատերազմը և դաշնակիների Հայաստանին խայտառակ կերպով լքեցին, թողնելով թյուրքերի հոշոտմանը[1]։

Բուռն ձգտում ունենալով պատերազմելու, և սկսելով այն, թյուրքական գավիճները շտապում էին իրականացնելու իրենց նվաճողական պլանները Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ։

Պատերազմի առաջին իսկ օրերից դաշնակների զինված ուժերը կրեցին խոշոր պարտություններ։ Առաջ շարժվելով, քեմալական զորքերը բարբարոսաբար ավերում էին գավթած տերիտորիայի քաղաքներն ու գյուղերը, հափշտակում ու թալանում ժողովրդին ու երկրի նյութական հարստությունները, դաղանային տեսլությամբ ոչնչացնում հայ և մյուս բնակչությանը։

Հոկտեմբերի 30-ին գրավելով Կարսը, նոյեմբերի սկզբին նրանք արդեն մոտեցել էին Ալեքսանդրոպոլին, որը գավթում են նոյեմբերի 6-ին։

Նոյեմբերի կեսերին Սարիղամիշը, Կարսը, Սուրմալուն, Ալեքսանդրոպոլը իրենց դավառներով գտնվում էին թյուրքական օկուպանտների ձեռքում, որոնք բազմատեսակ սանձարձակություններ էին անում գավթած վայրերում։

Հայաստանի մնացած տերիտորիան լցված էր հարյուր հազարավոր գաղթականներով։ Սրած կերպով ծավալվում էին սովն ու համաճարակը։ Ամեն օր սովից ու հիվանդություններից մահանում էին հազարավոր աշխատավորներ։ Օրհասական վիճակ էր ստեղծված հայ ժողովրդի համար։ Բազմադարյան պատմություն ունեցող հայ ժողովուրդը կանգնած էր կործանման, ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև։

Անգլիայի, Ամերիկայի, Ֆրանսիայի հրահրումով սկսված հայ-թյուրքական այդ պատերազմը հայ ժողովրդի համար իր ծանր հետևանքներից բացի, միաժամանակ պատերազմը վտանգ էր ստեղծել նաև Սովետական Ռուսաստանի համար։ Խոսելով այդ մասին, 1920 թ. նոյեմբերի 20-ին Վ. Ի. Լենինը ասել է. «... Կովկասում ներկայումս հյուսվում են շատ բարդ պայմաններ, որ վերին աստիճանի դժվար է ըմբռնել, ըստ որում, մեր վզին կարող է պատերազմ փաթաթվել նույնիսկ օրավուր»[2]։

Սակայն Սովետական Ռուսաստանի կառավարության իմաս-

---

1 Տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ 4, էջ 455։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, Հայպետհրատ, Երևան, 1952, էջ 520։

տուն քաղաքականության շնորհիվ պատերազմի այդպիսի վտանգը շուտով լիկվիդացվում է։

Դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով 1920 թ. վերջերին հայ ժողովրդի համար ստեղծված ծանր վիճակը չվրիպեց Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի, նրա մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ուշադրությունից։ Կենտրոնական Կոմիտեի հանձնարարությամբ գալով Բաքու, 1920 թ. նոյեմբերի 4-ին Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի և Ադրբեջանի Կ(բ)Պ ԿԵնտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյի նիստում Ի. Վ. Ստալինը իր ելույթի մեջ վերլուծելով Անդրկովկասի վիճակը, նշում է Անդրկովկասյան Կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրները։ Այդ ելույթում Ի. Վ. Ստալինը Կենտկոմի անունից ցուցում է տալիս, որ անհրաժեշտ է ամեն կերպ օգնել Հայաստանին և նրան փրկել կործանումից։

Այդ ցուցումները դործողության մարտական ծրագիր են դառնում Հայաստանի Կոմունիստական պարտիայի համար, բանվոր դասակարգի ու աշխատավոր դյուղացիության համար։ Մոբիլիզացնելով բոլոր ուժերը, նրանք շարունակում են պայքարը Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար։ 1920 թ. նոյեմբերին Նոր Բայազետի, Ղափանի, Դիլիջանի, Շամշադինի, Էջմիածնի, Աշտարակի և այլ դավառներում ու շրջաններում մեկ կողմից բանվորների ու դյուղացիների, մյուս կողմից դաշնակցական բանդաների միջև տեղի են ունենում վինված ընդհարումներ։ Ռևոլյուցիոն մասսաները կոմունիստների ղեկավարությամբ անհաշտ պայքար տանելով դաշնակների տիրապետության դեմ, հաստատ համոզված էին, որ միայն այդ տիրապետության կործանումով և սովետական կարգերի հաստատումով հնարավոր կլինի ձեռք բերել իսկական ազատություն ու անկախություն, երկրում հաստատել կարգ ու կանոն և ժողովրդին փրկել կործանումից։

Նրանք միաժամանակ համոզված էին, որ այդ հնարավոր է իրականացնել միայն ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, նրա հերոսական բանակի օգնությամբ։ Բարձրացնելով իրենց ազատության ու անկախության համար ռևոլյուցիոն պայքարի կարմիր դրոշը, նրանք համոզված էին, որ կստանան անհրաժեշտ օգնություն ինչպես ռուս մեծ ժողովրդից, նույնպես և Անդրկովկասի եղբայրական ժողովուրդներից և հաղթանակը մինչև վերջ կհասցնեն։

Մոբիլիզացնելով բոլոր ռեակցիոն ուժերը, դաշնակիները հույս ունեին օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ փրկվել կործանումից։ Դրան հասնելու համար նրանք նույնիսկ ընդունեցին թյուրքական օրիենտացիա։ Այդ օրերին դաշնակների «Հառաջ» թերթը գրում էր.

«Իր փրկության համար հայ ժողովուրդը ունի միայն մեկ ճանապարհ — դանել անմիջական կնրպով մի ընդհանուր լեզու իր հարևանի՝ Թյուրքիայի հետ։ Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական ու ֆիզիկական գոյությունը հարատևորեն,— նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թյուրքական օրիենտացիա»[1]։

Դաշնակների նույն թերթը այդ ժամանակ մի այլ համարում գրում էր.

«Այդպիսի մի ուժ, որն անխուսափելիորեն պիտի հենարան դառնար հակաբոլշևիկյան տարրերի համար՝ տապալելու Ադրբեջանում Սովետական իշխանությունը,— անտարակույս կլինեն տաճկական այն զորքերը, որոնք ձգտում են այսօր Հայաստանի վրայով մտնել Ադրբեջան»[2]։

Այսպիսով, հայ ժողովրդի այդ կատաղի թշնամիները հույս ունեին Թյուրքիայի օգնությամբ ճնշել ռևոլյուցիոն շարժումը Հայաստանում և տապալել սովետական կարգերը Ադրբեջանում։ Դրանով իսկ նրանք մի անգամ ևս իրենց մերկացրին ժողովրդի առջև որպես ռևոլյուցիայի կատաղի թշնամիների։

Սակայն այդ ստորությունը ևս չփրկեց դաշնակներին։

Գնալով Սովետական իշխանության համար մղվող պայքարը երկրում ավելի ու ավելի լայն ծավալ էր ընդունում, որն իր բարձրագույն աստիճանին է հասնում 1920 թ. նոյեմբերի վերջերին։ Այս անգամ ղինված ապստամբությունը սկսվում է Քարվանսարայի (այժմ Իջևանի) շրջանում։ Այստեղ էին կենտրոնացված ռևոլյուցիոն ղինավոր ուժերը և ապստամբության շտաբը։ Ղինված ապստամբությունը սկսվեց նոյեմբերի 29-ին։ Ապստամբ բանվորներն ու գյուղացիները Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տապալեցին ժողովրդի ոխերիմ թշնամի՝ օտարերկրյա իմպերիալիստների հետ կամակատար դաշնակների բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային իշխանությունը։

---

[1] «Հառաջ», 1920, № 255։

[2] Նույն տեղում, № 229։

Նոյեմբերի 29-ին Քարվանսարայում կազմակերպվում է Հայաստանի Ռևոլյուցիոն Կոմիտեն (Ռևկոմ), Ս. Կասյանի նախագահությամբ: Ռևկոմը նույն օրը հրապարակում է իր Դեկլարացիան՝ Հայաստանում Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա հաստատելու մասին: Դեկլարացիայում ասված է.

«Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ՝ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական խորհրդային Հանրապետություն: Այսօրվանից խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին հնչուղների դարավոր լծից»[1]:

Նոյեմբերի 30-ին Հայաստանի նորակազմ Ռևկոմը հեռագրով դիմում է ՌՍՖՍՀ ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Վ. Ի. Լենինին, ողջունելով նրան և խնդրելով Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին: Հեռագրում ասված է.

«Թող հայտնի լինի համաշխարհային ռևոլյուցիայի առաջնորդին, որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները զայրացած դաշնակների կառավարության հանցագործ քաղաքականությունից և երկրում սկսված անարխիայի խորացումից, բարձրացրին ապստամբության դրոշը: Հայաստանի Կոմունիստական պարտիան անմիջապես իր ձեռքը վերցրեց այդ տարերային շարժման ղեկավարությունը և ստեղծեց Հայաստանի Ռևկոմ, հայտարարելով Հայաստանը Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա: Առաջին հարվածը հասցված է — Դիլիջան քաղաքը մեր ձեռքումն է: Ոգևորված ապստամբները շարժվում են առաջ ատելի թշնամուն՝ Անտանտայի գործակալին վերջնականապես կործանելու համար: Եվ, կատարելով նրանց կամքը, մենք, կազմելով Ռևկոմ, առաջ ենք շարժվում, լի հույսով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների աղատարար — Սոցիալիստական Մեծ Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը ցույց կտա մեզ իրական օգնություն: Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների անունից մենք խնդրում ենք ցույց տալ այդ օգնությունը: Կեցցե Ռուսաստանի Սոցիալիս-

---

[1] *ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, Պետական Հրատարակչություն, Էջմիածին, 1921, էջ 1: Ընդգծումները բնագրինն են — Ա. Հ.:*

տական Ֆեդերատիվ Սովետական Ռեսպուբլիկան։ Կեցցե նրա հաղթական Կարմիր Բանակը»[1]։

Վ. Ի. Լենինի ցուցումներով հերոսական 11-րդ Կարմիր Բանակի զորամասերը օգնության են հասնում ապստամբներին։ Մարտերով առաջ շարժվելով, ապստամբները 11-րդ բանակի զորամասերի հետ միասին, դեկտեմբերի 2-ին մտնում են Երևան, Հայաստանի մայրաքաղաքի վրա բարձրացնում սոցիալիստական ռևոլյուցիայի աղատարար Կարմիր դրոշը։

Ժողովրդի կատարի թշնամի դաշնակիները, որոնք արդեն դրկված էին իշխանությունից, նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Թյուրքիայի հետ ապօրինի կերպով կնքում են մի պայմանագիր, որի համաձայն Հայաստանը պետք է անցներ Թյուրքիայի պրոտեկտորատի ներքո և դրկվեր բանակ պահելու իրավունքից։ Բացի դրանից, այդ պայմանագրով դաշնակիները Թյուրքիային հանձնեցին Կարսի մարզը և Սուրմալուի գավառը։ Այդ պայմանագիրը իր նմանը չունեցող մի սուր դավ էր հայ ժողովրդի հանդեպ, որը, սակայն, առաջին իսկ օրվանից անօրինական ճանաչվեց ու չեղյալ հայտարարվեց Սովետական իշխանության կողմից։

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում՝ այդ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակն էր ռուսական ցարիզմի նախկին գաղութում, հաղթանակ, որն անհնարին էր առանց ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնության։ Կործանման վտանգի առաջ կանգնած հայ ժողովուրդը սովետական կարգերի հաստատումով ձեռք բերեց իր ազատությունն ու անկախությունը և վերջնականապես փրկվեց կործանումից։ Իրականացավ ազատասեր հայ ժողովրդի դարավոր իղձը, սկսվեց նրա իսկական վերածնունդը՝ հայ ժողովրդի պատմության նոր դարաշրջանը։

Սովետական կարգերի հաղթանակի առթիվ Հայաստանի բազմահազար աշխատավորներ իրենց ողջույնի առաջին խոսքն ուղղեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի կազմակերպչին ու առաջնորդին՝ Վ. Ի. Լենինին։ 1920 թ. դեկտեմբերի 6-ին Երևանում տեղի ունեցած բազմահազար աշխատավորների ու կարմիր բանակայինների առաջին միտինգը անսահման խանդավառությամբ Վ. Ի. Լենինին ուղարկել է հետևյալ հեռագիրը.

---

[1] Газета „Жизнь национальностей", 1920, 8 декабря, № 39 (95).

«ՄՈՍԿՎԱ, ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆԻՆ.

Նիւթ և կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշների շուրջը, աշխատավորությունը հանձինս Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին, հեղափոխություն, որի ալիքները խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստանին։

... Մոնոլով խորհրդային հանրապետությունների պրոլետարական ընտանիքի մեջ, մենք հետևում ենք Հոկտեմբերյան հեղափոխության հերոսական օրինակին։

Ունենալով ռուս բանվորների անցյալի փորձը, և ստանալով աշխատավորական Ադրբեջանի ու Ռուսաստանի օգնությունը, խորհրդային Հայաստանի երիտասարդ Հանրապետությունը համարձակ և անվախ դիմում է դեպի ապագան և բնավ չի կասկածում, որ աշխատանքը վերջնականապես հաղթանակելու է կապիտալին»[1]։

Հայաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակը ոգջունեցին սոցիալիստական ռևոլյուցիայի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինը և նրա աշակերտ ու վիճակից Ի. Վ. Ստալինը։

1920 թվականի դեկտեմբերի 22-ին, Սովետների Համառուսաստանյան 8-րդ համագումարում ժողովրդական կոմիսարների Սովետի գործունեության մասին զեկուցման մեջ անդրադառնալով Արևելքի մի շարք երկրներում, այդ թվում նաև Հայաստանում սովետական կարգերի հաստատման փաստին, Վ. Ի. Լենինը ասել է.

«Ես պետք է նշեմ նաև, ընկերնե՛ր, որ Արևելքում մեր քաղաքականությունն այս տարվա ընթացքում խոշոր հաջողություններ ունեցավ։ Մենք պետք է ոգջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի սովետական ռեսպուբլիկանների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ո՛չ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրին բանվորների և գյուղացիների ձեռքը։ Այդ ռեսպուբլիկաները ապացույց և հաստատումն են այն բանի, որ Սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի և անմիջապես իրագործելի են ո՛չ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերության տեսակետից զարգացած են, ո՛չ միայն սոցիալական այնպիսի հենարան ունեցող երկրներում, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմք ունեցող երկրներում, ինչպիսին գյուղացիությունն է։ Գյուղացիական Սո-

---

[1] «Կոմունիստ» (Հայերեն), օրգան ՀԿ(բ)Պ Կենտրոնական և Երևանի կոմիտեների ու Հայաստանի Ռևկոմի, 1920, դեկտ. 8, Երևան, № 3։

վեհանների գազափարը հաղթանակեց։ Իշխանությունը դյուզացիների ձեռքում ապահովված է. նրանց ձեռքումն են հողը, արտադրության միջոցները։ Դյուզացիական-սովետական ռեսպուբլիկաների բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի սոցիալիստական ռեսպուբլիկայի հետ արդեն ամրապնդված են մեր բաղաքականության գործնական արդյունքներով»[1]։

Պարիսիայի կենտրոնական օրգանի՝ «Պրավդա» թերթի 1920 թ. դեկտեմբերի 4-ի համարում տպագրված «Կեցցե՛ Սովետական Հայաստանը» հոդվածում Ի. Վ. Ստալինը գրել է.

«Տանջված ու բազմաչարչար, Անտանտայի և դաշնակիների ողորմածությամբ սովի, բայբայման ու գաղթի մատնված Հայաստանը,— բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը այժմ իր վերածությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր։

Ո՛չ Անգլիայի, հայկական շահերի «գարավոր պաշտպանի» կեղծ հավատարմացումները, ո՛չ Վիլսոնի սիրահռչակ տառնեչորս կետերը, ո՛չ Սղդերի լիպայի մեծապղորդ խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով»— չկարողացան (և չէի՛ն կարող) փրկել Հայաստանը կատորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գազափարը Հայաստանին բերեց խաղաղություն և տղդային վերածննդի հնարավորություն...

Բոդ խնաման բոլորը, ում հարկ է պիտենալ, որ, այսպես կոչված հայկական «պրոբլեմը», որի վրա ապարդյուն գլուխ էին ջարդում իմպերիալիստական դիվանագիտության հին դայլերը, կարողացավ լուծել միայն Սովետական իշխանությունը։

Կեցցե՛ Սովետական Հայաստանը»[2]։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը ջերմ արձագանք գտավ եղբայրական բոլոր ժողովուրդների մեջ։ Այդ հաղթանակը ոգեշնչեցին Սովետական երկրի բազմահազար աշխատավորները, Սովետական Աղրբեջանի բանվորներն ու դյուզացիները, մենշևիկների սիրապետության դեմ սոցիալիստական ռևոլյուցիայի դրոշը բարձրացրած եղբայրական Վրաստանի բանվորներն ու դյուզացիները։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի առթիվ իրենց ողջույններով ու փայլուն ճառերով հանդես եկան հայ ժո-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, Հայպետհրատ, Երևան, 1952, էջ 619։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 458—459։

դավթի մեծ բարեկամներ Ա. Օրջոնիկիձեն՝ Բաքվի Սովետի հանդիսավոր նիստում և Ս. Մ. Կիրովը՝ Վլադիկավկազի (այժմ Ջաուջիկաու) Սովետի նիստում:

Այդ մեծ հաղթանակով հայ ժողովուրդը ձեռք բերեց իր ազատությունն ու անկախությունը: Դրանով իսկ նա հնարավորություն ստացավ սովետական մյուս ժողովուրդների հետ միասին, ռուս մեծ ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնությամբ, ձեռնամուխ լինելու նոր՝ սոցիալիստական հասարակարգի կառուցման պատմական գործին:

2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՊԱԲԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ: ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ: ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄ

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման ժամանակ երկիրը գտնվում էր ծանր պայմաններում: Շարունակվում էր օտարերկրյա իմպերիալիստների կամակատար դաշնակների բուրժուա-նացիոնալիստական արյունոտ տիրապետության ժառանգության անտեսական սուր ճգնաժամը: Անգլո-ամերիկյան իմպերիալիստների հրահրած 1920 թվականի դաշնակո-բյուրքական պատերազմի հետևանքով երկիրը լցված էր բազմահազար գաղթականներով ու որբերով: Սովը և համաճարակը շարունակվում էին: Բազում քայքայված վիճակում էին գտնվում երկրի մյուս զարգացած ոլորտների տնտեսությունը, արդյունաբերությունը, տրանսպորտը և տնտեսության մյուս ճյուղերը:

Սովետական կարգերի հաստատման առաջին ամիսներին Հայաստանի ներկա տերիտորիայի զգալի մասը դեռևս գտնվում էր թշնամական ուժերի ձեռքում: Լոռու մի մասը՝ չեզոք գոտին (ներկայիս Ստեփանավանի, Կալինինոյի և Ալավերդու շրջանները) գտնվում էր վրացական մենշևիկների իշխանության տակ՝ մինչև 1921 թ. փետրվարի կեսերը: Զանգեզուրում դեռևս շարունակում էին իշխել դաշնակցական բանդաները՝ մինչև 1921 թ. հուլիսի կեսերը: Ալեքսանդրապոլն իր գավառով և Հայաստանի միակ երկաթուղու հիմնական մասը գտնվում էին քեմալական զավթիչների ձեռքում՝ մինչև 1921 թ. ապրիլի 23-ը:

Երիտասարդ սովետական ռեսպուբլիկայի դրությունն ավելի էր բարդացել այն պատճառով, որ իր վերջին օրերն ապրող վրացական մենշևիկյան կառավարությունը, որը դեռևս շարունակում էր մնալ որպես միջազգային կոնտրռևոլյուցիայի հենարանը Անդր-

680—3

կովկասում, բնականոն էր ենթարկել Սովետական Հայաստանը՝ կտրելով երկաթուղային կապը նրա և Սովետական Ռուսաստանի ու Սովետական Ադրբեջանի միջև, զրկելով Հայաստանին այնտեղից երկաթուղային տրանսպորտով ուղարկվող պարենային օգնությունից։

Այդպիսի դժվարին պայմաններում Հայաստանի Սովետական իշխանության առաջ դրված էին քաղաքական, տնտեսական և կուլտուրական բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում էին իրենց լուծումը։

Այդ խնդիրների շարքում ամենակարևորը պրոլետարիատի դիկտատուրայի օրգանների առնգծումն ու ամրապնդումն էր, Սովետական իշխանության ամրապնդումը։

Սովետական ապարատի կազմակերպումն ու ամրապնդումը Հայաստանում սկսվեց այն ժամանակ, երբ արդեն Սովետական Ռուսաստանը թևակոխել էր իր գոյության չորրորդ տարին և այդ ուղղությամբ կուտակել էր հարուստ փորձ։ Այս հանգամանքը խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանի, ինչպես նաև սովետական մյուս ռեսպուբլիկանների համար։

Հայաստանի Ռևկոմի դեկրետներով կազմակերպվում են Հայկական ՍՍՌ Նեղբին Գործերի, Արտաքին Գործերի, Ռազմական, Արդարադատության, Լուսավորության, Հողապործության, Ֆինանսների, Պարենավորման, Աշխատանքի, Առողջապահության և Սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարիատներ, ինչպես նաև ժողովրդական Տնտեսության Խորհուրդ։ Հաղթված, բայց տակավին չլինաթափված կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ պայքարելու նպատակով, Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով կազմակերպվում է Արտակարգ Հանձնաժողով։

Դեկտեմբերի 6-ին հրապարակվում է Հայաստանի Ռևկոմի մի ուրիշ հրամանը, որով իրենց լիազորություններից զրկվում են դաշնակցական ջախջախված կոնտրռևոլյուցիոն կառավարության ապատահմանում գտնված բոլոր դիվանագիտական ներկայացուցիչները և միսիաները[1]։

Հետևողական կերպով վարելով խաղաղասիրական քաղաքականություն, Հայաստանի Սովետական կառավարությունը միաժամանակ չեղյալ է հայտարարում այն բոլոր պայմանագրերը, որոնք

---

[1] Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, 1921, էջ 7։

պաշտոնների կառավարությունը կնքել էր մյուս պետությունների հետ և որոնք բացահայտ կերպով հակառակ էին հայ ժողովրդի կենսական շահերին։

1920 թ. դեկտեմբերի 13-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ ՆԿԺ Կոմիսարիատի հրամանը՝ հին վարչական հիմնարկությունների լիկվիդացման մասին։ «Սույն հրամանը հրատարակելու օրվանից,— ասված է վերոհիշյալ հրամանում,— վերացվում են հետևյալ հիմնարկություններն ու պաշտոնները՝ նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառական կոմիսարները, նախկին ներքին գործերի նախարարության արտակարգ լիազորները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները, Հանրապետության միլիցիայի պահեստը, բոլոր նրանց մոտ գտնված պրոտեկցիաներով և շտատներով»[1]։

Ռևկոմի դեկտեմբերի 21-ի դեկրետով Սովետական Հայաստանի սահմաններում «վերնագրվում է ռուսական կայսրության «Հավաք օրինաց»-ը այն բոլոր փոփոխություններով հանդերձ, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան Սեյմը և Հայաստանի խորհուրդը, պառլամենտ ու կառավարություն»[2]։ Դրա փոխարեն Հայաստանում գործող օրենքներ են հայտարարվում Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության օրենքները (որոշ փոփոխություններով՝ համապատասխան տեղական պայմաններին)։

Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի 1920 թ. դեկտեմբերի 18-ի հրամանով լիկվիդացվում են հին դատարանները, որոնք իրենց ամբողջ գործունեությամբ ուղղված էին աշխատավոր ժողովրդի դեմ՝ հանուն տիրապետող դասակարգերի շահերի պաշտպանության։ Հին դատարանների փոխարեն Արդժողկոմատի դեկտեմբերի 22-ի հրամանով ստեղծվում են նոր, սովետական ժողովրդական դատարաններ[3]։

Հայաստանի Ռևկոմի դեկրետով Ռևկոմին կից կազմակերպվում է Գերագույն Հեղափոխական Տրիբունալ, իսկ Արդժողկոմատին կից՝ հեղափոխական տրիբունալներ։

Սկեղեցին անջատվում է պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, 1921, էջ 11։

[2] Նույն տեղում, էջ 25։

[3] Նույն տեղում, էջ 20, 21, 27։

ՆԳԺ Կոմիսարիատի 1921 թ. հունվարի 21-ի հրամանով վերացվում են դասերը, դասային բոլոր արտոնություններն ու սահմանափակումները: «Այժմ Հայաստանում գոյություն ունեցող դասերը և քաղաքացիների դասային բաժանումները,— ասված է հրամանում,— դասային արտոնությունները և սահմանափակումները, դասային կազմակերպությունները և հիմնարկությունները, ինչպես նաև քաղաքացիական բոլոր աստիճանները վերացվում են:

Ամեն տեսակի կոչումները՝ ազնվականի, վաճառականի, կալվածատիրոջ և այլն, բեկերի, խաների, իշխանների և այլոց տիտղոսները վերացվում են և սահմանվում է Հայաստանի ամբողջ տպաբնակչության համար մի ընդհանուր կոչումն — Հայաստանի Հանրապետության քաղաքացի»[1]:

Ազգայնացվում են հողը և նրա ընդերքը, անտառները, մասնավոր բանկերը, Նատոլվի կոնսերվի գործարանը[2], Հայաստանի վրայով անցնող Ենդկատան—Եվրոպա հեռագրագիծը և այլն:

Ռևկոմների՝ որպես պետական իշխանության օրգանների, կազմակերպումը արդյունք էր այն ժամանակ երկրում սիրող քաղաքական բարդ իրադրության: Կոնտրռևոլյուցիոն ուժերի դիմադրությունը դեռ լիովին չէր ճնշված: Այդ ուժերը բացահայտ թե գաղտնի կերպով ամեն կերպ աշխատում էին հարվածել Սովետական իշխանությանը, քայքայել և թուլացնել նրա նոր կազմակերպվող ապարատը, տապալել սովետական կարգերը և վերականգնել իրենց իշխանությունը:

Մյուս կողմից աշխատավորական մասսաները Սովետական իշխանության ընտրովի օրգանների՝ Սովետների ընտրություններին դեռևս անհրաժեշտ չափով նախապատրաստված չէին: Դրա համար անհրաժեշտ էր որոշ ժամանակ և քաղաքական-մասսայական մեծ աշխատանք: Առանց դրան Սովետների ընտրությունները կարող էին օգտագործվել թշնամական ուժերի կողմից և հնարավոր էր, որ Սովետների մեջ մեծ չափով թափանցեին այդ ուժերի ներկայացուցիչները, այնտեղ շարունակելով իրենց քայքայիչ աշխատանքը:

Մինչև Սովետների ընտրությունները, անհրաժեշտ էր ռևոլյուցիոն արտակարգ միջոցների դործադրումով ամրապնդել նորա-

---

1 ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, 1921, էջ 86:

2 Մյուս մասնավոր գործարանների պետականացումը տեղի ունեցավ քիչ ավելի ուշ, 1921 թվականի ապրիլից սկսած (փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո):

ստեղծ Սովետական իշխանությունը, ավելի բարձրացնել աշխատավորների քաղաքական ակտիվությունը և նրանց նախապատրաստել Սովետների ընտրություններին: Անհրաժեշտ էր կազմակերպված և չափաչափել հակահարված հասցնել մոլեգնող կոնտրռևոլյուցիոն բանիմիուկներին:

Այդպիսի պայմաններում Հայաստանում Սովետական իշխանության առաջին տարում (1920 թ. նոյեմբերից մինչև 1921 թվականի վերջերը) անհրաժեշտություն առաջացավ որպես իշխանության պետական օրգաններ, կազմակերպել ռևոլյուցիոն կոմիտեներ (Ռևկոմներ), որոնք իրականացնում էին ինչպես բարձրագույն, նույնպես և տեղական իշխանության ֆունկցիաները: Ահա թե ինչու Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից ռևպուբլիկայում քաղաքական իշխանության բարձրագույն օրգանը հանդիսացավ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռևպուբլիկայի Ռևոլյուցիոն Կոմիտեն՝ Ռևկոմը:

Հայաստանի Ռևկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի պատմական Դեկլարացիայում այդ մասին ասված է. «Անկրկնելի ծանր պայմաններում ու լուրջ բռնկին ընդունելով իշխանության ամբողջ պատասխանատվությունը, մենք Հայաստանի ժողովրդական ուժերին կոչ ենք անում՝ մեզ աջակցել բանվորա-գյուղացիական իշխանության թշնամիների դեմ կռվելու և կանչում խորհրդային անդուլ, ստեղծագործական աշխատանքի»[1]:

Երկրի ներքին գործերի բարձրագույն վարչական մարմին՝ ֆունկցիան հանձնարարված էր ՆԳԺ Կոմիսարիատին: Նրան էր հանձնարարված իշխանության կազմակերպումը տեղերում, երկրի ամբողջ վարչական կազմի կենտրոնացումը, բոլոր տեղական, դավառական և քաղաքային ռևկոմների վարչական ղեկավարումը, երկրի ներքին վարչական կյանքին վերաբերող բոլոր հրամանների ու որոշումների հրատարակումը[2]: Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը մեծ աշխատանք կատարեց նոր, սովետական ապարատի կազմակերպման, ղեկավարման և ամրապնդման ուղղությամբ:

Տեղերում իշխանության օրգանները էին հանդիսանում գավառային, գավառակային (շրջանային) և գյուղական ռևկոմները: Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից ռևկոմները են

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջ 5:

[2] Նույն տեղում, էջ 8—9:

կազմակերպվում Դիլիջանում, Երևանում, Ալեքսանդրոպոլում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում և Սովետական Հայաստանի մյուս գավառներում։ Ռևկոմներ են կազմակերպվում նաև գավառակներում (շրջաններում) և գյուղերում։

1921 թ. հուլիսի 20-ին հրատարակվում է Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը[1] գյուղական, գավառակային և գավառային ռևկոմների մասին, որն օրենսդրական կարգով հաստատում է ռևկոմները, որպես Սովետական իշխանության կառավարման տեղական օրգանների, դոյությունը։

«Մինչև ՀՍԽՀ Սահմանադրության մշակումը,— ասված է դեկրետում,— կազմակերպվում են տեղական Հեղափոխական Կոմիտեներ (Հեղկոմներ) հետևյալ հիմունքներով։

1. Հեղկոմները ժամանակավոր սատրապատական կարգով նշանակովի իշխանություններ են.

2. Հեղկոմների նպատակն է՝

ա) խորհրդային իշխանության ամրապնդումը տեղերում։

բ) խորհուրդների ընտրությունների և համագումարների նախապատրաստությունը։

գ) Երկրի կառավարելը, մինչև որ կկազմակերպվեն ընտրովի խորհրդային մարմիններ։

3. Հեղկոմները, ըստ սատրապատական կարգի, բաժանվում են ա. գյուղական, բ. գավառակային և գ. գավառական հեղկոմների»։

Այնուհետև դեկրետում շարադրված են այդ ռևկոմների խնդիրները ու ֆունկցիաները։ Գյուղական ռևկոմներն առանձին բաժիններ չունեին։ Դեկրետը սահմանում էր, որ նրանք իրենց խնդիրները իրականացնում էին անմիջականորեն, առանց բաժինների։ Իսկ նրանց աշխատանքներին օժանդակելու համար գյուղի աշխատավորների մասնակցությամբ կազմակերպվում էին հանձնաժողովներ՝ գյուղական տնտեսության, կուլտուր-կրթական, ժողովրդական սնունդի պահպանության, կարմիրբանակայինների ընտանիքներին օժանդակող, ճանապարհների պահպանման և վերանորոգման, առողջապահության, բանվոր-գյուղացիական տնօրուն-

---

[1] 1921 թ. մայիսի 21-ից Հայաստանի Ռևկոմը վերակազմվում է Ժողովրդական կոմիսարների Սովետի՝ Ա. Մյասնիկյանի նախագահությամբ։

[2] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, Պետհրատ, Էջմիածին, 1921, պրակ. 2-րդ, էջ 76։

Իյան աջակցող և այլն։ Յուրաքանչյուր հանձնաժողովի համար մանրամասն հրահանգներ էր մշակում գավառական ռևկոմը[1]։

Գավառակային ռևկոմները գավառակի սահմաններում հանդիսանում էին Սովետական իշխանության միակ իրավազոր մարմինը։ Նրանք միավորում և դեկավարում էին իրենց ենթակա բոլոր դյուղերի ռևկոմների աշխատանքները։ Գավառակային ռևկոմների համար դեկրետը սահմանում էր հետևյալ բաժինները. ա) վարչական, բ) ժողովրդական լուսավորության, գ) դյուղական անտեսության. դ) պարենավորման, ե) զինվորական։ Այնուհետև մանրամասն կերպով թվարկված են գավառային ռևկոմների խնդիրներն ու ֆունկցիաները յուրաքանչյուր բնագավառում[2]։

Գավառային ռևկոմների մասին վերոհիշյալ դեկրետում ասված է. «Յուրաքանչյուր գավառում կազմակերպվում է գավառական Հեղկոմ, որը գավառի բարձր իշխանությունն է և ենթակա է ՀՍԽՀ ժողկոմների խորհրդին։

Գավառական Հեղկոմների պարտականությունն է միացնել, հավել և դեկավարել իրենց ենթակա գավառակային և դյուղական հեղկոմների գործունեությունը»[3]։

Դեկրետով գավառային ռևկոմների համար սահմանվում էր 13 բաժին՝ վարչական, զինվորական, քաղաքական (կոնտրռևոլյուցիայի դեմ պայքարող բաժին, որը կոչվում էր նաև պոլիտբյուրո), սոցիալական ապահովության և աշխատանքի, ժողովրդական լուսավորության, հողային, ֆինանսական, պարենավորման, բանվոր-դյուղացիական տեսչության և այլն։

Գավառային ռևկոմների բաժինները, բացի ռևկոմից, վերջինիս միջոցով ենթարկվում էին նաև համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին։

Սովետական կարգերի թշնամիները ամեն կերպ ձգտում էին թափանցել նաև ռևկոմների կազմում, չնայած նրանց կազմի նշանակովի լինելուն։ Որոշ տեղերում, ուր պայքարը թշնամիների դեմ թույլ էր կազմակերպված, ինչպես օրինակ Դարալագյազում, Բաշ-Պյառնիում, նրանց հաջողվում է խցկվել դյուղական և նույնիսկ գավառակային ռևկոմների կազմում, որոնք, սակայն, պարտիական

---

[1] Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, Պետհրատ, Էջմիածին, 1921, պրակ. 2-րդ, էջ 77։

[2] Նույն տեղում, էջ 77—80։

[3] Նույն տեղում, էջ 81։

կազմակերպությունների կողմից մերկացվում և դուրս են շպրտվում այնտեղից։

Ինչպես սահմանված էր Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի 1921 թ. հուլիսի 20-ի դեկրետով, ի տարբերություն Սովետների, ռևկոմներն ընտրովի չէին, այլ նշանակովի։ Գյուղական ռևկոմների կազմը նշանակվում էր գավառական ռևկոմների կողմից։ գավառակայինը՝ գավառային ռևկոմի կողմից, գավառինը՝ Հայաստանի Ռևկոմի և 1921 թ. մայիսից՝ Ռևկոմին փոխարինող ժողկոմսովետի կողմից։ Ռևկոմների կազմի մեջ էին մտնում բանվորների, աշխատավոր գյուղացիների և ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Պարտիական դեկավարությունը ռևկոմներում իրականացվում էր նրանց մեջ եղած կոմունիստների և տեղական պարտիական կազմակերպությունների միջոցով։

Լինելով իշխանության յուրահատուկ ձև, ռևկոմները Հայաստանում իրենց գոյության մոտ մեկ տարվա ժամանակաշրջանում, Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ հսկայական դեր կատարեցին թշնամական ուժերի ջախջախման, սովետական կարգերի ամրապնդման, մասսաների քաղաքական ակտիվության բարձրացման և դրանով իսկ Սովետների ընտրությունների համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ուղղությամբ։

Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը խաշար դեր է կատարել նաև ռևոլյուցիայում ևեղյուցիոն կարգ ու կանոն, հասարակական ապահովություն հաստատելու գործում։ 1921 թ. հունվարի 21-ին Հայաստանի Ռևկոմը հրատարակում է հատուկ դեկրետ այդ մասին, ուր ասված է.

«1. Ներքին Գործոց Ժողկոմատին իրավունք է վերապահվում Հայաստանի Հանրապետության սահմաններից հեռացնելու ա) Հեղափոխական կարգի և հասարակական ապահովության վտանգ սպառնացող անձանց ու մասնակիցներին, կոլոպոխներին, գողերին, կեղծողներին, գողացած իրեր գնողներին... և ուրիշներին, բ) ակնհայտ հակահեղափոխականներին և չարաշահներին։

2. Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատի որոշումների դեմ եղած դանգատները ներկայացվում են Հայաստանի Հեղկոմին։

3. Դանգատ ներկայացնելու հանգամանքը չի խանգարում որոշման իրագործմանը»[1]։

Կենսագործելով այդ դեկրետը, Ներքին Գործերի Ժողովրդական

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, էջ 85։

Կոմիսարիատը ղզայի չափով ամրապնդեց ուսլյուցիոն կարգ ու կանոնը ուսպուբլիկայում:

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից սուր կերպով դրվեց նրա պինված ուժերի՝ Կարմիր Բանակի կազմակերպման հարցը: Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերի սպիտնավորումն սկսվել էր դեռևս Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց առաջ: Ինչպես տեսանք, 1920 թվականի մայիսյան հերոսական ապստամբության ճնշումից հետո, դաշնակների ուսոկուպատիվ ուժիմից պաշտպանվելու նպատակով՝ Զանգեզուրի, Ալեքսանդրոպոլի, Իջևանի, Շամշադինի և Հայաստանի մյուս շրջանների ուսլյուցիոն բանվորների ու գյուղացիների որոշ մասը անցել էր Սովետական Ադրբեջան, որտեղ 1920 թ. կեսերին հիշյալ ուժերից ձևավորվում է Կարմիր Բանակի Հայկական առաջին գունդը:

Կարմիր Բանակի հայկական առաջին գնդի կազմակերպումը տեղի ունեցավ 11-րդ բանակի Ռազմահեղկոմի Սովետի օգնության և Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի ղեկավարությամբ: Գնդի կազմակերպմանը և ամրապնդմանը մեծ օգնություն ցույց ավեց Բաքվի ուսլյուցիոն պրոլետարիատը: Նա իր շարքերից այդ գունդը համալրեց ուսլյուցիոն պայքարում կռվված կադրերով: Գնդի կազմը լրացվեց նաև 11-րդ բանակում եղած հայ ազգմիինևերով:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո այդ գունդը դառնում է այն կորիզը, որի հիման վրա ստեղծվում և ամրապնդվում է Սովետական Հզոր Բանակի ջոկատներից մեկը՝ Սովետական Հայաստանի Կարմիր Բանակը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին, երբ Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները հերոսական 11-րդ բանակի զորամասերի հետ միասին մտնում են Երևան, հրապարակվում է Հայկական ՍՍՌ բանակի հրամանատարի և ՌՍՖՍՌ-ի կոմիսարի հրամանը Հայաստանի բանակի վերակազմության մասին, ուր տրված են Հայաստանի Կարմիր Բանակի կազմակերպման հիմունքները: Հրամանում ասված է, որ բանակը կոչվում է Սովետական Հայաստանի Կարմիր Բանակ և հենվում է դինվորական ուսլյուցիոն խիստ կարգապահության վրա: «Բոլոր կարմիրբանակայինները,— ասված է այնտեղ,— մարտիկներից մինչև հրամանատարը նկատի, պարտավոր են Կարմիր Բանակում պահպանել խիստ հեղափոխական կարգապահություն, չուրաքանչյուրից պահանջելով իր պիտա-

կից և անձնական կատարումը»[1]։ Այնուհետև ասված է, որ զորամասերում նշանակվում են քաղաքական կոմիսարներ, որոնց պարտականությունն է զորամասերում քաղաքական աշխատանքի կազմակերպումը և ղեկավարումը, դրանով իսկ նրանց մարտունակության բարձրացումը։ Այդ հրամանում նշված են հիմնական այն միջոցառումները, որոնց կենսագործումով Հայաստանի նորաստեղծ Կարմիր Բանակը պետք է ամրապնդվեր և հաստատ կերպով իրականացներ իր խնդիրները Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար ինչպես ներքին, նույնպես և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ։

Հայաստանում Կարմիր Բանակի ձևավորման ժամանակ վերհիշյալ դունդը բաժանվում է մասերի և նրանցից մեկական դումարտակ ուղարկվում է նոր կազմակերպված մյուս դնդերը։ Սկսվում է ձևավորվել Հայկական դիվիզիան։

«Հայկական լեռնա-հրաձգային դիվիզիան,— ասված է դիվիզիայի 15-ամյակի առթիվ, 1935 թվականին, ՍՍՌՄ Պաշտպանության ժողկոմ ընկեր Վորոշիլովի հրամանում,— Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի ամենահին զորամասերից մեկը, ծնունդ է առել Հայաստանի աշխատավորների պարտիզանական ջոկատներից ու մարտական խմբերից, Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ժամանակ»[2]։

1920 թ. դեկտեմբերի 5-ից սկսվում են Հայկական ՍՍՌ Ռազմական Կոմիսարիատի կազմակերպման աշխատանքները։ Կոմիսարիատը ձեռնամուխ է լինում Հայաստանի Կարմիր Բանակի ամրապնդման աշխատանքներին։ Հաստատվում է զինվորական կոմիսարների ինստիտուտ։ Կարմիր Բանակը մաքրվում է սոլիտատական կարգերի նկատմամբ թշնամաբար տրամադրված տարրերից[3]։ Ռազմական ժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 12-ի հրամանով Հայկական ՍՍՌ Կարմիր Բանակին կից հիմնվում է Քաղաքական վարչություն։ Կոմունիստական պարտիայի մոտավորապես 100 անդամներ, որոնք գտնվում էին Սովետական Ադրբեջանում ձևավոր-

---

[1] ՀՍՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, էջ 6։

[2] «Խորհրդային Հայաստան», № 125, 1935, հուլիսի 1։

[3] Պետք է նշել, որ այս գործը պահանջված հետևողականությամբ և արագությամբ չիատարվեց, որից օգտվեցին դաշնակները 1921 թ. փետրվարյան ամսվա ապստամբության նախապատրաստման ժամանակ։ Սպայության մի մասին հաջողվեց պատսպարվել և անցնել դաշնակցական բանդաների կողմը, որոնք այդ ժամանակ կենտրոնացված էին Արագածի ստորոտում և Բաշ-Գյառնիում։

ված Հայկական զնդում, ուղարկվում են Քաղվարչության տրամադրության տակ՝ Կարմիր Բանակի նոր զորամասերում քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կազմակերպելու և զեկավարելու համար։

1921 թ. հունվարի 4-ին հրապարակվում է Հայաստանի Ռևկոմի զեկրետը կարմիրբրանակայինների ընտանիքների ապահովման մասին։ «Ոչ անելով աշխատավորներին մոռնելու Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության Կարմիր Բանակը,— ասված է զեկրետում,— Բանվորա-Գյուղացիական կառավարությունը կոչի հենց առաջին օրից յուր վրա է վերցնում թե՛ կարմիրբրանակայինի և թե՛ նրա ընտանիքի վերահիշյալ հոգսը»[1]։ Ռևկոմի այդ զեկրետով սեփական նյութական օգնություն՝ նպաստ է սահմանվում կարմիրբրանակայինների ընտանիքների անաշխատունակ անդամներին և հանձնարարվում է Սոցիալական Ապահովության ժողովրդական Կոմիսարիատին կազմակերպելու այդ օգնությունը։ Հայաստանի Սովետական կառավարության այս միջոցառումը նույնպես մեծ չափով նպաստում է կարմիրբրանակայինների քաղաքական-բարոյական վիճակի ամրապնդմանը։ Մանելով Կարմիր Բանակի շարքերը, նրանք համոզված էին և իրականում տեսնում էին, որ Սովետական իշխանությունը հոգ է տանում իրենց ընտանիքի մասին։ Նրանք մեծ եռանդով լծվում են մարտական-քաղաքական ուսուցման գործին, Սովետական հայրենիքի պաշտպանությունն է՛լ ավելի ամրապնդելու գործին։

Այդ ձեռնարկումները խոշոր չափով նպաստում են Հայաստանի երիտասարդ Կարմիր Բանակի քաղաքական-բարոյական վիճակի ամրապնդմանը, որը ցայտուն կերպով դրսևորվեց 1921 թվականի քաղաքացիական կռիվների ընթացքում։

Հայաստանի Կարմիր Բանակը կազմակերպվեց երկրի տնտեսական դժվարությունների և սովի ծանր օրերին. նա արժանացավ աշխատավոր ժողովրդի խանդավառ սիրուն և նյութական ու բարոյական մեծ օգնությանը։

1920 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն մի կոչ է ուղղում Հայաստանի դյուղացիությանը՝ Կարմիր Բանակին հացով և այլ կենսամթերքներով օգնելու մասին։

«Խորհրդային Ռուսաստանի Հերոսական Կարմիր Բանակի

---

[1] *ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, էջ 51։*

աջակցությամբ,— ասված է կոչում,— Հայաստանի բազաքների և դյուղերի աշխատավորների պայքարը, որ նրանք տարիներ ի վեր, իսկ վերջին ութ ամսվա ընթացքում առանձին թափով մղում էին բազաքների բուրժուանների և դյուղի կուլակների դեմ, պատկվեց հաղթությամբ։

... Այսօրվա ազատության, որին համատարած հետևում են Հայաստանի բանվորա-դյուղացիական մասսաները, մենք պարտական ենք Ռուսաստանի Կարմիր Բանակի աջակցությանը։ Նրբ Հայաստանի սահմաններում և դաշտերում դողանջեց ազատության առաջին զանգը, կարմիր մարտիկները շատ ելցին մեզ օգնության։ Նրանք այսօր մեզ հետ են և բաժանում են բանվորա-դյուղացիական իշխանության աշխատանքի ծանրությունը, նրանք պաշտպանում են մեր երկրի սահմաններն արտաքին հարձակումներից... Նրանց ներկայությունը թույլ չի տալիս հակահեղափոխական ուժերին երազել անցած հին կարգերի վերականգնման մասին...

Գյուղացի աշխատավորներ, Հայաստանի բանվորա-դյուղացիական կառավարությունն այսօր ձեզ է դիմում։ Հայաստանի սահմաններում հայտարարված է հացահատիկի կամավոր հավաքում։ Գյուղի կուլակների և հարուստների համար այդ հայտարարությունը պարտադիր է։ Հացի հավաքմանը պիտի մասնակցեն բոլոր դյուղերը, բոլոր դյուղացիները։

... Պարենավորման պահեստները պիտի լցվեն հացահատիկներով։ Հիշեցեք, որ հացը հավաքվում է Կարմիր Բանակի համար, նրանց համար, որոնք պաշտպանում են մեր սահմանները բշնամի ուժերի ներխուժումից և նրանց օժանդակությամբ պիտի ամրապնդվի բանվորա-դյուղացիական իշխանությունը Հայաստանում։

... Կեցցե՛ Կարմիր Բանակը։

Կեցցե՛ բանվորա-դյուղացիական Սովետական Հայաստանը»[1]։

Արձագանքելով ՀԿ(բ)Պ Կենտկոմի կոչին, Հայաստանի բանվորներն ու դյուղացիները ամենուրեք միտինգներ են դումարում, աջակցում են Հայաստանի Կարմիր Բանակի կազմակերպումը և ամեն կերպ օգնում նրան։ 1920 թ. դեկտեմբերի 11-ին Աշտարակում և Օշականում տեղի ունեցած աշխատավոր դյուղացիների միտինգներում ընդունված բանաձևում ասված է. «Օշականում և Աշտարակում կազմակերպված միտինգներում հատարակությունը լսելով

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մ.Լ.Սե-ի Հայկական ֆիլիալի պատմարխիվ, ֆ. 1. գործ 4, թ. 27—28։

վիճակում Կարմիր Բանակի դերի և նրա պարենավորման մասին, համապատասխանաբար որոշեց հացի վերջին պատառը, այլ միջոցներ և սայլեր տրամադրել Կարմիր Բանակի կարիքների համար»[1]:

Նման որոշումներ են ընդունել և մեծ համապատասխանությամբ կենսագործել նաև Երևանի, Ղամարլուի, Ներքին Ախտայի, Էջմիածնի և շատ շրջանների աշխատավորների ժողովները:

11-րդ բանակի օրինակով ու օգնությամբ, Հայաստանի բանվորների ու գյուղացիների ամենալայն աջակցությամբ, Հայաստանի Կարմիր Բանակը ամրապնդելով իր շարքերը, 1921 թվականի բաղաբացիական կռիվների ընթացքում տալիս է իր մարտական առաջին փնուրյունը:

* * *

Հայաստանի նորակազմ Սովետական իշխանությունն անմիջապես ձեռնամուխ եղավ ագրարային հարցի լուծմանը: Հայաստանի Ռևկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի Դեկլարացիայում արդեն տրված էին ագրարային հարցի լուծման հիմնական սկզբունքները: Ռևկոմի Դեկլարացիայում ասված է.

«Հայաստանի գյուղացիությունը իր ձեռքը կառնի ամբողջ հողը, որ պատկանում էր մելիքներին ու ինչպես և վանքապատկան, եկեղեցապատկան ու մզկիթների սեփականությունն համարվող հողերը: Ժողովրդի ձեռքը կանցնեն անտառների հարստությունը, ջրերը, լճերն ու հանքերը,— Հայաստանի աշխատավոր ապագա բնակչության կարիքները բավարարելու համար»[2]: Դրան հետևող մի շարք դեկրետներով Ռևկոմը՝ քայլ առ քայլ իրականացնում է այդ սկզբունքները: 1920 թ. դեկտեմբերի 28-ին լույս է տեսնում Ռևկոմի դեկրետը հողի ազգայնացման մասին: Դեկրետում ասված է.

«Բանվորա-գյուղացիական աղգարնակության հողազուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվող քանակացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար, արգունական, նախկին, եկեղեցական, վանքային, վակուֆային[3] միջնադարյան, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը դառնում

---

1 «Կոմունիստ» (Հայ.), 1920, դեկտեմբերի 14, Երևան, № 8:

2 ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, էջ 3:

3 Վակուֆային հող՝ մզկիթին պատկանող հողամաս:

ևն Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության անփոփանություն»[1]։

Ռևկոմի 1921 թ. հունվարի 10-ի և 11-ի դեկրետներով ապացնացվում են Ռեսպուբլիկայում գտնվող բոլոր անտառները և ամբողջ հողի ընդերքը[2]։ Ռևկոմի 1921 թ. հունվարի 31-ի դեկրետով ազդայնացվում են ռեսպուբլիկայի սահմաններում գտնվող բոլոր ջրերը, նույնպես և ոռոգման ամբողջ սիստեմը ու հանձնարարվում է Հողագործության ժողկոմատին մշակելու նոր կանոններ ոռոգման, ջրաբաշխման և ջրային միջոցների օգտագործման մասին՝ համապատասխան Սովետական պետության և աշխատավորական դյուղացիական տնտեսությունների շահերի[3]։

Քիչ ուշ, 1921 թ. օգոստոսի 23-ին, հրապարակվում է Հայկական ՍՍՌ Հողագործության ժողովրդական Կոմիսարիատի որոշումները Դիլիջանում գտնվող Բումանցյանի կալվածքի և Ղարաբլիխայում գտնվող Բալիրովի, Դավեսովի, Բաղդասարյանի, Օհանյանի, Ազատարյանի և Մելիք-Ղարագյոզյանի այգիներն իրենց շարժական և անշարժ գույքով պետականացնելու մասին[4]։

Սովետական իշխանության կողմից Հայաստանում ազդայնացվեց մոտ 1,5 միլիոն հեկտար հող, որի խոշոր մասը հատկացվեց դյուղացիական տնտեսությունների, իսկ մյուս մասը՝ պետական կազմակերպությունների օգտագործմանը։

Սովետական պետության այդպիսի միջոցառումը միաժամանակ նախապայմաններ ստեղծեց հետագայում դյուղի սոցիալիստական վերակառուցման, նրա անարդել զարգացման և դրա հիման վրա՝ աշխատավոր դյուղացիության ունևոր ու կուլտուրական կյանքի համար։ Հողային հարցի լուծման և մյուս կարևորագույն ձեռնարկումների շնորհիվ չքավոր դյուղացիությունն ավելի ամուր կերպով համախմբվեց Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության շուրջը։

Միջակ դյուղացիությունն սկսեց ավելի մոտ կանգնել Սովետական իշխանությանը և հաստատապես օժանդակել նրան։

Սովետական իշխանությունը լուծեց նաև ազգային հարցը, միանգամընդմիշտ անցյալի պիրկը նետելով ազգային երկպառա-

---

[1] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, էջ 31։

[2] Նույն տեղում, էջ 61—63։

[3] Նույն տեղում, էջ 101։

[4] Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և որոշումների հավաքածու, 1921, օգոստոս 25, № 3, էջ 21—22։

կուլյանն ու Բշնամականը, որը սկզբնական էին յարիմը և բուրժուա-նացիոնալիստական պարտիաները։

Դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները կատարելով ազգային բուրժուազիայի կամքը և վարելով թունավոր նացիոնալիզմի քաղաքականություն, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի եղբայրական ժողովուրդներին կռվի էին հանել միմյանց դեմ։ Նրանք այդ կռիվներում ոչնչացրին տասնյակ հազարավոր աշխատավորներ։ 1921 թ. հուլիսի 6-ին Թիֆլիսի պարտիական ակտիվի ժողովում տված «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» զեկուցման մեջ անդրադառնալով այդ հարցին, Ի. Վ. Ստալինն ասել է. «Ըստ երևույթին, ակներևորեն նացիոնալիստական կառավարությունների երեք տարվա գոյությունը Վրաստանում (մենշևիկներ), Ադրբեջանում (մուսավաթականներ), Հայաստանում (դաշնակներ) զուր չի անցել։ Այդ նացիոնալիստական կառավարությունները, իրենց նացիոնալիստական քաղաքականությունը վարելով, աշխատավորության մեջ ազգասիրական նացիոնալիզմի ոգով աշխատելով, վերջապես, բանն այնտեղ հասցրին, որ այդ փոքրիկ երկրներից յուրաքանչյուրը շրջապատվեց Բշնամական նացիոնալիստական մթնոլորտի օղակով, որը Վրաստանին ու Հայաստանին զրկեց ռուսական հացից ու ադրբեջանական նավթից, իսկ Ադրբեջանին ու Ռուսաստանին՝ Բաթումի վրայով եկող ապրանքներից։ Ես արդեն չեմ խոսում զինված ընդհարումների (վրացա-հայկական պատերազմ) և կոտորածի (հայ-թաթարական), որպես նացիոնալիստական քաղաքականության բնական հետևանքների մասին»[1]։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական իշխանությունը Հայաստանում կիրառելով ինտերնացիոնալիզմի քաղաքականություն, Սովետական Ռուսաստանի օրինակով հռչակեց բոլոր ազգությունների իրավահավասարություն՝ հիմնված բոլոր աշխատավորների դասակարգային համերաշխության վրա։ Սոցիալիզմի համար մղվող պայքարում ամրապնդվեց տարբեր ազգերի աշխատավորների եղբայրական, պատմության մեջ իր նմանը չունեցող, համագործակցությունը։ Դաշնակների հալածանքների պատճառով Հայաստանից **Ադրբեջան և այլ վայրեր** փախած ադրբեջանական բնակչությունը Սովետական իշխանության հաստատումից հետո սկսում է վերադառնալ թողած բնակավայրերը։ Սովետա-

[1] Ի. Վ. Ստալին, երկեր, հատ. 5, էջ 106—107։

կան պետությունը նյութական և ամեն տեսակի օգնություն է կազմակերպում նրանց՝ վերականգնելու դաշնակիների կողմից ավերված գյուղերը և ձեռք բերելու տարատեսակ միջոցներ։

Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի դեկրետով հանրապետության սահմաններում հայերենը ճանաչվում է պետական լեզու։ Հայկական դպրոցներին զուգընթաց բացվում են ազգությանական, ռուսական դպրոցներ։ Լիկվիդացվում և արդելվում է կոնտրռևոլյուցիոն մամուլը։ Կազմակերպվում է նոր, սովետական պարբերական մամուլ, ազգային լեզուներով սկսվում են հրատարակվել թերթեր, ամսագրեր և գրականություն։

Առաջին իսկ օրերից Սովետական իշխանությունը Հայաստանում խոշոր ձեռնարկումներ սկսեց նաև կուլտուրական շինարարության բնագավառում։ Այդ աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվեց Լուսավորության՝ ժողովրդական Կոմիսարիատ։ Սովետական իշխանությունը արմատական վերակառուցման է ենթարկում ժողովրդական լուսավորության սիստեմը, այն ծառայեցնելով աշխատավորական մասսաների կուլտուրական վերելքի շահերին։

Ռեսպուբլիկայի տնտեսական շինարարությունը առաջ տանելու նպատակով ՀՍՍՌ Ռևկոմին կից կազմակերպվում է ժողովրդական Տնտեսության խորհուրդ (Ռևկոմի 1921 թ. հունվարի 21-ի դեկրետով)։ Դեկրետում նշված է, որ ժողովրդական Տնտեսության խորհուրդը պետք է կանոնավորի ժողովրդական տնտեսությունն ու պետական ֆինանսները, մշակի երկրի տնտեսության կարգավորման ընդհանուր ծրագիրն ու նորմանները, համաձայնեցնի և միավորի կենտրոնական ու տեղական տնտեսական հիմնարկությունների գործունեությունը [1]։ Այնուհետև դեկրետում ասված է. «Ժողովրդական տնտեսության կարգավորման ամբողջության վերաբերող բոլոր օրինագծերն ու բոլոր ձեռնարկումները ներկայացվում են Հայաստանի Հեղափոխական Կոմիտեին ժողովրդական Տնտեսության խորհրդի միջոցով։

Ժողովրդական Տնտեսության խորհուրդը միացնում ու ղեկավարում է տալիս ժողովրդական տնտեսության տեղական խորհուրդների, նույնպես և տեղական հեղկոմների աշխատանքի, պարենավորման և այլ բաժինների աշխատանքներին»[2]։

---

[1] *Տե՛ս ՀՍՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջ 84։*

[2] *Նույն տեղում, էջ 85։*

Ժողովրդական Տնտեսության խորհրդի 1921 թ. փետրվարի 21-ի հրամանով ստեղծվում են ժողովրդական տնտեսության գլխավարչական խորհուրդներ[1]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ժողովրդական Տնտեսության խորհրդին մեծ տեղ էր հատկացվում ռևոլյուցիայի ժողովրդական տնտեսության կազմակերպման, ղեկավարման և վերականգնման գործում: Այդ խնդիրները նա կատարեց հաջողությամբ:

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում իրականացվում է 8 ժամյա աշխատանքային օրը:

Ինչպես տեսանք նախորդ գլխում, Հայաստանի ժողովրդական տնտեսությունն այն ժամանակ գտնվում էր ծայրահեղ քայքայված վիճակում: Այդ տնտեսությունը, որը ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում, շնորհիվ վերջինիս գաղութային ռեժիմի, գտնվում էր հետամնաց մակարդակի վրա, դաշնակների տիրապետության օրով, նրանց ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով, է՛լ ավելի նա գնաց ու քայքայվեց: 1920 թ. երկրի տնտեսության վիճակն է՛լ ավելի վատթարացավ, որովհետև դաշնակցությունական պատերազմի ժամանակ դաշնակները գնդի տակ էին վերցրել քաղաքի և գյուղի համարյա բոլոր աշխատավոր ձեռքերը, որոնք ընդունակ էին զենք կրելու:

Քայքայված վիճակումն էր գտնվում նաև տրանսպորտը, զգացվում էր վառելիքի սուր պակասություն: Դաշնակների կողմից թալանված ու ոչնչացված էին երկրի բոլոր պաշարները: Գոյություն ուներ հացի, ճարպեղենի, մսի, ոսնամանի, հագուստեղենի և այլ առաջին անհրաժեշտ ապրանքների ամենասուր պակասություն:

Սովետական Հայաստանի դրությունն ավելի էր բարդանում նրանով, որ այդ ժամանակ Ալեքսանդրապոլն իր դավառով դեռևս մնում էր թյուրքական օկուպանտների ձեռքում, որոնք այնտեղ էին մտել դաշնակո-թյուրքական պատերազմի ժամանակ, 1920 թ. նոյեմբերի 6-ին: Նրանք բարբարոսաբար հետապնդում և սպանում էին հայերին, կողոպտում և հափշտակում էին բնակչության ապրուստի վերջին միջոցը, սովի մատնելով նրանց, թալանում և ոչնչացնում էին այն նյութական արժեքները, որոնք ստեղծված էին հայ աշխատավորության քրտինքով: Գնալով այդ բարբարոսությունները ավելի խստանում էին, անցնելով ամեն մի չափ ու սահման: 1921 թ. ապրիլի 23-ին թյուրքական օկուպանտները դուրս են շպրտվում Ալեքսանդրապոլից ու նրա գավառից:

---

[1] Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, էջ 120—122:

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը իր հերթին ընդամենը պիրք էր բռնել Սովետական Հայաստանի նկատմամբ։ Մենշևիկյան Վրաստանում էին կենտրոնացած Կովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը, ինչպես նաև ջախջախված ռուսական սպիտակգվարդիական տականքները։ Սովետական Հայաստանին հարվածելու, սովետական կարգերը տապալելու նպատակով, ինչպես նշեցինք վերևում, մենշևիկների իշխանությունը բլոկադայի էր ենթարկել նրան։ Հակառակ 1920 թվականի մայիսին Սովետական Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի, որով նախատեսված էր ազատ տրանզիտ Վրաստանի վրայով Հայաստան ուղարկվող ապրանքների համար, վրաց մենշևիկները փակել էին երկաթուղային ճանապարհները Ռուսաստանից և Ադրբեջանից Հայաստան ուղարկվող ապրանքներով ու կենսամթերքներով բեռնված գնացքների համար։

Վրացական մենշևիկների անձնարձակությունն այն աստիճանի էր հասել, որ նրանք արդելում են Հայաստան մեկնել և մի քանի օր Թիֆլիսումն են պահում Հայաստանում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի գնացքը, որը հնարավորություն է ստանում մեկնել Հայաստան միայն Սովետական Ռուսաստանի կառավարության ամենավճռական միջամտությունից հետո։ Մենշևիկների այդ օրինակ քաղաքականության և Հայաստանի դժվարին դրության մասին Բաքվի բոլշևիկների 1921 թ. փետրվարին տեղի ունեցած կոնֆերանսի՝ ընթացիկ մոմենտի վերաբերյալ ընդունած բանաձևում ասված է.

«Անդրկովկասում խորհրդային հանրապետություններին կից մենշևիկյան Վրաստանի գոյությունը, որը խորհրդային հանրապետությունների նկատմամբ նվաճողական տրամադրություններ է ցույց տալիս,— վերջիններիս դժվարին կացության մեջ է դնում, մանավանդ խորհրդային Հայաստանի աշխատավորներին, որոնց թե՛ նյութապես և թե՛ մարդկանցով պետք է օգնություն մատակարարել։ Խորհրդային հեղափոխության ամենաշուտ հաղթանակը Վրաստանում և խորհրդային Անդրկովկաս կազմելը միակ ելքն է այդ դժվարին կացությունից դուրս գալու համար»[1]։ Պրոլետարական Բաքվի Սովետը, մենշևիկյան Վրաստանի կողմից Սովետական Հայաստանի նկատմամբ ցույց տված վարմունքի դեմ 1920 թ.

---

[1] «Կոմունիստ», № 53, 1921, փետրվարի 11, Երևան։

դեկտեմբերին կտրական բողոք է ուղարկում մենշևիկյան կառավարությանը, հայտարարելով, որ Բաքվի Սովետը «ստիպված է վերաքննության առնել Վրաստանի հետ կնքված առևտրական դաշինքը՝ նամի բաց թողնելու վերաբերմամբ»[1]։ Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի միջամտությունից հարկադրված, վրացական մենշևիկները բաց են թողնում Հայաստան մեկնող մի շարք գնացքներ։ Սակայն նրանք իրենց բլոկադան Հայաստանի նկատմամբ չվերացրին և ամեն անգամ Հայաստան մեկնող գնացքների համար խոչընդոտներ էին ստեղծում, մինչև սովետական կարգերի հաստատումը Վրաստանում։

Հայաստանի երիտասարդ սովետական ռեսպուբլիկայի դեմ իրենց կատաղի պայքարն էին շարունակում նաև Զանգեզուրում գտնված դաշնակցական ոհմակները։ Լցված կատաղի ատելությամբ դեպի Սովետական իշխանությունը, այդ իշխանությունը տապալելու և հին կարգերը վերականգնելու նպատակով, նրանք, ամերիկյան, անգլո-ֆրանսիական իմպերիալիստների և թյուրքական զավթիչների օգնությամբ նախապատրաստվում էին միավորելու բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերը և հարվածելու Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկային։

Այդպիսի դժվարին պայմաններում Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ և Սովետական Ռուսաստանի օրինակով ու եղբայրական ամենաջերմ օգնությամբ, սովետական մյուս ժողովուրդների օգնությամբ, լծվում են երկրի քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքներին, սոցիալիզմի կառուցման պատմական գործին։

Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերին, այդ կարգերի ամրապնդման ղեկքնթաց, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների ուշադրությունը կենտրոնացնում է քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքների վրա։

ՀԿ(բ)Պ Կենտկոմը 1920 թ. դեկտեմբերին ռեսպուբլիկայի բոլոր կոմունիստական կազմակերպություններին ուղղում է հատուկ դիմում, ուր նշված են երկրի ծանր տնտեսական վիճակը և նրա վե-

---

[1] «Կոմունիստ», № 16, 1920, դեկտեմբերի 24, Երևան։

բանդնման դործում պարտիական կազմակերպությունների առաջ դրված լուրջ խնդիրները։

Այնտեղ ասված է.

«Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որպես բաղադրիչ մասը ՌԿԿ, պետք է ունենան հիմնական մի լոզունգ միայն՝ հավատարմել Ռուսաստանի մարտիկներին։

Ուրիշ ճանապարհ մենք չենք կարող ունենալ, և եթե դաշնակիներից մեզ թողած ժառանգությունը, ծանր տնտեսական փլուզումը... սպասում է հանրապետության տնտեսական շինարար աշխատանքներին, ապա մենք պարտավոր ենք անշեղ ընթանալ Հոկտեմբերյան հեղափոխության դծած ուղիով, այն ուղիով, որ խորհրդային Ռուսաստանի բանվորներին ու դյուղացիներին տվել է մեծամեծ հաղթանակներ։

Մենք կոչ ենք անում բոլոր կոմունիստական կազմակերպություններին պատրաստ լինել կռվի, ունենալ անպայման խիստ կուսակցական դիսցիպլինա, կոչ ենք անում ամեն մի կուսակցական բնակերոջ ինքնազոհաբերության եռանդուն աշխատանքի, հեղափոխական և կուսակցական պարտականությունների խոր ըմբռնման...

Համերաշխ, համառ և եռանդուն աշխատանքը, կոմունիստական կուսակցության կռիվը պետք է վերկ անտեսական քայքայված և արյունաքամ եղած երկիրը դաշնակցական մասուլերիստների առեղծած ծանր վիճակից և աշխատավոր մասսաներին առաջնորդի դեպի կատարյալ կոմունիստական իրավակարդը»[1]։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի այդ կոչը լայն արձագանք է գտնում ռեսպուբլիկայի բոլոր դավառների ու դավառակների պարտիական կազմակերպությունների և բանվորների ու դյուղացիների կողմից։ Աշխատավորները կուռ շարքերով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, նրա ղեկավարությամբ ծավալուն աշխատանք են սկսում երկրի քայքայված դյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, տրանսպորտը և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը վերականդնելու համար։

Ռեսպուբլիկայի բոլոր դավառներում լայն ծավալ են ստանում կոմունիստական շաբաթօրյակները։

Սովետական իշխանության հաղթանակի և նրա ձեռք առած

---

[1] *ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆոնդ 1, գործ 4, թ. 31—32։*

ագմատական միջոցառումների՝ հողի, արդյունաբերության, բանկերի, տրանսպորտի ազգայնացման և մյուս միջոցառումների շնորհիվ աշխատանքի նկատմամբ ակիզը առավ նոր, կապիտալիզմի ժամանակ չտեսնված և անհնարին վերաբերմունք: Այժմ աշխատանքը դարձավ փառքի ու պատվի գործ, դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը բոլոր աշխատավորների կողմից նվիրվածության մինչև այդ չտեսնված օրինակ: Սկիզբ է առնում պայքարը արտադրողականության բարձրացման համար:

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ նոր, սոցիալիստական կարգերի հաղթանակի համար ամենից կարևորը, ամենից դըլխավորը վերջին հաշվով հանդիսանում է արտադրողականության բարձրացումը: «Կապիտալիզմը կարող է վերջնականապես հաղթվել և կհաղթվի նրանով,— ասում է Վ. Ի. Լենինը,— որ սոցիալիզմն ստեղծում է նոր, շատ ավելի բարձր՝ աշխատանքի արտադրողականություն: Դա շատ դժվար և շատ երկարատև գործ է, բայց դա սկսված է, ահա թե ո՛րն է ամենադլխավորը»[1]:

Սոցիալիստական հասարակարգի պայմաններում դեպի աշխատանքը ցուցաբերված նոր, սոցիալիստական վերաբերմունքի դեղեցիկ արտահայտություն հանդիսացան կոմունիստական շաբաթօրյակները, որոնք Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ Սովետական Ռուսաստանում կիրառվեցին ռևոլյուցիայի հաղթանակի առաջին տարիներին՝ սկսած 1919 թ. և շուտով լայն տարածում գտան նաև սովետական մյուս ռեսպուբլիկաներում:

Սովետական Հայաստանում կոմունիստական շաբաթօրյակները սկիզբ են առնում և լայնորեն կենսագործվում սովետական կարգերի հաղթանակի առաջին շաբաթներից — 1920 թ. դեկտեմբերից: Նրանց մեծ թանդավառությամբ մասնակցում են հազարավոր աշխատավորներ: Առաջին շաբաթօրյակը Երևանում տեղի է ունենում 1920 թ. դեկտեմբերի 25-ին: 1921 թ. հունվարի 1-ի շաբաթօրյակին Երևանում մասնակցում են 1500-ից ավելի աշխատավորներ[2]: Նրանք մեծ աշխատանք են կատարում երկաթուղային կայարանում, արդյունաբերական ձեռնարկություններում և հիմնարկներում:

1921 թ. մայիսի 1-ի շաբաթօրյակին Լոռի-Փամբակի գավառում մասնակցում են 26 գյուղ: Շաբաթօրյակը կազմակերպվել էր գա-

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 523:*

[2] *Տե՛ս «Կոմունիստ», № 25, 1921, հունվարի 6, Երևան:*

վառի պարտիական կազմակերպության նախաձեռնությամբ, որին մասնակցել են մեծ քանակությամբ անպարտիական աշխատավոր դյուղացիներ։ 1725 մասնակիցներից պարտիական են եղել 522 հոգի, անպարտիականներ՝ 1203 հոգի։

Շաբաթօրյակի մասնակիցները վերանորոգել են դյուղական ճանապարհները, կամուրջները, կառուցել են նոր կամուրջներ և այլն։ Միայն Մանեսում շաբաթօրյակին մասնակցել են 300 հոգի, որոնք մաքրել և կարդի են բերել գործարանը[1]։ Նման շաբաթօրյակներ են կազմակերպվել նաև ռեսպուբլիկայի մյուս գավառներում։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ կազմակերպված կոմունիստական շաբաթօրյակները հանդիսանալով Սովետական երկրի բանվոր դասակարգի պատմական նախաձեռնությունը, նրանք միաժամանակ սկիզբ դրեցին սոցիալիստական մրցությանը՝ սոցիալիզմի կառուցման կոմունիստական մեթոդին։ Իր սկիզբն առնելով կոմունիստական շաբաթօրյակներից, սոցիալիստական մրցությունը հետագայում ամբողջ երկրում էլ ավելի լայն ծավալ ստացավ և վճռական դեր խաղաց սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում։ Նա էլ ավելի մեծ դեր է խաղում ներկայումս՝ սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու պատմական շրջադարձի պայմաններում։

Վ. Ի. Լենինը գնահատելով կոմունիստական շաբաթօրյակների մեծագույն նշանակությունը, գրել է.

«Ոչ պակաս ուշադրության է արժանի բանվորների հերոսությունը թիկունքում։ Այդ տեսակետից ուղղակի հսկայական նշանակություն ունի կոմունիստական շաբաթօրյակների կազմակերպումը բանվորների կողմից, իրենց սեփական նախաձեռնությամբ։ Ըստ երևույթին այդ դեռ սկիզբն է միայն, սակայն այդ սկիզբն ունի արտասովոր մեծ կարևորություն։ Դա սկիզբն է մի հեղաշրջման, որն ավելի դժվար, ավելի էական, ավելի արմատական, ավելի վճռական է, քան բուրժուազիայի տապալումը, որովհետև այդ նշանակում է հաղթահարել սեփական անշարժությունը, սանձարձակությունը, մանր բուրժուական էգոիզմը,— այդ սովորությունները, որ անիծյալ կապիտալիզմը ժառանգություն է թողել բանվորին և դյուղացուն։ Երբ այդ հաղթանակը կամրապնդվի, այն ժամանակ և միայն այն ժամանակ կստեղծվի նոր հասարակական

---

[1] Տե՛ս ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքս—Էնգելս—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆոնդ, 1, գործ 24, թերթ 275։

կարդալահրությունը, սոցիալիստական կարգալահրությունը, այն ժամանակ և միայն այն ժամանակ անհնար կդառնա վերադարձը դեպի ետ, դեպի կապիտալիզմ, կոմունիզմը կդառնա իրոք անպարտելի»[1]: Միաժամանակ Վ. Ի. Լենինը նշում էր, որ կոմունիստական շաբաթօրյակների ընթացքում բանվոր դասակարգի ցուցաբերած աշխատանքային հերոսությունը վերջնականապես ամրապնդում է դյուղացիության կողմից դեպի պրոլետարական պետությունն ունեցած հարգանքն ու սերը, որ այդպիսի աշխատանքը դյուղացուն վերջնականապես համոզում է Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության իրավացիությունը և նրան դարձնում մեր անձնվեր կողմնակիցը:

Չնայած Սովետական իշխանության ու նրա ապարատի ամրապնդման ուղղությամբ կատարված առաջին ձեռնարկումներին, այնուամենայնիվ ռեսպուբլիկայի ներքին և արտաքին դրությունը դեռևս շարունակում էր մնալ ծանր վիճակում, որն ավելի բարդացավ 1921 թվականի փետրվարին Հայաստանում սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով:

* * *

Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին այն ժամանակ, երբ Սովետական Ռուսաստանն ապրում էր ռազմական կոմունիզմի վերջին շրջանը: Ռազմական կոմունիզմը Սովետական Ռուսաստանում կիրառվեց քաղաքացիական կռիվների տարիներին՝ 1918—1920 թթ.: Այն ժամանակ Սովետական Ռուսաստանը դտնվում էր ծանր կացության մեջ. քայքայված վիճակում էին արդյունաբերությունը, տրանսպորտը և դյուղատնտեսությունը, զգացվում էր ամեն տեսակի մթերքների, ապրանքների և առաջին անհրաժեշտության կենսամթերքների խիստ պակասություն: Ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերը դաշինքի մեջ մտնելով, ոչ մի ջանք չէին խնայում կործանելու Սովետական իշխանությունը: Կատաղած թշնամիներին չախչախելու համար անհրաժեշտ էր արդյունաբերությունը ապահովել հումքով, կարմիր բանակը՝ սպառազինությամբ, բնակչությունը՝ կենսամթերքներով և ապրանքներով: Իսկ Ռուսաստանի պարենային, հումքային և վառելանյութային շրջանների զգալի մասը դտնվում էին հակառակորդի ձեռ-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 503—504:

քում: Նման պայմաններում հրամայական անհրաժեշտություն էր մոբիլիզացնել բոլոր միջոցները, կուտակել պաշարներ, նախապատրաստվել երկարատև և լուրջ պատերազմի: Անհրաժեշտ էր ապահովել Սովետական իշխանության գոյությունը, ընդամենը զորքերին ջախջախել և դուրս շպրտել մեր հայրենիքից:

«Այդ պատճառով,— ասված է ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացում,— բոլշևիկները սկսեցին ուժեղ թափով պատրաստվել երկարատև պատերազմի, որպեսզի ամբողջ բիզնեսը դնել ի սպաս ռազմաճակատի: Սովետական կառավարությունը ռազմական կոմունիզմ մտցրեց: Սովետական իշխանությունը, բացի խոշոր արդյունաբերությունից, իր վերահսկողության տակ առավ նաև միջակ ու մանր արդյունաբերությունը, որպեսզի կուտակներ մատակարարման ապրանքներ և դրանք մատակարարներ բանակին ու դյուրին: Նա մտցրեց հացի առևտրի մոնոպոլիա, արգելեց հացի մասնավոր առևտուրը և սահմանեց պարենամատնաարում, որպեսզի հաշվառման ենթարկեր դյուզացիների մոտ եղած պարենամթերքի ամբողջ ավելցուկը, հացի պաշարներ կուտակեր և պարեն մատակարարեր բանակին, բանվորներին: Վերջապես, նա մտցրեց ընդհանուր աշխատանքային պարտադիր բոլոր դասակարգերի համար: Պարտադիր ֆիզիկական աշխատանքի ենթարկելով բուրժուազիային և այդպիսով բանվորներին աղատելով ուրիշ՝ ռազմաճակատի ավելի կարևոր աշխատանքի համար, պարտիան իրականացնում էր «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքը:

Երկրի պաշտպանության բացառիկ դժվարին պայմաններից բխող և ժամանակավոր բնույթ կրող միջոցառումների այդ ամբողջ սիստեմը կոչվում էր ռազմական կոմունիզմ»[1]:

Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը կիրառելով ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, ամրապնդեցին մեր երկրի բանվոր դասակարգի և աշխատավոր դյուզացիության ռազմա-քաղաքական դաշինքը, ապահովեցին սովետական ժողովրդի հաղթանակը: Այդ ռազմա-քաղաքական դաշինքի հիմքը հանդիսանում էր այն, որ դյուզացիությունը պրոլետարիատի դիկտատուրայի շնորհիվ ստացավ հող և ամեն տեսակի պաշտպանություն ընդդեմ կալվածատերերի և կուլակների, որոնք ինտերվենտների հետ միացած, պայքարում էին հին կարգերի վերականգնման համար: Իսկ բանվոր դասակարգը դյուզացիությունից

---

[1] *ՀամԿ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, Երևան, 1950, էջ 309:*

ստացավ հայ և այլ կենսամիջոցներ՝ պարենամատակարարման կարգով։ Պարենամատակարարումը պետական մթերումների հատուկ ձև էր, որով դյուղացիական տնտեսությունների ստացած ընդհանուր բերքից նրանց թողնելով անհրաժեշտ պաշար — սննդամթերք, սերմացու,— ամբողջ ավելցուկը Սովետական պետությունը վերցնում էր պարտադիր կարգով և կայուն գներով։ Պարենամատակարարման և հացի առևտրի մենաշնորհի կիրառումով պետական պահեստներում խոշոր չափով ավելացավ հացի և դյուղատնտեսական այլ մթերքների քանակը, որը Սովետական պետության կողմից օգտագործվեց Կարմիր Բանակի և արդյունաբերական կենտրոնների պահանջները ապահովելու համար։

Բնորոշելով Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգի և աշխատավոր դյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը, Վ. Ի. Լենինը գրել է.

«Սովետական Ռուսաստանում պրոլետարիատի ու դյուղացիության ճիշտ փոխհարաբերության հիմքը ստեղծված է 1917—1921 թվականների դարաշրջանով, երբ կապիտալիստների ու կալվածատերերի արշավանքը ԲԼ՛ ամբողջ համաշխարհային բուրժուազիայի, ԲԼ՛ մանր-բուրժուական դեմոկրատիայի (էսեռների ու մենշևիկների) բոլոր պարտիաների աջակցությամբ ստեղծեց, ամրապնդեց ու ձևակերպեց պրոլետարիատի ու դյուղացիության ռազմական դաշինքը հօգուտ Սովետական-իշխանության»[1]։

Առանց այդպիսի դաշինքի, Սովետական իշխանությունը անկարող կլիներ քաղաքացիական կռիվներից հաղթանակով դուրս գալ։

Ռազմական կոմունիզմի կիրառումով Սովետական պետությունը վճռական հակահարված տվեց երկրում մնացած նախկին շահագործող դասակարգերի մնացորդներին՝ կալվածատերերին ու կապիտալիստներին, զրկելով նրանց նյութական բազայից։ Այդա կողմից այդ քաղաքականության կիրառումը հնարավորություն տվեց նպատակահարմար կերպով դասավորել երկրում եղած պաշարները և նրանց օգտագործումը ներքին և արտաքին թշնամիների դեմ մղված պայքարում։ Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը արտակարգ մի քաղաքականություն էր և արդյունք կատաղի դասակարգային պայքարի, երբ գենքի ուժով որոշվում էր Սովետական պետության բախտը։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, Երևան, 1952, էջ 587։

Այդ քաղաքականության պայմաններում հնարավոր չէր իրականացնել սոցիալիստական ծավալուն և բազմակողմանի շինարարություն, որովհետև Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր ներքին և արտաքին թշնամիների ռազմական ճնշման վրա։ Քաղաքացիական պատերազմում Սովետական պետության, նրա վինված ուժերի հաղթանակը անհնարին կլիներ առանց պարենամատակարարման, առանց ռազմական կոմունիզմի քաղաքականության, որին դիմելու հարկադրել էին պատերազմը, ինտերվենցիան։

Հայաստանի Սովետական իշխանությունը, հետևելով Սովետական Ռուսաստանի օրինակին և օգտագործելով նրա ավելի քան երեք տարվա փորձը, իր գոյության առաջին շրջանում — 1920 թ. դեկտեմբերից սկսած, կիրառեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։

Ռազմական կոմունիզմի քաղաքականության իրականացման ուղղությամբ Հայաստանի Ռևկոմը և Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատը կենսագործում են մի շարք օրենսդրական միջոցառումներ։ 1920 թ. դեկտեմբերի 18-ին հրատարակվում է Պարենավորման ժողկոմատի դեկրետը ռևսպուբլիկայում պարենավորման դործի կանոնավորման մասին։

1920 թվականի դեկտեմբերին լույս տեսած Հայաստանի Ռևկոմի մի շարք դեկրետներով ռազմական դրության մեջ են հայտարարվում ռևսպուբլիկայի երկաթուղինները[1], ավտո-տրանսպորտը[2], փոստ-հեռագիրը և հեռախոսը[3], ռադիո կայանը[4] և այլն։

Այդ նպատակով հետագայում ևս հրատարակվում են մի շարք դեկրետներ ու հրամաններ, որոնց կենսագործմամբ իրականացվում է ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 10-րդ համագումարի պատմական որոշումների հիման վրա, 1921 թվականի մարտից Սովետական Ռուսաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցավ խոշորագույն շրջադարձ՝ անցումը ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականությանը։ 1921 թ. փետրվարին սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով, կռիվներ, որոնք շարունակվեցին հինգ ամիս, այդ ան-

---

1 Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ. 1-ին, էջ 10։

2 Նույն տեղում, էջ 13։

3 Նույն տեղում, էջ 19։

4 Նույն տեղում, էջ 18—19։

ցումը Սովետական Հայաստանում տեղի ունեցավ 2-3 ամիս ուշացումով։ Այսպիսով, Սովետական Հայաստանում ռազմական կոմունիզմը տևել է մոտ կես տարի։ Չնայած կարճատևությանը, այնուամենայնիվ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումով Հայաստանում ապահովվեց սովետական կարգերի դույթյունը, նրա ամրապնդումը և հետագա զարգացումը։

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ 1921 Թ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Սովետական կարգերի հաստատումից երկու և կես ամիս հետո, 1921 թ. փետրվարի կեսից Հայաստանում սկսվում են քաղաքացիական կռիվները, որոնք որոշ ընդմիջումներով տևում են մինչև նույն թվականի հուլիսի կեսը։ Այդ կռիվները կարևորագույն տեղ են գրավում Հայաստանի բանվորների ու գյուղացիների՝ հանուն սովետական կարգերի մղած պայքարի պատմության մեջ։

1921 թ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվները բաժանվում են երեք էտապի։

Առաջին էտապն ընդգրկում է Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի և Հայաստանի ու Վրաստանի բոլշևիկների ղեկավարությամբ փետրվարի 11-ին Լոռու շեղոք գոտում վրացական մենշևիկյան կառավարության դեմ սկրսված զինված ապստամբությունը։

Երկրորդ էտապն սկսվում է օտարերկրյա իմպերիալիստների դործակալ, բանվորների և գյուղացիների կատաղի թշնամի դաշնակների փետրվարյան ավանտյուրայով և տևում է մինչև ապրիլի 2-ը (Երևանի ազատագրումը)։

Երրորդ էտապը ընդգրկում է փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո Զանգեզուրի ազատագրման համար մղված կռիվները (ապրիլ-հուլիս), որոնք ավարտվում են Կարմիր Բանակի հաղթանակով և դաշնակցական կոնտրռևոլյուցիայի վերջնական ջախջախումով։

* * *

Օգտագործելով դաշնակների և մենշևիկների միջև եղած տերիտորիալ վեճերը և հակասությունները, ամերիկյան, անգլիական և ֆրանսիական իմպերիալիստներն ամեն կերպ աշխատում էին ամ-

բանդել իրենց դիրքերը Անդրկովկասում, որպես ռազմա-ստրատեգիական և տնտեսական կարևորագույն հենակետ՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ Այդ վճիռը և հակասությունները առանձնապես սրվել էին 1918—1919 թվականներին Բորչալուի գավառի վերաբերյալ։ Դա հարմար ասիթ էր ամերիկյան, անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների համար միջամտելու Հայաստանի և Վրաստանի ներքին գործերին։

1919 թ. հունվարի 9—17-ը Փարիզում Անտանտայի ներկայացուցիչների գլխավորությամբ տեղի է ունենում Հայաստանի ու Վրաստանի բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանսը, որը քննության է առնում Բորչալուի գավառի հարցը։ Կոնֆերանսի աշխատանքները վերջանում են նրանով, որ ամերիկյան, անգլիական և ֆրանսիական ինտերվենտները՝ «որպեսզի թե՛ մահմեդական և թե՛ դաշնակցական բանդիտներին գլխին վիճելի տերիտորիայից»[1], այն հայտարարում են չեզոք գոտի, այսինքն՝ փաստորեն վերցնում են իրենց ձեռքը։

Ըստ վերոհիշյալ կոնֆերանսի որոշման, չեզոք գոտու մեջ էին մտնում նախկին Բորչալուի գավառի մի մասը կազմող Ալավերդու, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջանները՝ 41 գյուղերով։ Չեզոք գոտին կառավարելու համար, ինչպես ասված է կոնֆերանսում ընդունված պայմանագրի 5-րդ կետում, ստեղծվում է «խառն ադմինիստրացիա՝ դաշնակիցների (այսինքն՝ ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների — Ա. Հ.) գլխավորության և հսկողության ներքո»[2]։ Նշանակվում է անգլիական գեներալ-նահանգապետ, որը Հայաստանի ու Վրաստանի կոմիսարների՝ իր այդ վասալների հետ միասին սկսում է կեղեքել չեզոք գոտու աշխատավորությանը և ինկվիզիցիոն ձևերով դատաստան է տեսնում կոմունիստների ու նրանց հետևից գնացող աշխատավորների նկատմամբ։

Ապրիլյանում Սովետական իշխանություն հաստատվելուց հետո Լոռու չեզոք գոտու կապակցությամբ եղած հակասությունները

---

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 74։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. № 116a և ֆ. № 4/114, գ. № 318, թ. 3—4։ Հետագայում մենշևիկների նոր նվաճումների հետևանքով, այդ գյուղերի թիվն ավելանում է, հասնելով մինչև 53-ի։

[3] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. № 116, թ. 2։

վրացական մենշևիկների ու դաշնակների միջև այլ բնույթ են ստանում։ Այժմ նրանք ամեն կերպ ձգտում էին այդ հակասությունները հարթել խաղաղ ճանապարհով՝ միասնական ուժերով պայքարելով ընդդեմ Սովետական Ադրբեջանի, ընդդեմ երկրամասում ծավալվող ռևոլյուցիոն շարժման և Սովետական Ռուսաստանի։ Նրանք ջանքեր չէին խնայում, որպեսզի ավելի ու ավելի դավանանքի արժանանան իրենց աչերի՝ Անտանտայի իմպերիալիստների և նրանց կամակատար սոցիալ-շովինիստների՝ Կ. Կաուցկու և մյուս լիդերների կողմից, որոնց մի մասը այդ ժամանակ այցելության էր եկել Վրաստան։

Խոսելով այդ մասին, մենշևիկյան Վրաստանում դաշնակների դիվանագիտական ներկայացուցիչը իր կառավարությանն ուղղված զեկուցագրում հաղորդում է.

«Այստեղ գտնվող սոցիալիստական պատվիրակությունը (այսինքն Կ. Կաուցկու դլխավորած պատվիրակությունը — Ս.. Հ.) նույնպես այդ կարծիքին է (այսինքն խաղաղ կերպով վերջ տալ ներքին վեճերը և միասնական ուժով պայքարել Սովետական Ադրբեջանի, Անդրկովկասում բարձրացող ռևոլյուցիոն շարժման և Սովետական Ռուսաստանի դեմ — Ս.. Հ.) և շատ հետաքրքրվում է մեր ու վրացիների փոխհարաբերություններով, ըստ երևույթին իրեև ապագա արբիտր իր հերթին»[1]։

Սակայն վրացական մենշևիկները չեն սահմանափակվում միայն չեզոք դիրքով։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո դաշնակների օգնությամբ շարունակելով առաջնագայումը, նրանց զորամասերը հասնում են մինչև Շահալի կայարանը և գալիս Ջալալ-Օղլին (այժմ Ստեփանավան), Լորուտը, Աթանը և մի շարք ուրիշ դյուղեր[2]։

Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց հետո Հայաստանի Ռևկոմը մի շարք նոտաներ է ուղարկում Վրաստանի մենշևիկյան «կառավարությանը», կտրուկ պահանջ դնելով Լոռվա չեզոք գոտուց մենշևիկյան զորքերը հետ քաշելու և տեղի աշխատավորության նկատմամբ եղած բռնություններին վերջ տալու մասին։ Չեզոք գոտու վերաբերյալ վիճելի հարցերը խաղաղ կերպով լուծելու նպատակով Սովետական Հայաստանի Արտաքին Գործերի Ժողկոմ-ռևոլյուցիոն Կոմիտեի հաղորդագրությունը։

---

1 Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 68c/200, գ. 476, թ. 92։

2 Տե՛ս «Կոմունիստ», № 53, 1931, փետրվարի 11, Երևան, Լոռու Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի հաղորդագրությունը։

կոմատը 1920 թ. դեկտեմբերի 29-ի նոտայով առաջարկում է սկսել խաղաղ բանակցություններ՝ Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ։ Սակայն վրացական մենշևիկները, ոգեվորվելով օտարերկրյա իմպերիալիստների խրախուսանքից, ոչինչ հաշվի առնել չէին ուզում։ Շատ լավ ղդալով, որ իրենց տիրապետության օրերն արդեն հաշված են, վրացական մենշևիկները, ինչպես ամբողջ Վրաստանում, նույնպես և Չեղոք գոտում էլ ավելի են ուժեղացնում ամենակատաղի հարձակումներն ու հալածանքները կոմունիստական կազմակերպությունների և նրանց հետևից գնացող բանվորության ու գյուղացիության նկատմամբ։ Մենշևիկյան բանտերը լցվում են կոմունիստներով և նրանց համակրողներով։ Միաժամանակ նրանք շարունակում էին Սովետական Հայաստանին հայտարարված բլոկադան՝ թույլ չտալով Ռուսաստանից և Ադրբեջանից բեռնված գնացքների շարժումը դեպի Հայաստան։

Խորը ընդհատակում գործող Լոռվա կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ Չեղոք գոտու բանվորներն ու գյուղացիները նախապատրաստվում էին զինված ապստամբության։ Այս գործի ավանդարդումն էին Ալավերդու հանքերի և Չեղոք գոտու մեջ մտնող երկաթուղային կայարանների (Սանահին, Ալավերդի, Քուլադերան, Այրում, Ախթալա, Շահալի) բանվորները։

Ալավերդու և երկաթուղային բանվորների հետ սերտորեն շաղկապված ու նրանց հետևից էին գնում Լոռու աշխատավոր գյուղացիները։ Բացի հանքերից ու երկաթգծից, Չեղոք գոտու շատ գյուղերում այդ ժամանակ գործում էին կոմունիստական ուժեղ Դազմակերպություններ։ Այսպես, օրինակ Հաղպատ գյուղում կային Կոմունիստական պարտիայի 111 անդամներ և թեկնածուներ, Որնակ գյուղում՝ 58[1]։ Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիայի և ինտերվենտների դործիք դարձած վրացական մենշևիկների դեմ զինված ապստամբությունը Վրաստանի և Հայաստանի կոմունիստական պարտիանները նախապատրաստում էին միասնաբար, Ս. Օրջոնիկիձեի դլխավորած ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան Բյուրոյի անմիջական ղեկավարությամբ։

Չեղոք գոտում զինված ապստամբություն նախապատրաստելու, տեղի կոմունիստական կազմակերպություններին օդնելու նպատակով, ՌԿ(բ) պարտիայի Կենտկոմի Կովկասյան Բյուրոն

---

[1] Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնդելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվը, Ս. Էլոյանի գործը։

այնտեղ է ուղարկում մի շարք զենավար պարտիական աշխատողներ։

1920 թվականի դեկտեմբերի սկզբներին Ղարաքիլիսայի դավառային Ռևկոմը, ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյից (Կավբյուրոյից) ուղարկված ընկերների հետ միասին հրավիրում է դյուղայիական մի շարք համագումարներ, որոնք խոշոր դեր են կատարում աշխատավորների ռևոլյուցիոն տրամադրությունների բարձրացման և զինված ապստամբության նախապատրաստման գործում։ Ղարաքիլիսայի դավառային Ռևկոմի զեկուցագրում այդ մասին ասված է.

«Դեկտեմբերի մեկից մինչև 10-ը մեր կողմից հրավիրված է երեք համագումար, որոնցից երկուսն անպարտիական և մեկը պարտիական։ Այդ համագումարներում դյուղացիությունն արտահայտել է իր պատրաստակամությունը՝ միանալու Սովետական Հայաստանին և ապստամբության դեպքում նա պատրաստ է օգնելու կենսամթերքներով ու կենդանի ուժով։ Մեր պարտիան ձեռնարկել է կոմբջիչների կազմակերպմանը և այժմ բոլոր դյուղերում — Վորոնցովկայից մինչև Շահալի — կան պարտիական կազմակերպություններ։ Ինքնապաշտպանության անվան տակ այդ կազմակերպություններին կից կազմակերպել ենք զինված ուժեր— յուրաքանչյուր դյուղում 50-ից մինչև 200 մարդ։ Այժմ նրանք մեզ մոտ հաշվվում են մինչև 2500 մարդ»[1]։

Այսպիսով, դեկտեմբերի սկզբներից չեզոք դոտում արդեն կային պարտիզանական զինված ջոկատներ։

Հրավիրված դյուղացիական համագումարների պատգամավորները վերադառնալով իրենց տեղերը, դյուղերում կազմակերպում են հասարակական լայն ժողովներ, ուր զեկուցում են համագումարի արդյունքների և մենշևիկների կողմից չեզոք դոտում կատարվող բռնությունների մասին։ Նման ժողովներ են հրավիրվում Վորոնցովկայում, Պրիվոլնոյում, ռուսական Ջալալ-օղլիում, Նովո-Պոկրովկայում, Նովո-Միխայիլովկայում, Կոտուր-Բուլաղում, Արմանիսում և մի շարք այլ դյուղերում։ Ամենուրեք միահամուռ ընդունած որոշումներում աշխատավոր դյուղացիությունն իր ցայրույթն է արտահայտում մենշևիկների կողմից չեզոք դոտում կատարվող բռնությունների դեմ։ Բոլոր ժողովներում ընդունված որոշումներում աշխատավորները հատուկ հայտնում են

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. № 4/114, գ. № 11, թ. 1։

իրենց պատրաստակամությունը՝ վրաստանի բանվորների ու գյուղացիների հետ միասին, Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ պայքարի դուրս գալ մենշևիկների տիրապետությունը տապալելու և սովետական կարգեր հաստատելու համար։

Լոռում և նրան սահմանակից սովետական շրջաններում եղած պարտիզանական ջոկատներն ամրապնդելու, նորերը կազմակերպելու և ղինված ապստամբությունը բազմակողմանիորեն նախապատրաստելու նպատակով ՌԿ(բ)Պ ԿԿ-ի Կովկասյան Բյուրոյի ցուցումով Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը 1920 թվականի դեկտեմբերի 20-ին Ղարաքիլիսայում կազմակերպում է ապստամբության շտաբ։ Ապստամբության շտաբն ամբողջ շեղոք գոտին բաժանում է 4 գավառամասի՝ Վորոնցովկայի, Դսեղի, Ուզունլարի և Շնողի։ Ստեղծվում են գավառամասային գաղտնի ռևկոմներ և պարտիական կոմիտեներ, ամուր կապ է հաստատվում ինչպես այդ, նույնպես և տեղերում գոյություն ունեցող ռևկոմների ու պարտիական բջիջների միջև։

1921 թ. հունվարին Ղարաքիլիսայում շեղոք գոտու ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունենում Լոռվա կոմունիստական կազմակերպությունների կոնֆերենցիան, որի աշխատանքները ղեկավարում էր ՀԿ(բ)Պ Կենտկոմի ներկայացուցիչ Ա. Մռավյանը։ Տեղերի ներկայացուցիչների զեկուցումներից բացի, կոնֆերենցիան լսում է Ա. Մռավյանի զեկուցումը Լոռվա կոմունիստական կազմակերպությունների խնդիրների մասին։ Կոնֆերենցիայի աշխատանքներն ավարտելուց հետո, ապստամբության շտաբը հրավիրում է հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում են շեղոր գոտու պատգամավորները, Ղարաքիլիսայում գտնվող կայազորի հրամանատարությունը և այլ պատասխանատու աշխատողներ։ Խորհրդակցությունը մշակում է ապստամբության մանրամասն պլանը և այն իրականացնելու համար գավառամասերին ամրացնում է ռազմական գործի ստուգված մասնագետներ։ Փետրվարի 7-ին կազմակերպվում է Լոռվա Ռազմահեղկոմի կոմիտե, որի գլուխ է կանգնում ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան Բյուրոյի կողմից շեղոր գոտուն ամրացված ներկայացուցիչը, իսկ նրա կազմի մեջ են մտնում Ս. Գ. Լվովյանը (Ալավերդու հին բանվոր և հին բոլշևիկ) և Ս. Սարգսյանը (երկաթգծի հին բանվոր)։

Փետրվարի առաջին տասնօրյակում արդեն լիակատար կերպով ավարտված էին ղինված ապստամբության նախապատրաստական աշխատանքները։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի դիրեկտիվներով ապստամբության սկիզբը չեզոք գոտում նշանակված էր 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի դիշերը։ Եվ իրոք, սահմանված ճիշտ ժամկետին Լոռվա չեզոք գոտում ապստամբությունն սկսվում է։ Շնորհիվ Վրաստանի Կոմունիստական պարտիայի կողմից մենշևիկյան բանակում տարված ուժեղ ագիտացիայի, մենշևիկյան զորամասերի մեծ մասը, որոնք բռնի կերպով տարվել էին ռազմադաշտ, չէին ցանկանում կռվել իրենց դասակարգային եղբայրների՝ չեզոք գոտու բանվորների ու գյուղացիների դեմ։

Սակայն որոշ տեղերում, ինչպես, օրինակ՝ Լոռվա տափաստանում, մենշևիկների ընտրովի զորամասերը ապստամբներին ցույց են տալիս կատաղի դիմադրություն՝ հրետանային ուժեղ կրակով ավերում են Վորոնցովկա, Պրիվոլնոյե և նրանց շրջակա գյուղերը։ Այդ ժամանակ ապստամբության շտաբը դիմում է Կարմիր Բանակի օգնությանը։ Ընդառաջելով ապստամբներին, Ս. Օրջոնիկիձեի կարգադրությամբ հետագա 11-րդ բանակի զորամասերը փետրվարի 12-ին անցնում են չեզոք գոտու սահմանը։ Նրանք օգնության են հասնում Լոռվա ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ «Պարզ է, իհարկե,— ասում է Ս. Օրջոնիկիձեն,— որ մոտ կանգնած Կարմիր Բանակը չէր կարող սառնարյուն կերպով նայել, թե ինչպես են մենշևիկները դնդակահարում Սովետական իշխանության համար ապստամբություն բարձրացրած գյուղացիներին։ Բոցավառվող Վորոնցովկա և Պրիվոլնոյե գյուղերը մի ազդանշան եղան, որոնք Կարմիր Բանակին օգնության կանչեցին ապստամբներին...»[1]։

Կարմիր Բանակի այդ օգնությամբ ապահովվեց ապստամբության արագ հաղթանակը Լոռվա չեզոք գոտում։ Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ, այդ ժամանակ Բորչալուի գավառում սկսվում է զինված ապստամբություն։ Շուտով Վրաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ զինված ապստամբություններ են սկսվում Գորիում, Դուշեթում, Գուրիայում, Աբխազիայում, Աջարստանում, Հարավ-Օսեթիայում, Լեչխումի գավառում և երկրի մյուս մասերում։ Ապստամբությունը գառնում է ընդհանուր։ Փետրվարի 16-ին կազմակերպվում է Վրաստանի Ռևոլյուցիոն Կոմիտե (Ռևկոմ), որը Վրաստանը հայտարարում է Սովետական Սոցիալիստական Ռես-

---

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 45։

680—5

պուբլիկա: Վրաստանի ապստամբ բանվորներին և գյուղացիներին եղբայրական օգնության են հասնում Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակի զորամասերը:

Չնայած Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և մյուս երկրների իմպերիալիստների կողմից վրացական մենշևիկներին ցույց տված ամեն կարգի օգնությանը, Վրաստանում սկսված այդ ընդհանուր ընդվզումը արագ կերպով ծավալվում է և ավարտվում Վրաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակով: 1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի վրա ծածանվում է Սովետների կարմիր դրոշը: Շուտով սովետական կարգեր են հաստատվում ամբողջ Վրաստանում: Իրականացվում է ազատասեր վրաց ժողովրդի դարավոր իղձը: Նա ձեռք է բերում իր իսկական ազատությունն ու անկախությունը: Վրաստանի ազատագրումը ջերմորեն ողջունեցին Սովետական Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորները:

Սովետական Վրաստանի աշխատավորները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ձեռնամուխ են լինում սոցիալիստական շինարարությանը, իրենց նոր ու երջանիկ կյանքի ստեղծմանը:

Սովետական կարգերի հաստատումը Վրաստանում վճռական նշանակություն ունեցավ այդ ժամանակ Սովետական Հայաստանում դաշնակների կողմից կազմակերպված կոնտրռևոլյուցիոն խռովության՝ փետրվարյան ավանտյուրայի արագ ջախջախման գործում:

* * *

Երբ Հայաստանում Սովետական իշխանությունը դեռ նոր էր սկսել իր առաջին քայլերը, ժողովրդի թշնամի դաշնակները, իրենց շուրջը համախմբելով երկրի ներսում եղած կոնտրռևոլյուցիոն ուժերին, սկսեցին 1921 թ. փետրվարյան ավանտյուրան:

Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության դեմ սկսված այդ կոնտրռևոլյուցիոն ելույթն ուներ իր որոշակի նպատակը՝ տապալել Սովետական իշխանությունը Հայաստանում, վերականգնել հին կարգերը, երկիրը կրկին դարձնել իմպերիալիստական պետությունների գաղութ և պլացդարմ ընդդեմ Սովետական Ռուսաստանի:

Սոցիալիստական ռևոլյուցիայի մեծագույն հանճար Վ. Ի. Լենինը, խոսելով տապալված շահագործողների ռեստավրացիոն հույսերի և փորձերի մասին, ասել է.

«Անցումը կապիտալիզմից կոմունիզմին մի ամբողջ պատմական դարաշրջան է։ Քանի այն չի ավարտվել, շահագործողների մեջ անխուսափելիորեն մնում է ռեստավրացիայի հույսը, իսկ այդ հույսը ռեստավրացիայի փորձերի է վերածվում։ Եվ առաջին լուրջ պարտությունից հետո՝ տապալված շահագործողները, որոնք իրենց տապալմանը չէին ապաշտում, դրան չէին հավատում, մարդով անգամ այդ չէին անցկացնում, տասնապատկված եռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ ուժեղացած ատելությամբ նետվում են գնդի մարտի և նետվում՝ հանուն խլված «դրախտի» վերադարձման, հանուն իրենց ընտանիքների, որոնք այնքան քաղցր էին ապրում, և որոնց այժմ «ատամիկ խուժանը» դատապարտում է քայքայման ու թշվառության (կամ «հասարակ» աշխատանքի...)[1]։

1921 թ. փետրվարյան ավանտյուրան հին կարգերի ռեստավրացիայի այդպիսի մի փորձ էր։

Սակայն այդ դավադրությունը ինքնամփոփ երևույթ չէր։ Այն անբաժան շաղկապված էր միջազգային հակասովետական ռեակցիայի հետ և հանդիսացավ այդ ռեակցիայի արտահայտություններից մեկը Անդրկովկասում։

Փետրվարյան ավանտյուրան նախապատրաստվեց և տեղի ունեցավ հետևյալ պայմաններում։

ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստները բազմապիսի օգնության ցույց տալով Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերին, նպատակ էին դրել ինչ գնով ուզում է լինի, ձեռքից բաց չթողնել Անդրկովկասը։ Այդ ուղղությամբ նրանց ջանքերը առանձնապես ավելի ուժեղացան Կարմիր Բանակի կողմից Վրանգելի սպիտակգվարդիական բանդաների ջախջախումից և Անդրկովկասում ու Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։

Ֆրանսիական «դերագույն կոմիսար» Ա. Շեվալյեն 1920 թ. դեկտեմբերի 16-ին, Թիֆլիսում մենշևիկյան վրաստանի Հեռագրական գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցում պարզ ու որոշակի հայտարարել է, որ ամբողջ աշխարհի (այսինքն իմպերիալիստների — Ա. Հ.) շահերը պահանջում են Հայաստանի և

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, Հայպետհրատ, Երևան, 1951, էջ 319։

Ադրբեջանի սովետական իշխանությունների տապալումը։ Նա միաժամանակ մենշևիկյան Վրաստանին խոստացել էր ռազմական օգնություն, եթե երկրում ծագի ինտերվենցիա կամ եթե արտաքին թշնամու կողմից նրա վրա հարձակում տեղի ունենա։

Դրանից մի քանի շաբաթ հետո, 1921 թ. հունվարի 27-ին անգլիական բուրժուազիայի օրգան «Թայմս»-ը գրել է. «Վաշնակների լիդերների այս ամսի սկզբներին Թիֆլիսում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ...»[1]։ Սակայն ինքը միաժամանակ նշում է, որ դրա համար անհրաժեշտ է դրսի օգնություն։

Եվ իմպերիալիստները կազմակերպում են այդ օգնությունը։ Նրանք օգնում են ոչ միայն նյութապես, ռազմամթերքով, այլև իրենց զորքերով կռվում են սոցիալիստական հեղափոխության դրոշը բարձրացրած Անդրկովկասի աշխատավորության դեմ, համաձայնեցնում և միասնել մշակում են սովետական կարգերի դեմ Անդրկովկասի կոնտրհեղափոխության ուժերի ղեկավար կենտրոնների պլանները, այդ թվում նաև դաշնակների փետրվարյան ամանաուրայի պլանը։

Անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների թելադրանքով և օգնությամբ այդ ժամանակ մենշևիկյան Վրաստանում (Թիֆլիսում) կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի, Սովկասի Լեռնական հանրապետության «փրկության կոմիտեները», որոնց առաջնահերթ խնդիրն էր Սովկասում սովետական հեղափոխության դեմ կազմակերպել կոնտրհեղափոխական զինված ելույթներ։ Խոսելով այդ մասին, Ս. Օրջոնիկիձեն գրում է. «... Երբ Թիֆլիսում կազմակերպվեցին Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնական հանրապետության և այլն «փրկության կոմիտեները»— դա Սովկասում ամենուրեք Սովետական իշխանության դեմ ապստամբություն բարձրացնելու մի պլան էր»[2]։

Ս. Մ. Կիրովը, բնութագրելով Վրաստանի մենշևիկյան կառավարության դերը այդ օրերին, նշում է. «Կան տվյալներ ենթադրելու, որ Ադրբեջանի մուսավաթականների ելույթը Գյանջայում մանրազրնին կերպով նախապատրաստվել է հենց Թիֆլիսում։ Մինչև այժմ այնտեղ են մնում Դոնի, Կուբանի, Թերեքի նախկին իշխանություն-

---

[1] „Бюллетень НКИД РСФСР", № 66, 23 февраля 1921, стр. 30—31.

[2] Տ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49։

նների ներկայացուցիչները. այնտեղ են գործում նաև Վրանգելի ներկայացուցիչները»[1]։

Մի այլ տեղ այդ առթիվ Ս. Մ. Կիրովը ասել է.

«Հենց այժմ խոսեցի Օրջոնիկիձեի հետ, որը գտնվում է Բաքվում. նա հաղորդում է հետևյալը.— Ելիզավետոպոլի (Գյանջայի) նահանգում եղել է մեծ ապստամբություն, որը ճնշվել է վեցօրյա մարտերից հետո։ Ելիզավետոպոլը ուժեղ չափով աուժել է հրետանուց։ Այժմ ապստամբություններ են տեղի ունենում Շուշիում և Ազդամում։ Ապստամբությունները կազմակերպվում են մուսավաթականների կողմից։ Վրացիները որոշակի կերպով նկատի ունեն Զաքաթալայի դավառը օգտագործել որպես բազա՝ Ելիզավետոպոլի նահանգի դեպքերի կապակցությամբ»[2]։

Ինչպես նշեցինք, Հայաստանում Սովետական իշխանություն հաստատվեց այն ժամանակ, երբ երկիրը՝ իմպերիալիստների կամակատար զաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով կանգնած էր կործանման վտանգի առաջ, երբ հայ ժողովուրդը բզկտվում էր եվրոպական և ամերիկյան իմպերիալիստների, քեմալական օկուպանտների, վրացական մենշևիկների (Լոռու չեզոք գոտում) և զաշնակների կողմից։ Այդպիսի ծանր պայմաններում, Սովետական իշխանությունը Հայաստանում ձեռնամուխ եղավ քայքայված երկրում կարգ ու կանոն հաստատելու, բանվորներին և գյուղացիներին սովի ու համաճարակի կործանաբեր վտանգից ազատելու դժվարին խնդրի լուծմանը։ Սովետական իշխանության առաջին երկու և կես ամիսների գործունեությունը խաղաղ փոփոխություններ մտցրեց երկրի կյանքում։ Սակայն նման կարճ ժամանակամիջոցում հնարավոր չէր վերացնել անտեսական այն քայքայվածությունը և նրա ծանր հետևանքները, որ մնացել էին զաշնակների տիրապետությունից։ Այդպիսի քայքայված տնտեսությունը և նրանից բխող պարենային դժվարությունները հնարավորություն չէին տալիս Հայաստանում պահել մեծ քանակությամբ զորամասեր։ Ինչպես նշել է Ս. Օրջոնիկիձեն[3], այդ զորամասերը կերակրելու հնարավորություն չկար, իսկ մենշևիկյան Վրաստանը փակել էր ճանապարհը Ռուսաստանից և Ադրբեջանից

---

[1] С. М. Киров, Статьи, речи, документы, Сборник, том I, Партиздат, 1936, стр. 225.

[2] Там же, стр. 226.

[3] *Տե՛ս Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49։*

գնալի Հայաստան մեկնող պարենամթերքներով բեռնված գնացքների համար։

Ռեսպուբլիկայում գնալ էին ամրապնդվում Սովետական իշխանության պետական օրգանները։ Ձգտվում էր նոր կադրերի խիստ պակաս։ Առանձնապես ծայրամասային և լեռնային շրջաններում (Դարալագյազ, Արագածի ստորոտ, Բաշ-Գյառնի, Նոր Բայազետ և այլն) սովետական ապարատը դատնվում էր թույլ վիճակում։ Հայաստանի Ռևկոմը անհրաժեշտ չափով այդ շրջանների հարցով չզբաղվեց։ Իսկ քաղաքական-մասսայական աշխատանքները թերագնահատված էին, մանավանդ արևմտահայ գաղթականության մեջ։ Այդ ցույց տալու համար կարելի է հիշատակել հետևյալ փաստը.

Արագածի ստորոտի 21 գյուղերում վերաբնակված արևմտահայ գաղթականության ներկայացուցիչը 1921 թվականի հունվարի 14-ին Հայաստանի Ռևկոմին ուղղած դիմումի մեջ գրում է.

«Ալագյազում քրդական և հայկական գյուղերում վերաբնակվող մշեցիներս ու սասունցիներս ներկա խնդրագրով դիմում ենք Ձեզ, հայտնելով, որ մենք ենք իսկական բանվոր-ուղնձալար ժողովուրդը, մեր սրտին շատ մոտ է խորհրդային իշխանությունը, որը միակ պաշտպանն է բանվոր հողագործ ժողովրդին»[1]։ Նրանք ցանկություն են հայտնում, որ իրենց մոտ կազմակերպվեն ռևկոմներ, ուղարկվեն պրոպագանդիստներ, դրականություն[2]։

Օգտվելով այդպիսի դրությունից, սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանում մնացած դաշնակցական դինված ուժերը ծպտված կերպով կենտրոնանում են վերոհիշյալ շրջաններում։ Հակասովետական ուժեղ ագիտացիային զուգընթաց, նրանք համախմբում և վերազինավորում են իրենց ուժերը։ Նույնիսկ մի շարք շրջաններում և գյուղերում (Դարալագյազ, Բաշ-Գյառնի և այլն) դաշնակները թափանցել էին ռևկոմների կազմի մեջ և այնտեղից քայքայիչ աշխատանք էին կատարում։

Ի. Վ. Ստալինը խոսելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո Սովետական Ռուսաստանում մնացած կոնտրռևոլյուցիոն ուժերի ստրատեգիայի մասին, գրել է, որ «Կոնտրռևոլյուցիոներներն ու ակտիվ էսեռա-մենշևիկները պլանավորում էին բոլոր դժգոհ տարրերին, այն է՝ հին սոցյուքյանը թիկունքում ու

[1] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. № 3/116, ց. № 2, թ. 79։ Ընագրի ոճը պահպանված է։*

[2] *Նույն տեղում։*

ռազմաճակատում, բուրժուա-նացիոնալիստական կառավարություններին ծայրամասերում, ռևոլյուցիայի կողմից էքսպրոպրիացիայի ենթարկված կապիտալիստներին ու կալվածատերերին, Անտանտի՝ ինտերվենցիա պատրաստող գործակալներին և ուրիշներին մեկ լագերի մեջ միավորելու գծով: Նրանք ընդունել էին ապստամբությունների կամ օտարերկրյա ինտերվենցիայի միջոցով Սովետական կառավարությունը տապալելու և Ռուսաստանում կապիտալիստական կարգերը վերականգնելու կուրս»[1]:

Այդպիսի կուրս էին վերցրել նաև ժողովրդի կատաղի թշնամի պաշնակները, որոնք իրենց շուրջը համախմբելով բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերը, ամերիկյան, անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների ու թյուրքական զավթիչների օգնությամբ Հայաստանում նախապատրաստում էին ղինված ելույթ ընդդեմ սովետական կարգերի:

Մյուս կողմից ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման ընթացքում Հայաստանում թույլ տրվեցին մի շարք շեղումներ և սխալներ: Լուրջ կերպով հաշվի չառնվեցին այն առանձնահատկությունները, որոնք նշել էր Վ. Ի. Լենինը 1921 թ. ապրիլի 14-ին Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների Ռեսպուբլիկայի կոմունիստներին ուղղած ծրագրային նամակում:

Շեղումներն արտահայտվեցին նրանով, որ խախտելով ռազմական կոմունիզմի սկզբունքները, շատ դեպքերում տեղական աշխատողները վերցնում էին ոչ թե գյուղացիների սարենային ավելցուկները, այլ ավելին, որը դժգոհություն էր առաջացնում միջակ գյուղացիության մեջ: Գյուղերում չբավոր գյուղացիության թույլ կազմակերպվածության հետևանքով ունևորները և կուլակները սաբոտաժի էին ենթարկում կառավարության միջոցառումները և Սովետական իշխանությունից թաքցնում իրենց պարենի պաշարները:

Օգտվելով անկազմակերպ բունապրավումներից և թույլ հսկողությունից, սովետական ապարատում խցկված քողարկված թշնամիները Սովետական իշխանությանը վարկաբեկելու նպատակով, կատարում էին բունապրավումներ: Այդ առթիվ Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի 1921 թ. փետրվարի 10-ի հրամանում ասված է. «Դաշնակների գաղտնի ագենտները խցկված լինելով մեր երի-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 200:

տասարդ խորհրդային հիմնարկությունները, ինքնագլուխ գործունեությամբ և ազգաբնակչության հետ կապիտ վարվելույթյամբ ի չիք են դարձնում խորհրդային իշխանությունը։

Վերջին օրերս ինքնագլուխ բռնապրավումներ և խուզարկություններ են նկատվում»[1]։

Հայաստանի Ռևկոմը պաշտոնների և մյուս կոնտրռևոլյուցիոն տարրերի նկատմամբ անհրաժեշտ վճռականության չդուցաբերեց, որի հետևանքով պաշտոնկյականների մի մասը, որը տակտիկական նկատառումներով քողարկված էր «ձախ» պիտակի տակ, ազատ մուտք էր գտնում Սովետական Հայաստանի մարմնաղարում և մյուս շրջաններում։ Նրանցից ոմանք նույնիսկ տեղավորված էին դեկավար պաստերում և դատապարտի դերը էին նշանում բանվորների ու գյուղացիների Սովետական պետության դեմ։

Սովետական կարգերի դեմ նախապատրաստող դավադրությունը կոծկելու և ավելի լայն ազատություն ու վստահություն ձեռք բերելու նպատակով, նրանք արտաքուստ ձևանում էին լոյալ և նույնիսկ սովետական կարգերի կողմնակից։

1920 թ. դեկտեմբերի կեսերին Երևանում, անկախ կերպով կազմակերպվում է պաշտկցության Հայաստանի կոմիտե։ Ամանատյուրայի ամբողջ նախապատրաստումը կոմիտեն վերցնելով իր ձեռքը, կապ էր հաստատել Հայաստանի այն շրջանների հետ, որտեղ կենտրոնացած էին իրենց գլխավոր ուժերը — Բաշ-Գյառնի, Աշտարակ, էջմիածին, Դարալագյազ։

1921 թ. հունվարի 27-ին «Կոմունիստ» թերթը «Պաշտկցության վերջին ավանտյուրան» վերնագրով առաջնորդողում տեղեկացնում է պաշտոնների կողմից նախապատրաստվող դավադրության մասին։ Այնտեղ ասված է.

«... Պաշտկցությունը կամենում է հաճոյանալ նոր արյունահեղությամբ։ Նա փորձում է հայ կոլոնիալ բուրժուազիայի և անգլո-ֆրանսիական կապիտալի օգնությամբ քաղաքացիական պատերազմ սկսել Հայաստանի բանվորա-գյուղացիական կառավարության դեմ։

Հայաստանում պաշտկցությունն իր բազան է դարձրել ղրժբախտ Զանգեզուրը։ Այստեղ են հավաքված պանսլան Ռուբինն, Նժդեհ և այլ տխրահռչակ «փաշաներն» ու «հերոսները»։ Զանգեզուր

---

[1] «Կոմունիստ» (Հայաստան), № 54, 1921, փետրվարի 12, Երևան։

ևն կուսակցում պանպան կողմերից Հայաստանում «անգործ» մնացած բոլշևիկյան մասնագետները։

... Մյուս կողմից կապեր են հաստատված Թավրիզի միջոցով անգլիացիների և Թիֆլիսի հետ, որոնք հակահայկական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը։ Եթե այդ բոլորին ավելացնենք նաև այն, որ Քեմալի զորքերի կողմից գրաված վայրերը չմաքրելու մղին հաղթականությունը միանգամայն համապատասխանում է դաշնակցության դասակարգային ծրագրին, նոր ավանտյուրայի պատկերը կլրանդվի միանգամայն։

Ահա այն արտաքին ուժերը (ինչ խոսք, որ մենշևիկյան վրասատանն էլ նրանց շարքումն է), որոնց վրա հիմնված, դաշնակցությունը պատրաստվում է Հայաստանում հակահեղափոխական հեղաշրջում առաջացնել և բանվորների ու գյուղացիների դիակների վրա կապիտալի ու մասնագետների իշխանություն հաստատել»[1]։

Այնուհետև առաջնորդողում խոսվում է այն ներքին ուժերի մասին, որոնց միջոցով և աջակցությամբ կարող էր պլուս գալ նոր ավանտյուրան։

Չնայած ավանտյուրայի այդպիսի որոշակի նախապատրաստությանը և նրա մասին եղած ակնհայտ ավյալներին, ՀՍՍՌ Ռևկոմը չկարողացավ անհրաժեշտ հետևություններ անել դրանից։

Այդ պետք է բացատրել նրանով, որ Հայաստանի Ռևկոմը այդ ժամանակ ոչ վճռական, դյուրահավատ, ըստ էության, սխալ վարքագիծ ցուցաբերեց դաշնակների նկատմամբ։ Նա հավատաց «ձախ» դաշնակների կեղծ խոստումներին և անհրաժեշտ հսկողություն չսահմանեց նրանց գործունեության վրա։ Դրանով իսկ թշնամին օբյեկտիվորեն որոշ հնարավորություն ստացավ ընկած դավադրություն նախապատրաստելու համար գործելու համեմատաբար նպաստավոր պայմաններում։

Դաշնակների նկատմամբ ցուցաբերած իր այդ սխալ վարքագիծը Հայաստանի Ռևկոմը հասկացավ միայն փետրվարյան ավանտյուրան սկսվելուց հետո։ Ռևկոմի 1921 թ. մարտի 4-ի կոչում այդ մասին ասված է. «... Հայաստանի խորհրդային իշխանության ոչ թե հանցանքը, այլ քաղաքական սխալը կայանում է նրանում, որ դաշնակների դավադրության իրագործման միայն նախօրյակին ձեռնարկեց այդ կուսակցության մի շարք ղեկավարների ձերբակալ-

---

[1] «Коммунистъ» (Հայերեն), 27 Հունվարի, 1921, № 40։ Ընդգծումները մերն են։

մանը և միայն Երևանից նահանջելու մոմենտին դնդակահարեց մի երկու տասնյակ մասուլբիստներ, խմբապետներ և այլ դարշելիներ, որոնք տակավին ձերբակալությունից առաջ օրենքից դուրս էին հայտարարված»[1]:

Դաշնակների նկատմամբ Հայաստանի Ռևկոմի ունեցած ոչ վճռական վարքագծի դեմ ՀԿ(բ) պարտիայի Ալեքսանդրոպոլի Կոմիտեն 1920 թ. դեկտեմբերի 21-ին ՀԿ(բ)Պ Կենտկոմին (պատճեն Հայաստանի Ռևկոմին) ուղղում է մի պրոթյուն, որտեղ ասված է.

«Ալեքսանդրոպոլի Կոմկուսակցության Քաղկոմը՝ տեղեկանալով այն տակտիկայի մասին, որ ունի Հայաստանի Հեղկոմը ներքին կյանքում ընդհանրապես և հանդեպ ոճրագործ դաշնակները մասնավորապես, որոնց վերաբերմամբ դործադրվում է հեղափոխական ոդուն և դործելակերպին անթույլատրելի փափկություն, որպիսի հանդամանքը շատ թանկ կարող է նստել Կարմիր Հայաստանի առանց այն էլ հյուծված ընչաղուրկներին և աննպաստ ընթացք ունենալ հեղափոխության համար, բողոքում է դրա դեմ և պահանջում է խիստ միջոցներ ձեռք առնել հակահեղափոխության դեմ:

Խմբապետների տեղը ոչ թե Կարմիր Բանակի հրամանատարության կազմի մեջն է, այլ Արտակարգ Հանձնաժողովի նկուղը:

Կորչեն վերջնականապես մասուլբիզմի առաքյալները կարմիր իրականության»[2]:

1921 թ. հունվարի կեսերին դաշնակցական պինված բանդաները կենտրոնացել և դասավորվել էին Արագածի ստորոտում, Ն. Ախտալի, Բաշ-Գյառնիի, Նոր Բայազետի և Դարալագյազի շրջաններում:

Հաշվի առնելով Սովետական Հայաստանի ծանր դրությունը, Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի հանձնարարությամբ 1921 թ. հունվարի վերջերին Հայաստան է գալիս Կովկասյան ռազմաճակատում Ռուսաստանի Արտակարգ Հանձնաժողովի լիազոր, կուսված բոլշևիկ Գ. Ամիրբեկյանը, խնդիր ունենալով վճռական պայքար ծավալել դաշնակների և մյուս կոնտռևոլյուցիոն ուժերի դեմ: Ծանոթանալով Հայաստանի վիճակին և իմանալով դաշնակների կողմից նախապատրաստվող դավադրության մասին, Գ. Ամիրբեկյանը անողոք պայքար է կազմակերպում դաշնակների և մյուս թշնամիների դեմ: Հայաստանի սովե-

---

[1] *ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքս—Էնգելս—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, կապուկ 31, գ. 5, թ. 3:*

[2] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. N 4/114, գ. 7, թ. 8:*

տական պետական օրգանները բանտարկում են մի խումբ դաշնակցական ակտիվ գործիչների, հայտնաբերում և ոչնչացնում են դաշնակների մի շարք գաղտնի կազմակերպություններ։ Սակայն դաշնակցականների որոշ մասին հաջողվում է թաքնվել։ Գործադրելով բոլոր ջանքերը, նրանք արտադացնում են դավադրության նախապատրաստությունը։ Այդ օրերին Ջանգելուրից, որը դեռևս գտնվում էր դաշնակների ձեռքում, գաղտնի կերպով Հայաստանի տարածական շրջաններն են անցնում դաշնակցական մի շարք գինված բանդաներ։

Իրենց շուրջը համախմբելով Սովետական Հայաստանում գտնվող կոնտրռևոլյուցիոն ուժերը՝ կուլակությանը, սպեկուլյանտներին, խմբապետներին, հողևորականությանը և այլ կարգի տականքներին, դաշնակները խռովության առաջին փորձը կատարում են 1921 թ. հունվարի 22-ին՝ Բաշ-Գյառնիում։ Այդ օրը նրանք գինված ելույթի միջոցով Բաշ-Գյառնին վերցնում են իրենց ձեռքը։ Երևանից մեկնած Կարմիր Բանակի զորամասերը, աշխատավոր գյուղացիության օգնությամբ, նույն ամսի 29-ին լիկվիդացնում են դաշնակների Բաշ-Գյառնիի խռովությունը։

Սակայն դաշնակցական բանդաները լիովին չեն գինաթափվում։ Նրանց մի մասը թաքնվում է։ Իսկ Երևանից ուղարկված Կարմիր Բանակի զորամասերը հրաման են ստանում վերադառնալ Երևան։ Օգտվելով Կարմիր Բանակի հրամանատարության այդ սխալից, հակառակորդը նորից գործելու հնարավորություն է ստանում։ Բաշ-Գյառնիում են կենտրոնացվում թշնամու հիմնական ուժերը և շտաբը։ Նրանք տենդորեն շարունակում են նախապատրաստվել նոր ելույթի համար։

Վրացական մենշևիկները, որոնք այդ ժամանակ իշխանությունը դեռևս պահում էին իրենց ձեռքում, երկրում աճող ռևոլյուցիոն հզնաժամի հետևանքով, ծանր կացության մեջ էին և ամեն կերպ աշխատում էին արտադացնել դաշնակների կողմից նախապատրաստվող կոնտրռևոլյուցիոն ելույթը։

Իսկ երբ դաշնակները սկսում են ավանտյուրան և փետրվարի 18-ին գրավում Երևանը, մենշևիկյան Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սարախատարաշվիլին փետրվարի 21-ին ողջունելով դաշնակներին, գրել է.

«... Վրաստանի կառավարությունն առաջարկում է ձեզ՝ անմիջապես դուրս գալ մեզ հետ միասին և խփել բոլշևիկների թիկունքին... Բոլշևիկների գործերի բոլոր գրոհները երեկ և այսօր գիշերը

ետ են շպրտված... Թրանսիան վերջնականապես բռնեց մեր կողմը և նրա էսկադրոնը ամրակոծում էր բոլշևիկյան զորքերին...»[1]։

Փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման գործում դաշնակիներին խոշոր չափով օգնել է նաև Թյուրքիայի քեմալական կառավարությունը։ Այդ մասին Հայաստանում գործող կարմիր զորամասերի շտաբի 1921 թ. փետրվարի ամփոփագրում ասված է.

«Փետրվարի 16-ին թյուրքական հանձնաժողովի ներկայացուցիչը փորձում էր մեկնել Շահթախտ, ընդ որում մոտիկ կանգնած գործակալների տվյալների համաձայն մեկնելու նպատակն է եղել՝ ապստամբություն բարձրացնել Շահթախտի և Նախիջևանի շրջանում։

Նույն տվյալների համաձայն՝ ապստամբությունը (այսինքն՝ փետրվարյան ավանտյուրան — Ա. Հ.) նախապատրաստվում էր վաղուց և հետևանք է դաշնակների ու Թյուրքիայի միջև տեղի ունեցած հարաբերությունների։ Ըստ բոլոր տվյալների, այդ ապստամբությունը կազմակերպված է և տարվում է թյուրքերի ղեկավարությամբ և հիմք կա ենթադրելու, որ դա հանդիսանում է թյուրքերի կողմից որպես հակակշիռ (գործողություն) մեր առաջխաղացմանը Վրաստան»[2]։ *Ամփոփագրի վերջում ուղղակի նշված է, որ թյուրքերը մասնակցել են նաև Բաշ-Գյառնիի խռովության նախապատրաստմանը։*

Փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման գործում Թյուրքիայի կառավարության մասնակցությունը բացահայտ կերպով երևում է Հայկական ՍՍՌ Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատի նոտայից, որը քաղաքացիական կռիվներն ավարտվելուց հետո ուղարկվել է թյուրքական բանակի արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային (պատճեն՝ Անկարայի կառավարությանը և ՌՍՖՍՌ-ի ներկայացուցչին՝ Անդրիևիկասում)։ Այնտեղ ասված է.

«Հայաստանում քաղաքացիական կռիվների կրիտիկական օրերին, երբ արտաքին և ներքին ոճրագործ ուժերը բարձրացան բանվորների և գյուղացիների իշխանության դեմ, ցանկանալով խեղ-

---

[1] *«Ազատ Հայաստան», օրգան «Հայաստանի փրկության կոմիտեի», 23 փետրվարի, 1921, № 4։*

[2] *ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքս—Էնգելս—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պատմարխիվ, պատմական մաս, 11-րդ բանակին վերաբերող նյութերը, կապոկ 1, գ. 1, թ. 103։*

պել նրան արյան ալիքների մեջ, Սովետական Հայաստանի կառավարությունը կարող էր հուսալ, որ իր շինամիների ճամբարում տեղ չպիտի լինի... Թյուրքիայի ներկայացուցչին։ Բայց դժբախտաբար մենք ստիպված ենք արձանագրել, որ կապիտան Բահաէդդինի (Թյուրքիայի արևելյան ճակատի զորքերի հրամանատարության ներկայացուցիչը Երևանում — «Հայաստանի փրկության կոմիտեի» մոտ — Ա.. Հ.) վարքագիծը քաղաքացիական կռիվների օրերին կրում էր շատ աննպատակ բնույթ ուսուցիչի շահերի տեսակետից Հայաստանում։ Անհերքելիորեն ապացուցված է, որ կապիտան Բահաէդդինը մի քանի անգամ այցելել է ազգամաճակատ, իր ճառերով խթանելու համար «Հայրենիքի փրկության կոմիտեի» զորամասերը։ Երևանում այդ կապիտանը թույլ է տվել իրեն հրապարակորեն ողջունել «Հայրենիքի փրկության կոմիտեի» ակտիվ անդամներին և խոստանալ Թյուրքիայի օգնությունը։

... Մենք ստիպված ենք նրա վարքագիծը անվանել որպես միջամտություն Սովետական Հայաստանի ներքին գործերին, նրա շինամիների կողմից։ Համաձայնելով այդ վարքագիծը որպես միջազգային հարաբերությունների տարրական կանոնների կոպիտ խախտում, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Ռևոլյուցիոն Կոմիտեն անթույլատրելի է համարում կապիտան Բահաէդդինի հետագա ներկայությունը Հայաստանի տերիտորիայում, հրաժարվելով ճանաչել նրան հետագայում որպես ներկայացուցչի»[1]։

Կարելի է հիշատակել մեկ ուրիշ փաստ ևս։ 11-րդ բանակի զեկավար հրամանատարական կազմի ներկայացուցիչներից մեկը իր զեկուցագրում (1920 թ. դեկտեմբերին) խոսելով Թյուրքիայի կառավարող շրջանների վերաբերմունքի մասին Հայաստանում սովետական կարգերի հաստատման վերաբերյալ, նշում է, քեմալականները առանձին զրույցի ժամանակ հայտնել են այն միտքը, որ Սովետական իշխանության հաղթանակը քիչ անսպասելի էր իրենց համար և դրան ավելացրել՝ «... բայց այդ բոլորովին չի քանդում մեր պլանները։ Ներկայումս մեր կողմից Հայաստանում նոր հեղաշրջում է պատրաստվում... այն հաշվով, որ Հայաստանը լինի Թյուրքիայի հովանավորության տակ...»[2]։

Այդ հեղաշրջումը փետրվարյան ավանտյուրան էր, որը, սա-

---

[1] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. № 4/114, գ. 102, թ. 22։*

[2] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, քաղվածքների ֆոնդ, 2-րդ մաս, գ. 352, թ. 285։*

կայն, չկարողացավ արգելացնել Թյուրքական ռևակցիոներների հույսերը, չնայած դաշնակիներին ցույց տված նրանց ամեն տեսակի օգնությանը։

Ինչ խոսք, որ Թյուրքիայի նման քաղաքականությունը խրախուսվում էր Անտանտայի, առանձնապես Անգլիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների կողմից, որոնք սիրաշահվելով Թյուրքիային, նրան պատերազմի էին հրահրում Սովետական Ռուսաստանի դեմ։

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում հրավիրված մի շարք երկրների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Գերմանիա, Հունաստան) կոնֆերանսին մասնակցում էր նաև Անկարայի կառավարության պատվիրակությունը՝ Բեքիր-Սամի-բեյի գլխավորությամբ։ Այդ կոնֆերանսում անգլիացիները «Թյուրքերին բացահայտ կերպով ցանկանում էին հրել Սովետական երկրի դեմ։ Լլոյդ-Ջորջը պրույց էր անեցել թյուրքական պատվիրակության նախագահ Բեքիր-Սամի-բեյի հետ, որը նախքան այդ, եղել էր Մոսկվայում։ Տալով նրան մի քանի հարցեր Սովետական Ռուսաստանի մասին, Լլոյդ-Ջորջը պրույցի վերջում Թյուրքին ուղղակի առաջարկեց Թյուրքիայի հովանավորության տակ վերցնել Անդրկովկասը՝ Բաքվի նավթահանքերի հետ միասին»[1]։ Թյուրքիան իր հերթին մեծ ախորժակ ուներ գավթելու Անդրկովկասը։ Սակայն անգլիական իմպերիալիստների խորամանկ դիվանագիտությունը թյուրքական գավթիչներին օգտագործում էր որպես գործիք՝ բարդացնելու հարաբերությունները Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների ու Սովետական Ռուսաստանի հետ՝ իր գավթողական նպատակները հեշտությամբ իրագործելու համար։

Ոգևորվելով Անտանտայի խրախուսանքից, Թյուրքիան ավելի ակտիվորեն էր օգնում Անդրկովկասյան կոնտրռևոլյուցիային, որի գինված ելույթներից մեկը ընդդեմ սովետական կարգերի հանդիսացավ դաշնակների փետրվարյան ավանտյուրան։

Փետրվարյան ավանտյուրան սկսելը որոշ չափով հեշտացավ շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաստանում գտնված Կարմիր Բանակի զորամասերի զգալի մասը կենտրոնացած էր Ղարաքիլիսայում և նրր Լոռվա շեղոք գոտում ու Վրաստանում մենշևիկների դեմ սկսվեց գինված ապստամբություն, այդ զորամասերը օգնության գնացին ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ Դաշնակներն այդ առիթը ևս բաց չթողին։

[1] „История дипломатии", том III, 1945, стр. 99—100.

ժողովրդի անարդ թշնամիները՝ դաշնակները փետրվարյան ավանտյուրայով երիտասարդ Սովետական Հայաստանին քաշում են բաղաքացիական պատերազմի մեջ, նրան պատճառելով մարդկային մեծ զոհեր և նյութական խոշոր վնասներ։

Ժողովրդի թշնամի դաշնակների այդ ավանտյուրիստական գործողությունը ռեպուբլիկայի աշխատավորության մեջ բուռն զայրույթ է առաջացնում։ Ամենուրեք տեղի են ունենում բողոքի միտինգներ և ցույցեր, ուր աշխատավորները միահամուռ կերպով արտահայտում են իրենց վճռականությունն ու անհողդողդ կամքը՝ նրից պայքարի դուրս գալու անարդ թշնամու դեմ և մինչև վերջ ջախջախելու նրան։

Հայ ինտելիգենցիայի առաջավոր մասը ևս իր ցասումն է արտահայտում դաշնակների փետրվարյան ավանտյուրայի առթիվ։ Ինտելիգենցիայի այդ մասի վճռական խոսքն ասված է հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանի նամակում՝ գրված ավանտյուրայի դեմ։

«Սրտի խորին կսկիծով հաստատ աղբյուրից տեղեկանում ենք,— ասված է այնտեղ,— որ Երևանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրան կատարողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավադրության, նույնիսկ հայ ժողովրդի և նրա դատի դեմ և որ հեղաշրջումը կատարվել է արյունալի ոճիրներով։ Էսպիսով մի նոր աղետ է դալիս դժբախտ հայ ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետներից»[1]։

Այդ աղետի արագ լիկվիդացումը Հովհ. Թումանյանը կապում է ուս մեծ ժողովրդի, նոր, Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնության հետ և հայ ժողովրդի անունից խնդրում է նրան իրագործել այն։ Նույն նամակում ասված է.

«Խորապես բողոքելով էս ծլվլուռ դեպքի և կատարված խըժդըժություններ դեմ՝ իբրև հայ ժողովրդի բանաստեղծ՝ որն էնքան հավատ է տածել դեպի Նոր Ռուսաստանը, խնդրում եմ Սովետական Ռուսաստանին հեռացնել էդ վերջին տանջանքի բաժակը արյունաքամ հայ ժողովրդից, նոր վերքեր չհասցնել նրա անհամար թարմ վերքերին, Սովետական Ռուսաստանի մեծահոգությամբ և բանվորա-դյուղացիական Կարմիր Բանակին հատուկ եղբայրական ղգացմունքներով ու ներողամտությունով մոտենալ Երևանին և հայ աշխատավոր ժողովրդին, որ անշուշտ անմեղ է ու անպարտ, գրե-

[1] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 4, Հայպետհրատ, Երևան, 1951, էջ 430։*

[illegible] իր ամբողջությամբ և յուր բարեկեցությունը չխափել անմեղների վրա, որովհետև մեղավորներին նա չի էլ պահելու իրենց տեղը»[1]:

Դաշնակիների փետրվարյան ավանտյուրան չսիջսիլելու համար սկսվում է Սովետական Հայաստանի բանվորների ու գյուղացիների հերոսական պայքարը սովետական կարգերի ներքին և արտաքին թշնամիների դեմ: Կուռ շարքերով համախմբվելով Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, նրանք վճռական պայքարի են դուրս գալիս հանուն սովետական կարգերի պահպանման և ամրապնդման:

Այդ մարտական օրերին Հայաստանի աշխատավորները հանուն Սովետական Հայրենիքի մարտնչում էին Սովետական Ռուսաստանի հերոսական 11-րդ բանակի հետ կողք-կողքի, բանակ, որն առևծվել, կռիվել և ամրապնդվել էր Սովետական Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների ընթացքում:

Ավանտյուրայի հիմնական ուժերն էին մասուլբերխատական խմբերը, կուլակությունը, սպեկուլյանտները, հոգևորականությունը և հակասովետական մյուս տարրերը: Դաշնակները, էսեռները, կադետները, սոցիալիստները քիչ ջանքեր չխափնեին միջակ և չքավոր գյուղացիությանն իրենց կողմը գրավելու և ավանտյուրային մասնակից դարձնելու համար: Սակայն այդ նրանց չհաջողվեց: Չքավոր գյուղացիությունն ամբողջությամբ, իսկ միջակն իր հիմնական մասամբ կանգնած էր Սովետական իշխանության կողմը և նրա պաշտպանության դիրքերում: Նրանք զենքը ձեռքներին կռվի դուրս եկան ավանտյուրիստների դեմ:

Այժմ տեսնենք, թե ինչպես սկսվեցին և զարգացան ռազմական գործողությունները:

Հայկական ՍՍՌ տերիտորիայում գտնված սովետական զորամասերի հրամանատարը (Մալիկաշանով) 1921 թ. հունվարի 2-ի № 1 հրամանով զորամասերը բաժանվել էին 4 մարտական խմբավորման:

Աջ խմբավորումը (ընդհանուր կազմը՝ 6 դումարտակ, 14 հրանոթ, մեկ հեծյալ վաշտ), որի հրամանատարությունը հանձնված էր 2-րդ հրաձգային բրիգադի հրամանատար Երմոլենկոյին, դասավորված էր Դանագիրմազ սար — Գյոդակլու—Բաշ-Ապարան—Օշական—Աշտարակ—Սարդարաբադ գյուղերի և Էջմիածին կայարանի շրջանում:

---

[1] *Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Հայպետհրատ, Երևան, 1951, էջ 430—431:*

Զախ խմբավորումը (ընդհանուր կազմը՝ 6 դիմարտակ, 8 հրանոթ), որի հրամանատարությունը հանձնված էր առաջին հրաձիգ բրիգադի հրամանատար Միրիմանովին, տեղավորված էր Ղամարլու —Ավշար— Դավալու շրջանում։

Դարալագյազի ջոկատը (մեկ դիմարտակ, 4 հրանոթ) Մելիք-Մուրադյանի հրամանատարությամբ (որը շուտով մերկացվում է որպես քաղաքական դաշնակցական) տեղավորված էր Դարալագյազում, խնդիր ունենալով պաշտպանել Սովետական Հայաստանը Զանգեզուրի դաշնակցական բանդաների հարձակումից։

Նոր Բայազետի խմբավորումը (մեկ դիմարտակ, մեկ լեռնային մարտկոց) տեղավորված էր Նոր Բայազետում, խնդիր ունենալով ապահովել կարգ ու կանոնն այդ շրջանում։

Բանակի օժանդակը (ընդհանուր կազմով 6 դիմարտակ, 12 հրանոթ, 5 հեծյալ վաշտ, 2 զրահապնացք), 3-րդ հրաձիգ բրիգադի հրամանատար Տիմչենկոյի հրամանատարությամբ տեղավորված էր Երևան—Քանաքեռ—Ներքին Ախտա—Նլենովկա (Սևան) շրջաններում։

Չունենալով ստույգ հետախուզական տվյալներ հակառակորդի ուժերի և նրանց դասավորության վերաբերյալ և ճիշտ եղրակացության չգալով Բաշ-Գյառնիի հունվարի 22—29-ի խռովությունից, Հայաստանում կանգնած սովետական զորքերի հրամանատարությունը մինչև փետրվարյան ավանտյուրայի սկսվելը իրեն ենթակա զորքերը չկարողացավ նոր վերախմբավորման ենթարկել և ռազմական հզոր բռունցք ստեղծել ավանտյուրայի հենց սկզբին հակառակորդին արագորեն ջախջախելու համար։ Միայն փետրվարի 15-ին Կարմիր Բանակի հրամանատարությունը ստույգ տեղեկություն է ստանում, որ Բաշ-Գյառնիում կազմակերպված է դաշնակների շտաբ և որ այնտեղ գտնված բանդաները բավականաչափ մեծացել են։ Բայց նույնիսկ այդ ժամանակ նրան դեռ հայտնի չէր, որ մեկ բանդա գտնվում էր Աշտարակի շրջանում, մեկ ուրիշը՝ Արագածի ստորոտում, մյուսը Վերին և Ներքին Նեջրլու դյուղերի շրջանում (Երևանից 12 կիլոմետր հարավ-արևմուտք), որ Երևանում գոյություն ուներ մասուլերիստների ջոկատ— քաղաքի պարետի օգնականի ղեկավարությամբ, որ Դարալագյազում կային դաշնակցական զինված ջոկատներ։

Այդ պատճառով էլ, երբ Բաշ-Գյառնիում սկսվեց խռովությունը, Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերի հրամանատարությունը իր գլխավոր ուշադրությունը դարձրեց միայն Բաշ-Գյառ-

նիի վրա, թևրապնահատելով մյուս շրջաններից սպառնացող վտանգը:

Ահա այդպիսի պայմաններում, 1921 թ. փետրվարի 13-ին Դարալագյազում դաշնակցական բանդաներն սկսում են իրենց դինված ելույթը: Հանկարծակի շրջապատելով Քեշիշքենդը, նրանք գաղանաբար մորթոտում ու սպանում են 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի 189-րդ գնդի առաջին դումարտակի սպաներին և մարտիկներին: Հարձակումը Քեշիշքենդի վրա սպդանշան դարձավ փետրվարյան ավանտյուրայի համար: Այդ դեպքերից մեկ—երկու օր հետո, համարյա միաժամանակ, դաշնակները դինված ելույթներ են սկսում Բաշ-Գյառնիում, Ապարանում, Նոր Բայազետում, Ախուրյանում:

Բաշ-Գյառնիում կենտրոնացած բանդաները, որոնց հետ էր դաշնակների գլխավոր շտաբը, փետրվարի 16-ին ծավալելով դինված ելույթը, գրավում են մի շարք գյուղեր (Ճաթղռան, Դամրեղ, Արամուս, Բաշգյուղ, Քերփլու, Ողջաբերդ): Նրանք ուղղություն են վերցնում դեպի Քանաքեռ՝ հյուսիսային կողմից երևանին հարվածելու համար: Դաշնակցական բանդաներից մեկը խնդիր ունենալով կտրել բոլոր տեսակի հաղորդակցությունը Երևանի և Ելենովկա—Դիլիջանի միջև, ուր գտնվում էր Կարմիր Բանակի ուժերի մի մասը, Բաշ-Գյառնիից շարժվում է դեպի Էլար: Նույն օրը այդ խումբը գրավում է Էլարը, Մհուբը և կտրում հետախուզային կապը Երևանի ու Ելենովկայի միջև: Բաշ-Գյառնիի շրջանից մեկ ուրիշ բանդա հարձակվում է Շոռոթլաղի վրա՝ խնդիր ունենալով գրավել այդ գյուղը և Երևանին հարվածել արևելյան կողմից: Առաջին հարձակման ժամանակ Շոռոթլաղում գտնվող Կարմիր Բանակի զորամասերի ուժեղ հարվածների տակ նրանք ետ են նահանջում դեպի Քերփլու: Շուտով դաշնակները կրկին հարձակվում են Շոռոթլաղի վրա և փետրվարի 16-ի երեկոյան գրավում են այն: Հաջորդ օրը, մարտերից հետո, հակառակորդը նորից ետ է շպրտվում Շոռոթլաղից: Դարձյալ Բաշ-Գյառնիի շրջանից մի այլ բանդա փետրվարի 16-ին ուղղություն է վերցնում դեպի Վ. Աղբաշ, խնդիր ունենալով կտրել Երևանից դեպի Սովետական Նախիջևան տանող երկաթգիծը և Սովետական Հայաստանի մայրաքաղաքին հարվածել հարավ—արևելքից: Նույն օրը երեկոյան նրանք գրավում են Ջահնաթլու գյուղը:

Փետրվարի 16-ին Աշտարակ—Էջմիածին—Երևան և Աշտարակ—Երևան ուղղություններով իրենց հարձակումն են սկսում Արագածի ստորոտում կենտրոնացած դաշնակցական բանդաները: Նրանց

խնդիրն էր դրավել Աշտարակը, Էջմիածինը, այնուհետև մի մասով շարունակել առաջխաղացումը դեպի Երևան, իսկ մյուս մասով՝ դեպի Ալավերդու— Ապհամզալու՝ կտրելու հաղորդակցությունը Երևանի և Վանաձորի միջև ու միանալու Բաշ-Գյառնիից դեպի Վ. Ադրաշ շարժվող ուժերին։

Փետրվարի 17-ին Աշտարակի և Էջմիածնի շրջաններն արդեն գտնվում էին խռովարարների ձեռքում։ Հակառակորդն սկսել էր սպառնալ Սովետական Հայաստանի մայրաքաղաքին։ Այդ բոլորը լսելով, Երևանում թաքնված դաշնակ-մատղերիստներն ավելի մեծ աշխուժություն են ցույց տալիս։ Նրանք ուժեղացնում են հակասովետական ագիտացիան։

Սոցիալ կոնտրռևոլյուցիային հարվածելու և մայրաքաղաքը պաշտպանելու համար Երևանում գտնվող Կարմիր Բանակի զորամասերը և աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռք են առնում մի շարք միջոցներ։ Կոմունիստներից և կոմերիտականներից կազմակերպվում է կամավոր ջոկատ. գինվում է տեղական միլիցիան, փետրվարի 15-ին Երևանում իր աշխատանքներն ավարտած անդրտրիտական կարմիրբանակային ռազմաքաղաքական դպրոցի ունկնդիրներից կազմակերպվում է հատուկ ջոկատ։ Շահթախտից Երևան է մեկնում 178-րդ գունդը։ Ջինաթաի է ուղղում դաշնակների ազդեցության տակ գտնվող սակրավոր զորամասը, որը կազմված էր գերազանցապես բուրժուական և ունևոր ընտանիքների զավակներից։

Բայց հարձակման նախաձեռնությունը գտնվում էր խռովարարների ձեռքում։ Երբ դեռ շարունակվում էր Կարմիր Բանակի զորամասերի վերախմբավորումն ու դասավորումը Երևանում և նրա շրջակայքում, փետրվարի 17-ին թշնամին հյուսիսից և արևմուտքից սրդեն շրջապատել էր մայրաքաղաքը։ Չնայած տեղի ունեցած կատաղի հարձակումներին, Շոռուղալի և Վ. Ադրաշի շրջակայքում փետրվարի 17-ին հակառակորդի ջոկատները ոչ միայն հաջողություններ չեն ունենում, այլև ետ են շպրտվում իրենց համար մեծ կորուստներով։ Նույն օրը վճռական մարտեր են տեղի ունենում Քանաքեռում։ Թշնամու դեմ մարտնչող կարմիր զորամասերին օգնելու նպատակով փետրվարի 17-ին Երևանից դեպի Քանաքեռ է մեկնում մի ջոկատ՝ Երմոլենկոյի հրամանատարությամբ։ Այդ ջոկատը Քանաքեռի տակ շրջապատվում է թշնամու կողմից և 4 ժամից ավելի մարտնչում է հակառակորդի դեմ։ Կապի բացակայու-

թյան և դրա հետևանքով օդնության ուշացման պատճառով երևելիների ջոկատը համարյա ամբողջությամբ ոչնչացվում է։ Այդ մարտում հերոսաբար ընկնում է նաև ջոկատի հրամանատար Սրմոլենկոն։ Փետրվարի 17-ին կատաղի մարտեր են տեղի ունենում նաև Երևանի ծայրամասերում՝ Կոնդի շրջակայքում և Հրազդան գետի կամուրջի համար։

Փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը դաշնակների բանդաները այնքան են նեղացնում Երևանի օղակումը, որ նրանց ուժերի մի մասը օգտվելով գիշերային խավարից, Կոնդի և Նորքի կողմից թափանցում է քաղաք և միանում Երևանում գտնվող մասւլերիստներին։ Նրանք պրավում են մի շարք շենքեր։ Փետրվարի 18-ի վաղ առավոտյան Երևանի փողոցներում սկսվում են ուժեղ կռիվները։ Մի շարք տեղերում հրաձգությունը փոխվում է ավինամարտի։ Մի քանի ժամ տևող փողոցային այդ մարտերում կոմունիստները, կոմերիտականները, անպարտիական կարմիրբանակայիններն ու բանվորները ցույց են տալիս նվիրվածության ու հերոսության օրինակներ։ Քաղաքի գլխավոր փողոցներն ու շենքերը մի քանի անգամ անցնում են ձեռքից-ձեռք։ Մարտերը դեռ շարունակվում էին, երբ Աշտարակի, Էջմիածնի և Քանաքեռի կողմից Երևան են հասնում մասւլերիստների նոր ուժեր, մինչդեռ Կարմիր Բանակի օժանդակ ուժերն ուշանում էին։ Դաշնակները շրջապատում են Երևանի փողոցներում մարտնչող կոմունիստական ջոկատը։ Սակայն վերջինս առանց վարանումների նետվում է ավինամարտի և ճեղքելով դաշնակների օղակը, անցնում է դեպի Երևանի երկաթուղային կայարանը։ Երևանի պաշտպանությունն ամրապնդելու համար Շահթախտից մեկնած 178-րդ գունդը «Ազատամարտ» պրահադնացքի հրամանատարի և մեքենավարի սաբոտաժի պատճառով ճանապարհին ուշանում է։ Սաբոտաժի հեղինակներն անմիջապես հայտնաբերվում և ոչնչացվում են։ Սակայն գունդը Երևան է հասնում մի քանի ժամ ուշացումով, այն ժամանակ, երբ քաղաքի խոշոր մասը գտնվում էր դաշնակների ձեռքում, իսկ Կարմիր Բանակի զորամասերը իրենց հիմնական ուժերով սկսել էին նահ քաշվել և կենտրոնանալ Երևանի երկաթուղային կայարանի շրջակայքում։ 178-րդ գնդի ուշացումը վճռական նշանակություն ունեցավ Երևանի անկման գործում։ Գնդի գալուց հետո տեղի ունեցան մի շարք ուժեղ մարտեր։ Նրա մի մասը Երևանի արևելյան բարձունքներում հետապընդելով դաշնակներին, հասավ մինչև Նորքի շրջակայքը։ Բայց արդեն ուշ էր, քաղաքի ստրատեգիական կարևոր կետերը գտնվում էին

պաշտպանների ձեռքում: Երևանի պաշտպանությունը վտանգված էր:

Նման պայմաններում Երևանում մնալը և այնտեղ հակառակորդի հետ մարտեր շարունակելը կարող էր կորստաբեր լինել: Ուժերը պահպանելու, Սովետական Նախիջևանի հետ հաղորդակցության միակ միջոցը՝ Երևան—Ղամարլու— Ջուլֆա երկաթգիծը ձեռքից բաց չթողնելու և հետագա վճռական մարտերը շարունակելու նպատակով, Հայաստանի Կարմիր Բանակի հրամանատարությունը որոշում է թողնել Երևանը:

Թողնելով Երևանը, փետրվարի 18-ին Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերը 178-րդ դնդի և «Ապատամարտ» ու «Մուսալեյան» պրահապնապրների պաշտպանության տակ սկսում են եւ թաշվել դեպի Ղամարլու: Նրանց հետ էին ՀԿ(բ)Պ Կենտկոմը, Հայաստանի Ռևկոմը, ՀՍՍՌ մի շարք հիմնարկներ՝ իրենց աշխատակիցներով: Այդ զորամասերն ունեին 3 շոգեքարշ, 60 վագոն (որից 11-ը բեռնված էր պարենով և ռազմամթերքներով): Նույն օրը երևկոյան հասնելով Ղամարլու, նրանք միանում են այնտեղ գտնվող Հայկական առաջին հրաձիգ բրիգադային, որի կոմիսարն էր Կոմունիստական պարտիայի անվանուն զավակ Լիպարիտ Մխչյանը:

Տակտիկական նկատառումներով եւ թաշվելով Ղամարլուից, փետրվարի 19-ին Կարմիր Բանակի զորամասերն ամրանում են Ղարաթալլար— Դաշլու— Բեյուկ—Վեդի—Ենդիջա— Կարալար — Քեչիկ Վեդի հատվածում:

Սկսվում է Ղամարլու— Վեդիում մեկուսացած և հակառակորդի ուժերով շրջապատված Կարմիր Բանակի զորամասերի՝ իր բազմաթիվ, հերոսական գործողություններով հարուստ 45-օրյա մարտերի շրջանը: Այդ զորամասերը Ս. Օրջոնիկիձեից մարտական խնդիր էին ստացել՝ մինչև օգնության հասնելը պահպանել Սովետական իշխանությունը Հայաստանում: Այդ զորքերի կոմիսարը գրում է. «Անձնական ընկ. Սերգոյից— Բայիլովի (Բաքվի) ռադիոկայանից ստացել էինք ծածկագիր մարտական առաջադրանք՝ ինչ գնով էլ լինի պահել Սովետական իշխանությունը մինչև օգնության հասնելը»:

Փետրվարի 18-ին դաշնակցական բանդաների ձեռքումն էին գտնվում Երևանը, Էջմիածնի, Աշտարակի, Ապարանի, Ախտալի, Կոտայքի, Նոր Բայազետի և Դարալագյազի շրջանները: Այդ ժամանակ Երևանում կազմակերպվում է դաշնակցականների, այսպես կոչված, «նոր կառավարությունը»՝ «Հայրենիքի փրկության կոմիտեն», որի գլուխ կանգնում է սովետական կարգերի կատաղի թշնամի Ս. Վրաց-

յանը։ Գրավված շրջաններում գաշնակները կազմակերպում են «Հայրենիքի փրկության» շրջանային կոմիտեներ։ Բոլոր այդ օրգանների մեջ ամենուրեք իրենց ակտիվ մասնակցությամբ աչքի են ընկնում գաշնակներից բացի, նաև էսեռները, կադետները և ուրիշ կոնտրռևոլյուցիոն տարրերը։ Փետրվարի 25-ին Երևանում, գաշնակների նախաձեռնությամբ հրավիրվում է կոնտրռևոլյուցիոն պարտիաների և խմբերի միացյալ խորհրդակցություն, որը քննության է առնում «Հայրենիքի փրկության կոմիտեին» օգնության ցույց տալու հարցը և միջոցառումներ է մշակում այդ օգնությունը իրականացնելու համար։

Գաշնակների կողմից գրավված վայրերում նորից ստեղծվում է այն կշռմարային դրությունը՝ թալանը, բռնությունները, կամայականությունը և տեռորը, որին վերջ էր տրված Հայաստանում սովետական կարգերի հաստատումով։ Ամենուրեք բանտերը լցվում են կոմունիստներով, կոմերիտականներով և ռևոլյուցիոն բանվորներով ու դյուղացիներով։

Հայաստանում տեղի ունեցած կոնտրռևոլյուցիայի այդ մասնակի և ժամանակավոր հաջողությունները ոգևորում են իրենց հոգեվարքի վերջին օրերն ապրող վրացական մենշևիկներին, որոնք ինչպես տեսանք, գաշնակներից պահանջում էին միանալ իրենց հետ և թիկունքից խփել բոլշևիկներին։

Խոսելով գաշնակների և մենշևիկների դրկախառնվելու մասին, Ս. Օրջոնիկիձեն գրում է.

«Նոյ Ժորդանիան իր վերջին ճառերից մեկում հարձակվեց հայերի վրա և կոչ էր անում խաչակրաց արշավանք սկսել նրանց դեմ։ Բայց այդ նույն Նոյ Ժորդանիան մինիստր Սաբախտարաշվիլու հետ միասին մյուս օրը սիրալիրություններ և փոխադարձ ողջույններ էին փոխանակում Երևանում, այսպես կոչված, «Հայրենիքի փրկության կոմիտեի» գլուխ կանգնած գաշնակ Վրացյանի հետ, և խնդրում էին նրան խփել բոլշևիկների թիկունքին։ Իսկ Վրացյանն իր առաջին իսկ դիմումի մեջ, որտեղ նա մենշևիկներին հաղորդում էր իր սխրագործությունների մասին, խնդրում էր հապաղ և մխիթարաշար»[1]։

Չնայած գործադրված բոլոր ճիգերին ու ջանքերին, սկսած կատաղի հակասովետական պրովոկացիաներից և վերջացրած բռնություններով ու տեռորով, գաշնակներին ու նրանց հետ գնացող մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաներին չի հաջողվում հենարան

---

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 45։

պանել պրաված շրջանների բանվորների ու աշխատավոր գյուղացիների մեջ։ Ամենուրեք աշխատավորությունը նրանց նկատմամբ ցույց էր տալիս իր վայրույթն ու ատելությունը և հանդես գալիս սովետական կարգերի պաշտպանությամբ։

Ահա բազմաթիվ փաստերից մի քանիսը։

Երբ սկսվեց ավանտյուրան, Ն. Ախտալի շրջանի Ռնդամալ և Քարվանսարա (այժմ Աթարբեկյան) գյուղերի աշխատավորներն իրենց պարտիզանական ուժերով համառ դիմադրություն են ցույց տալիս դաշնակների խմբերին, որոնք զինված էին գնդացիրներով և հրանոթներով։ Երկու-երեք օր անընդհատ ուժեղ կռիվներ են տեղի ունենում այդ գյուղերի համար։ Դաշնակներին հաջողվում է վերոհիշյալ գյուղերը գրավել միայն այն ժամանակ, երբ մեծ քանակությամբ նոր ուժեր են ստանում։ Սակայն Ռնդամալի և Քարվանսարայի պարտիզաններն անձնատուր չեն լինում։ Նրանք, թվով 300 հոգի, անցնում են Դմանշեն, ապա Նլենովկա՝ կարմիր զորքերի կողմը, շարունակելով պայքարը դաշնակների դեմ։

Չնայած դաշնակների գործադրած բոլոր միջոցառումներին, Թալինի շրջանի աշխատավոր գյուղացիները հրաժարվում են նրանց կռվող ուժեր տալ։ Այդ առթիվ «Հայրենիքի փրկության» Թալինի շրջանային կոմիտեն «Հ. Փ.» էջմիածնի գավառային կոմիտեին 1921 թ. մարտի 25-ին գրում էր, որ «շրջանի 8 գյուղերում չնայած շրջանային կոմիտեն հրավիրել է կրկնակի հրապարակային բացատրական ժողովներ օրվա մոմենտի մասին և կոչ է արել մասնակցելու ներկա հեղաշրջմանը, բայց դժբախտաբար այդ աշխատանքը մնացած է ապարդյուն։

Կոմիտեն նկատելով այդ անհաջողությունը, փոխեց իր աշխատանքի ձևը և իր ընկերներեն երկուքին, որոնք փութիպ հայտնած էին կամավոր արձանագրվել և ճակատ մեկնել, որոշեց թույլ տալ, որպեսզի հրապարակ գան և կոչ անեն երիտասարդության իրենց հետևելու համար, բայց և այնպես այդ աշխատանքն անցավ ապարդյուն, որից հետո որոշվեց բռնի կերպով հավաքել 20—30 տարեկաններին և ուղարկել»[1]։ Այս մեթոդով նրանց հաջողվում է 8 գյուղից հավաքել միայն 41 «կամավորներ» և միլիցիայի զինված պահակներով ուղարկել էջմիածին։ Չնայած դրան, տեղ են հասնում միայն 25 հոգի։ Իսկ մնացածները ճանապարհից փախչում են։

Էջմիածնի գավառի 1-ին շրջանի միլիցապետը 1921 թ. մարտի

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. № 2/38, դ. № 31, թ. 17։

18-ին նույն գավառի «Հ. Փ. Կ.»-ի նախագահին գրում է, որ «Սամաղար գյուղի կամավորների կազմակերպելը եղավ, բայց այս պիշեր կեսից ավելը փախել են, ուստի խնդրում եմ գրի ուժ ուղարկել անձամբ Սամաղար գյուղի համար»[1]:

Բալինի շրջանի Գյոզլու գյուղի քահանան 1921 թ. մարտի 22-ին էջմիածնի գավառի «Հ. Փ. Կ.»-ին գրում է, որ շրջանում «ամեն տեսակ հակահասարակական գործեր կկատարվեն, շատ տեղերում կառավարության հրամանները երբեք չեն հարգվեր և ըմբոստության փորձեր կըլլան կառավարության կողմն եկած պաշտոնյաներու հանդեպ: Տեղական ինքնավարությունը... երբեք սրամադրություն չունի ինքնավարություն ընելու կամ պատերազմ գնալու, շատ անգամ ինքնավարներու կողմն առարկություն կըլլա, թե «չգիտենք պատերազմ երթանք, բայց ո՞ւմ դեմ կռվենք, եթե ոչ մեր եղբայրներու և հարազատներու դեմ»[2]: Դաշնակցական գործիչներից մեկը՝ խոսելով ժողովրդի այդպիսի վերաբերմունքի մասին, գրում է, որ «ժողովուրդը գտնվում է դիկտատուրմի ազդեցության տակ»[3] և չի ցանկանում օգնել իրենց:

Չնայած «Հայրենիքի փրկության կոմիտեի» և նրա շրջանային բաժանմունքների արխիվները մեզ հասել են այլ ամբողջությամբ[4], բայց եղած սակավ նյութերի մեջ կարելի է գտնել բազմաթիվ այդպիսի փաստեր, որոնք ցայտուն կերպով ցույց են տալիս աշխատավորներիատելությունը դեպի ավանտյուրիստները և սերը դեպի սովետական կարգերը:

Ժողովրդի այդպիսի վերաբերմունքի շնորհիվ դաշնակներին չհաջողվեց տապալել Սովետական իշխանությունը Հայաստանում: Ղամարլուում, Վեդիում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Ղազախում Սովետական իշխանությունը կանգուն մնաց, որին միացավ նաև մենշևիկյան լծից ազատագրված Լոռին:

Աշխատավոր ժողովրդի մեջ չունենալով հենարան, «Հայրենիքի փրկության կոմիտեն» դիմում է արտաքին օգնության: Նա մեծ հույս էր դրել մենշևիկյան վրաստանի վրա, սակայն, ինչպես տեսանք, 1921 թ. փետրվարի 25-ին մենշևիկների իշխանությունն արդեն տապալված էր և Վրաստանում ծածանվում էր Սովետների

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿՄ., ֆ. 2/38, գ. № 17, թ. 10:

[2] Նույն տեղում, գ. № 31, թ. 11—13:

[3] Նույն տեղում, թ. 26:

[4] Ավանտյուրայի լիկվիդացման օրերին դաշնակներն իրենց արխիվների մի մասը այրեցին, ոչնչացրին, իսկ որոշ մասն էլ փախցրին իրենց հետ:

կարմիր դրոշը։ Դա ծանր հարված էր դաշնակ ավանտյուրիստներին։ Վրաստանի Կ(բ)Պ Կենտկոմի և Ռևկոմի օրգան «Կոմունիստ»-ը (վրացերեն) իր առաջնորդողում անդրադառնալով այդ հարցին, գրել է. «Մենշևիկյան կառավարության պարտվելուց հետո Վրաստանում, խորհրդային ուժերով շրջապատված Երևանի «կղզին» տապնապալից դրության մեջ ընկավ։ Նրա բախտը վճռվեց այն ժամանակ, երբ քաղաքացիական պատերազմում պարտված ժորդանիայի կառավարության անձնատուր լինելը փաստ էր դարձել»[1]։

Ձգալով իրենց համար ստեղծված ծանր դրությունը, Հայաստանի բանվորների ու գյուղացիների դեմ կռիվը շարունակելու համար Ս. Վրացյանը «Հայրենիքի փրկության կոմիտեի» անունից դիմում է Թյուրքիայի օգնությանը։ Նա սկսում է տեսակցություններ ունենալ Թյուրքիայի արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի Երևանի ներկայացուցիչ Բահաէդդինի հետ։ 1921 թվականին մարտի 1-ին վերջինիս միջոցով Թյուրքիայի ազգային ժողովի կառավարությանը Ս. Վրացյանը մի դիմում է ուղղում, որի մեջ ասված է.

«Հայրենիքի փրկության կոմիտեն... խնդրում է Թյուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն ազգերի փոխադարձ շահերի, լուծ կարելուն շուտ՝

1. Երևան վերադարձնել ռազմաճակատում գտնվող հայ պինվորական ռազմագերիներին.

2. Տալ՝ որոշ պայմանագրով հայ բանակին ռազմամթերք. առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մաուզերի փամփուշտներ և կամ Բոսի ու Լեբելի սիստեմի հրացաններ։

3. Հաղորդել մեզ, թե արդյոք ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին պինվորական օժանդակություն և եթե կարող է, ի՞նչ չափով և եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում։

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը (այսինքն՝ «Հայրենիքի փրկության կոմիտեն» — Ս.. Հ.) հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք է դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից (խոսքը 1920 թ. դեկտեմբերի 2-ի դաշնագրի մասին է — Ս.. Հ.) և որոնք խանգարվել էին բոլշևիկների իշխանության ժամանակ»[2]։

---

[1] *Այս քաղվածքը մեջ է բերված «Կարմիր աստղ»-ի № 33-իյ (1921, ապրիլի 9), որտեղ տպված է «Կոմունիստ»-ի վերոհիշյալ առաջնորդողը։*

[2] *Հայկական ՍՍՌ ՊԿՄ., ֆ. № 4/113, գ, № 128, թ. 19։*

Բացի դրանից, «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանը մի քանի նամակներ է գրում Թյուրքիայի կառավարությանը՝ նրանից ստացվող օգնության և քաղաքական— տնտեսական կապերը ավելի ամրապնդելու մասին։

Այդ օրերին «Հայրենիքի փրկության կոմիտեն» և նրա օրգան «Ազատ Հայաստանը» մոլեգին ագիտացիա են մղում հօգուտ թյուրքական օրիենտացիայի, փորձելով կրկին մոլորության մեջ ձգել Հայ ժողովրդին, որն իր դառն փորձով բավմաթիվ անգամ տեսել էր թյուրքական զավթիչների չարդարար քաղաքականությունը։

Ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, «Հայրենիքի փրկության կոմիտեն» բացահայտ կերպով սողում էր թյուրքական նվաճողների ոտքի տակ՝ ընդդեմ Հայաստանի բանվորների ու գյուղացիների իշխանության, ընդդեմ մեր երկրի ազատության և անկախության։

Մյուս կողմից դաշնակները դիմում են ամերիկյան, անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների ու Իրանի խանների օգնությանը։

Սակայն ոչ մի ուժ ավանտյուրիստներին փրկել չէր կարող հեռոսական Կարմիր Բանակի և նրա թիկունքում կանգնած Հայաստանի բանվորների ու աշխատավոր գյուղացիների հուժկու հարվածներից։

* * *

Դաշնակների կողմից Երևանի և մյուս շրջանների գրավումը Հայաստանի աշխատավորության մեջ առաջացրեց բուռն զայրույթ։ Ամենուրեք տեղի ունեցան աշխատավորների միտինգներ, որտեղ ընդունված բանաձևերում դատապարտելով ավանտյուրիստների գավազրությունը, նրանք որոշեցին զենք վերցնել, գնալ ռազմաճակատ և իրենց Հարազատ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ուղղակիորեն դատաստան տեսնել ժողովրդի թշնամիների նկատմամբ։

Քարվանսարա (Իջևան) գյուղում տեղի ունեցած աշխատավոր գյուղացիների միտինգի բանաձևում ասված է.

«Քարվանսարայի աշխատավոր գյուղացիները փետրվարի 27-ի կիրակնօրյա իրենց միտինգում լսելով զեկուցում Հայաստանում կատարվող դեպքերի մասին՝ հատուկ խոսք են տալիս զենքը ձեռքից վայր չդնել մինչև Հայաստանում հաստատվի վերջնականապես

բանվորների ու դյուղացիների իշխանությունը. մենք խոսք ենք տալիս վճռական հարվածով ջախջախել հակահեղափոխական խմբապետների, կուլակների դլուխը, որպեսզի նրանք այլևս չերազեն իրենց նախկին դարշելի իշխանությունը վերականգնելու մասին։ Բոլորս մի մարդու պես կդնանք մեր կուսակցության (բոլշևիկների) հետևից՝ Հայաստանի բանվորներին ու դյուղացիներին վերջնականապես ազատելու համար թե՛ ներքին, և թե՛ դրսի հակահեղափոխական լծից»[1]։

Նույն շրջանի Թալա դյուղի աշխատավորների միտինգում ընդունված բանաձևում ասված է.

«Մենք՝ Թալայի դյուղացիներս՝ լսելով զեկուցում ներկա մոմենտի մասին, վճռեցինք միացած ուժերով կռվել դաշնակների բանդաների դեմ — թույլ չտալ, որ վերականգնվի նրանց իշխանությունը, որովհետև մեզ համար միակ ցանկալի իշխանությունը Խորհրդային իշխանությունն է։ Թող կորչեն աշխատավոր ժողովրդի թշնամիները։

Կեցցե Խորհրդային Հայաստանը»[2]։

Ջարխնջ դյուղի աշխատավորների բանաձևը վերջանում է հետևյալ խոսքերով. «Մինչև վերջնական հաղթանակը կռվել խմբապետների և մաուզերիստների դեմ»[3]։

Փետրվարի 26-ին Քարվանսարա, Սև Քար, Աչաջուր և այլ շրջանների ու դյուղերի աշխատավորներից արդեն ձևավորված էր կոմունիստական դումարտակ, որը նույն օրը մեկնում է Դիլիջան— Ելենովկա՝ օդնելու դաշնակների դեմ կռվող Կարմիր Բանակի զորամասերին։ Ձյասես են վարվում նաև Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Վամարլուի, Վեդիի, Ելենովկայի և մենշևիկների լծից նոր ազատագրված Լոռվա չեղոք գոտու բանվորներն ու աշխատավոր դյուղացիները։

Բաքվից եկած բանվորներից, Շամշադինի, Իջևանի, Նոր Բայազետի, Դիլիջանի աշխատավոր դյուղացիներից կազմված պարտիզանական ջոկատը, որը ձևավորվեց մարտական գործողությունների ընթացքում և ուներ 500 մարտիկ, հերոսական գործ կատարեց Նոր Բայազետի համար մղված մարտերում։ Մարտի 15-ի փողոցային մարտերում ջոկատը դաշնակներին դուրս շպրտեց քաղա-

---

[1] «Կարմիր ասպղ», օրգան Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմի և Ռևկոմի, № 11, 1921, մարտի 11, Թիֆլիս։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

քից։ Նոր Բայազետի համար մղած այդ կռիվներում մեծ դեր կատարեցին նաև Ալեքսանդրովկայի, Դշլաղի, Նորագյուղի և առանձնապես Դուլալի դյուղի աշխատավորներից կազմված պարտիզանական ջոկատները, որոնք թշնամուն հարվածում էին թիկունքից[1]։

Փետրվարյան ամառնայության օրերին Կարաքիլիսայում պարտիական Դավիթի նախաձեռնությամբ երկաթուղային բանվորներից կազմակերպվում է մեկ ջոկատ, որն անմիջապես մեկնում է մասնակցելու Նոր Բայազետի համար մղվող կռիվներին։ Մարտի 15-ին Նոր Բայազետի փողոցային մարտերում այս ջոկատը ևս հերոսաբար պայքարում է թշնամու դեմ[2]։

Ինչպես տեսանք, Սովետական Հայաստանի ռևկոմը և պետական մի շարք հիմնարկներ, երևանի անկումից հետո Կարմիր Բանակի զորամասերի հետ միասին գտնվում էին Դամալուս—Վեդի հատվածում՝ հակառակորդի օղակման մեջ։ Երկար ժամանակ կորցված էր ամեն տեսակի կապը այս զորամասերի և Կարաքիլիսա—Դիլիջան—Ելենովկա ուղղություններով գործող 11-րդ բանակի զորամասերի ու պարտիզանական ջոկատների միջև։

Հայաստանի հյուսիսային գավառներում սովետական աշխատանքները դլխավորելու և կոնտրռևոլյուցիայի դեմ պայքարը կազմակերպելու համար 1921 թ. փետրվարի 26-ին Դիլիջանում կազմակերպվում է Դիլիջան—Կարաքիլիսա գավառների Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե, որի նախագահ է նշանակվում Համառուսաստանյան Արտակարգ Հանձնաժողովի Կովկասյան ռազմաճակատի լիազոր Գ. Աթարբեկյանը։ Նույն օրը ռազմա-ռևկոմը Գ. Աթարբեկյանի առաջարկությամբ հրատարակում է առաջին հրամանը, որտեղ ասված է.

«Ռ. Հ. կոմիտեի իրավասության սահմանները տարածվում են Դիլիջանի և Կարաքիլիսայի գավառների, մինչևիկյան բռնապետ դահիճներից ազատագրված Լոռու շրջանի, Նոր Բայազետի, Ելենովկա գավառամասի վրա։ Ռ. Հ. կոմիտեի պղեցությունը տարածվում է նաև այն շրջանների և գավառների վրա, որոնք ազատագրվում են Կարմիր Բանակի մասերի կողմից Ելենովկայի և Բաշ-Ապարանի ուղղությամբ։

Վերոհիշյալ գավառների, գավառակների և շրջանների իշխա-

---

[1] Տե՛ս «Դամալուից Ջանդեղուր» հիշողություններ ժողովածու, Պետհրատ, Երևան, 1931, էջ 140—146։

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1926, Լ. Հովհաննիսյանի հիշողությունները 1921 թ. բաղաքացիական կռիվների մասին։

նության ներկայացուցիչներին հրամայվում է խիստ կերպով ղեկավարվել Ռ. Հ. կոմիտեի կարգադրություններով ու հրամաններով։

Այն բոլոր կարգադրությունները և հրամանները, որոնք չեն բխում Ռ. Հ. կոմիտեից, կատարման չեն ենթարկվում։

Տեղական իշխանությունները պետք է հիշեն, որ ներկա ստեղծված կացությունը շատ լուրջ է և պահանջում է լուրջ հեղափոխական ենթարկում (դիսցիպլինա) և բոլոր կոմունիստական ուժերի լարում՝ շուտափույթ կերպով վերջ տալու հակահեղափոխությանը և վերականգնելու Հայաստանում բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանությունը»[1]։

Դաշնակների կոնտրռևոլյուցիոն խռովությունը արագ կերպով լիկվիդացնելու նպատակով ինչպես Ղամարլու—Վեդիի կողմից, նույնպես Ալենովկա—Նոր Բայազետ, Ալենովկա—Ախուռա—Երևան և Համամլու—Ապարան—Աշտարակ—Երևան ուղղություններով սկսվում են Կարմիր Բանակի զորամասերի և Հայաստանի բանվորների ու գյուղացիների պարտիզանական ջոկատների հարձակողական հերոսական գործողությունները։

Ղամարլու—Վեդիում ամրացած Կարմիր Բանակի զորամասերը երեք-չորս օրում կատարում են բոլոր ուժերի հաշվառում և վերադասավորում։ Ամրացվում է կոմունիստական ջոկատը։ Կարմիր Բանակի շարքերը լրացվում են Ղամարլուի և Վեդիի աշխատավոր գյուղացիներով։

Խնդիր ունենալով ազատագրել Երևանը, այդ զորամասերը փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերն անցնում են հարձակման։ Մինչև փետրվարի 28-ը վ. Ապրաշ—Ուլուխանլու հատվածում Երևանի համար տևող են ունենում համառ մարտեր։ Առաջ շարժվելով, նրանք հասնում են մինչև վ. Շենգավիթ, Աղջաղշլաղ և Չարբախ գյուղերը (որոնք Երևանից հեռու են 6—8 կիլոմետր)։ Խուճապահար նահանջելով, դաշնակները թողնում են մեծ քանակությամբ սպանվածներ, վիրավորներ, գերիներ և ռազմամթերք։ Սակայն, օգտվելով այն հանգամանքից, որ Ալենովկայի և Ապարանի ուղղությամբ Կարմիր Բանակը դեռ չէր սկսել հարձակումը, դաշնակները իրենց ուժերը կենտրոնացնում են Ղամարլուի հակատում գտնվող Կարմիր Բանակի զորամասերի թևերում, սպառնալով նրանց թիկունքին։ Թիկունքն ապահովելու նպատակով Կարմիր Բանակի Ղամարլուի

[1] ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, պատմական մաս, նյութեր 11-րդ բանակի վերաբերյալ, կապոկ 4, գործ 1, թ. 87։

զորամասերը մարտերով ետ են քաշվում իրենց դրաված նախկին դիրքերը (փետրվարի 28-ի դիշերը)։ Այդ մարտերի ընթացքում, փետրվարի 26-ին վ. Ապրաշում հերոսաբար սպանվում է 2-րդ հրետ. դնդի հրամանատար Ֆիշլևիչը։ Նրանք ամրանում են Կարատալլար—Բեյուկ—Վեդի—Ենդիջա—Խոր-Վիրապ—Բայբան գծում։ Նույն օրը հրապարակվում է Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերի հրամանատարի հրամանը, որտեղ գնահատելով փետրվարի 24—28-ի հերոսական մարտերը, ասված է.

«Առանձին ընկերների հերոսությունը, նրանց ձգտումը դեպի առաջ, դեպի հաղթանակ, և իմ խնամքին հանձնված զորամասերի հավատը մոտ ապագայում վերջնական հաղթանակ ձեռք բերելու համար, զորամասերին մղում էր մի հաղթանակից դեպի մյուսը և միայն երկու կողմից կատարված խորը շրջանցումն ստիպեց մեզ ետ քաշվել և նորից տակտիկական տեսակետից ավելի ձեռնտու դիրքեր գրավել...»[1]։

Դարալագյազում կենտրոնացած դաշնակցական բանդաները, խնդիր ունենալով հարվածել Ղամարլու—Վեդիում գտնվող Կարմիր Բանակի զորքերի թիկունքին և միանալ Երևանում գտնվող կոնտրռևոլյուցիոն ուժերին, մարտի 1-ին ուժեղ հարձակում են սկսում դեպի Վեդի՝ Ջանախչի—Ջնջուլու ուղղությամբ։ Սակայն առաջին իսկ հարձակման ժամանակ նրանք ետ են շպրտվում Սովետական Նախիջևանի բանվորներից ու դյուղացիներից կազմված պարտիզանական ջոկատի՝ Կարմիր Տարորի ջախջախիչ հարվածներից։ Կարմիր Տարորը, որը բաղկացած էր 400 պարտիզան մարտիկներից, ետ շպրտելով այդ բանդաններին և գրավելով կարևոր ստրատեգիական վայրերը, մինչև վերջ հերոսաբար պաշտպանեց Ղամարլու—Վեդիի շրջանում ամրացած սովետական զորամասերի թիկունքը։ Դրանով նա դաշնակների Դարալագյազի բանդաներին զրկեց Երևանի «Հայրենիքի փրկության կոմիտեի» ուժերին միանալու հնարավորությունից։

Մարտի 8-ին թշնամին Երևանի կողմից սեղմելով Կարմիր Բանակի զորամասերի ձախ թևը, հանկարծակի ուժեղ հարձակում է սկսում Քեչիկ Վեդի գյուղի և Խոր-Վիրապի վրա։ Սակայն ենթարկվելով կոմիսար Լիսարիա Մխչյանի գլխավորած հայկական առաջին բրիգադի խիզախ հակադրհներին, հակառակորդը մեծ

---

[1] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Պետհրատ, Երևան, 1931, Հավելված, էջ 128—129։

կորուստներ կրելով, խուճապահար նահանջում է։ Այդ մարտում ծանր կորուստներ են ունենում նաև Կարմիր Բանակի զորամասերը։ Սպանվում է Հրևտանու քաջարի պետ Սեմյոնովը, մահացու վերք է ստանում հայկական առաջին բրիգադի հրամանատար Վիսարիոն Մաչյանը։ Այդ ծանր վերքից նա մահանում է նույն թվականի ապրիլի 16-ին։

Մարտի 9-ին Ղամարլուում գտնվող Կարմիր Բանակի զորամասերը Թիֆլիսի և Բաքվի հետ վերականգնում են ռադիո-կապը, որը փետրվարյան ամանակրության սկզբից ընդհատված էր։ Ռադիոն հաղորդում է, որ 11-րդ բանակի ուժերը Ելենովկա—Ախուռա և Համամլու—Ասլարան ուղղություններով սկսել են առաջխաղացումը դեպի Երևան։ Այդ լուրը մեծ ոգևորություն է առաջացնում Ղամարլու—Վեդիի հատվածում գտնվող սովետական զորքերի և պարտիզանների մեջ։ Չնայած ռազմամթերքի, պարենի, հագուստեղենի, կոշկեղենի սուր պակասությանը և հոգնածությանը, նրանք նորից սկսում են եռանդուն նախապատրաստությունը Երևանի վրա դրոհելու համար։

Երևանում, Կոտայքում, Ասլարանում, Աշտարակում և Էջմիածնում պատսպարված դաշնակ-ավանտյուրիստների դրությունն այդ ժամանակ կրիտիկական էր։ «Հայբյուրոյի փրկության կոմիտեի» օրերն արդեն հաշվված էին։ Ս. Օրջոնիկիձեն մարտի 9-ին Գրուզ-Կավբյուրոյի աշխատակցի հետ ունեցած զրույցում անդրադառնալով Հայաստանում տիրող դրությանը, ասել է.

«Ներկա մոմենտում Հայաստանում դրությունն այսպես է.

Երևանը շրջապատված է կարմիր զորքերի օղակով։ Զորքերի առաջին խումբը գտնվում է Երևանից 18 վերստ հեռավորության վրա՝ Ղամարլուի ռայոնում, ունի երկու զրահատար և բավական բանակությամբ գնդացիրներ։ Երկրորդ խումբը գտնվում է Ելենովկայի—Ներքին Ախուռայի ռայոնում։ Երրորդ խումբը Համամլու—Զաքաթլիսայի ռայոնում։ Օղակը քանի գնում նեղանում է, և մոտ օրերս Վրացյանի երևանյան ավանտյուրան, առանց որևէ կասկածի, լիկվիդացիայի կենթարկվի։ Այդ անմիտ, հանցագործ ավանտյուրան դարձյալ մեկ անգամ ևս դժբախտ, տանջված հայ ժողովրդին ենթարկեց պատերազմի ծանր փորձություններին»[1]։

Ելենովկայում գտնվող Կարմիր Բանակի զորամասերը, Իջևանի, Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Նոր Բայազետի, Ելենովկայի և մյուս

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49։

շրջանների աշխատավորներից կազմակերպված պարտիզանական ջոկատները, որոնց գլխավորում էր Գ. Ամթարբեկյանը, մարտի 12-ին սկսում են հարձակումը Ալեքսանդրովկա—Նոր Բայազետ ուղղությամբ։ Նրանց խնդիր էր տրված ազատագրել Նոր Բայազետը և ետ շպրտել հակառակորդին, թույլ չտալով նրան միանալու երևանում գտնվող բանդաների հետ։

Ճանապարհին մի քանի տեղ ուժեղ մարտի բռնվելով և թշնամու կատաղի դիմադրությունը հաղթահարելով, նույն օրը երեկոյան Կարմիր Բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները նորից մտնում են Նոր Բայազետ։ Դաշնակները ետ են շպրտվում դեպի Երևանս, որտեղ վերադասավորելով իրենց ուժերը, մարտի 15-ի լույս 16-ի գիշերը կրկին հարձակվում են Նոր Բայազետի վրա։ Քաղաքի շրջակայքում և փողոցներում մի քանի ժամ անընդհատ տեղի են ունենում ուժեղ կռիվներ, որոնք տեղ-տեղ փոխվում են սվինամարտի։ Հակառակորդը մարտի 16-ին դուրս է շպրտվում Նոր Բայազետից և նահանջում դեպի Երևանս—Դարանլուղ (այժմ Մարտունի)։

Բայազետի համար մղվող պայքարում խոշոր դեր խաղացին նույն քաղաքի և շրջանի բանվորներն ու աշխատավոր դյուղացիները, որոնք դաշնակներին հարվածում էին թիկունքից։ Նոր Բայազետի հատվածում գտնվող դաշնակցական զորքերի հրամանատարը այդ մասին գրում է. «Տեղական բնակիչները մեզ զարկեցին թիկունքից...»[1]։

Դամարլուի, Համամլու—Ալպարանի և Ելենովկա—Ն. Ախտայի կողմից սկսելով հարձակումը, Կարմիր Բանակի զորամասերը կոտրելով հակառակորդի կատաղի դիմադրությունը, հաղթականորեն առաջ են շարժվում դեպի Երևան։

Վեդի—Դամարլուից համառորեն առաջ շարժվող Կարմիր Բանակի ուժերը մարտի 17-ին հասել և ամրացել էին Վ. Աղբաշ—Ուլուխանլու հատվածում։ Այդ օրը Ուլուխանլու կայարանի մոտ տեղի ունեցած մարտում հակառակորդի 4-րդ դնդի մի ամբողջ դումարտակ անցնում է Կարմիր Բանակի կողմը և զինքն ուղղում ժողովրդի թշնամի դաշնակների դեմ։

Ելենովկա—Ախտա գծում Կարմիր Բանակի զորամասերն ուժեղ կռիվներից հետո մարտի 16-ին ազատագրում են Ռնդամալ, Քարվանսարա, Մաքրավանք, Աղփարա գյուղերը։ Համամլու—Ալպարան

---

[1] «Հայրենիք», 1925, № 9, էջ 83։

ուղղությամբ գործող Կարմիր Բանակի զորամասերը նույնպես ապատագրում են մի շարք գյուղեր։

Հակառակորդի շարքերում խուճապը և հուսալքությունը մեծ չափերի են հասնում։

Ինչպես տեսանք, կարմիր զորքերի և պարտիզանների վճռական գործողությունների շնորհիվ հակառակորդը զրկված էր Նոր Բայազետի վրայով Դարալագյազից և Ջանգեզուրից օգնություն ստանալու հնարավորությունից։ Նրան մնում էր երկու ելք՝ կամ անձնատուր լինել, կամ շարունակել անհուսալի կռիվը։

Հաշվի առնելով, որ ավանտյուրայի ջախջախումը և Երևանի ազատագրումն արդեն կանխորոշված էր, որ հետագա կռիվներում կարող է բազմաթիվ աշխատավորների անտեղի արյուն թափվել, Ս. Օրջոնիկիձեն հատուկ հեռագրով դաշնակ ավանտյուրիստներին առաջարկում է վերջ տալ դիմադրությանը և անձնատուր լինել։ Մարտի 20-ին «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահի անունով Ս. Օրջոնիկիձեն ուղարկում է հետևյալ հեռագիրը.

«Ինձ ներկայացան մի խումբ հայ ընկերներ և առաջարկեցին իրենց նախաձեռնությամբ դիմել ձեզ և առաջարկել, որ վերջ տրվի անիմաստ, աննպատակ և ժողովրդի համար կործանիչ պատերազմին։ Մենշևիկյան կառավարության և խորհրդային իշխանության միջև կռիվը վերջացավ բանվորա-գյուղացիական իշխանության լրիվ հաղթանակով, ամբողջ Վրաստանում խորհուրդների ճանաչումով....

... Ամենքի համար պարզ է, և ամենաիմքր կասկածանքի անդամ ենթակա չի կարող լինել, որ հասել է բանվորա-գյուղացիական իշխանության միրապետության ժամը ամբողջ Անդրկովկասում։ Ահա թե ինչու ես ընդունում եմ հայ ընկերների դիմումը և առաջարկում եմ ձեզ՝ անհապաղ դադարեցնել անհուսալի կռիվը՝ հիմք ընդունելով վերջնականապես վենքը վայր դնել...»[1]։

Ս. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ այդ օրերին Թիֆլիսից Երևան է մեկնում հայ ժողովրդի մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը՝ նույնպիսի առաջարկ անելու, սակայն այդ բոլորին դաշնակները պատասխանում են մարտահրավերով։

Դրանից հետո, մարտի 25-ից սկսած բոլոր կողմերից ծավալվում է Կարմիր Բանակի և պարտիզանական ջոկատների ուժեղ դրոհը դեպի Երևան։ Մարտի 26-ին Ելենովկա—Ախուրա—Երևան ուղղությամբ Կարմիր Բանակի զորամասերը ազատում են Կարա-

[1] «Կարմիր աստղ», № 19, 1921, մարտի 23, Թիֆլիս։

ջորան, Նուռնուս, Նովոնիկոլաևկա և Թեղխարաբ դյուղերը։ Առաջ շարժվելով, մարտի 30-ին նրանք հասնում են Էլառ։ Էլառ—Արամուս—Դյամրեղ գծի վրա տեղի են ունենում ուժեղ կռիվներ, որոնց ընթացքում կոտրելով հակառակորդի դիմադրությունը, Կարմիր Բանակի զորամասերը շարունակում են առաջխաղացումը դեպի Երևան։ Համամլու—Ապարան—Աշտարակ—Երևան ուղղությամբ գործող Կարմիր Բանակի զորամասերը մարտի 26-ին ազատում են Դաշտադան, Որթնաել և Ջոթուր դյուղերը. 27-ին, ուժեղ մարտերից հետո, նրանք ազատում են Սպիտակի (Փամբակի) լեռնանցքը և շարունակում առաջխաղացումը։ Մարտի 22-ին ազատում են Ապարանը, ապրիլի 1-ին՝ Աշտարակը։

Հյուսիսից և հյուսիս-արևմուտքից Կարմիր Բանակի այդպիսի ուժեղ դրոհը դաշնակիներին հարկադրում է փախուստի ճանապարհ փնտրել։ Նրանք ցանկանում են ուղղություն վերցնել դեպի Դարալագյաղ՝ Ղամարլու—Վեդիի վրայով։ Այդ նպատակով սկսում են կատաղի դրոհը Ղամարլու—Վեդիում գործող Կարմիր Բանակի զորամասերի վրա։ Միաժամանակ թիկունքից՝ Դարալագյազից կրկին ուժեղ հարձակումներ են սկսում դաշնակցական բանդաները։ Բայց այս անգամ էլ նրանք դրական արդյունքների չեն հասնում։ Ստանալով Կարմիր Բանակի և պարտիզանական ջոկատների վճռական հակահարվածները, նրանք նահ են շպրտվում։

Մարտի երրորդ տասնօրյակում Վեդի—Ղամարլուում գտնվող Կարմիր Բանակի զորամասերի համար սկսվում են ամենածանր օրերը։ Իսպառ վերջացել էին ռազմամթերքի և պարենի պաշարները։ Այդ ծանր վիճակի մասին ռադիոն Արարատ կայարանից հաղորդում է Թիֆլիս՝ Ս. Օրջոնիկիձեին, որը վճռական միջոցներ է ձեռք առնում։ Նրա ցուցումով 1921 թ. մարտի 25-ին, եղանակի աննպաստ պայմաններում կատարվում է սովետական ինքնաթիռի թռիչքը Թիֆլիսից դեպի Արարատյան դաշտը։ Ինքնաթիռը վայրէջք է կատարում Արարատյան դաշտում—Արաքսի ափին, փայլուն կերպով կատարելով իր մարտական առաջադրանքը։ Վեդի—Ղամարլուում մարտնչող Կարմիր Բանակի զորքերի համար նա հասցնում է 47 կիլոգրամ (5000 հատ) ոսկի[1]։ Այդ ոսկով նրանք ձեռք են բերում կենսամթերքներ։ Վ. Ի. Լենինի ցուցումով Ս. Օրջոնիկիձեի կողմից կազմակերպված այդպիսի օգնությունը է՛լ ավելի է բարձրացնում մարտիկների ու հրամանատարների ոգևորությունը։ Մարտի 25-ից

[1] Տես „Заря Востока", № 178, 4 августа, 1923.

մինչև ապրիլի 2-ը անընդհատ տեղի ունեցած բոլոր մարտերում իրենց հերոսական գործողություններով նրանք ևս են շլրատում հակառակորդի հարձակումները, ինչպես Երևանի, նույնպես Դարալագյազի կողմից և թույլ չեն տալիս, որ Երևանի և Դարալագյազի դաշնակցական բանդաները միանան իրար։

Երևանի տակ համառ կռիվների ընթացքում քայքայելով հակառակորդի շարքերը և ղլխովին ջախջախելով նրան, ապրիլի 2-ին Կարմիր Բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները Քանաքեռի և Աշտարակի կողմից մտնում են Երևան։ Հայ ժողովրդի սիրելի շնորհները դուրս են շլրտվում Սովետական Հայաստանի մայրաքաղաքից։ Կարմիր հեծելազորը ապրիլի 3-ին ազատագրում է Էջմիածինը։ Ապրիլի 4-ին Երևան են մտնում նաև Վեդի—Դամարլուում գտնվող Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերը, որոնք շրջապատված լինելով թշնամու կողմից, 45 օր անընդհատ ամենածանր պայմաններում հերոսաբար մարտնչում էին հանուն Սովետական իշխանության։

Երևանի և մյուս շրջանների աշխատավորությունն իր ազատարարին՝ հերոսական Կարմիր Բանակին դիմավորում է անհուն ցնծությամբ։

Դաշնակները դուրս քշվելով Երևանից, Աշտարակից, Էջմիածնից և Կոտայքից, իրենց ջախջախված ուժերի մնացորդներով Բաշ-Գյառնիի վրայով խուճապահար փախչում են դեպի Ջանգեզուր։ «Հայրենիքի փրկության կոմիտեն» Երևանի պետական գանձարանից հափշտակում և իր հետ փախցնում է 750 միլիոն սովետական դրամանիշ և զգալի քանակությամբ ոսկի[1]։

Դաշնակցական հրոսակախմբերը փախուստի ժամանակ թալանում և ավերում են Ճանապարհին հանդիպած բոլոր գյուղերը։

Հետապնդելով ջախջախված հակառակորդին, Կարմիր Բանակի զորամասերը ապրիլի 7-ին ազատագրում են Բաշ-Գյառնին։ Ապրիլի 9-ից մինչև 15-ը կոնտրռևոլյուցիոն բանդաներից մաքրվում են նաև Ղարանլուղի (այժմ Մարտունի), Բասարգեչարի և Դարալագյազի շրջանները։

* * *

Փետրվարյան կոնտրռևոլյուցիայի ջախջախումից ու Հայաստանի աշխատավորության և հերոսական Կարմիր Բանակի հաջողություններից կատաղած, դաշնակցական բարբարոսներն ավելի

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. № 4/114, գ. № 128, թ. 3։

ու ավելի զգալիորեն ձևերով սկսեցին դատապատասխանել բանվորներին, գյուղացիների և վերջիններիս շահերի իսկական պաշտպաններ՝ կոմունիստների նկատմամբ։

Այդ բարբարոսություններից ամենազզվելին ու իր նմանը չունեցողը Տաթևի և դրան նախորդող դեպքերն են, որոնք տեղի ունեցան 1921 թ. ապրիլին։

1921 թ. մարտի 25-ին, երբ Կարմիր Բանակը մտնում էր Երևանին, դաշնակները Երևանի բանտից առանձնացնում և պահակային ուժեղ հսկողության տակ դեպի Բաշ-Գյառնի—Զանգեզուր են ուղարկում 63 ռևոլյուցիոն մարտիկներ։ Դաշնակցական ճիվաղները որոշել էին աչնչացնել այդ անվեհեր ռևոլյուցիոներներին։ Նրանք Երևանից մինչև Տաթև այդ մարտիկներին տանում են սոված, ծարավ և կիսամերկ վիճակում։ Ռևոլյուցիոն մարտիկները շատ լավ գիտեին, որ դաշնակցական բանդիտներն իրենց առաջնորդում են դեպի մահ, սակայն գնում էին անվեհեր։ Նրանց առաջ էր մղում մի հաստատ համոզմունք, որ այն վեհ գործը, որի համար զոհում են իրենց կյանքը, շուտով հաղթելու է ամբողջ երկրում։

Ականատեսը հետևյալ կերպ է նկարագրում դեպի Տաթև տարված այդ բանտարկյալների վիճակը։

«Ծարավն ու ծանակն այն աստիճանի էր հասնում, որ եթե բանտարկյալներից մեկն ու մեկը, ծարավից տանջված, ցանկանում էր գետնից քիչ ձյուն վերցնել, թույլ չէին տալիս և, որպես հրամանները չկատարողի, թակում էին հրացանի կոթով»[1]։ Ապրիլի 3-ին Բաշ-Գյառնիի մոտ դաշնակները Ձորի ափից ցած են գլորում 3 հիվանդների, որոնք սովից ու չարչարանքից ուժասպառ, զրկվել էին քայլելու հնարավորությունից։ Ապրիլի 5-ին Արմենի դաշտում (Վեդիի շրջանում) ավինահար են անում Հայաստանի Կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Արմենակ Բուդաղյանին և բանվոր Տ. Թաղիանոսյանին։

Մինչև Քեշիշքենդ հասնելը, ճանապարհին նույն ձևով սպանում են վաշտի հրամանատար Ռ. Պողոսյանին և զինկոմ Ն. Օլթեցյանին։

Քեշիշքենդում ռևոլյուցիոն մարտիկների այս խմբին դաշնակները միացնում են 40 նոր բանտարկյալներ այդ շրջանից՝ ռևկոմների դերի ընկած նախագահները, անդամները և սովետական մյուս ակտիվ գործիչները։ Ապրիլի 13-ին բանտարկյալներին հասցնում

[1] «Կոմունիստ», № 75, 1921, ապրիլի 28։

են Գնդևվալ դյուղը։ Դաշնակցական բարբարոսներն այստեղ 12 հոգու ժայռից ցած են գցում։

Ապրիլի 14-ին Բաղարչայում բանտարկյալների խումբն ավելանում է 100 զերի կարմիրբանակայիններով։ Դրանք այն 400 զերիներից էին, որոնց դաշնակցական հրոսակախմբերը վերցրել էին փետրվարի 13-ին Դարալագյազի վրա կատարած հանկարծակի հարձակման ժամանակ։ 300 հոգու նրանք ոչնչացրել էին խոշտանգելով կամ սովի մատնելով։ Բանտարկյալներին տանելով դեպի Տաթև, Անդեղակոթում դաշնակցական բարբարոսները նրանցից սպանում են 16 հոգի, Լծեն գյուղում՝ 17 հոգի և այլն։ Այսպիսով. 203 ռևոլյուցիոն մարտիկներից ճանապարհին ոչնչացնում են 91 հոգի, 2 հոգու հաջողվում է փախչել, իսկ մնացած 110 բանտարկյալները հասցվում են Տաթև։ Դրանցից 6 հոգին այստեղ ազատվում են երաշխավորությամբ և այլ պատճառներով, իսկ մյուս 104 ռևոլյուցիոն մարտիկներին բանտիտ նժդեհի կարգադրությամբ ենթարկելով անասելի խոշտանգումների ու տանջանքների, ցած են գլորում Տաթևի ժայռից։

* * *

Որոշ դադարից հետո սկսվում է քաղաքացիական կռիվների երրորդ էտապը՝ պայքարը Զանգեզուրի ազատագրման համար։

Օտարերկրյա իմպերիալիստները և Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն տարրերը մեծ հույս էին դրել Զանգեզուրում պատսպարված դաշնակցական բանդաների վրա։ Նրանց ցույց տալով ամեն տեսակի օգնություն, օտարերկրյա իմպերիալիստները, մենշևիկները և սոսավաթականները ծրագրել էին այդ բանդաների միջոցով տապալել Սովետական իշխանությունը Հայաստանում։ Զանգեզուրում պատսպարված դաշնակները տենդորեն նախապատրաստվում էին նոր կռիվների՝ Հայաստանի բանվորների և գյուղացիների իշխանության դեմ։ Նրանք ճիգ ու ջանք չէին խնայում Սովետական իշխանության հասցեին բազմատեսակ պրովոկացիոն լուրեր տարածելու, հակասովետական ագիտացիան ուժեղացնելու և Զանգեզուրի աշխատավորությանը մոլորեցնելու համար։ Սակայն դաշնակներին այդ չի հաջողվում։ Զանգեզուրի աշխատավորությունը իր հիմնական մասսայով սերտորեն կապված էր Կոմունիստական պարտիայի հետ, գնում էր նրա հետևից և հերոսաբար շարունակում պայքարը հանուն սովետական կարգերի։ Այդ պայքարն էլ ավելի

մեծ թափ ու ծավալ է ստանում փետրվարյան կոնտրռևոլյուցիայի ջախջախումից հետո, երբ Նախիջևանի, Դարալագյազի և Զարաբաղի կողմից Զանգեզուրի սահմաններին էին մոտեցել Կարմիր Բանակի զորամասերը: Զանգեզուրի աշխատավոր գյուղացիները ոչ միայն առանձին-առանձին, այլև ամբողջ գյուղերով հրաժարվում էին դաշնակներին զորք, պարենամթերք և այլ կարգի պատերազմական միջոցներ տալուց:

Այսպես, Ախլաթյան գյուղի (Սիսիանի շրջան) բոլոր աշխատավորները միանձնաբար հրաժարվում են դաշնակների բանակը համալրելուց և նրանց ենթարկվելուց: Ռևոլյուցիոն գյուղացիներին հնազանդեցնելու նպատակով դաշնակները 200 հոգուց բաղկացած հեծյալ ջոկատ են ուղարկում Ախլաթյան, սակայն իզուր: Զենքի ուժով բանակ տարվածները շուտով մասսայաբար լքում են դաշնակների բանակը և իրենց զենքն ուղղում աշխատավոր ժողովրդի ոսոխ-րիմ ճշնամի դաշնակների դեմ:

Սովետական Հայաստանի դրությունը 1921 թ. ապրիլ-մայիս ամիսներին սկսել էր դժալի կերպով բարելավվել: Ինչպես տեսանք, այդ ժամանակ Վրաստանում արդեն սովետական կարգեր էին հաստատված, թյուրքական օկուպացիոն զորքերը ևս էին շպրտվել Ալեքսանդրոպոլից և նրա շրջանից, երկաթուղային անարգել հաղորդակցություն էր հաստատված Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի հետ, որտեղից ուղարկվող պարենային և զրամական օգնությունն արագ կերպով տեղ հասնելով, խոշոր չափով նպաստեց Հայաստանի բանվորների ու գյուղացիների դրության բարելավմանը:

Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի, նրա Կենտրոնական Կոմիտեի կողմից հայ ժողովրդի նկատմամբ ունեցած հոգատարության շնորհիվ փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո սովետական մյուս ռեսպուբլիկաներից Հայաստան աշխատելու են ուղարկվում պարտիական-սովետական մի շարք աշխատողներ: Ռ.Կ(բ)Պ Կենտկոմի որոշմամբ 1921 թ. մայիսին Հայաստանում աշխատելու է ուղարկվում կոփված բոլշևիկ Ա. Ֆ. Մյասնիկյանը (Ալ. Մարտունի), որը նշանակվում է Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի նախագահ և Ռազմական Գործերի ժողովրդական Կոմիսար: Նրա ղեկավարությամբ ռեսպուբլիկայում խոշոր աշխատանքներ են կազմակերպվում երիտասարդ սովետական ապարատի ամրապնդման և ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ: Նա դլխավորում է Կարմիր Բանակի մարտական գործողությունները

Զանգեզուրը դաշնակցական հրոսակախմբերից ազատագրելու և Սովետական Հայաստանին միացնելու համար և հաջողությամբ իրականացնում է այդ միացումը։

1921 թ. մայիսի կեսերից Հայկական ՍՍՌ ժողկոմսովետը և 11-րդ բանակի հրամանատարությունը հատուկ պատվիրակության միջոցով դաշնակների հետ բանակցություններ են սկսում՝ առանց կռվի Զանգեզուրը Սովետական Հայաստանին միացնելու համար։

Նկատի ունենալով գյուղատնտեսության քայքայված վիճակը և գաշտային աշխատանքների այդ եռուն պահին բանվորական ձեռքերի խիստ պակասը զգալում, Հայկական ՍՍՌ ժողկոմսովետը որոշում է ընդունում Կարմիր Բանակի շարքերում եղած որոշ հասակների զորացրման մասին։ Մայիսի 20-ին սկսվում է այդ զորացրումը։ Բանակայինների մոտ կեսը առն է վերադառնում՝ խաղաղ աշխատանքի։

Սակայն դաշնակ ճիվաղները մի կողմից մտնելով բանակցությունների մեջ, մյուս կողմից՝ զաղտագողի կերպով տենդորեն նախապատրաստվում էին Սովետական իշխանության վրա հանկարծակի հարձակվելու համար։ Սկսված բանակցությունները նրանք ձգձգեցին մեկ ամսից ավելի, որի ընթացքում լրացնում, վերախմբավորում և սահմանին էին մոտեցնում իրենց ուժերը։

Հունիսի 15-ին, երբ դեռ շարունակվում էին խաղաղ բանակցությունները երկու կողմերի ներկայացուցիչների միջև, դաշնակցական վինված բանդաները հանկարծակի հարձակում են գործում Դարալագյազի վրա։ Այսպիսով, ժողովրդի թշնամիները նորից ընդդեմ են քաղաքացիական պատերազմը, կրկին դառնալով մարդկային հազարավոր զոհերի և նյութական—կուլտուրական արժեքների հսկայական վնասների ու ավերումների պատճառ։

Դաշնակների հարձակման հետևանքով Կարմիր Բանակի զորամասերը հետ են քաշվում Դարալագյազում գրաված իրենց դիրքերից։ Զավթելով Դարալագյազը, դաշնակներն անողոք դատաստան են տեսնում տեղի ռևոլյուցիոն ուժերի նկատմամբ, թալանում և ոչնչացնում են աշխատավորության ունեցվածքը։ Նրանք նույնիսկ պլաններ են մշակում կրկին Երևանի վրա հարձակվելու համար։

Դաշնակների ավազակային հարձակումը Դարալագյազի վրա ռևոլյուցիայում առաջ է բերում ժողովրդական հզոր ցասում։ Սովետական Հայաստանի մայրաքաղաքում, գավառներում, շրջաններում և գյուղերում տեղի են ունենում աշխատավորների բազմամարդ միտինգներ։ Ամենուրեք աշխատավորները միահամուռ կեր-

պով որոշում են Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության կոչով զենքը ձեռքին դուրս գալ և անողոք պատասխան տեսնել Զանգեզուրում բուն դրած մասուլերիստական բանդաների նկատմամբ, որոնք կեղեքում էին Զանգեզուրի աշխատավորությանը և խանգարում Սովետական Հայաստանի բանվորների ու դյուղացիների խաղաղ շինարարական աշխատանքները։

Հունիսի 19-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվում է Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի կոչը՝ ուղղված Հայաստանի աշխատավորությանը։ Այնտեղ ասված է.

«Խորհրդային իշխանությունը, որ այսօր հաստատորեն ամրապնդվել է համայն Ռուսաստանում, Ասիայի մեծ մասում և ամբողջ Կովկասում, կկատարակի նույնպես Զանգեզուրի հակահեղափոխության որջը։ Այս կռվի ծանրության ամբողջ մեղքն ընկնում է Զանգեզուրում ապաստանած խմբապետների ու «փրկիչների» վրա»[1]։

Նույն օրը Երևանում կայանում է աշխատավորների և կարմիրբանակայինների բազմահազար միտինգ, որը միահամուռ հավանություն տալով ժողկոմսովետի կոչին, խոսք է տալիս գործադրել բոլոր միջոցները և արագացնել դաշնակցական բանդաների վերջնական ջախջախումը։ Այդ գործի իրականացման համար Երևանի աշխատավորությունն իր պատրաստակամությունն է հայտնում զենքը ձեռքին մնկնել առաջմաճակատ։

Վաղարշապատի գավառի 6-րդ գավառամասի (Զանգիբասարի) հայ և ադրբեջանական դյուղացիների միտինգի բանաձևում ասված է.

«Զանգիբասարի շրջանի հայ և ադրբեջանական աշխատավոր անպարտիական դյուղացիության առաջին համագումարը որոշեց յուր բուռն ցասկոտ զայրույթն արտահայտել Զանգեզուր ճողոպրած դաշնակցական ավանտյուրիստներին... Մենք պատրաստ ենք ամեն զոհողություն անել և հարկ եղած աջակցությունը ցույց տալ Կոմունիստական կուսակցությանը և Խորհրդային իշխանությանը՝ վերջնականապես լիկվիդացիայի ենթարկելու ավազակների վերջին որջը»[2]։

Դիլիջանի աշխատավորների հունիսի 21-ի միտինգի բանաձևում ասված է. «Հարձակումը (Դարալագյազի վրա — Ա. Հ.) մեր հարված է մեր թիկունքին այն ժամանակ, երբ մենք զբաղված ենք դաշտային աշխատանքներով։

[1] «Խորհրդային Հայաստան», հունիսի 19, 1921, № 106։

[2] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, Հայկական ՍՍՌ Ռևկոմի ֆոնդ, գ. 10, կ. 27։

... Մենք հայտարարում ենք, որ պատրաստ ենք ամեն րոպե պնդը ձեռքներիս պաշտպանել Սովետական կառավարությունը. այս անգամ պետք է հաշիվներս մաքրենք մեր ոխերիմ թշնամիների հետ. մահ ավանտյուրիստներին, անխնա կռիվ հակահեղափոխության դեմ»[1]:

Նույնպիսի որոշումներ են ընդունում նաև մյուս գավառների, շրջանների և գյուղերի աշխատավորները:

Դաշնակների դարալագյազյան հարձակումից հետո ՀՍՍՌ Ռազմական գործերի ժողկոմ և Առանձին Կովկասյան Բանակի Ռազմա-հեղկոմի նախագահ Ա. Մյասնիկյանի և Երևանի ռազմական համբավորման հրամանատար Վելիկանովի ստորագրություններով հրապարակած հրամանում ասված է.

«Կարմիր զինվորներ, հրամանատարներ և կոմիսարներ.

Զանգեզուրի լեռներում տպատատնած դաշնակները խարդախորեն հարձակում գործեցին Դարալագյազի մեր զորամասերի վրա:

... Ստույգ տեղեկությունների համաձայն, Զանգեզուրի ապըստամբները վաղօրոք խորհրդակցություն են ունեցել մուսավաթիստների և ուրիշ կոնտրռևոլյուցիոներների հետ: Նրանց նպատակն է տապալել Հայաստանում, ապա ամբողջ Կովկասում Սովետական իշխանությունը: Այդպիսով Զանգեզուրը դարձել է ոչ միայն ավազակների բնակավայր, այլև համակովկասյան կոնտրռևոլյուցիայի օրջը:

Սովետական Կովկասը — այդ սովետական մարզարիտը — չի կարող թույլ տալ, որ Կովկասի կոնտրռևոլյուցիայի այս վերջին րոպը — Զանգեզուրը, անպատիժ կերպով կարողանա խաղալ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավոր ժողովրդի ճակատագրի հետ:

Սովետական Հայաստանը, որը շահագրգռված է Զանգեզուրը իր մայր ռևոլյուցիոն ընտանիքի գիրկն ընդունելու և ազատելու երկիրը զանազան բախտախնդիրներից և կոնտրռևոլյուցիոն կեղտոտ արատից, նորից կոչ է անում ձեզ զրոհ տալ, Զանգեզուրի մախնոյականների դավաճանական բոլին մանացու հարված հասցնել:

Կարմիր զինվորներ, դուք ձեր քաջարի սխրագործություններով պիտի հավերժացնեք Հայաստանի բանվորա-գյուղացիական պանծալի Կարմիր Բանակի անունը: Մեր երկրի աշխատավորները մեծ

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ԺԿՍ-ի ֆ., տուփ 5, գործ 22, էջ 150—151:

հույսեր և սպասելիքներ են տածում դեպի Ձեզ։ Ձեր յուրաքանչյուր շարժմանը նրանք հետևում են սրտատրոփ...

Խիտ շարքերով և համարձակ առաջ։

Մահ թշնամուն։

Առաջ դեպի Զանգեզուր»[1]։

Այդ կոչը մեծ արագությամբ տարածվում է բանակում և ժողովրդի մեջ։ Նա խոշոր նշանակություն ունեցավ բանակի և ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու համար։ Նրանք կրկին անդամ համոզվեցին, որ դաշնակիները են քաղաքացիական կռիվների հրահրողը, որոնք կատարելով հայ բուրժուազիայի և օտարերկրյա ինտերվենտների կամքը, դարձել են հազարավոր զոհերի պատճառ։

Ստանալով Հայաստանի բանվորների ու գյուղացիների ամեն տեսակի օգնություն, Կարմիր Բանակի զորամասերը հունիսի 20-ին սկսում են հակագրոհը դեպի Զանգեզուր։

Կարմիր Բանակի զորամասերի երևանյան խմբավորման դեպի Զանգեզուր սկսված գրոհը ծավալվում է երեք ուղղություններով — Վեդիից դեպի Քեշիշքենդ, Նախիջևանից դեպի Անգեղակոթ (Սիսիան) և Օրդուբադից դեպի Մեղրի։ Բացի դրանից, Նոր Բայազետի կողմից հարձակում է սկսվում նաև Սևքարի լեռնանցքի վրա, որը գրավել էին դաշնակները վերջին հարձակման ժամանակ։

Գրոհի հենց առաջին օրերին երևանյան խմբավորումը ձեռք է բերում մեծ հաջողություններ։ Վեդիի կողմից հարձակվող զորքերը հունիսի 22—23-ին տեղի ունեցած ուժեղ մարտերից հետո դաշնակներին հետ են շպրտում և ազատագրում Դարալագյազի գավառի մի շարք գյուղեր, հասնելով մինչև Բաշգյուղ—Քեշիշքենդ—Մալիշկա—Ննդիջա։ Նոր Բայազետի կողմից հարձակվող զորքերը հունիսի 23-ին գրավում են Սևքարի լեռնանցքը։

Կարմիր Բանակի այդ առաջին հուժկու հարվածների շնորհիվ դաշնակների զորքերը բարոյալքվում են։ Սկսվում է նրանց արագ քայքայումը։ Այդ գործում խոշոր դեր է կատարում նաև այն ագիտացիան, որը դաշնակների թիկունքում կազմակերպել էին կոմունիստները։

Շարունակելով հաղթական առաջխաղացումը, հունիսի 26-ին Կարմիր Բանակն ազատագրում է ամբողջ Դարալագյազը։ Նախի-

---

[1] *ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, պատմական մաս, 11-րդ բանակի վերաբերող նյութեր։ Կապոկ 4, գործ 5, էջ 124։*

չևանի կողմից հարձակվող զորամասերը հունիսի 28-ին գրավում են Բիչանակի լեռնանցքը և հասնում մինչև Մալրա, Շաղաթ և Անդեղակոթ գյուղերը։

Հունիսի 30-ին Սիսիանի ամրոցջ շրջանից դաշնակցական բանդաները դուրս էին շպրտված։ Հուլիսի 2-ին Շուշիի կողմից դեպի Ջանդեղուր (Գորիս) իր հաղթական գրոհն է սկսում նաև Կարմիր Բանակի Ղարաբաղ—Ջանդեղուրյան խմբավորումը, որին Ղարաբաղի և Ջանդեղուրի աշխատավորները ցույց են տալիս ամենալայն օգնություն։ Համառ և հերոսական մարտերից հետո նույն օրը Ղարաբաղ—Ջանդեղուրյան խմբավորման առաջապահ զորամասերը մտնում են Գորիս։ Դրանից երկու ժամ հետո արևմտյան կողմից Գորիս են մտնում նաև երևանյան խմբավորման զորամասերը։ Նժդեհի ջախջախված բանդաների մնացորդները ուղղություն են վերցնում դեպի Դափան—Մեղրի։ Հետապնդելով խուճապահար նահանջող հակառակորդին, Կարմիր Բանակի զորամասերը հուլիսի 4-ին ազատում են Տաթևը, հուլիսի 7-ին հասնում մինչև Դափանի պղնձահանքերը, որտեղի բանվորությունը թիկունքից հարվածել էր դաշնակցական ավազակախմբերին։

Հետապնդելով հակառակորդին, մի շարք ուժեղ մարտերից հետո, Կարմիր Բանակի զորամասերը հուլիսի 13-ին մտնում են Մեղրի։ Ժողովրդի արյունարբու թշնամիների ջախջախված հրոսակախմբերն իրենց մնացորդներով դուրս են շպրտվում Հայաստանի սահմաններից։

Ջանդեղուրն ազատագրած Կարմիր Բանակի զորամասերի շտաբի 1921 թ. հուլիսի 16-ի հաղորդագրության մեջ ասված է.

«Ամբողջ Ջանդեղուրի վրա ծածանվում է սովետական դրոշը, վերջ է տրված դաշնակցական ավանտյուրային. կոնտրռևոլյուցիայից ազատված Ջանդեղուրը սկսել է ստեղծագործական աշխատանքը՝ աշխատավորների իշխանությունն ամրապնդելու և դաշնակների կողմից քայքայված գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը կարգավորելու համար»[1]։

Դաշնակցական բռնակալությունից ազատագրված Ջանդեղուրի աշխատավորությունն իր ազատարար Կարմիր Բանակին դիմավորում է անսահման խանդավառությամբ։

Ազատագրված Ջանդեղուրի աշխատավորներն իրենց ջերմ ողջույնն են ուղարկում Սովետական Հայաստանի կառավարությանը,

---

[1] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆոնդ 113/124, գործ № 22, թ. 48։*

աշխատավորությանը և հերոսական Կարմիր Բանակին։ Այնտեղ ասված է.

«Դաշնակցական զազրելի լծից ազատագրված աշխատավորությունը եղբայրական ջերմ ողջույններ է ուղարկում Խորհրդային Հայաստանի աշխատավորներին և նրանց իսկական ներկայացուցիչ՝ Հայաստանի ժողովրդական Կոմիսարների Խորհրդին ու պանծալի Կարմիր Բանակին։ Զանգեզուրի աշխատավոր դյուղացիությունն այսօրվանից իր բախտի տնօրինումը վստահում է Խորհրդային իշխանությանը, լի հավատով կապիտալիզմից ըղկտված հայ աշխատավորության լուսավոր ապագային։

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը»[1]։

Դրանով ավարտվում են քաղաքացիական կռիվները։ Հայաստանի բանվորների և դյուղացիների պայքարը սովետական կարգերի համար պսակվում է պատմական մեծ հաղթանակով։

Այդ կռիվների հաղթական ավարտումով վերջնականապես լիկվիդացվում է կոնտրռևոլյուցիայի և օտարերկրյա ինտերվենտների վերջին հենարանը Անդրկովկասում։ Ռեսպուբլիկայում բանվորներն ու դյուղացիները հնարավորություն են ստանում ձեռնամուխ լինելու երկրի քայքայված տնտեսության վերականգնման դժվարին աշխատանքներին, որոնք ընդհատված էին քաղաքացիական կռիվների հետևանքով։

* * *

Չնայած իրենց ծանր հետևանքներին, 1921 թվականի քաղաքացիական կռիվները խոշոր նշանակություն ունեցան Հայաստանի բանվորներին և աշխատավոր դյուղացիներին ժողովրդի ընտանի դաշնակների, էսեռների, հնչակյանների, սպեցիֆիկների և մյուս կոնտրռևոլյուցիոն պարտիաների և հոսանքների դեմ անհաշտ պայքարի ոգով դաստիարակելու տեսակետից, աշխատավորական մասսաները Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության շուրջը է՛լ ավելի ամուր կերպով համախմբելու տեսակետից։

Հանձին Կոմունիստական պարտիայի, Հայաստանի բանվորներն ու դյուղացիները կրկին անգամ տեսան իրենց շահերի միակ և իսկական պաշտպանին։

Քաղաքացիական կռիվների ընթացքում ավելի ու ավելի ամրապնդվեց հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և ռազմական

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆոնդ 4/114, գործ 128, թ. 17։

պաշինքը ռուս մեծ ժողովրդի հետ, անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների՝ վրացիների և ադրբեջանցիների հետ։

Պայքարելով հերոսական 11-րդ բանակի զորամասերի հետ կողք-կողքի, այդ կռիվների ռազմաճակատներում իրենց առաջին մարտական կոփվածությունն ստացան Սովետական Հայաստանի երիտասարդ Կարմիր Բանակի զորամասերը և բազմաթիվ հայ ռազմիկներ։

1921 թ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներում իրենց առաջին մարտական կոփվածությունն են ստացել ներկայումս Սովետական Միության Մարշալ Ի. Ք. Բաղրամյանը, գեներալ-լեյտենանտ Ս. Ս. Մարտիրոսյանը, հերոսանու գեներալ-մայոր Գ. Խ. Ջայլախյանը, հրետանու գեներալ մայոր Հ. Ն. Հախնազարյանը և շատ ուրիշներ, որոնք Սովետական Միության 1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմում աչքի ընկան իրենց մարտական ծառայություններով։

1921 թվականի քաղաքացիական կռիվներում Սովետական Հայաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակի հիմնական պատճառներն էին.

Նախ՝ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, նրա Կարմիր Բանակը պայքարում էին Կոմունիստական վիառապանծ պարտիայի ղեկավարությամբ։ Այդ պայքարն անմիջականորեն ղեկավարում էին Կոմունիստական պարտիայի տաղանդավոր գործիչ, հայ ժողովրդի սիրելի բարեկամ Ս. Օրջոնիկիձեն և հայ ժողովրդի արժանավոր զավակներ, կոփված բոլշևիկներ Ալ. Մյասնիկյանն ու Գ. Աթաբեկյանը։

Երկրորդ՝ Հայաստանի աշխատավորները և Կարմիր Բանակը գիտեին, որ իրենք կռվում են արդար գործի համար, գիտեին, որ կռվում են հանուն սովետական կարգերի, հանուն իրենց Հայրենիքի ազատության և անկախության։ Նրանք գիտեին, որ այդ կռիվներն ուղղված են շահագործողների, օտարերկրյա ստրկացնողների դեմ, նրանց հլու կամակատար դաշնակների, մենշևիկների, էսեռների և մյուս կոնտրռևոլյուցիոն, կուլակային բանբիուկների դեմ։ Պատերազմի նպատակների ու խնդիրների ճշտության գիտակցությունը Կարմիր Բանակում ամրապնդում էր կարգապահությունը և բարձրացնում նրա մարտունակությունը, որի շնորհիվ թշնամու դեմ մղած պայքարում նրա շարքերում հանդես եկավ մասսայական հերոսություն։ Այդպիսի հերոսության օրինակներ են Ղամարլու—Վեդիի շրջանում հակառակորդի կողմից շրջա-

պատված Կարմիր Բանակի զորամասերի 45 օրյա մարտական գործողությունները, վիտեբսկյան ավանտյուրայի սկզբին Երևանից Քանաքեռի կայազորին օգնության մեկնած Երմոլենկոյի ջոկատի մարտական գործողությունները և ռազմաճակատի մյուս հատվածներում կարմիրբանակայինների ու հրամանատարների ցուցաբերած հերոսությունները։ Քաղաքացիական կռիվներում Հայաստանի Կարմիր Բանակի զորամասերը տվեցին բազմաթիվ հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն Սովետական իշխանության, հանուն իրենց ժողովրդի ազատության և անկախության։ Այդ հերոսների թվումն են վինոգրադյան կոմիսար Լիպարիտ Մխչյանը, Հայկական 2-րդ հրաձիգ գնդի հրամանատար գնդապետ Ֆիշիլևիչը, Հայկական 2-րդ հրաձիգ բրիգադի հրամանատար Երմոլենկոն, պարտիզանական ջոկատի հրամանատար Սուրեն Մակարյանը, Հայաստանի Կոմերիտմիության ղեկավարներից մեկը՝ Արմենակ Բուզպղյանը, վաշտի հրամանատար Ռուբեն Պողոսյանը, վինոգրադյան կոմիսար Նիկոլայ Օլենցյանը, շարքային մարտիկներ Սամվել Դարբինյանը, Գուրգեն Ջախոյանը, Հակոբ Խաչատրյանը, Աղասի Ղարիբյանը և շատ ուրիշները։

Երբորդ՝ այդ պայքարում հայ ժողովուրդը մենակ չէր։ Ռուս մեծ ժողովուրդը և նրա հերոսական Կարմիր Բանակը, ինչպես մեր երկրի բոլոր մյուս ժողովուրդներին, նույնպես և հայ ժողովրդին մեկնեց իր եղբայրական օգնության աղատարար ձեռքը։ Սրանն տեսակի օգնություն ցույց տալով հայ ժողովրդին, նա վերջինիս փրկեց վերահաս կործանումից և հնարավորություն տվեց կանգնելու իսկական վերածնության ուղու վրա, սոցիալիզմի ուղու վրա։ «Սովետական իշխանության դոյությամբ, իրենց ազատագրմամբ վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի աշխատավոր մասսաները ամբողջովին պարտական են Ռուսաստանին,— ասում է Ս. Օրջոնիկիձեն։— Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը՝ չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը և մինչև այսօր էլ նրանք ընկած կլինեին անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ։

Միայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ, Ռուսաստանյան Կարմիր Բանակի հետ դաշինք կնքելով, ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները, վրացական բանվորներն ու գյուղացիները, հայկական բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրումը»[1]։

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 111։

Ջորրոդ՝ *կոնտրռևոլյուցիայի դեմ մղած պայքարում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները վերջ տալով ազգային թշնամանքին ու ազգային ճնշմանը, էլ ավելի ամուր դաշինքի մեջ մտան Ադրբեջանի, Վրաստանի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների՝ իրենց դարավոր եղբայրների հետ: Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոն ուժերը և նրանց վերջին փորձերը Հայաստանում ջարդ ու փշուր եղան՝ հանդիպելով այդ ժողովուրդների անխորտակելի ինտերնացիոնալ դաշինքին: «... Կարելի է վստահությամբ ասել, որ ռուսական բանվորները չէին կարող հաղթել Կոլչակին ու Դենիկինին, իսկ Ադրբեջանական ու Հայկական ռեսպուբլիկանները չէին կարող ոտքի կանգնել առանց ազգային թշնամությունն ու ազգային ճնշումն իրենց տանը վերացնելու, առանց Արևմուտքի ու Արևելքի ազգությունների աշխատավոր մասսաների վստահության ու խանդավառության նրանց նկատմամբ»*[1]:

Հինգերորդ՝ *շնորհիվ Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ճիշտ քաղաքականության, Հայաստանի բանվոր դասակարգին հաջողվեց քաղաքացիական կռիվներում ամուր դաշինքի մեջ մանելով չքավոր գյուղացիության հետ, իր կողմը գրավել միջակ գյուղացիությանը և նրա հետ միասին պայքարել կոնտրռևոլյուցիայի դեմ:*

Վեցերորդ՝ *Կարմիր Բանակը հաղթեց այն պատճառով, որ նա մինչև վերջ նվիրված ու հավատարիմ մնաց իր ժողովրդին, և վերջինիս կողմից սատարվ ամեն տեսակի օժանդակություն: Կարմիր Բանակի թիկունքում բոլոր աշխատավորները ոտքի կանգնեցին՝ օգնելու նրան:*

«Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդի սերը դեպի իր բանակը,— ասում է Ի. Վ. Ստալինը:— Այդ նշանակում է, որ այդպիսի բանակը կունենա ամենաամուր թիկունք, որ այդպիսի բանակն անպարտելի է:

Ի՞նչ բան է բանակն առանց ամուր թիկունքի: Ոչինչ: Ամենամեծ բանակները, ամենալավ զինված բանակները չունենալով ամուր թիկունք, չունենալով թիկունքի կողմից, աշխատավոր բնակչության կողմից ցույց տրվող աջակցություն ու համակրանք, քայքայվել ու ոչնչացվել են: Մեր բանակն աշխարհում միակն է, որը համակրանք ու օգնություն է վայելում բանվորների և գյուղացիների կողմից: Դրա մեջ է նրա ուժը, դրա մեջ է նրա անպարտությունը»[2]:

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 23:

[2] Ի. Վ. Ստալին, Նույնը, հատ. 11, էջ 26—27:

Ահա այն հիմնական պատճառները, որոնց շնորհիվ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, նրա Կարմիր Բանակը հաղթանակով դուրս եկան 1921 թ. բազաբյուրյական կռիվներից, վերականգնեցին սովետական կարգերը Երևանում, Աշտարակում, Ապարանում, Էջմիածնում, Նոր Բայազետում, Ներքին Ախտայի, Կոտայքի և Դարալագյազի շրջաններում և ազատագրեցին Ջանգեզուրը։ Նրանք, սովետական մյուս ռեսպուբլիկաների աշխատավորների հետ միասին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան կոմունիստական հասարակարգի կառուցման պատմական վիթխարի գործին։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ա.ՆՅՈՒՄԸ ԽԱ.Պ.Ա. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո, 1921 թ. ապրիլից Սովետական Հայաստանում նպաստավոր պայմաններ են ստեղծվում խաղաղ տնտեսական շինարարության համար։ Սկսվում են ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքները։

Ինչպիսի վիճակումն էր Հայաստանի ժողովրդական տնտեսությունն այն ժամանակ՝ վերականգնման շրջանի սկզբում։ Ի՞նչ ժառանգություն էր մնացել Սովետական իշխանությանը հին կարգերից։

Յարիզմի դաղութային քաղաքականության հետևանքով Հայաստանում արդյունաբերությունը ոչ միայն հետամնաց մակարդակի վրա էր եղել, այլև կրում էր միակողմանի բնույթ։ Չնայած երկրի ունեցած հարուստ բնական պաշարներին, ցարիզմի տիրապետության ժամանակ Հայաստանում չի եղել ֆաբրիկա-գործարանային արդյունաբերություն՝ իր տարբեր ճյուղերով։ Արդյունաբերության մեջ գլխավոր ճյուղը հանդիսացել է գինձարդյունաբերությունը (Ալավերդում և Դափանում), որը շահագործում էին ֆրանսիական կոնցեսիոներները։ Հայաստանի խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը (1926—1927 թթ. անփոփոխ գներով) նախապատերազմյան տարիներին հավասար է եղել 15,5 միլիոն ռուբլու, որից պղինձի և պղնձահանքի հանույթի արժեքը կազմել է 9,2 միլիոն ռուբլի[1]։ Այդ ժամանակ պղնձարդյունաբերության մեջ աշխատել են 4400 բանվորներ[2]։ Պղնձարդյունաբերությու-

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», изд. УНХУ, Ереван, 1940, стр. 26.

[2] *Նույն տեղում, էջ 29։*

նը սարքավորված է եղել ամենապրիմիտիվ տեխնիկական միջոցներով։ Դրա հետևանքով այնտեղ աշխատող բանվորների աշխատանքային պայմանները խիստ վատ են եղել և շահագործումը կրել է վայրագ բնույթ։

Արդյունաբերության մյուս ճյուղերն են հանդիսացել սննդարդյունաբերությունը (գլխավորապես գինու-կոնյակի արտադրությունը), բամբակի զտումը, կաշվի մշակությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, և մի շարք այլ ճյուղեր, որոնք մեծ դեր չեն խաղացել երկրի տնտեսական կյանքում։ 1913 թ. Հայաստանում սննդարդյունաբերության արտադրանքը դրամական արտահայտությամբ կազմել է 4,7 միլիոն ռուբլի (1926—1927 թթ. անփոփոխ գներով)[1]։ Աշխատել են գինու-կոնյակի արտադրության մի շարք ձեռնարկություններ։ Այդ ձեռնարկություններից ամենաուշը ընկնողն էր «Արարատ» գործարանը, ուր աշխատում էին ընդամենը 40—45 բանվոր։ Այդ նույն ժամանակ Հայաստանում կար 10 փոքր էլեկտրակայան, որոնց տարեկան արտադրանքը հավասար էր ընդամենը 5,1 միլիոն կիլովատ ժամի[2]։ Կաշվի մշակությունը, բամբակի զտումը, մեխանիկական արհեստանոցները, սպոցարանները, օճառի արտադրությունը կրում էին մանufակտուրադործական բնույթ։ Նրանցում արտադրությունը հենված էր պրիմիտիվ տեխնիկայի վրա։ Բանվորներն աշխատում էին ամենածանր պայմաններում և շահագործվում էին անխնա կերպով։ Բացի պղնձարդյունաբերությունից, ուր, ինչպես տեսանք, 1913 թ. աշխատում էին 4400 բանվոր, Հայաստանի արդյունաբերության մյուս բոլոր ճյուղերում միասին վերցրած աշխատում էին ընդամենը 556 բանվորներ, որից 290-ը սննդարդյունաբերության մեջ, 152-ը մեխանիկական արհեստանոցներում, 100-ը կաշվի, կոշկեղենի արտադրության մեջ և 14-ը էլեկտրակայաններում։ Այսպիսով, Հայաստանի ամբողջ արտադրության մեջ 1913 թ. աշխատում էին ընդամենը 4956 բանվոր[3]։ Այդ նույն թվականին ամբողջ արդյունաբերության արտադրանքը հավասար է եղել 20,7 միլիոն ռուբլու[4], որը կազմել է գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մոտ 30 տոկոսը։

Ցարական միրապետության ժամանակ Հայաստանում տնտե-

---

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)» стр. 26.

[2] Նույն տեղում, էջ 24։

[3] Նույն տեղում, էջ 29։

[4] Նույն տեղում, էջ 64։

սության հիմնական ճյուղը հանդիսացել է գյուղատնտեսությունը, որը նույնպես զարգացման հետամնաց մակարդակի վրա է եղել։ Հողը մշակվել է պրիմիտիվ միջոցներով։ Խիստ սակավ է եղել ոռոգման ջանքը։ Մեծ տարածություններ անմշակ ու խոպան են մնացել։ 1913 թ. Հայաստանում ցանքատարածությունները կազմել են 345,7 հազար հեկտար[1], որից ոռոգելի է եղել միայն 97,0 հազար հեկտարը[2]։ Հողի պարարտացումը հազվադեպ երևույթ է հանդիսացել և նույնպես խիստ պրիմիտիվ բնույթ է կրել։ Այդ բոլորի հետևանքով ցածր է եղել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը։ Այսպես, նախապատերազմյան տարիներին միջին հաշվով բերքատվությունը մեկ հեկտարից ստացվել է՝ հացահատիկ՝ 5,8 ցենտներ, բամբակ՝ 8,8 ցենտներ, կարտոֆիլ՝ 67,7 ցենտներ[3] և այլն։ Այդ ժամանակ Հայաստանի ամբողջ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը արժեքային արտահայտությամբ կազմել է 65,8 միլիոն ռուբլի (1926—1927 թթ. անփոփոխ դներով), այդ թվում անասնապահության արտադրանքը, որը նույնպես հետամնաց մակարդակի վրա է եղել,—կազմել է 27,0 միլիոն ռուբլի[4]։

Ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ Անդրկովկասը ցարիզմի տիրապետության ժամանակ տնտեսական զարգացման տեսակետից հանդիսացել է հետամնաց մի երկրամաս։

1914—1918 թվականների առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը տնտեսական խոշոր քայքայվածության առաջացրեց ինչպես պատերազմող բոլոր երկրներում, նույնպես և ցարական Ռուսաստանում ու նրա գաղութը հանդիսացող Հայաստանում, որի վրայով անցնում էր ռազմաճակատներից մեկը։ Այդ պատերազմի հետևանքով հայ ժողովուրդը մարդկային ու նյութական հսկայական կորուստներ է ունեցել։

Հայաստանի հետամնաց ու կազմալուծված տնտեսությունը ծայրահեղ քայքայման հասավ օտարերկրյա իմպերիալիստների հյուծ ծառա դաշնակների բուրժուա-նացիոնալիստական կարճատև տիրապետության ժամանակ (1918 թ. մայիս—1920 թ. նոյեմբեր)՝ նրանց ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով։ Հայ

---

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)». стр. 64.

[2] Նույն տեղում, էջ 62։

[3] Նույն տեղում, էջ 67։

[4] Նույն տեղում, էջ 47։

ժողովրդի այդ կատաղի թշնամիները ավերում, դնդի կոծանում էին տանում մեր երկիրը։

Դաշնակների տիրապետության կարճատև շրջանում Հայաստանը հանդիսացել է անընդհատ պատերազմների թատերաբեմ։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանում ոչ մի շինարարություն, կամ տնտեսական քիչ թե շատ լուրջ ձեռնարկում տեղի չի ունեցել։ Ավելին, ինչպես տեսանք, երկրում եղած նյութական հարստությունները հափշտակվել էին։ Այդ հափշտակությունների դործում դաշնակների հետ միասին ամենատափիլ դեր են խաղացել ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, գերմանական իմպերիալիստները, թյուրքական զավթիչները։ Նրանք դաժանորեն ճնշում էին Հայաստանի բանվորների և դյուղացիների պայքարը իրենց ազատության և անկախության համար։

Դաշնակների տիրապետության ժամանակ երկրի ներքին վիճակի և ծայրահեղ տնտեսական քայքայվածության մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ Երկրի արդյունաբերության արտադրանքը 1919 թ. իջել էր մինչև 1,7 միլիոն ռուբլու[1] (1926—1927 թ. անփոփոխ դներով), այսինքն 1913 թ. համեմատությամբ 12 անգամ պակասել էր։

1919 թ. Հայաստանում աշխատում էին յոթ փոքրիկ էլեկտրակայաններ, որոնց էլեկտրոէներգիայի արտադրանքը տարեկան կազմում էր 1,7 միլիոն կիլովատ—ժամ[2] (այսինքն երեք անգամ պակաս, քան 1913 թ.)։ Ամբողջապես քայքայվել ու կանգ էին առել պղնձահանքերն ու պղնձի մշակման ձեռնարկությունները Ալավերդում և Ղափանում։ Գինու-կոնյակի արտադրությունը, բամբակի մշակությունը համարյա նույնպիսի վիճակումն էին գտնվում։ 1920 թ. դաշնակո-բեհմալական պատերազմը էլ ավելի ծանր հարված հասցրեց երկրի ամբողջ տնտեսությանը։

Այսպիսով, 1920 թ. վերջերին, երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր, երկրում արդյունաբերությունը ամբողջապես գտնվում էր քայքայված վիճակում։

Նույնպիսի վիճակումն էին գտնվում երկաթուղային տրանսպորտը, խճուղային ճանապարհները, Սևանի նավագնացությունը։ Ավերվել էին երկաթուղային գծերը, կամուրջները, շոգեքարշերը, վագոնները։ Կազմալուծվել էր երկաթուղին սպասարկող սպարա-

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», стр. 23.

[2] Նույն տեղում, էջ 24։

ար։ Ամենուրեք երկաթուղային կայարաններում թափված էին վնասված ու փչացած շոգեքարշեր, վագոններ և երկաթուղային այլ սարք։ Միայն Ալեքսանդրոպոլի կայարանում 1921 թ. մայիսին՝ բյուրքական զավթիչներին այնտեղից դուրս քշելուց հետո, թափված էին շարքից դուրս եկած 160-ից ավելի վագոններ և շատ շոգեքարշեր։ Բյուրքական օկուպանտները թալանել և ամբողջովին ավերել էին Ալեքսանդրոպոլի դեպոն, որի հետևանքով որոշ ժամանակով Հայաստանը զրկվել էր վնասված շոգեքարշերի ու վագոնների վերանորոգման հնարավորությունից։ Խճուղային ճանապարհները երկար ժամանակ վերանորգման չէին ենթարկվել և նույնպես գտնվում էին քայքայված վիճակում։ Դաշնակների կողմից թալանված և աչնչացված էր Սևանա լճի նավադնացության ամբողջ սարքավորումը։

Երկրի անտեսության գլխավոր ճյուղը հանդիսացող հետամնաց գյուղատնտեսությունը դաշնակների տիրապետության ժամանակ ծայրահեղ անկում ապրեց։ Յանքատարածությունները 1913 թ. 345,7 հազար հեկտարից 1919 թ. նվազել էին մինչև 82, 7 հազար հեկտարի[1]։ Քայքայվել էր և հնարավոր չէր օգտագործել ոռոգման սիստեմը։ Խոպան էին մնացել հսկայական տարածություններ։ Չկային գյուղատնտեսական գործիքներ։ Եղածը վնասվել և շարքից դուրս էր եկել, որին նորով փոխարինելու հնարավորություն չկար։ Մեծ պակաս էր զգացվում սերմացուի, բանող ուժի։ Ինչպես արդյունաբերության, նույնպես և գյուղատնտեսության մեջ աշխատող ձեռքերի հիմնական մասը կտրված էր աշխատանքից և մոբիլիզացված դաշնակցական բանակում։

Եթե հացահատիկային կուլտուրաների ընդհանուր արտադրանքը 1913 թ. կազմել է 1779,0 հազար ցենտներ, ապա 1919 թ. այն իջել էր մինչև 383,7 հազար ցենտների[2], այսինքն հինգ անգամ պակաս։ Համապատասխանաբար նվազել էին՝ բամբակի արտադրանքը 135,0 հազար ցենտներից 3,4 հազար ցենտների, մոտ 40 անգամ պակաս, կարտոֆիլինը՝ 473,8 հազար ցենտներից 53,2 հազար ցենտների, մոտ 9 անգամ պակաս, բնական խոտինը՝ 2681,3 հազար ցենտներից 317,9 հազար ցենտների[3], 8,5 անգամ պակաս և այլն։

---

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)». стр. 64.

[2] Նույն տեղում, էջ 70։

[3] Նույն տեղում, էջ 67։

Գյուղատնտեսական կուլտուրաների արտադրանքի այդպիսի անկումը տեղի էր ունեցել մի կողմից ցանքատարածությունների կրճատման, մյուս կողմից բերքի նվազման պատճառով։ Այսպես, եթե 1913 թ. հայտնի տիկային կուլտուրաների բերքը միջին հաշվով եղել է մեկ հեկտարից 5,8 ցենտներ, ապա 1919 թ. այն իջել էր մինչև 4,9 ցենտների։ Համապատասխանաբար իջել էին՝ բամբակի բերքը 8,8 ցենտներից 5,6 ցենտների, խաղողինը՝ 75,0 ցենտներից՝ 32,8 ցենտների[1] և այլն։

Հայաստանի գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը արժեքային արտահայտությամբ 1913 թ. 65,8 միլիոն ռուբլուց (1926—1927 թթ. անփոփոխ դներով) 1919 թ. նվազել էր մինչև 11,3 միլիոն ռուբլու, այսինքն պակասել էր մոտ 6 անգամ, այդ թվում անասնապահության արտադրանքը 27,0 միլիոն ռուբլուց իջել էր մինչև 4,3 միլիոն ռուբլու[2], այսինքն՝ պակասել էր 6,5 անգամ։

Ծալանվել ու ապառվել էին երկրի մերային բոլոր պաշարները։ Դատարկվել էին պետական բոլոր պահեստները։ Իսկ ֆինանսական տեսակետից տիրում էր աներևակայելի խառնաշփոթություն։ Երկիրը հեղեղված էր ոչնչով չապահովված թղթադրամներով, որոնց դումարը դաշնակների տիրապետության վերջին շրջանում հասել էր 11 միլիարդ ռուբլու (դաշնակների թղթադրամներով) և 340 միլիոն ռուբլու անդրկովկասյան բոններով։ Սակայն ստացված թվերի հաշվով այդ ամբողջ դումարի արժեքը հավասար էր միայն 353.000 մինչպատերազմյան ռուբլու[3]։ Ռուբլու կուրսի արագընթաց անկման մասին դաշնակների տիրապետության ժամանակ պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ Ռուսական ոսկին (10 ռուբլիանոցը) 1919 թ. աշնանը դաշնակների թղթադրամով արժեր 900 ռուբլի, իսկ 1920 թ. նոյեմբերին՝ սովետական կարգերի հաստատման նախօրյակին, այն արդեն հասել էր 200 հազար ռուբլու[4]։ Շուկայում ապրանքների դները բարձրանում էին չտեսնված արագությամբ։

---

[1] «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)» стр. 70.

[2] Նույն տեղում, էջ 47։

[3] «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, հրատ. ՀՍԽՀ Կենտգործկոմի և ժողկոմխորհի, Երևան, 1926, էջ 161։

[4] Նույն տեղում, էջ 165։

Ահա այդպիսի ծանր տնտեսական ժառանգություն էր մնացել Հայաստանի Սովետական իշխանությանը հին կարգերից։

Դաշնակների փետրվարյան ավանտյուրայի հետևանքով ծավալված քաղաքացիական կռիվները էլ ավելի ծանրացրին ռեսպուբլիկայի տնտեսական-ֆինանսական դրությունը։ Ինչպես տեսանք նախորդ գլխում, պարտության կրելով, ավանտյուրիստ դաշնակները հավաքակեցին և իրենց հետ արտասահման տարան պետական բանկում մնացած վերջին հարստությունները։ Պետական գանձարանը փաստորեն դատարկվել էր։

Ամբողջ երկրի գլխավոր տնտեսական կենտրոնը հանդիսացող Արարատյան դաշտավայրը, որը նախապատերազմյան շրջանում տալիս էր գյուղատնտեսական արտադրանքի խոշորագույն մասը, իրենից ներկայացնում էր համատարած քայքայվածության մի շրջան։ Լեռնային շրջաններից Ալեքսանդրոպոլը և մասամբ Դարաքիլիսան իրենց գավառներով ամբողջովին ավերված ու թալանված էին թյուրքական օկուպանտների կողմից։ Զանգեզուրում մինչև 1921 թ. հուլիսի կեսերը ժողովրդի բշնամի դաշնակները շարունակում էին թալանն ու կամայականությունները։ Ռեսպուբլիկայի համարյա բոլոր գավառները տնտեսական ծայրահեղ քայքայվածության ու սովի ծանր օրեր էին ապրում։ Երկիրը լցված էր բազմահազար գաղթականներով։ Դեռ ոչ ամբողջությամբ էին լիկվիդացվել դաշնակների տիրապետության հետևանք համաճարակային հիվանդությունները։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին ամիսներին գյուղատնտեսության վիճակը պատկերացնելու տեսակետից բնորոշ է հետևյալ փաստաթուղթը։ Ուսումնասիրելով Լոռու գյուղացիության վիճակը, Հայաստանի Ռևկոմի ներկայացուցիչը 1921 թ. ապրիլի 14-ին Ռևկոմին ուղղած իր զեկուցագրում նշել է.

«Գյուղատնտեսության դրության մասին ես պետք է հաղորդեմ հետևյալը. աշխատավոր գյուղացիության տնտեսական դրությունը շատ ծանր է։ Անասնապահությունը, որը Լոռում հանդիսանում է բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը, գնում է դեպի անկում։ Անասունները ոչնչանում են կերի պակասությունից և էպիդեմիկ հիվանդություններից։ ...Գյուղացիները մնացել են առանց նավթի, աղի և որ գլխավորն է, հնարավորություն չունեն վերականգնելու գյուղատնտեսական գործիքները՝ նյութի պակասության պատճառով։ ... Պետք է նշել, որ առաջիկա ցանքերի կա-

պակցությամբ կա սերմացուի մեծ պահանջ։ Ինչ վերաբերում է դյուղացիությանն արտադրությունները, անշուշտ կա ուղղություն վերելք, դյուղացիները մասամբ գալիս են դեպի մեզ՝ մեծ վստահությամբ»[1]։

Գրությունն այդպիսին էր նաև Հայաստանի մյուս շրջաններում։

Հին կարգերից ժառանգություն մնացած երկրի անտեսական այդ ծանր դրությունը խիստ կերպով անդրադարձել էր բնակչության վիճակի վրա։ Ռևոլյուցիայում կար 200 հազար գաղթականություն[2], որի գերակշռող մասը դեռ նոր էր տեղավորվում և հազով ու աշխատանքով ապահովվում։ Աշխատավոր բնակչությունը ծայրահեղ աղքատ էր։ Քայքայված արտադրական ձեռնարկները դեռ նոր-նոր էին կարգի բերվում և սկսում աշխատել, այն էլ ոչ լրիվ կարողությամբ։ Գործազրկությունը զգալի չափերի էր հասնում։ Բանվորների դրությունը բավականի ծանր էր։ Առանց այն էլ սակավաթիվ բանվորների մի մասը իր գոյությունը պահպանելու համար սկսել էր զբաղվել դյուղատնտեսությամբ։ Սակայն այստեղ ևս նրանք ապահովություն չէին գտնում, որովհետև դյուղում աղքատությունը և կարիքը մասսայական բնույթ էին կրում։ Մթերքներով ապահովված էին միայն կուլակները և ունևոր անտեսությունները, որոնք իրենց ունեցվածքը սմեն կերպ թաքցնում էին պետությունից և չարաշահումներով էին զբաղվում։

Հին հասարակությունից մնացած անտեսական քայքայվածության հետևանքով 1921 թ. ռևոլյուլիկայի որոշ գավառներում դեռևս չէր լիկվիդացվել սովը, որը կրկնվեց նաև 1922 թվականին։ Սովն ընդգրկել էր մի շարք գավառներ։ Սովից տառապում էր ոչ միայն բազմահազար գաղթականությունը, այլև բնիկ ժողովուրդը։ Սակայն, շնորհիվ Սովետական իշխանության ձեռք առած վճռական միջոցառումների և հատկապես Սովետական Ռուսաստանի ցույց տված եղբայրական մեծ օգնության, սովը ռևոլյուլիկայում լայն տարածում չի ընդունում և կարճ ժամանակից հետո լիկվիդացվում է։

Այսպիսի պայմաններում 1921 թ. ամռանը Սովետական Հայաստանի մի շարք գավառներում նկատվեցին համաճարակային հիվանդությունների դեպքեր։ Սկզբում տեղի ունեցան խոլերայի դեպքեր։ Սովետական կառավարության կողմից իր ժամանակին

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 34, թ. 253։

[2] Նույն տեղում, ֆ. 40/114, գ. 184, թ. 95։

ձևոր առնված կարուկ միջոցառումների շնորհիվ մեծ վտանգներ սպառնացող այդ համաճարակը լայն տարածում չստացավ և արագությամբ լիկվիդացվեց։ «Մի քանի դավառներում խոլերային հիվանդացումներ բոլորովին չեղան,— ասված է ՀՍՍՌ Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատի հաշվետվության մեջ,— իսկ մյուսներում (Երևան, Ալեքսոլ, Դարաբլիխա և Լոռի) նա մեծ ծավալ չընդունեց։ Ընդհանրապես խոլերայի համաճարակը տևելով հունիսի վերջերից մինչև հոկտեմբերի 20-ը, ամբց ընդամենը 526 հիվանդացումներ՝ 55 տոկոս մահացությամբ»[1]։ Խոլերային հաջորդեց բծավոր տիֆը, որը նույնպես Սովետական իշխանության ձեռք առած կարուկ միջոցառումների շնորհիվ լայն տարածում չստացավ և արագությամբ լիկվիդացվեց[2]։ Սակայն Արարատյան դաշտի բնակչության զգալի մասը տառապում էր ջերմախտով (մալարիայով), որը ժողովրդի տնտեսական ծանր պայմանների և դեղորայքի պակասության հետևանքով որոշ ժամանակ շարունակվեց։

Նրա երկրի ներքին կյանքում գեռևս դոյություն ունեցած այդ դժվարություններին ավելացնենք նաև, որ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը որոշ դժգոհություն էր առաջացրել աշխատավոր գյուղացիության մեջ, ապա պարզ է դառնում, թե քաղաքական իրադրության ինչպիսի դժվարություններ էին ստեղծված Սովետական Հայաստանում բաղաքացիական կռիվների ավարտումից հետո։

Սուր բնույթ էր ընդունել դասակարդային պայքարը ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում։ Չնայած դաշնակների փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացումով Սովետական իշխանությունը ջանջանիչ հարվածներ էր հասցրել սոցիալիզմի թշնամիներին՝ դաշնակներին, էսեռներին, մենշևիկներին և մյուս կոնտրռևոլյուցիոն բանիխուներին, բայց վերջիններիս թաքնված մնացորդները, օգտագործելով ռևոլուցիկայի ներքին տնտեսական-քաղաքական կարգի դժվարությունները, միանալով կուլակային ուժերի հետ, կատաղի պայքար էին տանում սովետական կարգերի դեմ։ Այդ պայքարում նրանք կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ։ Նրանք գյուղացիության մեջ սերմանում էին պրովոկացիոն, հակասովետական լուրեր, դիմադրում էին Սովետական իշ-

[1] «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվություն», Երևան, 1923, էջ 164։

[2] Նույն տեղում, էջ 165։

խանության միջոցառումներին, փորձում էին սովետական կարգերից դժգոհ տարրերին համախմբել և պինված ելույթներ ունենալ Սովետական իշխանության դեմ: Այդ թշնամիները տեռորիստական ակտեր էին կազմակերպում պարտիական-սովետական աշխատողների դեմ, թալանում և հափշտակում էին պետական միջոցները: Դաշնակցական-կուլակային կոնտրռևոլյուցիոն տարրերին հաջողվում է նույնիսկ ռնսպուբլիկայի որոշ գավառներում (Դիլիջան, Դարալագյազ և այլն) բանդիտական դործողություններ կատարել, որոնք, սակայն, Սովետական կառավարության ձեռք առած վճռական միջոցառումների շնորհիվ արագությամբ լիկվիդացվում են: Թշնամիները իրենց քայքայիչ աշխատանքն էին կատարում նաև սովետական ապարատում, որը դեռ նոր էր սկսում ամրապնդվել:

* * *

Սովետական Հայաստանի գրությունը ծանր էր նաև այն պատճառով, որ այդ ժամանակ Ալեքսանդրոպոլ քաղաքն իր գավառով դեռևս գտնվում էր քեմալական օկուպանտների ձեռքում, որոնք այդ տերիտորիան գրավել էին 1920 թ. պատերազմի ժամանակ՝ նույն թվականի նոյեմբերի սկզբներին: Ջավ֊ֆինլով Ալեքսանդրոպոլն ու նրա գավառը, թյուրքական գավիշները հենց առաջին օրերին կոտորել էին գավառի բնակչության խոշորագույն մասին և թալանել ժողովրդի ունեցվածքը: Իսկ երբ նույն ամսի վերջին Հայաստանում արդեն հաստատվել էր Սովետական իշխանությունն, վերջինիս ձեռք առած միջոցառումների շնորհիվ քեմալական զորքերի կողմից օկուպացված վայրերում հայ բնակչության մնացած մասի մասսայական կոտորածը կանխվում է: Սակայն թյուրքական բարբարոսները շարունակելով բնակչության կատաղի հետապնդումը, նրան պահում էին տեռորի պայմաններում: Այժմ իրենց գլխավոր հարվածը օկուպանտներն ուղղել էին կոմունիստների դեմ, կանդ չառնելով վերջիններիս ֆիզիկական ոչնչացման առաջ: Իհարկե, այդ կատարվում էր ոչ թե բացահայտ ձևով, այլ թյուրքական ենիչերիներին հատուկ սատրությունների և խարդախությունների ճանապարհով, որպեսզի թաքցնեն հանցավորներին, խուսափեն վրեժխնդրի համար պատասխանատվությունից: Նրանք շարունակում էին կողոպտել և հափշտակել բնակչության ունեցվածքը, սովի մատնելով ժողովրդին: Թալանում և ոչնչացնում էին այն նյութական արժեքները, որոնք երկար տարիների ընթացքում ստեղծվել էին

բանվորների ու գյուղացիների բռունցքով։ Գնալով ավելի ու ավելի էին սաստկանում թյուրքական օկուպանտների գաղանությունները։ Նրանք բարբարոսաբար ոչնչացնում էին հայ բնակչության։ Բնակչության որոշ մասին հավաքում և բանի կերպով ուղարկում էին Թյուրքիայի խորքերը, ուր նրանք ոչնչանում էին տաժանակիր աշխատանքից ու հիվանդություններից։

Թյուրքական օկուպանտների բարբարոսությունների մասին Հայաստանի Ռևկոմը և Ալեքսանդրոպոլի Ռևկոմը միշտ տեղյակ են պահել Սովետական Ռուսաստանի կառավարությանը և ստացել նրա օգնությունը։ Ալեքսանդրոպոլի Ռևկոմի կողմից Հայաստանի Ռևկոմին, Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետին և Կոմինտերնի Գործկոմին ուղղված դիմումի մեջ նշված էր, որ մինչև 1921 թ. հունվարի 1-ը Ալեքսանդրոպոլից ու գավառից հավաքված և դեպի էրզրում են ուղարկված 15000 հայ բանվոր և գյուղացի, այդ թվում շատ կոմունիստներ, որ առաջին գավառամասի 34 գյուղերից 30-ի բնակչությունը կոտորված է, ինչպես նաև կոտորված են մնացած գյուղերի տղամարդիկ, բալանված է գավառի բնակչության ամբողջ ունեցվածքը — կենսամթերքները, սերմացուն, 300 հազար պուտ խոշոր և մանր եղջերավոր անասուն և այլն։ Թալանված և Թյուրքիա է ուղարկված նաև Ռևկոմին պատկանող գույքը՝ Ալեքսանդրոպոլի դեպոյի մեքենաները, վագոնները, տպարանի սարքավորումը և այլն։ Հետապնդվում և հալածվում են կոմունիստները, Ռևկոմի անդամները[1]։ Մի այլ փաստաթղթում ասված է, որ 130 գյուղից ավերված է և ոչնչացված են 117-ը[2]։ Թյուրքական օկուպանտների կողմից կատարված թալանի, բռնությունների և սպանությունների բազմաթիվ փաստեր շարադրված են նաև ՀՍՍՌ Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատի նոտայում՝ ուղղված Անկարայի կառավարությանը (պատճենը ՌՍՖՍՌ Արտգործժողկոմատին և Ադրբեջանական ՍՍՌ Արտգործժողկոմատին)[3]։

Ամենաբարբարոսական պայմաններումն էին պահվում Թյուրքիայի խորքերը քշված հայ բնակիչները։ Այսպես, նրանցից 7000 հոգի գտնվում էին Մամախաթունի և Սարիղամիշի միջև ընկած վայրերից մեկում (տեղի անունը չի հիշատակված — Ա. Հ.)։ Նրանց սոսկալի ծանր վիճակի մասին պատկերացում է տալիս հետևյալ

---

[1] Տե՛ս «Կոմունիստ», № 50, 1921, փետրվարի 8, Երևան, և ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40c/114, գ. 229, թ. 4։

[2] Տե՛ս «Կոմունիստ», № 52, 1921, փետրվարի 10։

[3] Տե՛ս «Կոմունիստ», № 39, 1921, հունվարի 26։

արխիվային փաստաթուղթը, որը հանդիսանում է ականատեսի՝ դեսպանության ազատվածներից մեկի՝ վկայությունը. «... Դերձնեան տպրում են սարսափելի պայմաններում, շատ հաճախ 150 մարդ մեկ տախտակամածում, որի տարածությունը 30 քառ. սաժենից մեծ չէր: Հիվանդներին չեն բժշկում, վատ են սնում, նրանց կիսամերկ վիճակում, ձմեռային սառնամանիքի պայմաններում քշում են հարկադիր աշխատանքի, ուր նրանք այդ ծանր աշխատանքից զոհվում են, կամ հիվանդանում. մինչև մարտի 19-ը (1921 թ.—Ա. Հ.) 7000 դերձնեցիից մնացել էին 1000 հոգի»[1], իսկ մյուսները մահացել էին:

Թյուրքական օկուպանտները առանձնապես մեծ կատաղությամբ էին լցված դեպի կոմունիստները: Այդ պատճառով էլ նրանք ամեն կերպ աշխատում էին առաջին հերթին հարվածել կոմունիստներին, ոչնչացնել նրանց: Ալեքսանդրոպոլի դավաճ 2-րդ դավադամասի կոմիսարը 1921 թ. հունվարի 1-ին Հայաստանի Ռևկոմին ուղղած զեկուցագրում նշել է, որ երբ թյուրքական մի ղորամաս եկավ այդ գավառամասը, նրա հրամանատարը տեղի բնակիչներից պահանջեց աշխատող ձեռքեր՝ ղորամասի համար աշխատանքներ կատարելու: Բնակիչներից տրամադրված աշխատող ձեռքերից 9-ը լինում են կոմունիստներ: Աշխատանքների ավարտվելուց հետո, այդ 9 կոմունիստները անհետ կորչում են: Ստուգումը պարզում է, որ նրանք բոլորն էլ դաղանաբար սպանվել են թյուրքական զինվորների կողմից[2]: Մի այլ փաստաթղթում նշված է, որ Ալեքսանդրոպոլի Ռևկոմի կազմակերպած տեղական միլիցիայից «...ոչ ոք չի կարող դուրս գալ գավառ, նրանց կամ սպանում են, կամ կորցնում են անհետ»[3]:

Կարելի է հիշատակել այդպիսի բազմաթիվ փաստեր: Ինչպես տեսանք նախորդ գլխում, թյուրքական օկուպանտները իրենց գավթողական պլանները Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ իրականացնելու նպատակով, բացահայտ ջնջամոլական քաղաքականություն էին վարում սովետական կարգերի հանդեպ, ձգտելով տապալել այդ կարգերը, Հայաստանում ու Անդրկովկասում հաստատել իրենց տիրապետությունը և բաց անել ճանապարհ դեպի Միջին Ասիա:

Այդ ժամանակ Սովետական Ռուսաստանը, ռուս հերոս ժողովուրդը դարձյալ եղբայրական ձեռք են մեկնում հայ ժողովրդին,

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40c/113, գ. 75, թ. 28:

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 229, թ. 21:

[3] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4c/114, գ. 229, թ. 4:

անձահարելով թյուրքական օկուպանտներին, նրանց բռնություններն ու գազանությունները։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առաջին օրերին[1] Հայաստանի Ռևկոմի ներկայացուցիչները լինում են Վ. Ի. Լենինի մոտ և նրան պատմում Սովետական Հայաստանի ծանր կացության մասին, նշելով հատկապես թյուրքերի բարբարոսությունները Ալեքսանդրոպոլի գավառում։ Վ. Ի. Լենինը խոստանում է ամեն կերպ օգնել Սովետական Հայաստանին։ Անդրադառնալով Ալեքսանդրոպոլն ու նրա գավառը թյուրքական օկուպանտներից ազատագրելու հարցին, այդ ըրույցի ժամանակ Վ. Ի. Լենինը նշել է, որ Թյուրքիայի հետ բանակցություններ կսկսենք և Ալեքսանդրոպոլն ու երկաթուղին կազատենք։ Մենք ինքներս զժվարին դրության մեջ ենք, բայց Խորհրդային Հայաստանին կօգնենք ամեն կերպ[2]։

Դրանից հետո, Սովետական Ռուսաստանի Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատը, Վ. Ի. Լենինի ցուցումներով ամենավճռական միջոցների է դիմում թյուրքական օկուպանտներին ետ անձահարելու և Ալեքսանդրոպոլն ու նրա գավառը ազատագրելու համար։ Այդ ժամանակ Հայաստանի Ռևկոմի հասցեով ուղարկված ՌՍՖՍՌ Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսար Չիչերինի հեռագրերից մեկում նշված է, որ այդ կապակցությամբ Սովետական Ռուսաստանը սկսել է բանակցությունները թյուրքական կառավարության հետ և նորից պետք է ամենավճռական կերպով պնդի եղբայրական Սովետական Հայաստանի ռեսպուբլիկայի նկատմամբ թյուրքական իշխանությունների կողմից ցույց տրվող բարբարոսական վերաբերմունքը կանխելու և նրանց գրավված տերիտորիան ազատելու համար։ Հեռագիրը վերջանում է հետևյալ խոսքերով. «Կանենք այն ամենը, ինչ ներսում են մեր ուժերը, որպեսզի էլ ավելի ամուր կապ հաստատենք Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի հետ և ցույց տանք եղբայրական անհրաժեշտ օգնությունը Սովետական Հայաստանի աշխատավորական մասսաներին»[3]։

Ողևորված Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ ու նրա առաջին հաջողություններով, ինչպես նաև Սովետական

---

[1] Ըստ Ա. Մռավյանի հիշողությունների՝ 1920 թ. դեկտեմբերի 12-ին կամ 13-ին։ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 272, 1925, նոյեմբերի 29։

[2] Նույն տեղում։

[3] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4c/114, գ. 13, թ. 55։

Ռուսաստանի կողմից հայ ժողովրդին ցույց տրվող օգնության մասին, Ալեքսանդրոպոլի ու նրա գավառի աշխատավորության՝ օկուպացիայի ամենածանր պայմաններում չէր խոնարհում իր գլուխը և շարունակում էր պայքարը իր ազատագրության համար: Նրան օգնության է հասնում հերոսական 11-րդ Բանակը, որի զորամասերը 1921 թ. ապրիլի 23-ին մտնում են Ալեքսանդրոպոլ: Թյուրքական օկուպանտները դուրս են վտնդվում Ալեքսանդրոպոլից և նրա գավառից:

Հսկայական չափերի են հասնում թյուրքական զորքերի՝ հայ ժողովրդին պատճառած մարդկային զոհերն ու նյութական վնասները Ալեքսանդրոպոլի գավառում: Ոչ լրիվ ավյալներով, թյուրքական զորքերը սպանել են 60 հազար հոգի: Նրանց թալանի ու կողոպուտի հետևանքով առաջացած սովից մահացել են 32 հազար հոգի: Այսպիսով, ոչ լրիվ ավյալներով, զոհվել են 92 հազար մարդ: Բացի դրանից, վիրավորվել են 56 հազար հոգի, որոնց զգալի մասը մահացել է: Ինչպես տեսանք, Ալեքսանդրոպոլից ու նրա գավառներից թյուրքական օկուպանտները դերել և Թյուրքիայի խորքերն էին ուղարկել 15 հազար հայ բնակիչներ, որոնց խոշորագույն մասը նույնպես ոչնչացվել կամ մահացել էր:

Թյուրքական զավթիչների կողմից կատարած թալանի և հայ ժողովրդին պատճառած նյութական վնասների ընդհանուր գումարը դրամական արտահայտությամբ միայն Ալեքսանդրոպոլի գավառում կազմում է 19.743.680 ռուբլի ոսկով[2]:

Ահա այդպիսին էր Սովետական Հայաստանի վիճակը քաղաքացիական կռիվների ավարտումից հետո:

* * *

Այդպիսի իրադրության մեջ Հայաստանի Կ(բ)Պ և Սովետական կառավարության գլխավոր խնդիրն էր երկիրն արագորեն դուրս բերել նման վիճակից և սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին ու նրանց օգնությամբ հաստատ կերպով առաջ տանել սոցիալիստական շինարարությունը: Առաջնահերթ խնդիրներ էին՝ պատերազմի հասցրած վերքերի բուժումը, ժողովրդական տնտեսության՝ արդյունաբերության, գյուղատնտեսության ու տրանսպորտի վերականգնումը:

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿՄ. ֆ. 4c/114, գ. 75, թ. 1:

[2] Նույն տեղում, թ. 2:

Հայաստանի Կ(բ)Պ մոբիլիզացիոն ռեսպուբլիկայի բանվորներին ու գյուղացիներին՝ այդ խնդիրների կենսագործման համար։ Քաղաքացիական կռիվների ավարտումից հետո, երբ նոր էին սկսված տնտեսության վերականգնման աշխատանքները, ՀԿ(բ)Պ կենտկոմը հատուկ կոչ է ուղղում Հայաստանի Կոմունիստական պարտիայի բոլոր գավառային կոմիտեներին, պատասխանատու աշխատողներին և պարտիայի անդամներին։ «Շնորհիվ մեր ուժերի մաքսիմում լարման,— ասված է կոչում,— անսպառ եռանդի ու ինքնազոհության, հաղթանակով դուրս եկանք քաղաքացիական պատերազմից։ Ներկայումս, երբ պարզորեն ստեղծված է դադար, մեր առաջ ծառացած է երկրի տնտեսական ֆրոնտի կազմակերպման խնդիրը, որը պահանջում է մեզանից անկասկած զերադույն ճիգեր, ուժեր ու աշխատանքի մաքսիմում կենտրոնացում։ Ոչ մի աշխատանք մեզ համար ծանր չէ և այն կյանքում կիրառելը դժվարին չի լինի...»[1]։

Կենտրոնական Կոմիտեի այդ կոչը պահանջում էր բարձրացնել ռևոլյուցիոն զգոնությունը, ամրապնդել երիտասարդ սովետական ապարատը իր բոլոր օղակներով, հայտնաբերել և ջախջախել օտարերկրյա իմպերիալիստների գործակալներին— դաշնակներին, մենշևիկներին, էսեռներին և մյուս կոնտրռևոլյուցիոն թափթփուկներին։ Պարտիայի այդ կոչին ռեսպուբլիկայի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը պատասխանեցին աշխատանքային խանդավառությամբ։

Տնտեսական պարտիական կազմակերպությունները, գլխավորելով բանվորների և գյուղացիների աշխատանքային խանդավառությունը տնտեսության վերականգնման գործում, կարճ ժամանակամիջոցում հասնում են զգալի արդյունքների։ Պարտիական կազմակերպությունների ծավալած աշխատանքի շնորհիվ աշխատավոր գյուղացիությունը ամուր կերպով համախմբվում է Սովետական իշխանության շուրջը։ 1921 թ. կեսերին, համարյա բոլոր գավառներում և շրջաններում հրավիրվում են գյուղացիական համագումարներ, որոնք վճռականություն են արտահայտում նվիրված աշխատանքով ու պայքարով ամրապնդել երիտասարդ Սովետական իշխանությունը, ամեն կերպ նպաստել քայքայված տնտեսության վերականգնմանը։

1921 թ. հուլիսի 17-ին հրավիրված Բաշ-Գյառնիի շրջանի 50

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿՄ., ֆ. 40/113, գ. 22, թ. 97։

գյուղերի գյուղացիների ներկայացուցիչների համագումարի բանաձևում ասված է.

«Գիտակցելով այն պարզ ճշմարտությունը, որ աշխատավորության ու քրտինք թափող ռանչպարի հանդիսատը, նրա անդորրությունը և կուլտուրական զարգացման գործը խորհրդային իշխանության ամրապնդման մեջ է կայանում, և դրանով միայն ապահովվում է գյուղացիության խաղաղ աշխատանքի ապահովումը, և որ այդ իրավակարգն իր ծոցից ծնված հարազատ իշխանությունն է, ուստի նա թև ու թիկունք պետք է դառնա այդ կառավարությանը և կհանդիսանա նրա ամենաուժեղ պատվանդանը։

Մեր անձնական եռանդով ու աշխատանքով կվերականգնենք մեր քայքայված երկիրը,— կլծվենք շինարարության գործին մեր կառավարության ղեկավարությամբ։ Մենք չենք խնայի մեր ուժերը, մեր կուրծքը դեմ կտանք այն պահանջած ծանր ու անդուլ աշխատանքին, որով պիտի վերաշինվի և կենդանանա մեր հայրենիքը»[1]։

Այսպիսի որոշումներ են ընդունում նաև մյուս շրջաններում հրավիրված աշխատավոր գյուղացիների համագումարները։

1921 թ. մայիսի 21-ին հրավիրվում է Էջմիածնի գավառի գաղթականության համագումարը։ Արտահայտելով բազմաչարչար հայ ժողովրդի ձգտումները, համագումարը միահամուռ կերպով իր բանաձևում արձանագրել է.

«Մենք ի լուր ամենքի հայտնում ենք.

1. Որ հետայսու մեր բոլոր ուժերը— մտավոր, ֆիզիկական, թե նյութական — նվիրելու ենք ՀՍԽ Հանրապետությանը.

2. Միայն ՀՍԽ Հանրապետության հարատև գոյության ու ամրապնդման միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իղձերն ու փափագները իրագործված տեսնել։

3. Ներկա ՀՍԽ Հանրապետության ուժեղացման ու տնտեսական զարգացման մեջ ենք մենք որոնում տաճկահայ աշխատավորներիս ընկերային ապահովության և նրա ապագա ենչերի իրագործումը։

Կեցցե Հայաստանի աշխատավորությանը խաղաղ աշխատանքի հրավիրող բանվորա-գյուղացիական Հայաստանի ՍԽՀ կառավարությունը»[2]։

Աշխատավոր գյուղացիության համագումարը ջերմ ողջույնի հեռագիր է ուղարկում Հայ ժողովրդի ապաստարան Վ. Ի. Լենինին,

---

[1] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ., ֆ. 6/138, գ. 3, թ. 27—28։*

[2] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ., ֆ. 40/113, գ. 22, թ. 107։*

ՀԿ(բ)Պ Կենտկոմին, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի Ռևկոմներին։

Վ. Ի. Լենինին ուղղված հեռագրում ասված է.

«Մոսկվա, ընկեր Լենինին.

Լսելով Հայաստանի Կոմունիստական կուսակցության ներկայացուցչի զեկուցումը Խորհրդային Ռուսաստանի և նրա քույր Խորհրդային Հայաստանի էության ու նրա կարդերի մասին, սաաունցի, մշեցի, ալաշկերտցի, վանեցի և այլ տեղացի արևմտահայ չքավոր գյուղացիների առաջին համագումարը միաձայն որոշեց հանձինս Ձեզ ջերմ կերպով ողջունել Խորհրդային Ռուսաստանի բանվոր գասակարդին և չքավոր գյուղացիությանը, միաժամանակ ամեն կերպ աշխատել, որպեսզի զորանա և ամրապնդվի մեր շահերի իսկական պաշտպան և մեր միակ փրկարար Խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը։

Կեցցե կարմիր, մեծ, բանվորա-գյուղացիական Ռուսաստանը։

Կեցցե Հայաստանի երիտասարդ Խորհրդային հանրապետությունը»[1]։

Տնտեսության վերականգնման համար մղվող պայքարի առաջին շրջանում դլխավոր հարցերը մնում էին պարենային ճգնաժամի լիկվիդացումը, սովի վերացումը և բանվորության համար աշխատանքային նորմալ պայմանների ստեղծումը։

Սակայն Սովետական Հայաստանը միայն իր ուժերով և ներքին միջոցներով այդ անել չէր կարող։ Նրա սեփական միջոցները չէին բավարարում այդ հարցը լուծելու համար։

Պարենային ճգնաժամի լուծման գործում Հայաստանը օգնության մեծ կարիք էր ղգում։ Այդ օգնությունը նա կարող էր ստանալ միմիայն Սովետական Ռուսաստանից և եղբայրական սովետական մյուս ռեսպուբլիկաներից, նրանց հետ հաստատելով սերտ համագործակցություն։

Մեր ժողովրդի և երկրի զարդացման բախտը սերտորեն կապված է եղել ռուս մեծ ժողովրդի, աշխարհում առաջինը սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթական դրոշը բարձրացրած ռուսական հերոսական բանվոր դասակարդի բախտի հետ։ Դրա անմիջական արդյունքը հանդիսացավ նրանց հերոսական պայքարով Հայաստանում սովետական կարդերի հաստատումը, պայքար, որը իրականացվեց ռուս մեծ ժողովրդի, նրա փառապանծ 11-րդ բանակի զորամասերի օգնությամբ։ Ռազմական դաշինքի ամրապնդման հետ

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 22, թ. 113։

միասին, որը պահպանվեց և ավելի ամրապնդվեց հետագայում, տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում ավելի ու ավելի մեծ անհրաժեշտություն էր առաջանում տնտեսական դաշինքի հարցը, Սովետական Ռուսաստանի կողմից Հայաստանին ցույց տրվող օգնության հարցը։

Սովետական Ռուսաստանը առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, ինչպես մյուս բոլոր սովետական հանրապետություններին, նույնպես Սովետական Հայաստանին այդ դժվարին օրերին ցույց տվեց բարձրագույն օգնություն, նրան դուրս բերելով ծանր վիճակից և հնարավորություն տալով հետագա առաջընթացի համար։

Սովետական Ռուսաստանը այդ ժամանակ դեռ նոր էր դուրս եկել քաղաքացիական կռիվներից և դանվում էր տնտեսական ծանր պայմաններում։ Հայտնի է, որ Սովետական Ռուսաստանում «...1920 թվականին շատ նահանգներ բռնված էին սերերիությամբ։ Գյուղացիական տնտեսությունը ծանր դրության մեջ էր։

Էլ ավելի վատ էր արդյունաբերության դրությունը, որը քայքայման վիճակումն էր գտնվում»[1]։

Չնայած այդպիսի ծանր դրության, Սովետական Ռուսաստանը հսկայական նյութական օգնություն ցույց տվեց հայ ժողովրդին, ինչպես նաև մյուս ժողովուրդներին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման դեռ առաջին օրերին, 1920 թ. դեկտեմբերի 12-ին, Վ. Ի. Լենինի կողմից Հայաստանի Ռևկոմի անդամների ընդունելությունից հետո, որպես առաջին նյութական օգնություն, Սովետական Ռուսաստանի Ֆինժողկոմատը Վ. Ի. Լենինի կարգադրությամբ Հայաստանին բաց է թողնում երկու միլիարդ ռուբլի սովետական թղթադրամ (ոսկու հաշվով 600 հազար ռուբլի), որը Ա. Մռավյանը նույն թվականի դեկտեմբերի կեսերին Մոսկվայից բերում է Երևան[2]։ Միաժամանակ Սովետական Ռուսաստանի Պարենավորման Ժողովրդական Կոմիսարիատը սկսում է Հայաստան ուղարկել մեծ քանակությամբ հացահատիկ, մանուֆակտուրա և այլ ապրանքներ։

Ինչպես տեսանք նախորդ գլխում, 1921 թ. մարտին Վ. Ի. Լենինի ցուցումներով Ս. Օրջոնիկիձեն Զամարլու — Վեդիում շրջապատված Կարմիր Բանակի հայկական զորամասերին և Սովետական Հա-

---

[1] Համկ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 335։

[2] Տե՛ս Հայաստանի Ռևկոմի անդամ Ա. Մռավյանի հիշողություններ, «Խորհրդային Հայաստան», № 272, 29 նոյեմբերի, 1925։

յաստանի կառավարությանը օգնության կարգով ինքնաթիռով ուղարկել էր 47 կիլոգրամ ոսկի։

Դրանից հետո, 1921 թ. ապրիլի 15-ին, Ռոստովի Երկրային Տնտեսական խորհրդին ուղղած հեռագրում Անդրկովկասի սովետական ռևոլյուցիոներներին ցույց տրվելիք նյութական օգնության մասին Վ. Ի. Լենինը նշել է, որ պետք է ձեռք առնել վճռական միջոցներ Բաքվին և միաժամանակ Վրաստանին ու Հայաստանին ապրանքներ մատակարարելու համար[1]։

Կենսագործելով Վ. Ի. Լենինի ցուցումները, այդ ժամանակ Ռոստովի Երկրամասի պատմական-սովետական օրգանները մեծ բանակությամբ կենսամթերքներ են ուղարկում Սովետական Ադրբեջան, Վրաստան և Հայաստան։

Գործիքների և սերմացուի պակասության հետևանքով 1921 թ. գարնանացանը Հայաստանում կանդնած էր ձախողման վտանգի առաջ։ Նկատի ունենալով այդ, Մոսկվայի բանվորներն այդ ժամանակ օգնության կարգով Հայաստան են ուղարկում մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ։ Հ(բ)Կ կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը (հայերեն) Մոսկվայի բանվորների այդ օգնությունը այսպես է գնահատել.

«Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային Հայաստանի սերտ համերաշխության և համագործակցության մի փառավոր փաստ է այն նվերը, որը Մոսկվայի բանվորներն իրենց համեստ պահեստներից բաժին են բերում գյուղացիական Հայաստանին։

Հայաստանի աշխատավորությունն արդեն զգում է, որ իր թիկունքում կանգնած է վիթխարի Ռուսաստանի անհաղթելի ուժը և այդ հանգամանքը նոր եռանդ պիտի ներշնչի մեր բանվորա-գյուղացիությանը տասնապատկելու իր ջանքերը շինարարության աշխատանքի ասպարեզում»[2]։

1921 թ. ապրիլին Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետը որոշում է մեկ և կես միլիոն ռուբլի (ոսկով) վարկ բաց թողնել Հայաստանին՝ նրա կարիքները բավարարելու համար[3]։

Խոսելով Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաներին Ռուսաստանի կողմից ցույց տրված օգնության մասին, 1921 թ. հուլիսի 6-ին Վ(բ)Կ Թիֆլիսի կազմակերպության ընդհանուր ժողովում արված զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը նշել է. «Իմ ասա-

[1] Տե՛ս Ленинский сборник, XX, стр. 227—228.

[2] «Կոմունիստ», № 25, Երևան, 121, մայիսի 19։

[3] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184ա, թ. 1։

ցած տեղեկությունների համաձայն՝ Մոսկվայում օրերս որոշել են մի փոքրիկ օգնություն ցույց տալ Վրաստանին, Հայաստանին և Ադրբեջանին 6½ միլիոն ռուբլի ոսկու փոխառության ձևով։ Բացի դրանից, ևս իմացա, որ Վրաստանն ու Հայաստանը, ինչպես պարզվում է, նավթամթերքները Ադրբեջանից ձրի են ստանում—մի դեպք, որ աներևակայելի է բուրժուական, բնկուլ և տխրահռչակ «արտադին համաձայնությամբ» (Entente cordiale)[1] կապված պետությունների կյանքում։ Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, որ այդ և դրանց նման ակտերը ոչ թե թուլացնում, այլ ամրապնդում են այդ պետությունների անկախությունը»[2]։

Ռուս մեծ ժողովրդի և սովետական մյուս ռեսպուբլիկաների եղբայրական այդպիսի օգնությունը վճռական նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի ծանր դրության բարելավման դործում։ Այդ օգնության շնորհիվ սկսվեց օրըստօրե լավանալ երկրի տնտեսական վիճակը։ Լիկվիդացվում էր սովն իր ծանր հետևանքներով։ Վերացվում էին համաճարակային հիվանդությունները։ Բանվորներն ու գյուղացիները նորմալ հնարավորություններ էին ստանում խաղաղ աշխատանքների համար։

Ստեղծվում էին նպաստավոր պայմաններ երկրի քայքայված տնտեսության վերականդնման աշխատանքները լայն մասշտաբներով ծավալելու համար։

2. ԱՆՑՈՒՄԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

1920 թվականի վերջերին Սովետական Ռուսաստանում քաղաքացիական կռիվները հիմնականում ավարտվել էին։ Հետ էին մղվել ու ջախջախվել Անտանտայի երեք արշավանքները։ Սովետական Ռուսաստանը, նրա հերոսական Կարմիր Բանակը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռք էին բերել պատմական հաղթանակներ։ Սովետական դիվանագիտությունը հասել էր մի շարք հաջողությունների։ 1920 թվականի ընթացքում Սովետական Ռուսաստանը խաղաղության առաջին պայմանագրերը կնքեց Էստոնիայի, Լիտվայի, Լատվիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի հետ,

---

[1] Նկատի է առնված Անդլիայի և Ֆրանսիայի միջև 1904 թվականին կնքված ռազմա-քաղաքական համաձայնությունը, որը Անտանտայի (Անդլիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի իմպերիալիստական դաշինքը) կազմելու սկիզբ դրավ։ Տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 449, ծանոթագրություն 31։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 108—109։

որոնց այն ժամանակվա բուրժուական կառավարությունները դործ ելը հանդիսանալով ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և իմպերիալիստական մյուս պետությունների ձեռքում, նրանց հետ միացած կատաղի պայքար էին մղում Սովետական իշխանության դեմ:

Խաղաղության այդ առաջին պայմանագրերը արդյունք էին Սովետական պետության, նրա ռազմա-ծովային ուժերի հաղթանակի ընդդեմ օտարերկրյա իմպերիալիստական ինտերվենցիայի և սպիտակ գվարդիական բանդաների: Այդ հաղթանակները և խաղաղ դադարի հաստատումը հնարավոր դարձավ շնորհիվ այն բանի, որ ռազմաճակատում և թիկունքում սովետական ժողովրդի ու նրա հերոսական բանակի պայքարը զենքավարում էր Կոմունիստական պարտիան, որ անխախտ ռազմա-քաղաքական դաշինք էր հաստատավել մեր երկրի բանվոր դասակարդի և աշխատավոր գյուղացիության միջև, որ կապիտալիստական երկրների աշխատավորները չէին ցանկանում պայքարել Սովետների իշխանության դեմ, ավելին՝ մի շարք երկրներում (Գերմանիա, Հունգարիա, Իտալիա և այլն), այն ժամանակ նրանք զինված պայքարի դուրս եկան հանուն Սովետական իշխանության հաստատման իրենց մոտ, որ իմպերիալիստական լագերում ոչ միայն միասնություն չկար, այլ դնալով ավելի ու ավելի սրվում էին հակասությունները իմպերալիստական պետությունների միջև:

1921 թվականին ավելի են ամրապնդվում Սովետական երկրի միջազգային դիրքերը: Նույն թվականի մարտի 16-ին կնքվում է անգլո—սովետական առևտրական համաձայնագիրը: Դրանով իսկ ինտերվենցիայի ամենաակտիվ կազմակերպիչներից մեկը՝ Անգլիան փաստորեն ճանաչում է Սովետական Ռուսաստանին: Մյուսին նման համաձայնագիր է կնքվում նաև Սովետական Ռուսաստանի ու Գերմանիայի միջև: Իտալական կառավարությունը նույնպես բանակցություններ է սկսում Սովետական Ռուսաստանի հետ այդպիսի համաձայնագիր կնքելու համար: Այդ համաձայնագրերի կնքումը ցույց էր տալիս մեկ կողմից Անտանտայի իմպերիալիստների հույսերի խորտակումը տնտեսական բլոկադայի միջոցով սովետական ռեսպուբլիկաներին հարվածելու և ալբոլետարիատի դիկտատուրան տապալելու մասին, մյուս կողմից այդ դիկտատուրայի հարաճուն ամրապնդումը, նրա միջազգային կապերի ծավալումը և ազդեցության մեծացումը միջազգային ասպարեզում:

Եվրոպական երկրների հետ կնքած պայմանագրերին զուգընթաց, բացառիկ կարևորություն ունեցան 1921 թվականին Սովետա-

կան Ռուսաստանի կնքած պայմանագրերը Մերձավոր Արևելքի մի շարք երկրների՝ Թյուրքիայի, Իրանի և Աֆղանստանի հետ։ Այդ պայմանագրերը ունեցան հակակայսերական քաղաքական և միջազգային նշանակություն։ Պատմության մեջ առաջին անգամ մեծ տերությունը՝ Սովետական Ռուսաստանը իրավահավասարության հիմունքներով պայմանագրեր կնքեց Թուլ, կիսագաղութային երկրների հետ, որոնք իմպերիալիստական պետությունների կողմից միշտ դիտվել են որպես իրավազուրկ երկրներ՝ մշտապես ենթակա շահագործման և կեղեքման։

Դրանք Սովետական պետության կարևորագույն հաջողություններն էին արտաքին քաղաքականության բնագավառում։

Միջազգային իրադրության այդպիսի պայմաններում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական երկրում տեղի ունեցավ վճռական շրջադարձ՝ անցումը ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության։

1918—1920 թթ. քաղաքացիական կռիվներում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձևոք բերված պատմական հաղթանակները և դրանց շնորհիվ Սովետական Ռուսաստանի ներքին ու միջազգային դիրքերի ամրապնդումը հնարավորություն տեղծեցին խաղաղ շինարարական աշխատանքների անցնելու, երկարամյա պատերազմների հետևանքով երկրի քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու համար։ Սակայն խաղաղ շինարարության անցնելը վիճակված էր կատարել չափազանց դժվարին պայմաններում, որովհետև երկարատև պատերազմների հետևանքով երկրի տնտեսությունը գտնվում էր ծայրահեղ քայքայված վիճակում։

Գյուղատնտեսությունը Սովետական Ռուսաստանում գտնվում էր ծանր դրության մեջ։ 1920 թվականին նրա ընդհանուր արտադրանքը հավասար էր 1913 թվականի արտադրանքի մոտ կեսին։

Ավելի վատթար վիճակումն էր արդյունաբերությունը։ Ֆաբրիկանների ու գործարանների մեծամասնությունը չէր աշխատում։ Չուգունի ձուլումն ամբողջ 1921 թվականին կազմում էր նախապատերազմյան արտադրության մոտ 3 տոկոսը։ Խոշոր արդյունաբերության արտադրանքը 1920 թվականին յոթ անգամ պակաս էր նախապատերազմյան արտադրանքի համեմատ։ Քայքայված վիճակումն էին գտնվում տրանսպորտի բոլոր տեսակները։ Սրկրում հաճախակի սպառված էին ինչպես արդյունաբերական հումքի, վառելիքի, նույնպես սպառողական ապրանքների պաշարները։ Խիստ

պակաս էր զրպարտում հայի, Ճարպենկենի, մսի, հագուստի, կոշկեղենի և առաջին անհրաժեշտության շատ այլ մթերքների ու ապրանքների։

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը լինելով հանդերձ միակ ճիշտ քաղաքականությունը օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի տարիներին, այդ պատերազմները հաղթականորեն ավարտելուց հետո այլևս չէր համապատասխանում Սովետական երկրի խաղաղ զարգացման պահանջներին։ Քաղաքացիական պատերազմներն ավարտելուց հետո գյուղացիությունն սկսեց դժգոհել ռազմական կոմունիզմի քաղաքականությունից, առանձնապես պարենամթերքամից։ Նոր պայմաններում աշխատավոր գյուղացիության շահերը պահանջում էին, որպեսզի փոխվի այդ քաղաքականությունը, վերացվի պարենամթերքամը, ընդլայնվի հայի ազատ առևտուր և ծավալվի ապրանքափոխանակությունը գյուղի ու քաղաքի միջև։

Մեր երկրի բանվոր դասակարգը՝ կրելով քաղաքացիական պատերազմի հիմնական ծանրությունը, պատերազմն ավարտելուց հետո լծվեց խաղաղ անտեսական շինարարության աշխատանքներին։ Սակայն ռազմական կոմունիզմի տարիներին նրա որոշ խավերի մեջ ևս դժգոհություններ էին առաջացել։ Աշխատավարձը վճարվում էր ուշացումներով, կար գործազրկություն և աշխատանք հնշտությամբ չէր ճարվում։ Բանվորները զրազվում էին տնայնագործությամբ։ Նրանց մի մասը գյուղ էր գնում, դադարում էր բանվոր լինելուց։

Դասակարգային թշնամին ջանք չէր խնայում օգտագործելու Սովետական իշխանության ներքին դժվարությունները, գյուղացիության որոշ շերտերի մեջ առաջացած դժգոհությունները։ Այդ հողի վրա էլ թշնամուն հաջողվեց Սովետական Ռուսաստանի, Ուկրաինայի, Անդրկովկասի և սովետական մյուս ռեսպուբլիկաների մի շարք շրջաններում բարձրացնել կոնտրռևոլյուցիոն խռովություններ, որոնք սակայն արագորեն ջախջախվեցին Կարմիր Բանակի կողմից։

Նման պայմաններում Կոմունիստական պարտիան ձեռնամուխ եղավ Սովետական երկրի կյանքում նոր, վճռական շրջադարձ կատարելուն, տնտեսական շինարարության բոլոր հարցերի վերաբերյալ նոր դիրքավորում մշակելուն, որի գլխավոր նպատակն էր պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումը, նրա դասակարգային բազայի՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրա-

պնդումը, սոցիալիստական շինարարության հաղթական առաջընթացի ապահովումը և կապիտալիստական տարրերի լիկվիդացումը։

Անհրաժեշտ էր վերանել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի տնտեսական հիմքերը։ «Այժմ,— ասում էր Ի. Վ. Ստալինը, 1921 թվականին,— երբ պատերազմը վերջացել է, իսկ հողին այլևս վտանգ չի սպառնում, դաշինքի հին ձևն արդեն անբավարար է։ Դաշինքի ուրիշ ձև է հարկավոր։ Այժմ խոսքն արդեն այն մասին չէ, որ հողը պահենք գյուղացու ձեռքում, այլ այն մասին, որ ապահովենք գյուղացուն՝ այդ հողի արդյունքներն ազատ կերպով տնօրինելու իրավունքը։ ...Կրոնշտադտը (1921 թ. գարուն) մի նախազգուշացում էր, որը ցույց էր տալիս, թե դաշինքի նախկին ձևը հնացել է, թե հարկավոր է դաշինքի նոր, տնտեսական ձև, որն ապահովի թե՛ բանվորների, թե՛ գյուղացիների տնտեսական շահը»[1]։

Անհրաժեշտ էր վերականգնել խոշոր արդյունաբերությունը, լուծել արդյունաբերության էներգետիկ բազայի, առաջին հերթին էլեկտրիֆիկացիայի հարցը։

Երկրի էլեկտրիֆիկացման վիթխարի խնդրի լուծման համար անհրաժեշտ էր ամենից առաջ վերականգնել ածուխի, նավթի արդյունաբերությունը, մետալուրգիան և արդյունաբերության մյուս կարևորագույն ճյուղերը։ Անհրաժեշտ էր նաև լուծել հացի հարցը, լիկվիդացնել հացազրկությունը, որի համար մեր երկիրն ուներ բոլոր հնարավորությունները։

Խաղաղ տնտեսական շինարարությանն անցնելու կապակցությամբ առանձնապես սուր կերպով դրվեց պրոֆմիությունների դերի և մասնակցության հարցը այդ շինարարությանը։ Մարքսիզմ-լենինիզմը պրոֆմիությունները դնահատում է որպես կոմունիստական դաստիարակության դպրոց, որպես կոմունիզմի դպրոց, որոնց խնդիրն է ակտիվ կերպով մասնակցել սոցիալիզմի կառուցման գործին, ամրապնդել պետական կարգապահությունը և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։

Գնահատելով պրոֆմիությունների դերը և նշանակությունը սոցիալիստական շինարարության գործում, Ռկ(բ)Պ 9-րդ համագումարը նշել է, որ պրոֆմիությունները հանդիսանում են մի օղակ, որի միջոցով բանվոր դասակարգի ավանգարդը՝ Կոմունիստական պարտիան ամուր կապեր է հաստատում աշխատավորական լայն մասսաների հետ և ապահովում նրանց ակտիվ մասնակցությունը

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 138։

և ստեղծագործական աշխատանքը կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։

Պարտիայի բարնված ընդհատիները՝ Տրոցկին, Բուխարինը և ուրիշները, հանդես գալով պրոֆմիությունների վերաբերյալ կոմունիստական պարտիայի դրույթների դեմ, ցանկանում էին պրոֆմիությունները պետականացնել և պարտիայից անկախ դարձնել։ Նրանք ոչ միայն մերժում էին պարտիայի ղեկավարությունը պրոֆմիությունների նկատմամբ, այլև ամեն կերպ ձգտում էին հասնել այն բանին, որպեսզի պրոֆմիությունները հակադրեին պարտիային։ Միաժամանակ նրանք առաջարկում էին պրոֆմիություններում կիրառել միայն ռազմական և հարկադրանքի մեթոդներ, հրաժարվելով համոզելու, դիտակցականորեն դաստիարակելու մեթոդից։

Պարտիայի 10-րդ համագումարը (1921 թ. մարտ) ամփոփելով պրոֆմիությունների հարցի վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները, ձայների ճնշող մեծամասնությամբ հաստատեց պրոֆմիությունների մասին լենինյան պլատֆորմը։ Դրա հիման վրա համագումարն ընդունեց իր հայտնի որոշումը պրոֆմիությունների դերի և խնդիրների մասին պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում։ Համագումարը նշեց, որ պրոֆմիությունները լինելով պրոլետարիատի դիկտատուրայի հենարանը, նրանց անհետաձգելի և առաջնակարգ խնդիրն է հանդիսանում բոլոր բանվոր-ծառայողների զլխովին ընդգրկումը սոցիալիստական շինարարության մեջ[1]։

Հատկորեն նշելով բանվոր դասակարգի, նրա բազմամիլիոն մասսայական կազմակերպությունների՝ պրոֆմիությունների մասնակցության հարցը, նրանց տեղը և դերը երկրի քայքայված տնտեսության վերականգնման, կոմունիստական հասարակարգի կառուցման գործում, Վ. Ի. Լենինը միաժամանակ պարզ ու որոշակի կերպով ուրվագծեց աշխատավոր դյուղացիության մասնակցության ձևերը այդ գործում։ Դեռ 1920 թվականի դեկտեմբերին Վ. Ի. Լենինը գրեց նոր պայմանների համապատասխան բանվոր դասակարգի և դյուղացիության փոխհարաբերությունների փոփոխման անհրաժեշտությունը։ Այդ հարցը բազմակողմանիորեն նախապատրաստելու նպատակով, ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյի որոշմամբ 1921 թ. փետրվարի սկզբին կազմակերպվեց հատուկ հանձնաժողով։ Կոմունիստական պարտիայի 10-րդ համագումարի նախօրյակին, 1921 թ. փետրվարին, կուտակված հարուստ փորձի

[1] Տե՛ս ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, I մաս, Երևան, 1954, էջ 684—685։

և երկրի պրոլեյան պետական խորը վերլուծության հիման վրա, Վ. Ի. Լենինը գրեց գյուղացիների վերաբերյալ Բոլշևիկների նախնական սևագիրը — ուրվագիծը, որով ամենց հետևյալ դրույթները գյուղացիության նկատմամբ նոր քաղաքական գիծ մշակելու համար։

«1. Բավարարել անպարտիական գյուղացիության ցանկությունը մասնատումը (ավելցուկները վերցնելու իմաստով) հարի հարկով փոխարինելու մասին։

2. Նվազեցնել այդ հարկի չափը անցյալ տարվա մասնատրման համեմատությամբ։

3. Հավանություն տալ հարկի չափը հողատարածի չանասիրությանը համապատասխանեցնելու սկզբունքին՝ հարկի տոկոսը հողատարածի չանասիրությունը բարձրացնելու դեպքում իջեցնելու իմաստով։

4. Ընդլայնել հողատարածի կողմից իր հարկից ավելի մնացորդները տեղական տնտեսական շրջանառության մեջ օգտագործելու ազատությունը, հարկը արագ և լրիվ մուծելու պայմանով»[1]։

Ըստ էության Լենինյան այս դրույթները հանդիսացան ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու հիմնական դրույթները և կազմեցին Ռ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյի կողմից ստեղծված վերոհիշյալ հանձնաժողովի աշխատանքների հիմքը։ 1921 թ. փետրվարի 24-ին Ռ(բ)Պ Կենտկոմի պլենումը հաստատում է այդ հանձնաժողովի որոշման նախագիծը՝ պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու մասին։

Ռ(բ)Պ 10-րդ համագումարը քննության առնելով Վ. Ի. Լենինի զեկուցումն այդ հարցի վերաբերյալ, կարևորագույն որոշում ընդունեց պարենմասնատրումից պարենհարկին անցնելու մասին, ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելու մասին։ Տվյալ հարցի վերաբերյալ համագումարի ընդունած Լենինյան բանաձևը սահմանում էր, որ պարենհարկը ավելի քիչ պետք է լինի, քան եղել է պարենմասնատրումը։ Պարենհարկը պետք է համապատասխանի գյուղացիական տնտեսությունների եկամուտներին (հաշվի առնելով բերքը, տնտեսության մեջ անձերի քանակը, անասունների քանակը և այլն)։ Այդ հարկը լինելու էր պրոգրեսիվ հարկ։ Զբաղված գյուղացիական տնտեսությունները, մասամբ կամ ամբողջովին կարող էին ազատվել պարենհարկից, իսկ քիչ կարողության տեր կամ միջակ տնտեսությունները հարկը վճարելու էին ցածր դրույքով։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 154։

խոսելով նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու անհրաժեշտության մասին, համագումարում տված զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը նշել է, որ ներկայումս գլխավոր հարցը հանդիսանում է խոշոր արդյունաբերության վերականգնումը, խափանված հարկատրավոր գործարանների ու ֆաբրիկանների գործարկումը և երկրի տարբեր մասերում ցրված պրոլետարիատի համախմբումը, միաձուլումը։ Վ. Ի. Լենինը միաժամանակ ցույց է տվել, որ խոշոր արդյունաբերության վերականգնումը, որից և կախված է ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման գործը, հնարավոր չէ առանց գյուղացիության մասնակցության, առանց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման, որը որոշ չափով թուլացել էր ռազմական կոմունիզմի տարիներին։

Կոմունիստական պարտիան գտնում էր, որ անցնելով նոր տնտեսական քաղաքականությանը, մենք թույլ ենք տալիս որոշ նահանջ՝ թիկունքն ամրապնդելու, ուժերը վերադասավորելու և ավելի լայն մասշտաբներով կապիտալիստական էլեմենտների վրա գրոհելու համար։ Այսպիսով, նկատի ուներ երկակի բնույթ, մեկ կողմից որոշ, կարճատև նահանջ, կապիտալիստական տարրերի որոշ աշխուժացման թույլտվություն, իսկ մյուս կողմից՝ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդում, պրոլետարիատի դիկտատուրայի ուժերի վերադասավորում՝ նոր հարձակման անցնելու, կապիտալիստական էլեմենտներին լիկվիդացնելու և սոցիալիզմի կառուցումն ապահովելու նպատակով։ Այդ մասին Ի. Վ. Ստալինը գրում է. «Նկատի ունենալ պրոլետարական պետության հատուկ քաղաքականությունն է, որը նկատի ունի կապիտալիզմի թույլատրումը, հրամանատարական բարձունքները պրոլետարական պետության ձեռքին պահելու պայմանով, նկատի ունի կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարը, նկատի ունի սոցիալիստական տարրերի դերի աճումն ի վնաս կապիտալիստական տարրերի, նկատի ունի սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի դեմ, նկատի ունի դասակարգերի ոչնչացումը, սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը։ Ով չի ըմբռնում նէպի այս անցողիկ, երկակի բնույթը, նա հեռանում է լենինիզմից»[1]։

Ի. Վ. Ստալինի այս խոսքերը ջախջախիչ հարված էին տրոցկիստների, բուխարինականների և հակալենինյան մյուս տարրերի

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, Երևան, 1949, էջ 402—403։

նկատմամբ, որոնք կատաղաբար հանդես գալով պարտիայի դիմաց վոր դծի դեմ, նեպը համարում էին միայն նահանջ, չկանկնալով հաշվի առնել նրա մյուս՝ ամենահիմնական կողմը, որով ապահովվելու էր սոցիալիստական վկոնոմիկայի հիմքի կառուցումը։ Կոմունիստական պարտիան իր լենինյան կենտրոնական կոմիտեի դլխավորությամբ մերկայնելով ու ջախջախիչ հարվածներ հասցնելով տրոցկիստական, բուխարինական և մյուս թշնամիներին, որոնք դեմ էին պարտիայի դլխավոր դծին, հաստատ կերպով իրականացնում էր վերցրած նոր կուրսը՝ նոր տնտեսական քաղաքականություն, որը ապահովեց մեր երկրի արագ զարգացումը սոցիալիզմի ուղիով։

Ռկ(բ)Պ 10-րդ համադումարից հետո, 1921 թվականի ապրիլի 21-ին վ. Ի. Լենինն ավարտեց իր նշանավոր աշխատությունը «Պարենհարկի մասին», որի մեջ տրված է նոր տնտեսական քաղաքականության տեսական խորը վերլուծությունը որպես պրոլետարական պետության միակ ճիշտ քաղաքականությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում։ Աշխատավորական մասսաների ստեղծագործական ուժերի նկատմամբ մեծ հավատով ներշնչված լենինյան այս աշխատությունը ուրվագծել է սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրները պրոլետարիատի դիկտատուրայի երկրում։ վ. Ի. Լենինը նշում է, որ մեր երկրում սոցիալիզմի շինարարությունը կապված է հսկայական դժվարությունների հետ։ Այն ժամանակ Սովետական Ռուսաստանի դրության յուրօրինակությունը բնորոշվում էր նրանով, որ նրանում միահյուսվել էին հասարակական-տնտեսական հինդ կացութաձևեր (ուկլադներ) — նահապետական, այսինքն՝ նշանակալից չափով բնատնտեսային գյուղացիական տնտեսություն, մանր ապրանքային արտադրություն, մասնավոր-տնտեսատիրական կապիտալիզմ, պետական կապիտալիզմ և սոցիալիզմ։ Հասարակական-տնտեսական այդ հինդ կացութաձևերի մեջ գերակշռողը հանդիսանում էր մանր ապրանքային արտադրությունը։ «Պարզ բան է,— ասում է վ. Ի. Լենինը,— որ մանրագյուղացիական երկրում գերակշռում է, և չի էլ կարող չգերակշռել, մանրբուրժուական տարերքը. հողագործների մեծամասնությունը, և այն էլ վիթխարի մեծամասնությունը, մանրապրանքային արտադրողներ են»[1]։ Միաժամանակ վ. Ի. Լենինը նշում էր, որ մանր ապրանքային արտադրությունը մշտապես ծնում է կապիտալիզմ և այն էլ մասսայական մասշտաբով։ Եվ

[1] վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32,, էջ 421։

հենց դրանումն էին կայանում սոցիալիզմի կառուցման հսկայական դժվարությունները մանր բուրժուական երկրում։ Եթե կալվածատերերին ու կապիտալիստներին կարելի է և պետք է գշել և ոչընչացնել,— նշում էր Վ. Ի. Լենինը,— ապա բնակչության մեծամասնությունը կազմող մանր գյուղացիներին պետք է վերափոխել, վերադաստիարակել և աստիճանաբար ընդգրկել սոցիալիստական շինարարության մեջ։ Դրանից էլ հետևում է պարտիայի կարևորագույն խնդիրը՝ հաստատել ճիշտ փոխհարաբերություններ բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, ամրապնդել նրանց դաշինքը և ապահովել բանվոր դասակարգի ղեկավար դերը այդ դաշինքի մեջ։

«Պարենհարկի մասին» աշխատությամբ Վ. Ի. Լենինը թեորիապես հիմնավորեց նոր տնտեսական քաղաքականությունը, ցույց տվեց բանվոր դասակարգի և գյուղացիության միջև ամուր տնտեսական դաշինք հաստատելու ուղիները՝ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման և սոցիալիզմի կառուցման շահերին համապատասխան։ Դրանումն է կայանում այդ աշխատության պատմական խոշորագույն նշանակությունը։

Պարտիան գտնում էր, որ նոր տնտեսական քաղաքականության գլխավոր ստրատեգիական խնդիրը հանդիսանում էր մեր երկրում ժողովրդական տնտեսության սոցիալիստական հիմքի կառուցումը։ Իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ զարգացած ինդուստրիա, որովհետև սոցիալիզմի միակ նյութական հենարանը կարող է լինել խոշոր մեքենայական արտադրությունը, որի միջոցով հնարավոր է վերափոխել ամբողջ ժողովրդական տնտեսությունը, այդ թվում նաև հողագործությունը։ Այստեղից էլ հասկանալի է, թե ինչու նոր տնտեսական քաղաքականության վերաբերյալ իրենց աշխատություններում Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը վճռական նշանակություն են տվել զարգացած ինդուստրիայի ստեղծման հարցին։ Սակայն այդ հնարավոր չէր ստեղծել միանգամից։ Ժողովրդական տնտեսության սոցիալիստական հիմքի ստեղծման համար, ինդուստրիայի զարգացման համար անհրաժեշտ էր սկսել գյուղատնտեսությունից, ապահովելով նրա վերելքը, դրանով իսկ ապահովելով երկիրը հացի ու վառելիքի մեծ պաշարներով։ «Իսկ հացահատիկի արտադրությունն ու հավաքումը, վառելիքի մթերումն ու տեղափոխումը այլ կերպ չի կարելի ավելացնել,— գրում էր Վ. Ի. Լենինը,— եթե ոչ գյուղացիության դրությունը բարելավելով, նրա արտադրողական ուժերը բարձրացնելով»[1]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 435։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումով պետք էր շահագրգռվածություն ստեղծել գյուղացիական մանր ապրանքային արտադրության զարգացման համար: Այս տեսակետից վճռական նշանակություն ունեցան պարենամթերատուրքի փոխարինումը պարենհարկով և ազատ ապրանքափոխանակությունը՝ առևտրի ծավալումը քաղաքի և գյուղի միջև:

Ահա թե ինչու այդ ժամանակ Կոմունիստական պարտիան առանձին սրությամբ առաջ քաշեց առևտրի հարցը, առևտուր անել սովորելու հարցը: Առանց առևտրի ծավալման անհնարին էր ապրանքաշրջանառության ծավալումը քաղաքի և գյուղի միջև, անհնարին էր ամրապնդել գյուղի և քաղաքի կապը, բանվոր դասակարգի և գյուղացիության տնտեսական դաշինքը, անհնարին էր բարձրացնել գյուղատնտեսությունը, քայքայումից դուրս բերել արդյունաբերությունը:

Նոր տնտեսական քաղաքականության իրականացումը սակայն, երբեք չէր նշանակում, թե պարտիան ու Սովետական կառավարությունը զիջումներ էին անում կապիտալիստական էլեմենտներին և մոռացության էին տալիս նրանց հետագա լիկվիդացման խնդիրները: Ինչպես տեսանք, նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը նշանակում էր բանվոր դասակարգի զիջումը աշխատավոր գյուղացիության նկատմամբ, որի կենսական շահերը Սովետական իշխանության պայմաններում համընկնում են պրոլետարիատի շահերի հետ:

Այսպիսով, նրա Կոմունիստական պարտիայի իմաստուն քաղաքականության շնորհիվ ռազմական կոմունիզմի տարիներին ամրապնդվեց մեր երկրի բանվոր դասակարգի և գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը և դրա հիման վրա ապահովվեց հաղթանակը նևրերին և արտաքին թշնամիների դեմ, ապա նոր տնտեսական քաղաքականությունը ապահովեց բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր տնտեսական դաշինքը, որը վճռական ապդակ հանդիսացավ կոմունիստական հասարակարգի կառուցման գործում մեր երկրի հաղթական առաջընթացի համար, կապիտալիստական տարրերի լիկվիդացման համար:

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման կապակցությամբ Վ. Ի. Լենինը առանձնապես ընդգծում էր կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը, նշելով, որ կոոպերացիան հնշտացնում է միլիոնավոր բնակչության կազմակերպումը, ամբողջ բնակչության հետագա միավորումը: Իր հետագա աշխատություն-

ներում, հատկապես «Կոոպերացիայի մասին» հոդվածում, որի մասին կխոսենք իր տեղում, Վ. Ի. Լենինը զարգացրեց այդ խնդիրը, առաջ քաշեց ու հիմնավորեց նշանավոր կոոպերատիվ պլանը, որտեղ հանճարեղ խորաթափանցությամբ ուրվագծեց բազմամիլիոն գյուղացիական տնտեսությունների վերափոխման գործնական ուղիները դեպի սոցիալիստական տնտեսությունը։

Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է նոր տնտեսական քաղաքականության միջազգային խոշորագույն նշանակությունը, որպես մի բաղաքականություն, որը անխուսափելի է բոլոր կապիտալիստական երկրների համար կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում։ «Այն խնդիրը,— ասում է Վ. Ի. Լենինը,— որը մենք այժմ լուծում ենք, առայժմ — ժամանակավորապես — միայնակ, ինքնամ է զուտ ռուսական, սակայն իրապես այդ մի խնդիր է, որը կանգնելու է բոլոր սոցիալիստների առաջ։ Կապիտալիզմը կործանվում է. իր կործանման ընթացքում այն դեռ կարող է տառապանք ու հարյուրավոր միլիոն մարդկանց աննկատելի տանջանքներ պատճառել, սակայն նրան անկումից փրկել չի կարող և ո՛չ մի ուժ։ Նոր հասարակությունը, որը հիմնված կլինի բանվորների ու գյուղացիների դաշինքի վրա, անխուսափելի է։ Վաղ թե ուշ, քան տարի ավելի շուտ թե քան տարի ավելի ուշ, նա կգա, և նրա համար, այդ հասարակության համար մենք օգնում ենք բանվորների ս. գյուղացիների դաշինքի ձևեր մշակելու, երբ աշխատում ենք մեր նոր տնտեսական քաղաքականությունը իրականացնելու վրա։ Մենք այդ խնդիրը կլուծենք և բանվորների ու գյուղացիների դաշինքն այնքան ամուր կդարձնենք, որ աշխարհի երեսին ոչ մի ուժ այն չի քանդի»[1]։

Պաշտպանելով և զարգացնելով Լենինյան դրույթները նոր տնտեսական քաղաքականության մասին, որպես պրոլետարական պետության քաղաքականություն, որը նպատակ ունի ամրապնդելու բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, հաղթահարելու և լիկվիդացնելու կապիտալիստական տարրերը, Ի. Վ. Ստալինը նշել է, որ նոր տնտեսական քաղաքականությունը այս կամ այն չափով բացառիկ կապակցված անհրաժեշտ է բոլոր կապիտալիստական երկրների համար՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում։

Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի հանճարեղ կանխատեսություն-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 203։

ները նոր տնտեսական քաղաքականության միջազգային նշանակության մասին ներկայումս ամբողջությամբ հաստատվում են ժողովրդական դեմոկրատիայի երկրների փորձով, որոնք առաջնորդվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, օգտագործելով Սովետական Միության հարուստ փորձը և ստանալով նրա անշահախնդիր եղբայրական օգնությունը, առաջ են ընթանում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման ուղիով, ամեն կերպ ընդարձակելով ու ամրապնդելով արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև եղած շուկայական հարաբերությունները, ստեղծելով խոշոր ինդուստրիա և առաջ ընթանալով սոցիալիզմի ուղիով։

* * *

Կոմունիստական պարտիան նոր տնտեսական քաղաքականությունը համարելով կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում միակ ճիշտ քաղաքականությունը, որը այս կամ այն չափով անհրաժեշտ է բոլոր կապիտալիստական երկրների համար այդ անցման շրջանում, միաժամանակ ընդգծում է, որ այդ քաղաքականությունը ամենուրեք նույնությամբ, նույն մեթոդներով ու եղանակներով կիրառել չի կարելի, որ յուրաքանչյուր պարտիայում անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը, նրա կոնկրետ առանձնահատկությունները և դրանցից բխող դասակարգային փոխհարաբերությունները։

Հայաստանի Կոմունիստական պարտիան Ռկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի Անդրկովկասյան Բյուրոյի ղեկավարությամբ ձեռնամուխ լինելով նոր տնտեսական քաղաքականության կենսագործմանը Հայկական ՍՍՌ-ում, հասկանալի է, որ չէր կարող անտեսել այդ կարևորագույն մոմենտները։ Նրա առաջ հրամայական ու մարտական խնդիր էր դրված՝ առաջնորդվելով Սովետական Ռուսաստանի օրինակով, հաշվի առնելով նրա հարուստ փորձը, միաժամանակ չմոռանալ այն պայմաններն ու տարբերությունները, որոնք կային այն ժամանակ Հայաստանի (ամբողջ Անդրկովկասի) ու Սովետական Ռուսաստանի միջև ինչպես սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանի տեսակետից, նույնպես և նրանց վիճակի տեսակետից։ Միմիայն այդպիսի մոտեցումը կապահովեր նախապատրաստվող և ռևոլյուցիայի կյանքում տեղի ունենալիք վճռական շրջադարձի՝ նոր տնտեսական քաղաքականության անշեղ և հաջող իրականացումը։

Այս տեսակետից ամբողջ Անդրկովկասի և նրա մի մասը կազմող Սովետական Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների համար պատմական խոշորագույն նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի ծրագրային նամակը Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին, որը ցրել էր 1921 թ. ապրիլի 14-ին։

Վ. Ի. Լենինը այս պատմական նամակում հանճարեղ խորաթափանցությամբ շարադրել է նոր տնտեսական քաղաքականության իրականացման կոնկրետ ուղիները Անդրկովկասում, որն այն ժամանակ իր զարգացման մակարդակով և մի շարք այլ պայմաններով տարբերվում էր Սովետական Ռուսաստանից։

«... Ամենից ավելի կարևոր է,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որ Անդրկովկասի կոմունիստները հատկանան իրենց դրության, իրենց ռեսպուբլիկանների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՌ դրության ու պայմանների, հատկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[1]։

Այդ տարբերությունը Վ. Ի. Լենինը համարում էր հետևյալը. ա) Սովետական Ռուսաստանը տարիներ շարունակ կռվելով Անտանտայի ռազմական արշավանքների ու նրա բլոկադայի դեմ, ոչ մի տեղից քաղաքական ու ռազմական օժանդակություն չէր ստանում։ Իսկ Կովկասի սովետական ռեսպուբլիկաները այդպիսի օգնություն ստանում էին Սովետական Ռուսաստանից. բ) Կովկասի սովետական ռեսպուբլիկանները Սովետական Ռուսաստանի օգնության շնորհիվ կարող են ոչ մի վախ չզգալ Անտանտայից. գ) Կովկասը էլ ավելի գյուղացիական երկիր է, քան Ռուսաստանը. դ) Կովկասը կարող է ավելի արագ ու ավելի հեշտ կերպով «համակեցություն» ու ապրանքափոխանակություն գլուխ բերել կապիտալիստական Արևմուտքի հետ[2]։

Ընդգծելով, որ Կովկասը ավելի գյուղացիական երկիր է, քան Ռուսաստանը, Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներից պահանջում էր ոչ թե նույնությամբ ընդօրինակել ռուսական կոմունիստների տակտիկան, այլ ինքնուրույն կերպով հաշվի առնել նրա յուրօրինակության պատճառները, նրա ոգին և իմաստը՝ այն համապատասխանեցնելով տեղական պայմաններին։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։

2 Նույն տեղում, էջ 403։

680—10

Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին սովորեցնում էր, որ տնտեսության վերականգնման աշխատանքները պետք է սկսել պետական տնտեսությունից, ուռոդումից. «Իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ուռոդման խոշոր աշխատանքներ։ Ուռոդումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթափի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[1]։

Այդ պատմական նամակում Վ. Ի. Լենինը ընդգծում էր Կովկասի սովետական ռեսպուբլիկաների եղբայրական անխախտ դաշինքի անհրաժեշտությունը՝ որպես գլխավոր պայման Սովետական իշխանության պահպանման, նրա հետագա հզորացման համար։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով և ՌԿ(բ)Պ 10-րդ համագումարի պատմական որոշումներով, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը բազմակողմանիորեն նախապատրաստեց ու սկսեց անցումը նոր տնտեսական քաղաքականությանը։

Դաշնակների 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո Հայաստանում որոշ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու համար և սկսվեց այդ անցումը։ Ապրիլ, մայիս ամիսներին և հունիսի առաջին երկու տասնօրյակում ռեսպուբլիկայում կատարվեցին նախնական որոշ ձեռնարկումներ այդ ուղղությամբ։ Այդպիսի նախնական ձեռնարկումներից էին Պարենավորման ժողովրդական կոմիսարիատի նույն թվականի ապրիլի 16-ի հրամանը «Պարենային բռնագրավումների վերացման մասին» և դրա անմիջական շարունակությունը հանդիսացող ապրիլի 29-ի հրամանը ռեսպուբլիկայում «Բռնագրավումների ամբողջական վերացման մասին»։ Առաջին հրամանում ասված է. «Այսօրվանից վերացվում են ամեն տեսակի պարենի բռնագրավումները, նույնպես և կայուն գները շուկայում։

Բոլոր գնումները կատարել ազատ գներով»[2]։

Երկրորդ հրամանում ասված է, որ համաձայն Հայաստանի Ռևկոմի որոշման, արգելվում են ամեն տեսակի բռնագրավումները և խուզարկությունները թաքցրած ապրանքները հայտնաբերելու նպատակով։ Հրամանը վերջանում է հետևյալ խոսքերով. «Զան-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 404։

[2] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, Էջմիածին, 1921, էջ 17։

ցառուները կենթարկվեն ամենախիտ պատասխանատվության՝ ռազմա-հեղափոխական ժամանակի օրենքների համաձայն»[1]։

Այսպիսով, ՀՍՍՌ կառավարության կողմից 1921 թվականի ապրիլին հրատարակած այդ երկու օրենքներով, որոնք ըստ էության մեկը մյուսի շարունակությունն են հանդիսանում և կազմում են մի ամբողջություն՝ ա) վերացվում են ամեն տեսակի պարենի բռնագրավումները, բ) չեղյալ են հայտարարվում պարենի համար սահմանված պետական կայուն գները և գ) ամենախիտ պատասխանատվություն է սահմանվում այդ պահանջները խախտողների կամ չարաշահողների նկատմամբ։

Դրանք առաջին միջոցառումներն էին ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու ուղղությամբ։

1921 թ. հունիսի 24-ին, լույս է տեսնում Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի դեկրետը «Պարենատուրքի մասին»։ Ըստ այդ դեկրետի ռնտպուրլիկայի յուրաքանչյուր քաղաքացի, որ զբաղվում էր հացահատիկի, տեխնիկական և արդյունաբերական բույսերի մշակությամբ, ինչպես և մեղվաբուծությամբ, անասնապահությամբ ու կենդանաբուծությամբ, պարտավոր էր պարենմատնատրման փոխարեն պետությանը վճարել պարենհարկ։ Պարենհարկը սահմանվեց նվազագույն չափով, որի նպատակն էր բարելավել աշխատավոր գյուղացիության դրությունը և տպահովել նրա շահագրգռվածությունը գյուղատնտեսության արտադրության բարձրացման գործում։

Դեկրետի 2-րդ և 3-րդ կետերում ասված է. «2. Գյուղական տնտեսությունը խրախուսելու և իմպերիալիստական-աղդայնական կռիվներից չափազանց տուժած գյուղացիության կացությունը բարելավելու համար պարենային տուրքի չափերը սահմանվում են այնպես, որ չծանրաբեռնվի գյուղացու տնտեսությունը։

3. Սահմանվող տուրքը պետք է լինի պրոդրեսիվ։ Նա պիտի հավաքվի իբրև մի որոշ տոկոս կամ բաժին տնտեսության ընդհանուր արդյունքից, իսկ նրա չափը պիտի որոշվի բերքի հաշվառքով և սպառողների թվով»[2]։

Դեկրետը սահմանում էր, որ պարենհարկը տալուց հետո գյուղացու տրամադրության տակ էր մնում նրա տնտեսության ամբողջ ավելցուկը, որը նա կարող էր ազատ կերպով շուկա հանել։ «Պա-

[1] *ՀՍՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, էջմիածին, 1921, էջ 28։*

[2] *Նույն տեղում, էջ 62։*

բենի, հում նյութերի և ֆուրաժի այն բոլոր պաշարը, որ տուրքը վճարելուց հետո մնում է հողագործի մոտ,— ասված է դեկրետի 6-րդ կետում,— դանվում էր նրա լիակատար տրամադրության տակ և չի կարող ենթարկվել ոչ մի կողմից բռնադրավման»[1]։

Այսպիսով, Հայկական ՍՍՌ-ի ժողովրդական Կոմիսարների Սովետի հունիսի 24-ի դեկրետով օրենսդրական հաստատում է ստանում ռազմական կոմունիզմը նոր տնտեսական քաղաքականությամբ փոխարինելու շրջադարձը։ Իսկ դրա հիման վրա նույն թվականի հուլիս—օգոստոս ամիսներին լույս տեսած մի շարք նոր դեկրետներով մենք մշտական հետևից վերացվում էին ռազմական կոմունիզմի մնացորդները և սահմանվում են նոր տնտեսական քաղաքականության կիրառման կոնկրետ հարցերը։

3. ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՆԷՊԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջնորդվելով Կոմունիստական պարտիայի 10-րդ համագումարի պատմական որոշումներով, Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ բոլոր ուժերով ձեռնամուխ եղան ռեսպուբլիկայի քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման գործին, որի հաջող իրականացմանը խոշոր չափով նպաստեց նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը։

Այդ ժամանակ ներքին տնտեսական շինարարության գծով ամենակարևոր և միաժամանակ ամենադժվարին հարցերից մեկը 1921 թվականի գարնանացանի կատարման և բերքահավաքի կազմակերպման խնդիրն էր։ Զգացվում էր սերմացուի, ձկան ուժի, գործիքների խիստ պակասություն։ Եվ չնայած սուղ պայմաններին, Սովետական իշխանությունը աշխատավոր գյուղացիությանը խոշոր օգնություն կազմակերպեց։ Աշխատավորական գյուղացիական շատ տնտեսություններ պետությունից ստացան սերմացու, գործիքներ և ֆինանսական օգնություն։ Միայն Երևանի և Էջմիածնի գավառների գյուղացիությանը Հայաստանի Սովետական կառավարությունը 1921 թ. գարնանացանի ժամանակ տվեց 71 հազար փութ հացահատիկի սերմացու[2]։

---

[1] *ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, էջ 62։*

[2] *Տե՛ս Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժո-*

Պետությունն և Կարմիր Բանակի զորամասերի կողմից աշխատավոր գյուղացիական տնտեսություններին մեծ օգնություն ցույց տրվեց նաև նույն թվականի բերքահավաքի ժամանակ։ Հայկական ՍՍՀ Ռազմական Ժողովրդական Կոմիսարիատը հատուկ հրաման է տալիս՝ Կարմիր Բանակի զորամասերի կողմից աշխատավոր գյուղացիությանը օգնություն ցույց տալու մասին։ «Ջքավոր գյուղացիությանը՝ հացահատիկներն ու ցանքերը հավաքելու գործում օգնության հնարավորություն ստեղծելու նպատակով,— ասված է Ռազմական Ժողովրդական Կոմիսարի 1921 թ. հուլիսի 26-ի հրամանում,— հրամայում եմ պետական բոլոր մասերին, վարչություններին և հիմնարկներին, որ հնարավորության սահմաններում և առանց վնաս պատճառելու զորական պատրաստականությանը, տան իրենց մոտ եղած ձիերն ու բոլոր անասունները գյուղական շրջանային հեղկոմներին ըստ նրանց պահանջի, որ վերջիններս այն տան չքավոր գյուղացիներին հացահատիկներն ու ցանքերը հավաքելու աշխատանքում ժամանակավորապես օգտագործելու համար»[1]։

Մյուս կողմից Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետի հատուկ դեկրետով նույն թվականի մայիսին տեղի է ունենում Կարմիր Բանակի շարքերում գտնվող մեծահասակ մարտիկների զորացրում, որը իր հերթին զգալի չափով նպաստում է գյուղացիական տնտեսությունները աշխատավոր ձեռքերով ապահովելու գործին։

Իշխանության ձևավ առած միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսությունը որոշ չափով սկսում է աշխուժանալ։ Աշխուժացում է նկատվում արդյունաբերության, սովետական առևտրի ծավալման, ինչպես նաև տնտեսական շինարարության այլ բնագավառներում։ Ապրանքափոխանակության աշխուժացումով սկսում են ամրապնդվել գյուղի և քաղաքի կապերը, նոր նախադրյալներ ստեղծելով սոցիալիստական տնտեսության հետագա զարգացման համար։

1921 թվականի հուլիսի 2—7-ը Ի. Վ. Ստալինի մասնակցությամբ Թիֆլիսում տեղի է ունենում ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի պլենումը, որը քննարկում է Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաներին վերաբերվող կարևորագույն տնտեսական ու քաղաքական հարցեր։ Անդրկովկասի քաղաքական դրու-

---

դովրդական Կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը, Երևան 1923, էջ 67։

[1] Հայկական ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184, թ. 28—29։

թյան վերաբերյալ բանաձևում ալլենումը նշում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների հիմնական խնդիրները, չախչախիչ հակահարված հասցնելով բուրժուական նացիոնալիստներին, որոնք ամեն կերպ ձգտում էին ձախողել սոցիալիստական շինարարությունը և Անդրկովկասը դարձնել օտարերկրյա իմպերիալիստների գաղութ։ Պլենումի որոշմամբ կազմակերպվում է հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվում է մշակել պրակտիկ միջոցառումներ Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկանների տնտեսական գործունեության միավորման ուղղությամբ։ Միաժամանակ որոշումներ են ընդունվում Անդրկովկասյան երկաթուղիների և առանձին ռեսպուբլիկաններում գոյություն ունեցած տարբեր դրամանիշների մասին, հաստատելով երկաթուղիների միավորումը մեկ միասնական սիստեմի մեջ և Անդրկովկասյան միասնական դրամի ստեղծման անհրաժեշտությունը։

1921 թվականի հուլիսի 6-ին Ի. Վ. Ստալինը Վրաստանի Կոմունիստական պարտիայի Թիֆլիսի կազմակերպության ընդհանուր ժողովում զեկուցում է «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» հարցի մասին։ Այդ զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը շարադրել է Վրաստանի և Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների հերթական խնդիրները պարտիական, սովետական շինարարության, ինչպես նաև Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական համագործակցության ու ինտերնացիոնալ կապերի ամրապնդման ուղղությամբ։

Անհրաժեշտությունը ղեպքից Հայաստանում իրականացնելու վարչական նոր վերաբաժանում, որի նպատակն էր սովետական և պարտիական ապարատը ավելի մոտեցնել մասսաներին և ավելի ամրապնդել զեկավարությունը տեղերի նկատմամբ, դրանով իսկ ապահովել խաղաղ տնտեսական շինարարության կապակցությամբ առաջացած նոր ու դժվարին խնդիրների հաջող իրականացումը։ Վարչական նոր վերաբաժանումը նախապատրաստելու և իրականացնելու նպատակով Հայկական ՍՍՌ ժողկոմսովետի կողմից առանձնացվում է հատուկ հանձնաժողով։ Այդ հանձնաժողովի մշակած նյութերի հիման վրա 1921 թ. հուլիսի 20-ին ՀՍՍՌ ժողկոմսովետը ընդունում է դեկրետ «ՀՍՍՀ վարչական վերաբաժանումների մասին»։ Ըստ այդ դեկրետի ռեսպուբլիկայում կազմակերպվում են հետևյալ 8 գավառները.— Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր Բայազետի և Դարալագյազի։ Գավառները իրենց հերթին բաժանվելու գավառակների (շրջանների

ին)։ Բոլոր այդ 8 գավառների մեջ մտնում էին 33 գավառակ[1]։ Դաշնակցական բանդաններից ազատագրված Զանգեզուրը շուտով դառնում է ռևոլյուցիայի 9-րդ գավառը (6 գավառակներով)։ Այսպիսով, 1921 թ. կեսերին ռևոլյուցիան ուներ 9 գավառ՝ 39 գավառակներով։ Վարչական այդպիսի բաժանումը պարտիական և սովետական ապարատը էլ ավելի մոտեցրեց մասսաներին, նրանց աշխատանքներն էլ ավելի ճկուն դարձրեց։ Դրանով իսկ Ռևոլյուցիայում ավելի լավ հիմքերի վրա դրվեց տեղերի ղեկավարությունը կենտրոնից և ապահովվեց բանվորների, գյուղացիների ու աշխատավոր ինտելիգենցիայի ակտիվ մասնակցությունը ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։

1921 թ. գարնանացանը ավարտելուց հետո, ռևոլյուցիայում սկսվում են նախապատրաստական աշխատանքները պարենային հարկի դանձման ուղղությամբ։

Պարենհարկի դանձումը ռևոլյուցիայում անցնում է մեծ հաջողությամբ և տալիս լավագույն արդյունքներ։ 1921 թ. Հայաստանի Սովետական կառավարությունը որպես պարենհարկ գյուղից ստացել էր միայն 175 հազար փութ հացահատիկ[2]։ Այն ժամանակ, երբ երկրի տնտեսությունը դեռևս քայքայված վիճակումն էր գտնվում և գյուղատնտեսությունը նոր էր սկսել առաջին քայլերը վերականգնման ուղղությամբ, դա անկասկած, խոշոր հաջողություն էր, որը ձեռք բերվեց դասակարգային թշնամու կատաղի դիմադրության պայմաններում։ Կուլակությունը և նրա գործակալներ դաշնակցական թափթփուկները և մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերը բոլոր միջոցներով աշխատում էին ձախողել պարենհարկի դանձումը։ Հակասովետական ագիտացիային ղուզրնթաց, որոշ տեղերում կուլակները փորձում էին ոչ միայն չտալ պարենհարկը, այլև աշխատավոր գյուղացիներին տանել իրենց հետևից։ Սակայն Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ և նրա ծավալուն աշխատանքի շնորհիվ աշխատավորական մասսաները ամուր կերպով համախմբվում են պարտիայի և Սովետական իշխանության շուրջը և ջախջախիչ հակահարված են հասցնում կուլակային-դաշնակցական ու մյուս թշնամիների փորձերին։ «Պետք է ասել, որ

---

[1] Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, էջմիածին, 1921, էջ 83—84։

[2] Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը», Երևան, 1923, էջ 89։

պարենատուրքի հաջող դանձմանը նպաստել է, ամենից առաջ ինքը՝ ազգաբնակչությունը — կարդում ենք ՀՍՍՌ Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի հաշվետվության մեջ։ Այդ խնդրում ավելի քան մի ուրիշ տեղում ազգաբնակչությունը վերաբերվեց դիտակցաբար, դա ամենալավ ապրանքն է խորհրդային իշխանության բարձր ժողովրդականության»[1]։

1921 թ. նոյեմբերի 25-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը բամբակագործության մասին։ Ռևպուբլիկայում բամբակագործության զարգացմանը խթանելու նպատակով, դեկրետը նախատեսում է մի շարք կոնկրետ միջոցառումներ։

Նէպ-ին անցնելու հենց առաջին շրջանում, Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ձեռք առած միջոցառումների շնորհիվ միջակ գյուղացիությունը վճռական շրջադարձ կատարեց դեպի Սովետական իշխանությունը։ Դրան նպաստեցին հետևյալ հանգամանքները. ա) Սովետական իշխանությունը կարողացավ վերջնականապես լուծել հողային հարցը, որի համար գյուղացիությունը երկար ժամանակ պայքարել էր։ Նա աշխատավոր գյուղացիությանը ապահովեց հողով։ բ) Սովետական իշխանության բազմազգային հետևողական քաղաքականությունը, որով աշխատավոր գյուղացին հնարավորություն ստացավ ըրդվելու իր բարքայված տնտեսության վերականգնման աշխատանքներով։ գ) Նոր տնտեսական քաղաքականության անցնելով, Սովետական իշխանությունը կազմակերպեց ամենալայն օգնությունը աշխատավոր գյուղացիության նկատմամբ։ Պետության կողմից գյուղացիներին տրվեց սերմացու, վարկ, գյուղատնտեսական գործիքներ։ դ) Պարենհատկացման փոխարինումը պարենհարկով։ Սովետական իշխանության հարկային քաղաքականությունն այնպիսին էր, որ գնալով հարկի տեսակարար կշիռը գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ նվազում էր, հօգուտ աշխատավոր գյուղացիության։ ե) Գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների սովետական քաղաքականությունը, որի նպատակն էր մոտեցնել մկրատի ծայրերը, ամրապնդել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Սակայն վերականգնման շրջանի սկզբում գյուղատնտեսության

---

[1] «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը», 1923, էջ 91։

պարպումանը արգելակում էին մի շարք դժվարություններ։ Ինչպես տեսանք, Հայաստանում գյուղատնտեսությունը խիստ հետամնաց էր, մշակման գործիքները պրիմիտիվ էին, ցանքերը կատարվում էին առանց պարարտացման, առանց սերմացուման։ Ամբողջությամբ քայքայված էր առոգման սիստեմը։ Դրան համապատասխան էլ սահմանվում էր ցածր բերք։ Փոխանակությունը քաղաքի և գյուղի, ինչպես և առանձին շրջանների միջև, դեռ նոր էր սկսում ծավալվել։

Հաղթահարելով այդ դժվարությունները, գյուղը աստիճանաբար առաջ էր շարժվում։

Այդ ժամանակ Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության առաջ լուրջ խնդիր ծառացավ՝ նախատեսել գյուղատնտեսության զարգացման հետագա ուղիները և նշել միջոցառումներ գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակությունը ծավալելու, սոցիալիզմի հաղթանակը գյուղում ապահովելու համար։

Նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու կապակցությամբ Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակությունը կազմակերպելու և ընդարձակելու գործին, որը պետք է կատարվեր առաջին հերթին պետական և կոոպերատիվ առևտրի ծավալման միջոցով։ Իր կարևորությամբ և հրատապությամբ այդ հարցը նէպին անցնելու ժամանակ Վ. Ի. Լենինը համարում էր առաջնակարգ հարց։ «Սա իր կարևորությամբ ու հրատապությամբ ներկայումս առաջին հարցն է,— գրում էր Վ. Ի. Լենինը 1921 թ. մայիսին։— Նախ՝ առանց բանակին ու քաղաքային բանվորներին լրիվ ու կանոնավոր կերպով պարեն մատակարարելու՝ պետությունը չի կարող տնտեսական շինարարություն կատարել ընդհանրապես, իսկ ապրանքափոխանակությունը պետք է դառնա պարեն հավաքելու գլխավոր միջոցը։ Երկրորդ՝ ապրանքափոխանակությունն արդյունաբերության ու հողագործության հիշտ փոխհարաբերության ատուգումն է, ինչպես և հիմքը ամեն մի աշխատանքի, որի նպատակն է շատ թե քիչ կանոնավոր գործող գրամական սիստեմ ստեղծել... ապրանքափոխանակության հարցի վրա պետք է այժմ գլխավոր ուշադրությունը դարձնեն բոլոր տնտեսարհուրդները, տնտեսական շինարարության բոլոր օրգանները»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 491—492։

Այնուհետև Վ. Ի. Լենինը նշում է, որ այդ կապակցությամբ անհրաժեշտ է Սովետական պետության, նրա տնտեսական օրգանների կողմից ամեն կերպ խրախուսել մանր հողագործին,— որը պետությանը հարկ է տալիս և սոցիալիստական գործարանների հետ ապրանքափոխանակություն է կատարում,— նախաձեռնությունը, ձեռներեցությունը։ Դա մեծ չափով կնպաստի ապրանքափոխանակության ավելի ծավալմանը[1]։

Առաջնորդվելով Լենինյան ցուցումներով և ՌԿ(բ)Պ Կրպերի դրույթներով կոոպերացիայի մասին, ՌԿ(բ)Պ 9-րդ Համագումարը կարևորագույն որոշումներ ընդունեց ինչպես սպառողական կոոպերացիայի, նույնպես և գյուղատնտեսական և արհեստագործական կոոպերացիայի մասին։

Այդ որոշումների և Սովետական Ռուսաստանի փորձի հիման վրա Հայաստանում առաջին քայլերն են կատարվում ժողովրդի շահերին ծառայող սպառողական կոոպերացիայի կազմակերպման և նրա աշխատանքների ծավալման ուղղությամբ։ Սովետական կառավարության որոշմամբ 1920 թ. դեկտեմբերին տարբեր կոոպերատիվ կազմակերպությունների ամբողջ ցանցը միավորվում է Հայաստանի Սպառողական Կոոպերատիվների Միության՝ Հայկոոպի մեջ։ Այդ նույն որոշմամբ սահմանվում են Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի և Հայկոոպի փոխհարաբերությունները, որի համաձայն վերջինս համարվում էր Պարենավորման ժողովրդական կոմիսարիատի բաժիններից մեկը և գործում էր նրա ղեկավարությամբ։ Երբ դեռ շարունակվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, ռեսպուբլիկայում տիրող պարենային ծանր դրության պայմաններում սպառողական կոոպերացիան Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի ղեկավարությամբ կատարում էր կենսամթերքների բաշխման և մասամբ էլ՝ հայթայթման գործը։ 1921 թ. հունվարի 8-ին հրատարակվում է ՀՍՍՌ Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի հրամանը սպառողական կոոպերացիայի աշխատանքների ու խնդիրների մասին։ Հրամանում ասված է. «Աշխատավոր ազգաբնակության լայն մասսաների ջանքերով ստեղծված կոոպերատիվ կազմակերպությունները կարող են պետական այնպիսի խնդիրների իրագործման լավ ապարատ դառնալ, որ վերաբերում են կենսամթերքների, այնպես էլ գյուղական տնտեսության այլ և այլ մթերքների բաշխման և մա-

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 494։

սամբ էլ հայթայթման դործին»[1]։ Այնուհետև հրամանում ասված է, որ առաջնորդվելով ՌՍՖՍՀ 1919 թ. մարտի 20-ին ընդունված սպառողական կոոպերացիայի վերաբերյալ դեկրետով, և նպատակ ունենալով ամենաարագ ոտի հանել ու միավորել ամեն տեսակի կոոպերատիվ կազմակերպությունները, Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատը որոշում է՝

«1. Վարիչային և փոխատու խնայողական կոոպերատիվ ընկերությունները, ինչպես և նրանց միությունները ձուլել տեղերում դործող և բացվելիք սպառողական ընկերությունների և նրանց միությունների հետ... .

2. Պարտականություն է դրվում սպառողական ընկերությունների և նրանց միությունների վրա վարել վարիչային և փոխատու— խնայողական կոոպերատիվ ընկերությունների և նրանց միությունների դործառությունները ապրանքների դնման, արտահանման, միջնորդական դործողության և այլն վերաբերյալ...»[2]։

Հրամանը նախատեսում էր, որ սպառողական կոոպերատիվները ու նրանց միությունները կարող են կազմակերպել և զարդացնել արտադրական առանձին ձեռնարկություններ։

Այսպիսով, քանի դեռ կիրառվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, ռեսպուբլիկայի սպառողական կոոպերացիան դործում էր Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի սիստեմում և նրա հիմնական խնդիրն էր ամեն կերպ նպաստել կենսամթերքների բաշխման և մասամբ էլ հայթայթման դործին։ Շնորհիվ բոլոր ուժերի մոբիլիզացման, նա այդ դործը կատարեց հաջողությամբ։

Իսկ երբ Սովետական Հայաստանում տեղի ունեցավ անցումը ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականությանը, այդ նոր պայմաններում կառավարության որոշմամբ Հայկոոպը դուրս է դալիս Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի ցանցից և դառնում է ինքնուրույն կազմակերպություն։ Այժմ նա սկսում է ռեսպուբլիկայում խոշոր դեր խաղալ դյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակության ծավալման դործում։ Պետության օժանդակությամբ մեծանում են նրա նյութական հնարավորությունները,

---

[1] *ՀՍՆՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջմիածին, 1921, էջ 59։*

[2] *Նույն տեղում, էջ 59—60։*

ընդարձակվում շրջանառությունը և արտադրական ձեռնարկությունների գործունեությունը։

Այս տեսակետից խոշոր նշանակություն են ունենում Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի 1921 թ. հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի դեկրետները։ Հունիսի 3-ի դեկրետը սահմանում էր, որ Հայկոոպի ցանցում ընդգրկված սպառողական կոոպերացիան իրավունք ունի՝ ա) փոխանակել, դնել և վաճառել թե գյուղատնտեսական արտադրության մթերքներ, թե մասնավոր արդյունաբերական ձեռնարկությունների արտադրած ապրանքներ և թե անձնագործական արտադրանք, բ) սովետական օրենսդրության համաձայն կնքել պայմանագրեր գյուղական և քաղաքային արտադրող խմբերի, ինչպես նաև կոոպերատիվների հետ մթերքների և առարկաների պատրաստման, վերամշակման, դնման ու վաճառքի մասին, գ) կազմակերպել մթերքների ձեռք բերման և վերամշակման արտադրական ձեռնարկություններ և այլն[1]։

Այդ դեկրետից հետո 1921 թ. կեսերից մեծ թափով սկսվում են Հայաստանի սպառողական կոոպերացիայի՝ Հայկոոպի և նրա ստորին կազմակերպությունների վերակազմավորման և ուժեղացման աշխատանքները։ 1921 թ. վերջերին Հայկոոպի ցանցը ամբողջ հանրապետությունում իր մեջ ընդգրկում էր 121 միավոր, որոնք դասավորված էին հետևյալ ձևով. Լոռի—Փամբակի գավառում՝ 31 միավոր, Ալեքսանդրոպոլի գավառում՝ 20 միավոր, Նոր Բայազետի գավառում՝ 11 միավոր, Էջմիածնի գավառում՝ 6 միավոր և այլն[2]։ Ինչպես երևում է բերված թվերից, այն ժամանակ ամենից խիտ կոոպերատիվ ցանց ունեին Լոռի—Փամբակի և Ալեքսանդրոպոլի գավառները, իսկ դրանց կողքին մի շարք գավառներում դեռևս այդպիսին նոր էր կազմակերպվում կամ չկար (ինչպես օրինակ Դարալագյազի գավառը)։ Հայկոոպն իր բաժանմունքներն ուներ նաև եղբայրական սովետական հանրապետությունների տարբեր քաղաքներում (Թիֆլիսում, Բաթումում, Սուխումում, Բաքվում և այլն)։ Հայկոոպին տրված էր նաև արտաքին առևտրի իրավունք, որը իրականացնելու համար նա իր բաժանմունքներն ուներ Թավրիզում, Կոստանդնուպոլսում և Եվրոպայի մի քանի երկրներում։ Այդ ներկայացուցիչների միջոցով նա, պետական այլ կազմակերպությունների հետ

---

[1] Տե՛ս ՀՍՍՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 2, Էջմիածին, 1921, էջ 46—47։

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.», ժողովածու, Երևան, 1926, էջ 256։

միաժամին, իրականացնում էր ապրանքափոխանակության դործը կապիտալիստական մի շարք երկրների հետ։

1921 թ. վերջերին — 1922 թ. սկզբներին ռևսպուբլիկայի տարբեր գավառներում Հայկոոպը հիմնել էր նաև իր արտադրական որոշ ձեռնարկությունները, որոնք ընդդրկում էին հետևյալ ճյուղերը. օճառի մշակություն, ջուլհակային արհեստանոցներ, թիթեղի մշակություն, ծխախոտի և լուցկու գործարաններ, կոշիկակարանոց, սուրճի գործարան և մի շարք այլ մանր արհեստանոցներ ու ձեռնարկություններ[1]։ Այդ ձեռնարկությունների միջոցով սպառողական կոոպերացիան մեկ կողմից պարկ էր տալիս որոշ ապրանքների արտադրությանը, մյուս կողմից, որը ամենից դլխավորն է, ավելի ու ավելի ծավալում էր ապրանքափոխանակությունը քաղաքի և դյուղի միջև։ Բացի դրանից, Հայկոոպը կատարում էր աշխատավորական դյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ նյութեր և արտադրական որոշ գործիքներ մատակարարելու գործը։

1921 թ. օդոստոսի 10-ին Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետը դեկրետ է հրատարակում տնայնագործությանը և մանր արդյունաբերությանը օժանդակելու միջոցառումների մասին։ Այդ դեկրետով, նոր, ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում տնայնագործական կոոպերացիայի զարդացման համար։ «Կոոպերատիվ միություններին,— ասված է դեկրետում,— ինչպես և մանր ձեռնարկություններին թույլատրվում է վոխադրել ու ապրանքներ վաճառել Հայաստանի Հանրապետության ամբողջ տերիտորիայում՝ իրենց արտադրած նյութերից»[2]։ Դեկրետը սովետական տեղական մարմինների վրա պարտավորություն է դնում ամեն կերպ աջակցել տնայնագործներին, նրանց կոոպերատիվ միություններին՝ իրենց արդյունաբերության համար անհրաժեշտ հումքերի հայթայթման գործում, յուրաքանչյուր դեպքում առավելություն տալով կոոպերատիվ միություններին՝ մասնավոր արհեստավորների և ձեռնարկությունների համեմատ։

Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետը 1921 թ. օդոստոսի 14-ի դեկրետով ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհրդին կից հիմնվում է կոոպերացիայի, տնայնագործության և մանր արդյունաբերության վարչություն։ Այդ վարչության վրա խնդիր է դրվում նպաստել կոոպերացիայի, տնայնագործության և

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, Երևան, 1926, էջ 256։

[2] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, № 2, էջ 10։

մանր արդյունաբերության զարգացմանը, այն ծառայեցնելով սոցիալիստական տնտեսության շահերին[1]։

Նկատի ունենալով կոոպերատիվ շարժման հաջողությունները և կարևոր դերը ժողովրդական տնտեսության վերականգնման գործում, Հայկական ՍՍՀ ժողկոմսովետը, ի պարգևատրումն 1921 թ. հունիսի 3-ի դեկրետի, նույն թվականի նոյեմբերի 24-ին նոր դեկրետ է հրատարակում միասնական կոոպերացիայի մասին։ Դեկրետում ասված է.

«Հայաստանի կոոպերատիվ շինարարության հիմքում դնել միասնական կոոպերացիայի սկզբունքը, որ նկատի ունի համախմբել գյուղի և քաղաքի մանր աշխատավորական արտադրողներին, յուրացնելով սպառողական, գյուղատնտեսական ու արդյունաբերական կոոպերացիայի գործունեությունը»[2]։

Դեկրետը նախատեսում էր ամեն կերպ աջակցել մանր արտադրողներին կոոպերացիայի մեջ համախմբելուն, որի համար հանձնարարվում է պետական կազմակերպություններին. ա) պատվերը տալ կոոպերատիվներին՝ նրանց առավելություն տալով մասնավորի նկատմամբ, բ) պետական հում նյութից, արտադրական գործիքներից, սերմացուից, ինչպես նաև դրամական միջոցներից ավանսավորել կոոպերատիվ ընկերություններին, գ) մասնավոր անձանց նկատմամբ կոոպերատիվներին առավելություն տալ գործիքներ, շենքեր ձեռք բերելու և այլ խնդիրներում[3]։ Այդ որոշումների կենսագործումով 1921—1922 թվականներին ռեսպուբլիկայում դնալով, ավելի ու ավելի ամրապնդվում են սպառողական կոոպերացիայի և տնայնագործական կոոպերացիայի դիրքերը, ծավալվում են նրանց աշխատանքները։ Իսկ գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման և ծավալման ուղղությամբ Վ. Ի. Լենինի ցուցումների և ՌԿ(բ)Պ 9-րդ համագումարի որոշումների հիման վրա նախապատրաստական աշխատանքներն էին տարվում և հետագա տարիներին կոոպերացիայի այդ ձևը ևս ռեսպուբլիկայում տարածում է ստանում, որի մասին խոսք կլինի իր տեղում։

1922 թ. սեպտեմբերին կազմակերպվում է Հայպետառը (հետագայում վերանվանվեց Հայառ), որի առաջ խնդիր էր դրված միավորել Սովետական Հայաստանի ամբողջ պետական առևտու-

[1] Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, № 4, էջ 28։

[2] Նույն տեղում, № 13, էջ 133։

[3] ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1921 թ., № 13, էջ 133։

րը, լայնորեն ծավալել այն և կոոպերացիայի հետ միասին աստիճանաբար շուկայից դուրս մղել մասնավոր առևտրականներին— սպեկուլյանտներին։

1921—1922 թթ. Սովետական Հայաստանում որոշ աշխատանքներ են կատարվում ռադիոյի ուղղությամբ։ Պետության ձեռնարկած առաջին միջոցառումների և աշխատավոր զյուղացիության ակտիվ մասնակցության շնորհիվ նախկինում գոյություն ունեցած ռադիոյի տանցն այդ թվականներին հիմնականում վերականգնված էր։ Ռադիոլի տարածությունները 1922 թ. հասնում էին նախապատերազմյան ռադիոլի տարածությունների 90 տոկոսին։ 1922 թ. հոկտեմբերին սկսվում է Շիրակի ջրանցքի կառուցումը, որը ռեսպուբլիկայում առաջին խոշոր կառուցումն էր ոռոգման ուղղությամբ։

Առաջին քայլեր են կատարվում բամբակագործության վերականգնման ուղղությամբ։ Այդ տարիներին սկսվում են Երևանի էլեկտրակայանի ընդարձակման և նոր էլեկտրակայանների կառուցման նախապատրաստական աշխատանքները։ Ռեսպուբլիկայում տնտեսական շինարարությանը զարկ տալու նպատակով 1921 թ. հոկտեմբերին Հայկական ՍՍՌ ժողկոմսովետին կից կազմակերպվում է Տնտեսական խորհրդակցություն, որը միավորում և ղեկավարում է ռեսպուբլիկայի բոլոր տնտեսական հաստատությունների գործունեությունը։ 1921—1922 թթ. կարգի են բերվում և սկսում են աշխատել Երևանի դինու-կոնյակի «Արարատ» գործարանը, երկու կաշեգործարանները, և ուրիշ ձեռնարկություններ։ Սովետական Ռուսաստանից եղբայրական օգնության կարգով ստացված սարքավորումներով սկսում է ընդարձակվել պոլիգրաֆ արդյունաբերությունը։ 1922 թ. Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքի բանվորներից նվեր է ստացվում մի ամբողջ տեքստիլ գործարանի սարքավորում և հիմնադրվում է Ալեքսանդրոպոլի տեքստիլ գործարանը՝ հանդիսանալով Սովետական Հայաստանի նորաստեղծ արդյունաբերության առաջին ձեռնարկություններից մեկը։

1921 թ. Հայաստանում լայն չափով ծավալվում են պրոֆեսիոնալ կազմակերպությունները, որոնք սերտ կերպով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, խոշոր դեր են խաղում ժողովրդական տնտեսության վերականգնման գործում։ Սովետական կարգերի հաստատման դեմ առաջին ամիսներին կազմակերպվում են մի շարք պրոֆմիություններ, որոնց մի մասը փետրվարյան ավանտյուրայի հետևանքով դադարել էին գոյություն ունենալուց։ Այդ ավանտյուրայի լիկվիդացումից հետո, բայքայված պրոֆմիու-

թյունները Հայաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սկսում են վերականգնվել, կազմակերպվում են նորերը։ 1921 թ. կեսերին Հայաստանի գավառներում արդեն կազմակերպված էին պրոֆբյուրոներ, որոնց միջոցով պրոֆմիությունների շարքերում ընդգրկված էին հազարավոր աշխատավորներ։ 1921 թ. օգոստոսին, Հայաստանի պրոֆեսիոնալ միությունների առաջին համագումարի ժամանակ, Հայաստանում պրոֆմիությունների մեջ էին ընդգրկված մոտ 16000 աշխատավորներ։ Դա մի խոշոր բանակ էր, որը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ լծված էր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։

1921 թվականի օգոստոսի 20—25-ը Երևանում տեղի է ունենում Հայաստանի պրոֆմիությունների առաջին համագումարը, որին մասնակցում էին 198 դելեգատ։ Հակառակ սոցիալիստական և մյուս թափթփուկների փորձերի, որոնք ցանկանում էին պրոֆմիությունները հակադրել պարտիային, համագումարը՝ վճռական հակահարված տալով նրանց, հայտնում է իր պատրաստակամությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ է՛լ ավելի ուժեղացնելու պրոֆեսիոնալ կազմակերպությունների աշխատանքները ժողովրդական տնտեսության վերականգնման գործում։ Պրոֆեսիոնալ և տնտեսական շինարարության վերաբերյալ իր մի շարք որոշումներով համագումարը կոնկրետ կերպով նշել է պրոֆմիությունների խնդիրները երկրի տնտեսության վերականգնման գործում։

Այդ համագումարից հետո ռեսպուբլիկայում պրոֆմիությունների աշխատանքները նոր թափ են առնում։ Ջգալի գործ է կատարվում պրոֆմիությունների ամրապնդման, նրանց անդամների կողմից դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունք ունենալու, աշխատանքային կարգապահության ամրապնդելու և այլ բնագավառներում։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ պրոֆմիությունները է՛լ ավելի ակտիվ կերպով լծվում են ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։

1921 թվականի օգոստոսի 23—24-ին Երևանում տեղի է ունենում Հայաստանի Կոմերիտմիության 1-ին համագումարը, որը կարևոր դեր է կատարում կոմերիտմիության աշխատանքների բարելավման, ամրապնդման և ժողովրդական տնտեսության վերականգնման գործում նրա մասնակցությունը ուժեղացնելու տեսակետից։ Համագումարի որոշմամբ Հայաստանի Կոմերիտմիությունը

միացվում է Ռուսաստանի Կոմերիտմիությանը, համարվելով նրա մարտական ջոկատներից մեկը:

1921 թ. վերջերին հատատած կերպով ամրապնդվել էր նաև Սովետական Հայաստանի արտաքին դրությունը:

Քեմալական Թյուրքիան չհրաժարվելով Անդրկովկասի նկատմամբ իր նվաճողական ձգտումներից, ակտիվ փորձեր էր կատարում Անդրկովկասի նախկին բուրժուա-նացիոնալիստական կառավարություններին — դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների հետ կնքված պայմանագրերը գործողության մեջ պահելու ուղղությամբ: Սովետական Հայաստանի նկատմամբ նա մեծ ջանքեր էր գործադրում իրագործելու 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Թյուրքիայի և դաշնակների միջև կնքված պայմանագիրը:

Հայաստանի Սովետական կառավարությունը, հակառակ Թյուրքիայի կառավարության պահանջներին, հրաժարվեց ճանաչելու Ալեքսանդրապոլի պայմանագիրը թե՛ իրավական և թե՛ փաստական առումով: Սովետական Ռուսաստանի և Թյուրքիայի միջև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագիրը հատատելով սովետա-թյուրքական սահմաններն Անդրկովկասում, կրկին անգամ ընդգծում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի ոչնչությունը լինելը:

Ինչպես ակնհայտ, այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի ներքին և միջազգային դրությունը ակնառու կերպով ամրապնդվել էր: Արդեն ավարտվել էին քաղաքացիական կռիվները հեղափոխական Կարմիր Բանակի և սովետական ժողովրդի պատմական մեծ հաղթանակներով: Սովետական Ռուսաստանի հաղթանակները քաղաքացիական կռիվներում ցույց տվեցին պրոլետարիատի դիկտատուրայի կենսունակությունն ու անպարտելիությունը: Այդ հաղթանակներով միաժամանակ ամրապնդվեց Անդրկովկասի սովետական հանրապետությունների ներքին և միջազգային դրությունը, հանրապետություններ, որոնք իրենց բախտը կապել էին ռուս մեծ ժողովրդի բախտի հետ: Թյուրքիան ամեն կերպ ձգտում էր պայմանագիր կնքել Անդրկովկասի սովետական հանրապետությունների հետ առանձին-առանձին, նպատակ ունենալով թելադրել նրանց իր կամքը: Սակայն այդ ևս նրան չհաջողվեց:

Այդպիսի իրադրության մեջ, 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ, մեկ կողմից՝ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի սովետական

ռեսպուբլիկաների, մյուս կողմից Թյուրքիայի քեմալական կառավարության միջև կնքվում է պայմանագիր, որը համապատասխանում էր նույն թվականի մարտի 16-ին Մոսկվայում Սովետական Ռուսաստանի և Թյուրքիայի միջև կնքված պայմանագրի սկզբունքներին։

«Թյուրքիայի ազգային մեծ ժողովրդի կառավարությունը,— ասված է Կարսի պայմանագրի առաջին հոդվածում,— և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի խորհրդային հանրապետությունների կառավարությունները համարում են ոչնչացված և ուժը կորցրած այն բոլոր դաշնագրերը, որոնք կապվել են (կնքվել են — Ս.. Հ.) դաշնագրվող կողմերի տերիտորիաների վրա անցյալում գործիշխանություն բանեցնող կառավարությունների միջև այդ տերիտորիայի վերաբերյալ, նմանապես այն դաշնագրությունները, որոնք կապվել են երրորդ պետությունների հետ և որոնք վերաբերում են Անդրկովկասյան հանրապետություններին»[1]։

Կարսի պայմանագրով վերջնականապես ոչնչացված համարվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, որի վրա Թյուրքիան մեծ հույս ուներ։ Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասյան եղբայրական ռեսպուբլիկաների միասնական ուժով սանձահարվեցին Թյուրքիայի զավթողական ախորժակները։

Այսպես է դնահատել Ս. Օրջոնիկիձեն Կարսի պայմանագիրը.

«... Թյուրքիայի հետ միասնական պայմանագիր կնքելը մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը հանդես են գալիս որպես միասնական ամբողջություն, որպես միասնական եղբայրական ռեսպուբլիկա»[2]։

1921 թ. նոյեմբերին Հայաստանի բանվորներն ու գյուղացինները նախապատրաստվում էին առնելու երկրում սովետական կարգերի հաստատման առաջին տարեդարձը։ Այդ կապակցությամբ ռեսպուբլիկայի բոլոր գավառներում, շրջաններում, քաղաքներում ու գյուղերում սկիզբ է առնում աշխատանքային նոր խանդավառություն։ Նույն թվականի նոյեմբերի 16-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը — նոյեմբերի 29-ը՝ 1920 թ. դաշնակների բուրժուա-նացիոնալիստական կառավարության տապալման և Հայաստանում սովետական

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184, թ. 53։

[2] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 109—110։

կարգերի հաստատման օրը, Հայաստանի բանվորների և գյուղացիների համաժողովրդական տոն հայտարարելու մասին։

Նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորները մեծ խանդավառությամբ տոնում են իրենց ազատագրման առաջին տարեդարձի տոնը։ Ամենուրեք, բոլոր արտադրական ձեռնարկներում, հիմնարկներում, գյուղերում հրավիրում են աշխատավորների ժողովներ, ուր նրանք ծանոթանում են Սովետական իշխանության գոյության առաջին տարում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական Հայաստանում ձեռք բերված առաջին տարվա հաջողություններին։

Հայաստանի աշխատավորների տոնը նրանց հետ միասին նշում են նաև եղբայրական սովետական ռեսպուբլիկաների բանվորներն ու գյուղացիները։

Այդ տարեդարձի առթիվ Ռ.Կ(բ)Պ Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի անունից ողջույնի հեռագիր է ուղարկում Ս. Օրջոնիկիձեն, իսկ Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի անունից՝ Ս. Մ. Կիրովը։

* * *

Քաղաքացիական կռիվների հաղթական ավարտումից հետո, երբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան խաղաղ տնտեսական շինարարության՝ երկրի քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքներին, արդեն հնարավորություն ստեղծվեց ևևմտները վոխարինելու բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայիններին դեպուտատների Սովետներով։ Սովետները՝ շնորհիվ իրենց կառուցվածքի և կազմակերպչական ճկունության, է՛լ ավելի ամուր կապեր պետք է հաստատեին մասսաների հետ և, որպես իշխանության օրգաններ, պետք է կազմակերպեին, ղեկավորեին և առաջ մղեին աշխատավորների պայքարը պատերազմի վերքերը բուժելու, մեր քայքայված երկիրը առաջավոր սոցիալիստական ռեսպուբլիկա դարձնելու համար։

Ալ. Մյասնիկյանը, անդրադառնալով այդ հարցին, Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարում (1922 թ., հունվար) սովետական շինարարության մասին տված զեկուցման մեջ ասել է. «Մեր աշխատանքի երկրորդ շրջանը տևել է հուլիսից մինչև աշուն (1921 թ. —Ա.. Հ.), երբ Թշնամիներին հաղթել էինք և

ապահովությամբ կարող էինք շինարար աշխատանքի անցնել: Բայց արդյունավետ աշխատանք կատարելու համար մենք կազմակերպված խորհրդային մարմիններ ու տպարաններ չունեինք, ուստի այս շրջանում պետական օրգանների կազմակերպման հարցն ամենահերթականն էր...

Եթե մեր կոմիսարիատները որոշ պակասություններ ունեցել են, այդ պակասությունների մի մասն առաջացել է մեր հեղկոմների սխատեմից: Իսկ այժմ, երբ մենք անցնում ենք խորհուրդների սիստեմին, ապա կարելի է հուսալ, որ նման սխալները վերացվելու են»[1]:

1921 թ. նոյեմբերի 19-ին հրապարակվում է ՀՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումը՝ Սովետների ընտրությունները նախապատրաստող և անցկացնող ռևպուբլիկական կենտրոնական հանձնաժողով կազմակերպելու մասին: Այդ որոշման հիման վրա նման հանձնաժողովներ են կազմակերպվում նաև քաղաքներում ու գավառներում: Նոյեմբերի 20-ին լույս է տեսնում դեպուտատների Սովետների ընտրության ժամանակավոր կանոնադրությունը: Այդ կանոնադրությունը ուժի մեջ էր մնալու մինչև բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների համահայաստանյան առաջին համագումարը, որ հաստատվելու էր Սովետական Հայաստանի առաջին Կոնստիտուցիան:

Կանոնադրությունը նախատեսում էր, որ գյուղերում, քաղաքներում, գավառամասերում և գավառներում իշխանության օրգանները հանդիսանում են սովետները, որոնք հաշվետու են իրենց ընտրողների առաջ: Համապատասխան դեպուտատների սովետներն իրենց աշխատանքները (համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում) իրականացնում են գործադիր մարմինների՝ գյուղսովետի, քաղսովետի, գավառամասային սովետի, գավառային գործադիր կոմիտեի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեի միջոցով:

Բացի ընտրությունների կարգից, կանոնադրությունը տալիս էր Սովետների անելիքները[2]: *Այդ կանոնադրությունը հանդիսացավ Հայկական ՍՍՌ ապագա Կոնստիտուցիայի հիմքը:*

Վերհիշյալ կանոնադրության հիման վրա 1921 թ. դեկտեմբերին Սովետական Հայաստանի քաղաքներում, գյուղերում, գա-

[1] *Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 185, թ. 89:*

[2] *Տե՛ս ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, № 13, 1921, հոդվ. 87:*

վառամասերում և գավառներում տեղի են ունենում գնդուտատների Սովետների ընտրությունները, որոնք անցնում են աշխատավորական մասսաների ամենաակտիվ մասնակցությամբ։ Ամենուրեք ընտրությունները տալիս են լավագույն արդյունքներ։ Աշխատավորները սկսե կերպով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, վճռական հակահարված են հասցնում կուլակային-նացիոնալիստական տարրերին, որոնք միացած դաշնակ թափթփուկների հետ, ջանք չէին խնայում ձախողելու Սովետների ընտրությունները։

ՀԿ(բ)Պ 1-ին համագումարը (1922 թ., հունվար) լսում է Ալ. Մյասնիկյանի զեկուցումը «Սովետական շինարարության և Անդրկովկասյան ֆեդերացիայի» հարցի վերաբերյալ։ Այդ զեկուցման առթիվ ընդունված բանաձևում ռևկոմներից ընտրովի մարմինների՝ Սովետներին անցնելու մասին ասված է. «Մեկ տարվա ընթացքում Հայաստանում Սովետական իշխանությունը կազմակերպչորեն հենվել է ռևկոմների վրա։ Ռևկոմային՝ այսինքն ոչ ընտրովի սիստեմը թելադրվել է երկրում անխուսափելի դեպքերի ընթացքով — կոնտրռևոլյուցիոն ընդվզումներով, քաղաքացիական կռվով, որը բնակչությանը և երկրի տնտեսական կյանքին հասցրել է քայքայման։ Երկրի աննորմալ կյանքը անխուսափելի էր դարձրել իշխանության արտակարգ, նշանակովի օրգանների ստեղծումը։

Քաղաքացիական կռիվները ավարտելով, մենք անցել ենք խաղաղ շինարարությանը, որը Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին հնարավորություն է տալիս ցուցաբերել իրենց կամքը Սովետական ռեսպուբլիկայի ղեկավարման գործում։ Այդ կամքը արտահայտվեց այն լայն ընտրությունների ընթացքում, որոնք վերջերս տեղի ունեցան Հայաստանի բոլոր անկյուններում և ռեսպուբլիկան ծածկեցին Սովետական իշխանության և գործկոմների ընտրովի օրգանների խիտ ցանցով։

Ընտրովի Սովետների առաջ ներկայումս դրված են հսկայական խնդիրներ՝ իշխանությունը մասսաներին մոտեցնելու միջոցով այդ մասսաներին դարձնել երկրի իսկական շինարարության մասնակիցներ։ Այդ գործը ընկնում է մեր պարտիայի վրա՝ որպես բանվոր դասակարգի ավանգարդի»[1]։

1921 թ. դեկտեմբերի 27-ին, առաջինը Հայաստանում բաց-

---

[1] ՍՄԿՊ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ՀԿ(բ)Պ 1-ին համագ. ոստպր. հաշվետվություն, էջ 41։

վում է Ալեքսանդրոպոլ քաղաքի բանվորների, դյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետի նիստը։

Նիստը լսում է զեկուցումներ ընթացիկ մոմենտի և Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման մասին և իր ընդունած որոշումով միանում է ֆեդերացիայի կազմակերպման համար ծավալված համաժողովրդական շարժմանը։ Նիստին ողջույն են հղորդում Կարմիր Բանակի ներկայացուցիչները, որոնք հայտարարում են, որ Կարմիր Բանակը կազմ ու պատրաստ է պահպանելու ռևոլյուցիայի նվաճումները թե՛ ներքին և թե՛ արտաքին թշնամիներից։

Երևան քաղաքի բանվորների, դյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետի առաջին նիստը բացվում է 1922 թ. հունվարի 11-ին։ Մայրաքաղաքի Սովետի առաջին նիստը ազատագրված հայ ժողովրդի անունից հատուկ կոչ է ընդունում ուղղված բոլոր երկրների բանվորներին։

«Առաջին անգամ իր պատմության մեջ,— ասված է այդ կոչում,— հայ ժողովուրդը իսկական անկախություն ձեռք բերեց, աշխատավոր մասսաների անկախությունը՝ իշխող դասակարգերի տնտեսական շահագործումից և քաղաքական ու բարոյական ճնշումից։ Մեր երկրի բանվորության և աշխատավոր դյուղացիության կյանքում նոր դարաշրջան բացվեց՝ հին աշխարհից հրաժարվելու և ինքնուրույն քաղաքական դոյության շրջան։ Սառնդուն մասսայական աշխատանք սկսվեց՝ նպատակ ունենալով վերականգնել քայքայված տնտեսությունը, ամուր հիմքերի վրա դնել խորհրդային իշխանությունը, տարածել կոմունիզմի վեհ դաղափարը։ Կարճ ժամանակամիջոցում, մի քանի ամիսների ընթացքում,— մեզ հաջողվեց մեր դիրքերն այնքան ամրապնդել և ժողովրդական լայն մասսաների մեջ այնպիսի վստահություն և համակրություն ձեռք բերել, որ երկրի ներսից մեզ որևէ վտանգ սպառնալ չէր կարող... Աղքատ ու քայքայված մեր երկրում մենք ոդով արի ենք, չենք վհատվում, համարձակ ու եռանդուն կերտում նոր կյանք ենք ստեղծում, մեր կոմունիստական հասարակությունը կառուցում»[1]։

Այս խոսքերում դեղեցիկ կերպով արտահայտված են Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և աշխատավոր դյուղացիության կամքն ու վճռականությունը ռևոլյուցիայում սոցիալիստական շինարարությունը հաստատ քայլերով առաջ տանելու մասին։

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114 գ. թ. 85—86։

Խնդրով զեկուցում Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման մասին, Սովետը մայրաքաղաքի բոլոր աշխատավորների անունից միահամուռ կերպով արտահայտվում է Անդրֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտության օգտին։

1922 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը Երևանում տեղի է ունենում Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարը։ Իր քննած հարցերով և ընդունած որոշումներով համագումարը առանձնահատուկ տեղ է գրավում Սովետական Հայաստանի պատմության մեջ։ Նա քննարկել է հետևյալ հարցերը. 1. ՀՍՍՌ կառավարության հաշվետվությունը. 2. ՀՍՍՌ Կոնստիտուցիայի ընդունումը. 3. Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիայի կազմակերպման մասին. 4. Տնտեսական քաղաքականության մասին. 5. Գյուղական տնտեսությունը և հողային քաղաքականությունը. 6. Կոոպերացիայի մասին. 7. Պարենավորման ժողովրդական Կոմիսարիատի զեկուցումը. 8 Սոցիալական ապահովության դերը Հայաստանում. 9. Կարմիր Բանակի մասին և 10. Հայաստանի Կենտգործկոմի ընտրությունը[1]։

Ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորների անունից համագումարը սրտագին ողջույնի և երախտագիտության խոսք է ուղղում Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ Մ. Ի. Կալինինին, հանձին նրա ռուս մեծ ժողովրդին, որի եղբայրական օգնությամբ հայ ժողովուրդը վրիվեց կործանումից և ձեռք բերեց իր ազատությունն ու անկախությունը։

«Հայաստանի խորհուրդների համագումարը առաջինն է,— ասված է ողջույն-դիմումում,— որ իրականացնում է երկրի իշխանությունը ամբողջ աշխատավորության հանձնելու փառավոր ժամը և հիացմունքով ու սիրով լի իր հայացքը, իր հոգու անկեղծ խոսքն է ուղղում բանվորա-գյուղացիական Ռուսաստանին։ Համագումարը գիտակցում է այն օգնությունը, որ խորհրդային Ռուսաստանը ցույց է տվել մեր երկիրը Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստների ու նրանց ծառա դաշնակիների լծից ազատվելու գործում։ Համագումարը իր շնորհակալությունն է ուղղում Ռուսաստանի փառավոր Կարմիր Բանակին, որը Հայաստանի մասսաներին աջակցեց

---

[1] Տե՛ս Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբրանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, Պետհրատ, Երևան, 1922։

խորհրդային իշխանության կարմիր պրոշակը բարձրացնելու համար»[1]։

Համագումարի աշխատանքներին մասնակցում էր և այնտեղ ելույթ ունեցավ հայ ժողովրդի լավագույն բարեկամ Ս. Օրջոնիկիձեն, որին դևպուտատները դիմավորում են անսահման խանդավառությամբ։ Ջևամ մթնոլորտում Ս. Օրջոնիկիձեն վրացական աշխատավորության անունից ողջույն է հասցրում Սովետների համահայաստանյան առաջին համագումարին ու վերջինիս միջոցով՝ ռևսպուբլիկայի բոլոր բանվորներին, դյուղացիներին և աշխատավոր ինտելիգենցիային։

«Ընկերներ, երկրորդ անգամ է, ինչ ինձ վիճակվում է լինել այս դահլիճում[2],— ասում է իր ողջույնի խոսքում Ս. Օրջոնիկիձեն։— Առաջինն այն ժամանակ, երբ խորհրդային իշխանությունը նոր էր սպատելու այս երկրի աշխատավորությանը, ինձ հաջողվեց հանդիպել հայ աշխատավորությանը, որը լցված էր անզուսպ էնտուզիազմով Դավաճան դաշնակներին վերջնական հարված տալուց հետո ձեր երկրի խորհուրդների այս առաջին համագումարին վրաց աշխատավորության կողմից տալիս եմ խոնարհ ողջույններ և եղբայրական բարևներ։... Խորհրդային իշխանությունն նկատի ունենալով, որ իրոք, նա Հայաստանի աշխատավորությանը փրկարարից սպատելու համար է եկել։ Ապրելջանում մենք որոշեցինք օգնական ուժ տալ հայ աշխատավորությանը և նա մի կամք դարձած և միայն մի դնդի օժանդակությամբ սպատագրեց իրեն։ Արտաքին բոլոր ուժերը, բացի Ռուսաստանից, Հայաստանը թ նկատի ունենին որպես շահագործության մի առարկա, իսկ Ռուսաստանի վերաբերմունքն արդեն պարզ է։

... Ես ձեզ կոչ եմ անում ընկերներ, նորոգել քանդված Հայաստանը, վերականգնել նրա տնտեսությունը, օգնել Կարմիր Բանակին»[3]։

Սովետական Հայաստանի կառավարության մեկ տարվա գործու-

---

[1] *Տե՛ս ՀՍԽՀ բանվորների, դյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, Պետհրատ, Երևան, 1922, էջ 148—149։*

[2] *Համագումարի նիստերը տեղի են ունեցել այն ժամանակվա Պետական թատրոնի, այժմ Երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքում։*

[3] *Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, դյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, էջ 115—116։*

նեության մասին համագումարը լսում է ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանի զեկուցումը։ Վերլուծելով երկրի դրությունը, զեկուցման մեջ Ալ. Մյասնիկյանը ցույց է տալիս, որ մեկ տարվա ընթացքում Կոմունիստական պարտիայի զեկավարությամբ հանրապետությունում ղղալի աշխատանքներ են կատարված տնտեսության վերականգնման ուղղությամբ։

Չնայած սուղ միջոցներին և ծանր պայմաններին,— նշել է նա,— Սովետական Հայաստանի կառավարությունը իր գոյության մեկ տարվա ընթացքում ղղալի օգնություն է ցույց տվել աշխատավոր գյուղացիներին՝ տնտեսության վերականգնման գործում։ Կառավարությունը նրանց բաց է թողել 60 հազար փութ սերմացու, 100 հազար փութ հացահատիկ, Սովետական Ռուսաստանից ստացված 6000 վանդակ տեսակի դյուղատնտեսական գործիքներ[1]։

Ղեկավարած Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության մեծ ուշադրությունից և հոգատար վերաբերմունքից դեպի աշխատավոր գյուղացիությունը, վերջիններս մեծ ջանքեր գործադրելով, առաջ էին տանում գյուղատնտեսության վերականգնման աշխատանքները։

Խոսելով արդյունաբերության մասին, կառավարության հաշվետվության մեջ Ալ. Մյասնիկյանը նշել է, որ կարգի են բերվել և սկսել են աշխատել արդյունաբերական ձեռնարկությունների որոշ մասը (կոնյակի, օղու, գինու, կաշվի գործարանները և այլն)։ Միաժամանակ նա ընդգծել է, որ Հայաստանի Սովետական կառավարության և տնտեսական կազմակերպությունների կարևորագույն խնդիրն է առաջիկայում լուրջ աշխատանքներ կատարել հանրապետության արդյունաբերության կարևորագույն ճյուղի՝ պղնձարդյունաբերության վերականգնման ուղղությամբ։

Զեկուցման մեջ ցույց են տրված նաև սպառողական կոոպերացիայի (Հայկոոպի) առաջին հաջողությունները գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակության ծավալման ուղղությամբ։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումով ամրապնդվում էր բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը։ Գնալով, բարելավվում էին աշխատավորության նյութական պայմանները, հաստատ քայլերով առաջ էր գնում կուլտուրական revolyutsiyան։

---

[1] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, էջ 17։

Սակայն ռեսպուբլիկայում սոցիալիստական շինարարության հետագա արագ առաջընթացը պահանջում էր եղբայրական է՛լ ավելի սերտ դաշինք, տնտեսական, քաղաքական և ռազմական ծավալուն համագործակցություն հաստատել սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ։

Հայաստանի բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարի կարևորագույն խնդիրներից մեկն էր քննարկել և հաստատել Սովետական Հայաստանի առաջին Կոնստիտուցիան (Հիմնական օրենքը)։ Դա խոշորագույն պատմական իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում։ Հայ ժողովուրդը՝ աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկը, դարեր շարունակ ըրկված էր ազատությունից և քաղաքական ինքնուրույնությունից։ Իսկ օտարերկրյա իմպերիալիստների կամակատար, բանվորների ու գյուղացիների կատաղի թշնամի դաշնակների տիրապետության ժամանակ նա ոչ միայն ըրկված էր իր տնտեսությունը և կուլտուրան պահպանելու հնարավորությունից, այլև արագությամբ գնում էր գեղի կործանում։

Սովետական կարգերի հաղթանակը հայ ժողովրդին փրկեց կործանումից և նրան ավեց պետականություն, սեփական իրավահավասարություն և տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման լայն հնարավորություններ։ Դրա հիման վրա 1922 թ. Սովետների Համամիությունյան առաջին համագումարը ընդունեց Սովետական Հայաստանի Կոնստիտուցիան, առաջին Կոնստիտուցիան Հայ ժողովրդի շուրջ 3000 տարվա ամբողջ պատմության մեջ։

ՀՍՍՌ Կոնստիտուցիայի մասին համագումարը լսում է Ս. Մռավյանի զեկուցումը։ Զեկուցման մեջ նա ցույց է տալիս Սովետական Հայաստանի Կոնստիտուցիայի էությունը՝ որպես նոր իշխանության նոր Կոնստիտուցիա, որը արմատապես տարբերվում է բուրժուական ամեն տեսակի կոնստիտուցիաներից, որոնք օրենսդրությամբ ամրապնդում են շահագործողների տիրապետությունը և վերջիններիս կողմից մլիոնավոր մասսաների ամենավայրագ շահագործումը։

Հայկական ՍՍՌ Կոնստիտուցիան մշակվել էր Վ. Ի. Լենինի գրած «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների հռչակագրի», Ի. Վ. Ստալինի՝ «Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Ռեսպուբլիկայի Կոնստիտուցիայի ընդհանուր դրույթները» պատմական դոկումենտների և դրանց հիման

վրա մշակված ՌՍՖՍՌ-ի 1918 թ. ընդունված Կոնստիտուցիայի սկզբունքներով։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարում ընդունված Հայկական ՍՍՌ առաջին Կոնստիտուցիան բաղկացած էր 5 հատվածից, որոնց մեջ պարունակվում էր 12 գլուխ, 89 հոդվածով։

Կոնստիտուցիան օրենսդրականորեն ամրապնդեց 1920 թ. նոյեմբերի 29-ին և 1921 թ. քաղաքացիական կռիվներում Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ Հայաստանի բանվորների և գյուղացիների ձեռք բերած պատմական հաղթանակները։

Կոնստիտուցիայի առաջին հատվածում տրված են Սովետական իշխանության հիմնական սկզբունքները։ «Հայաստանի ապստամբ բանվորների և աշխատավոր գյուղացիների կամքով Հայաստանը 1920 թ. նոյեմբերի 29-ին հայտարարված է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։

Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդներին»[1]։ Դրան հաջորդող հոդվածներում ասված է, որ ռեսպուբլիկայում բոլոր աշխատավորները, անկախ ազգությունից ու դավանանքից, օգտվում են հավասար իրավունքներով, որ բոլոր աշխատավորների համար աշխատանքը պարտադիր է, «ով չի աշխատում, նա չի ուտի»։

Հողը, նրա ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղիներն ու խոշոր արդյունաբերությունը հայտարարվեցին սոցիալիստական սեփականություն։ Շահագործող դասակարգի ներկայացուցիչները և ուրիշ աշխատանքով ապրողները զրկվեցին քաղաքական իրավունքներից։ Դրա փոխարեն Կոնստիտուցիան ապահովում էր բոլոր հնարավորությունները աշխատավորների քաղաքական ակտիվության բարձրացման համար — նիստեր, ժողովներ, միտինգներ, ցույցեր կազմակերպելը, մամուլի օգտագործումը և այլն։ Հատուկ ևկեղեցու անջատումը պետությունից, դպրոցի անջատումը եկեղեցուց։ Կոնստիտուցիան սահմանեց, որ ռեսպուբլիկայում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության համար կըս-

---

[1] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, էջ 133։

տեղծվեն բոլոր հնարավորությունները ձրի կրթության ստանալու համար։

Չեղյալ հայտարարվեցին Հայաստանի վերաբերյալ բոլոր միջազգային պայմանագրերը, որոնք կնքվել էին նախկին կառավարությունների կողմից։ Վերացնելով ամեն տեսակի ազգային ինչնամանքը, Կոնստիտուցիան հաստատեց, որ ռեսպուբլիկայի տերիտորիայում գտնվող բոլոր ազգերի համար կստեղծվեն զարգացման լայն հնարավորություններ, որ հարևան բոլոր ժողովուրդների հետ կհաստատվեն բարի-դրացիական հարաբերություններ։

Կոնստիտուցիայում ձևակերպված է սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործում ռեսպուբլիկայի քաղաքացիների սրբազան պարտականությունը։ «Բանվորների և չունևոր գյուղացիների դասակարգային հեղափոխական դիկտատուրան ապահովելու և արտաքին ու ներքին հակահեղափոխությունից պաշտպանելու նպատակով,— ասված է 9-րդ հոդվածում,— կազմվում է ՀՍԽՀ Կարմիր Բանակը, բոլորի համար պարտադիր դարձնելով զինվորական ծառայությունը»[1]։

Հաստատելով հին դատարանի վերացումը, Կոնստիտուցիան սահմանեց, որ սովետական կարգերում արդարադատությունը հանձնարարվում է նոր, ժողովրդական դատարանին, որի խնդիրն է պաշտպանել Սովետական պետության և ժողովրդի շահերը։

Կոնստիտուցիայի 11-րդ հոդվածը խոսում է երկրում պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման մասին, օրենսդրականորեն ամրապնդելով այն։

Երկրորդ հատվածը, որը ընդգրկում է 2-րդ — 7-րդ գլուխները, նվիրված է Սովետական իշխանության կենտրոնական ու տեղական օրգաններին և նրանց ֆունկցիաներին։ Ըստ 12-րդ հոդվածի, ռեսպուբլիկայի իշխանության գերագույն օրգանը համարվում էր բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Սովետների համագումարը։ Համագումարը ընտրում էր Կենտրոնական Գործադիր Կոմիտե, որն իշխանության գերագույն օրգանն էր համարվում Սովետների համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում։ Նա հաշվետու էր Սովետների համագումարի առաջ, որը, ըստ Կոնստիտուցիայի, գումարվելու էր տարին մեկ անգամ։ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կազմում էր ռեսպուբլիկայի

[1] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի արձանագրություն, էջ 135։

կառավարությունը՝ ժողովրդական Կոմիսարների Սովետը։ Ըստ Կոնստիտուցիայի, ռեսպուբլիկայում պետք է լինեին հետևյալ ժողովրդական կոմիսարիատները — Արտաքին գործերի, Ներքին գործերի, Արդարադատության, Ժողովրդական Լուսավորության, Հողագործության, Ռազմական, Ֆինանսների, Պարենավորման, Արտաքին առևտրի, Սոցիալական Ապահովության, Փոստ-հեռագրի, Առողջապահության, Բանվորա-գյուղացիական Տեսչության, Աշխատանքի և Հաղորդակցության ճանապարհների։ Բացի թվարկված ժողովրդական կոմիսարիատներից, Կոնստիտուցիայի համաձայն գոյություն ուներ նաև Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհուրդ, որի խնդիրն էր միավորել և ղեկավարել ժողովրդական տնտեսության բոլոր հիմնական ճյուղերը։

Կոնստիտուցիայի համաձայն Սովետական իշխանության տեղական օրգաններն էին համարվում բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների քաղաքային ու գյուղական Սովետները, իսկ գավառներում՝ գավառային գործադիր կոմիտեները։ Կոնստիտուցիայով սահմանված նորմայի համաձայն, Սովետների գավառային համագումարի համար գյուղական վայրերի 1000 բնակչից ընտրվում էր մեկ պատգամավոր, իսկ քաղաքի 200 ընտրողից մեկ պատգամավոր։ Ընտրական նման նորմաների սահմանումը ելնում էր քաղաքի և գյուղի բնակչության դասակարգային կազմից և նպատակ ուներ ապահովելու բանվոր դասակարգի ղեկավար դերը Սովետական իշխանության օրգաններում։

Կոնստիտուցիայի երրորդ հատվածը (8—10-րդ գլուխներ) խոսում էր ընտրական իրավունքի և ընտրությունների կարգի մասին։ Չորրորդ հատվածը (11-րդ գլուխ)՝ բյուջեի մասին, իսկ հինգերորդ հատվածը (12-րդ գլուխ)՝ Ռեսպուբլիկայի պետական զերբի և դրոշի մասին։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների առաջին համագումարը միահամուռ կերպով հաստատում է ռեսպուբլիկայի առաջին Կոնստիտուցիան, որը պրոլետարական դեմոկրատիզմի ամուր հիմքերը դրեց։

Այսպիսով, Հայկական ՍՍՌ առաջին Կոնստիտուցիան հենվելով քաղաքական բնագավառում սոցիալիզմի հաղթանակի վրա, Սովետական Ռուսաստանի Կոնստիտուցիայի օրինակով օրենսդրականորեն ամրապնդեց.

ա) Հայաստանում պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը՝ սովետական պետական կառուցվածքի ձևով, որպես աշխար-

հում ամենադեմոկրատական պետական կառուցվածքը, որը կոչված է իրականացնելու կոմունիստական հասարակարգի կառուցումը,

բ) բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հաղթանակը շահագործող դասակարգերի նկատմամբ,

գ) բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հիմունքները՝ բանվոր դասակարգի հեգեմոնիայով,

դ) ազգությունների իրավահավասարության և եղբայրական համագործակցության հիմունքները:

ե) Սովետական իշխանության խաղաղասիրական քաղաքականությունը:

Կոնստիտուցիան սահմանեց Սովետական իշխանության՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի կառուցվածքի հետևյալ հիմնական սկզբունքները. բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների միջոցով աշխատավորական լայն մասսաների ընդգրկումը պետության կառավարման գործում, մշտական կապի ամրապնդումը և ապահովումը սովետական ապարատի և ժողովրդի միջև, ռևոլյուցիոն օրինականության ամրապնդումը, շահագործողների անպայման ճնշումը, աշխատավորական մասսաների համար սահմանված դեմոկրատական իրավունքների և ազատությունների իրականացման նպատակով նյութական նախադրյալների ստեղծումը, սովետական պետական ապարատի ստեղծումը դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով և պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականությունը:

Հայկական ՍՍՌ առաջին Կոնստիտուցիան խոշորագույն նշանակություն ունեցավ աշխատավորական մասսաներին՝ Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության շուրջը էլ ավելի սերտ կերպով համախմբելու գործում: Նա միաժամանակ մեծ նշանակություն ունեցավ կապիտալիստական տարրեր երկրներում տառապող բազմահազար հայ աշխատավորության քաղաքական ինքնագիտակցության բարձրացման գործում՝ մեր ազատ և ինքնուրույն, սովետական ռևոլյուցիոն հանրապետությունների եղբայրական ընտանիքում սոցիալիզմ կառուցող Հայրենիքի մեծ ուժի ցուցադրման գործում:

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարը քննարկման առանձին հարց դարձրեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը, որի մասին զեկուցումով հանդես եկավ նույնպես Ա. Մռավյանը: Այդ հարցի մասին համագումարը ընդունում է կարևոր որոշում, անհրաժեշտ համարելով Անդրկովկասյան

Ֆեդերացիայի կազմակերպումը։ Այդ մասին մանրամասն կխոսենք իր տեղում։

Այսպիսով, իր քննարկած հարցերով և ընդունած որոշումներով Հայաստանի Սովետների առաջին համագումարը կարևորագույն տեղ է գրավում հայ ժողովրդի սովետական շրջանի պատմության մեջ, կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարի պատմության մեջ։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարում քննության է առնվում ՀԿՊ կենտկոմի հաշվետվությունը, լսվում են զեկուցումներ համառուսական պարտիական կոնֆերանսի մասին, սովետական շինարարության և Անդրկովկասյան ռևսպուբլիկաների Ֆեդերացիայի կազմակերպման, դյուղում կատարվող աշխատանքի և մի շարք այլ հարցերի մասին[1]։

ՀԿՊ կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ ընդունած բանաձևում համագումարը նշել է, որ Հայաստանի Կոմունիստական պարտիայի շարքերը միասնական են և որ այդ հանգամանքը հիմք կծառայի նրա ապագա գործունեության համար՝ ապահովելով ռևսպուբլիկայի աշխատավորության պայքարի զեկավարությունը սոցիալիզմի կառուցման գործում, ընդդեմ ինչնամական ամեն տեսակի տարրերի՝ դաշնակների, տրոցկիստների և ուրիշների։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի շարքերի միասնության ամրապնդմանը, նրա կուռ համախմբմանը Ռկ(բ)Պ Անդրկովկասյան երկրային կոմիտեի և Ռկ(բ)Պ կենտկոմի շուրջը, խոշոր չափով նպաստեց պարտիայի շարքերի առուգումն ու զտումը, որը կատարվեց Ռկ (բ)Պ 10-րդ համագումարի որոշման համաձայն։ Այդ զտումը Ռուսաստանում տեղի ունեցավ 1921 թվականին, իսկ Անդրկովկասում՝ 1922 թվականի հունվար-փետրվարին։

Կոմունիստական պարտիան միշտ էլ մեծագույն ուշադրություն է դարձրել իր շարքերի անպարտությանը, դրանով իսկ անխախտելի միասնության պահպանման և ամրապնդման վրա։

Կոմունիստական պարտիան աճել և ամրապնդվել է ամեն կարգի օպորտունիստների, կապիտուլյանտների, դավաճանների ու թշնամիների դեմ մղվող անհաշտ պայքարում։ Նա միշտ էլ իր շարքերը մաքրել է հակապարտիական հայացքներ ունեցող տարրերից։ «Պարտիան մի կամավոր միություն է,— ասում է Վ. Ի. Լենինը,—

---

[1] Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվը։ Ռկ(բ)Պ Առաջին համագումարի պաշտոնական հաշվետվությունը։

որն անխուսափելիորեն կկազմալուծվեր, սկզբում դադարեցնելս, իսկ հետո նաև նյութապես, եթե ոչ նա իրեն չմաքրեր այն անդամներից, որոնք հակասպարտիական հեղայրներ են բարեցում»[1]:

Ինչպես հայտնի է, անցումը ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականությանը խոշորագույն և վճռական շրջադարձ էր Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության կյանքում: Պարտիայի շարքերում խցկված ու թաքնված թշնամական տարրերը, օպոզիցիանները, բուխարինականները, բուժժուական նացիոնալիստները և մյուս թափթփուկները, արտահայտելով սովետական կարգերի ներքին և արտաքին հակառակորդների ձգտումները, այդ շրջադարձի հետևանքով սկսեցին ղեկը բռնազբոսիկ ֆրակցիոն պայքարով հանդես եկան պարտիայի ղեկավար դծի դեմ, նպատակ ունենալով պարտիան վերածել դիսկուսիոն ակումբի, խամաքել պարտիայի միասնությունը, քայքայել այն և կործանել պրոլետարիատի դիկտատուրան:

Ռ Կ(բ)Պ 10-րդ համագումարում պարտիայի միասնության վերաբերյալ Վ. Ի. Լենինի ամբողջ վեհությամբ և այդ վեհության առթիվ համագումարի ընդունած պատմական բանաձևում, ինչպես նաև պարտիայի կողմից մղած հետագա ամբողջ պայքարի ընթացքում, վճռականապես մերկացվեց ու պատժվեց տրոցկիստների, բուխարինականների և մյուս բոլոր օպոզիցիոնականների թշնամական քաղաքականությունը: Կոմունիստական պարտիան Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ մերկացրեց և ջախջախիչ հակահարված հասցրեց այդ թշնամիներին:

Պարտիայի շարքերի միասնության ապահովման գործում խոշորագույն նշանակություն ունեցավ 1921 թ. տեղի ունեցած գործը, որի ընթացքում մերկացվեցին և պարտիայի շարքերից դուրս շպրտվեցին թշնամական, անկայուն և պատահական տարրերը: Այդ գործի ժամանակ Ռ Կ(բ)Պ շարքերից վտարվեց նրա կազմի մոտ 25 տոկոսը[2]:

Առաջնորդվելով Ռ Կ(բ)Պ 10-րդ համագումարի որոշումներով, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները 1922 թ. հունվար-փետրվարին կատարեցին իրենց շարքերի սուղագումը և գործը, որը անցավ մեծ հաջողությամբ և խոշոր չափով ամրապնդեց պարտիական կազմակերպությունների շարքերն ու նրանց

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, Հայպետհրատ, Երևան, 1949, էջ 43:
[2] Տե՛ս Համ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 349:

միացնությունը։ Այդ ստուգումը և զտումը անցկացնող Անդրկովկասյան երկրային հանձնաժողովի տվյալներով վրաստանի Կոմունիստական պարտիայի շարքերից վտարվեցին պարտիայի անդամ-թեկնածուների 20,3 տոկոսը, Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի շարքերից՝ 32,1 տոկոսը[1]։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի շարքերում ստուգումը և զտումը անցան 8251 հոգի, որից պարտիայի անդամներ էին 3046, իսկ թեկնածուներ՝ 5205 հոգի[2]։ Այդ քանակից պարտիայի շարքերից վտարվեցին 2262 հոգի, այսինքն նրա ընդհանուր կազմի 27,5 տոկոսը կամ անդամների 21,5, թեկնածուների 29,4 տոկոսը։ Ստուգումից և զտումից հետո զգալի չափով բարելավվեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի սոցիալական կազմը։ Եթե մինչև այդ Հայաստանի Կոմունիստական պարտիայի մեջ բանվորները կազմում էին 10,5, գյուղացիները՝ 75,4 և ծառայողները՝ 14,1 տոկոս, ապա ստուգումից և զտումից հետո այդ տոկոսները փոփոխվեցին հետևյալ կերպ. բանվորները արդեն կազմում էին 13,6, գյուղացիները՝ 74,8 և ծառայողները՝ 11,6 տոկոսը[3]։ Այդ նշանակում է, որ պարտիայի շարքերից վտարվածները իրենց սոցիալական կազմով մեծ մասամբ հանդիսանում էին մանր-բուրժուական տարրերը։ 1922 թ. տվյալների համաձայն, այն ժամանակ Հայաստանի Կոմունիստական պարտիայի մեջ եղած սկզբնական կազմակերպությունների (բջիջների) թիվը ամբողջ ռեսպուբլիկայում հավասար էր 260-ի, որից 76-ը քաղաքներում, 184-ը գյուղերում[4]։

Ստուգման և զտման հետևանքով չնայած Հայաստանի Կոմունիստական պարտիայի անդամ-թեկնածուների թիվը մոտ 30 տոկոսով պակասեց, բայց նրա ուրակն ու միասնությունը, նրա մարտունակությունը էլ ավելի բարձրացավ։

Հայաստանի Կոմունիստական պարտիան կուռ շարքերով հա-

---

1 Известия Кавказского бюро ЦК РКП(б), № 2, 1922, Тифлис, стр. 17.

2 Նույն տեղում, էջ 21։ ՀԿ(բ)Պ անդամ-թեկնածուների քանակի այդպիսի աննորմալ փոխհարաբերությունը, երբ թեկնածուների քանակը պարտիայի ընդհանուր կազմի 63 տոկոսից ավելի էր, պետք է բացատրել նրանով, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, մինչև այդ ստուգումը և զտումը, պարտիայի շարքերում մեծ քանակությամբ նոր մարդիկ էին ընդունվել, որոնց մեջ բազմաթիվ պատահական ու խորթ տարրեր դուրս եկան։

3 Նույն տեղում, էջ 21—22։

4 Տե՛ս ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքս—Էնգելս—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆոնդ 1, գ. 253, բ. 2—3։

680—12

մանրամասն Ռ(բ)Կ կենտկոմի և նրա Անդրկովկասյան բյուրոյի շուրջը, վճռական հակահարված տալով պարտիայի և սովետական կարգերի թշնամիներին՝ արոցկիստներին, բուխարինականներին, բուրժուական նացիոնալիստներին և մյուս բոլոր հակահեղափոխականներին, մոբիլիզացնելով ռևոլյուցիայի աշխատավորական մասսաներին, հաջողությամբ առաջ էր տանում ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքները, հաղթահարելով այդ գործում եղած բազմապիսի դժվարությունները։

* * *

Սովետական Հայաստանի ներքին գրության բարելավումը և ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքները գնում էին Սովետական Ռուսաստանի կառավարության, ռուս մեծ ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների կողմից ցույց տրվող եղբայրական օգնության, նրանց միջև հարատևուն կերպով ամրապնդվող բարեկամության և համագործակցության պայմաններում։

1921 թ. մայիսից-նոյեմբեր ժամանակամիջոցում Սովետական Ռուսաստանից օգնության կարգով Հայաստան է ուղարկվել 2.545 հազար ռուբլի դրամ՝ ոսկով, 426 հազար փութ հացահատիկ և ալյուր, 50 հազար փութ ձուկ, 7000 փութ շաքար, 7 վագոն բրինձ, 1,5 միլիոն արշին մանուֆակտուրա, 10.173 հատ գյուղատնտեսական տարբեր գործիքներ, 12 վագոն դեղորայք, 18 հազար ձևոք վիրավորական հանդերձանք, մի քանի հարյուր հազար կտոր վիրք, հարյուր հազար փթերով թուղթ, ոսկով 100 հազար ռուբլու արժողությամբ գալանտերիա, մեծ քանակությամբ հեռախոսային և հեռագրական ապարատներ ու սարքավորում, պոլիգրաֆ սարքավորում—2 տպարան, 1 ցինկոգրաֆիա, 1 վիմապրատուն (լիտոգրաֆիա), 2 կաղմատուն, մեծ քանակությամբ լծկան անասուններ, պլուսավորապես ձի, ավտոմեքենաներ և այլն[1]։

Նույն ժամանակամիջոցում եղբայրական օգնության կարգով Սովետական Ադրբեջանից Հայաստան է ուղարկվել 1.172 հազար փութ վառելանյութ (մազութ, նավթ, բենզին, մեքենայի յուղ)[2]։

1922 թ. փետրվարին, Հայաստանի բանվորների, գյուղացիների

---

[1] Տե՛ս ՍՄԿՊ Կկ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պատմարխիվ, ֆ. 1, ց. 167, թ. 1 և Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆ. 4/114, ց. 184, թ. 71։

[2] Նույն տեղում։

և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարում Հայկական ՍՍՌ կառավարության հաշվետվության մեջ ամփոփելով 1921 թ. սկզբից մինչև 1922 թ. սկիզբը Սովետական Ռուսաստանից ստացած օգնության արդյունքները, Ալ. Մյասնիկյանը նշել է, որ այդ ժամանակամիջոցում Հայաստանը Սովետական Ռուսաստանից ստացել է միայն դրամական օգնություն 3,5 միլիոն ռուբլի ոսկով[1]: Համագումարը արձանագրել է, որ այդ նույն ժամանակամիջոցում Ռուսաստանից Հայաստան է ուղարկվել 2.895 հազար փութ կենսամթերքներ և զանազան ապրանքներ[2]:

Ինչպես հայտնի է, 1921 թվականի աններրիության հետևանքով Սովետական Ռուսաստանի մի շարք նահանգներում, հատկապես Պովոլժիեում բռնկված էր մեծ սով, որն իր մեջ ընդգրկել էր 23,3 միլիոն մարդ: Մյուս նահանգների հետ միասին, որոնք համեմատաբար քիչ էին վնասվել երաշտից, Ռուսաստանում 1921—1922 թվականներին սովյալների թիվը հասնում էր 32 միլիոնի[3]: ԱՄՆ-ի իմպերիալիստները ամեն կերպ ձգտում էին օգտագործել այդ փաստը և Սովետական Ռուսաստանում ծավալել իրենց քայքայիչ գործունեությունը, լրտեսական-դիվերսիոն ցանցի աշխատանքները: Սովետական Ռուսաստանի կառավարությունը Կոմունիստական պարտիայի ղեկավորությամբ վճռական հակահարված տվեց ԱՄՆ-ի իմպերիալիստներին, ամենահարևելով նրանց սուր գործողությունները:

Ահա այդպիսի ծանր պայմաններում Սովետական Ռուսաստանը, ռուս մեծ ժողովուրդը չէր մոռանում իր եղբայրական օգնության ձեռքը մեկնել բոլոր այն ժողովուրդներին, որոնք կարիքի մեջ էին, այդ թվում նաև հայ ժողովրդին: Որպես սովետական ժողովուրդների եղբայրության ու փոխադարձ օգնության բնորոշ օրինակ, արժեքավոր է նշել նաև այն փաստը, որ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները 1921—1922 թթ. Ռուսաստանում բռնկված սովի ժամանակ, իրենց սուղ միջոցներից բաժին էին հանում Ռուսաստանի սովյալների համար: Բանվորներն ու ծառա-

---

1 Տե՛ս Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբրանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, էջ 18:

2 «Խորհրդային Հայաստան», № 29, փետրվարի 5, 1922:

3 Տե՛ս «Исторические записки», 1949, № 29, статья А. Н. Когана, «Антисоветские действия американской администрации помощи (АРА) в Советской России», стр. 3.

ցողները նվիրաբերում էին իրենց աշխատավարձը, ստացած կենսամիջոցների նորմաները, հօգուտ սովյալների նրանք կազմակերպում էին շաբաթօրյակներ: Աշխատավոր դյուղացիները Սովետական Ռուսաստանի սովյալների համար դյուղատնտեսական տարբեր տեսակի մթերքներ էին նվեր տալիս: Ճիշտ է, այդ օգնությունը մեծ չէր, բայց այն կարևոր և ուսանելի է սովետական ժողովուրդների բարեկամության, նրանց եղբայրական սերտ կապերի և փոխադարձ օգնության տեսակետից:

1921 թ. Հայաստանում դյուղատնտեսության համար անբարենպաստ պայմանների (մինչև հուլիս շարունակվող քաղաքացիական կռիվները, աշխատավոր ձեռքերի, գործիքների, սերմացուի պակասը և այլն) և որոշ դավառներում մորեխի պատճառած վնասների ու մասնակի անբերրիության հետևանքով 1922 թ. սկզբներին Սովետական Հայաստանում ևս սով տեղի ունեցավ: ՌՍՖՍՌ Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսարիատի օրգան «Жизнь национальностей» մերթի 1922 թ. հունիսի 1-ի համարում տպագրված «Սովը Հայաստանում» վերնագրով հաղորդագրության մեջ ասված է, որ Հայաստանում սովը դեռ շարունակվում է: Ըստ նույն հաղորդագրության ռեսպուբլիկայի տասնձին գավառներում սովյալների թիվը հետևյալն էր. Ալեքսանդրոպոլի գավառում 87 հազար, Նոր Բայազետի գավառում 38 հազար, Դարալագյազի գավառում 12 հազար, Իջևանի շրջանում 40 հազար, Ղարաքիլիսայի գավառում 15 հազար, Լոռու գավառում 6 հազար և էջմիածնի գավառում 36 հազար հոգի[1]: Այսպիսով, ամբողջ ռեսպուբլիկայում սովի մեջ էին ընդգրկված նրա բնակչության մոտ մեկ քառորդը՝ 234 հազար հոգի: Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների, Սովետական Ռուսաստանի ու սովետական մյուս ռեսպուբլիկաների կազմակերպած եղբայրական օգնության շնորհիվ 1922 թ. առաջին կեսին Հայաստանում բռնկված սովը նույն թվականի վերջին արդեն հիմնականում լիկվիդացված էր: Այդ լիկվիդացմանը խոշոր չափով նպաստեցին մեկ կողմից Սովետական Ռուսաստանից ստացված օգնությունը, մյուս կողմից 1922 թ. դյուղատնտեսական տարվա համեմատաբար հաջող արդյունքները:

Ոչ լրիվ տվյալներով 1922 թ. ընթացքում Սովետական Ռուսաստանից օգնության կարգով Հայաստան է ուղարկվել 1,5 միլիոն

---

1 «Жизнь национальностей», № 11(17), 1922.

ռուբլի ոսկով, բացի դրանից, յուրաքանչյուր ամիս 166 հազար ռուբլի ոսկով՝ որպես դոտացիա, ավելի քան 750 վագոն հացահատիկ, 11 վագոն շաքար, 7 վագոն դեղորայք, մեկ տեքստիլ ֆաբրիկայի սարքավորում՝ 18 հազար լիլիկով, որի բաղայի վրա կառուցվել է Ալեքսանդրոպոլի տեքստիլ գործարանը, 25 վագոն մանուֆակտուրա և մեծ քանակությամբ այլ տեսակի կենսամթերքներ ու սպրանքներ, սարքավորում[1]։

ԱՄՆ-ի և կապիտալիստական մյուս երկրների ռեակցիոն բուրժուազիան այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի ու սովետական մյուս ռեսպուբլիկանների, այդ թվում նաև Սովետական Հայաստանի նկատմամբ իրենց թշնամական սուր դավերը քողարկում էին «սովյալներին օգնելու» դրոշի տակ, լրտեսական ու դիվերսիոն աշխատանքներ կատարելով Սովետական երկրում։ Այդ ժամանակ նրանք պլան էին մշակել Սովետական Ռուսաստանում ու սովետական մյուս ռեսպուբլիկաններում կենսամթերքների ինտերվենցիա կազմակերպելու համար։

Ամերիկյան իմպերիալիստները Սովետական Հայաստանում էս ունեին իրենց, այսպես կոչված, «օգնության» կազմակերպությունը՝ ամերիկյան օգնության Մերձավոր արևելքի Կոմիտեի բաժանմունքը, որն իր լրտեսական գործունեությամբ ամեն կերպ ձգտում էր Սովետական Հայաստանում ուժեղացնել ամերիկյան իմպերիալիստների ազդեցությունը, թուլացնել ու քայքայել Սովետական իշխանությունը։ «Օգնության» անվան տակ իրենց երկրում ու մյուս երկրներում չվաճառված, մեծ մասամբ փչացած, անորակ կենսամթերքները և հին հագուստները նրանք բերում և վաճառում էին բնակչությանը, հավաքելով վերջինիս մոտ եղած արժեքավոր հարստությունները՝ ոսկեղենը, արծաթեղենը, հազվագյուտ իրերը, կուլտուրական արժեքները։ Մյուս կողմից, «օգնության» անվան տակ նրանք մեր երկրում կատարում էին տնտեսական և ռազմական հետախուզություն՝ իրենց ստոր նպատակների համար։ Ահա այդպիսին էր ամերիկյան բիզնեսների «օգնության» իմաստը։

1921 թ. դեկտեմբերի 18-ին «Պրավդա»-ում տպագրված «Հեռանկարներ» հոդվածում, մերկացնելով ամերիկյան և մյուս երկրների իմպերիալիստների ստոր դավերը, Ի. Վ. Ստալինը դրել է. «... Չպետք է մոռանալ, որ Ռուսաստանը ողողող, նրա հետ առև-

---

1 *Տե՛ս* Вестник Московского Комитета помощи Армении, № 1, февраль. 1923, стр. 13—15.

տուր անող ու նրան օգնող առևտրական ու ամեն տեսակ այլ միսիաներն ու ընկերությունները միաժամանակ համաշխարհային բուրժուազիայի լավագույն հետախույզներն են...»[1]:

Հետևողականորեն կենսագործելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նվաճումները օտարերկրյա շնամիներից, նրանց լրտեսներից ու դիվերսանտներից պաշտպանելու քաղաքականությունը, Սովետական իշխանությունը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ խստորեն հետևում էր ամերիկյան օգնության Կոմիտեի (APA), նրա բաժանմունքների աշխատանքներին և տեղն ու տեղը մերկացնում ու վճռական հակահարված էր տալիս նրանց քայքայիչ գործունեությանը: Ամերիկյան իմպերիալիստները սովետական ժողովրդի աչքում ավելի ու ավելի էին մերկացվում որպես ժողովուրդների ազատության և անկախության ամենակատաղի շնամիների: Սովետական ժողովուրդը հենց սկզբից երեսը շուռ տվեց նրանց, այսպես կոչված, «օգնությունից», իսկ Սովետական կառավարությունը այդ ստոր շնամիներին մերկացրեց և դուրս շպրտեց մեր Հայրենիքի սահմաններից: Դրանով իսկ ձախողվեցին ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և մյուս երկրների ռեակցիոն ուժերի ստոր դավերը Սովետական իշխանության դեմ 1921—1922 թվականներին:

* * *

Սովետական ռեսպուբլիկաների արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս բոլոր ճյուղերի վերականգնման ուղղությամբ 1921—1922 թթ. ձեռք էին բերված զգալի հաջողություններ: Երկրում սկսվել էր արտադրողական ուժերի վերելքը, որն արտահայտվում է առաջին հերթին արդյունաբերության հիմնական ճյուղերի՝ տրանսպորտի և գյուղատնտեսության բնագավառում: Բարելավվում էին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության նյութական պայմանները:

ՌԿ(բ)Պ 11-րդ համագումարում (1922 թ. մարտ) Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ Վ. Ի. Լենինը ամփոփելով նոր տնտեսական քաղաքականության մեկ տարվա արդյունքները, ընդգծել է, որ «Մենք մի տարի նահանջում էինք: Այժմ մենք պետք է

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 133:

ասենք պարտիայի անունից՝ բավական է։ Մենք հասել ենք այն նպատակին, որը հետապնդում էր այդ նահանջը։ Այդ շրջանը վերջանում է, կամ վերջացել է։ Այժմ առաջ է մղվում ուրիշ նպատակ՝ ուժերի վերախմբավորումը»[1]։ Վ. Ի. Լենինը միաժամանակ նշում էր, որ ուժերի այդ վերախմբավորման նպատակն է նախապատրաստել հարձակումը մասնավոր կապիտալի դեմ անտեսապես։ Տալով նէպի կիրառման մեկ տարվա հիմնական քաղաքական դասերի վերլուծությունը, Վ. Ի. Լենինը առաջ քաշեց երեք հանդուցային հարց, որոնք անհրաժեշտ էր հաշվի առնել հետագա պրակտիկ գործունեության ընթացքում։ Այդ հարցերից առաջինն ու ամենագլխավորը՝ աղգայնացված ֆաբրիկանների ու գործարանների հիման վրա կազմավորվող նոր տնտեսական և պետական տնտեսությունների միջև ամուր դոգումը հաստատելն էր, առանց որի հնարավոր չէր Սովետական իշխանության գոյությունը և սոցիալիզմի կառուցումը։

Երկրորդ խնդիրը այն է, նշում էր Վ. Ի. Լենինը, որպեսզի սովորենք տնտեսություն կառավարել և առևտուր անել, որը նույնպես մեծագույն նշանակություն ունի Սովետական իշխանության գոյությունը պաշտպանելու և սոցիալիզմի կառուցումը առաջ տանելու գործում։ Նէպի կենսագործման առաջին տարում պետական և մասնավոր ձեռնարկությունների միջև տեղի ունեցած մրցումը ցույց տվեց, որ մենք դեռ չէինք սովորել տնտեսություն կառավարել, չէինք կարողանում առևտուր կազմակերպել, տիրել շուկային, ուր հաճախ անբաժան կերպով գործում էր մասնավորը։ Մեծ առաջնորդը պարտիային կոչ էր անում՝ մոբիլիզացնել բոլոր ուժերն ու հնարավորությունները այդ մրցման մեջ հաղթանակը արագությամբ ապահովելու, սոցիալիստական տնտեսությունը զարգացնելու, պետական ու կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակությունը ավելի ու ավելի ծավալելու, դոգումն ամրապնդելու համար։

Երրորդ հարցը, որը Վ. Ի. Լենինը լրացուցիչ էր համարում, դա պետական կապիտալիզմի հարցն էր։ Այդ կապակցությամբ նա մերկացրեց Բուխարինի աջ — օպորտունիստական հայացքները, ըստ որի նէպի կիրառումով պետական կապիտալիզմի (կոնցեսիանների) թույլտվությամբ իբր թե Կոմունիստական պարտիան արմատավորում էր սովորական պետական կապիտալիզմ՝ այդ կատեդորիայի բուրժուական հասկացողությամբ։ Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ պրո-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, Երևան, 1952, էջ 329։

լենտարիատի դիկտատուրայի պայմաններում պետական կապիտալիզմի այդպիսի մեկնաբանությունը ոչ մի առնչություն չունի մարքսիզմի հետ։ «... Պետական կապիտալիզմն այն ձևով, ինչպես որ կա մեզ մոտ, ո՛չ մի թեորիայի, ո՛չ մի ըրականության մեջ չի բնութագրվում այն պարզ պատճառով,— ասում էր Վ. Ի. Լենինը,— որ այդ բառերի հետ կապված բոլոր սովորական ըմբռնումները հարմարեցված են բուրժուական իշխանության կապիտալիստական հասարակության մեջ»[1]։ Այսպիսով, Վ. Ի. Լենինը տվեց Սովետական երկրում նէպի պայմաններում թույլատրված պետական կապիտալիզմի պարզ ու հստակ բնորոշումը, և դրանով իսկ մերկացրեց Բուխարինի սխալը ու ջախջախիչ հակահարված հասցրեց պարտիայի հակառակորդներին նաև այդ հարցում։

Գնահատելով նէպի մեկ տարվա արդյունքների նշանակությունը, Վ. Ի. Լենինը ընդգծել է, որ այդ արդյունքները փայլուն կերպով ապացուցեցին Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության քաղաքականության ճշտությունը, որի շնորհիվ մեր երկրի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը ավելի ու ավելի կուռ շարքերով համախմբվում էին մեր պարտիայի ու կառավարության շուրջը՝ ծավալելով իրենց ստեղծագործական ուժերը ժողովրդական տնտեսության վերականգնման դործում հետագա հաջողությունների համար։ «Նոր տնտեսական քաղաքականության առաջին իսկ տարին ցույց տվեց այդ քաղաքականության ճշտությունը։ Նէպին անցնելն դպավլորին ամրապնդեց բանվորների և գյուղացիների դաշինքը նոր հիմքի վրա։ Պրոլետարիատի դիկտատուրան ավելի ամրապնդվեց և հզորացավ։ Բշնամու դիմադրությունը ճնշվեց։ Պարենամատնատրումը վերացնելուց հետո միջակ գյուղացիներն օգնում էին Սովետական իշխանությանը՝ պայքարելու կուլակային բանդաների դեմ։ Ժողովրդական տնտեսության մեջ Սովետական իշխանությունն իր ձեռքում պահեց բոլոր հրամայական պետական դիրքերը՝ խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտը, բանկերը, հողը, ներքին առևտուրը, արտաքին առևտուրը»[2]։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ շարունակում էին հերոսական աշխատանքն ու պայքարը ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման համար։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 326—327։

2 ՀամԿ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 349։

* * *

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման առաջին հաջողությունները, որոնք ձեռք էին բերվել 1921—1922 թվականներին, խոշոր չափով նպաստեցին Սովետական պետության ամրապնդմանը։ Այդ հաջողությունների շնորհիվ աճեցին պրոլետարիատի դիկտատուրայի հզորությունն ու ամրությունը։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սովետական ռեսպուբլիկանների ձեռք բերած հաջողությունները ներքին քաղաքականության բնագավառում մեծ նշանակություն ունեցան նրանց միջազգային դրության ամրապնդման տեսակետից։ Նոր պայմաններում վճռական հակահարված տալով ներքին ու արտաքին թշնամիներին, Սովետական պետությունը հաստատ կերպով իրականացնում էր իր խաղաղասիրական քաղաքականությունը։

Մինչդեռ այդ ժամանակ կապիտալիստական աշխարհի դրությունը բնութագրվում էր ներքին և արտաքին հակասությունների հարաճուն սրմամբ։ Ծավալվում էր արդյունաբերական ճգնաժամը, աճում էին ռևոլյուցիոն շարժումները, վերելք էին ապրում ազգային ազատագրական շարժումները գաղութային և կիսագաղութային երկրներում։ Ավելի ու ավելի սրվում էին հակասությունները բուրժուական պետությունների միջև։ Այդ ամենը հարկադրում էր կապիտալիստական պետություններին լուրջ կերպով զբաղվելու իրենց թիկունքի ամրապնդման հարցերով։ Միջազգային ռեակցիան Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների գլխավորությամբ իր հաշիվները Սովետական պետության հանդեպ կատուցում էր այն բանի վրա, որ իբր թե Սովետական իշխանությունը անկարող է սեփական ուժերով ու միջոցներով հաղթահարել ներքին դժվարությունները, լիկվիդացնել քայքայվածությունը, աղքատությունն ու սովը։ Նրանք ապրում էին այն հույսերով, որ Սովետական պետությունը հարկադրված կդիմի զիջումների, ստրկական պայմանագրեր կնքելով բուրժուական պետությունների հետ։ Միաժամանակ նրանք մեծ հույս ունեին իրենց գործակալների՝ տրոցկիստների, բուխարինականների և մյուս թշնամիների միջոցով քայքայել Կոմունիստական պարտիայի միասնությունը, կործանել Սովետական պետությունը և վերականգնել շահագործողների տիրապետությունը։

Խաղաղ շինարարության մեկ տարվա հաջողությունները սովետական ռեսպուբլիկաներում և այդ հաջողությունների հիման վրա

Սովետական պետության հաղթական առաջընթացը սոցիալիստական շինարարության ուղղությամբ խորտակեցին միջազգային իմպերիալիստական ռեակցիայի հույսերը Սովետական պետության թուլության, նրա քայքայման մասին։ Բնորոշելով սովետական ռեսպուբլիկաների միջազգային դրությունը և մերկացնելով իմպերիալիստական պետություններին, 1922 թ. սեպտեմբերին Ի. Վ. Ստալինի հետ ունեցած զրույցում Վ. Ի. Լենինն ասել է. «Ապահ են նրանք և խորապես ատում են միմյանց։ Կկռվեն։ Մենք շտապելու տեղ չունենք։ Մեր ուղին ճիշտ է՝ մենք խաղաղության ու համաձայնության կողմնակից ենք, բայց մենք պետք ենք ստիպացման և համաձայնության ստրկական պայմաններին։ Պետք է ամուր պահենք դևկը և ընթանանք մեր ուղիով, չենթարկվելով ո՛չ շողոքորթության, ո՛չ ահաբեկման»[1]։

Իմպերիալիստական պետությունների կողմից Սովետական Ռուսաստանի նկատմամբ այդպիսի ահաբեկման փորձեր էին 1922 թ. տեղի ունեցած կոնֆերանսները Ջենովայում և Հաագայում, որոնք նպատակ ունեին դիվանագիտական ճնշման միջոցով Սովետական Ռուսաստանի վրին փաթաթել համաձայնության ստրկական պայմանագրեր։ Ջենովայի կոնֆերանսը (1922 թ. ապրիլ—մայիս) հրավիրվեց տնտեսական և ֆինանսական հարցերի շուրջը։ Այստեղ եվրոպական կապիտալիստները ամեն միջոց գործադրեցին պարտադրելու Սովետական Ռուսաստանին վճարել ցարական Ռուսաստանի բոլոր պարտքերը և փոխադրությունները, օտարերկրյա նախկին տերերին վերադարձնել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ ազգայնացված ֆաբրիկաներն ու գործարանները, վճարել պատերազմական բոլոր վնասները՝ սկսած 1941 թվականից և այլն։ Կոնֆերանսում սովետական դելեգացիան վճռական հակահարված տվեց Անտանտայի իմպերիալիստների փորձերին և մերժեց նրանց պահանջները։ Ջենովայի կոնֆերանսի որոշմամբ նույն թվականի հուլիսին Հաագայում հրավիրվեց եվրոպական երկրների նոր կոնֆերանս, որը պետք է լուծեր Ջենովայի կոնֆերանսի չլուծած հարցերը Սովետական Ռուսաստանի նկատմամբ։ Այստեղ ևս Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս երկրների իմպերիալիստների փորձերը ձախողվեցին՝ հանդիպելով սովետական դելեգացիայի վճռական հակահարվածին։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 152։

Սովետական դելեգացիան այդ կոնֆերանսներում միաժամանակ փայլուն կերպով ցուցադրեց Սովետական կառավարության խաղաղասիրական հետևողական քաղաքականությունը՝ առաջարկելով անցկացնել սպառազինությունների ընդհանուր կրճատում, որը, ճիշտ է, մերժվեց իմպերիալիստական երկրների դելեգացիաների կողմից, բայց ըստ էության կարևորագույն նշանակություն ունեցավ նրանց մերկացման գործում՝ որպես նոր պատերազմի հրձիգների։ Կարևորագույն փաստ է նաև այն, որ Ճենովայի կոնֆերանսի ժամանակ Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի միջև Ռապալոյում կնքված պայմանագրով ճեղքվեց կապիտալիստական երկրների միասնական ճակատը։ Այդ պայմանագրով դիվանագիտական նորմալ հարաբերություններ են հաստատվում Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի միջև, որը երկու կողմերի համար էլ կարևորագույն նշանակություն ունեցավ։

Սովետական կառավարությունը և նրա դելեգացիան Ճենովայի և Հաագայի կոնֆերանսներում կարողացան այդպիսի հաղթանակներ ձեռք բերել շնորհիվ այն հանգամանքի, որ այդ ժամանակ հաստատվեց սովետական բոլոր ռեսպուբլիկանների հզոր դիվանագիտական դաշինք՝ Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ։ Դեռ այդ կոնֆերանսներից երեք ամիս առաջ, 1922 թ. հունվարի 16-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոն հաստատել էր Ի. Վ. Ստալինի առաջարկը՝ սովետական ռեսպուբլիկանների ներկայացուցիչների խորհրդակցություն հրավիրելու մասին՝ Ճենովայի կոնֆերանսին մասնակցելու համար սովետական բոլոր ռեսպուբլիկանների միասնական դելեգացիա ընտրելու նպատակով։ Նույն թվականի փետրվարի 22-ին Մոսկվայում կայացավ Ուկրաինական, Բելոռուսական, Վրացական, Ադրբեջանական, Հայկական, Բուխարական, Խորեզմական ռեսպուբլիկանների և Հեռավոր Արևելյան ռեսպուբլիկայի ներկայացուցիչների խորհրդակցությունը։ Սովետական ութ ռեսպուբլիկանների ներկայացուցիչների խորհրդակցությունը միահամուռ որոշում է ընդունում իրենց ներկայացուցչությունը հանձնել Սովետական Ռուսաստանին՝ Ճենովայի կոնֆերանսում սովետական բոլոր ռեսպուբլիկանների շահերը միասնաբար պաշտպանելու համար։ Այսպիսով, օտարերկրյա իմպերիալիստներին հակահարված տալու նպատակով ստեղծվեց սովետական ութը ռեսպուբլիկանների դիվանագիտական դաշինքը Սովետական Ռուսաստանի հետ, որը ոչ միայն Ճենովայի և Հաագայի կոնֆերանսների ժամանակ, այլև հետագայում խոշորագույն նշանակություն ունեցավ Սովետական

պետության արտաքին քաղաքականության նորանոր հաղթանակների, նրա միջազգային դիրքերի ավելի ամրապնդման գործում։

Միջազգային ասպարեզում Սովետական պետության վարած հաստատուն քաղաքականությունը, որը զգաստ կերպով հաշվի էր առնում իմպերիալիստական լագերի ուժերի հարաբերությունը և նրանց միջև առաջացած հակասությունների օգտագործումը, Կոմունիստական պարտիային ու Սովետական կառավարությանը հնարավորություն տվեց հիմնական ուշադրությունը կենտրոնացնելու ներքին խնդիրների վրա, տնտեսական շինարարությունը էլ ավելի լայն ճակատով ծավալելու վրա, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի այն ցուցումով, որ «այժմ միջազգային ռևոլյուցիայի վրա մենք մեր գլխավոր ներգործությունն անում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ»[1]։

---

1 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հատ. 32, էջ 562։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՍՍՌՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ազգային-պաղուեթային հարցը մարքսիզմ-լենինիզմի կարևորագույն հարցերից մեկն է, պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի հարցի բաղկացուցիչ մասը:

Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը մինչմոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանում ուսումնասիրելով և խորը կերպով վերլուծելով ազգային շարժումները Իռլանդիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Հնդկաստանում, Չինաստանում և մյուս երկրներում, հասարակական մտքի զարգացման պատմության մեջ առաջինը տվեցին ազգային-պաղուեթային հարցի հիմնական մեկնակետային դրույթները, նրա տեղը և նշանակությունը հասարակության պատմության և պրոլետարիատի դասակարգային պայքարի մեջ: Նրանք ազգային հարցը շաղկապեցին պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի հետ, ցույց տալով այդ պայքարի ինտերնացիոնալ բնույթը: Իրենց գործունեության առաջին իսկ շրջանից նրանք հետևողականորեն հանդես են եկել կապիտալիզմի կողմից ճնշվող և կեղեքվող ազգերի պաշտպանությամբ:

Բնութագրելով ժողովուրդների կապիտալիստական շահագործումը, Մարքսը ընդգծել է, որ չի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որը շահագործում է ուրիշ ժողովուրդների: Մարքսը և Էնգելսը ուրվագծել են ժողովուրդների եղբայրական համագոր-

ծակցության և իրավահավասարության ուղիները, նշելով, որ դրան կարելի է հասնել միայն բոլոր ազգերի ու ժողովուրդների ուժերի միավորումով։

Պրոլետարիատի մեծագույն ուսուցիչները վճռական ու անողոք պայքար են տարել բուրժուական նացիոնալիզմի և կոսմոպոլիտիզմի դեմ։ Նրանք ամենատուր կերպով քննադատել և մերկացրել են, այսպես կոչված, դերմանական «ճշմարիտ սոցիալիստներին», որոնք դերմանական ազգը «ընտրովի» ազգ էին համարում, նրան «բարձր» դասելով մյուս բոլոր ազգերից և մոլեռանդ կերպով նացիոնալիզմի թունոտ գաղափարներն էին սերմանում ժողովրդի մեջ։

Գնահատելով Մարքսի և Էնգելսի դերը ազգային-գաղութային հարցի մշակման գործում, Ի. Վ. Ստալինը գրել է. «Մարքսը և Էնգելսը, իր ժամանակին վերլուծելով Իռլանդիայում, Հնդկաստանում, Չինաստանում, Կենտրոնական Եվրոպայի երկրներում, Լեհաստանում, Հունգարիայում տեղի ունեցող իրադարձությունները, տվին ազգային-գաղութային հարցի հիմնական, մեկնակետային գաղափարները»[1]։

Նոր պայմաններում՝ իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում ինչպես մարքսիզմի բոլոր հիմնական հարցերը, նույնպես և ազգային-գաղութային հարցը մշակեց, զարգացրեց և ավելի բարձր աստիճանի հասցրեց սոցիալիստական ռևոլյուցիայի մեծագույն հանճար Վ. Ի. Լենինը։

Իմպերիալիզմի դարաշրջանում, երբ կապիտալիզմը դարձել է ժողովուրդների շահագործման և ճնշման լայնածավալ միջոց, իսկ ազգային-ազատագրական շարժումները՝ իմպերիալիզմի դեմ մղվող ընդհանուր պայքարի բաղկացուցիչ մասը, Մարքսի և Էնգելսի իդեանների հիման վրա Վ. Ի. Լենինը հանճարեղ կերպով մշակեց Կոմունիստական պարտիայի ծրագիրը ազգային հարցի մասին։

Ցույց տալով այն նորը, ինչ Վ. Ի. Լենինը մտցրել է մարքսիզմի դանձարանում ազգային-գաղութային հարցի վերաբերյալ, Ի. Վ. Ստալինը գրել է.

«Լենինի մոտ այս բնագավառում նորն այն է, որ՝

ա) նա ի մի հավաքեց այդ գաղափարները՝ վերածելով դրանք իմպերիալիզմի դարաշրջանում ազգային-գաղութային ռևոլյուցիաների վերաբերյալ հայացքների մի ներդաշնակ սիստեմի.

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 10, Հայպետհրատ, 1949, էջ 111—112։

բ) ազգային-գաղութային հարցը կապեց իմպերիալիզմի տապալման հարցի հետ.

գ) ազգային-գաղութային հարցը միջազգային պրոլետարական revolyucիայի ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասը հայտարարեց»[1]:

Կոմունիստական պարտիայի ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ ելնում է նրանից, որ անհրաժեշտ է վճռականորեն և լիովին ոչնչացնել ամեն տեսակի ազգային ճնշումը, ապահովել քաղաքացիների լիակատար իրավահավասարություն անկախ սեռից, կրոնից, և ազգությունից, իրականացնել ազգերի ինքնորոշումն՝ ընդհուպ մինչև պետականորեն անջատումը և ինքնուրույն ազգային պետություն կազմելը: Պարտիայի ծրագրում փայլուն կերպով արտահայտված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի դաշափարը, բոլոր աշխատավորների համախմբման անհրաժեշտությունը անկախ ազգությունից, նրանց միասնական պայքարի դաշափարը ընդդեմ բոլոր ազգերի շահագործողների, հանուն կոմունիստական հասարակության կառուցման:

Վ. Ի. Լենինի ընորոշմամբ Կոմունիստական պարտիայի ազգային ծրագիրը ստեղծվել է արևմտաեվրոպական օպորտունիստների միկրոբների դեմ մղած անողոք պայքարում, միկրոբներ, որոնք Ռուսաստանում առաջացրել էին նացիոնալիզմի ռեակցիոն համաճարակը:

Ազգային հարցի հետագա մշակման ու զարգացման պատմական մեծագույն ծառայությունը պատկանում է Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ, նրա գործի մեծ շարունակող Ի. Վ. Ստալինին: Նա պաշտպանել, զարգացրել և ավելի բարձր աստիճանի է հասցրել Կոմունիստական պարտիայի թեորիան ու ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ և ապահովել նրա հետևողական կենսագործումը մեր երկրում:

Կոմունիստական պարտիան ազգային հարցը դիտում է որպես revolyucիայի կարևորագույն հարցերից մեկը: Մինչև Հոկտեմբերյան revolyucիայի ժամանակաշրջանը նա ազգային հարցը դիտել է որպես բուրժուա-դեմոկրատական revolyucիայի, պրոլետարիատի և գյուղացիության revolyucիոն-դեմոկրատական դիկտատուրայի հարցերից մեկը: Զարգացման հետագա աստիճանում, երբ ազգային հարցը ներպետական հարցից վերածվեց միջազգային հարցի,

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 10, Հայպետհրատ, 1949, էջ 112:

Կոմունիստական պարտիան այն ժամանակ որպես սոցիալիստական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասը։

Կոմունիստական պարտիան լուրջ կերպով հաշվի առնելով պատմական նոր իրադրությունը, հակառակ Երկրորդ Ինտերնացիոնալի օպորտունիստների և մարքսիզմ-լենինիզմի մյուս բոլոր թշնամիների, ազգային հարցը ընդարձակեց, այն վերածելով ազգային-դաղութային հարցի։ Նա բանվոր դասակարգի պայքարը հանուն պրոլետարական դիկտատուրայի անցումն շաղկապեց ազգային և սոցիալական ճնշման դեմ ուղղված դաղութային ժողովուրդների ռևոլյուցիոն պայքարի հետ։ «Կոմունիստներն առաջինը բացահայտեցին ազգային հարցի կապը դաղութների հարցի հետ, տեսականորեն հիմնավորեցին այդ կապը և իրենց ռևոլյուցիոն պրակտիկայի հիմքը դարձրին։ Հենց դրանով էլ ոչնչացվեց սպիտակների ու սևերի, իմպերիալիզմի «կուլտուրական» ու «անկուլտուրական» ատրուճների միջև եղած պատը։ Այդ հանգամանքն զգալիորեն հեշտացրեց ընդհանուր թշնամու դեմ, իմպերիալիզմի դեմ հետամնաց դաղութների մղած պայքարը առաջավոր պրոլետարիատի մղած պայքարի հետ կոորդինացնելու գործը»[1]։

Երկրորդ Ինտերնացիոնալի գործիչները ազգերի ինքնորոշման իրավունքը սովորաբար մեկնաբանում էին որպես առհասարակ ավտոնոմիայի իրավունք։ Ազգային հարցի նրանց «մասնագետները»՝ Շպրինգերը և Բաուերը նույնիսկ այնտեղ հատան, որ ազգերի ինքնորոշման իրավունքը վերածեցին Եվրոպայի ճնշված ազգերի կուլտուրական ավտոնոմիայի իրավունքի՝ տիրապետող ազգերի շահագործող դասակարգերի ձեռքում թողնելով ամբողջ քաղաքական ու տնտեսական իշխանությունը։ Երկրորդ Ինտերնացիոնալի օպորտունիստների կողմից հարցի այդպիսի դրումը ամբողջությամբ համապատասխանում էր իմպերիալիստական բուրժուազիայի շահերին։ Շարունակելով և ավելի խորացնելով իրենց նախորդների սխալները, ինչպես ազգային, նույնպես բոլոր մյուս հարցերում, աջ սոցիալիստները ներկայումս հլու գործիք են դարձել իմպերիալիստական ռեակցիայի ձեռքում, ամեն կերպ ձգտելով խեղդել ժողովուրդների պայքարն իրենց ազատության ու անկախության համար։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 59։

Անողոք պայքար տանելով 2-րդ ինտերնացիոնալի օպորտունիստների դեմ, Կոմունիստական պարտիան առաջին անգամ ապդերի ինքնորոշման իրավունքի լոզունգի մեջ մտցրեց հստակ, պարզորոշ, հետևողական ռևոլյուցիոն բովանդակություն, ցույց տալով, որ այդ լոզունգը նշանակում է ճնշված ազգերի պետական անջատման, ինքնուրույն պետության կազմելու իրավունք։

Կոմունիստական պարտիայի լոզունգը ազգերի ինքնորոշման մասին ընդհուպ մինչև պետականորեն անջատվելու իրավունքը հեղափոխական ռևոլյուցիոն նշանակություն է ունեցել և ունի։ Ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը, ռուսական բանվորները Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո պրակտիկ կերպով կենսագործելով այդ լոզունգը, նվաճեցին Արևելքի և Արևմուտքի իրենց այլազգի ընկերների համակրանքը[1]։

Ի. Վ. Ստալինը նշում է, որ Երկրորդ Ինտերնացիոնալի ժամանակաշրջանում ազգային հարցի ծավալը ծայրահեղ չափով նեղացված էր և դիտվում էր ինքնին, պրոլետարական դալիք ռևոլյուցիայից անջատ։ Ենթադրվում էր, որ ազգային հարցը կարող էր լուծվել ռեֆորմների միջոցով՝ կապիտալիզմի շրջանակներում, առանց շահագործողների տիրապետության տապալման, առանց պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի։ Ըստ էության իմպերիալիստական այդ հայացքը առաջադրել և մոլեռանդ կերպով պաշտպանում էին Երկրորդ Ինտերնացիոնալի ղեկավարները և ներկայումս նրանց մնացորդները։

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ իմպերիալիզմի տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար մղվող պայքարը պրոլետարիատը պետք է սերտորեն զուգակցի ոչ-լիիրավ ազգերի ու գաղութների աշխատավորական մասսաների ազատագրական շարժման հետ։

Կոմունիստական պարտիան ոչ միայն հռչակում է ազգերի իրավահավասարության, այլև այն կյանքում հետևողականորեն իրականացնում է։ Դրա փայլուն օրինակը հանդիսանում են Սովետական Միությունը, նրա մեջ մտնող ազգային սովետական ռեսպուբլիկանները։ Դրան հասնելու համար կարևոր նշանակություն է ունեցել և ունի առաջավոր ազգերի հաղթած պրոլետարիատի իրական ու տևական օգնությունը հետամնաց ազգերի աշխատավորական մասսաներին՝ նրանց կուլտուրական ու տնտեսական զարգացման, առաջ անցած ազգերին հասնելու գործում։

[1] Տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 61։

680—13

* * *

Բարեկամության և փոխադարձ օգնության զգացմունքը մեր երկրի ժողովուրդների մոտ իր սաղմերն ունի հին ժամանակներից, որը պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար ամրապնդվել է: Այդ տեսակետից կարևորագույն նշանակություն են ունեցել մեկ կողմից ռուս ժողովրդի գլխավորությամբ Ռուսաստանի ազգային ժողովուրդների ու ազգերի դարավոր պայքարը օտար նվաճողների դեմ, մյուս կողմից այդ ազգերի ու ժողովուրդների աշխատավորների համատեղ պայքարը ցարիզմի և մյուս բոլոր շահագործողների դեմ:

Ցարիզմի կողմից իրականացվող դաժան ազգային ճնշումը առաջ էր բերում ժողովուրդների ատելությունն շահագործողների տիրապետության նկատմամբ: Դրա հետ միասին սաղմնավորվում էր բոլոր ազգերի աշխատավորների շահերի ընդհանրության գիտակցումը: Կյանքը նրանց աստիճանաբար համոզում էր, որ անհրաժեշտ է շահագործողների դեմ մղած իրենց ջանքերը և պայքարը միացնել ռուս աշխատավորների ջանքերի ու պայքարի հետ: Պատմական զարգացումը այդպես էլ ընթանում էր:

Սակայն մեր երկրի բազմազգ և բազմամիլիոն ժողովուրդների իսկական բարեկամության և եղբայրական համագործակցության գիտական ամուր հիմքերը դրվեցին 19-րդ դարի վերջին — 20-րդ դարի սկզբին, երբ ռևոլյուցիոն շարժման գլուխ անցավ Կոմունիստական պարտիան: Այդ ժամանակ ամենառևոլյուցիոն դասակարգը՝ պրոլետարիատը Ռուսաստանում արդեն հասնելս էր եկել որպես մեծ ուժ, որպես երկրի կյանքի ռևոլյուցիոն վերափոխման ակտիվ մասնակից:

Բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պարտիայի՝ նոր տիպի պարտիայի ստեղծման և սոցիալիստական ռևոլյուցիայի նախապատրաստման ու իրականացման համար մղվող պայքարի առաջին իսկ շրջանից այդ պարտիայի կազմակերպիչ Վ. Ի. Լենինը առանձնահատուկ խորությամբ ու պարզությամբ ընդգծել է ռուսական պրոլետարիատի գլխավորությամբ երկրի բոլոր դեմոկրատական ուժերի, բոլոր ազգերի բանվորների ու գյուղացիների ինտերնացիոնալ համախմբվածության և իրենց ազատության ու անկախության համար շահագործողների տիրապետության դեմ միասնական պայքարի անհրաժեշտությունը:

Պրոլետարական այդ սկզբունքի հաստատումը և իրականացու-

մը տեղի է ունեցել բուրժուական նացիոնալիզմի բոլոր արատահայտությունների ու նրանց ամեն տեսակի կրողների՝ մենշևիկների, բունդականների, հայկական սոցիալիստների և մյուսների դեմ անողի ունեցած ամենավճռական պայքարում: Մերկացնելով և վճռական հարված հասցնելով բուրժուական նացիոնալիստներին, Կոմունիստական պարտիան իր գլխավոր ուշադրությունը կենտրոնացրել և կենտրոնացնում է աշխատավորների կյանքի ընդհանուր պայմանների վրա, նրանց շահերի միասնության վրա, «ազգային տարբերությունները» հաշվի առնելով այն չափով, որչափով դրանք չեն հակասում աշխատավորների ընդհանուր շահերին: Մինչդեռ նացիոնալիստները իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում են ազգային տարբերությունների վրա, մի կողմ թողնելով պրոլետարիատի ինտերնացիոնալ, ընդհանուր շահերը, մեկուսացնելով տարբեր ազգերի պրոլետարներին ու բոլոր մյուս աշխատավորներին, նրանց հակադրելով միմյանց:

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ պրոլետարիատի հաղթանակի համար անհրաժեշտ է լիկվիդացնել ազգային միջնորմները, ազգային սահմանափակվածությունը և միավորել բոլոր բանվորներին ու աշխատավորներին, անկախ ազգային տարբերությունից:

Անշեղորեն առաջնորդվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով, ցարական Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորներն ու դյուղացիները, համախմբվելով ռուսական պրոլետարիատի շուրջը, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ վճռական պայքարի դուրս եկան կալվածատիրական-բուրժուական կարգերը տապալելու, իրենց ազատությունն ու անկախությունը ձեռք բերելու համար: Կոմունիստական պարտիան կառուցվել, աճել և ամրապնդվել է որպես մինչև վերջ հետևողական ինտերնացիոնալիստական պարտիա, որպես ամեն տեսակի ազգային ճնշման անհաշտ թշնամի:

Ցարական Ռուսաստանը հանդիսանում էր ժողովուրդների բանտ: Ինքնակալությունը լինելով պրոլետարիատի ամենաոխերիմ թշնամին, շարունակ դիմադրել է նրա միավորման գործին, դաժան կերպով հալածել Ռուսաստանի մյուս ազգությունների կուլտուրան, լեզուն, սովորույթներն ու հիմնարկները: Ցարիզմը նրանց զրկել էր քաղաքական իրավունքներից, բազմակողմանի ճնշման և շահագործման է ենթարկել, նրանց միջև մշտապես սերմանելով անվստահություն և թշնամություն, դրանով իսկ նրանց

հրահրելով արյունահեղ ընդհարումների, ազգամիջյան կոտորածների։

«Հին Ռուսաստանի խոցերից մեկը,— գրել է Ի. Վ. Ստալինը,— որ խայտառակության սովեր են գցում նրա վրա, ազգային ճնշման խոցն է։

Կրոնական ու ազգային հետապնդումներ, «այլազգիների» բռնի ռուսացում, հալածանք ազգային կուլտուրական հիմնարկների դեմ, զրկում ընտրական իրավունքներից, զրկում տեղափոխության ազատությունից, ազգություններին միմյանց դեմ գրգռելը, ջարդեր ու կոտորածներ,— ահա նա՝ ամբողջ ազգային ճնշումը»[1]։

Ցարիզմը հանդիսացել է նաև ռուս ժողովրդի կատաղի թշնամին։ Ռուս ժողովուրդը՝ ռուս բանվորներն ու գյուղացիները նույնպիսի ճնշում և հալածանքներ են կրել ցարական ինքնակալության կողմից, ինչպես երկրի մյուս բոլոր ժողովուրդները։ Բայց ռուս բանվորները և գյուղացիները, ռևոլյուցիոն ելույթներով հանդես էին գալիս ցարիզմի դեմ, նրանք նույնպես, ինչպես և մյուս ազգերի բանվորներն ու գյուղացիները, անողոքաբար պնդակոծության էին ենթարկվում ցարական ոստիկանության ու զորքերի կողմից։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որպես ինտերնացիոնալ կարգի ռևոլյուցիա, կործանելով կապիտալիստների և կալվածատերերի տիրապետությունը, մեր երկրում իշխանության գլուխ կանգնեցրեց պրոլետարիատին։ Դրանով իսկ նոր դարաշրջան սկսվեց մարդկային հասարակության պատմության մեջ։ Այդ համաշխարհային-պատմական մեծ հաղթանակով, հաղթանակ, որի ոգեշնչողն ու կազմակերպիչը հանդիսացավ Կոմունիստական պարտիան, մեր երկրի բոլոր ազգերն ու ժողովուրդները գտան իրենց վերելքը և ազատ ու երջանիկ կյանքի իսկական ուղին։ Կոմունիստական փառապանծ պարտիայի գլխավորությամբ նրանք ձեռնամուխ եղան կոմունիստական հասարակարգի կառուցման մեծ գործին։

Կոմունիստական պարտիայի առաջ կարևորագույն խնդիր էր դրված՝ հաղթահարելով հին կարգերից ժառանգված ազգային թշնամանքը, անվստահությունն ու սահմանափակվածությունը, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, սովերին իրավահավասարության հիման վրա, կազմակերպել և ամրապնդել մեր երկրի բազմաթիվ ազգերի ու ժողովուրդների պետական դաշինքն ու եղբայրական համագործակցությունը՝ տնտեսական, ռազմական և

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 3, Հայպետհրատ, 1948, էջ 19։

կուլտուրական համագործակցության և փոխադարձ օգնության հիմունքներով։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո, Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան աղգային քաղաքականությունը իրականացնելու նպատակով, Սովետների համառուսաստանյան 2-րդ համագումարի որոշումով կազմակերպվում է Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսարիատ՝ Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ։ Կոմիսարիատը իր գործունեությունն սկսում և ծավալում է բավական դժվարին իրադրության մեջ։ Դեռ նոր էին ձևավորվում Սովետական պետության օրգանները։ Ռևոլյուցիայի ներքին և արտաքին թշնամիները միանալով, կատաղի պայքար էին սկսել Սովետական իշխանության դեմ։ Բուրժուական նացիոնալիստները բոլոր ուժերով ձգտում էին քայքայել մեր երկրի տարբեր ազգերի ու ժողովուրդների, բանվորների ու գյուղացիների միջև հաստատված միասնությունը։ Իսկ պարտիայի շարքերում թաքնված թշնամիները՝ տրոցկիստները, բուխարինականները և մյուս թափթփուկները ամեն կերպ օգնում էին սովետական կարգերի ներքին և արտաքին թշնամիներին։

Իր կազմակերպման առաջին իսկ օրից Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսարիատը խոշոր աշխատանք է ծավալում Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության կենսագործման ուղղությամբ։

1917 թ. նոյեմբերի 15-ին (2-ին) Սովետական կառավարությունը հրատարակում է «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան»։ Այդ պատմական փաստաթղթում ասված է, որ Ժողովրդական Կոմիսարների Սովետը ազգային հարցում իր գործունեության հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

«1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը։

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետության կազմելը։

3. Բոլոր և ամեն տեսակի ազգային ու ազգային կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը։

4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգային խմբերի ազատ զարգացումը»[1]։

---

[1] «Образование СССР», Сборник документов 1917—1924, под редакцией Э. Б. Генкиной, Москва-Ленинград, 1949, стр. 20.

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի մյուս մեծագույն փաստաթղթերի շարքում այս Դեկլարացիան նույնպես համաշխարհային պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ է։ Նա ազգային հարցի դիտական, մինչև վերջ հետևողական և ռևոլյուցիոն լուծման դարաշրջանի սկիզբը դրեց։ Նա կենսականորեն համապատասխանելով մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների ընդհանուր շահերին, նրանց առաջ բաց արեց Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի մեծությունը, պրակտիկ կերպով հաստատեց, որ ազգերի ու ժողովուրդների ազատությունն ու ինքնուրույնությունը, սակերևն իրավահավասարությունն ու եղբայրական դաշինքը հնարավոր է հաստատել միայն պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի, շահագործողների տիրապետության տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման միջոցով։ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» իտացած ձևով արտահայտված է այն հսկայական թեորետիկական և պրակտիկ փորձը, որը կուտակված էր Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության համար մղած երկարատև պայքարի ընթացքում։

Ազգությունների իրավահավասարության, բարեկամության և եղբայրական համագործակցության սկզբունքները հռչակվեցին նաև Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի համաշխարհային-պատմական այնպիսի փաստաթղթում, ինչպիսին է «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան», որը ընդունվեց 1918 թ. հունվարին, Սովետների Համառուսաստանյան 3-րդ համագումարում։ Այնտեղ ասված է, որ Ռուսաստանի Սովետական Ռեսպուբլիկան հիմնված է ազատ ազգերի ազատ դաշինքի հիման վրա, որպես ազգային Սովետական Ռեսպուբլիկանների Ֆեդերացիա և շարադրված են այդ Ֆեդերացիայի հիմունքները։

Ազգային հարցի վերաբերյալ Սովետական կառավարության առաջին կարևորագույն փաստաթղթերից մեկն է 1917 թ. դեկտեմբերի 31-ին (1918 թ. հունվարի 13-ին) ժողկոմսովետի Նախագահ Վ. Ի. Լենինի և Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսար Ի. Վ. Ստալինի ստորագրություններով հրատարակված դեկրետը «Ֆինլանդիայի մասին»։ Առանձնապես հայ ժողովրդի համար այդ դեկրետն ունի պատմական խոշորագույն նշանակություն։ Խոսելով այն մասին, թե ինչու անհրաժեշտություն առաջացավ հրատարակելու այդպիսի դեկրետ, Ի. Վ. Ստալինը 1917 թ. դեկտեմբերին գրել է. ««Ֆինլանդիայի»... երկար տարիներ Արև-

մուտքի ապահ դիվանագիտական իղձերի և Արևելքի արյունոտ վարչական մարդանքների առարկա է ծառայել (և շարունակում է ծառայել)։ Հայերի ջարդեր ու կոտորած, մի կողմից, բոլոր երկրների դիվանագետների փարիսեցիական «պաշտպանություն», որպես նոր կոտորածի քողարկում, մյուս կողմից, իսկ դրա հետևանքով արյունաշաղախ, խարխած ու սարկացված Հայաստան,— ո՞ւմ ծանոթ չեն «քաղաքակիրթ» տերությունների դիվանագիտական «հնրոսությունների» այդ «սովորական պատկերները»[1]։

Մինչև վերջ մերկացնելով արևմտյան իմպերիալիստներին, որպես բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ամենադաժան թշնամիների, Ի. Վ. Ստալինը ցույց է տվել, որ դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրության ուղին չէ, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, անբաժան կապված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտի հետ, որ միմիայն այդ ռևոլյուցիան կկարողանա մինչև վերջ հասցնել Ռուսաստանի ժողովուրդների ազատագրության գործը։ Ելնելով այդ բոլորից, Սովետական Ռուսաստանի ժողովրդական Կոմիսարների Սովետը հատուկ դեկրետ է հրատարակում «Թյուրքահայաստանի» մասին, որը միաժամանակ վճռական հակահարված էր գերմանա-թյուրքական զավթիչներին, որոնք բոլոր ուժերով ձգտում էին օկուպացված մարզերը բռնությամբ պահել իրենց իշխանության տակ։

«Թյուրքահայաստանի» մասին դեկրետում ասված է.

«Ժողովրդական Կոմիսարների Սովետը հայ ժողովրդին հայտարարում է, որ Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը պաշտպանում է... «Թյուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման, մինչև լիակատար անկախության իրավունքը։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը դտնում է, որ այդ իրավունքի իրականացումը հնարավոր է միայն մի շարք նախնական նրաշխիքների դեպքում, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար»[2]։

• Ըստ դեկրետի, այդ երաշխիքներն էին՝ զորքերի դուրս բերելը «Թյուրքահայաստանի» սահմաններից և անմիջապես հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպումը՝ «Թյուրքահայաստանի» բնակչության կյանքի և ունեցվածքի պաշտպանության նպատակով, առանց խոչընդոտների «Թյուրքահայաստան» վերադարձնել զաղ-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 30։

[2] «Образование СССР», Сборник документов 1917—1924, стр. 27.

թական հայերին, ինչպես նաև էմիգրանտ հայերին, որոնք ցրված են տարբեր երկրներում, առանց խոչընդոտների «Բյուրքահայաստան» վերադարձնել բոլոր այն հայերին, որոնք պատերազմի ժամանակ թյուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով քշվել են Թյուրքիայի խորքերը, «Բյուրքահայաստանին» ժամանակավոր ժողովրդական կառավարության կազմակերպումը՝ հայ ժողովրդի դեպուտատների Սովետի ձևով, որը պետք է ընտրվի դեմոկրատական հիմունքներով։

Կովկասյան Գործերի Արտակարգ Կոմիսար Ստ. Շահումյանին այդ դեկրետով հանձնարարված էր ամեն տեսակի օգնություն կազմակերպել «Բյուրքահայաստանի» բնակչությանը՝ դեկրետով նախատեսված միջոցառումները իրականացնելու գործում և կազմակերպել խաղաղ հանձնաժողով՝ զորքերը «Բյուրքահայաստանի» սահմաններից դուրս բերելու ժամկետները և միջոցները որոշելու համար։

Սակայն, ինչպես հայտնի է, այն ժամանակ Սովետական Ռուսաստանի համար ստեղծված ներքին և միջազգային ծանր դրությունը,— նրա բլոկադան իմպերիալիստական պետությունների կողմից, գերմանական իմպերիալիզմի զորքերի, ապա ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, ճապոնական և մյուս երկրների իմպերիալիստական պետությունների ռազմական ինտերվենցիայի ծավալումը, վերջիններիս բազմապիսի օգնությունը սպիտակ գվարդիական և մյուս բոլոր կոնտրռևոլյուցիոն ուժերին, քաղաքացիական կռիվների ծավալումը, Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական ուժերի՝ մենշևիկների, դաշնակների ու մուսավաթիստների կողմից Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից և նրա օկուպացումը օտարերկրյա իմպերիալիստների կողմից ու մի շարք այլ հանգամանքներ խանգարեցին «Բյուրքահայաստանի» մասին ժողկոմսովետի դեկրետի իրականացմանը։

Բուրժուական նացիոնալիզմի, նրա ամեն տեսակի արտահայտությունների և սովետական կարգերի մյուս բոլոր թշնամիների դեմ մղվող վճռական ու անհաշտ պայքարում քայլ առ քայլ հպարհարելով ազգերի ու ժողովուրդների փոխադարձ անվստահության պատնեշը, Կոմունիստական պարտիան ամուր հիմքեր դրեց ժողովուրդների նոր, սոցիալիստական-համագործակցության համար։ Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը գործնականապես ստեղծեցին բոլոր անհրաժեշտ պայմանները մեր երկրի ժողովուրդների զարգացման, նախկինում ճնշված և կոր-

ծանման ենթակա ազգերի վերածննդի, նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական վերելքի համար, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման համար։

Դրանով իսկ սկիզբ դրվեց նոր, սոցիալիստական ազգերի ծագմանը և զարգացմանը, ազգեր, որոնք առաջացան հին, բուրժուական ազգերի փլատակների վրա։

* * *

Նախքան Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ կոմունիստները պայքարում են ազգությունների այնպիսի կամավոր միավորման համար, որի ընթացքում կտրականապես բացառվելու է ազգերին միմյանց դեմ դրդռելը և լիակատար կամավորության հիման վրա հաստատվելու է իսկական եղբայրական դաշինք, որը սակայն անմիջապես իրականացնել հնարավոր չէ, այլ անհրաժեշտ է համբերատար և լուրջ կերպով նախապատրաստել։

Այդ ուղղությամբ ամենակարևոր և ամենալուրջ հարցերից մեկն է եղել, թե ինչպիսի կառուցվածք պետք է ունենար ապագա սոցիալիստական բազմազգ պետությունը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ։ Նախահոկտեմբերյան շրջանում Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը մշակելով այդ հարցը, ինչպես հայտնի է, հանդես են եկել ֆեդերալիզմի սկզբունքի դեմ։

«Այդ բացասական վերաբերմունքը դեպի պետական ֆեդերալիզմն ամենից ավելի սուր արտահայտություն ստացավ Լենինի 1913 թվականի նոյեմբերին Շահումյանին ուղղած հայտնի նամակում»[1],— գրում է Ի. Վ. Ստալինը։ Այդ նամակում Վ. Ի. Լենինը նշել է, որ կոմունիստները սկզբունքով դեմ են ֆեդերացիային այն պատճառով, որովհետև նա թուլացնում է տնտեսական կապը։

1917 թ. մարտին այդ նույն հարցի կապակցությամբ հանդես է գալիս Ի. Վ. Ստալինը «Ֆեդերալիզմի դեմ» հոդվածով, ուր պաշտպանելով լենինյան դրույթները, տվել է ֆեդերացիայի վերաբերյալ հարցի խորը վերլուծությունը և բուրժուական ֆեդերացիայի կեղծությունն ու սնանկությունը։

Զարգացման հետագա շրջանում, 1917 թ. օգոստոսին, «Պետություն և ռևոլյուցիա» հանճարեղ աշխատության մեջ Վ. Ի. Լենինը

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 3, Հայպետհրատ, 1948, էջ 32—33։

վերանայելով ֆեդերացիայի վերաբերյալ դրույթները, ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը, առաջին լուրջ քայլն է անում ֆեդերացիայի ընդհանուր թույլտվության ուղղությամբ, որպես դեպի «ցենտրալիստական ռեսպուբլիկա» տանող անցողիկ ձև, սակայն այդ ընդունումը ուղեկցելով մի շարք լուրջ վերապահումներով։ Վ. Ի. Լենինը հանգում է այն հետևության, որ ֆեդերատիվ կառուցվածքը կարող է լինել որոշ քայլ դեպի առաջ կենտրոնացած դեմոկրատական ռեսպուբլիկա ստեղծելու գործում։

Պատմական զարգացման նոր իրադրության պայմաններում խորը կերպով հաշվի առնելով պրոլետարիատի և դյուղացիության ուժերի փորձը, որը հսկայական չափով հարստացել էր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ, Կոմունիստական պարտիան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո առաջ է քաշում և հիմնավորում նոր վերաբերմունք դեպի ֆեդերացիան։ Այդ ժամանակ Կոմունիստական պարտիան հաստատ ու որոշակի կերպով կանգնում է սովետական ռեսպուբլիկաների ֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտության վրա, ֆեդերացիա, որն իր սկզբունքներով արմատապես տարբերվում է բուրժուական ֆեդերացիայից։ Ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը, այդ տեսակետն առաջին անգամ իր արտահայտությունն ստացավ 1918 թվականի հունվարին, հայտնի «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայի» մեջ։ Դեկլարացիայում ասված է. «Ռուսաստանի Սովետական ռեսպուբլիկան հիմնվում է ազատ ազգերի ազատ միության հիմունքով, իբրև Սովետական ազգային ռեսպուբլիկաների ֆեդերացիա»[1]։

Պաշտոնապես այդ տեսակետը պարտիայի կողմից հաստատվեց նրա 8-րդ համագումարում (1919)։ Հայտնի է, որ այդ համագումարում ընդունվեց ՌԿ(բ)Պ-ի ծրագիրը։ Այնտեղ ասված է, որ որպես դեպի լիակատար միասնություն տանող անցողիկ ձևերից մեկը, Կոմունիստական պարտիան առաջադրում է սովետական տիպով կազմակերպված պետությունների ֆեդերատիվ միավորումը։

Այդպիսին էր Կոմունիստական պարտիայի հայացքների էվոլյուցիան ֆեդերացիայի հարցի վերաբերյալ, պրոլետարիատի հաղթանակից հետո ստեղծվելիք պետության ֆեդերատիվ կառուցվածքի վերաբերյալ։

---

[1] Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հատ. 26, էջ 517։

Այդ էվոլյուցիան պայմանավորված էր հետևյալ երեք պատճառներով,— նշում է Ի. Վ. Ստալինը։

Նախ նրանով, որ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության ժամանակի մոտերքը Ռուսաստանի մի ամբողջ շարք ազգություններ փաստորեն դտնվում էին կատարյալ անջատման և միմյանցից կատարյալ կտրվածության վիճակում։ Այդպիսի պայմաններում պետության ֆեդերատիվ կառուցվածքի անհրաժեշտության ընդունումը և նրա կազմակերպումը հանդիսացավ մի քայլ առաջ Ռուսաստանի տարբեր ազգությունների աշխատավոր մասսաների բաժան-բաժան վիճակից դեպի նրանց մերձեցումը, դեպի նրանց միավորումը։

Երկրորդ, նոր, Սովետական պետության շինարարության ընթացքում ֆեդերացիայի ձևերը կյանքում, գործնականում հանդիսացան ազգությունների մերձեցման լավագույն ձևերը և համապատասխանեցին Ռուսաստանի ազգությունների աշխատավոր մասսաների անտեսական մերձեցման նպատակներին։

«Երրորդ, նրանով, որ ազգային շարժման տեսակարար կշիռն անհամեմատ ավելի լուրջ դուրս եկավ, իսկ ազգերի միավորման ուղին՝ անհամեմատ ավելի բարդ, քան այդ կարող էր թվալ առաջ, մինչպատերազմյան շրջանում, կամ Հոկտեմբերյան հեղափոխությանը նախորդող շրջանում»[1]։

Միաժամանակ Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը պատմական զարգացման կոնկրետ փաստերի դիտական խորը վերլուծության հիման վրա բացահայտել են բուրժուական և սովետական ֆեդերացիաների էությունը, այն արմատական տարբերությունները, որոնք կան բուրժուական և սովետական ֆեդերացիաների միջև։ Նրանք ցույց տվեցին, որ կապիտալիստական երկրներում պետությունների ֆեդերատիվ միավորումը վեր է ածվել ունիտար պետության, որի ընթացքում ուժի և բռնության միջոցով ոչնչացվել է անկախ պետությունների և մարզերի ինքնուրույնությունը։

Հակառակ բուրժուական ֆեդերացիայի սկզբունքների ու նրա կառուցվածքի, Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը ցույց են տվել, որ սոցիալիստական հեղափոխությունից հետո Ռուսաստանում բազմազգական շինարարությունը և ֆեդերացիայի կազմակերպումը տեղի են ունեցել բոլորովին այլ մեթոդներով և ոգիներով։ Սովետական Ռուսաստանում ֆեդերացիան ստեղծվել է որպես սովետների

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 3, էջ 35—36։

իրավահավասար ժողովուրդների ազատ պետական դաշինք, որի հիմքում ընկած է ժողովուրդների բարեկամությունը, եղբայրական ամուր դաշինքը և համագործակցությունը մեկ ընդհանուր նպատակի՝ կոմունիստական հասարակարգի կառուցման համար։

Ժողովուրդների այդպիսի միության վկայուն օրինակ հանդիսացավ Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկան, առաջին բազմազգ սոցիալիստական պետությունը, որը կազմակերպվեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ։ Հակառակ բուրժուական բազմազգ պետությունների, որոնք ի վիճակի չեն դիմանալու ժողովուրդների կյանքում տեղի ունեցած ծանր փորձություններին և դրա հետևանքով փլուզման են ենթարկվում, ինչպես այդ տեղի է ունեցել ավստրո-հունգարական պետության հետ, Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկան՝ որպես իրավահավասար ազգերի հոժարակամ միություն, իր գոյության առաջին իսկ օրվանից վկայուն կերպով ցույց տվեց իր կենսունակությունը, ազգությունների կամավոր միավորման քաղաքականության ուժն ու հզորությունը և սովետական ֆեդերացիայի առավելությունները բուրժուական ֆեդերացիայի նկատմամբ։

Սովետական ֆեդերացիան արմատապես տարբերվում է բուրժուական ֆեդերացիայից։ Նա ոչ միայն ժխտում է բուրժուական ֆեդերացիան, այլև բուրժուական հասարակարգը ամբողջությամբ վերցրած։ Որպես բազմազգ պետության նոր, ավելի բարձր ձև, սովետական ֆեդերացիայի հիմքը հանդիսանում է ամենաառևլյուցիոն դասակարգի՝ պրոլետարիատի դիկտատուրան, որը հաստատել է արտադրության միջոցների և գործիքների հանրային սեփականություն, լիկվիդացրել է մարդու կողմից մարդու շահագործումը և բուրժուական նացիոնալիզմին հակադրում է պրոլետարական ինտերնացիոնալիզմը, հետևողականորեն իրականացնելով ազգերի ու ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության քաղաքականությունը։

2. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՍՌ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ԱՆԴԱՄ

Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակով ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության համար նոր, ավելի բարձր էտապ սկսվեց։ Եթե մինչև այդ երկրամասի ժողովուրդները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ինտերնացիոնալ կապեր հաստատելով միմյանց միջև, պայքարում էին շահագործողների տիրապետության տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար, ապա այժմ՝ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, ինչպես բոլոր սովետական ժողովուրդների, նույնպես և Անդրկովկասի ժողովուրդների առաջ կարևորագույն գործնական խնդիր էր դրված՝ ներքին և արտաքին թշնամիներին վճռական հակահարված տալու և կոմունիստական հասարակության կառուցումը առաջ տանելու համար Սովետական ռեսպուբլիկաների միջև հաստատել սերտ համագործակցություն, ամուր անտեսական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական դաշինք։

Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի համար այդպիսի պետական-քաղաքական միավորման փայլուն օրինակ հանդիսացավ Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկան, որը՝ որպես ապագա միության հզոր կորիզ, կազմակերպվել էր 1918 թ. հունվարին, Սովետական իշխանության գոյության համար մղված քաղաքացիական կռիվների ամենավճռական օրերին։ Իր կազմակերպման առաջին իսկ տարիներին նա արդեն գործնականում ցույց էր տվել Սովետական Ռուսաստանի ժողովուրդների պետական-քաղաքական միավորման ուժն ու հզորությունը։ Այդ միավորման և սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ հերոսական պայքարի շնորհիվ Սովետական Ռուսաստանը պատմական հաղթանակներով դուրս եկավ 1918—1921 թթ. օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների ծանր փորձություններից, եղբայրական անշահախնդիր օգնություն ցույց տալով մեր երկրի բոլոր ժողովուրդներին, այդ թվում նաև Անդրկովկասի ժողովուրդներին՝ ձեռք բերելու իրենց աղատությունն ու անկախությունը և մասնակից դառնալու կոմունիստական հասարակարգի կառուցման պատմական գործին։

Առաջնորդվելով Կոմունիստական պարտիայի Լենինյան —

ստալինյան ազգային քաղաքականության սկզբունքներով և հաշվի առնելով Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության՝ առաջին բազմազգ սոցիալիստական պետության հարուստ և ուսանելի փորձը, Անդրկովկասի սովետական հանրապետությունները իրենց գոյության առաջին իսկ ամիսներից կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ որոշակի քայլեր են կատարում միմյանց միջև եղբայրական հարաբերություններ հաստատելու, փոխադարձաբար իրար օգնելու և ցարիզմի ու բուրժուա-նացիոնալիստական պարտիանների՝ դաշնակների, մենշևիկների ու մուսավաթիստների թողած ժառանգությունը՝ ազգային մեկուսացածությունը, թշնամանքն ու ատելությունը լիկվիդացնելու ուղղությամբ: Ինչպես տեսանք առաջին գլխում, երբ Հայաստանում նոր էին հաստատվել սովետական կարգեր, Սովետական Ադրբեջանի աշխատավորները և դեռևս մենշևիկյան լծի տակ տառապող Վրաստանի աշխատավորները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, իրենց համերաշխությունն ու եղբայրական օգնությունը ցույց տվեցին ներքին և արտաքին ծանր վիճակում գտնվող երիտասարդ Սովետական Հայաստանի բանվորներին ու դյուղացիներին: Սովետական Ադրբեջանի աշխատավորները 1921 թ. քաղաքացիական կռիվների ժամանակ իրենց ղինված ուժերով օգնեցին Հայաստանի աշխատավորներին օտարերկրյա լնտերվենտների և դաշնակցական կոնտրռևոլյուցիոն բանդաների դեմ մղվող պայքարում: Բացի դրանից, նրանք խոշոր նյութական օգնություն կազմակերպեցին Հայաստանին (որը մինչև 1921 թ. փետրվարի 25-ը բլոկադայի էր ենթարկված վրացական մենշևիկյան կառավարության կողմից), Սովետական Ռուսաստանի հետ միասին ամեն կերպ ճնշում գործ դնելով վրացական մենշևիկների վրա՝ բլոկադան վերացնելու և Վրաստանի տերիտորիայով անցնող երկաթուղով դեպի Հայաստան կենսամթերքներ ու այլ անհրաժեշտ ապրանքներ ուղարկելու համար: Դրա շնորհիվ նրանց հաջողվում է, հակառակ մենշևիկների դիմադրության, Վրաստանի տերիտորիայով անցնող երկաթուղով դեպի Հայաստան ուղարկել մեծ քանակությամբ ապրանքներ, մեղմացնելով ռևսպուբլիկայի տնտեսական ծանր վիճակը: Մենշևիկների իշխանության տակ գտնվող Վրաստանի բանվորներն ու դյուղացիները նույնպես իրենց օգնությունը ցույց տվեցին Սովետական Հայաստանին, Վրաստանի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ծավալուն պայքար տանելով Անդրկովկասում իմպերիալիզմի վերջին հենարան մենշևիկյան տիրապետության տապալման, Սովետա-

կան Հայաստանի բլոկադան լիկվիդացնելու և երկրամասի ժողովուրդների միջև եղբայրական խաղաղ համակեցություն հաստատելու համար։ Իսկ երբ Վրաստանում լայն ծավալ էր ընդունել պայքարը Սովետական իշխանության հաղթանակի համար, այդ պայքարում Վրաստանի բանվորներին ու գյուղացիներին իրենց եղբայրական օգնությունը ցույց տվեցին իշխանության գլուխ անցած Հայաստանի ու Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները։

Վրաստանում սովետական կարգերի հաղթանակից, դրանով իսկ ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների վերջին հենարանը Անդրկովկասում լիկվիդացնելուց հետո, ստեղծվում են բոլոր հնարավորությունները մեկ կողմից երկրամասի սովետական երեք ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի, մյուս կողմից այդ ռեսպուբլիկաների ու սովետական մյուս ռեսպուբլիկաների, առաջին հերթին Սովետական Ռուսաստանի միջև տնտեսական, քաղաքական, ռազմական միասնություն հաստատելու, սովերեն իրավահավասարության հիման վրա պետական-քաղաքական ամուր դաշինք ստեղծելու համար։ Որպես դրա անմիջական արդյունք, 1920—1921 թթ. Սովետական Ռուսաստանի և Հայաստանի (1920 թ. դեկտեմբերի 2-ին), Ադրբեջանի (1920 թ. սեպտեմբերի 30-ին), Վրաստանի (1921 թ. մայիսի 21-ին) միջև կնքվում են դաշնակցային պայմանագրեր։

Սակայն Անդրկովկասի այն ժամանակվա պայմաններում հարցը դրված էր ոչ միայն այդպիսի պայմանագրային հարաբերությունների ստեղծման մասին՝ Ռուսաստանի ու Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների միջև, այլև վերջիններիս մեկ ընդհանուր, ամուր պետական-քաղաքական միության մեջ միավորելու անհրաժեշտության մասին, Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիա կազմակերպելու մասին։ Այդ էին պահանջում Անդրկովկասի աշխատավորների շահերը։

1921 թվականի ապրիլի 14-ին՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին» ուղղած ծրագրային նամակում Վ. Ի. Լենինը նշել է. «Չկրմատին ողջունելով Կովկասի սովետական ռեսպուբլիկանները, ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[1]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։

Ազգային խաղաղությունը, եղբայրական դաշինքը և սերտ համագործակցությունը Կովկասի ազգությունների բանվորների և գյուղացիների միջև Վ. Ի. Լենինը համարում էր որպես կարևորագույն նախադրյալ Սովետական իշխանության պահպանման և ամրապնդման համար, սոցիալիզմի իրականացման համար։ Այդ դժվարին խնդրի հաջող լուծման համար մեծ առաջնորդը ցուցում էր տալիս Կովկասի կոմունիստներին երկրամասի պատմական իրադրության պայմաններում, ի տարբերություն Ռուսաստանի պայմանների, լուրջ կերպով հաշվի առնել նրա յուրահատկությունները և Սովետական Ռուսաստանի հարուստ փորձի հիման վրա կենսագործել Անդրկովկասի ռեսպուբլիկաների պետական— քաղաքական միավորումը։

Առանձնահատուկ կերպով ընդգծելով սովետական ռեսպուբլիկաների հոժարակամ միության ստեղծման գործում եղած լուրջ դժվարությունները և նրանց հաղթահարման համար համբերատար, հետևողական, բազմակողմանի ու լուրջ նախապատրաստական աշխատանքների անհրաժեշտությունը, դեռևս 1919 թ. դեկտեմբերին Վ. Ի. Լենինը գրել է. «Այդպիսի միությունը չի կարելի միանգամից իրագործել, դրան հարկավոր է հասնել մեծագույն համբերությամբ և զգուշությամբ աշխատելով, որպեսզի գործը չվիշանա, որպեսզի անվստահություն չառաջանա, որպեսզի վերացվի այն անվստահությունը, որը մնացել է կալվածատերերի և կապիտալիստների դարավոր ճնշումից, մասնավոր սեփականության և դրա բաժանման ու վերաբաժանման համար եղած դարավոր թշնամանքից»[1]։

Իսկ ինչպիսին էր Անդրկովկասի դրությունն այն ժամանակ, ի՞նչ դժվարություններ կային Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիայի կազմակերպման ճանապարհին։

1921 թ. հուլիսի 6-ին Վրաստանի Կոմունիստական պարտիայի Թիֆլիսի կազմակերպության ընդհանուր ժողովում կարդացած «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը խորը կերպով վերլուծելով Սովետական Վրաստանի վիճակը, ցույց է տվել ինչպես Վրաստանի, նույնպես և Ադրբեջանի ու Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գործնական խնդիրները Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ։ Բնորոշելով Սովետական Վրաստանի կոնկրետ պայմանները, Ի. Վ. Ստալինը նշել է հետև-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 368։

յալ մի քանի փաստերը. նախ այն, որ անհնարին է պատկերացնել Սովետական Վրաստանի, և ամեն մի այլ սովետական ռեսպուբլիկայի անջատ գոյությունը կապիտալիստական շրջապատման պայմաններում։ Այստեղից էլ սովետական ռեսպուբլիկաների տնտեսական, քաղաքական ու ռազմական դաշինքն ու փոխադարձ աջակցությունը անհրաժեշտ պայման են հանդիսանում նրանց գոյության ու զարգացման համար։ Երկրորդ՝ Վրաստանը, որը տառապում է պարենամթերքի պակասությունից, չի կարող կառավարվել առանց ռուսական հացի։ Երրորդ՝ հեղուկ վառելիք չունեցող Վրաստանը չի կարող իր տրանսպորտն ու արդյունաբերությունը պահել առանց Ադրբեջանի նավթամթերքների։ Չորրորդ՝ էքսպորտային ֆոնդերի պակասությունից տառապող Վրաստանը ապրանքային բյուջեի դեֆիցիտը ծածկելու համար չարիք ունի Ռուսաստանի օգնության ոսկով։ Վերջապես, չի կարելի հաշվի չառնել Վրաստանի ազգային կազմի հարաստությունն ու բազմազանությունը, որը պահանջում է խաղաղություն և եղբայրական համագործակցություն հաստատել ազգերի միջև[1]։

Բնութագրելով Անդրկովկասի յուրահատկությունը, Ի. Վ. Ստալինը նշել է, որ Ռուսաստանի բոլոր ծայրամասերից Անդրկովկասը աչքի է ընկնում ազգային կազմի հարստության ու բազմազանության իմաստով։ Իսկ այդ հանգամանքը մշտապես փորձել են օգտագործել ռևոլյուցիայի բոլոր թշնամիները՝ մոլեդին կերպով ներմանելով ազգային թշնամանք, երկրամասի տարբեր ազգերին ու ժողովուրդներին պատերազմի հանելով միմյանց դեմ, դասակարգային պայքարը փոխարինելով ազգային դրոշակներով ու պաճուճանքներով։ Ի. Վ. Ստալինը ցույց է տվել, որ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների՝ դաշնակների, մուսավաթիստների ու մենշևիկների մոտ երեք տարվա տիրապետությունը Անդրկովկասում հասցրել էր ազգային թշնամանքի ու հակասությունների ծայրահեղ ուժեղացման, որը իր հերթին լուրջ արգելք էր հանդիսանում սովետական ռեսպուբլիկաների միավորմանը։

Ստեղծված այդպիսի իրադրության պայմաններում անհրաժեշտ էր հաստատ կերպով ու հետևողականորեն տանել պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականություն, մինչև վերջ մերկացնել և ջախջախել բուրժուական նացիոնալիզմը և երկրամասում ստեղծել ազգային խաղաղության մի օրգան՝ հանձին Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիայի։

[1] Տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 104—105։

Բացի դրանից, այն ժամանակ կային նաև մի շարք այլ պատճառներ, որոնք ֆեդերացիայի կազմակերպումը հրամայական անհրաժեշտություն էին դարձրել։ Այս տեսակետից խոշորագույն նշանակություն ունեին Անդրկովկասի երեք ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի տնտեսական փոխհարաբերությունները։ Ռեսպուբլիկաների միջև եղած տնտեսական մեկուսացվածությունը, մաքսային բարյերները և վերահսկիչ կետերը, որոնք ստեղծվել էին բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների կողմից և Սովետական իշխանության հաստատման առաջին ամիսներին իրենց մնացորդներով դեռևս շարունակվում էին, խոշոր չափով արգելակում էին Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների տնտեսական զարգացման գործին։ Այդ գործում խոչընդոտ էր նաև այն փաստը, որ Անդրկովկասյան յուրաքանչյուր ռեսպուբլիկա ուներ իր սեփական դրամական սիստեմը։

Նման պայմաններում Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջ մարտական խնդիր էր դրված՝ սովետական ռեսպուբլիկաների ֆեդերացիայի կազմակերպումով հաղթահարել, լիկվիդացնել տնտեսական այդպիսի մեկուսացվածությունը, որը կարող էր օգտակար լինել միայն սոցիալիզմի թշնամիների համար և անխախտ համագործակցություն հաստատելով Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի սովետական ռեսպուբլիկաների միջև, սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին, առաջ տանել կոմունիստական հասարակարգի կառուցումը։ Մինչդեռ այն ժամանակ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների շարքերում խցկված նացիոնալ-ուկլոնիստները արտահայտելով տապալված դասակարգերի ձգտումները, բոլոր ջանքերով աշխատում էին ավելի ու ավելի ուժեղացնել սահմանային բարյերները և տնտեսական մեկուսացվածությունը Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների միջև, կատաղաբար պայքարելով ֆեդերացիայի կազմակերպման դեմ։

Մյուս, ոչ պակաս կարևոր մոմենտը, որը Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը հրամայական անհրաժեշտություն էր դարձնում, այդ այն փաստն էր, որ Սովետական երկրի հարավային սահմաններին գտնվող Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի համար օտարերկրյա իմպերիալիստների կողմից ինտերվենցիայի վտանգը դեռևս չէր անցել և ահա այդ պատճառով էլ՝ հնարավոր ինտերվենցիայի փորձերին վճռական հակահարված տալու նպատակով պետք էր միավորել այդ երեք ռեսպուբլիկանների ռազմա-

կան ուժերը, ինչպես նաև զարգացման տվյալ էտապում այդ հանրապետությունների միջև հաստատել դիվանագիտական ամուր դաշինք։

Հետևողականորեն կենսագործելով ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի ցուցումները, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ֆ. Մյասնիկյանի ղեկավարությամբ մերկացնելով և ջախջախիչ հարվածներ հասցնելով բուրժուական նացիոնալիստներին և մյուս թշնամիներին, հաջողությամբ իրականացնում էին Ֆեդերացիայի կազմակերպման նախապատրաստումը։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման համար մղվող պայքարի ավանդարդումն էր դառնում Բաքվի հերոսական պրոլետարիատը, որն անցել էր ինտերնացիոնալ դաստիարակության ու ռևոլյուցիոն պայքարի մեծ դպրոց։ Դեռևս 1921 թ. ապրիլի 11-ին բանվորների, գինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի Սովետի նիստը լսում է Ս. Օրջոնիկիձեի և Ս. Մ. Կիրովի զեկուցումները Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների միավորման մասին և ընդունում է ծավալուն բանաձև այդ հարցի վերաբերյալ, ուր ասված է Բաքվի բոլշևիզմի պրոլետարիատի վճռական խոսքը Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտության մասին[1]։

Այդ ուղղությամբ ծավալուն աշխատանք էին կատարում նաև Հայաստանի ու Վրաստանի կոմունիստական կազմակերպությունները։

Անդրկովկասի պարտիական կազմակերպությունները մեկ կողմից շարունակում էին ծավալուն ագիտացիոն-քաղաքական աշխատանքները երկրամասի աշխատավորության մեջ հօգուտ Ֆեդերացիայի կազմակերպման, նրա դաշտիարների ամրապնդման, մյուս կողմից աստիճանաբար իրականացնում էին որոշ գործնական քայլեր Սովետական Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի տնտեսական— քաղաքական մերձեցման, նրանց միջև դեռևս գոյություն ունեցող տնտեսական անջատվածության մնացորդների լիկվիդացման համար։ Դրա շնորհիվ գնալով, ամրապնդվում էր Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների տնտեսական, քաղաքական և ռազմական դաշինքը։

1921 թ. ապրիլի 20-ին հրապարակվում է Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի

---

1 Տե՛ս «Образование СССР», Сборник документов, 1917—1924, стр. 271.

միջև կնքված համաձայնագիրը Անդրկովկասի երկաթուղիների միավորման մասին։ «Շահագործման ենթակա բոլոր երկաթուղիները,— ասված է համաձայնագրի առաջին կետում,— որ անցնում են Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սովետական ռեսպուբլիկաների սահմաններում, միավորվում են Անդրկովկասյան ռեսպուբլիկաների երկաթուղիների մեկ ընդհանուր ցանցի մեջ։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաների երկաթուղիների ամբողջ ցանցը,— կարդում ենք համաձայնագրի երկրորդ կետում,— պլխավորվում է Անդրկովկասյան ռեսպուբլիկաների մեկ վարչությամբ, որի տեղը հանդիսանում է Թիֆլիսը»[1]։ Համաձայնագրի երրորդ կետում խոսվում է ռեսպուբլիկանների միջև տեղական փոխադրումների կազմակերպման գործնական միջոցառումների մասին։

Անդրկովկասյան երկաթուղիների միավորման վերաբերյալ այդ համաձայնագրի ընդունումը և կենսագործումը խոշոր չափով նպաստեց տնտեսական փոխհարաբերությունների ամրապնդմանը մեկ կողմից Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև, մյուս կողմից այդ ռեսպուբլիկանների ու Սովետական Ռուսաստանի միջև։ Վերականգնվում և ծավալվում է երկաթուղային կանոնավոր երթևեկությունը Անդրկովկասի բոլոր երկաթուղագծերով։

Դրանից երկու ամիս հետո, 1921 թ. հունիսի 25-ին հրապարակվում է Անդրկովկասի սովետական երեք ռեսպուբլիկանների համաձայնագիրը արտաքին առևտրի միավորման մասին։ Համաձայնագիրը բաղկացած էր 11 կետից և նրանում ամբողջությամբ արտացոլված էին Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի սովետական ռեսպուբլիկանների՝ արտաքին շուկաներում միասնաբար հանդես գալու սկզբունքները։

Նրա առաջին կետում ասված է. «Բոլոր արտաքին շուկաներում ապրանքափոխանակությունը պլանաչափ կերպով կազմակերպելու և արտահանության իրենց բոլոր ֆոնդերը իրացնելու նպատակով, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի սոցիալիստական ռեսպուբլիկանները հաստատում են արտաքին առևտրի միասնական օրգան, որը կոչվում է «Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի միություն արտաքին առևտրի համար» և որի տեղը համարվում է Թիֆլիսը[2]։ Պայմանագրի մյուս կետերում նշված են միացյալ արտաքին առևտրի այդ օրգանի իրավունքները, նրա ապարատի կազմակերպման,

---

[1] «Образование СССР», Сборник документов 1917—1924, стр. 271.

[2] Там же, стр. 271—272.

նյութական միջոցների ստեղծման և նորմալ աշխատանքները ապահովելու միջոցառումները:

Զարգացման տվյալ էտապում Ֆեդերացիան Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների համար պետական-քաղաքական կազմակերպության այն օպտիմալ ձևն էր, որով պետք է ստեղծվեին լայն հնարավորություններ նրանց տնտեսական, քաղաքական և կուլտուրական բարգավաճման համար:

Մոբիլիզացնելով բոլոր ուժերը և հետևողականորեն կենսագործելով Ռ.Կ(բ) պարտիայի կենտրոնական Կոմիտեի ցուցումները, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ֆ. Մյասնիկյանի ղեկավարությամբ հաստատ կերպով առաջ էին ընթանում եղբայրական երեք ռեսպուբլիկաների Ֆեդերացիայի ստեղծման ճանապարհով:

1921 թ. նոյեմբերի 3-ին տեղի է ունենում Ռ.Կ(բ)Պ Կ.Կ-ի Կովկասյան Բյուրոյի պլենումը Ռ.Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկեր Վ. Մ. Մոլոտովի մասնակցությամբ: Քննության առնելով Ֆեդերացիայի կազմակերպման հարցը, այդ մասին պլենումն ընդունում է իր որոշումը, որի հիման վրա նոր թափ են առնում Ֆեդերացիայի կազմակերպման-նախապատրաստական աշխատանքները: Բանաձևում ասված է.

«Անդրկովկասի ռեսպուբլիկանների անջատ-անջատ պետական գոյությունը թուլացնում է նրանց կապիտալիստական ու բուրժուական երկրների հանդեպ. քաղաքական սերտ դաշինքը հաստատուն երաշխիք կհանդիսանա կոնտրևոլյուցիոն ուժերի ամեն տեսակ ոտնձգություններից պաշտպանվելու համար և կամրացնի Սովետական իշխանությունը Մերձավոր Արևելքի սահմանադլխին:

Քաղաքական միավորումը ռեսպուբլիկաներին հնարավորություն կտա գործնականում տնտեսական սերտ դաշինք հաստատել միմյանց հետ, մի դաշինք, որը կնքելու փորձեր քանիցս կատարվել են: Մինչդեռ ռեսպուբլիկանների բաժանվածությունը խորացնում է Անդրկովկասի տնտեսական առանց այն էլ ծանր դրությունը, ժողովրդական մասսաների աղքատությունն ու քայքայումը և մի շարք թյուրիմացություններ էր առաջացրել ռեսպուբլիկանների միջև: Անդրկովկասը իրենից ներկայացնում է միասնական տնտեսական մի ամբողջություն և նրա տնտեսական զարգացումը կարող է ընթանալ միմիայն համակովկասյան տնտեսական միավորման նշանաբանով:

Վերջապես, բազմաթիվ ժողկոմատների ու հիմնարկների գո-

յությունը երեք ռեսպուբլիկաներում շատ ուժեր ու միջոցներ է կլանում, ավելորդ զոռահեռականություն է ստեղծում շատ օրգանների աշխատանքում։ Ուստի և պետական կյանքի գլխավոր, կարևորագույն ճյուղերում ընդհանուր ուժերով վարչարարումը կուժեղացնի և արդյունավետ կդարձնի սովետական աշխատանքը։

Դրանից ելնելով Կավբյուրոն (Կովկասյան բյուրոն) անհետաձգելի ու անհրաժեշտ է գտնում ֆեդերատիվ դաշինքի կնքումը ռեսպուբլիկաների միջև՝ նախ և առաջ ռազմական, տնտեսական ու ֆինանսական աշխատանքի և արտաքին քաղաքականության բնագավառում»[1]։

ՌԿ(բ)Պ ԿԿ-ի Կովկասյան Բյուրոյի պլենումի այդ որոշումից երեք օր հետո, նոյեմբերի 7-ին Թիֆլիսում տեղի է ունենում Անդրկովկասյան երկրային պարտիական 2-րդ խորհրդակցությունը, ուր լսվում է Ս. Օրջոնիկիձեի զեկուցումը ֆեդերացիայի նախապատրաստման ուղղությամբ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում կատարվող աշխատանքների ընթացքի մասին։ Զեկուցման առթիվ միաձայն ընդունված բանաձևում երկրային պարտիական 2-րդ խորհրդակցությունը ընդգծելով ֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ երկրամասում ծավալվածհսկայական ադիտացիոն-քաղաքական աշխատանքները, անհրաժեշտություն է համարում արագացնելու ֆեդերացիայի կազմակերպման գործը[2]։

Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտության մասին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի պլենումի որոշումը նույն թվականի նոյեմբերի վերջերին ներկայացվում է ՌԿ(բ)Պ Կենտկոմի հաստատմանը։ Վ. Ի. Լենինը ծանոթանալով այդ որոշմանը, Կենտկոմի Քաղբյուրոյի հաստատմանը ներկայացնելու նպատակով նոյեմբերի 28-ին կազմում է առաջարկի նախագիծ Անդրկովկասի Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերացիա կազմակերպելու վերաբերյալ։

Վ. Ի. Լենինի կազմած նախագծում ասված է.

«1) Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիան համարել սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անսպասման իրագործման ենթակա, սակայն գործնականապես անհապաղ իրագործելու իմաստով վաղաժամ, այսինքն՝ պահանջում է որոշ ժամանակ քննարկման, պրոպագանդայի և սովետական եղանակով ներքինից անցկացնելու համար։

---

[1] «Образование СССР», Сборник документов 1917—1924, стр. 280.

[2] *Նույն տեղում, էջ 281։*

2) Առաջարկել (Կովկասյան բյուրոյի միջոցով) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Կենտրոնական կոմիտեներին՝ ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել պարտիայի և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, եռանդուն պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր ռևպուբլիկայի Սովետների համագումարների միջոցով. մեծ օպոզիցիա լինելու դեպքում ճշտորեն և ժամանակին տեղեկացնել ՌԿՊ Կենտկոմի Քաղբյուրոյին»[1]:

Վ. Ի. Լենինի կազմած այս նախագիծը Անդրկովկասյան Սովետական Ռևսպուբլիկաների Ֆեդերացիայի կազմակերպման մասին, նոյեմբերի 29-ին հաստատվում է Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում:

Դրանից հետո ֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները երկրամասում նոր թափ ու լայն ծավալ են ստանում, վերածվելով համաժողովրդական շարժման: Այդ համաժողովրդական շարժման մեջ են ընդգրկվում Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի աշխատավորական լայն մասսաները, որոնք կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ ամենուրեք իրենց հաստատ կամքն ու վճռականությունն են արտահայտում հօգուտ Անդրկովկասյան Սովետական Ռևսպուբլիկաների Ֆեդերացիայի կազմակերպման:

1922 թ. հունվարին աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային Սովետի նիստը լսելով զեկուցում ֆեդերացիայի կազմակերպման մասին, արտահայտվում մայրաքաղաքի աշխատավորության կամքը և միանալով Անդրկովկասյան ֆեդերացիայի համար ծավալված համաժողովրդական շարժմանը, միաձայն ընդունված իր կոչում գրել է. «Անդրկովկասի երեք հանրապետությունները, կոմունիստական կուսակցությունները և կառավարությունները վերջերս բանակցություններ են վարում Անդրկովկասի հանրապետությունները անտեսապես միացնելու, նրանց ֆեդերացիա ստեղծելու համար: Երեք հանրապետությունների երկաթուղիները և արտաքին առևտուրն արդեն միացված են, մի կենտրոնից են կառավարվում: Մոտիկ ապագայում կիրագործվի նրանց ֆինանսների, արտաքին քաղաքականության և զինվորական գործի միացումը. Անդրկովկասյան ֆեդերացիայի մեծ շենքի հիմքը արդեն դրված է»[2]:

Նույն ոգով է արտահայտված նաև 1921 թ. դեկտեմբերի 27-ին Ալեքսանդրոպոլի աշխատավորների դեպուտատների Սովետի նիս-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 136:

[2] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, ց. 184, թ. 85:

տում ընդունված բանաձևը ֆեդերացիայի կազմակերպման վերաբերյալ։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 1-ին համագումարի,— որը տեղի ունեցավ 1922 թ. հունվարի 26—29-ը,— քննարկած հարցերի մեջ կարևորագույն տեղ է գրավում Ա. Ց. Մյասնիկյանի (Ալ. Մարտունու) զեկուցումը սովետական շինարարության և Անդրկովկասյան ռեսպուբլիկանների ֆեդերացիայի կազմակերպման մասին։ Յուրց տալով Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների օրգանական կապակցությունը և նրանց միջև սերտ դաշինքի ու համագործակցության անհրաժեշտությունը, իր զեկուցման մեջ Ա. Ց. Մյասնիկյանը ասել է. «Չպետք է մոռանալ, որ Հայաստանը օրգանապես կապված է Վրաստանի և Ադրբեջանի սովետական երկրների հետ։ Այս բոլորի միջև եղբայրական կապ ստեղծելու շնորհիվ, մենք մեր առաջ դրված աշխատանքը ավելի ևս մեծ հաջողությամբ կկատարենք։

Այդ եղբայրական կապը ստեղծել կարող ենք միայն Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով»[1]։

Ա. Ց. Մյասնիկյանի զեկուցման առթիվ ընդունած որոշման մեջ համագումարը Հայաստանի կոմունիստական կազմակերպություններին առաջ մարտական խնդիր էր դրել՝ անողոք պայքար մղելով բուրժուա-նացիոնալիստական և հակալենինյան ամեն տեսակի թեքումների դեմ, հաստատ կերպով առաջ տանել Անդրկովկասյան ֆեդերացիայի կազմակերպման դործը, նրա գաղափարները դարձնելով աշխատավորական լայն մասսաների սեփականությունը։

«Ներկա պայմաններում,— ասված է համագումարի բանաձևում,— Հայաստանում Սովետական իշխանության կազմակերպվածությունը և ուժը կախված է Ադրբեջանի և Վրաստանի հետ սերտ կապից։ Այդ առումով Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիան ամբողջովին համապատասխանում է մեր երկրի շահերին։ Անդրկովկասյան ֆեդերացիան նշանակում է Անդրկովկասի ռեսպուբլիկանների ուժեղացում քաղաքական և միջազգային առումով։ Նա անտեսապես իրար հետ կկապի Անդրկովկասի ռեսպուբլիկաները և դրանով իսկ կբարձրացնի երկրի էկոնոմիկան։

Վերջապես ֆեդերացիան եղբայրական համագործակցություն կհաստատի Անդրկովկասի աշխատավոր ժողովուրդների մեջ և ուժեղ հարված կհասցնի այն նացիոնալիստական շմոլքին (ургар), որը

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184, թ. 89։

վարակել է ոչ միայն մասսաների շարքերը, այլև Անդրկովկասի կոմունիստներին։

Այդ պատճառով էլ ողջունելով Ֆեդերացիան, համագումարը հանձնարարում է Հայաստանի պատգամավորությանը Կովկասյան առաջիկա համագումարում հաստատ կերպով պնդել Ֆեդերացիայի իրականացումը մոտակա ժամանակում»[1]։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի առաջին համագումարից անմիջապես հետո՝ 1922 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը Երևանում տեղի է ունենում ռևոլյուցիկայի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարը, որի օրակարգում դրված հարցերից մեկն էր Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը։ Այդ հարցի մասին համագումարը լսում է Ա. Մռավյանի զեկուցումը։ Զեկուցման առթիվ համագումարի կողմից միահամուռ կերպով ընդունված բանաձևում ասված է.

«... Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների առաջին համագումարը խանդավառությամբ է ընդունում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների Ֆեդերացիայի հաստատված պայմանագիրը և հանձնարարում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեին գործնական բոլոր միջոցները շտապորեն կատարել Ֆեդերացիան շուտով իրականացնելու համար»[2]։

Անդրֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները դնում էին բուրժուա-նացիոնալիստական և շովինիստական տարրերի կատաղի դիմադրության պայմաններում, որոնց դեմ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները անողոք պայքար ծավալեցին։ Բացի դաշնակցական, մենշևիկյան և մուսավաթական թափթփուկներից, որոնք ամեն կերպ փորձում էին ձախողել Ֆեդերացիայի ստեղծումը և հրահրել ազգային ընդհարումներ, պարտիայի շարքերում ևս դտնվեցին մարդիկ, որոնք դեմ էին Ֆեդերացիայի կազմակերպմանը։

Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի կոմունիստական կազ-

---

[1] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքս—Էնգելս—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ՀԿ(բ)Պ առաջին համագումարի սղագրական հաշվետվությունը, էջ 42։

[2] Հայաստանի Սով. բանվորների, գյուղացիների և կարմիրբրանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը, Պետհրատ, Երևան, 1922, էջ 119—120։

մակերպությունները ՌԿ(բ)Պ ԿԿ Կովկասյան Բյուրոյի ղեկավարությամբ ծավալուն պայքար են կազմակերպում նացիոնալ-ուկլոնիստների, մենշևիստական շովինիստների, նրանց պաշտպան տրոցկիստների, բուխարինականների և ամեն տեսակի հակալենինյան հոսանքների դեմ, հաջողությամբ առաջ տանելով ֆեդերացիայի կազմակերպման նախապատրաստումը:

1922 թ. մարտին Անդրֆեդերացիայի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները բոլոր ռեսպուբլիկաներում արդեն ավարտված էին:

Նույն ամսի 12-ին գումարվում է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկանների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների լիազոր կոնֆերանսը: Այստեղ ընդունվում է պայմանագիր այդ երեք ռեսպուբլիկաների քաղաքական, տնտեսական ու ռազմական սերտ դաշինքի մասին, կազմակերպվում է նրանց պետական միությունը, որն առաջին շրջանում կոչվում էր Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկանների Ֆեդերատիվ Միություն: Պայմանագրի սկզբում նշված էր, որ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկանների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսը ելնելով պրոլետարական մեծ ռևոլյուցիայի հաղթանակով հռչակված ազգերի ինքնորոշման սկզբունքից, ընդունելով պայմանավորվող յուրաքանչյուր կողմի անկախությունը և սուվերենությունը, դիտակցելով նրանց ուժերի միավորման անհրաժեշտությունը երկրի պաշտպանության և տնտեսական շինարարության գործում, որոշում է, որ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետական սոցիալիստական ռեսպուբլիկանները միմյանց հետ հաստատում են ռազմական, քաղաքական և տնտեսական սերտ դաշինք հետևյալ հիմունքներով.

«1. Ռեսպուբլիկանների Միության բարձրագույն իշխանությունը հանդիսանում է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կողմից հավասար թվով ընտրված ներկայացուցիչների լիիրավ կոնֆերանսը:

2. Լիիրավ կոնֆերանսի գործադիր մարմինը Միութենական Սովետն է, որի անդամներն ընտրվում և հետ են կանչվում կոնֆերանսի կողմից:

3. Միութենական Սովետի իրավասության են անցնում՝ ռազմական գործերը, ֆինանսները, արտաքին քաղաքականությունը, արտաքին առևտուրը, հաղորդակցության ճանապարհները, ժողովրդական կապը, պայքարը կոնտրռևոլյուցիայի դեմ և տնտեսա-

կան բաղաքականության վեհափառությունը՝ պայմանավորվել ռեսպուբլիկաների տերիտորիաներում»[1]։

Պայմանագրի մնացած կետերում (այն բաղկացած էր 13 կետից) խոսվում է Միութենական Սովետի վեհափառ օրգանների, նրանց խնդիրների, իրավունքների և փոխհարաբերությունների մասին[2]։ Վերջին՝ 13-րդ կետում սահմանված է Միութենական Սովետի և ՌՍՖՍՌ-ի միջև փոխհարաբերությունների կարգը։ «Ռեսպուբլիկաների միությունը ՌՍՖՍՌ-ի հետ փոխհարաբերություններ է հաստատում դաշնագրային պայմանագրի հիման վրա»[3], ասված է այնտեղ։

Այսպիսով, 1922 թ. մարտի 12-ին Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի միջև կնքված այդ պայմանագրով դրվեցին Անդրկովկասյան Ֆեդերացիայի ամուր հիմքերը։

Հետևողականորեն կենսագործելով Կենտկոմի որոշումները, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները հաստատ կերպով առաջ էին տանում Անդրկովկասյան Ֆեդերացիայի ամրապնդման գործը։ Այդ ժամանակվանից մինչև 1922 թ. վերջերը՝ ոմ ամսվա ընթացքում մի շարք կարևորագույն ձեռնարկումներ են կատարվում ֆեդերատիվ կապերը ավելի ամրապնդելու, այն զարգացնելու ուղղությամբ։ Նույն թվականի մայիսին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատների փոխարեն Միութենական Սովետին Ենից կազմակերպվում է Արտաքին հարաբերությունների բաժին, որը Անդրկովկասյան Ֆեդերացիան ներկայացնում էր արտաքին հարաբերություններում։ Լիկվիդացվում են մաքսատները Անդրկովկասի ու Սովետական Ռուսաստանի միջև։ Միավորվում է երկրամասի փոստի և հեռագրի գործը։ Լուրջ ձեռնարկումներ են սկսվում ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ։ Ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ պայքարելու նպատակով կազմակերպվում է Անդրկովկասյան Արտակարգ Հանձնաժողով։ Բացի դրանից, Ֆեդերացիայի մասշտաբով ստեղծվում են Բանվորա-Գյուղացիական Տնօրենություն, Ռազմա-Ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատ, Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատ, գործնական միջոցառումներ են մշակվում Անդրկովկասյան միասնական դրամ ստեղծելու և երեք ռեսպուբլիկաների միջև եղած ֆինանսական կա-

[1] «Образование СССР», Сборник документов 1917—1924, стр. 288.
[2] Там же, стр. 288—289.
[3] Там же, стр. 289.

պերը ամրապնդելու ուղղությամբ, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումներ[1]։

Լսելով Միութենական Սովետի հաշվետվությունը, Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարը (1922 թ. դեկտեմբերին) նրա կատարած ութամսյա աշխատանքներին միաձայնությամբ տվել է հետևյալ դնահատականը. «Լսելով ԱՍՖՍՌ Միութենական Սովետի հաշվետվությունը, Անդրկովկասյան Սովետների համագումարը հավանություն է տալիս նրա գործունեությանը ինչպես արտաքին քաղաքականության բնագավառում, նույնպես ներքին քաղաքականության բնագավառում, որը ուղղված է եղել Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ ընդգրկված ռեսպուբլիկաների քաղաքական, ռազմական և տնտեսական միասնության հիմունքների ամրապնդման գծով»[2]։

Այսպիսով, Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկանների Ֆեդերատիվ Միության ութ ամսվա գոյությունը ոչ միայն արդարացրեց Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների ու նրանց աշխատավորական մասսաների սպասելիքները, այլև գործնականապես փայլուն կերպով ցույց տվեց Ֆեդերացիայի անհրաժեշտությունն ու կենսունակությունն այն ժամանակ։ Այդ փորձի հիման վրա նույն թվականի վերջերին անհրաժեշտություն առաջացավ է՛լ ավելի լայնացնելու Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկանների ֆեդերատիվ կապերը։ Անդրկովկասյան Սովետական Ռեսպուբլիկանների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների ներկայացուցիչների 1922 թ. նոյեմբերի կեսերին տեղի ունեցած խորհրդակցության որոշման մեջ այդ կապակցությամբ ասված է.

«1922 թ. մարտի 12-ին Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորական մասսաների կամքով այդ ռեսպուբլիկաները միմյանց միջև կնքեցին ֆեդերատիվ միություն և ստեղծեցին Անդրկովկասյան Սովետական կառավարություն՝ հանձին Միութենական Սովետի։ Իր գոյության ութ ամսվա ընթացքում Անդրկովկասյան Ֆեդերացիան ապացուցեց ոչ միայն իր կենսունակությունը, այլև ձգտումը Անդրկովկասի ժողովուրդների միջև ավելի սերտ և ամուր կապերի հաստատման համար, ինչպես նաև եղբայրական միասնության հաստատումը վերջիններիս և սովետական մյուս ռեսպուբլիկանների միջև։ Ելնելով դրանից, Ադրբեջանի, Հայաստանի և

[1] Տե՛ս «Первый Закавказский съезд Советов», изд. Заккрайкома, 1923, стр. 30—52.

[2] Там же, стр. 52.

Վրաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Կենտրոնական Գործադիր Կոմիտեները այս դեկտեմբերի 10-ին Բաքու քաղաքում հրավիրում են Սովետների Անդրկովկասյան համագումար...»[1]:

Այդ որոշման հիման վրա 1922 թ. դեկտեմբերի 10—13-ը Բաքվում տեղի է ունենում բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարը:

Համագումարը լսում է Ս. Մ. Կիրովի զեկուցումը Անդրկովկասյան Ֆեդերացիայի արտաքին և ներքին դրության մասին: Մ. Օրջոնիկիձեն զեկուցում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպելու հարցի մասին: Համագումարում քննության են առնվում նաև Միութենական Սովետի հաշվեհավությունը, Անդրկովկասյան Ֆեդերացիայի Կոնստիտուցիայի հարցը, ինչպես նաև տնտեսական հարցերը: Լսվում է զեկուցում Կարմիր Բանակի և Նավատորմի մասին և տեղի է ունենում Անդրկովկասյան Ֆեդերացիայի Գործադիր Կոմիտեի կազմի ու Սովետների Համամիութենական առաջին համագումարի դելեգատների ընտրություն[2]:

Սովետների անդրկովկասյան առաջին համագումարում լսված զեկուցումները և նրանց առթիվ ընդունված որոշումները միահամուռ կերպով հաստատեցին, որ Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը լիակատար չափով արդարացրել է իրեն, որ ելնելով նրա գոյության ութ ամսվա ուսանելի փորձից, ավելի առաջ պետք է գնալ Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկանների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի միջև եղած ֆեդերատիվ կապերի ընդարձակման ու ամրապնդման գործում: Այդպես էլ լինում է: Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարի որոշմամբ Անդրկովկասի Ռեսպուբլիկանների Ֆեդերատիվ Միությունը վեր է ածվում միասնական ֆեդերատիվ ռեսպուբլիկայի (ԱՍՖՍՌ), պահպանելով նրա մեջ մտնող ռեսպուբլիկաների ինքնուրույնությունը:

Այսպիսով, Սովետների անդրկովկասյան առաջին համագումարում ավարտվում է Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ձևավորման գործը:

Համագումարը ընտրում է Անդրֆեդերացիայի գերագույն օրգան՝ Անդրկովկասյան Կենտգործկոմը:

---

1 «Образование СССР», Сборник документов 1917—1924, стр. 305.

2 «Первый Закавказский съезд Советов», стр. 17—18.

Շուտով ձևավորվում է նաև Անդրկովկասյան Ֆեդերացիայի կառավարությունը՝ Ժողովրդական Կոմիսարների Սովետը։ Համաձայն դաշնային պայմանագրում ընդունված Անդրկովկասյան Ֆեդերացիայի Կոնստիտուցիայի հաստատման, այն խնդիրները, որոնք հավասար չափով շոշափում էին Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի շահերը և այդպիսով այդ ռեսպուբլիկաները կապում, միացնում էին մի տնտեսական-քաղաքական միասնության մեջ, հանձնվեցին Անդրկովկասի ֆեդերատիվ կառավարությանը։ Իսկ մնացած բոլոր խնդիրները՝ ներքին գործերը, արդարադատությունը, ժողովրդական լուսավորությունը, կուլտուրական շինարարությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը և այլն՝ մնացին առանձին ռեսպուբլիկաների ղեկավարությանը։

Անդրֆեդերացիան հենված էր նրա մեջ մտնող ռեսպուբլիկաների կամավոր համաձայնության, փոխադարձ վստահության և ինքնուրույնության վրա։ Նա ոչ միայն չէր կաշկանդում ժողովուրդների շահերին, այլ ամեն կերպ խթանում, պաշտպանում էր այդ ժողովուրդների զարգացումը, այն սերտորեն կապելով սոցիալիստական շինարարության հետ, բոլոր ժողովուրդների դասակարգային-ինտերնացիոնալ պայքարի հետ։

Անդրֆեդերացիայի ստեղծումը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակը։ Նրա կազմակերպումով նոր էջ բացվեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական ռեսպուբլիկանների պատմության մեջ։ Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնությամբ այդ ռեսպուբլիկանների համատեղ աշխատանքն ու պայքարը մեծ թափ հաղորդեցին սոցիալիստական շինարարությանը։ Լայն հեռանկարներ բացվեցին յուրաքանչյուր ժողովրդի տնտեսական ու կուլտուրական բարգավաճման համար։ Արագորեն սկսեց զարգանալ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Ջախջախվեցին բուրժուա-նացիոնալիստական տականքների և թշնամական այլ ուժերի փորձերը՝ խախտելու Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական ինտերնացիոնալ դաշինքը, որը Անդրֆեդերացիայի կազմակերպումով զարգացման նոր աստիճանի հասավ և է՛լ ավելի ամրապնդվեց։

Անդրֆեդերացիայի ստեղծումով վերացվեցին առանձին ռեսպուբլիկաներում գոյություն ունեցող դրամանիշները և հիմք դրվեց համեմատաբար ավելի կայուն վալյուտայի՝ Անդրկովկասյան դրամանիշներին, որը շուտով փոխարինվեց միութենական դրամանիշ-

ներով։ Տեղի ունեցավ Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների ֆինանսական սերտ մերձեցում, որը արտահայտվեց բյուջեի միավորմամբ։ Այդ հանգամանքը բոլոր ռեսպուբլիկաների, ինչպես և Սովետական Հայաստանի համար մեծ նշանակություն ունեցավ։

Միավորվելով Անդրֆեդերացիայի մեջ, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկաները, Կոմունիստական պարտիայի Անդրկովկասյան երկրային Կոմիտեի ղեկավարությամբ հաստատ կերպով առաջ էին տանում սոցիալիստական շինարարության գործը, հանդիսանալով սովետական մեծ երկրի ամուր պատվանդանը նրա հարավ-արևելյան սահմաններում։

3. ՍՍՌՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ. ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՍՍՌՄ-Ի ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ԱՆԴԱՄ

Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման համար ծավալվող պայքարը ընթանում էր սովետական բոլոր ռեսպուբլիկաներում մեր երկրի ժողովուրդների ուժերը միավորելու համար կատարվող մեծ աշխատանքներին զուգահեռ։

Ժողովրդական տնտեսության վերականգնման դժվարին գործը և սոցիալիստական շինարարության առաջընթացը օբյեկտիվ կերպով առաջադրեցին սովետական բոլոր ռեսպուբլիկանների դաշինքի հետագա ամրապնդման, նրանց ավելի ու ավելի սերտ համագործակցության, միասնական աշխատանքի ու պայքարի անհրաժեշտությունը։

«Այժմ, երբ Սովետական երկրի ամբողջ տերիտորիան մաքրված էր ինտերվենտներից, իսկ սոցիալիզմի կառուցման և երկրի պաշտպանության խնդիրները պահանջում էին Սովետական երկրի ժողովուրդների դաշինքի հետագա ամրապնդում, հերթի դրվեց սովետական ռեսպուբլիկանները մեկ միասնական պետական միության մեջ ավելի սերտորեն միավորելու հարցը։ Սոցիալիզմը կառուցելու համար հարկավոր էր միավորել բոլոր ժողովրդական ուժերը։ Հարկավոր էր կազմակերպել երկրի ամուր պաշտպանությունը։ Հարկավոր էր ապահովել մեր հայրենիքի բոլոր աղգությունների բազմակողմանի զարգացումը։ Այդ նպատակի համար անհրաժեշտ էր է՛լ ավելի մերձեցնել Սովետական երկրի բոլոր ժողովուրդներին»[1]։

[1] Համ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 351։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական երկրում ամենուրեք համաժողովրդական լայն շարժում է ծավալվում ռեսպուբլիկաների ամուր պետական դաշինքի, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպման համար։ Այդ շարժումն անցել էր զարգացման երեք փուլ։

Ինչպես ցույց է տվել Ի. Վ. Ստալինը, առաջին փուլն ընդգրկում է 1918—1921 թվականները, երբ ներքին կոնտրռևոլյուցիոն ուժերի և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող պայքարում հաստատվեց սովետական ռեսպուբլիկաների ռազմա-քաղաքական դաշինքը, որով ապահովվեց Հոկտեմբերյան ջախջախումը և պրոլետարիատի դիկտատուրայի հաղթական երթը։

Քաղաքացիական կռիվների ծանր տարիներին մեր երկրի ժողովուրդների ռազմա-քաղաքական դաշինքը իր արտահայտությունը գտավ նրանում, որ ընդհանուր թշնամու դեմ պայքարելու նպատակով տեղի ունեցավ սովետական ռեսպուբլիկաների ռազմական ուժերի միավորում։ Ըստ որում այդ միավորման ընթացքում Սովետական Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը ստացավ մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների ամենաջերմ և ամենագործնա աջակցությունը, միաժամանակ եղբայրական մեծ օգնություն ցույց տալով նրանց։

Ընդհանուր թշնամու՝ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի և մյուս երկրների իմպերիալիստների զինված ուժերի ու սպիտակգվարդիական բանդաների դեմ մղվող վճռական մարտերում Սովետական բոլոր զինված ուժերի ղեկավարությունը իրականացվում էր մեկ կենտրոնից՝ Մոսկվայից։

Քաղաքացիական կռիվների տարիներին Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ կազմակերպվեցին ազգային մի շարք զորամասեր և միավորումներ՝ ուկրաինական, բելոռուսական, Թաթարական, լատիշական, ադրբեջանական, վրացական, հայկական և այլն։ Ազգային զորամասեր կազմակերպելու գործին Կոմունիստական պարտիան միշտ էլ խոշոր նշանակություն է տվել։

Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար ներքին և արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերի դեմ մղած պայքարում դաշնակցած ռուս մեծ ժողովրդի հետ, նրա ղեկավարությամբ ակտիվ դեր են կատարել նաև Անդրկովկասի ժողովուրդները։ Այստեղ ձևավորվել էին մի ամբողջ շարք ազգային զորամասեր, որոնք մասնակցել են թշնամու դեմ մղված մարտերին քաղաքացիական կռիվների տարբեր ռազմաճակատներում։ 1920 թ. գարնանը, Ան-

տանտայի երրորդ արշավանքի ժամանակ, Ադրբեջանի Կ(բ)Պ Կենտկոմի նախաձեռնությամբ կոմունիստներից կազմակերպվում է Բաքվի բանվորական գունդը, որը մեկնելով արևմտյան ռազմաճակատ, մասնակցում է Թշնամու դեմ մղվող կռիվներին։ Երբ Ադրբեջանում հաստատված էին սովետական կարգեր, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ի. Միկոյանի անմիջական նախաձեռնությամբ այնտեղ կազմակերպվում է Կարմիր Բանակի Հայկական առաջին գունդը, որը 11-րդ բանակի զորամասերի հետ միասին մասնակցում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարին։ 1921 թ. փետրվարին, Վրաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված կռիվներին մասնակցություն է ունենում վրացական դիվիզիան, որը մինչև այդ կազմակերպված էր ռուսական Կարմիր Բանակի շարքերում։ Իսկ երբ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում հաստատվում են սովետական կարգեր, Կարմիր Բանակի ազգային զորամասերի ձևավորումը ավելի լայն ծավալ է ընդունում։ Ռուսական հեղափոխական Կարմիր Բանակի հետ միասին նրանք խոշոր դեր են կատարում Անդրկովկասում կոնտրհեղափոխության դեմ մղված բանդաների մնացորդների վերջնական ջախջախման, մեր Սովետական մեծ Հայրենիքի պաշտպանության ամրապնդման գործում։

Այսպիսով, սովետական ժողովուրդների ռազմա-բարոյական դաշինքը հանդիսացավ այն կարևորագույն գործոններից մեկը, որը ապահովեց մեր Հաղթանակը կատաղի Թշնամու դեմ մղված ծանր պայքարում 1918—1921 թվականներին։ Այդ դաշինքի հաստատման և ամրապնդման, Թշնամու դեմ Հաղթանակը ապահովելու գործում վճռական դեր է կատարել ռուս մեծ ժողովուրդը, որի զավակներից շատերը հերոսաբար ընկան Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և մյուս եղբայրական բանվորների ու գյուղացիների ազատագրման համար մղված մարտերում։

Սովետական ռեսպուբլիկանների միավորման համար ծավալված համաժողովրդական շարժման երկրորդ փուլն ընդգրկում է 1921 թ. վերջը—1922 թ. սկիզբը, երբ տեղի ունեցավ սովետական ռեսպուբլիկաների դիվանագիտական դաշինքը Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ, որի շնորհիվ վճռական հակահարված տրվեց Արևմուտքի կապիտալիստներին Ջենուայի և Հաագայի կոնֆերանսներում։

Բացի դրանից, այդ ժամանակամիջոցում անկախ սովետական

ռեսպուբլիկանների միջև կնքվում են մի շարք պայմանագրեր, որոնցով ավելի էր ամրապնդվում նրանց միջև եղած դաշինքը և համագործակցությունը։ Այդ տեսակետից կարևորագույն նշանակություն ունեցավ ՌՍՖՍՌ-ի և Ուկրաինայի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների միջև 1919 թ. կնքված համաձայնագիրը նրանց դաշինքի և համագործակցության մասին, որը անկախ սովետական ռեսպուբլիկանների միջև կնքված առաջին պայմանագիրն էր։ Զբաղվարարվելով դրանով, 1920 թ. մայիսին Ուկրաինայի Սովետների 4-րդ համագումարը միահամուռ կերպով ընդունած իր որոշումով հանձնարարում է Ուկրաինայի Կենտգործկոմին՝ բանակցությունների մեջ մտնել Համառուսաստանյան Կենտգործկոմի հետ ավելի սերտ եղբայրական դաշինք հաստատելու այդ երկու ռեսպուբլիկանների միջև։ Համագումարի այդ որոշումը ուկրաինական ժողովրդի կողմից արժանանում է ամենաջերմ պաշտպանության։ 1920 թ. ամռանը ավարտվում է Բելոռուսիայի տերիտորիայի ազատագրումը Պիլսուդսկու պանական բանդաներից։ 1921 թ. հունվարին ՌՍՖՍՌ-ի և Բելոռուսիայի միջև կնքվում է դաշնակցային պայմանագիր։ 1920 թ. օգոստոսին պայմանագիր է կնքվում ՌՍՖՍՌ-ի և Սովետական Ադրբեջանի միջև երկաթուղային տրանսպորտի հարցերի շուրջը։ Դրանից հետո ավելի են ծավալվում դաշնակցային հարաբերությունները այդ երկու ռեսպուբլիկանների միջև։ 1920 թ. սեպտեմբերի 20-ին Մոսկվայում նրանց միջև կնքվում է պայմանագիր ռազմական-տնտեսական միության մասին, շուտով կնքվում են պայմանագրեր արտաքին առևտրի հարցերի շուրջը, երկու ռեսպուբլիկաներում միասնական տնտեսական քաղաքականություն վարելու հարցի մասին և այլն։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվում է դաշնագիր նրանց սերտ միության մասին։ Դաշնագրում նշված է, որ Հայաստանը հայտարարվում է սոցիալիստական անկախ ռեսպուբլիկա, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը, որպես դաշնակից, ձեռք է առնում միջոցներ անմիջապես պահանջվող քանակությամբ ռազմական ուժեր կենտրոնացնելու՝ Հայկական ՍՍՌ-ի անկախությունը պաշտպանելու նպատակով[1]։ Որպես այդ պայմանագրի լրա-

1 Տե՛ս Ю. В. Ключников и А. В. Сабанин, Международная политка новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. III, вып. I, 1928. Москва, стр. 75—76.

յում, 1921 թ. սեպտեմբերի 30-ին Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվում է պայմանագիր ֆինանսական հարցերի շուրջը[1]։ 1921 թ. մայիսի 22-ին միության պայմանագիր է կնքվում Սովետական Ռուսաստանի ու Վրաստանի միջև, որը իր սկզբունքներով համապատասխանում էր Սովետական Ռուսաստանի ու սովետական մյուս ռեսպուբլիկաների միջև կնքված միության պայմանագրերին։

Ինչպես տեսանք, Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը, որը տեղի ունեցավ 1922 թ. մարտի 12-ին, նույնպես խոշորագույն քայլ էր սովետական ռեսպուբլիկանների համագործակցության, նրանց պետական միավորման, Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման ուղղությամբ։ Անդրֆեդերացիայի կազմակերպումը ոչ միայն հանդիսացավ կարևորագույն էտապ երկրամասի ժողովուրդների միավորված շարժման պատմության մեջ, այլև կարևոր քայլ ՍՍՌՄ-ի կազմակերպումը նախապատրաստելու և իրականացնելու ճանապարհին։

1920—1921 թվականներին միության և բարեկամության պայմանագրեր են կնքվում նաև Սովետական Ռուսաստանի ու Խորեզմի և Բուխարայի սովետական ժողովրդական ռեսպուբլիկանների միջև։

Սակայն, սովետական ռեսպուբլիկանների հետագա զարգացումը և նոր պայմանները գործնականում ցույց տվեցին, որ պահպանի այն ձևերը, որոնք հաստատվել էին սովետական ռեսպուբլիկանների միջև մինչև 1922 թվականը, իր ժամանակին խոշորագույն դեր կատարելով հանդերձ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման և ներքին ու արտաքին թշնամիների ջախջախման գործում, նոր պայմաններում, երբ ամբողջ երկրում լայնորեն ծավալվում էր խաղաղ տնտեսական շինարարությունը, արդեն անբավարար էին, որ անհրաժեշտ էր այդ դաշինքն էլ ավելի ծավալել, բազմակողմանի դարձնել և էլ ավելի ամրապնդել։ Այժմ անհրաժեշտ էր միավորել ժողովրդական բոլոր ուժերը սոցիալիզմի կառուցման համար, անհրաժեշտ էր ապահովել երկրի ամուր պաշտպանությունը և տանդել բոլոր պայմանները սովետական ժողովուրդների բազմակողմանի զարգացման, նրանց ավելի ու ավելի մերձեցման և եղբայրական համագործակցության ամրապնդման համար։ Իսկ այդ բոլորը անհնարին էին առանց սովետական ռեսպուբլիկանե-

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113/124, դ. 3, թ. 8—9։

րը մեկ միասնական, սոցիալիստական բազմազգ պետության մեջ միավորելու։ Այդ կապակցությամբ 1920 թ. հունիսին Վ. Ի. Լենինը գրել է. «... անհրաժեշտ է ձգտել ավելի և ավելի սերտ ֆեդերատիվ միության, նկատի ունենալով, առաջին՝ ամբողջ աշխարհի ռազմական տեսակետից անհամեմատ ավելի զորեղ իմպերիալիստական պետություններով շրջապատված սովետական ռեսպուբլիկաների գոյությունը պաշտպանելու անհնարինությունն առանց սովետական ռեսպուբլիկաների ամենասերտ դաշինքի. երկրորդ՝ սովետական ռեսպուբլիկաների տնտեսական սերտ դաշինքի անհրաժեշտությունը, առանց որի անիրագործելի է իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը և աշխատավորների բարեկեցության ապահովումը. երրորդ՝ միասնական, մի ընդհանուր պլանով, բոլոր ազգերի պրոլետարիատի կողմից կարգավորվող համաշխարհային տնտեսության՝ որպես ամբողջության ստեղծման տենդենցը, որը միանգամայն ակնհայտորեն դրսևորվել է արդեն կապիտալիզմի օրով և անպայման ենթակա է հետագա զարգացման ու լիակատար ավարտման սոցիալիզմի օրով»[1]։

Այսպիսով, պրոլետարական revolyucիայի մեծ առաջնորդը նշելով Սովետական պետության զարգացման ուղիները և ձևերը, հիմնավորել է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպման անհրաժեշտությունը, որպես բազմազգ Սոցիալիստական պետության զարգացման նոր, ավելի բարձր աստիճան։

1922 թ. երկրորդ կեսից մեր երկրում սկսվում և ծավալվում է սովետական ռեսպուբլիկաների պետական միավորման համար համաժողովրդական շարժման նոր՝ երրորդ փուլը, երբ արդեն պետք էր տեղի ունենար Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ստեղծումը, Միությունը, որը հենվելու էր իր մեջ միավորվող բոլոր ռեսպուբլիկանների ու ժողովուրդների լիակատար իրավահավասարության վրա։ Այդ համաժողովրդական շարժումը աննախընթաց խանդավառությամբ ծավալվեց Ռուսաստանում, Անդրկովկասում, Ուկրաինայում, Բելոռուսիայում։ Պարտիական ժողովներում, դեպուտատների Սովետներում, աշխատավորական լայն ժողովներում քննության էր դրվում ռեսպուբլիկաների միավորման հարցը։ Ամենուրեք բանվորները, գյուղացիները ու աշխատավոր ինտելիգենցիան արտահայտում են իրենց խանդավա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 168։

ությունն ու վճռական կամքը սովետական ռեսպուբլիկանների միավորման համար։ Դրանով իսկ նրանք ցույց են տալիս իրենց կուռ համախմբվածությունը Կոմունիստական պարտիայի շուրջը և ջախջախիչ հակահարված են հասցնում բուրժուա-նացիոնալիստական, տրոցկիստական, բուխարինական ու այլ թափթփուկներին, որոնք իրենց սատր գործողություններով ամեն կերպ ձգտում էին թուլացնել սովետական ժողովուրդների եղբայրական դաշինքը, քայքայել Սովետական պետությունը և վերականգնել շահագործողների տիրապետությունը։

Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում տեղի ունեցած պարտիական կազմակերպությունների և աշխատավորական լայն ժողովների իրենց որոշումներով միահամուռ կերպով արտահայտվում են հօգուտ ՍՍՌՄ-ի կազմակերպման։ 1922 թ. նոյեմբերին տեղի ունեցած Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների 2-րդ կոնֆերանսի բանաձևում այդ մասին նշված է, որ, լսելով Ս. Օրջոնիկիձեի զեկուցումը Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկանների Միության ստեղծման մասին, կոնֆերանսը ամբողջությամբ հավանություն է տալիս հանձնաժողովի որոշմանը այդ հարցի վերաբերյալ և գտնում է, որ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը Անդրկովկասյան Ֆեդերացիայի միջոցով պետք է միանան սովետական բոլոր ռեսպուբլիկաններից կազմվելիք մեկ ընդհանուր ընտանիքի, մեկ ընդհանուր պետական միության՝ ՍՍՌՄ-ի մեջ[1]։ Այդ տրամ որոշումներ են ընդունվում նաև Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Նախիջևանի, Սուխումի, Դարաքիլիսայի և այլ քաղաքների ու գյուղերի աշխատավորական ժողովները[2]։

Երևանի գավառի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Սովետների համագումարի բանաձևում, որը ընդունված է 1922 թ. նոյեմբերին, ՍՍՌՄ-ի կազմակերպման մասին ասված է. «Երևանի գավառի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Սովետների համագումարը լսելով զեկուցում... ռեսպուբլիկանների Միության մասին, անհրաժեշտ է համարում ավելի սերտ համագործակցություն հաստատել Անդրկովկասի Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկանների միջև, այդ ռեսպուբլիկանների ու Սովետական Ռուսաստա-

---

1 *Տե՛ս* «Образование СССР», Сборник документов, 1917—1924, стр. 304.

2 Там же, стр. 105—109.

նի միջև տնտեսական, ֆինանսական և քաղաքական բնագավառներում։ Համագումարը գտնում է, որ միայն սովետական ռեսպուբլիկաների սերտ միությունը հնարավորություն կտա նրանց արագ վերածննդի և Սովետական Մեծ Ֆեդերացիայի հաջող շինարարության համար»[1]։ Նույն հարցի մասին Ղարաքիլիսայի գավառի Սովետների 2-րդ համագումարի բանաձևում ասված է, որ համագումարը «... լիահույս է, որ հեռու չէ այն օրը, երբ ֆեդերատիվ ռեսպուբլիկանների Միությունը իրականություն կդառնա...»[2]։

Խոսելով սովետական ռեսպուբլիկանների միավորման համար սկսված ու ծավալված շարժման, նրա համաժողովրդական բնույթի մասին, Ի. Վ. Ստալինը 1922 թ. նոյեմբերին ասել է. «Շարժման նախաձեռնությունը պատկանում է ռեսպուբլիկաններին իրենց։ Դեռ սրանից մոտ երեք ամիս առաջ անդրկովկասյան ռեսպուբլիկանների ղեկավար շրջանները հարց դրին սովետական սոցիալիստական ռեսպուբլիկանների միասնական տնտեսական ճակատ կազմելու և նրանց մեկ միութենական պետության մեջ միավորելու մասին։ Այն ժամանակ էլ հենց Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի մի քանի շրջաններում այդ հարցը քննվեց պարտիական ժողովներում։ Հարցի դրումը, ինչպես երևում է համապատասխան բանաձևերից, չտեսնված խանդավառություն առաջ բերեց։ Համարյա դրա հետ միաժամանակ Ուկրաինայում և Բելոռուսիայում հարուցվեց միավորման հարցը, որն այնտեղ, ինչպես և Անդրկովկասում, որոշակի խանդավառ վերաբերմունք առաջ բերեց պարտիական լայն շրջաններում»[3]։

1922 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ը Երևանում տեղի է ունենում Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների երկրորդ համագումարը։

Հայաստանի Սովետների երկրորդ համագումարը, ի թիվս մյուս հարցերի, քննության է առնում նաև ՍՍՌՄ-ի կազմակերպման հարցը և միաձայն որոշում է ընդունում հավանություն տալ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասի Ֆեդերացիայի միջև պետական դաշինք կնքելու՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը կազմակերպելու իդեային։ ՍՍՌՄ-ի կազմակերպման հարցը քննության է առնվում նաև

---

1 «Образование СССР», Сборник документов, 1917—1924, стр. 305.

2 Там же, стр. 306.

3 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 155։

Ադրբեջանի և Վրաստանի Սովետների համագումարներում, որոնք նույնպես անհրաժեշտ են համարում այդ հարցի իրականացումը որպես կարևորագույն միջոց Սովետական պետության հզորացման և սոցիալիստական շինարարությունը հաղթական կերպով առաջ տանելու համար:

Բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների Անդրկովկասյան առաջին համագումարը, որը, ինչպես հետևանք, տեղի ունեցավ 1922 թ. դեկտեմբերին Բաքվում,— լսում է Ս. Օրջոնիկիձեի զեկուցումը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմակերպման մասին: Զեկուցման մեջ Ս. Օրջոնիկիձեն ցույց է տվել Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության պատմական խոշորագույն նշանակությունը ազգային հարցի լուծման գործում, ինչպես ամբողջ ցարական Ռուսաստանի, նույնպես և նրա մի ծայրամասը հանդիսացած Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման, նրանց քաղաքական, տնտեսական և կուլտուրական անարգել զարգացման համար բոլոր անհրաժեշտ նախադրյալների ստեղծման, սովետական ժողովուրդների բարեկամության և եղբայրական սիրո համագործակցության հաստատման գործում:

Տալով երկրամասում ՍՍՌՄ-ի կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների դնահատականը, զեկուցման մեջ Ս. Օրջոնիկիձեն ասել է.

«Վերջերս բոլոր երեք հանրապետություններում ավարտված պատասխանատու համագումարները միահամուռ կերպով կողմ արտահայտվեցին սովետական հանրապետությունների մի այնպիսի միության ստեղծելուն, որը, լիովին ապահովելով սովետական հանրապետությունների ժողովուրդների կուլտուրական զարգացումը, պահպանելով նրանց լեզուն, պրականությունը և այլն, և միևնույն ժամանակ առանձին անկախ հանրապետությունները միավորելով մի ընդհանուր միութենական պետության մեջ, ամրապնդեր բոլոր սովետական հանրապետությունների հզորությունը: Մենք կողմնակից ենք այդպիսի միության ստեղծելուն: Այդպիսի միությունը մեր սովետական ընտանիքը դարձնում է անպարտելի մի ուժ»[1]:

Միահամուռ կերպով հավանություն տալով Ս. Օրջոնիկիձեի զեկուցմանը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմակերպման անհրաժեշտության մասին և դրանով իսկ

---

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 112:

վճռական հարված հասցնելով բուրժուա-նացիոնալիստական, տրոցկիստական, բուխարինական և այլ թափթփուկներին, Անդրկովկասի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների առաջին համագումարը ընդունում է բանաձև ՍՍՌՄ-ի կազմակերպման վերաբերյալ։ Այնտեղ ասված է, որ ՌՍՖՍՌ-ն, Ուկրաինան, Բելոռուսիան և Անդրկովկասյան Ֆեդերացիան լիակատար իրավահավասարության հիմունքներով միավորվում են մեկ միութենական պետության՝ ՍՍՌՄ-ի մեջ, բայց ոտում յուրաքանչյուր ռեսպուբլիկային իրավունք է վերապահվում ազատ կերպով դուրս գալու միությունից։ Միության քաղաքացիների համար պետք է սահմանել ընդհանուր և միասնական քաղաքացիականություն։ Միության մայրաքաղաքը պետք է ընտրել Մոսկվան։ «Մեր դելեգատները,— ասված է բանաձևի վերջում,— որոնք այսօր ընտրվելու են մասնակցելու ռեսպուբլիկաների Սովետների համագումարի աշխատանքներին, լիազորվում են ստորագրելու այնպիսի պայմանագիր, որը պետք է կազմված լինի ընդունված բանաձևի հիման վրա։ Եվ այդ հիմունքներով էլ պետք է ստեղծել Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ու Ժողկոմսովետը»[1]։

1922 թ. դեկտեմբերին Խարկովում տեղի է ունենում Սովետների Համամիութենական 7-րդ համագումարը, որի քննարկման հիմնական հարցն է լինում Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպումը[2]։

Տեղի է ունենում նաև Սովետների Համամիութենական 4-րդ համագումարը (1922 թ. դեկտեմբեր), որը նույնպես քննարկելով ՍՍՌՄ-ի կազմակերպման հարցը, այդ հարցի վերաբերյալ որոշում է ընդունում, անհրաժեշտ համարելով ՍՍՌՄ-ի կազմակերպումը և կոչ է անում եղբայրական սովետական ռեսպուբլիկաների աշխատավորներին արագ կերպով իրականացնելու այն[3]։

Այն բանից հետո, երբ արդեն Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի Սովետների համագումարները մեծ խանդավառությամբ որոշումներ էին ընդունել ՍՍՌՄ-ի կազմակերպման անհրաժեշտության մասին, 1922 թ. դեկտեմբերի 23—27-ը Մոսկվայում տեղի է ունենում Սովետների համառուսաստան-

1 «Образование СССР», Сборник документов, 1917—1924, стр. 318.

2 Տե՛ս «Правда», № 284 от 15 декабря 1922.

3 Տե՛ս Э. Б. Генкина, Образование СССР, Второе дополненное издание, Москва, 1947, стр. 104.

յան 10-րդ համագումարը, որին որպես հյուրեր, մասնակցում էին Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասի՝ ՍՍՌՄ-ի Սովետների 1-ին համագումարին մասնակցելու համար Մոսկվա մեկնած պատգամավորները։

Հիվանդության պատճառով Վ. Ի. Լենինը այս համագումարին չէր մասնակցում։ Սովետական Ռեսպուբլիկանների Միության կազմակերպման հարցի մասին համագումարը լսում է ՌԿՊ Կենտկոմի հանձնաժողովի[1] զեկուցումը, որը կարդում է նրա նախագահ Ի. Վ. Ստալինը։ «Հինգ տարի առաջ Սովետական իշխանության հաջողվեց ժողովուրդների խաղաղ համակեցության և եղբայրական համագործակցության հիմքերը դնել,— ասել է զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը։— Այժմ, երբ մենք ազատել ենք միավորման ցանկալիության ու անհրաժեշտության հարցը, մեր խնդիրն է այս գործը պահպանել մի նոր շենքով,— նոր հզոր միութենական աշխատավորական տերության կազմելով։ Մեր ռեսպուբլիկանների ժողովուրդների կամքը, որոնք վերջնա իրենց համագումարներում հավաքվելուն և միահամուռ կերպով որոշելուն Ռեսպուբլիկանների Միության կազմել, անկասկածորեն այդ մասին է խոսում, որ միավորման գործը ճիշտ ուղու վրա է դրված, որ նա խարխլված է կամավորության և ժողովուրդների իրավահավասարության մեծ սկզբունքի վրա»[2]։

Սովետների Համամիութենական 10-րդ համագումարը հաստատում է սովետական ռեսպուբլիկանների միավորման մասին Ի. Վ. Ստալինի ներկայացրած բանաձևի նախագիծը[3]։

Այսպիսով, հանձին Սովետների Համամիութենական 10-րդ համագումարի պատմական որոշումների, առա մեծ ժողովուրդը իր հաստատ ու վճռական խոսքն է ասում սովետական ռեսպուբլիկանների պետական միավորման, ՍՍՌՄ-ի կազմակերպման անհրաժեշտության մասին։

Դրանից հետո, 1922 թ. դեկտեմբերի 29-ին, Մոսկվայում տեղի է ունենում ՌՍՖՍՌ-ի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի լիազոր պատգամավորների կոնֆերանսը, որը

---

[1] ՍՍՌՄ-ի կազմակերպման նախապատրաստության համար ՌԿՊ Կենտկոմի հանձնաժողովի կազմում մտնում էին բնդ. բնդ. Ի. Վ. Ստալինը, Վ. Մ. Մոլոտովը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Յ. Մյասնիկյանը։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 174։

[3] Նույն տեղում, էջ 172—173։

քննարկում է հետևյալ հարցերը. 1) ՍՍՌՄ-ի կազմակերպման մասին Դեկլարացիայի և Պայմանագրի հարցը, 2) ՍՍՌՄ Սովետների առաջին համագումարի աշխատանքների կարգը և բացման ժամկետը: Կոնֆերանսը հաստատում է Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի կողմից հավանության արժանացած ՍՍՌՄ-ի կազմակերպման մասին Դեկլարացիայի և Պայմանագրի նախագծերը:

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայի Մեծ թատրոնում բացվում է ՍՍՌՄ-ի Սովետների առաջին համագումարը, որին մասնակցում էին 2215 դելեգատներ՝ 1727-ը ՌՍՖՍՌ-ից, 364-ը ՈՒՍՍՌ-ից, 91 ԱՍԶՍՌ-ից և 33-ը ԲՍՍՌ-ից:

Համագումարը քննարկում է երկու հարց. 1) ՍՍՌՄ-ի կազմակերպման մասին Դեկլարացիան և Պայմանագիրը, 2) ՍՍՌՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ընտրությունը:

Համագումարը լսում է Ի. Վ. Ստալինի զեկուցումը՝ «Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմելու մասին»: Զեկուցումն Ի. Վ. Ստալինը սկսում է նրանով, որ համագումարի բացման օրը Սովետական իշխանության պատմության մեջ բեկումնային օր է, որովհետև համագումարը սովետական ռեսպուբլիկաներին միավորում է մեկ միասնական միութենական պետության մեջ: Ամփոփելով Սովետական իշխանության գոյության հինգ տարվա արդյունքները, զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը նշել է, որ այդ ժամանակամիջոցում Սովետական իշխանությունը անցել է զարգացման երկու էտապ: Առաջինը՝ քաղաքացիական կռիվների էտապն էր, երբ ստեղծելով Կարմիր Բանակը, Սովետական իշխանությունը կարողացավ ջախջախել ներքին և արտաքին թշնամիներին: Երկրորդ էտապը՝ տնտեսական քայքայվածության դեմ պայքարելու էտապն է, երբ հիմք է դրվում ՍՍՌՄ-ին: Տնտեսական քայքայվածությունը լիկվիդացնելու և սոցիալիզմի կառուցումը հաջողությամբ առաջ տանելու համար անհրաժեշտ է միավորել սովետական ռեսպուբլիկաների ուժերը, անհրաժեշտ է այդ ռեսպուբլիկանները միավորել մեկ միութենական պետության մեջ:

Զեկուցման վերջում Ի. Վ. Ստալինը կարդում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն կազմելու Դեկլարացիան և Պայմանագիրը, որոնք համագումարի կողմից հաստատվում են մեծ խանդավառությամբ:

Դեկլարացիայում ընդգծված է, որ միայն Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի և պրոլետարիատի

դիկտատուրայի հաստատման շնորհիվ հնարավոր եղավ մեր երկրում լիկվիդացնել ազգային ճնշումը, ստեղծել ժողովուրդների փոխադարձ վստահություն և դնել նրանց եղբայրական համագործակցության հիմքերը։ Դրա շնորհիվ սովետական ռեսպուբլիկաներին հաջողվեց հաղթական կերպով և շարունակ պրոլետարիատի դիկտատուրայի ներքին և արտաքին թշնամիների, ամբողջ աշխարհի կոնտրռևոլյուցիոն ուժերի՝ իմպերիալիստական պետությունների կատաղի հարձակումները։ Դեկլարացիայում նշված է, որ ՍՍՌՄ-ն իրավահավասար ժողովուրդների կամավոր միություն է, յուրաքանչյուր ռեսպուբլիկայի համար ապահովված է Միությունից ազատորեն դուրս գալու իրավունքը, որ նրա մեջ կարող են մտնել ինչպես պետություն ունեցող, այնպես էլ ապագայում կապմակերպվելիք սովետական սոցիալիստական ռեսպուբլիկաները, որ ՍՍՌՄ-ն ամեն կերպ կնպաստի բոլոր ժողովուրդների զարգացմանը։

Սովետների Համամիութենական առաջին համագումարում ընդունված Պայմանագրի համաձայն ՌՍՖՍՌ-ն, Ուկրաինան, Բելոռուսիան և Անդրկովկասյան Ֆեդերացիան միավորվում են մեկ միութենական պետության՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ։ Պայմանագիրը բաղկացած է 26 կետից, ուր շարադրված են այն հարցերը, որոնք ենթակա են ՍՍՌՄ-ի գերագույն օրգանների իրավասությանը, նշած է այդ օրգանների կառուցվածքը, միասնական սովետական քաղաքացիության սկզբունքները և այլն։ Այդ Դեկլարացիան և Պայմանագիրը հանդիսացան Սովետական Միության ապագա՝ 1924 թ. ընդունված Կոնստիտուցիայի հիմքը։

Սովետական Միության կազմակերպումը տեղի ունեցավ Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, բուրժուական նացիոնալիզմի՝ վելիկոռուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի, ինչպես նաև տրոցկիստների, բուխարինականների ու մյուս քողարկված թշնամիների դեմ տեղի ունեցած անհաշտ ու վճռական պայքարում։ Վելիկոռուսական շովինիզմն արտահայտում էր տապալված վելիկոռուսական բուրժուազիայի ձգտումները՝ վերականգնել իր նախկին արտոնությունները մյուս ժողովուրդների նկատմամբ, սերմանել անվստահություն սովետական ազգերի ու ժողովուրդների միջև, դրանով իսկ թուլացնել և քայքայել պրոլետարիատի դիկտատուրան։ Տեղական նացիոնալիզմն արտահայտում էր առաջներում ճնշված ազգերի բուրժուազիայի ձգտումը՝ քայքա-

յել սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ դաշինքը, կործանել Սովետական իշխանությունը և հաստատել աղգային բուրժուազիայի տիրապետությունը: Տրոցկիստական-բուխարինական թափթփուկները ևս, պաշտպանության տակ առնելով բուրժուական նացիոնալիստներին, կատաղաբար պայքարում էին Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան աղգային քաղաքականության դեմ, սովետական ռեսպուբլիկաների եղբայրական համագործակցության, նրանց պետական միավորման՝ ՍՍՌՄ-ի ստեղծման դեմ: Կոմունիստական պարտիան անողոք պայքար տանելով այդ թեքումների և հոսանքների դեմ, նրանց մինչև վերջ մերկացրեց ու ջախջախեց, հանձին ՍՍՌՄ-ի ստեղծելով և ամրապնդելով սովետական ռեսպուբլիկաների պետական միությունը, նրանց ավելի ու ավելի սերտ եղբայրական համագործակցությունը:

Կոմունիստական պարտիայի հետևողական աշխատանքի ու պայքարի շնորհիվ նախկինում ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների մոտ ստեղծվեց և հաստատուն հիմքերի վրա դրվեց փոխադարձ վստահությունն ու հավատը դեպի ռուս մեծ ժողովուրդը: Այդ վստահության անսասան հիմքի վրա էլ կազմակերպվեց ՍՍՌՄ-ն:

ՍՍՌՄ-ի կազմակերպումը բազմակողմանիորեն նախապատրաստելու և իրականացնելու գործում խոշորագույն դեր է կատարել Աղգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը: Ինչպես քաղաքացիական կռիվների տարիներին, նույնպես և այդ կռիվների ավարտումից հետո, խաղաղ շինարարության ժամանակ Աղգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը շարունակում էր մեծ աշխատանք կատարել Կոմունիստական պարտիայի աղգային քաղաքականության կենսագործման ուղղությամբ:

Սովետական Միության կազմակերպումը Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության աղգային քաղաքականության նոր, փայլուն հաղթանակն էր:

Հանդիսանալով Անդրկովկասյան Ֆեդերացիայի իրավահավասար անդամներից մեկը, վերջինիս միջոցով Հայկական ՍՍՌ-ն 1922 թ. դեկտեմբերին մտավ աշխարհում ամենահզոր պետության՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ: Այդ պատմական մեծագույն ակտը վճռական նշանակություն ունեցավ և ունի ինչպես սովետական բոլոր ժողովուրդների, նույնպես և հայ ժողովրդի քաղաքական, անտեսական և կուլտուրական զարգացման համար, սովետական ժողովուրդների եղբայրական

համագործակցությամբ սոցիալիզմի կառուցումը հաջողությամբ առաջ տանելու համար:

Այն ժամանակ, երբ տեղի ունեցավ ՍՍՌՄ-ի կազմակերպումը, Հայկական ՍՍՌ-ի Կոնստիտուցիայի մեջ դեռևս համապատասխան կետ չկար Հայկական ՍՍՌ-ն Անդրֆեդերացիայի միջոցով ՍՍՌՄ-ի մեջ մտնելու մասին, որովհետև այդ Կոնստիտուցիան ընդունվել էր ավելի առաջ (1922 թ. Հունվար), քան տեղի էր ունեցել Անդրֆեդերացիայի և ՍՍՌՄ-ի կազմակերպումը: Հայաստանի Սովետների 4-րդ Համագումարը, որը տեղի ունեցավ 1925 թ. մարտին, անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ է կատարում Հայաստանի Սովետների առաջին Համագումարում ընդունված Հայկական ՍՍՌ-ի Կոնստիտուցիայի մեջ: Այնտեղ ավելացվում է մի նոր հոդված (14-րդ), որը խոսում է Սովետական Հայաստանը Անդրկովկասյան Ֆեդերացիայի միջոցով ՍՍՌՄ-ի մեջ մտնելու մասին: Հոդվածում ասված է. «Պառլամենտական օրակի հանդեպ մի խորհրդային ճակատ առնչելու և բոլոր խորհրդային հանրապետությունների հետ սերտ եղբայրական աշխատակցության հիման վրա սոցիալիստական շինարարությունը և ազգային զարգացման ազատությունն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետությունը՝ Վրաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության և Ադրբեջանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության հետ կազմում են Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ խորհրդային Հանրապետություն, իսկ վերջինիս միջոցով, որպես նրա իրավահավասար մասը՝ միանում է Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ խորհրդային Հանրապետության, Բելոռուսիայի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության և Ուկրաինայի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության հետ և կազմում են մի միացյալ պետություն՝ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը» [1]:

Սկսվում է Սովետական Հայաստանի պատմության մի նոր, փայլուն շրջանը: Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում մեծ հաջողությամբ առաջ էր գնում ռեսպուբլիկայի ժողովրդական անտեսության վերականգնման գործը:

---

1 *ՀԱՍՀ խորհուրդների չորրորդ Համագումարը, պետրական հաշվետվություն, 1926, էջ 232:*

Սովետական Միության կազմակերպման, նրա հետագա ամրապնդման, մեր երկրի ժողովուրդների անխախտ բարեկամության և համագործակցության հաստատման գործում առաջատար դերը պատկանում է ռուս մեծ ազգին, որը հանդիսանում է Սովետական երկրի իրավահավասար ազգերի և ժողովուրդների եղբայրական ընտանիքում ամենից ավելի ականավոր ազգը։

Սովետական Միության կազմակերպումը մեր երկրի բանվորների ու գյուղացիների ներքին գործը չէր միայն։ Նրա պատմական խոշորագույն նշանակությունը դուրս է գալիս Սովետական երկրի սահմաններից՝ ստանալով միջազգային բնույթ։ «Ինչ վերաբերում է այդ Միության միջազգային նշանակությանը,— ասում է Ի. Վ. Ստալինը,— ապա նա հավիտ թե առանձին պարզաբանումների կարիք ունի։ Եթե սովետական ռեսպուբլիկաների ռազմական դաշինքը քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում մեզ հնարավորություն տվեց ետ մղելու մեր թշնամիների ռազմական միջամտությունը, իսկ այդ ռեսպուբլիկաների դիվանագիտական դաշինքը Ճենովայի և Հաագայի ժամանակաշրջանում հեշտացրեց մեր պայքարը Անտանտայի դիվանագիտական դրոհի դեմ, ապա սովետական ռեսպուբլիկաների միավորումը մեկ միութենական պետության մեջ, անկասկած, կստեղծի ռազմա-տնտեսական բազմակողմանի համագործակցության այնպիսի ձև, որը, հիմքից հեշտացնելով սովետական ռեսպուբլիկաների տնտեսական բարգավաճումը, նրանց կդարձնի մի միջնաբերդ միջազգային կապիտալիզմի կողմից կատարվող ոտնձգությունների դեմ»[1]։

Սովետական Միության կազմակերպումը խոշոր չափով նպաստեց Արևելքի ժողովուրդների ռևոլյուցիոն պայքարի վերելքին, Արևմուտքի պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի ուժեղացմանը։ Հանձին ՍՍՌՄ-ի և նրա փորձի, նրանք տեսնում են իրենց ազգային և սոցիալական ազատագրության ուղիները ու միջոցները։ Ահա թե ինչու ՍՍՌՄ-ի կազմակերպումը միջազգային ռևոլյուցիոն պրոլետարիատի, իրենց ազատության ու անկախության համար մարտնչող գաղութային ու կիսագաղութային երկրների ժողովուրդների ու ամբողջ առաջավոր մարդկության կողմից ընդունվեց ջերմ կերպով։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 161—162։

* * *

Սովետների համամիութենական առաջին համագումարի որոշմամբ Սովետական Միության Կոնստիտուցիայի մշակումը հանձնարարվում է այդ համագումարում ընտրված ՍՍՌՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեին, որը Կոնստիտուցիայի վերջնական նախագիծը պատրաստելուց հետո, այն պետք է ներկայացներ միութենական ռեսպուբլիկաների Կենտրոնական Գործադիր կոմիտեների քննարկմանը։ Դրանով իսկ համագումարը հատուկ կերպով ընդգծեց միութենական ռեսպուբլիկաների իրավահավասարությունը այնպիսի կարևորագույն փաստաթղթի մշակման գործում, ինչպիսին էր ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիան։ Կոնստիտուցիայի մշակման համար ՍՍՌՄ ԿԳԿ-ն առանձնացնում է հատուկ կոնստիտուցիոն հանձնաժողով՝ բոլոր միութենական ռեսպուբլիկաների ներկայացուցիչների մասնակցությամբ։

ՍՍՌՄ-ի առաջին Կոնստիտուցիան մշակելու համար 1923 թ. փետրվարի 24-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի պլենումը որոշում է հատուկ հանձնաժողով՝ Ի. Վ. Ստալինի նախագահությամբ։ Այդ ժամանակվանից մինչև նույն թվականի հուլիս ամիսը բազմակողմանի նախապատրաստական աշխատանքներ են կատարվում ՍՍՌՄ-ի առաջին Կոնստիտուցիայի նախագիծը պատրաստելու ուղղությամբ։

1923 թ. հուլիսի 6-ին, ՍՍՌՄ-ի Կենտգործկոմի 1-ին գումարման երկրորդ նստաշրջանում Սովետական Միության առաջին Կոնստիտուցիայի նախագիծը միահամուռ կերպով հավանություն է գտնում։ Այն վերջնականապես հաստատվում է 1924 թ. հունվարի 31-ին՝ Սովետների Համամիութենական երկրորդ համագումարի կողմից։

Այդ բազմազգ Սովետական պետության Կոնստիտուցիան էր, որը ստեղծվել էր պրոլետարիատի դիկտատուրայի գոյության վեց տարվա ընթացքում ձեռք բերված հաղթանակների հիման վրա, համապատասխան մեր երկրի այն ժամանակվա էկոնոմիկայի ու դասակարգային փոխհարաբերություններին։ Որպես Սովետական պետության հիմնական օրենք, Կոնստիտուցիան ամենալայն հնարավորություններ էր ստեղծում մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական բարգավաճման համար, նրանց միասնական և համերաշխ աշխատանքի ու պայքարի համար հանուն կոմունիստական հասարակարգի կառուցման։

Իսկ ինչպիսի վիճակումն էին այն ժամանակ մեր երկրի էկոնոմիկան և դասակարգային փոխհարաբերությունները: Ինչպես ցույց է տվել Ի. Վ. Ստալինը, այդ նախի առաջին շրջանն էր, երբ Սովետական իշխանությունը նոր էր կապիտալիզմի որոշ աշխուժացում՝ սոցիալիզմի ըստ ամենայնի զարգացման հետ միասին, երբ կապիտալիստական և սոցիալիստական սիստեմների մրցության ընթացքում Սովետական պետությունը նպատակ ուներ կազմակերպել սոցիալիստական սիստեմի գերակշռությունը կապիտալիստականի հանդեպ, երբ Սովետական երկրի արդյունաբերությունը, առանձնապես ծանր արդյունաբերությունը, աննախանձելի պատկեր էր ներկայացնում: Այն ժամանակ արդյունաբերության մեջ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը կազմում էր մոտավորապես 80 տոկոս, կապիտալիստական հատվածը՝ ոչ պակաս, քան 20 տոկոսը: Ավելի անհրապույր պատկեր էր ներկայացնում գյուղատնտեսությունը, որը հիշեցնում էր անհատական գյուղացիական մանր տնտեսությունների մի անծայրածիր օվկիանոս՝ իրենց հետամնաց միջնադարյան տեխնիկայով: Կոլտնտեսությունն ու սովխոզները դեռևս քիչ էին և թույլ, մեր ժողովրդական տնտեսության մեջ փոքրիշատե լուրջ նշանակություն չունեին: Իսկ կուլակը դեռևս պահպանում էր իր ուժը:

Ապրանքաշրջանառության մեջ սոցիալիստական հատվածը կազմում էր ոչ ավելի, քան 50—60 տոկոս, իսկ ամբողջ մնացած մասը գտնվում էր մասնավոր սեկտորի ձեռքում:

ՍՍՌՄ-ի առաջին Կոնստիտուցիան ելնում էր մեր երկրի էկոնոմիկայի և դասակարգային կառուցվածքի այդպիսի պայմաններից: Ինչպես ՍՍՌՄ-ի, նույնպես և բոլոր միութենական ու ավտոնոմ սովետական ռեսպուբլիկաների կոնստիտուցիաները իրենց հիմքում դրել էին պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպանությունը և ամրապնդումը, կապիտալիստական էլեմենտների ճնշումը և վերացումը, մարդու կողմից մարդու շահագործման լիկվիդացումը, բոլոր ազգությունների ու ժողովուրդների միջև եղբայրական անխախտ դաշինքի և համագործակցության հաստատումը:

Սովետական Միության առաջին Կոնստիտուցիան օրենսդրականորեն ամրապնդեց սովետական ժողովուրդների եղբայրական համագործակցությունը, որի բարձրագույն ձևը հանդիսացավ այդ ժողովուրդների պետական միավորումը աշխարհում ամենահզոր բազմազգ պետության՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլի-

կանների Միության մեջ։ Սահմանվեցին Միութենական պետական օրգանների կազմակերպման ձևերը, նրանց իրավասությունները, հետևողականորեն պաշտպանելով միութենական ռեսպուբլիկանների ինքնուրույնությունը։ Ըստ Կոնստիտուցիայի, ՍՍՌՄ-ի իրավասության մեջ էին մտնում արտաքին քաղաքականության ղեկավարությունը, ուրիշ պետությունների հետ պայմանագրերի կնքումը, պատերազմ հայտարարելը և խաղաղության պայմանագրերի կընքումը, ՍՍՌՄ-ի սահմանների փոփոխության վերաբերյալ հարցերի որոշումը, ինչպես նաև Միութենական ռեսպուբլիկանների միջև սահմանների կարգավորումը, ՍՍՌՄ-ի մեջ նոր ռեսպուբլիկանների ընդունումը, երկրի զինված ուժերի կազմակերպումը և ղեկավարումը, ամբողջ երկրի ժողովրդական տնտեսության կազմակերպումը և ղեկավարումը, նրա զարգացման համար ընդհանուր պլանների մշակումը, միութենական միասնական բյուջեի և վարկային-դրամական սիստեմի հաստատումը, տրանսպորտի, փոստի ու հեռագրի գործի ղեկավարումը, հողաշինարարության և հողօգտագործման ընդհանուր սկզբունքների սահմանումը, աշխատանքային հիմնական օրենքների մշակումը, սովետական քաղաքացիության վերաբերյալ հիմնական օրենսդրության մշակումը, ժողովրդական կրթության ընդհանուր դրույթների մշակումը, ժողովրդական առողջապահության գծով ընդհանուր միջոցառումների մշակումը և այլն։ Այստ բոլոր հարցերը, որոնք Միութենական գերագույն օրգանների իրավասության մեջ չէին մտնում, ենթակա էին Միութենական ռեսպուբլիկանների իրավասությանը։

Կոնստիտուցիայի համաձայն յուրաքանչյուր Միութենական ռեսպուբլիկա ազատ կերպով կարող էր դուրս գալ ՍՍՌՄ-ի կազմից։ Սովետական Միության կազմից դուրս գալու այդպիսի իրավունքի նախատեսումը տրամաբանորեն բխում էր նրա մեջ մտնելու կամավորության սկզբունքից։

Կոնստիտուցիայով սահմանված էր, որ ՍՍՌՄ-ի գերագույն օրգանը համարվում էր Սովետների Համամիութենական համագումարը, իսկ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում՝ ՍՍՌՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն բաղկացած էր երկու պալատից՝ Միության Սովետից և Ազգությունների Սովետից։ Միության Սովետը և Ազգությունների Սովետը իրավահավասար էին։ Սովետական Միության օրենքը այն ժամանակ էր ուժ ստանում, երբ հաստատվում էր երկու պա-

680—16

լատների կողմից։ Այդ ցույց է տալիս, որ երկու պալատներն էլ ունեին օրենսդրական ֆունկցիա։

ՍՍՌՄ-ի առաջին Կոնստիտուցիայի ընդունումը միաժամանակ նշանակում էր սովետական դեմոկրատիզմի նոր, փայլուն հաղթանակը։ Նեպի առաջին շրջանում, երբ դեռ կապիտալիստական տարրերը չէին լիկվիդացվել մեր երկրում և ծավալուն դասակարգային պայքարը շարունակվում էր, նա օրենսդրականորեն ամրապնդեց Սովետական Միության աշխատավորական մասսաների շահերի պաշտպանությունը ընդդեմ շահագործողների, տվեց աշխարհում ամենադեմոկրատական ընտրական սիստեմը, սահմանեց Սովետական Միության քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները։ Ըստ Կոնստիտուցիայի, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեին սովետական քաղաքացիները, սկսած 18 տարեկան հասակից՝ անկախ սեռից, դավանանքից, ռասայից, ազգությունից և նստակեցությունից։ Ընտրական իրավունքից զրկվում էին շահագործողները, վարձու աշխատող պահողները, առևտրականները, հոգևորականները, ճգնավորները, նախկին ոստիկանները, ժանդարմները և դատարանով քաղաքական իրավունքից զրկվածները։

ՍՍՌՄ-ի առաջին Կոնստիտուցիան հզոր լենք հանդիսացավ մեր երկրի տնտեսական և կուլտուրական հետամնացության լիկվիդացման համար մղված պայքարում, սովետական ժողովուրդների բարեկամության և համագործակցության հետագա զարգացման ու ամրապնդման, մեր սոցիալիստական Հայրենիքի հաղթական առաջընթացի, նրա հզորացման և բարգավաճման գործում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 1923—1924 ԹԹ.

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՍՍՀՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Սովետական Միության դյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վերականգնման ուղղությամբ 1923 թ. ձեռք էին բերված զգալի հաջողություններ։ Նախորդ տարվա համեմատությամբ 1923 թ. ցանքերի տարածությունը ավելացել էր մոտ 20 տոկոսով, 51,4 միլիոն դեսյատինից հասնելով մինչև 61,2 միլիոնի, որը կազմում էր նախապատերազմյան ցանքերի տարածությունների 71 տոկոսը։ Այդ թվականին Սովետական Միությունում դյուղացիները շուկա էին հանել կես միլիարդ փթից ավելի հացահատիկ։ Զգալի չափով աճել էր արդյունաբերությունը, որի արտադրանքի արժեքը նախորդ տարվա 2. 619 միլիոն ռուբլուց 1923 թ. հասել էր 4.005 միլիոն ռուբլու, կազմելով նախապատերազմյան արտադրանքի 40 տոկոսը[1]։

Արդյունաբերության և դյուղատնտեսության վերականգնման ղուգընթաց, բարելավվում էին բանվոր դասակարգի, աշխատավոր դյուղացիության և ինտելիգենցիայի նյութական պայմանները։ Բանվորների այն մասը, որը ռազմական կոմունիզմի տարիներին դնացել էր դյուղ, սկսել էր վերադառնալ քաղաք՝ արդյունաբերության մեջ աշխատելու համար։ Վերջ էր տրվում բանվորության ապադասակարգայնացման պրոցեսին։ Աճում և ամրապնդվում էր բանվոր դասակարգը։

[1] *Տե՛ս ակադեմիկոս Ս մ. Յ ա ր ո ս լ ա վ ս կ ի, Բոլշևիկների պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքին անցնելու ժամանակաշրջանում (1921—1925), Երևան, 1949, էջ 160։*

Գնալով ավելի ու ավելի էր բարձրանում բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության արտադրական ու քաղաքական ակտիվությունը, որի վրա Կոմունիստական պարտիան մեծագույն ուշադրություն էր դարձնում, կազմակերպելով և գլխավորելով այն:

Չնայած անշեղ և հաստատ առաջխաղացմանը, ժողովրդական տնտեսության վերականգնման գործում դեռևս կային մի շարք լուրջ դժվարություններ, որոնք հիմնականում հանգում էին հետևյալին: Ամբողջությամբ վերցրած, ժողովրդական տնտեսությունը դեռևս դանդաղ էր աճում, արդյունաբերությունը իր արտադրանքով դեռ չէր հասել նախապատերազմյան մակարդակին: Նրա արտադրանքը չէր ապահովում երկրի աճող պահանջները: 1923 թ. Սովետական Միությունում կար մոտ մեկ միլիոն գործազուրկ: Ժողովրդական տնտեսության դանդաղ աճման հետևանքով այն ժամանակ դեռևս հնարավոր չէր լիկվիդացնել գործազրկությունը: Այդ պայմաններում «1923 թվականի աշնան մոտերքը տնտեսական դժվարությունները մի փոքր սրվեցին՝ մեր արդյունաբերական և առևտրական օրգանների կողմից գների սովետական քաղաքականությունը խախտելու հետևանքով: Խիստ անհամապատասխանություն կար արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների գների միջև: Հացի գինը ցածր էր, իսկ արդյունաբերական ապրանքներինը՝ անչափ բարձր: Արդյունաբերության մեջ գոյություն ունեին բարձր վերադիր ծախքեր՝ և այդ թանկացնում էր ապրանքները: Հացի վաճառքից գյուղացիության ստացած փողն արագորեն արժեքազրկվում էր»[1]: Տրոցկիստ Պյատակովը, որն այն ժամանակ զեկավար աշխատանք էր կատարում ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության Գերագույն խորհրդում, տնտեսական օրգաններին դիրեկտիվ էր տվել՝ որքան կարելի է ավելի շահույթ կորզել արդյունաբերական ապրանքներից, անդուսակ կերպով բարձրացնելով այդ ապրանքների գները:

Բարձր գներով արդյունաբերական ապրանքները դանդաղ էին իրացվում. դրա հետևանքով տնտեսական կազմակերպությունների մի մասը կանգնել էր ֆինանսական բարդությունների առաջ և դժվարանում էր վճարել բանվորների աշխատավարձը, որը բանվորների որոշ մասի մեջ առաջացնում էր դժգոհություն:

Մյուս կողմից այն ժամանակ մեր երկրում դեռևս չէր կարգավորված դրամական սիստեմը: Գոյություն ուներ դրամական երկու

---

[1] Համկ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 356—357:

միավոր։ Մշակելով միջոցառումներ կայուն դրամ ստեղծելու ուղղությամբ, Սովետական կառավարությունը դեռևս 1922 թ. սկսել էր թողնել 100 և 50 ռուբլիանոց չերվոնեցներ, որոնք ապահովված էին ոսկու և ապրանքային ֆոնդերով։ Սակայն չերվոնեցը դեռ լայն շրջանառության մեջ չէր։ Չերվոնեցին զուգընթաց շրջանառության մեջ էին սովետական հին դրամանիշները, որոնք ապահովված չէին ոսկու և ապրանքային ֆոնդերով։ Շուկայում դեռևս ավելի լայն չափով շրջանառության մեջ էին սովետական հին դրամանիշները, որոնց արժեքն ընկնում էր և այդ պատճառով էլ այն դյուղացուն ձեռնտու չէր, գյուղային շէր ձգտում մեծ քանակությամբ դրամանիշներ ունենալ։ Դեռևս անհրաժեշտ չափով չէին ամրապնդած պետական առևտրական կազմակերպությունները և կոոպերացիան։ Նման պայմաններում մասնավոր առևտրականները՝ նեպմանականները սկսեցին ավելի ակտիվանալ առևտրի մեջ։ Մասնավոր կապիտալի ձեռքումն էր գտնվում երկրի ամբողջ հատուկտաճառ առևտրի մոտ 80 տոկոսը և ամբողջ մեծածախ — հատուկտաճառ առևտրի մոտ 50 տոկոսը։

Ինչպես նշել է Ի. Վ. Ստալինը, այն ժամանակ մեզ մոտ դեռևս շկար գյուղատնտեսական վարկի ստորին ցանց, որը կարողանար տակավաղոր գյուղացիությանը մատակարարել էժան վարկ և դրանով իսկ վաշխառուին ու կուլակին դուրս մղել տակավաղոր գյուղացիությանը վարկավորելու գործի բնագավառից։ Այդ պատճառով էլ այն ժամանակ գյուղում վարկը դեռևս ամբողջովին գտնվում էր կուլակի և վաշխառուի ձեռքում[1]։

Օգտվելով երկրի ներքին կյանքում ստեղծված այդ ժամանակավոր դժվարություններից, Կոմունիստական պարտիայի և պրոլետարիատի դիկտատուրայի կատաղի թշնամիները տրոցկիստները, բուխարինականները, բուրժուական նացիոնալիստները և մյուս տականքները ավելի ակտիվ կերպով հանդես եկան պարտիայի դեմ։

1923 թ. ապրիլին տեղի է ունենում Կոմունիստական պարտիայի 12-րդ համագումարը։

Ամփոփելով ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ձեռք բերված առաջին հաջողությունները, համագումարը իր որոշումներով նշեց նրա հետագա խնդիրները, ընդգծելով պարտիական դեկավարության ամրապնդման անհրաժեշտությունը տըն-

---

[1] Տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 6, էջ 283։

տեսական օրգանների ամբողջ գործունեության նկատմամբ, դրանով իսկ վճռական հակահարված հասցնելով տրոցկիստներին ու մյուս թշնամիներին, որոնք ձգտում էին թուլացնել և քայքայել այդ ղեկավարությունը: Ընդդեմ այդ թշնամիների, համագումարը միաժամանակ նշեց, որ արդյունաբերության զարգացումը հնարավոր չէ առանց գյուղացիական տնտեսության վերելքի հետ սերտ շաղկապվածության, որ այդ պատճառով էլ պարտիան իր ամբողջ գործունեության ընթացքում հետևողականորեն պետք է ձգտի ապահովելու այդ շաղկապվածությունը, ապահովելու բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը և դրա հիման վրա հաստատ կերպով առաջ տանելու ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցումը:

Համագումարը քննության առնելով գյուղում տարվող հարկային քաղաքականության հարցը, կարևորագույն որոշում է ընդունում այդ հարցի վերաբերյալ: Մինչև այդ, բնահարկին ղուզբնթաց, տեղերում սահմանվում էին մի շարք տեղական հարկեր, որոնք բավական ծանր էին բնակչության համար: Համագումարի որոշման համաձայն բնահարկի մի մասը փոխարինվեց դրամական հարկով և միավորվեցին պետական բոլոր տեսակի ուղղակի հարկերը, ինչպես և տեղական բոլոր ուղղակի հարկերը: Սահմանվեց միասնական գյուղատնտեսական հարկ: Միասնական գյուղատնտեսական հարկի սահմանումը հնարավորություն էր տալիս Սովետական իշխանությանը լավագույն կերպով կենսագործելու չքավոր և միջակ գյուղացիության շահերի պաշտպանության քաղաքականությունը: Այդ միջոցառումը կարևորագույն նշանակություն ունեցավ աշխատավոր գյուղացիության դրության բարելավման, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հետագա ամրապնդման, դրանով իսկ պրոլետարիատի դիկտատուրայի ավելի ուժեղացման տեսակետից: Նա միաժամանակ կարևորագույն դեր խաղաց կուլակային-նէպմանական տարրերի սահմանափակման, նրանց տնտեսական սանձահարման գործում:

Ժողովրդական տնտեսության վերակառուցման հենց առաջին շրջանից, երբ Սովետական երկրում լայն ծավալ էին ընդունել խաղաղ շինարարական աշխատանքները, Կոմունիստական պարտիան, առաջնորդվելով մեծ Լենինի ցուցումներով, առաձնահատուկ կերպով դրեց ռուսական պրոլետարիատի, ռուս մեծ ժողովրդի եղբայրական ամենագործոն օգնությամբ այդ աշխատանքների ծավալման անհրաժեշտությունը ազգային բոլոր ռեսպուբլիկաներում:

Առանց դրան անհնարին էր արագ կերպով լիկվիդացնել հին կարգերից մնացած կուլտուրական և տնտեսական փաստական անհավասարությունը մեր երկրի ժողովուրդների միջև։

Սովետական բոլոր ազգային ռեսպուբլիկաների, այդ թվում նաև Սովետական Հայաստանի վերականգնման շրջանի և հետագա ամբողջ պատմությունը փայլուն կերպով ցույց է տալիս, թե ինչպես Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ Սովետական Միության կառավարությունը և Սովետական Ռուսաստանը կազմակերպեցին ու մեծ հաջողությամբ կենսագործեցին այդ կարևորագույն խնդիրը։

Համագումարից հետո, 1923 թ. հունիսին, Մոսկվայում հրավիրվում է ՌԿ(բ)Պ ԿԿ-ի չորրորդ խորհրդակցությունը ազգային ռեսպուբլիկաների ու մարզերի պատասխանատու աշխատողների հետ միասին։ Բացի ՌԿ(բ)Պ կենտկոմի անդամներից ու թեկնածուներից, խորհրդակցությանը մասնակցում էին ազգային ռեսպուբլիկաների ու մարզերի 58 ներկայացուցիչներ։ Խորհրդակցության հիմնական օրակարգն էր Ի. Վ. Ստալինի զեկուցումը «Պարտիայի 12-րդ համագումարի ազգային հարցի վերաբերյալ բանաձևի կենսագործման պրակտիկ միջոցառումները»։

Ի. Վ. Ստալինի զեկուցման առթիվ խորհրդակցությունն ընդունում է ծավալուն բանաձև, որով նշում է գործնական միջոցառումներ ազգային հարցի վերաբերյալ պարտիայի 12-րդ համագումարի որոշումների կենսագործումը հետևողականորեն ու մինչև վերջ ապահովելու համար։ Ազգային ռեսպուբլիկաներում ու մարզերում տնտեսական շինարարությունը հաջողությամբ առաջ տանելու նպատակով պարտիան անհրաժեշտ էր համարում.

«ա) վերաբնակեցումների կարգավորում, իսկ որտեղ պահանջվում է— դադարեցում.

բ) տեղական աշխատավոր բնակչության հնարավոր ապահովում հողով ի հաշիվ պետական հողային ֆոնդի.

գ) մատչելի գյուղատնտեսության հարկ տեղական բնակչությանը.

դ) ոռոգման աշխատանքների ուժեղացում.

ե) ամեն կերպ օգնություն կոոպերացիային, մասնավորապես արհեստագործական կոոպերացիային (նրան նպաստավոր վարկեր տրամադրելու միջոցով).

զ) ֆաբրիկաների ու գործարանների վոխադրում այն ռեսպուբլիկաները, որոնք հարուստ են համապատասխան հումքով.

է) արհեստավորական ու տեխնիկական դպրոցների ստեղծում տեղական բնակչության համար.

ը) գյուղատնտեսական դասընթացների ստեղծում տեղական բնակչության համար»[1]:

Խորհրդակցության բանաձևում այդպիսի որոշակի ու կոնկրետ միջոցառումներ են նշված նաև մյուս բոլոր բնադավառներում պարտիայի 12-րդ համագումարի որոշումների կենսագործումն ապահովելու նպատակով:

Պարտիայի 12-րդ համագումարի և վերոհիշյալ չորրորդ խորհրդակցության որոշումների հիման վրա պարտիան և Սովետական իշխանությունը 1923—1924 թվականներին ձեռք առան մի շարք կարևոր միջոցառումներ այդ ժամանակ ստեղծված տնտեսական-ֆինանսական դժվարությունները լիկվիդացնելու համար: Սովետական պետության օգնությամբ լայնորեն կազմակերպվեց և հաստատուն հիմքերի վրա դրվեց գյուղատնտեսական վարկի գործը, որի շնորհիվ սակավազոր գյուղացիական տնտեսությունները վարկի միջոցով պետությունից ստացան խոշոր օգնություն, մեծ մասամբ ազատվելով մասնավոր առևտրականներից ու վաշխառուներից ունեցած կախումից: Զգալի չափով բարելավվեցին և ամրապնդվեցին պետական առևտրական կազմակերպությունների և կոոպերացիայի աշխատանքները: Պետության ձեռք առած վճռական միջոցների շնորհիվ կարգավորվեց շուկայական գների գործը, տեղի ունեցավ անցումը կայուն վալյուտային և այլն: Այդ բոլորի շնորհիվ ավելի ու ավելի էր ամրապնդվում պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային հիմքը՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը:

Ձինված պարտիայի 12-րդ համագումարի որոշումներով, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները Անդրկովկասյան երկրային Կոմիտեի ղեկավարությամբ մինչև վերջ մերկացրին ու անողոքաբար ջախջախեցին բուխարինականներին, բուրժուական նացիոնալիստներին և մյուս թշնամիներին: Այդ ստոր թշնամիների դեմ մղած ծավալուն և անողոք պայքարի շնորհիվ Կոմունիստական պարտիային հաջողվեց ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, նույնպես և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Անդրկովկասում ապահովել ժողովուրդների միջև հաստատված

[1] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 5, էջ 329 և ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, 1 մաս, Հայպետհրատ, Երևան, 1954, էջ 979:*

բարեկամության և եղբայրական համագործակցության հարաճուն ամրապնդումը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումը և սոցիալիստական շինարարության հաղթական առաջընթացը:

Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության արտաքին իմաստուն քաղաքականության շնորհիվ 1923 թ. խոշոր չափով ամրապնդվել էր Սովետական Միության միջազգային դրությունը: Միջազգային իրադրության բարդ պայմաններում, երբ անգլիական, ամերիկյան, ֆրանսիական և մյուս երկրների իմպերիալիստները մեր սոցիալիստական հայրենիքի դեմ մոլեգնորեն նախապատրաստում էին նոր պատերազմ և կազմակերպում հակասովետական, պրովոկացիոն ելույթներ, Սովետական Միության կառավարությունը հաստատ և աներեր կերպով տանում էր իր խաղաղասիրական քաղաքականությունը, մերկացնելով և վճռական հակահարված հասնելով իմպերիալիստական ռեակցիայի բոլոր փորձերին:

1922 թ. նոյեմբերի 22-ից մինչև 1923 թ. հուլիսի 21-ը, որոշ ընդմիջումներով, Լոզանում տեղի է ունենում միջազգային կոնֆերանս, որին մասնակցում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Թուրքիայի, Հունաստանի, Ռումինիայի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչները: Որպես դիտորդ, մասնակցում էր նաև ԱՄՆ-ի ներկայացուցիչը: Չնայած Անգլիայի և իմպերիալիստական մյուս պետությունների կատաղի դիմադրությանը, Սևծովյան նեղուցների հարցի քննարկմանը, որպես միասնական դևևգատիա, մասնակցեց ՌՍՖՍՌ-ի, Ուկրաինական ՍՍՌ-ի և Վրացական ՍՍՌ-ի ներկայացուցչությունը: Քննության առնելով Մերձավոր Արևելքին վերաբերող հարցեր՝ Սև ծովի նեղուցների հարցը, ֆինանսական հարցեր, օտարերկրացիների և ապպային փոքրամասնությունների հարցը և այլն, որոնք անմիջականորեն շոշափում էին Սովետական Միության շահերը, իմպերիալիստներն այդ կոնֆերանսում կնքում են մի պայմանագիր, որը ամբողջապես ուղղված էր Սովետական երկրի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների կենսական շահերի դեմ: Լոզանի կոնֆերանսում սովետական ռևսպուբլիկանների պատվիրակությունը ամբողջ աշխարհի առաջ մերկացնելով իմպերիալիստների խարդախ դավերը, հաստատ կերպով ցույց տվեց Սովետական պետության խաղաղասիրական քաղաքականությունը, դրանով իսկ ձեռք բերելով բարոյական-քաղաքական խոշոր հաղթանակ ընդդեմ իմպերիալիստական ռեակցիայի: Վճռական հակահարված տալով իմպերիալիստների փորձերին, Սովետա-

կան Ռուսաստանի կառավարությունը չհաստատեց Լոզանի կոնֆերանսի ընդունած կոնվենցիան Սև ծովի նեղուցների վերաբերյալ։ Այդ ցույց էր տալիս մեկ կողմից, որ Սովետական պետությունը չի ընդունում իմպերիալիստների թելադրանքը, նրանց շահերից բխող պայմանագրերը ընդդեմ Սովետական և մյուս ժողովուրդների շահերի և հաստատապես պաշտպանում է իր կենսական շահերն ու խաղաղության դործը Մերձավոր Արևելքում, մյուս կողմից, որ իմպերիալիստական պետությունները չեն կարող առանց սովետական ռեսպուբլիկաների լուծել միջազգային հարցեր, տվյալ դեպքում Մերձավոր Արևելքին վերաբերող հարցեր։

Այսպիսով, Կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարությամբ Սովետական Միությունը վճռական հակահարված է տալիս իմպերիալիստական պետություններին և հաջողությամբ դուրս գալիս 1922—1923 թվականներին մեր երկրի համար ստեղծված միջազգային բարդ իրադրությունից։ «Շոշափելով Սովետական իշխանության ամրությունը և համոզվելով նրա կայունության մեջ, կապիտալիստական պետությունները մեկը մյուսի ետևից սկսեցին վերականգնել դիվանագիտական հարաբերությունները մեր երկրի հետ...

Պարզ էր, որ Սովետական երկիրը կարողացել էր խաղաղ դադարի մի ամբողջ ժամանակաշրջան նվաճել»[1]։

Գնալով ավելի ու ավելի էր ամրապնդվում Սովետական Միության միջազգային դրությունը, նրա աղդեցությունը միջազգային կյանքում, որպես խաղաղության և ժողովուրդների ազատության ու անկախության համար մղվող մեծ պայքարի անսասան դրոշակակրի։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 1922—1923 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ [2]։ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ

Սովետական Միության ներքին ու միջազգային այդպիսի իրադրության պայմաններում, ինչպես սովետական բոլոր ռեսպուբլիկաներում, նույնպես և Հայկական ՍՍՌ-ում Կոմունիստական

[1] Համկ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 365։

[2] Այն ժամանակ տնտեսական տարին համարվում էր յուրաքանչյուր տարվա հոկտեմբերից մինչև հաջորդ տարվա հոկտեմբերը։ Վիճակագրական տվյալները հրապարակվել են այդ հաշվով, որը մենք նկատի ենք ունենդ։

պարտիայի ղեկավարությամբ հաջողությամբ առաջ էին գնում ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքները։

Այդ տեսակետից պատմական խոշորագույն նշանակություն ունեցավ Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպումը, որի շնորհիվ, ինչպես տեսանք, 1923 թ. խոշոր չափով ամրապնդվել էր Սովետական երկրի ներքին ու միջազգային դրությունը։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ամբողջ Սովետական երկրում այդ ժամանակ ծավալվում էր ստեղծագործական աշխատանք տնտեսության վերականգնման համար։

Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, Սովետական Հայաստանը ստանալով այդ ժողովուրդներից, հատկապես ռուս մեծ ժողովրդի ամենօրյա բազմազիսի և անշահախնդիր օգնությունը և հաղթահարելով ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ եղած դժվարությունները, հաստատ կերպով առաջ էր տանում տնտեսության վերականգնման աշխատանքները։

Ժողովրդական տնտեսության վերականգնման գործում 1923 թ. Սովետական Հայաստանում ձեռք բերված արդյունքները հիմնականում հանգում են հետևյալին։

Գյուղատնտեսության բնագավառում. Ռեսպուբլիկայում ընդհանուր ցանքատարածությունները աճելով, 1923 թ. հասել էին 236,6 հազար դեսյատինի[1], կազմելով 1913 թ. ցանքատարածությունների 74,9 և 1919 թ. ցանքատարածությունների 312,4 տոկոսը։ Դրան զուգընթաց, նախորդ տարիների համեմատությամբ, որոշ չափով բարձրացել էր ինչպես հացահատիկային կուլտուրանների, նույնպես և բամբակի և այդկողմնորդության բերքատվությունը, որը, սակայն, դեռ չէր հասել նախապատերազմյան մակարդակին։ Բերված թվերից ցայտուն կերպով երևում է, որ Սովետական իշխանության գոյության երեք տարվա ընթացքում ռեսպուբլիկայում ցանքատարածությունները աճելով, ոչ միայն հասել էին պաշտոնական արյունոտ տիրապետության ժամանակ՝ 1919 թ. եղած ցանքատարածություններին, այլև ավելի քան երեք անգամ ավելացել էին։

Շնորհիվ Կոմունիստական պարտիայի, նրա Անդրկովկասյան երկրային Կոմիտեի ամենօրյա հոգատարության և ղեկավարության, 1923 թ. Հայաստանում առանձնապես խոշոր աշխատանք-

1 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—25 և 1925—26 թթ.», Երևան, 1927, էջ 7։

ներ են ծավալվում գյուղատնտեսության հիմնական ճյուղերից մեկի՝ բամբակագործության վերականգնման ուղղությամբ։ 1922 թ. դեկտեմբերին Անդրկովկասյան Երկրային Կոմիտեն՝ նրա քարտուղար Ալ. Մյասնիկյանի առորագրությամբ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Կոմունիստական պարտիայի կենտրոնական կոմիտեներին ուղարկում է հատուկ նամակ և թելիսներ՝ բամբակագործության վերականգնման անհրաժեշտության, նրա կարևորագույն նշանակության մասին։ Նամակում նշված են գործնական միջոցառումներ երկրամասում բամբակագործության զարգացման համար։

Նույն նամակին կից թելիսներում ասված է. «Եթե մենք չկարողանանք... վերականգնել բամբակագործությունը, այդ դեպքում պետք է տարեկան 300 միլիոն ոսկի ռուբլի ծախսենք, որպեսզի դնենք մեր գործարանների համար անհրաժեշտ բամբակ արտասահմանից։

Բամբակագործության վերականգնումը մեզ հնարավորություն կտա չծախսել այդ 300 միլիոն ռուբլին ոսկով և դործադրել այն ավելի արտադրողականորեն, գյուղատնտեսական գործիքներ և միջոցներ ձեռք բերելու համար, քաղաքային արդյունաբերության վերականգնման կամ այլ նպատակների համար»[1]։

Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի ցուցումները կենսագործելու և ռեսպուբլիկայում բամբակագործությունը վերականգնելու նպատակով 1922 թ. ՀՍՍՌ Հողժողկոմատին կից կազմակերպվում է Բամբակագործության Կոմիտե, որը ծավալուն աշխատանքներ է սկսում։ Որպես օգնություն, պետությունը աշխատավորական գյուղացիական տնտեսություններին բամբակի յուրաքանչյուր հեկտար ցանքսի դիմաց 50 ռուբլի չերվոնեցով վարկ էր տալիս՝ բամբակագործներին հացահատիկով և սերմով ապահովելու նպատակով։ Դեռ 1922 թ. ռեսպուբլիկայի բամբակագործները պետությունից ստանում են 6475 փութ հունտ՝ բամբակի սերմ և 6000 փութ հացահատիկ[2]։ Եթե 1922 թ. ռեսպուբլիկայում ցանվել էր 500 դեսյատին բամբակ, ապա 1923 թ. այն հասել էր 4000 դեսյատինի[3]։

---

1 «Կոմունիստ» ամսագիր, օրգան ՀԿ(բ)Պ ԿԿ և Երևանի Գավառային Կոմիտեի, № 3, 1922, դեկտեմբեր, էջ 30։

2 Տե՛ս «Գյուղատնտեսական կյանք» երկշաբաթաթերթ, օրգան ՀՍԽՀ Հողժողկոմատի և Հողանատոմիության, 1923, № 2—3 (5—6), էջ 25։

3 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—25 և 1925—1926 թթ.», Երևան, 1927, էջ 7։

1923 թ. գլխավոր հաջողություններ էին ձեռք բերված այդեպքում վերականգնման ուղղությամբ:

1921 թ. ապրիլի 14-ին Ալեքսանդրապոլի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռևոլյուցիոն կոմունիստ ընկերներին ուղղած ծրագրային նամակում խոսելով գյուղատնտեսության ոռոգման մասին, Վ. Ի. Լենինը գրել է. «Ոռոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»[1]: Հետևողականորեն կենսագործելով մեծ առաջնորդի ցուցումները գյուղատնտեսության ոռոգման մասին, Հայաստանի բոլշևիկները և Սովետական կառավարությունը 1922—1923 թվականներին առաջին լուրջ հաջողություններն էին ձեռք բերել այդ ուղղությամբ: Դեռևս 1922 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 2-րդ տարեդարձի օրը, ավարտվել և շահագործման էր հանձնվել Լենինի անվան ջրանցքը Էջմիածնի մոտ, որը ոռոգում էր մոտ 2000 հեկտար հողամաս: Խոշոր աշխատանքներ էին սկսվել Սարդարապատի, Ջանգիբասարի, Վեդիբասարի, Բաշ-Գյառնիի, Կոտայքի, Ապարանի և հանրապետության մյուս շրջանների ոռոգման սիստեմների վերանորոգման ուղղությամբ, որոնց գլխավոր մասը ավարտվեց 1923 թ., իսկ մյուս մասը՝ հետագայում:

Հանրապետությունում կատարված ոռոգման աշխատանքների մասին ՀՍՍՌ Հողագործության ժողովրդական Կոմիսարիատի 1922—1923 թթ. գործունեության վերաբերյալ հաշվետվության մեջ ասված է. «Այսպես, 1914 թ. գոյություն ունեցող ջրային սիստեմով Սարդարապատի, Ջանգիբասարի, Գյառնիբասարի, Վեդիբասարի, Ապարանի և Ղրխրուվագի ջրային շրջաններում ոռոգվում էր 66.095 դեսյատին տարածություն: Մինչև 1923 թ. գարնանը, նախքան նրանց վերականգնումը, ոռոգվում էր 43.790 դեսյատին, իսկ նրանց վերաշինելուց և վերականգնելուց հետո, այդ նույն շրջաններում կարելի եղավ ոռոգել արդեն 59.250 դեսյատին»[2]: 1922—1923 տրնտեսական տարում Սովետական Հայաստանում ոռոգման աշխատանքների վրա ծախսվել է 600 հազար ռուբլի ոսկով[3]: Այդ ժամա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 404:

[2] «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 6:

[3] Տե՛ս «ՀՍՍՀ խորհուրդների երրորդ համագումարը», ազգային հաշվետվություն, էջ 46:

նակ լայն ծավալով գնում էր Շիրակի և Էլջիլարի ջրանցքների շինարարությունը, որն ավարտվեց հետագայում։

Ռոդման ուղղությամբ կատարված այդպիսի աշխատանքների շնորհիվ, նախորդ տարիների համեմատությամբ 1923 թ. զգալի չափով բարձրացել էր գյուղատնտեսության բերքատվությունը, որը, սակայն, դեռ չէր հասել նախապատերազմյան մակարդակին։

1922—1923 թվականներին Հայաստանում խոշոր աշխատանքներ են կատարվում հողաշինարարության գծով։ Այդ ժամանակ ռեսպուբլիկայի ութը գավառներում տեղի է ունենում միջգյուղային հողաբաժանություն, որի մեջ ընդգրկվում են գավառակների և գյուղերի զգալի մասը՝ 15 գավառակ՝ 337 գյուղով[1]։ Չնայած հողաշինարարության ընթացքում կատարված որոշ շեղումներին, որը մեծ մասամբ արդյունք էր դասակարգային թշնամու և նրա գործակալների ստոր դավերի, միջգյուղային հողաբաժանության ժամանակ պարտիական և սովետական կազմակերպությունների ծավալուն աշխատանքի շնորհիվ հնարավոր է լինում սակավահող գյուղացիությանը ապահովել հողով, որը խոշոր չափով նպաստում է մեկ կողմից սակավահող գյուղացիական տնտեսությունների դրության բարելավմանը, նրանց ազատելով կուլակային տնտեսությունների ազդեցությունից, մյուս կողմից՝ գյուղատնտեսության վերականգնման գործին։ Հողաշինարարական աշխատանքները ռեսպուբլիկայում շարունակվում և վերջնականապես ավարտվում են հետագա տարիներին։

Ռեսպուբլիկայում աշխատավոր գյուղացիության դրության բարելավմանը և դրանով իսկ գյուղատնտեսության վերելքի գործին խոշոր չափով նպաստեց պարտիայի 12-րդ համագումարի որոշումների համաձայն գյուղատնտեսական միասնական հարկի սահմանումը, որի շնորհիվ բնահարկի մի մասը փոխարինվեց դրամական հարկով և միավորվեցին պետական ու տեղական բոլոր տեսակի հարկերը, խոշոր չափով թեթևացնելով աշխատավոր գյուղացիության վիճակը։ 1923 թ. Հայաստանում գյուղատնտեսական միասնական հարկի մոտ 80 տոկոսը գանձված էր դրամով, իսկ 20 տոկոսը՝ պարենով[2]։ Միասնական գյուղատնտեսական հարկի սահմանումը և կենսագործումը կարևորագույն նշանակություն ունեցավ

---

1 Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը» էջ 25։

2 Տե՛ս «ՀՍՍՀ խորհուրդների երրորդ համագումարը», ստենոգրաֆիական հաշվետվություն, էջ 44։

նաև բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հետագա ամրապնդման, պրոլետարիատի դիկտատուրայի ուժեղացման և կուլակային-նէպմանական տարրերի ու նրանց գործակալների՝ տրոցկիստների, բուխարինականների, բուրժուական նացիոնալիստների ու մյուս բոլոր թշնամիների դեմ մղվող պայքարում։

Սովետական Հայաստանի սակավազոր գյուղացիական տնտեսությունների ամրապնդման, այդ տնտեսությունները վաշխառուների ու կուլակների աղքեցությունից ազատելու գործում մեծ դեր է խաղացել պետության կողմից սահմանված վարկը։ Ինչպես տեսանք, այն ժամանակ Սովետական երկրում դեռևս չէր կազմակերպված գյուղատնտեսական վարկի ստորին ցանցը, որը կարողանար սակավազոր գյուղացիական տնտեսություններին տար էժան վարկ, այդ պատճառով էլ վաշխառուն և կուլակը դեռևս սակավազոր գյուղացիության որոշ մասին պահում էին իրենց աղքեցության տակ, շահագործելով նրան։

Կենսագործելով պարտիայի որոշումները, Հայաստանի Սովետական կառավարությունը հետևողական աշխատանք էր կատարում գյուղատնտեսական վարկի ծավալման և ամրապնդման գործում, վճռական պայքար կազմակերպելով կուլակային-վաշխառուական տարրերի դեմ, նրանց աղքեցությունից ազատելով սակավազոր գյուղացիական տնտեսություններին։ 1923—1924 տնտեսական տարում Հայկական ՍՍՌ Գյուղատնտեսական բանկը վարկային կոոպերացիայի միջոցով ռեսպուբլիկայի գյուղատնտեսության տարբեր ճյուղերը վարկավորել էր 1.628 հազար չերվոնեց ռուբլով, որից 165 հազարը գյուղատնտեսության հիմնական կապիտալը լրացնելու համար, 587 հազարը՝ բուսաբուծության, 104 հազարը՝ կենդանաբուծության, 211 հազարը՝ կոոպերատնտեսության և գինեգործության զարգացման համար և այլն[1]։

Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ, Հայաստանի Կոմունիստական պարտիան 1923 թ. շարունակում էր ծավալուն քաղաքական-դաստիարակչական աշխատանքը ռեսպուբլիկայի աշխատավոր գյուղացիության մեջ, նրան մոբիլիզացնելով պարտիայի և Սովետական իշխանության քաղաքականությունը գյուղում կենսագործելու համար մղվող պայքարում՝ ընդդեմ կուլակների, նրանց կամակատար տրոցկիստների, դաշնակների և

---

[1] Խորհրդային Հայաստանը թվերով, վիճակագրական տեղեկատու, 1923—1927 թթ., հրատ. ՀՍԽՀ կենտրոն. վիճակ. վարչություն, Երևան, 1928, էջ 249։

մյուս բոլոր թշնամիների։ Այդ տեսակետից կարևոր դեր են կատարում անպարտիական գյուղացիական կոնֆերանսները, որոնք տեղի էին ունենում պարտիական կազմակերպությունների նախաձեռնությամբ և ղեկավարությամբ։ Միայն 1923 թ. առաջին եռամսյակում ռեսպուբլիկայի 9 գավառներում տեղի են ունեցել այդպիսի 75 կոնֆերանսներ՝ 3483 աշխատավոր անպարտիական գյուղացիների մասնակցությամբ[1]։

Այդ «կոնֆերանսները կատարյալ կերպով արտացոլեցին մասսայական կամպանիայի արդյունքները,— ասված է ՀԿ(բ)Պ կենտկոմի ագիտացիայի բաժնի հաշվետվության մեջ։— Ամենուրեք և կատարյալ միաբանությամբ հանվում էին հավանություն տվող բանաձևեր խորհրդային իշխանության քաղաքականության մասին. կոնֆերանսները ամենուրեք ողջունում էին շինարարական նվաճումները՝ տնտեսական ասպարեզում և նրանցով ոգևորված, բոլոր կոնֆերանսները հանում էին գործնական բանաձևեր, նախագծում էին գործնական միջոցները՝ տնտեսության ինտենսիվ ձևերին անցնելու համար, հողօգտագործման ձևերի և միջոցների կատարելագործման, գյուղատնտեսական ընկերությունների կազմակերպման... մասին»[2]։

1923 թ. ռեսպուբլիկայում որոշ չափով ավելացել էր անասունների ընդհանուր գլխաքանակը։ Այսպես, եթե 1919 թ. Հայաստանում եղած բոլոր անասունների գլխաքանակը միասին վերցրած հավասար էր 747.643-ի, 1922 թ.՝ 796.670-ի, ապա 1923 թ. ամիսլով, այն հասել էր 1.139.820-ի[3], այսինքն 1919 թ. համեմատությամբ մոտավորապես կրկնապատկվել էր։

1923 թ. ռեսպուբլիկայում զգալի աշխատանք էր կատարված սովխոզների կազմակերպական ամրապնդման ուղղությամբ։

Այն ժամանակ Սովետական Հայաստանում կար չորս սովխոզ։ Առաջին սովխոզը, որը գտնվում էր Երևանի շրջակայքում՝ Դալմայի այգիներում, ուներ գերապանցապես այգեգործական բնույթ։ Գնալով ծավալվում էին նրա աշխատանքները, աճում էր բերքատվությունը։ Այսպես, եթե 1922 թ. նրա այգիներից ստացվել էր 806 փութ խաղողի բերք, ապա 1923 թ. արդեն ստացվել էր 2193 փութ խաղող, մոտ 4000 փութ բանջարաբոստաններ և զգալի քանակությամբ

---

[1] «Կոմունիստ» ամսագիր, 1923, № (5) 3—5, էջ 63։

[2] Նույն տեղում։

[3] «Սովետական Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 113։

այգեգործական արտադրանք[1], որը որոշ դեր էր խաղում Երևանի բնակչության մատակարարման գործում: 1923 թ. սովխոզում կազմակերպվում է գինեգործություն, այստեղ մշակվում է ինչպես այդ, նույնպես և 2-րդ սովխոզից և մասնավոր այգետերերից ստացված խաղողը: Միայն 1923 թ. այնտեղ պատրաստվում է մոտ 8000 դույլ գինի: Այդ ժամանակին չորեքանչյուր ամիս սովխոզում միջին հաշվով աշխատել է մոտ 1200 բանվոր-բանվորուհի[2]:

Երկրորդ սովխոզը գտնվում էր Կուտայքի շրջանում՝ Ծ'հուբի մոտ, որը զբաղվում էր ինչպես հացահատիկային կուլտուրաների մշակմամբ, նույնպես բանջարաբուծությամբ, այգեգործությամբ և որոշ չափով անասնաբուծությամբ: Ջանադան տեսակի մշակույթների ամբողջ արտադրանքը աճելով, այստեղ 1923 թ. արդեն հասել էր ավելի քան 7000 փթի[3]: Ըստ որում նրա զարգացումը ընթանում էր մեծ մասամբ այգեգործության և ծխախոտի մշակության ծավալման ուղղությամբ:

Երրորդ սովխոզը գտնվում էր Փարաքարի մոտ: Այստեղ ևս մշակվում էին գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ՝ հացահատիկ, խաղող, բամբակ և այլն: Սովխոզի առաջին հաջողությունների մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը. եթե 1922 թ. այնտեղ արտադրվել էր 1500 փ. խաղող, 2364 փ. հացահատիկ, 60 փ. բամբակ, 1500 փ. բրինձ և այլն, ապա 1923 թ. արդեն սովխոզը արտադրել էր 2913 փ. խաղող, 3607 փ. հացահատիկ, 900 փ. բամբակ, 1835 փ. բրինձ և այլն[4]:

Չորրորդ սովխոզը գտնվում էր Լոռու դավառում՝ Ալեքսալա կայարանի մոտ և զարգացնում էր պտղաբուծությունը:

Գյուղատնտեսական արտադրանքի սորտերի բարելավման ուղղությամբ 1923 թ. որոշ աշխատանք էր կատարված դեռևս 1921 թ. Երևանի մոտ կազմակերպված առաջին սերմնաբուծարանի կողմից: Այստեղ մշակվում և պատրաստվում էին հացահատիկի, բանջարեղենի և բամբակի լավագույն սերմեր, որոնք պետության կողմից տրվում էին ինչպես սովխոզներին, նույնպես գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերություններին և աշխատավորական գյուղացիական տնտեսություններին:

---

1 Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 48:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 49:

4 Նույն տեղում, էջ 50:

1922—1923 թթ. ռեսպուբլիկայում որոշ աշխատանքներ էին սկսվել գյուղատնտեսական կադրերի պատրաստման ուղղությամբ։ 1922 թ. Օշականում բացվել էր գյուղատնտեսական դպրոց։ Նույն թվականին կազմակերպված Ալեքսանդրոպոլի տեխնիկումում կար գյուղատնտեսական բաժին։ Այդ երկու դպրոցն էլ պատրաստում էին միջին որակի գյուղատնտեսական աշխատողներ։ Սակայն նրանք 1923 թ. շրջանավարտներ դեռ չէին տվել։ Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը թեւակոխել էր իր գոյության երրորդ տարին և շրջանավարտներ էր տալու երկու տարի հետո։ Բացի դրանից, առաջին և երրորդ սովխոզներում գործում էին երկու կուրսեր, որոնք պատրաստում էին գյուղատնտեսական որակյալ բանվորներ[1]։

Ռեսպուբլիկայի ամբողջ գյուղատնտեսությունն այն ժամանակ դեռևս գտնվում էր տեխնիկական զինվածության տեսակետից անմխիթար, հետամնաց վիճակում։ 1923 թ. Սովետական Հայաստանի գյուղատնտեսության մեքենայական զինվածության մասին պատկերացում է տալիս հետևյալ փաստը։ Ամբողջ ռեսպուբլիկայում կար ընդամենը 25 հնամաշ տրակտոր[2], որոնք աշխատում էին սովխոզներում և պետական այլ ձեռնարկություններում։ Ամբողջ գյուղացիական տնտեսությունները դեռևս հողը մշակում էին հետամնաց տեխնիկայով՝ որը հատուկ է մանր անհատական տնտեսություններին։

1923 թ. Հայկական ՍՍՌ-ն մասնակցում է Մոսկվայում կազմակերպված Համամիութենական գյուղատնտեսական առաջին ցուցահանդեսին։ Այստեղ նա ցուցադրում է ռեսպուբլիկայի հացահատիկը, բուսականությունը, կենդանիները, կաթնամթերքները, այգեգործության արտադրանքը, գինին, կոնյակը, անտառային հարստությունները, տնայնագործական արտադրության որոշ տեսակները՝ դորգեր, արծաթյա իրեր և այլն, ինչպես նաև երկրի բնական հարստությունների որոշ նմուշները։ Ռեսպուբլիկայից այս ցուցահանդեսին ներկայացված էր մոտ 100 էքսպոնատ[3]։ Ցուցահանդեսում Վորոնցովկայի (այժմ Կալինինո) շվեյցարական տեսակի պանիրը արժանանում է առաջին մրցանակի։ Այդ ցույց էր տա-

---

[1] Տե՛ս «Գյուղատնտեսական կյանք» հրկ. աբաթաթերը, 1923, հունվար, № 2—3 (5—6), էջ 26—27։

[2] Տե՛ս «Գյուղատնտեսական կյանք», 1923, № 10—11 (13—14), էջ 12.

[3] Նույն տեղում, էջ 36—37։

լիս մեկ կողմից անասնապահական արտադրանքի որակի բարձրացումը, մյուս կողմից անասնապահության զարգացման մեծ հեռանկարները Հայաստանում։

Արդյունաբերության բնագավառում. *Հայաստանի արդյունաբերության հիմնական ճյուղը՝ պղնձարդյունաբերությունը 1923 թ. դեռևս չնչին արդյունք էր տալիս։ Նրա վերականգնման և գործարկման համար անհրաժեշտ էին մեծ չափերի հասնող կապիտալ ներդրումներ, որն այն ժամանակ դեռևս հնարավոր չէր կատարել։ Այդ պատճառով էլ, արդյունաբերության մյուս ճյուղերի համեմատությամբ, ռևսպուբլիկայում պղնձարդյունաբերության վերականգնման գործը սկսվեց համեմատաբար ուշ՝ 1924—1925 թթ., երբ ՍՍՌՄ Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհրդի որոշմամբ Հայաստանի պղնձարդյունաբերության վերականգնման համար բաց է թողնվում 2.200 հազար ռուբլի[1]։*

1923 թ. Ղափանի պղնձահանքերը և պղնձաձուլարանը լրիվ չէին աշխատում, իսկ Ալավերդու հանքերն ու գործարանը աշխատում էին մասնակի կերպով՝ հենի բուլայի վրա, տալով շատ չնչին արտադրանք։

Գինու-կոնյակի-սպիրտի արտադրությունը, որն այն ժամանակ համարվում էր ռևսպուբլիկայի արդյունաբերության գլխավոր ճյուղերից մեկը, 1923 թ. ներկայացնում էր հետևյալ պատկերը։ Նրա մեջ մտնում էին վեց ձեռնարկություն՝ երկուսը Երևանում, մյուս չորսը շրջաններում՝ Էջմիածնում և Դամարլուում։ Այդ վեց ձեռնարկներից վերականգնված և աշխատում էր միայն Երևանի «Արարատ» գործարանը, իսկ մյուսները դեռ չէին աշխատում։ 1922—1923 տնտեսական տարում պլանով նախատեսված էր արտադրել՝ սեղանի գինի 20 հազար դույլ, քաղցր գինի 40 հազար դույլ, կոնյակի սպիրտ 500 հազար աստիճան, զտած օղի մեկ միլիոն աստիճան և դոշաբ 6 հազար դույլ[2]։ Այդ պլանը կատարվել է որոշ թերակատարումով։ Իսկ 1923—1924 տնտեսական տարում նախատեսված էր արտադրել՝ քաղցր գինի 60 հազար դույլ, կոնյակի սպիրտ մեկ միլիոն 700 հազար աստիճան, զտած օղի մեկ և կես միլիոն աստիճան և դոշաբ մոտ 20 հազար դույլ[3]։ 1923—1924 տըն-

---

1 *Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40/113, ց. 454, բ. 5։*

2 *Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվություն», էջ 142։*

3 *Նույն տեղում, էջ 152 և 154։*

տեսական տարվա այդ պլանը հիմնական ցուցանիշներով կատարվել էր առանց թերակատարումների։ Բերված թվերի համեմատությունը ցույց է տալիս, որ 1923—1924 տնտեսական տարում նախորդ տարվա համեմատությամբ զգալի չափով ընդարձակվել էր գինու-կոնյակի-սպիրտի արտադրությունը։ 1923 թ. «Արարատ» գործարանում աշխատում էին 44 բանվոր-բանվորուհի, 29 ծառայող և մեկ հոգի տեխնիկական անձնակազմ[1]։

1923 թ. կաշվի արդյունաբերության գծով Երևանում աշխատում էին երկու փոքր գործարան, որոնք սարքավորված էին տնայնագործական գործիքներով։ Առաջին գործարանը, որը համեմատաբար ավելի մեծ էր, քան 2-րդը, սկսել էր աշխատել 1921 թ. երկրորդ կեսից, իսկ 2-րդ գործարանը՝ 1922 թ. մայիսից։ Չնայած այդ երկու գործարանները աշխատում էին, բայց դեռևս դտնվում էին միանգամայն անմխիթար վիճակում։ Նրանց աշխատանքները բարելավելու և ընդարձակելու նպատակով 1922—1923 տնտեսական տարում կատարվում են մի շարք միջոցառումներ։ Սարքավորվում են չորս հին բարաբանները և կառուցվում մեկ նորը։ Կատարվում է 1-ին գործարանի վերանորոգումը, մեքենայական արհեստանոցի կահավորումը, գոլորշու միջոցով չորացման հարմարությունների ստեղծումը և այլն։ Բացի դրանից, որոշ միջոցառումներ են կատարվում մասնագիտական կադրերի հավաքման և բանվորների որակի բարձրացման ուղղությամբ։ Այդ ձեռնարկումների շնորհիվ 1923 թ. կաշվի գործարանները աշխատել են առանց ընդհատումների։ 1922—23 տնտեսական տարում կաշվի երկու գործարանները մշակել են ավելի քան 46 հազար խոշոր և մանր տեսակի կաշի[2]։ Այդ երկու գործարաններում միասին վերցրած 1923 թ. աշխատում էին 91 բանվոր և 19 ծառայող, ընդամենը 110 հոգի[3]։

Պոլիգրաֆ արդյունաբերությունը 1923 թ. հիմնականում կենտրոնացած էր Ժողովրդական Տնտեսության Գերագույն խորհրդի Տպագրական տրեստի մեջ, որն ուներ երկու տպարան, վիմագրատուն, ցինկոգրաֆիա և ձուլարան։ Բոլոր այդ ձեռնարկություննե-

---

[1] Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 143։

[2] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿԱ, 40/113, գ. 454, թ. 7։

[3] Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 140։

րում միասին վերցրած աշխատում էին 121 բանվոր և 14 ծառայող[1]։ Սովետական Ռուսաստանի կողմից շարունակ ցույց տրված օգնության շնորհիվ 1922 թ. համեմատությամբ, 1923 թ. զգալի չափով բարելավվել և ընդարձակվել էր տպագրական գործը, նրա տեխնիկական միջոցները, աճել էր տպագրվող գրքերի, ամսագրերի, թերթերի և այլ գործերի տիրաժը։ 1922 թ. հոկտեմբերին Տպագրական տրեստի գծով տպագրվել է ընդհանուր տիրաժով 249.891 օրինակ տարբեր տեսակի գրականություն՝ գրքեր, ամսագրեր, լրագրեր և այլն։ 1923 թ. սեպտեմբերին այդ տիրաժը հասել էր 544.730, այսինքն ավելի քան երկու անգամ ավելացել էր[2]։ Բացի դրանից, Պետհրատը ևս ուներ իր տպարանները, որոնցից մեկը գտնվում էր Երևանում, մյուսը Էջմիածնում։ Այդ տպարաններում նույնպես 1921—1922 ԲԲ. համեմատությամբ 1923 թ. վերջերին զգալի չափով բարելավվել էր գրությունը և ավելացել արտադրանքը։

Երևանի մեքենայական գործարանը (ավելի ճիշտ՝ արհեստանոցը), ուր 1923 թ. աշխատում էին 25 բանվոր և 4 ծառայող, զբաղվում էր կշռաքարերի, կշեռքների և հացահատիկ մաքրող մեքենաների արտադրությամբ. 1922—1923 տնտեսական տարում գործարանում արտադրվել էր հացահատիկ մաքրող 35 մեքենա։ 1922 թ. հոկտեմբերին գործարանի արտադրանքը դրամական արտահայտությամբ հավասար է եղել 830 ռուբլի ոսկով, իսկ 1923 թ. սեպտեմբերին այն արդեն հասել էր 2257 ռուբլու, այսինքն ավելի քան երկու և կես անգամ աճել էր[3]։

Երևանում կար նաև պահածոների մի փոքրիկ գործարան, տնայնագործական սարքավորումով, որը սկսել էր աշխատել 1922—1923 տնտեսական տարում և արտադրել 10.800 փութ տարբեր տեսակի պահածոներ[4]։

Ալեքսանդրոպոլում ևս կային արտադրական մի շարք փոքրիկ ձեռնարկություններ՝ մեխանիկական արհեստանոցը, տպարանը և այլն, որոնք իրենց տեսակարար կշռով աննշան տեղ չէին գրավում։ 1922—1923 տնտեսական տարվանից սկսած, այնտեղ ծավալուն աշխատանքներ էին տարվում եղբայրական օգնության կարգով դեռ-

---

[1] Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 ԲԲ. հաշվետվությունը», էջ 131։

[2] Նույն տեղում, էջ 133։

[3] Նույն տեղում, էջ 161։

[4] Նույն տեղում, էջ 54։

ևս 1922 թ. Սովետական Ռուսաստանից ստացված մեքենայական սարքավորման բաղայի վրա տեքստիլ գործարանի կառուցման ուղղությամբ։

Անտառային արդյունաբերության գծով Դիլիջանում և նրա շրջանում աշխատում էին չորս սղոցարաններ, որոնք 1922—1923 տնտեսական տարում պատրաստել էին 120 հազար քառ. վերշոկ սղոցանյութ[1]։

Երևանում, Ալեքսանդրոպոլում և ռեսպուբլիկայի մյուս շրջաններում տնայնագործական կոոպերացիայի ստեղծման գործը դեռևս գտնվում էր կազմակերպչական շրջանում և 1923 թ. տնայնագործությունը առանձին կշիռ չէր ներկայացնում ժողովրդական տնտեսության մեջ։

Հիմնական գծերով ահա այդպիսին էր Սովետական Հայաստանի արդյունաբերության վիճակը 1923 թվականին։ Նա դեռևս նոր-նոր էր վերականգնվում և թույլ էր։ Բայց վերականգնման շրջանի նախորդ տարիների համեմատությամբ նկատվում էր զգալի տեղաշարժ և աշխուժացում, որը հետագա տարիներին ավելի ու ավելի է աչքի ընկնում։

Երկաթուղային տրանսպորտի վերականգնման ուղղությամբ մինչև 1923 թ. վերանորոգվել էին գլխավորապես մեծ վնասվածքներ ստացած գծերը, կամուրջները, շենքերը, բանվորների ու ծառայողների բնակարանների մի մասը։ 1922 թ. վերանորոգված էին 173 վագոն և 22 շոգեքարշ։ 1923 թ. վերանորոգման աշխատանքները ավելի լայն ծավալ են ընդունում։ Այդ թվականին արդեն համարյա ամբողջ կարողությամբ աշխատում էր Ալեքսանդրոպոլի երկաթուղային դեպոն, ուր շարժական կազմից վերանորոգվել էին 274 վագոն և 41 շոգեքարշ, երկուսը միանգամից վերցրած, մոտ երկու անգամ ավելի, քան 1922 թ.[2]։ Շոգեքարշերի անցած միջին տարածությունն այդ թվականին կազմում էր 663 հազար կիլոմետր[3]։ Ծայրահեղ քայքայված երկաթուղագծերի վերանորոգման ընթացքի մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը. փտած շպալների փոխարեն նորերը դրված էին՝ 1922 թ. 30 հազար, իսկ 1923 թ. 100 հազար հատ[4]։ Ռեսպուբլիկայի երկաթուղագծերով փոխադրվել

---

[1] Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 152 և 154։

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 369։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 367։

են՝ 1922 թ. 166,3 հազար ուղևոր, 1923 թ.՝ 268 հազար ուղևոր[1]։ Եվ այդ բոլորը կատարվել է այն պայմաններում, երբ երկաթուղու աշխատակիցների քանակը ոչ միայն չէր ավելացել, այլ նույնիսկ որոշ չափով պակասել էր. այն 1922 թ. եղել է 2868 հոգի, իսկ 1923 թ.՝ 2792 հոգի[2]։ Այդ փաստը ցույց է տալիս, որ հեռագրի երկաթուղիներում, 1922 թ. համեմատությամբ, 1923 թ. որոշ չափով բարձրացել էր աշխատանքի արտադրողականությունը։

Տրանսպորտի մյուս տեսակները՝ Սևանա լճի նավագնացությունը և ավտո-տրանսպորտը, 1923 թ. դեռևս առանձին կշիռ չունեին ինչպես ուղևորների, նույնպես և բեռների փոխադրության գործում։ Այդ ժամանակ Սևանի նավագնացությունն ուներ չորս փոքրիկ նավակներ, որոնցով 1923 թ. ընթացքում փոխադրվել էր ընդամենը 622 ուղևոր և մոտ 700 փութ բեռ[3]։ Ավտոտրանսպորտի գծով հանրապետությունում 1922 թ. եղել է երկու բեռնատար ավտոմեքենա և մեկ ավտոբուս՝ ծայրահեղ մաշված վիճակում։ 1923 թ. ավտոտրանսպորտի գծով աշխատող մեքենաների թիվը հասնում է 6-ի։ 1922 թ. հոկտեմբերին հանրապետությունում ավտո-տրանսպորտով փոխադրվել է 21 փութ բեռ և 84 ուղևոր, իսկ 1923 թ. մայիսին՝ 7566 փութ բեռ և 235 ուղևոր[4]։ Ինչպես ցույց են տալիս բերված թվերը, դնալով որոշ չափով աճում էր ավտոտրանսպորտը, որը մեր երկրի պայմաններում, ուր երկաթուղագծերը քիչ են, զարգանալու մեծ հեռանկարներ ուներ։

Պետական–կոոպերատիվ առևտրի գծով ևս 1923 թ. հանրապետությունում ձեռք էին բերված որոշ հաջողություններ, որոնք հետագա տարիներին ավելի ծավալվեցին ու ամրապնդվեցին։

Այն ժամանակ Հայաստանում ամբողջ պետական մանրածախ առևտուրը միավորված էր 1922 թ. սեպտեմբերին կազմակերպված Հայպետառևի (հետագայում վերանվանվեց Հայառ) սիստեմում, որի դրամապտույտը սկզբում կազմում էր մոտ կես միլիոն ռուբլի ոսկով։ Հայպետառևը իր բաժանմունքներն ուներ հանրապետության տարբեր գավառներում, նույնպես և Հարևան սովետական հանրապետություններում։

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 370։

2 Նույն տեղում, էջ 371։

3 Տե՛ս «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922—1925 թթ. հաշվետվությունը», էջ 163։

4 Նույն տեղում, էջ 166։

1922—1923 տնտեսական տարում Հայաստանի սպառողական կոոպերացիան, որը միավորված էր Հայկոոպի մեջ, զգալի կերպով աշխուժացել էր։ 1923 թ. Հայկոոպի ելքն ու մուտքը կազմում էր ավելի քան 100 հազար ռուբլի։ Նրա մեջ միավորված կոոպերատիվ ընկերությունների թիվը այդ նույն թվականին հասնում էր 14-ի[1]։

1923 թ. դեկտեմբերի 4—8-ը Երևանում գումարվում է Սովետական Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների Սովետների 3-րդ համագումարը։ Քննության առնելով տնտեսական շինարարության վերաբերյալ հարցեր՝ կառավարության հաշվետվությունը, գյուղատնտեսության վիճակը, ռեսպուբլիկայի ֆինանսական դրությունը, կոոպերացիայի հարցը և այլն, և ամփոփելով ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքները, համագումարը նշել է, որ նախորդ տարիների համեմատությամբ, 1923 թ. ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում զգալի առաջխաղացում է տեղի ունեցել։

1923 թ. վերջերին խիստ վատացել էր Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության կազմակերպիչ Վ. Ի. Լենինի առողջությունը։ Մեր Սովետական մեծ երկրի բոլոր ծայրերից, ինչպես և աշխարհի բոլոր մասերից, բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիան անընդհատ նամակներ ու հեռագրեր էին ուղղում Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին, ցանկանալով նրան առողջություն և հայտնելով իրենց նվիրվածությունը մեծ առաջնորդին, նրա ստեղծած փառապանծ պարտիային ու Սովետական պետությանը։

Հայաստանի Սովետների 3-րդ համագումարը նույնպես, արտահայտելով ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորների միասնական կամքը, Վ. Ի. Լենինին ուղարկում է հետևյալ հեռագիրը.

«Ընկեր Լենինին.

Հայաստանի Խորհուրդների երրորդ համագումարը խանդավառ ողջույն է ուղարկում համաշխարհային հեղափոխության մեծ ղեկավարին։

Հարևան ժողովուրդների հետ խաղաղ հարաբերություններ հաստատելու մասին Հայաստանի Հեղկոմին տված Ձեր առաջին հրահանգին հավատարիմ, բանվորա-գյուղացիական Հայաստանն ամրապնդել է սերտ եղբայրական կապեր հարևանների հետ և խա-

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 259։

ղալ պայմաններում բուժում է իր վերքերը։ Երկրի տնտեսությունը վերականգնելու գործի համար բանվորների և գյուղացիների դործադրած ճիգերը արդեն տվել են բավարար արդյունքներ։ Ներկա երրորդ համագումարը կնշի Խորհրդային Հայաստանի տնտեսության և կուլտուրայի բարձրացման հետագա ուղիները։

Սպասում ենք, որ Դուք շատ շուտով վերադառնաք Խորհրդային նավի ղեկավարմանը»[1]։

Համագումարի կողմից ջերմագին ողջույն է ուղարկվում նաև Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահ Մ. Ի. Կալինինին և հանձինս նրա՝ սովետական բոլոր ռեսպուբլիկաների բանվորներին ու գյուղացիներին։

Մ. Ի. Կալինինին ուղարկված հեռագրում ասված է.

«Համախորհրդային Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Նախագահին Հայաստանի Խորհուրդների 3-րդ համագումարն ուղարկում է իր ջերմ ողջույնը։ Համագումարը հայտնում է Հայաստանի բանվորների և գյուղացիների անսասան որոշումը՝ հավատարիմ մնալու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը։ Հայաստանի հետագա կուլտուր-տնտեսական զարգացումն ու ապահովությունը համագումարն ընդունում է հնարավոր միայն Միության Կարմիր դրոշի տակ։ Համագումարը հանձինս Ձեզ ողջունում է եղբայրական Խորհրդային Հանրապետությունների բանվորներին ու գյուղացիներին»[2]։

Նվ իրոք, հավատարիմ ինտերնացիոնալիզմի դրոշին, Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները սովետական ժողովուրդների բարեկամության և եղբայրական սերտ համագործակցության պայմաններում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հաստատ կերպով առաջ էին տանում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման դժվարին աշխատանքները։

* * *

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, նույնպես և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանում ժո-

---

[1] *«Խորհրդային Հայաստան», № 272, 1923, դեկտեմբերի 9։*

[2] *Տե՛ս «ՀՍԽՀ Խորհուրդների երրորդ համագումարի սղագրական հաշվետվություն», Երևան, 1926, էջ 37։*

դովրդական տնտեսության վերականգնումը ընթանում էր դասակարգային սուր պայքարի իրադրության մեջ։

Սոցիալիստական տնտեսության հաջողությունները ձեռք էին բերվում սովետական կարգերի արտաքին և ներքին թշնամիների դեմ մղվող պայքարում։ Դասակարգային պայքարի ընթացքում Սովետական իշխանության թշնամիները կատաղի կերպով դիմադրում էին Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության քաղաքականությանը, նպատակ ունենալով մեր երկրում ձախողել սոցիալիզմի կառուցումը և վերականգնել շահագործողների տիրապետությունը։ Ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, գերմանական և մյուս երկրների իմպերիալիստների թելադրանքով և անմիջական օգնությամբ սոցիալիզմի ներքին թշնամիները մեր արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում կազմակերպում էին սաբոտաժ, դիվերսիա, և այլ կարգի վնասարարական մեքենայություններ։

Չբավարարվելով պայքարի այդ ձևերով, կուլակային և մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերը բանդիտական ելույթներ էին կազմակերպում սովետական կարգերի դեմ։ Սովետական Հայաստանում այդպիսի ելույթ էր դաշնակների փետրվարյան ավանտյուրան 1921 թվականին, ինչպես նաև դաշնակցական-կուլակային բանդիտական ելույթները 1922—1923 թվականներին Դարալագյազում, Զանգեզուրում, Դիլիջանի դավառում։ Այդ ելույթները ջախջախվեցին Հայաստանի բանվորների և գյուղացիների հերոսական պայքարով։

Սակայն ռեսպուբլիկայի որոշ շրջաններում, ուր այդ պայքարը տեղական աշխատողների կամ կազմակերպությունների կողմից թերագնահատվում էր և անհրաժեշտ չափով չէր գլխավորվում, դասակարգային թշնամին վարպետորեն օգտվում էր դրանից։ Թաքնվելով սովետական կարգերի բարեկամի կամ լոյալության քողի տակ, նրա գործակալներին որոշ դեպքերում հաջողվում էր սողոսկել Սովետները, կոոպերացիայի ցանցը կամ պետական որոշ օրգաններ և կատարել իրենց քայքայիչ, հակասովետական գործը։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական երկրում նոր տնտեսական քաղաքականության կիրառումը սոցիալիզմի արտաքին և ներքին թշնամիների որոշ մասի կողմից այն ժամանակ գնահատվեց որպես մի քաղաքականություն, ըստ որի կոմունիստները էվոլյուցիա և ներքին վերաբերում են կատարում դեպի կապիտալիզմը, նահանջելով ռևոլյուցիայի նվաճումներից։

Այդ ուղղությունը կոչվում էր սմենովեխականություն, որի իդեալդն էր ռուսական սպիտակգվարդիական Ուտոպյալովը[1]:

Սմենովեխականները նոր տնտեսական քաղաքականությունը գնահատեցին որպես Կոմունիստական պարտիայի կողմից հրաժարում սոցիալիստական շինարարությունից, որպես էվոլյուցիա դեպի բուրժուական կարգերը: Ելնելով դրանից, սմենովեխականները քարոզում էին Սովետական իշխանության հետ համագործակցելու, նրան օգնելու դաղափարը, այդ «օգնությունը» համարելով ՍՍՌՄ-ում կապիտալիզմի վերականգնմանը նպաստող միջոց: Կոմունիստական պարտիան վճռականորեն մերկացրեց սովետական ժողովրդի այդ «բարեկամների» դեմքը, ցույց տալով նրանց հակաբնական բուրժուական բնույթը և վտանգավորությունը: 1922 թ. մարտին, ՌԿԿ 11-րդ համագումարում Վ. Ի. Լենինը ասաց, որ սմենովեխականները Սովետական իշխանության բացահայտ թշնամիներն են, որոնց նպատակն է Սովետական երկրում վերականգնել կապիտալիստական կարգերը:

Սմենովեխականությունն իր արտահայտությունը գտավ նաև օտարերկրյա կապիտալիստներին ծառայաղրված, հայ ժողովրդի և սովետական կարգերի կատաղի թշնամի դաշնակների և մյուս կոնտրրևոլյուցիոն ուժերի մոտ, որոնք նույնպես, ինչպես ռուսական սպիտակգվարդիականները, հույս էին դրել Սովետական իշխանության վերացման և Հայաստանում կապիտալիստական կարգերի վերականգնման վրա: Հայկական սմենովեխականության խոտացած արտահայտությունը հանդիսացավ ոչ անհայտ դաշնակցական Հ. Քաջազնունու «Դաշնակցությունն այլևս անելիք չունի» գիրքը, որի առաջադրած դաղափարները իր ժամանակին մերկացվեցին և ջախջախվեցին Հայաստանի Կոմունիստական պարտիայի կողմից:

Սոցիալիստական տնտեսության արագընթաց զարգացումը ամբողջ Սովետական Միության մեջ և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանում, խորտակեցին սմենովեխականների և մյուս բոլոր թշնամիների հույսերը մեր երկրում կապիտալիզմի վերականգնման մասին, Սովետական պետության վերացման մասին:

Սովետական կարգերի թշնամիները քաղաքում ատանալով բանվոր դասակարգի վճռական հակահարվածը, իրենց ուշադրությունը

[1] Նրանք ունեին իրենց օրգան «Смена вех» ամսագիրը, որի էջերում իրենց դաղափարների պրոպագանդ էին անում: Այդտեղից էլ այդ հոսանքի անունը՝ սմենովեխականություն:

կենտրոնացրել էին գյուղի վրա՝ հույս ունենալով օգտագործել գյուղացիության մեջ եղած դժգոհ ու տատանվող տարրերին և նրանց բարձրացնել սովետական կարգերի դեմ։ Կուլակները, նէպմանները, նրանց իդեոլոգներ տրոցկիստները-բուխարինականները և մյուս թշնամիները հույս ունեին, որ գյուղում կատարվող քայքայիչ աշխատանքի միջոցով նրանց կհաջողվի վիժեցնել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, խախտեն պրոլետարիատի դիկտատուրայի հիմքերը։

Գյուղում աշխատանքները բարելավելու և դասակարգային թշնամուն վճռական հակահարված տալու նպատակով Կոմունիստական պարտիան անհրաժեշտ էր համարում ուժեղացնել գյուղական պարտիական կազմակերպությունների աշխատանքը, սիստեմատիկ ու հետևողական աշխատանք ծավալել գյուղում անպարտիական ակտիվի բազմաքանակ կադրեր ստեղծելու, նրանց կոմունիստական ոգով դաստիարակելու և պարտիայի ու Սովետական իշխանության շուրջը համախմբելու համար։ Անհրաժեշտ էր, օգնության կարգով, քաղաքից գյուղ ուղարկել փորձված և ստուգված կադրեր, բարելավել և աշխուժացնել Սովետների աշխատանքը, բարձրացնել այդ աշխատանքի որակը, անողոք կերպով քննադատել և բացահայտել գյուղում կատարվող աշխատանքի թերությունները, արագորեն լիկվիդացնելով դրանք։

Կոմունիստական պարտիայի այդ պահանջների հետևողական կենսագործման շնորհիվ գնալով գյուղում ավելի ու ավելի ամրապնդվում էին աշխատանքները։

Պարտիական կազմակերպություններն իրենց շուրջը համախմբելով չքավոր ու միջակ գյուղացիությանը, մերկացնում ու վճռական հակահարված էին հասցնում դասակարգային թշնամուն ու նրա ամեն տեսակի գործակալներին։

3. Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՀԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ՍԵՐՏ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

1922 թ. աշնանը Կոմունիստական պարտիային, սովետական ժողովրդին ու ամբողջ առաջավոր մարդկությանը մեծ դժբախտություն պատահեց։ Կոմունիստական փառապանծ պարտիայի ու աշխարհում առաջին Սոցիալիստական պետության ստեղծող ու հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը ծանր հիվանդացավ։

Ամբողջ պարտիան, սովետական ժողովուրդը և աշխարհի բոլոր աշխատավորները Վ. Ի. Լենինի հիվանդությունը ապրում էին որպես իրենց մեծ ու ծանր վիշտը:

Հիվանդության պատճառով Վ. Ի. Լենինը չէր կարողանում հանդես գալ ժողովներում և աչ ձեռքի կաթվածի հետևանքով զրկված էր գրելու հնարավորությունից: 1923 թ. հունվար-փետրվար ամիսներին նա թելադրում է մի շարք կարևորագույն հոդվածներ: Հունվարին թելադրում է «Էջեր օրագրից», «Կոոպերացիայի մասին», «Ինչպես վերակազմենք Բանգյուղտեսչությունը (առաջարկություն պարտիայի 12-րդ համագումարին)», «Մեր revolյուցիայի մասին (Ն. Սուխանովի հուշատետրի առթիվ)» հոդվածները, փետրվարին՝ «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածը:

Իր այդ վերջին հոդվածներում Վ. Ի. Լենինը հանրագումարի է բերում պարտիայի և Սովետական պետության աշխատանքի արդյունքները Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ revolյուցիայից հետո անցած ժամանակաշրջանում, նորից շոշափելով և նոր, հարուստ փաստերի հիման վրա պարզաբանելով ու զարգացնելով revolյուցիայի բոլոր հիմնական հարցերը՝ պրոլետարիատի դիկտատուրայի, պետական ապարատի, տնտեսական քաղաքականության, դյուղացիության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, երկրի պաշտպանության, արտաքին քաղաքականության, պարտիայի միասնության և մյուս հարցերը:

«Կոոպերացիայի մասին» հոդվածում Վ. Ի. Լենինը զարգացրեց, ավելի բարձր աստիճանի հասցրեց մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին ուսմունքը, մարքսիզմի պատմության մեջ առաջինը թեորիապես մշակեց և հանճարեղ կերպով հիմնավորեց պրոլետարիատի կողմից իշխանությունը նվաճելուց հետո պրոլետարական revolյուցիայի ամենադժվարին հարցերից մեկը՝ մանր ու միջին դյուղացիական տնտեսությունները խոշոր կոլեկտիվ արտադրության՝ սոցիալիզմի ռելսերի վրա փոխադրելու հարցը:

1924 թ. հունվարի 21-ին Վ. Ի. Լենինը վախճանվեց: Այդ մեծագույն կորուստ էր նրա ստեղծած Կոմունիստական պարտիայի, սովետական ժողովրդի և ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության համար:

Հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը Մոսկվայում հրավիրվում է Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումը, որը Վ. Ի. Լենինի մահվան առթիվ հատուկ դիմում է ուղղում պար-

միային ու բոլոր աշխատավորներին։ Հայտնելով ծանր կորուստի մեծ առաջնորդի մահվան մասին, Կենտկոմը կոչ է անում բոլոր աշխատավորներին էլ ավելի կուռ շարքերով համախմբվել Վ. Ի. Լենինի ստեղծած մարտական պարտիայի շուրջը, առանց երերումների և հաղթական կերպով առաջ ընթանալ կոմունիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում։ «Մեր ուսուցչի մահը — այդ ծանր հարվածը,— ասված է դիմումի մեջ,— էլ ավելի ուժգին կհամախմբի մեր շարքերը։ Մարտական համառության շղթայով մենք արշավի ենք գնում կապիտալի դեմ, և աշխարհում ոչ մի ուժ չի խանգարի մեր վերջնական հաղթանակին։

... Պարտիան երկաթի քայլերով առաջ կգնա։ Որովհետև նա Լենինյան պարտիա է։ Որովհետև նա դաստիարակվել, կոփվել է մարտերում։ Որովհետև նա իր ձեռքին ունի այն կտակը, որ նրան թողել է ընկեր Լենինը»[1]։

Վ. Ի. Լենինի մահվան կապակցությամբ ամբողջ երկրում տեղի են ունենում աշխատավորների սգո միտինգներ և ժողովներ։

Սովետական Հայաստանի բոլոր քաղաքներում, գավառներում, շրջաններում, գործարաններում, հիմնարկ ձեռնարկներում և գյուղերում նույնպես գումարվում են բազմահազար աշխատավորների սգո միտինգներ ու ժողովներ, ուր արտահայտելով իրենց ծանր վիշտը սիրելի առաջնորդի մահվան առթիվ, ռեսպուբլիկայի բանվորներն ու գյուղացիները միաժամանակ ցույց են տալիս իրենց հաստատ կամքն ու վճռականությունը՝ մեծ Լենինի ավանդներին մինչև վերջ հավատարիմ մնալու և նրանք կենսագործելու համար։

Հունվարի 23-ին Երևանում գումարված աշխատավորների համաքաղաքային սգո միտինգում ընդունված բանաձևում ասված է.

«Երևանի բանվորները, կարմիրբանակայինները և աշխատավորության լայն մասսաները խորը ցնցված են մեր ուսուցիչ և ղեկավար Վ. Ի. Լենինի մահվան լուրով։

... Հաղթանակի միասնական կամքով և շարքերի խտությամբ Խորհրդային Միության ու ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները կամրացնեն Խորհրդային և պրոֆինտերնական բոլոր կազմակերպությունների հիմքերը, որ կոչված են իրագործելու Թանկագին ուսուցչի մտքերն ու ավանդները»[2]։

Որպես ռեսպուբլիկայի ամբողջ աշխատավորության կամքի

---

[1] ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, I մաս, Երևան, 1954, էջ 1029։

[2] «Խորհրդային Հայաստան», № 20, 1924, հունվարի 25։

արտահայտություն, վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու նպատակով Հայկական ՍՍՌ կենտգործկոմը 1924 թ. հունվարին որոշում է Սովետական Հայաստանի մայրաքաղաքում կանգնեցնել վ. Ի. Լենինի մոնումենտ-արձանը, որի շուրջը հետագայում ձևավորվելու էր վ. Ի. Լենինի անվան հրապարակը։ Կենտգործկոմի և ժողկոմխորհի հունվարի 27-ի որոշմամբ Ալեքսանդրոպոլ քաղաքը վերանվանվեց Լենինական։ Ռևապուբլիկայի աշխատավորներն այդ որոշումներն ընդունում են մեծ խանդավառությամբ։

Հունվարի 26-ին Մոսկվայում բացվում է Սովետների Համամիութենական երկրորդ համագումարի ազգ նիստը, ուր Ի. Վ. Ստալինը հանդես է գալիս «Լենինի մահվան առթիվ» ճառով։ Մեծ Լենինի արժանավոր աշակերտը և մարտական վինակիցը սիրելի առաջնորդի շիրիմի առաջ տալիս է պատմական երդումը, Կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի երդումը Լենինի հիշատակը վառ պահելու և նրա պատգամները կենսագործելու համար։

Կոմունիստական պարտիան և սովետական ժողովուրդը, վրատահ իրենց ուժերին, պարտիայի կենտկոմի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան այդ պատմական երդման կենսագործմանը, լենինյան ավանդների իրականացմանը։ Վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու և նրա ավանդները կենսագործելու համար Սովետական Միության բանվոր դասակարգը, չքավոր ու միջակ գյուղացությունը և աշխատավոր ինտելիգենցիան էլ ավելի ծավալեցին սոցիալիստական աշխատանքը։

Օգտվելով վ. Ի. Լենինի հիվանդությունից և ապա նրա մահվանից, միջազգային իմպերիալիզմի գործակալները՝ տրոցկիստները, բուխարինականները և մյուս կոնտրռևոլյուցիոն տականքները ավելի ակտիվացան։ Նրանք նոր հարձակում սկսեցին պարտիայի ղեկավարության և նրա պլխավոր գծի դեմ, նպատակ ունենալով տապալել պարտիային ու Սովետական պետությունը։ Պարտիայի դեմ ուղղված այդ պայքարում միավորվել էին բոլոր օպոզիցիոն խմբավորումները՝ տրոցկիստները, դեցիստները, «ձախ կոմունիստները» և «բանվորական օպոզիցիայի» մնացորդները, որոնց պլխավորում էր հուդա Տրոցկին։ Հակառակ պարտիայի 10-րդ համագումարում ընդունված լենինյան բանաձևին պարտիայի միասնության, նրա մեջ ֆրակցիաների արգելման մասին, այդ թշնամիները պահանջում էին ֆրակցիաների ազատություն պարտիայի մեջ։ Կատաղարար հարձակվելով պարտիական ապարատի

վրա, նրանք ջանքեր չէին խնայում թուլացնելու և քայքայելու այդ ապարատը, ամեն կերպ փորձելով պարտիայի անդամներին հակադրել պարտիական ապարատին։ Ստոր կերպով ղրպարտելով պարտիայի լենինյան հին դվարդիային վերաբերման մեջ, տրոցկիստները բոլոր ջանքերով աշխատում էին պարտիայի երիտասարդ անդամներին հակադրելու հին գվարդիային, ամբողջ երիտասարդությանը հակադրելու պարտիային։

1923 թ. վերջերին, երբ խիստ վատացել էր մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի առողջության վիճակը և պարտիան ու բոլոր աշխատավորները ապրում էին այդ ծանր վիշտը, տրոցկիստները պարտիայի վրին համապարտիական դիսկուսիա փաթաթեցին։ Չնայած պարտիան զբաղված էր տնտեսական ավելի կարևոր հարցերով, ընդունեց այդ մարտահրավերը և դիսկուսիա բացեց։

Ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը, այդ դիսկուսիայի առանցքը կազմում էին հետևյալ երկու հարցը. 1) պարտիան միասնական կամքով ու միասնական ինքնագործունյա օրգանիզմ պետք է լինի, թե տարբեր ֆրակցիաների ու խմբավորումների միավորում. 2) արդյոք հիմնականում արդարացրել է իրեն նոր տնտեսական քաղաքականությունը, թե այն վերանայման կարիք ունի։

Ինչպես նախորդ, նույնպես և այս դիսկուսիայի ընթացքում տրոցկիստները և պարտիայի մյուս բոլոր թշնամիները մերկացվեցին ու ջախջախիչ հակահարված ստացան պարտիայի կողմից, պայքար, որը գլխավորում և առաջ էր տանում պարտիայի Կենտկոմը։ Ընդդեմ այդ ստոր թշնամիների, ամբողջ երկրում պարտիան հաստատ կերպով պաշտպանեց և իրականացրեց իր լենինյան դիծը։

1924 թ. հունվարի 16—18-ը տեղի է ունենում Ռկ(բ)Պ 13-րդ կոնֆերենցիան, որը լսում է Ի. Վ. Ստալինի զեկուցումը «Պարտիական շինարարության հերթական խնդիրների մասին» և ամփոփում դիսկուսիայի արդյունքները։ «Կոնֆերենցիան դատապարտեց տրոցկիստական օպոզիցիային, հայտարարելով, որ ի դեմս այդ օպոզիցիայի պարտիան գործ ունի մարքսիզմից շեղված մանր-բուրժուական բեֆման հետ։ Կոնֆերենցիայի որոշումները հետագայում հավանություն գտան պարտիական XIII համագումարի և Կոմինտերնի V կոնգրեսի կողմից»[1]։

---

[1] Համկ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 359—360, ընդգծումը բնագրինն է։

Խորը գիտակցելով մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի մահը՝ այդ ծանր կորուստը և միահամուռ կերպով արձագանքելով պարտիայի Լենինյան Կենտկոմի կոչին, Սովետական Միության բանվոր դասակարգը և ամբողջ աշխատավորությունը էլ ավելի կուռ շարքերով համախմբվեցին Կոմունիստական պարտիայի շուրջը: Պարտիայի Կենտկոմի հասցեով ստացվում էին անպարտիական բանվորների տասնյակ հազարավոր դիմումներ, որոնցով նրանք խնդրում էին իրենց ընդունել մեծ Լենինի կազմակերպած Կոմունիստական պարտիայի շարքերը: Կենտկոմն ընդառաջեց առաջավոր բանվորների այդ շարժմանը և հայտարարեց լենինյան կոչ դեպի պարտիայի շարքերը:

Լենինյան կոչի օրերին ամբողջ երկրում Կոմունիստական պարտիայի շարքերն են անցնում 240 հազար առաջավոր բանվորներ:

Անդրկովկասում ևս հազարավոր առաջավոր բանվորներ խտացնում են Կոմունիստական պարտիայի շարքերը, միաժամանակ բարելավելով նրա սոցիալական կազմը: Եթե մինչև լենինյան կոչը Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների շարքերում կային 26.355 անդամ-թեկնածուներ, ապա լենինյան կոչից հետո՝ 1924 թ. մայիսին այդ թիվը հասել էր 38,277-ի[1]: Միայն Ադրբեջանում լենինյան կոչի օրերին պարտիայի շարքերն էին ընդունվել 5000 առաջավոր բանվորներ[2]: Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների 3-րդ համագումարը (1924 թ. մայիս) իր ընդունած բանաձևում խոսելով երկրամասում լենինյան կոչի արդյունքների մասին, նշել է, որ լենինյան կոչը բարելավեց պարտիայի սոցիալական կազմը, Անդրկովկասում բանվորների բանակը պարտիայի մեջ միջին հաշվով հասցնելով 30,5 տոկոսից մինչև 43 տոկոսի[3]:

Լենինյան կոչի օրերին և դրանից հետո անցած կարճ ժամանակամիջոցում զգալի չափով աճել էր նաև Հայաստանի Կոմունիստական պարտիան: 1924 թ. հունվարին Հայաստանի Կոմունիստական պարտիայի շարքերում եղել են 4032 անդամ-թեկնածուներ, իսկ 1925 թ. հուլիսին այդ թիվը աճելով, հասել էր 6130-ի[4],

---

1 *Տե՛ս «Заря Востока» լրագրի 1924 թ. մայիսի 13-ի առաջնորդող հոդվածը Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ:*

2 *Նույն տեղում:*

3 *Նույն տեղում, 21 մայիսի, 1924:*

4 *«Կոմունիստ» ամսագիր, օրգան ՀԿ(բ)Պ Կենտկոմի և Երևանի Գավկոմի, 1925, № 3—4, էջ 11:*

680—18

այսինքն մեկ և կես տարում աճել էր ավելի քան 50 տոկոսով։ Հայաստանի Կոմունիստական պարտիայի մեջ նրա քանակը առ 1-ը հունվարի 1924 թ. կազմում էր 20,6 տոկոս, ապա մեկ տարի հետո՝ 1925 թ. հունվարին այն հասել էր 23,2-ի[1]։ 1925 թ. հունվարից մինչև հուլիս ժամանակամիջոցում Հայաստանի Կոմունիստական պարտիայի սկզբնական կազմակերպությունների (բջիջների) քանակը գործարաններում, արտադրական այլ ձեռնարկություններում և տրանսպորտում ավելացել էր 36-ով կամ 76 տոկոսով։ Նույն ժամանակամիջոցում դյուղական բջիջների քանակը աճելով, 279-ից հասել է 312-ի, այսինքն աճել էր ավելի քան 10 տոկոսով[2]։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի ինչպես անդամ-թեկնածուների, նույնպես նրա սկզբնական կազմակերպությունների այդպիսի աճումը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ցույց է տալիս մեկ կողմից լենինյան կոչի խոշոր արդյունքները ռեսպուբլիկայում, մյուս կողմից Կոմունիստական պարտիայի հեղինակության բարձրացումը և ազդեցության ուժեղացումը, նրա և աշխատավորական մասսաների միջև եղած կապի ավելի ու ավելի ամրապնդումը։

Հայաստանի Կոմունիստական պարտիան առաջնորդվելով լենինյան պատգամներով, Անդրկովկասյան երկրային Կոմիտեի դեկավարությամբ և մշտական օգնությամբ, շարունակում էր աշխատանքը պարտիայի անդամ-թեկնածուների իդեական-քաղաքական պատրաստականությունը բարձրացնելու, նրա աշխատանքների մեթոդները բարելավելու և սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում պարտիական կազմակերպությունների դեկավարությունն ապահովելու համար։

1924—1925 թթ. խոշոր չափով աճում են նաև Հայաստանի Կոմերիտմիության շարքերը։ Եթե 1924 թ. սկզբներին Հայաստանի Կոմերիտմիության շարքերում եղել են 7033 հոգի, ապա 1925 թ. վերջերին արդեն կար 17870 հոգի[3], այսինքն աճել էր մոտ երկու և կես անգամ։ Հայաստանի Կոմերիտմիության այդպիսի մեծ բանակը, Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ ակտիվ կեր-

---

[1] «Կոմունիստ» ամսագիր, օրգան ՀԿ(բ)Պ Կենտկոմի և Երևանի Գավկոմի, 1925, էջ 12։

[2] Նույն տեղում, էջ 14—15։

[3] ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքս—Էնգելս—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, 1925, ֆ. 1, գ. 1, թ. 288։

պով լծվել էր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։

Սովետական Միության, այդ թվում նաև Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը և բոլոր աշխատավորները ավելի ու ավելի ակտիվ կերպով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, նրա կենտկոմի իմաստուն ղեկավարությամբ շարունակում էին անողոք ու վճռական պայքարը սոցիալիզմի ներքին և արտաքին թշնամիների դեմ, որոնց շահերի պաշտպանը և տրամադրությունների արտահայտիչը հանդիսացավ տրոցկիզմը։

Տրոցկիզմի արմատական մերկացման, նրա իդեական ջախջախման գործում, լենինիզմի պաշտպանության և հետագա զարգացման գործում պատմական խոշորագույն նշանակություն ունեցավ Ի. Վ. Ստալինի «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատությունը։ Այդ աշխատությունը լենինիզմի հմուտ շարադրանքն է, նրա բնորոշման խորը ու բազմակողմանի հիմնավորումը։

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1923—1924 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1923—1924 թթ. ներպարտիական սուր պայքարի ժամանակաշրջանում Հայաստանի Կոմունիստական պարտիան մերկացնելով իր շարքերում խցկված տրոցկիստական, բուխարինական, բուրժուա-նացիոնալիստական և թշնամական այլ տարրերին, վճռական պայքար է ծավալում վերջիններիս դեմ, ցույց տալով իր նվիրվածությունն ու հավատարմությունը մեծ Լենինի գործին, նրա մարտական պարտիայի պլխավոր պծին։ Ինչպես ամբողջ Անդրկովկասում, նույնպես և նրա բազկացուցիչ մասը Հանդիսացող Հայաստանում այդ պայքարը անմիջականորեն պլխավորում էր Անդրկովկասյան Երկրային Կոմիտեն, կուսված լենինյաններ Մ. Օրջոնիկիձեի, Ա. Մյասնիկյանի ղեկավարությամբ։

Մեծ Լենինի ամանդները կենսագործելու բուռն ձգտումով, Սովետական Հայաստանի աշխատավորները կուռ շարքերով համախմբվելով Կոմունիստական պարտիայի շուրջը, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ավելի լայն չափով ծավալելով ստեղծագործական աշխատանքները, հաստատ կերպով առաջ էին տանում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության

վերականգնման գործը, որը նոր թափ ու մեծ ծավալ էր ընդունել մինչև այդ ձեռք բերված հաջողությունների հիման վրա։

Ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ռեսպուբլիկայում ձեռք բերված հաջողությունները 1924 թ. հիմնականում հանգում էին հետևյալին։

Գյուղատնտեսությունը. 1924 թվականին նույնպես շարունակվում էր ցանքատարածությունների աճումը, նախորդ տարվա համեմատությամբ աճելով մոտ 10 տոկոսով։ Ըստ որում ամենից մեծ աճ էին տվել բամբակի ցանքատարածությունները, 1923 թ. 4000 դեսյատինից 1924 թ. հասնելով 15 հազարի[1]։

1924 թ. ռեսպուբլիկայում գյուղատնտեսության բերքատվությունը մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին, իսկ բամբակը, խաղողը, կարտոֆիլը դեռևս զգալի չափով ետ էին մնում նախապատերազմյան մակարդակից։ Հացահատիկի բերքատվության այդպիսի աճին և նախապատերազմյան մակարդակին մոտենալուն զգալի չափով նպաստել էր այն հանգամանքը, որ 1923—1924 թթ. ռեսպուբլիկայում խոշոր աշխատանքներ էին կատարված ոռոգման ուղղությամբ։

1924 թ. Սովետական Հայաստանում զգալի հաջողություններ էին ձեռք բերված նաև անասնապահության վերականգնման ուղղությամբ։ Անելով, անասունների ընդհանուր գլխաքանակը այդ թվականին արդեն հասել էր 1.348.367—գլխի, 1919 թ. 747643—գլխի և 1923 թ. 1.139.820—գլխի դիմաց[2]։

Կոմունիստական պարտիայի 13-րդ համագումարը (1924 թ. մայիս) ելնելով Վ. Ի. Լենինի ցուցումներից, առաջադրեց գյուղը կոոպերացնելու լոզունգը։ «Որպես գյուղում կատարելիք աշխատանքի գլխավոր խնդիր՝ համագումարն առաջադրեց գյուղացիական մասսաներին ամեն կերպ կոոպերացնելու լոզունգը»[3]։ Միաժամանակ համագումարը որոշում ընդունեց աշխատավոր գյուղացիությանը տրվող էժան վարկի միջոցներն ընդլայնելու և այդ ապարելից վաշխառուներին դուրս մղելու մասին։

---

1 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1921—1925 և 1925—1926 թթ.», Երևան, 1927, էջ 7։

2 «Սովետական Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, 1926, էջ 113։

3 ՀամԿ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 363։

Առաջնորդվելով պարտիայի որոշումներով, 1924 թ. Սովետական Հայաստանում առաջին լուրջ ձեռնարկումներն են սկսվում գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման ուղղությամբ։ 1924 թ. օգոստոսի 30-ին հրապարակվում է Հայկական ՍՍՌ կենտգործկոմի և ժողկոմսովետի դեկրետը գյուղատնտեսական կոոպերացիայի մասին։ Դեկրետի առաջին կետում ասված է.

«ՀՍԽՀ սահմաններում գյուղատնտեսությամբ կամ նրա հետ կապված արհեստներով զբաղվող բոլոր քաղաքացիներին, որոնք համաձայն ՀՍԽ Հանրապետության Սահմանադրության, վայելում են խորհուրդներում ընտրելու և ընտրվելու իրավունք, թույլատրվում է կազմել կոոպերատիվ միություններ»[1]։ *Այնուհետև դեկրետում սահմանված է այդ միությունների խնդիրները՝ կոոպերատիվ հիմունքներով կատարել գյուղատնտեսության արտադրության կազմակերպումը, գործիքների, սերմացուի, պարարտանյութերի, ապրանքների և այլ միջոցների հայթայթումը, հողերի բարելավումը և այլն։*

ՀՍՍՌ ժողկոմսովետի որոշմամբ նույն թվականին կազմակերպվում է Հայաստանի Գյուղատնտեսական կոոպերատիվների կենտրոնը (Գյուղկոոպկենտրոնը), որի առաջ խնդիր էր դրված դեկավարել և ապահովել պարտիայի և կառավարության որոշումների իրականացումը գյուղատնտեսության կոոպերացման ուղղությամբ։ Նա պետք է չքավոր ու միջակ գյուղացիությանը միավորեր արտադրական կոոպերացիայի տարբեր ձևերի մեջ, նրանց վարկավորեր և օգներ անհրաժեշտ ինվենտարով ու այլ միջոցներով (մեքենաներ, սերմացու, պարարտանյութեր և այլն), ամեն կերպ նպաստելով գյուղում արտադրական կոոպերացիայի պարզ ձևերի կազմակերպմանը, ամրապնդմանը և զարգացմանը։

Պարտիայի և կառավարության այդ միջոցառումների շնորհիվ 1924 թ. ընթացքում հանրապետությունում դրսի չափով ընդարձակվում է գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի պարզ ձևերի՝ կոմբինատնտեսական, այգեգործական, խոզաբուծ գյուղատնտեսական և այլ ընկերությունների ցանցը։ 1924 թ. հունվարին հանրապետությունում կային ընդամենը 13 այդպիսի ընկերություններ, որից երկուսը Հողագործական (Դիլիջանի գավառում), վեցը կոմբինատնտեսական (Լոռի-Փամբակի գավառում) և հինգը գյուղվար-

---

1 *ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1924, № 14, հոդված 43։*

կային (երեքը Երևանի, երկուսը Էջմիածնի գավառում)։ Այդ բոլորի մեջ ընդգրկված էր ընդամենը 1384 տնտեսություն[1]։ Դրանից 10 ամիս հետո, նույն թվականի հոկտեմբերին այդպիսի ընկերությունների թիվը հանրապետությունում արդեն հասել էր 76-ի, որից 33-ը կաթնատնտեսական, 8-ը այգեգործական, 8-ը խառը գյուղատնտեսական, 16-ը գյուղվարկային և այլն։ Բոլոր այդ 76 ընկերությունների մեջ ընդգրկված էր 9179 տնտեսություն, որը կազմում էր հանրապետության աշխատավորական տնտեսությունների 6,1 տոկոսը[2]։ Եթե 1924 թ. սկզբին գյուղատնտեսական ընկերություններ կային հանրապետության միայն չորս գավառներում, ապա հոկտեմբերին համարյա բոլոր գավառներում արդեն այդպիսիք կազմակերպվել էին։

1924 թ. սեպտեմբերին Երևանում գումարվում է Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների առաջին համագումարը, որը Գյուղկոոպկենտրոնի փոխարեն կազմակերպում է հանրապետության գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը՝ Հայգյուղկոոպը և ընտրում է նրա վարչությունը։ Շուտով մշակվում է Հայգյուղկոոպի կանոնադրությունը, որը նախատեսում էր «կազմակերպել գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնց միջոցով մտցնել գյուղատնտեսական մշակույթի կատարելագործված ձևեր, պատրաստել գյուղական տնտեսության համար անհրաժեշտ իրեր, գյուղական տնտեսությանը մատակարարել արտադրության միջոցներ, վերամշակել և վաճառահանել գյուղատնտեսական մթերքներ և գործադրել գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնող այլ միջոցներ»[3]։

Գյուղատնտեսական կոոպերացիայի այդ պարզ ձևերի կազմակերպումը և նրանց աշխատանքներն ընթանում էին գաղտնագային սուր պայքարի պայմաններում։ Կուլակները, վաշխառուները և նրանց կամակատարները՝ տրոցկիստները, բուխարինականները, բուրժուական նացիոնալիստները և մյուս թափթփուկները բոլոր ուժերով ու միջոցներով ձգտում էին խանգարել և ձախողել պարտիայի միջոցառումները գյուղում։ Ինչպես մյուս բոլոր գծերով, նույնպես և այս բնագավառում պարտիական կազմակերպու-

---

1 Տե՛ս «Սովետական Հայաստանը 1920—1925 թթ.», Ժողովածու, 1926, էջ 269։

2 Նույն տեղում, էջ 270։

3 Նույն տեղում։

թյունները հետևում, մերկացնում ու չախչախիչ հարվածներ էին հասցնում դասակարգային թշնամու մեքենայություններին, աշխատավոր գյուղացիությանը համախմբելով պարտիայի և Սովետական կառավարության շուրջը:

Պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ սովետական ապարատի և Հայգյուղկոոպի կատարած աշխատանքների շնորհիվ, գնալով ռեսպուբլիկայում աստիճանաբար ամրապնդվում էին գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ ձևերը, ուղի հարթելով կոոպերացիայի ավելի բարձր ձևերին անցնելու համար:

1924 թ. ռեսպուբլիկայում շարունակվում էին աշխատանքները ոռոգման ցանցի ընդարձակման ուղղությամբ: Նոր ջրանցքների շինարարության շնորհիվ զգալի չափով ավելացել էր ջրովի հողերի տարածությունը: Աստիճանաբար բարելավվում էին ագրոտեխնիկական միջոցառումները:

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ձեռք առած միջոցառումների շնորհիվ գյուղացիության միջից վերացվում էր ցանքապղկությունը, գնալով բարելավվում էր չքավոր գյուղացիության դրությունը: 1924 թ. օգոստոսին տեղի է ունենում արդյունաբերական ապրանքների գների իջեցում: Կառավարության որոշմամբ տեղական Սովետների համար ստեղծվում է տեղական բյուջե, որին հատկացվում էր գյուղատնտեսական հարկի մեկ երրորդը: Չքավոր տնտեսությունների մի մասը դառնում էր միջակ: Գնալով բարելավվում էր նաև միջակ գյուղացիության դրությունը:

Սակայն գյուղում տեղի ունեցող դասակարգային տեղաշարժերը դրանով չէին սահմանափակվում: Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, երբ որոշ հնարավորություններ էին ստեղծվել կապիտալիստական տարրերի աշխուժացման համար, ունևոր, միջակ տնտեսություններից գյուղում որոշ չափով աճում էին կուլակային տնտեսությունները: Դասակարգային նման տեղաշարժերին զուգընթաց, գնալով գյուղում ավելի էր սրվում դասակարգային պայքարը: Կուլակները, ոգևորվելով իրենց իդեոլոգներ սրոցկիստների, վինովևականների, բուխարինականների, բուրժուական նացիոնալիստների և մյուս թշնամիների պայքարով, որ նրանք այդ ժամանակ մղում էին Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության դեմ, նույնպես իրենց հերթին գործադրում էին պայքարի բոլոր միջոցները, նույնիսկ սեռորը, քայքայելու և տապալելու համար Սովետական պետությունը: Նրանք պրովոկացիոն միջոցներով փորձում էին վարկաբեկել Սովետական իշխա-

նությունը, տարբեր մեթենայություններով դիմադրում էին պետական հարկերը վճարելուն, ձգտելով այդ գործում մասնակից դարձնել նաև գյուղացիության մյուս շերտերին, բոլոր ուժերով աշխատում էին ձախողել Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության քաղաքականության կենսագործումը գյուղում։ Դրան հասնելու համար նրանք հետապնդում, և ուր հնարավոր էր, տեռրիստական ակտեր էին կազմակերպում գյուղի պարտիական-սովետական ակտիվ աշխատողների դեմ։ Այսպես, 1924 թ. նոյեմբերի 23-ին, Լոռի-Փամբակի գավառի Վորոնցովկա գյուղում (այժմ Կալինինո) կուլակները սպանում են նույն գյուղի կոմերիտական կազմակերպության անդամ, բատրակ և ակտիվ թղթակից Դ. Սաչկովին։ Այդ գործի հետաքննության նյութերում ասված է, որ կոմերիտական Դ. Սաչկովը ակտիվ կերպով մասնակցում էր գյուղի հասարակական աշխատանքներին։ Նա ակտիվ թղթակցում էր գյուղի պատի թերթի, ուր գրված հոդվածներով դիմակալերծ էր անում կուլակների հակասովետական արարքները։ Դրանից զրկըռված, նույն գյուղի կուլակները տեռոր են կազմակերպում Դ. Սաչկովի դեմ, խեղդամահ անելով նրան[1]։ Հանցավորները ձերբակալվում և սովետական արդարադատության կողմից ստանում են իրենց արժանի պատիժը։

Գյուղական պարտիական կազմակերպությունները, առաջնորդվելով պարտիայի որոշումներով, իրենց շուրջն են համախմբում չքավոր ու միջակ գյուղացիությանը, շարունակելով վճռական պայքարը կուլակների ու նրանց իդեոլոգների՝ տրոցկիստների, բուխարինականների, դինովևականների, դաշնակ բաիբիուների և մյուս թշնամիների դեմ։

Արդյունաբերությունը. *1924 թվականին, նախորդ տարիների համեմատությամբ, ավելի մեծ ծավալով շարունակվում էին Սովետական Հայաստանի արդյունաբերության վերականգնման աշխատանքները։*

Ըստ առանձին՝ ճյուղերի, 1924 թ. ռեսպուբլիկայի արդյունաբերության վերականգնումն ընթացել է հետևյալ կերպ։

Պղնձի արդյունաբերությունը, որը նախապատերազմյան շրջանում տալիս էր Հայաստանի ամբողջ արդյունաբերության արտադրանքի ավելի քան 60 տոկոսը, ինչպես տեսանք, առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդող դաշնակների բուր-

[1] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, դեկտեմբերի 7։*

ժուա-նացիոնալիստական տիրապետության տարիներին խոպան քայքայվել էր։ Սովետական իշխանության հաստատումից հետո մինչև 1924 թ. հնարավոր չեղավ այն գործի դնել, որովհետև կապված էր ֆինանսական խոշոր ներդրումների հետ։ Դափանի հանքերը և պղնձաձուլական գործարանը շարունակում էին մնալ քայքայված վիճակում։ Իսկ Ալավերդու հանքերն ու գործարանը, ինչպես նշեցինք, սկսած 1923 թվականից, աշխատում էին մասնակի կերպով՝ տալով շատ չնչին արտադրանք, այն էլ ոչ թե պղինձ, այլ ծծմբաքար, աղաթթու, պղնձարջասպ, ծծմբաթթու։

1924 թ. հուլիսից սկսվում են Դափանի պղնձահանքերի, պղնձաձուլական գործարանի, էլեկտրակայանի և մյուս ձեռնարկությունների վերականգնման աշխատանքները, որի համար Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ բաց էր թողնված 846 հազար ռուբլի[1]։ Նույն թվականի նոյեմբերին Դափանի հանքերում և մյուս օժանդակ ձեռնարկություններում աշխատում էին 500 բանվոր, իսկ դեկտեմբերին այդ թիվն հասնում է 800-ի[2]։ Բանվորների թվի այդպիսի աճումը ցույց է տալիս Դափանի պղնձարդյունաբերության վերականգնման ուղղությամբ սկսված աշխատանքների ծավալը։

Ալավերդու պղնձարդյունաբերության վերականգնման համար 1924—25 տնտեսական տարում Սովետական Միության կառավարության որոշմամբ Համամիութենական բյուջեից բաց է թողնվում մեկ միլիոն 10 հազար ռուբլի։ Միութենական կառավարության այդ օգնության շնորհիվ լայն ծավալով սկսվում են նաև Ալավերդու հանքերի, պղնձաձուլական գործարանի և մյուս ձեռնարկությունների վերականգնման աշխատանքները։ 1924 թվականից Ալավերդում սկսվում է պղնձի ձուլումը։ Արտադրին աճում էր բանվորների թիվը, վերականգնվում էին բանվորական ավանները։

Չնայած այդ առաջին կարևորագույն ձեռնարկումներին, 1924—1925 տնտեսական տարում Հայաստանի պղնձարդյունաբերությունը իր արտադրանքով նախապատերազմյան շրջանի համեմատությամբ դեռևս մեծ չափով ետ էր մնում։ Այդ տնտեսական տարում պղնձի ընդհանուր արտադրանքի արժեքը կազմում էր 1913 թ. արտադրանքի արժեքի 13,1 տոկոսը (նախապատերազմ-

---

[1] См. «Экономический Вестник ССР Армении», 1925, № 1 (9) стр. 110.

[2] Նույն տեղում, էջ 114։

յան դեպքով), բանվորների միջին թիվը կազմում էր 1913 թ. սղընձարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 18 տոկոսը[1]։

Այդ նշանակում է, որ Հայաստանում սղընձարդյունաբերության վերականգնման ուղղությամբ հետագա տարիներին դեռևս խոշոր աշխատանքներ էին մնում կատարելու, որոնց համար անհրաժեշտ էին նոր, ավելի մեծ կապիտալ ներդրումներ։

Շնորհիվ Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման, Սովետական Հայաստանի կառավարությունը Միութենական կառավարության և Անդրկովկասյան Ֆեդերացիայի կառավարության մշտական հոգատարության և օգնության պայմաններում հաջողությամբ կատարում է այդ գործը, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում վերականգնելով ռեսպուբլիկայի արդյունաբերության պլխավոր ճյուղը՝ սղընձարդյունաբերությունը։

Ռեսպուբլիկայի արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկը հանդիսացող դինու—կոնյակի—սպիրտի արտադրության գծով մինչև 1924 թ. նոյեմբերը աշխատում էր Երևանի «Արարատ» գործարանը։ Այդեղործության ծավալման, խաղողի բերքատվության բարձրացման և ընդհանուր բերքի ավելացման հետևանքով այդ միակ գործարանը չէր բավարարում խաղողի արդյունաբերական մշակության աճող պահանջներին։ Վերականգնվում և 1924 թ. աշնանը գործարկվում են Դամարլուի գինու գործարանը, Դավալուի գինեգործական բաժանմունքը և զգալի չափով ընդարձակվում է «Արարատ» գործարանը։

1924—25 տնտեսական տարում ռեսպուբլիկայում զգալի չափով բարելավվել էր կաշվի արդյունաբերության վիճակը։ Դեռևս 1922—1923 թթ. վերականգնված երկու կաշեգործարանները այդ ժամանակ ավելի ընդարձակվել էին և որոշ չափով մեքենայացման ենթարկվել, որի շնորհիվ ավելացել էր կաշվի մշակությունը։ Այսպես, եթե 1923—24 տնտեսական տարում այդ երկու գործարաններում մշակվել էր 53.331 հատ մանր և 6.474 հատ խոշոր կաշի, ապա 1924—1925 տնտեսական տարում մշակվել էր 86.000 հատ մանր և 10.690 հատ խոշոր կաշի[2]։ Մի բանվորի տարեկան միջին արտադրանքն է եղել 1923—24 տնտեսական տարում 3845 ռ.

---

[1] Տե՛ս «Հայաստանի Սեհ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 27։

[2] Հայկական ՍՍՌ ՊԿՄ., ֆ. 40c/113, գ. 454, թ. 7։

30 կ., 1924—25 տնտեսական տարում 6146 ռուբլի[1]: Այդ նշանակում է, որ մեկ բանվորի տարեկան միջին արտադրանքը մեկ տարվա ընթացքում ավելացել էր ավելի քան 1,5 անգամ, որն արդյունք էր մեկ կողմից բանվորների աշխատանքի պայմանների բարելավման, դործարանների մեքենայացման, մյուս կողմից բանվորների որակի բարձրացման, նրանց լավագույն աշխատանքի: Այդ ժամանակվանից նախապատրաստական աշխատանքներ են սկըսվում Երևանում կոշիկի գործարան կառուցելու համար:

1913 թ. համեմատությամբ, 1924 թ. Հայաստանում պոլիգրաֆ արդյունաբերության արտադրանքը եռապատկվել էր[2], որը, սակայն, դեռևս չէր բավարարում երկրի արագ կերպով աճող կուլտուրական պահանջներին: Այդ պատճառով էլ հետագա տարիներին նա ել ավելի արագ զարգացում է ապրում:

Էլեկտրէներգիայի արտադրությունը 1924 թ. կազմում էր նախապատերազմյան արտադրանքի 135 տոկոսը, այսինքն աճել էր 35 տոկոսով[3]:

1925—1926 տնտեսական տարում արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումներ են կատարվել՝ ժողտնտեսության գծով՝ 3.097,1 հազար ռուբլի, բամբակագործ արդյունաբերության գծով՝ 561,0 հազար ռուբլի և Հայանտառարեսի գծով՝ 33,4 հազար ռուբլի, ընդամենը՝ 2.691,5 հազար ռուբլի[4]:

Հայաստանի Սովետների 4-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1925 թ. մարտի 12—15-ը, քննության առնելով արդյունաբերության վերականգնման վիճակը ռևսպուբլիկայում, այդ հարցի վերաբերյալ ընդունած բանաձևում նշել է, որ ռևսպուբլիկայում խոշոր աշխատանք է տարվել արդյունաբերության վերականգնման ուղղությամբ և ձևոք են բերված առաջին լուրջ նվաճումները[5]:

Այնուհետև համագումարի բանաձևում արված են արդյունաբերության զարգացման հետագա խնդիրները ռևսպուբլիկայում: Այնտեղ ասված է.

«Նկատի ունենալով մեր երկրի լեռնային հարստություններն

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿՄ, ֆ. 40c/113, գ. 454, թ. 7:

[2] Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողտնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 2:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 36:

[5] Տե՛ս ՀՍԽՀ կարհատպների չորրորդ համագումարը, պետքրատ հաշվետվություն, Երևան, 1926, էջ 208:

առատ լինելը և էլեկտրիֆիկացիայի հնարավորությունները... Համագումարն անհրաժեշտ է համարում ամեն կերպ զարկ տալ արդյունաբերության զարգացմանը Հայաստանում և իրեն հետևյալ անելիքներ, կարևոր է գտնում.

ա) Վերջնականապես վերականգնել մեր լեռնային ծանր ինդուստրիան — Ղաթարի (Ղափանի) և Ալավերդու հանքերը, ոտքի հանել հիմքերի վրա դնել պեմզայի շահագործումը։

բ) Շարունակել ուժեղ թափով մանվածքային գործարանի կառուցումը Լենինականում և լայնացնել նրա կողքին գյուղատնտեսական մեքենաների՝ համապատասխան որակյալ կադրեր ստեղծելու համար։

գ) Ընդարձակել գինու, կոնյակի և սպիրտի արդյունաբերության գործը, վերականգնելով դեռևս չգործող հիմնարկությունները։

դ) Ընդարձակել չուգուն ձուլող մեխանիկական գործարանը։

ե) Աշխատել ընդարձակել կաշվի արդյունաբերությունը և մեխանիզացիայի ենթարկել այն։

զ) Երևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանների կառուցումներն ավարտելուց հետո, շարունակել Հայաստանի ջրային էլեկտրական ուժերի հետազոտման աշխատանքները...»[1]։

Բանաձևի մյուս կետերում խոսվում է արդյունաբերության այլ բնագավառներում կատարվելիք աշխատանքների մասին[2]։

Բացի արդյունաբերությունից, Հայաստանի Սովետների 4-րդ համագումարը քննության է առել նաև հետևյալ հարցերը։ ՀՍՍՌ Կառավարության հաշվետվությունը, ներքին առևտրի հարցը, Հողժողկոմատի հերթական խնդիրները, գյուղատնտեսական վարկի և գյուղատնտեսական կոոպերացիայի հարցը, Անդրկովկասյան Կենտգործկոմի 1924 թ. սեպտեմբերի 4-ի՝ երկրորդ նստաշրջանում ընդունված ԱՍՖՍՌ Կոնստիտուցիայի նախագիծը, և ՀՍՍՌ Կոնստիտուցիայի համաձայնեցումը ԱՍՖՍՌ և ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիաների հետ[3]։

Համագումարը առանձնապես ընդգծել է այն ժամանակ պետական և կոոպերատիվ առևտրի զծով ունեցավրիկացում ձեռք բերված հաջողությունները։ «Հայաստանի Խորհուրդների 4-րդ Համագու-

---

1 *ՀՍՍՀ Խորհուրդների չորրորդ համագումարը, ստենոգրաֆիական հաշվետվություն, Երևան, 1926, էջ 209։*

2 *Նույն տեղում։*

3 *Նույն տեղում, էջ 201։*

մարը,— ասված է նրա բանաձևում,— լսելով զեկուցում ներքին առևտրի մասին, ընդգծում է սպառողական կոոպերացիայի, Հայաստի և այլ պետական առևտրական հիմնարկների տարած հաղթանակները, ինչպես և նրանց ուժեղացումը, թե՛ շրջանառության մեջ և թե՛ կազմակերպչորեն։

Միաժամանակ համագումարը վավերացնում է պետական առևտրի և սպառողական կոոպերացիայի տարած առևտրական ճիշտ քաղաքականությունը գլխավորապես, մասնավոր առևտրի դեմ կռիվ մղելու հարցում։ Դրա ապացույցներն են մասնավորապես Երևանի, Լենինականի և այլ գավառական կենտրոնների բանկոպերատիվների գործունեությունը, որոնց շրջանառությունների աճումը զարկանում է միանգամայն առողջ հիմունքներով»[1]։

Մանրածախ առևտրի բնագավառում մասնավոր առևտրականների դեմ մղվող պայքարն ավելի ուժեղացնելու նպատակով համագումարն անհրաժեշտ է համարում պետական և կոոպերատիվ կազմակերպությունների գծով «ուժեղացնել մանրածախ առևտրի ցանցը, առանձնապես ուշադրություն դարձնելով գյուղական կոոպերացիայի վրա (սպառողական)»[2]։

1923—24 տնտեսական տարում պետական ու կոոպերատիվ առևտուրը Հայաստանում ունեցել են 9.500 հազար ռուբլու մեծածախ ապրանքաշրջանառություն[3]։ 1923—24 տնտեսական տարվա համեմատությամբ 1924—25 տնտեսական տարում ռևոլուցիայուշ պետական և կոոպերատիվ առևտրի գծով ընդհանուր ապրանքաշրջանառությունը աճել էր 119 տոկոսով[4]։ Պետական և կոոպերատիվ առևտրական կազմակերպությունների հաջողությունների ծավալման և ամրապնդման գլուխընթաց, գնալով ավելի ու ավելի էր նվաճում մասնավոր կապիտալի դերը ինչպես ամբողջ Սովետական Միության, նույնպես և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանի ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ։ Այսպես, 1923—24 տնտեսական տարում մասնավոր կապիտալի միջնորդական շրջանառությունը ՍՍՌՄ-ի ապրանքաշրջանառության մեջ կազմել է 58,6 տոկոս, Հայաստանի ապրան-

---

[1] ՀՍԽՀ խորհուրդների չորրորդ համագումարը, սղագրական հաշվետվություն, Երևան, 1926, էջ 210—211։

[2] Նույն տեղում, էջ 211։

[3] Տե՛ս «ՀՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 45։

[4] Նույն տեղում, էջ 47։

քաշրջանառության մեջ՝ 61,5 տոկոս։ Հաջորդ 1924—25 տնտեսական տարում այդ տոկոսը համապատասխանաբար իջել էր, հասնելով 44,3 և 45,7[1]։ Ըստ որում մասնավոր կապիտալի դերը ավելի փոքր ու սահմանափակ է եղել մեծածավաճառ ապրանքաշրջանառության մեջ։ 1923—24 տնտեսական տարում ՍՍՌՄ-ի մեծածախ առևտրի մեջ այն եղել է 21,8 տոկոս, Հայաստանի՝ 17,4 տոկոս։ Հաջորդ տնտեսական տարում այդ տոկոսը համապատասխանաբար իջել է, հասնելով 9,5 և 11,2[2]։

Երկաթուղային տրանսպորտի վերականգնման և նրա աշխատանքների բարելավման գծով ևս 1924 թ. Սովետական Հայաստանում ձեռք էին բերվել զգալի հաջողություններ։

1924 թ. նոյեմբերին Սովետական Հայաստանի աշխատավորները տոնում են երկրում սովետական կարգերի հաստատման 4-րդ տարեդարձը՝ ամփոփելով անցած չորս տարիների ընթացքում սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերած հաջողությունները և մոբիլիզացնելով իրենց ուժերը այդ հաջողությունները ամրապնդելու և բազմապատկելու համար։

Այդ օրերին (դեկտեմբերի 4—6-ը) ռեսպուբլիկայի աշխատավորությանը հյուր է գալիս Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ, ՍՍՌ Միության Բանվորա-Գյուղացիական Տնտեսության ժողովրդական կոմիսար և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի նախագահ Վ. Կույբիշևը, որին աշխատավորությունը դիմավորում է բուռն խանդավառությամբ։ Դեկտեմբերի 4-ին Պետական թատրոնի (այժմ Երաժշտական կոմեդիայի թատրոնի) շենքում Հայաստանի Կոմունիստական պարտիայի Երևանի կազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ դռնբաց ժողովում Վ. Կույբիշևը զեկուցում է Սովետական Միության միջազգային դրության մասին, ցույց տալով սոցիալիստական շինարարության հաջողությունները Սովետական Միությունում և մեր երկրի միջազգային դիրքերի հարաճուն ամրապնդումը։

Վ. Կույբիշևը ծանոթանում է ռեսպուբլիկայում ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքներին և ծավալվող նոր շինարարությանը, բարձր գնահատելով ռեսպուբլիկայի աշխատավորների ստեղծագործական աշխատանքները սոցիալիստական շինարարության գործում։

---

[1] Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 47։

[2] Նույն տեղում, էջ 46։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽՆԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋՈՒՄ

1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խաղաղ շինարարության հինգ տարիների ընթացքում — 1921—1925 թթ. Սովետական Միությունը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մեծ հաջողությունների էր հասել երկրի քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ։ ՍՍՌՄ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը իրենց արտադրանքի չափով մոտեցել էին նախապատերազմյան մակարդակին։ 1924—1925 տնտեսական տարում ՍՍՌՄ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը կազմում էր մինչպատերազմյան մակարդակի 87 տոկոսը։ Խոշոր արդյունաբերությունը 1925 թվականին տալիս էր մինչպատերազմյան արտադրանքի մոտ երեք քառորդը։ 1924—25 տնտեսական տարում Սովետական երկրում կապիտալ շինարարության մեջ ներդրվել էր 385 միլիոն ռուբլի։ Հաջողությամբ իրականացվում էր երկրի էլեկտրիֆիկացման պլանը։

Գնալով ավելի ու ավելի էին ամրապնդվում սոցիալիզմի հրամանատարական դիրքերը ժողովրդական տնտեսության մեջ։

1925 թվականին Սովետական Միության արդյունաբերության մեջ սոցիալիստական սեկտորը զբաղում էր 81 տոկոս, իսկ մասնավոր սեկտորը՝ 19 տոկոս։ Էլ ավելի մեծ էր սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ. 1925 թ. այն կազմում էր 96,1 տոկոս, իսկ մասնավոր սեկտորը՝ 3,9 տոկոս։ Նույն թվականին սոցիալիս-

տական սեկտորը մանրածախ առևտրում կազմում էր 57,3 տոկոս, մեծածախ առևտրում՝ 90,6 տոկոս [1]։

1924—25 տնտեսական տարում ծանր արդյունաբերության տեսակարար կշիռը, ինչպես և նախահեղափոխական Ռուսաստանում, կազմում էր արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալի մեկ երրորդը։

Ժողովրդական տնտեսության վերականգնման ընթացքում սոցիալիստական սեկտորի հարաճուն աճման ու ամրապնդման դարձում կարճ ժամանակամիջոցում ձեռք բերված խոշոր հաջողությունները ակնառու կերպով ցույց էին տալիս, որ Սովետական Միության բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը Կոմունիստական պարտիայի, նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ անցեր կերպով առաջ էին ընթանում սոցիալիզմի ուղիով։

Ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ձեռք բերված նշանակալից հաջողությունների շնորհիվ դնալով ավելի էին ամրապնդվում Սովետական Միության միջազգային դիրքերը, բարձրանում նրա հեղինակությունը կապիտալիստական երկրների աշխատավորների ու գաղութային ժողովուրդների աչքում։ Սովետական Միության միջազգային դիրքերի ամրապնդման ցայտուն օրինակ է այն փաստը, որ 1924 թ. իմպերիալիստական խոշոր պետություններից Անգլիան, Ֆրանսիան, Ճապոնիան և Իտալիան դիվանագիտական հարաբերություններ են հաստատում Սովետական Միության հետ։ Ընդարձակվում են առևտրական հարաբերությունները Սովետական Միության ու կապիտալիստական երկրների միջև։

Խոշոր հաջողությունների էին հասել բոլոր ազգային սովետական ռեսպուբլիկանները, այդ թվում նաև Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող ռեսպուբլիկանները՝ Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը։ Ամփոփելով Անդրկովկասյան Ֆեդերացիայի մասշտաբով ժողովրդական տնտեսության վերականգնման համար կատարված աշխատանքների արդյունքները, Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների 4-րդ համագումարում (1925 թ. դեկտեմբեր) Անդրերկոմի քաղաքական հաշվետվության մեջ Ս. Օրջոնիկիձեն ցույց է տվել, որ երկրամասում ամբողջ դյու-

[1] Տե՛ս ակադեմիկոս Ե մ. Յ ա ր ո ս լ ա վ ս կ ի, Բոլշևիկների պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքին անցնելու ժամանակաշրջանում (1921—1925), Երևան, 1949, էջ 230։

դատնտեսության համախառն արտադրանքը 1925 թ. կազմում էր մինչպատերազմյան մակարդակի 72,3 տոկոսը[1]: Խոշոր աշխատանքներ էին կատարված երկրամասի արդյունաբերության, հատկապես նրա գլխավոր ճյուղի՝ նավթարդյունաբերության վերականգնման ուղղությամբ: Նույն զեկուցման մեջ Ս. Օրջոնիկիձեն ցույց է տվել, որ նթե նավթի արդյունահանումը 1920 թ. կազմել է 152.200 հազար փութ, ապա 1925 թ. այն հասել էր 289 միլիոն փթի՝ 1913 թ. 446,1 միլիոն փթի դիմաց, կազմելով նրա 65 տոկոսը: Զգալի չափով բարելավվել էր նավթի արդյունահանման և վերամշակման տեխնիկան: Մարզանեցի հանույթը 1918 թ. 1,5 միլիոն փթի դիմաց 1925 թ. հասել է 26 միլիոն փթի, պղնձարդյունաբերության արտադրանքը 1917 թ. 4 հազար փթի դիմաց, 1925 թ. կազմում էր 49.414 փութ: Խոշոր չափով բարելավվել էր երկաթուղային տրանսպորտի աշխատանքը և ավելացել բեռների ու ուղևորների փոխադրությունը:

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում երկրամասում խոշոր հաջողություններ էին ձեռք բերվել նաև կուլտուրական շինարարության ասպարեզում: Դրա դեղեցիկ արտահայտություններից մեկը հանդիսանում է դպրոցական ցանցի ընդարձակումը և այնտեղ սովորողների քանակի ավելացումը: Այսպես, ցարական տիրապետության ժամանակ, առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին, ամբողջ Անդրկովկասում բոլոր ուսումնական հաստատություններում սովորողների թիվը եղել է 222.750, իսկ Սովետական իշխանության գոյության հինգերորդ տարում՝ 1925 թ. այն արդեն հասել էր 485.102-ի[2] այսինքն ավելի քան կրկնապատկվել էր:

Ցույց տալով Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության կենսագործման համար մղած պայքարի արդյունքները, 1924 թ. փետրվարին Ս. Օրջոնիկիձեն նշել է, որ Անդրկովկասում ձեռք է բերված՝

«1. Անխորտակելի ազգային խաղաղություն, որը վերջին քառորդ դարի ընթացքում առաջին անգամ անդրկովկասյան բանվորին և գյուղացուն տպահովեց ազատ, անվտանգ, խաղաղ աշխատանք:

2. Անդրկովկասի աշխատավորական մասսաների աչքերում

---

[1] *Տե՛ս Գ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 185:*

[2] *Նույն տեղում, էջ 187:*

նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն պարտիաների՝ մենշևիկնե-
րի, դաշնակների, մուսավաթականների և մյուսների կատարյալ
վարկաբեկում, որը վերջացավ դրանցից ամենաուժեղի՝ վրացա-
կան մենշևիկների կատարյալ քայքայմամբ ու կազմալուծմամբ,
(մուսավաթականների և դաշնակների մասին հարկ էլ չկա խոսել)։

3. Քաղաքական բնույթի բանդիտիզմի բացակայություն։

4. Անդրկովկասի գյուղացիական մասսաների վերջնական
նվաճումը՝ հողային հարցի արմատական լուծումով։

5. Գյուղատնտեսության և արդյունաբերության վերականգ-
նման արագ տեմպ Անդրկովկասում։

6. Գաղափարական բեկում ինտելիգենցիայի շրջանում՝ Սովե-
տական իշխանության նկատմամբ լոյալ վերաբերմունք ունենալու
կողմը»[1]։

Սովետական Միության և նրա բաղկացուցիչ մասը հանդիսա-
ցող Անդրկովկասյան Ֆեդերացիայի հաջողություններին զուգըն-
թաց, ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վեր-
ջում՝ 1925 թ. նշանակալից հաջողություններ էին ձեռք բերվել նաև
Հայկական ՍՍՌ-ում։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ռեսպուբլիկա-
յի բանվոր դասակարգը, չքավոր ու միջակ գյուղացիությունը և ին-
տելիգենցիան իրենց նվիրական աշխատանքի շնորհիվ այդ ժամա-
նակ հիմնականում ավարտել էին ժողովրդական տնտեսության վե-
րականգնումը։

Սովետական Հայաստանում գյուղատնտեսության վերականգ-
նման բնագավառում 1925 թ. ձեռք բերած արդյունքները հիմնա-
կան ցուցանիշներով հանգում էին հետևյալին։

Անշեղ կերպով աճելով, 1925 թ. ռեսպուբլիկայում ընդհանուր
ցանքատարածությունները կազմում էին 295,7 հազար հեկտար՝
1913 թ. 345,7 հազար հեկտարի և 1919 թ. 82,7 հազար հեկտարի
դիմաց[2]։ Ինչպես ցույց են տալիս թվերը, ցանքատարածությունները
1925 թ. արդեն մոտեցել էին 1913 թ. մակարդակին՝ կազմելով նրա
85,5 տոկոսը, իսկ 1919 թ. համեմատությամբ ավելացել էին ավե-
լի քան 3,5 անգամ։ 1925 թ. եղած 295,7 հազար հեկտար ընդհա-
նուր ցանքատարածություններից 255,2 հազար հեկտարը հացահա-

[1] Ս. Կ. Օրջոնիկիձե. Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 130—131։

[2] См. «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», Эривань, 1928, стр. 27 и «Соц. строительство Арм. ССР» (1920—1940 гг.), Ереван, 1940, стр. 64.

տիկային ցանքերն էին. 22,8 հազար հեկտարը՝ տեխնիկական կուլտուրաները, 17,6 հազար հեկտարը՝ կարտոֆիլ և բանջարանոցային կուլտուրաները[1]:

Ցանքատարածությունների այդպիսի վերականգնման զուգընթաց, 1925 թվականին զգալի հաջողություններ էին ձեռք բերվել դյուզատնտեսության բերքատվության բարձրացման գործում: Ռեսպուբլիկայի դյուզատնտեսական արտադրանքի հիմնական ճյուղերում բերքատվությունն այդ ժամանակ արդեն ընդհուպ մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին: Դրան խոշոր չափով նպաստեցին մեկ կողմից դյուզատնտեսության բնագավառում Սովետական իշխանության ձեռնարկումները — ջրանցքաշինարարությունը, հողի մշակումը բարելավելու նպատակով աշխատավորական դյուզացիական անտեսություններին ցույց տրված օգնությունը և այլն, մյուս կողմից աշխատավոր դյուզացիության բրանջան աշխատանքը:

1925 թ. հունիսին տեղի է ունենում այն ժամանակ ռեսպուբլիկայում ամենամեծ ջրանցքի՝ Շիրակի ջրանցքի բացումը[2]:

Զգալի առաջընթաց էր կատարվել նաև անասունների գլխաքանակի վերականգնման, անասնաբուծության գործի բարելավման և նրա մթերատվության բարձրացման ասպարեզում:

Դյուզատնտեսության ընդհանուր արտադրանքի բնագավառում տեղի ունեցած հաջողությունների մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը: 1913 թ. Հայաստանի ամբողջ դյուզատնտեսության ընդհանուր արտադրանքի արժեքը եղել է 65,8 միլիոն ռուբլի (1926—27 թթ. անփոփոխ գներով), որից 38,8 միլիոնը կազմել է հողագործության և 27,0 միլիոնը՝ անասնաբուծության արտադրանքը[3]: Ժողովրդի բռնամի դաշնակների մարխնեսային իշխանության ժամանակ՝ 1919 թ. Հայաստանի դյուզատնտեսության արտադրանքը իջել էր մինչև 11,3 միլիոն ռուբլու[4]: Ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ շինարարական աշխատանքների տարիներին անընդհատ վերելք ապրելով, 1924—25 տնտեսական տարում Սովետական Հայաստանում դյուզատնտեսության ընդհա-

---

1 См. «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», стр. 27.

2 См. «Экономический Вестник Армении», 1925, № 3(11), стр. 82.

3 См. «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», стр. 47.

4 Там же.

նուր արտադրանքի արժեքը կազմում էր 57,06 միլիոն ռուբլի, իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 69,49 միլիոն ռուբլի[1]։

Այսպիսով, 1925—26 տնտեսական տարում գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը իր արժեքային արտահայտությամբ ոչ միայն հասել, այլև անցել էր նախապատերազմյան մակարդակը։ Եթե այդ արտադրանքի արժեքային արտահայտությունը վերցնենք ըստ հողագործության և անասնաբուծության, ապա ստացվում է, որ 1924—25 տնտեսական տարում հողագործության ընդհանուր արտադրանքը եղել է 38,05 միլիոն ռուբլի, անասնաբուծությանը՝ 19 միլիոն ռուբլի, իսկ 1925—26 տնտեսական տարում՝ հողագործությունը՝ 45,98 միլիոն ռուբլի, անասնաբուծությանը՝ 23,5 միլիոն ռուբլի[2]։

Բերված թվերը ցույց են տալիս, որ այն ժամանակ Հայաստանի գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ հողագործության արտադրանքի արժեքային արտահայտությունը մոտավորապես երկու անգամ ավելի է եղել անասնաբուծության արտադրանքի արժեքային արտահայտությունից։

1925—26 թթ. ռեսպուբլիկայի գյուղատնտեսության կյանքում սկսում են նկատելի դեր կատարել գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի պարզ ձևերը և վարկային ընկերությունները։ Նրանց քանակական աճի մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը. Եթե 1924 թ. հոկտեմբերին գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի միավորների թիվը ռեսպուբլիկայում եղել է 76, 1925 թ. հոկտեմբերին՝ 147, ապա 1926 թ. այն արդեն հասել էր 205-ի, որից 12-ը՝ այգեգործական, 12-ը՝ բամբակագործական, 12-ը՝ գյուղատնտեսական խառը, 5-ը ծխախոտագործական, 18-ը մեղվաբուծական ընկերություններ էին, 72-ը կաթնատնտեսական արտելներ, 36-ը գյուղատնտեսական վարկային ընկերություններ[3] և այլն։ Նրանց մեջ 1924 թ. հոկտեմբերին ընդգրկված էր 9,179 գյուղացիական տնտեսություն, իսկ 1926 թ. հոկտեմբերին՝ 30.075 տնտեսություն[4]։

Գյուղատնտեսական կոոպերացիայի այդ պարզ ձևերի քանա-

---

[1] См. «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», стр. 30—31.

[2] Там же.

[3] Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 19։

[4] Նույն տեղում։

կական աճման զուգընթաց, առաջնորդվելով պարտիայի 14-րդ կոնֆերենցիայի որոշումներով, Հայաստանի Կոմունիստական պարտիան և կառավարությունը որոշ ձեռնարկումներ են կատարում նրանց կազմակերպչական ամրապնդման, աշխատանքների բարելավման և արտադրողականության բարձրացման համար։ Միաժամանակ շարունակվում էր ծավալուն պայքարը կուլակային-դաշնակցական և տրոցկիստական-բուխարինական թափթփուկների դեմ, որոնք բոլոր ուժերով ձգտում էին ձախողել դյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման և ամրապնդման ուղղությամբ պարտիայի և կառավարության միջոցառումները։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 4-րդ Համագումարը (1925 թ. դեկտեմբերին) դնահատելով ռեսպուբլիկայում սպառողական և դյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում ձեռք բերված առաջին արդյունքները, կենտկոմի հաշվետվության ակտիվ ընդունած բանաձևում նշել է. «Համագումարը արձանագրում է, որ վերջին տարում բավական ածել է սպառողական և դյուղատնտեսական կոոպերացիան»[1]։

Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների 4-րդ Համագումարը նույնպես նշել է դյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում երկրամասում, այդ թվում նաև Հայաստանում ձեռք բերած առաջին հաջողությունները, միաժամանակ պարտիական կազմակերպությունների առաջ խնդիր դրել՝ ավելի պարզացնել և ամրապնդել դյուղատնտեսական կոոպերացիան։

«Համագումարը հանձնարարում է Անդրկովկասի պարտիական կազմակերպություններին,— ասված է բանաձևում,— կոոպերացիայի, առանձնապես դյուղատնտեսական կոոպերացիայի (մեքենաօգտագործման ընկերություններ և այլն) և արտադրական-առևտրագործական կոոպերացիայի զարգացման գործին դույց տալ ամեն տեսակի աջակցություն, հիշելով, որ կոոպերացիան հանդիսանում է կազմակերպության հատուկ ձև, որի օգնությամբ հնարավոր է հասնել դյուղացիական տնտեսությունների՝ լայն ընդգրկմանը սոցիալիստական շինարարության հունի մեջ»[2]։

1925 թ. Սովետական Հայաստանում չնայած սովխոզների բանակական կազմի մեջ փոփոխություններ չէին եղել, բայց նրանք

---

1 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, 1925, ֆ. 1, գ. 1, թ. 326։

2 «Четвертый съезд коммунистических организаций Закавказья», Стенографический отчет, изд. Заккрайкома ВКП(б), Тифлис, 1926, стр. 435—436.

զգալի չափով ամրապնդվել էին։ Մեծացել էր եղած չորս սովխոզների մշակելի հողերի տարածությունը, բարձրացել էր արտադրողականությունը և բարելավվել տեխնիկական դինվածությունը։

Իրենց պլանային գործունեությամբ, կազմակերպվածությամբ, հողի մշակման առաջավոր միջոցներով և բարձր արտադրողականությամբ, սովխոզները օրինակ էին ցույց տալիս աշխատավոր գյուղացիությանը, հանդիսանալով գյուղատնտեսության մեջ առաջավոր, սոցիալիստական տնտեսության պրոպագանդիստները։ Նրանք աշխատավոր գյուղացիությանը գործնականում ցույց էին տալիս սոցիալիստական տնտեսության առավելությունները։

Ընայած տվյալ շրջանում սովխոզները ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ իրենց տեսակարար կշռով զգալի տեղ չէին գրավում, բայց որպես գյուղատնտեսության մեջ կազմակերպված սոցիալիստական տնտեսության առաջատար ուժ, նրանք մեծ դեր կատարեցին։ Այն ժամանակ սովխոզներն իրենց տեսակարար կշռով ժողովրդական տնտեսության մեջ մոտավորապես այդպիսին էին նաև սովետական մյուս ռեսպուբլիկաներում։ Նրանք դեռ նոր-նոր էին ամրապնդվում՝ զարգացման խոշորագույն հեռանկարներով։

Խոսելով Սովետական Միության մասշտաբով սովխոզների դերի մասին գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխության գործում, 1930 թ. Ի. Վ. Ստալինն ասել է. «Սխալ կլիներ մեր սովխոզների մեջ տեսնել միմիայն հայտի ռեսուրսների աղբյուր։ Սովխոզներն իրենց նոր տեխնիկայով, շրջապատող գյուղացիությանն իրենց օգնությամբ, իրենց չտեսնված տնտեսական թափով իրոք հանդիսացել են այն առաջատար ուժը, որը հեշտացրեց գյուղատնտեսական մասսաների շրջադարձը և նրանց շարժեց դեպի կոլեկտիվացման ուղին»[1]։

Սովխոզները շրջակա աշխատավոր գյուղացիներին, հատկապես չքավորներին օգնում էին մեքենաներով, բանող անասուններով, հացահատիկային, այգեգործական և տեխնիկական կուլտուրաների նոր, լավագույն սորտերի սերմացուով, ցեղական անասուններով և այլն։

Տնտեսության վերականգնման ղուգընթաց, անընդհատ աճում էին պետության կողմից կապիտալ ներդրումները ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ։ Այսպես, 1921—1925 տնտեսական տա-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 316—317։

ռում գյուղատնտեսության մեջ ներդրվել է 1.740 հազար ռուբլի, իսկ 1925—26 տնտեսական տարում այն հասել էր 2.333 հազար ռուբլու[1]: Միայն այդ երկու տարում ոռոգման և մելիորացիայի վրա ծախսվել է 2.117 հազար ռուբլի[2]:

Գյուղատնտեսության վերականգնման ղեկավարման Սովետական Հայաստանում գնալով ավելի ու ավելի բարելավվում էր չքավոր գյուղացիության դրությունը:

Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության կողմից մի շարք կարևոր միջոցառումներ գործադրվեցին ռնտուբելիկայի չքավոր ու միջակ գյուղացիությանն օգնելու նպատակով: Միայն վարկի գծով Սովետական իշխանությունը Հայաստանի չքավոր ու միջակ գյուղացիությանը օգնություն է ցույց տվել՝ 1924—25 տնտեսական տարում՝ 4.416 հազար ռուբլի, 1925—26 տնտեսական տարում՝ 10.400 հազար ռուբլի[3]: Կառավարության որոշմամբ այդ ժամանակ Սովետների համար ստեղծվում է տեղական կայուն բյուջե, որին հատկացվում էր գյուղատնտեսական հարկի մեկ երրորդ մասը: 1924 թվականի օգոստոսին տեղի է ունենում արդյունաբերական ապրանքների մեծավաճառ գների իջեցում: 1925 թվականից զգալի չափով պակասեցվում է գյուղատնտեսական հարկը՝ հօգուտ չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսությունների:

Սովետական պետության կողմից ցույց տրվող օգնության շնորհիվ չքավոր գյուղացիության որոշ մասը դառնում էր միջակ: Զգալի չափով բարելավվում էր միջակ գյուղացիության վիճակը: Գյուղում տեղի ունեցող դասակարգային տեղաշարժերը դրանով չէին սահմանափակվում: Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, երբ որոշ հնարավորություններ էին ստեղծվել կապիտալիստական տարրերի աշխուժացման համար, ունևոր, միջակ տնտեսությունների հաշվին որոշ չափով աճում էին կուլակային տնտեսությունները:

Սակայն կուլակության աճումը տեղի ուներ ոչ թե լայն մասշտաբով, այլ չնչին չափով: Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, շնորհիվ այն ժամանակ կիրառվող կուլակության սահ-

---

1 См. «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», стр. 39.

2 Там же.

3 Տե՛ս «Հայաստանի Սխհ Ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 21:

մանափակման հետևողական քաղաքականության, կուլակության աճումը երբեք չէր կարող լայն ծավալ ընդունել, ինչպես կապիտալիստական երկրներում:

Սովետական գյուղում տեղի ունեցող շերտավորումը արմատապես հակառակ էր կապիտալիստական գյուղում տեղի ունեցած շերտավորմանը: ՀամԿ(բ)Պ 15-րդ համագումարի՝ գյուղում կատարվող աշխատանքի վերաբերյալ բանաձևում այդ մասին ասված է. «Դիտելով սոցիալ-դասակարգային տեսակետից, գյուղատնտեսության վարդապետման պրոցեսը ներկայումս բնութագրվում է սոցիալիստական և կապիտալիստական տենդենցների պայքարով: Այդ պայքարն իր առանձնահատուկ դրոշմն է դնում գյուղի դիֆերենցացման պրոցեսի վրա, դիֆերենցացում, որը մեր պայմաններում խիստ տարբերիչ առանձնահատկություն ունի»[1]:

Ըստ նույն բանաձևի, այդ առանձնահատկությունները արտահայտվում էին հետևյալում. եթե կապիտալիստական գյուղում զարգացումը տեղի ունի միջակ գյուղացիության քայքայման, թուլացման և ծայրահեղների՝ հզավորության ու կուլակության աճման պայմաններում, ապա մեզ մոտ, ի հակադրություն կապիտալիստական վարդապետման, տեղի ուներ հզավորության կրճատման և միջակության ավելացման պրոցես՝ նոր տնտեսական քաղաքականության հետևանքով կուլակության ժամանակավոր աշխուժացման, մանավանդ աճման պայմաններում:

Բուխարինականները ամեն կերպ փորձում էին կոծկել գյուղում տեղի ունեցող շերտավորումը և կուլակության աճման փաստը: Իսկ տրոցկիստները ուզնում էին կուլակության և կապիտալիստական մյուս տարրերի՝ նեպմանների, սպեկուլյանտների վտանդը: Ժխտելով բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, տրոցկիստները ամեն կերպ ընդում էին իրենց կոնտրռևոլյուցիոն դրույթը նեպը միայն նահանջ լինելու մասին, դրույթ, որը վճռականապես դատապարտվել էր Կոմունիստական պարտիայի, նրա Կենտրոնական Կոմիտեի կողմից նեպին անցնելու հենց առաջին շրջանում:

Պարտիայի 14-րդ համագումարում (1925) Կենտրոնական Կոմիտեի քաղաքական հաշվետվության մեջ Ի. Վ. Ստալինը մինչև վերջ մերկացնելով բուխարինականների և տրոցկիստների այդ հայացքները, ցույց է տվել, որ «առաջին թեքումը կուլակի և ընդ-

[1] ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, II մաս, Երևան, 1955, էջ 598:

հանրապետ գյուղի կապիտալիստական տարրերի դերի նվաճեցումն է, կուլակային վտանգի կոծկումը։ Այս թեքումը ելնում է այն սխալ ենթադրությունից, թե նեպի զարգացումը չի տանում գեպի կապիտալիստական տարրերի աշխուժացումը գյուղում, թե կուլակը և առհասարակ կապիտալիստական տարրերը մեզանում անցնում են կամ արդեն անցել են պատմության դիրքը, թե գյուղում շերտավորում չի կատարվում, թե կուլակն անցյալի արձագանքն է, խորթվլակ և միայն այդ։

Ինչի՞ է հանգեցնում այս թեքումը։

Գործնականում այս թեքումը հանգեցնում է գյուղում եղած դասակարգային պայքարի ժխտմանը։

Երկրորդ թեքումը[1] գյուղում կուլակի և ընդհանրապես կապիտալիստական տարրերի դերը ուռճացնելն է, խոսքսան այդ տարրերի հանդեպ, ժխտում այն բանի, որ պրոլետարիատի և չքավորության դաշինքը միջակի հետ հնարավոր է և նպատակահարմար»[1]։

Կոմունիստական պարտիան իր կենտրոնական Կոմիտեի պլենումով մերկացնելով և վճռական հակահարված տալով բուխարինականներին, տրոցկիստներին ու մյուս թշնամիներին, ճիշտ կերպով պնահատեց սովետական գյուղում կատարվող շերտավորումն այն ժամանակ, շերտավորում, որը, ինչպես տեսանք տրամաբանորեն հակառակն էր կապիտալիստական գյուղում տեղի ունեցած շերտավորմանը և անհրաժեշտ հետևություններ հանեց դրանից։ Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ Սովետական պետությունն անհրաժեշտ նախապրյալներ էր ստեղծում անհատական տնտեսությունների և հետամնաց տեխնիկայի վրա հենված գյուղը սոցիալիստական ռելսերի վրա դնելու համար, մեր երկրում եղած կապիտալիստական տարրերի դեմ նոր գրոհ սկսելու համար։

Կուլակները, նեպմանները և մյուս հակասովետական տարրերը առանձնահատուկ կատաղությամբ պայքարում էին գների սովետական քաղաքականության դեմ, մի քաղաքականություն, որի նպատակն էր ապրանքաշրջանառության ծավալման միջոցով ավելի ու ավելի ամրապնդել գյուղի և քաղաքի միջև եղած կապը, բարվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, դրանով իսկ էլ ավելի հզորացնել պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային հիմքերը։ Մյուս կողմից գների սովետական քաղաքականությունը հետևողականորեն իրականացնում էր այդ ապրանքաշրջանառու-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 370։

թյան գործում կապիտալիստական-նէպմանական տարրերի սահմանափակման, աստիճանաբար նրանց դուրս մղման գիծը՝ պետական և կոոպերատիվ առևտրի ծավալման միջոցով։ Կուլակները, որոնց գաղափարախոսներն էին բուխարինականներն ու տրոցկիստները, կատաղի պայքար էին տանում նաև Սովետական պետության հարկային քաղաքականության դեմ։ Ինչպես նշել է Ի. Վ. Ստալինը, եթե Սովետական պետությունը հարկի ծանրությունը դրել էր կուլակների ուսերի վրա, ապա վերջիններս ամեն կերպ աշխատում էին դուրս պրծնել դրանից և հարկի ծանրությունը փոխադրել միջակների ու չքավորների ուսերի վրա։

Թշնամու կողմից Սովետական իշխանության դեմ մղվող պայքարը արտահայտվում էր նաև բանդիտական-տեռորիստական ակտերի միջոցով, որոնք ուղղված էին պարտիական-սովետական ակտիվ աշխատողների դեմ։

Այդպիսի բանդիտական-տեռորիստական ակտերից մեկն էր 1925 թ. հուլիսի 26-ին Վաղարշապատի գավառի Սամալարի գավառակի Ներքին Աղջաղալա գյուղում դաշնակցական-կուլակային թափթփուկների կողմից նույն գյուղի սովետի քարտուղար Մանուկ Խուշոյանի տեռորիստական սպանությունը։ Մ. Խուշոյանը գյուղի ակտիվ աշխատող էր։ Բայց գյուղսովետի քարտուղարությունից, նա զբաղվում էր ուսուցչությամբ և ընտրված էր գյուղի փոխադարձ օգնության Կոմիտեի նախագահ։ Ն. Աղջաղալա գյուղում այն ժամանակ դեռևս պարտիական կազմակերպություն չկար, իսկ ակտիվ աշխատողները շատ քիչ էին։ Օգտվելով դրանից, դաշնակցական-կուլակային տարրերը այստեղ ավելի աշխուժություն էին ցուցաբերում։ Որպես Սովետական իշխանությանը նվիրված և ղեկավար աշխատող, Մ. Խուշոյանը նկատում է, որ գյուղում Սովետական իշխանության թշնամիներն իրենց ստոր գործերով ամեն կերպ փորձում են դիմադրել Սովետական իշխանության ձեռնարկումներին, պրովոկացիոն միջոցներով դժգոհություն սերմանել գյուղացիների մեջ Սովետական իշխանության նկատմամբ։ Մ. Խուշոյանը իր շուրջը համախմբելով գյուղի աշխատավորներին, մերկացնում է թշնամու արարքները և անհաշտ պայքար է սկսում նրանց դեմ[1]։

Այդ պատճառով էլ դաշնակցական-կուլակային թափթփուկնե-

---

[1] *Ինչպես պարզվել է Մ. Խուշոյանի սպանության գործի դատավարության ժամանակ, Ն. Աղջաղալա գյուղի Սովետի այն ժամանակվա նախագահը դասակարգային թշնամու գործակալն է եղել։*

րը որոշում են տեռորիստական ակտ կազմակերպել Մ. Խուշոյանի դեմ, որը և կատարում են 1925 թ. հուլիսի 26-ի գիշերը՝ սպանելով նրան: Այդ տեռորիստական ակտի կազմակերպիչներն ու ղեկավարները եղել են օտարերկրյա իմպերիալիստների ստոր վարձկաններ դաշնակները [1]:

1926 թ. հոկտեմբերի 8—19-ը Երևանում տեղի է ունենում այդ սպանության կազմակերպիչների ու մասնակիցների դատավարությունը, որի ընթացքում կրկին անգամ մերկացվում է դաշնակների դեմքը՝ որպես հայ ժողովրդի և սովետական կարգերի կատաղի թշնամիների, որպես ամերիկա-անգլիական իմպերիալիստների ստոր վարձկանների:

Սովետական արդարադատությունն իր արժանի պատիժն է տալիս Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության կազմակերպիչներին ու մեղսակիցներին:

Պարտիական-սովետական ակտիվ աշխատողների դեմ դասակարգային թշնամու և նրա գործակալների կողմից տեռորիստական ակտեր են կազմակերպվում նաև ռեսպուբլիկայի մի շարք այլ վայրերում (Բասարգեչար, Դարալագյազ, Կոտայք և այլն), ակտեր, որոնց կազմակերպիչները նույնպես հայտնաբերվում և սովետական արդարադատության կողմից ստանում են իրենց արժանի պատիժը:

Դասակարգային պայքարը սուր կերպով արտահայտվում էր նաև քաղաքում: Այստեղ թշնամին գործադրելով տարբեր միջոցներ, ամեն կերպ փորձում էր ձախողել արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնումը, նոր գործարանների, էլեկտրակայանների կառուցումը և այլ շինարարությունները: Այդ նա կատարում էր սովետական ապարատում խցկված իր գործակալների՝ տրոցկիստների, բուխարինականների, ղինովևականների, բուրժուա-նացիոնալիստների և այլ թափթփուկների միջոցով: Թշնամու թաքնված գործակալները, օգտագործելով իրենց դիրքը, Սովետական իշխանության նկատմամբ աշխատավորների մեջ դժգոհություն սերմանելու նպատակով խաուճաշփոթություն էին մտցնում տարիֆային գործում, խախտելով աշխատավարձի սովետական քաղաքականությունը, պետության կողմից բանվորների և մյուս աշխա-

---

[1] *Տե՛ս դաշնակցական տեռորիստական գործը (նյութեր Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության դատավարությունից), Պետհրատ, Երևան, 1927, էջ 3:*

տավորների նյութական-կենցաղային պրոբլեմների բարելավման համար հատկացված գումարները ծախսում էին այլ, ոչ էական գործերում, կամ որտեղ հնարավոր էր, վատնում էին այն: Նրանք տարբեր մեքենայություններով ձգտում էին խանգարել աշխատանքային կարգապահությունը մեր սոցիալիստական ձեռնարկություններում, դրանով իսկ հարվածել արտադրության կազմակերպմանը և արտադրողականության բարձրացմանը: Ներգործելով բանվորների և մյուս աշխատավորների շարքերում եղած անկայուն ու հետամնաց որոշ շերտերի վրա, թշնամիներին հաջողվում էր այդ տարրերի միջոցով մեր արդյունաբերական ձեռնարկությունների և սովետական ապարատի այս կամ այն օղակում իրենց սեւ գործը կատարել: Հին կարգերից մնացած բյուրոկրատիզմը, որը տեղ էր դեռ սովետական ապարատի առանձին օղակներում, նույնպես հանդիսանում էր դասակարգային պայքարի արտահայտություններից մեկը: Թշնամին իր սատր նպատակների համար ամեն կերպ աշխատում էր օգտագործել մեր սովետական ապարատի որոշ օղակների և առանձին աշխատողների թուլությունները՝ դանդաղաշարժությունը, Կոմունիստական պարտիայի կողմից կարևորագույն քաղաքական-տնտեսական միջոցառումների կենսագործման գործում հանդես եկած ոչ ճկունությունը, այդ միջոցառումների կարևորության չըմբռնումը և իր ժամանակին դրանցից համապատասխան եզրակացություններ չհանելը և այլն:

Վերլուծելով դասակարգային պայքարի վիճակը Սովետական Միությունում, 1945 թ. հունիսին Սվերդլովի անվան համալսարանում արտասանած ճառում Ի. Վ. Ստալինը ցույց է տվել այդ պայքարի երեք պլուսավոր ճակատները մեր երկրում:

Բնորոշելով դասակարգային պայքարի առաջին ճակատի առանձնահատկությունները, Ի. Վ. Ստալինն ընդգծել է, որ արդյունաբերության պլուսավոր ճյուղերի, տրանսպորտի, վարկի աղգայնացման հիմքի վրա մեր երկրի տնտեսական անկախությունը, նրա արդյունաբերության, ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը արտասահմանյան կապիտալի մրցումից ապահովելու նպատակով Սովետական պետությունը սահմանեց և անշեղ կերպով կենսագործում է մի շարք հիմնական միջոցառումներ — արտաքին առևտրի մենաշնորհը, դյուղատնտեսական հարկը, դյուղատնտեսական մթերքների մթերման պետական ձևերը, պլանային սկզբունքի կիրառումը ժողովրդատնտեսության զարգացման մեջ ամբողջությամբ վերցրած: Այդ և մի շարք այլ միջոցառումների կեն-

ապագծման շնորհիվ սկսեց կարգավորվել արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների դների փոխհարաբերությունը։ Պրոլետարական պետությունը չէր կարող հրաժարվել այդ հիմնական միջոցառումներից, որովհետև այդ կետաներ դեպի մեր պետության տապալումը և մեր երկիրը կվերածեր կապիտալիստական երկրների ապրանքային գաղութի, որը արմատապես հակառակ էր ոչ միայն ՍՍՌՄ բանվոր դասակարգի ամենակենսական շահերին, այլև գյուղացիության մեծամասնության՝ աշխատավոր գյուղացիության ամենակենսական շահերին, նրանց նորից կանգնեցնելով աղքատացման, թալանման և բուժուազիայի ու կալվածատիրության կողմից ամենադաժան կեղեքման փաստի առաջ։ Այսպիսով, պրոլետարիատի և գյուղացիության շահերը արմատական հարցերում ընդհանուր էին։ Այդ պատճառով էլ գյուղացիության հիմնական մասսան՝ չքավոր ու միջակ գյուղացիությունը շահագրգռված չէր Սովետական պետության կողմից կենսագործվող վերհիշյալ միջոցառումների ոչնչացումով։ Ավելին. նա ցույց էր մեծ շահագրգռվածություն սոցիալիստական ուղու հաղթանակով ժողովրդական տնտեսության մեջ, սոցիալիզմի հաղթանակով մեր ամբողջ երկրում։

Ընդ դրանով էլ բացատրվում է այն հարցը, թե ինչու դնալով մեր երկրում ավելի ու ավելի էր ամրապնդվում պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը՝ առաջինի հեգեմոնիայով։

Դասակարգային պայքարի երկրորդ ճակատը հանդիսանում էր պայքարը պրոլետարիատի (Հանձին Սովետական պետության) և կուլակության միջև։ Այստեղ Սովետական պետության կողմից պայքարը դնում էր գյուղատնտեսական ապրանքների ապեկուլյատիվ դների լիկվիդացման, գյուղատնտեսության հարկի պլոտավոր ծանրությունը կուլակության վրա դնելու, որա հաշվին չքավոր ու միջակ գյուղացիության հարկը թեթևացնելու համար։ Այդ և մի շարք ուրիշ միջոցներով Սովետական պետությունը իրականացնում էր կուլակության սահմանափակման քաղաքականությունը։ Սակայն կուլակությունը կատաղաբար դիմադրում էր Սովետական պետության այդ միջոցառումներին. նա ամեն կերպ աշխատում էր չքավոր և միջակ գյուղացիությունից հացի պաշարները դնել և սպեկուլյատիվ դներով շուկա հանել՝ մեծ շահույթներ կորզելու նպատակով, ինչպես նաև ամեն կերպ ձգտում էր դիմադրել պետությանը և խուսափել բարձր հարկերից։ Դրան հասնելու համար կուլակները փորձում էին պետությունից թաքցնել ցանքատարածությունը

ների և բերքի չափը, անասունների քանակը իրենց տնտեսություններում, վարձու աշխատանքի օգտագործումը, այլ եկամուտները և այլն: Ինչպես տեսանք, նրանց դիմադրությունը որոշ շրջաններում նույնիսկ ընդունում էր բանդիտական կամ տեռորիստական բնույթ պարտիական-սովետական ակտիվ աշխատողների դեմ:

Հետևողականորեն կենսագործելով կուլակության սահմանափակման քաղաքականությունը և վճռական հակահարված տալով կուլակության հակասեփականական, կոնտրռևոլյուցիոն արարքներին, Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը այդ պայքարում իրենց շուրջն են համախմբում չքավոր ու միջակ գյուղացիությանը: Հենվելով չքավոր գյուղացիության վրա և ամուր դաշինք հաստատելով միջակ գյուղացիության հետ, ինչպես տեսանք, Սովետական պետությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մերկացնում և վճռական հակահարված էր տալիս ոչ միայն կուլակությանը, այլև նրանց իդեոլոգներ սրոցկիստներին, բուխարինականներին, բուրժուական նացիոնալիստներին ու մյուս թաիլթիուկներին:

Դասակարգային պայքարի երրորդ ճակատը, այդ պայքարն էր մեկ կողմից չքավորության, նախ և առաջ բատրակների, մյուս կողմից կուլակության միջև: Այս պայքարը կրում էր բացահայտ բնույթ: Սակայն այս ճակատն իր մասշտաբով այնքան էլ ընդարձակ չէր, ինչպես նախորդ երկու ճակատները:

Սովետական Հայաստանում բատրակության և չքավորության պայքարը կուլակության դեմ կազմակերպված տանելու նպատակով բատրակությունը համախմբված էր բատրակկոմների, իսկ չքավորությունը՝ չքավորական խմբակների մեջ: Այդ կազմակերպությունները, որոնք կուլակության դեմ պայքարում էին միասնաբար և գործում էին Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության ղեկավարության ներքո, իր ժամանակին դյուղում խոշոր դեր կատարեցին դասակարգային թշնամու և նրա գործակալների դեմ մղած պայքարում:

* *

Գյուղում աշխատանքը ուժեղացնելու, չքավոր ու միջակ գյուղացիության ակտիվությունը բարձրացնելու, գյուղի և քաղաքի դերը ամրապնդելու նպատակով, ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում Կոմունիստական պարտիան

տնտեսական, վարչա-քաղաքական և կուլտուր-լուսավորական գծով մի շարք կարևորագույն միջոցառումներ է մշակում և իրականացնում: Տնտեսական գծով միջոցառումները առաջին հերթին հանգում էին հետևյալին. ռազմական կոմունիզմի մնացորդների լիկվիդացումը գյուղում, արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների գների ճիշտ քաղաքականության հետևողական իրականացումը, գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարի կրճատումը, գյուղացիության միլիոնավոր մասսաների կոոպերացումը նախ և առաջ գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի գծով, գյուղին առավելագույն չափով տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելը, էլեկտրիֆիկացիայի պլանի կիրառումը և այլն: Գյուղի և քաղաքի ապրանքաշրջանառությունն ամրացնելու նպատակով, որպես վարչա-քաղաքական միջոցառումներ, **պարտիան** անհրաժեշտ էր համարում քաղաքում և գյուղում ավելի ծավալել սովետական դեմոկրատիան, աշխուժացնել սովետների աշխատանքները, էժանացնել պետական ապարատը, նրանից զատ մղել բյուրոկրատիզմի մնացորդները և ինչպես տարբերը, այնպես ապարատը լիովին մերձեցնել միլիոնավոր մասսաների հետ, այն դարձնելով ավելի մասսայական և ավելի հզոր:

Կառավարության որոշմամբ 1925 թ. տեղի է ունենում գյուղատնտեսական հարկի իջեցում: Ձնշվում և կարգավորվում են վարձակալության և վարձու աշխատանքի հարցերը: Հօգուտ բատրակության, չքավոր ու միջակ գյուղացիության: Պետության օգնությամբ զգալի չափով ընդարձակվում և ամրապնդվում էր գյուղատնտեսական վարկի սիստեմը, ավելի լայն մասշտաբներ էր ընդունում կուլտուրական շինարարության գործը:

Սովետների գործունեությունը աշխուժացնելու նպատակով. Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ գյուղում խոշոր աշխատանք է ծավալվում անպարտիական ակտիվի կադրերի առնչման և ծավալման համար, կադրեր, որոնց միջոցով Սովետները պետք է ամուր կապեր առնչեին և իրոք առնչեցին միլիոնավոր գյուղացիական մասսաների հետ: Խոշոր չափով բարձրանում էր չքավոր ու միջակ գյուղացիության քաղաքական ակտիվությունը:

Դասակարգային ինչպես նաև մլվող գյուղացիության համախմբման ու նրանց քաղաքական ակտիվության բարձրացման գործում կարևորագույն նշանակություն ունեցան չքավորական խմբերը, որոնք առնչվեցին Ռ(բ)Պ Կենտկոմի 1925 թ. Հոկտեմբերյան պլենումի որոշմամբ: Գնահատելով պար-

տիայի այդ միջոցառումը, Ի. Վ. Ստալինը 1925 թ. դեկտեմբերին ասել է.

«Ինչի՞ համար էր հարկավոր շքավորական խմբեր կազմակերպելու լոզունգը։ Այդ հարկավոր էր, որպեսզի վերացնենք շքավորության փոշիացածությունը և հնարավորություն տանք նրան՝ կոմունիստների օգնությամբ կազմակերպվելու որպես ինքնուրույն քաղաքական ուժ, որը կարող է պրոլետարիատի համար կազմակերպված հենարան ծառայել գյուղում կուլակի դեմ մղվող պայքարում, միջակ գյուղացիության համար մղվող պայքարում»[1]։

Սովետական Հայաստանում շքավորական խմբերի ստեղծման աշխատանքները սկսվում են 1925 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից։ Նրանց աշխատանքները լայն ծավալ են ստանում 1926 թ. սկզբներից։ Իրենց շուրջը համախմբելով գյուղական բատրակներին, շքավորությանը, հատկապես նրա ակտիվ մասին, շքավորական խմբերը, միջակ գյուղացիության հետ միասին, պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ գյուղում մեծ աշխատանք են ծավալում սովետների աշխուժացման, գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ ձևերի, գյուղական փոխադարձ օգնության կոմիտեների, վարկային ընկերությունների աշխատանքների բարելավման և մի շարք այլ բնագավառներում։ Նրանք առանձնապես ակտիվ դեր են կատարում Սովետների ընտրությունների ժամանակ։ Այդ խմբերը, միացած միջակ գյուղացիության հետ, Սովետների ընտրությունների ժամանակ ակտիվ պայքար էին տանում Սովետներում արժանավոր ու նվիրված մարդիկ ընտրելու համար։ Բատրակների հետ միասին նրանք միասնաբար առաջադրում և անց էին կացնում իրենց ներկայացուցիչների թեկնածությունները, դրանով իսկ հակահարված տալով կուլակային և թշնամական մյուս տարրերի փորձերին՝ Սովետները թափանցելու համար։

Գյուղում աշխատանքները բարելավելու և պարտիական վերկավարությունը ամրապնդելու նպատակով, պարտիայի 14-րդ կոնֆերենցիան (1925 թ. ապրիլ) որոշում է Սովետական Միության մասշտաբով քաղաքից գյուղ աշխատանքի ուղարկել 3000 պրոպագանդիստ, 1000 պարտիական ղեկավար աշխատող և 2000 կոմերիտական աշխատող։

Այդ որոշման կատարումն ապահովելու նպատակով Ռկ(բ)Պ Կենտկոմը բոլոր պարտիական կազմակերպություններին, պար-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 367։

տիայի բոլոր անդամներին նամակ է ուղարկում։ Այնտեղ ասված է.

«Ներկա մոմենտում կուսակցության առաջ ծառացած կարևորագույն հարցերից մեկը՝ գյուղական կազմակերպություններին կուսակցական ուժերով ամեն կերպ օգնելն է։

Գյուղը 3000 պրոպագանդիստ, 2000 կոմերիտական աշխատող և 1000 հրահանգիչ (գավկոմների համար) ուղարկելու վերաբերյալ 14-րդ կուսկոնֆերենցիայի հանած որոշումը կուսակցական կազմակերպությունների մարտական և ամենապատասխանատու անելիքն է»[1]։

Ի կատարումն պարտիայի այդ որոշման, 1925 թ. ՀԿ(բ)Պ Երևանի կազմակերպությունը իր շարքերից առանձնացնում և գյուղում աշխատանքի է ուղարկում 26 լավագույն, ստուգված պարտիականներ[2]։ Այդ փոքրիկ ջոկատը այն ժամանակ զգալի գործ կատարեց գյուղական մի շարք պարտիական կազմակերպություններին օգնելու, նրանց աշխատանքների բարելավման գնագավառում։ Իրենց շարքերից լավագույն կոմունիստներին գյուղում աշխատանքի են ուղարկում նաև Լենինականի, Ղարաքիլիսայի, Դափանի, Ալավերդու պարտիական կազմակերպությունները։

Որպես քաղաքի կողմից գյուղին օգնելու ձևերից մեկը, պարտիայի որոշմամբ այդ ժամանակ լայն ծավալ է ընդունում շեֆական աշխատանքը, արդյունաբերական ձեռնարկությունների, բարձրագույն դպրոցների և սովետական մյուս հիմնարկների շեֆությունը գյուղի նկատմամբ։ Այդ շեֆության նպատակն էր գյուղում մասսայական-քաղաքական և կուլտուրական աշխատանքի ծավալման միջոցով օգնել աշխատավոր գյուղացիությանը պարտիայի և Սովետական իշխանության որոշումների կատարման գործում, ամրապնդել կապը քաղաքի և գյուղի միջև։ Շեֆական շատ կազմակերպություններ ենթաշեֆ գյուղերին օգնում էին գրականությամբ, կուլտուր-լուսավորական այլ միջոցներով, գյուղատնտեսական գործիքներով, նրանց վերանորոգումով և այլն։

Երևանի, Լենինականի և ռեսպուբլիկայի մյուս քաղաքների աշխատավորները, ծավալելով շեֆական գործը, դրա միջոցով զգալի աշխատանք են կատարում գյուղին օգնելու, այնտեղ կուլտուրական աշխատանքների բարելավման, պարտիայի և կառավարության

---

[1] «Կոմունիստ» ամսագիր, օրգան ՀԿ(բ)Պ Կենտկոմի և Երևանի Կոմիտեի, 1925, № 3—4, էջ 21։

[2] Նույն տեղում, էջ 29։

580—20

որոշումների մասսայականացման ու կենսագործման, աշխատավոր գյուղացիության ակտիվության բարձրացման և դրանով իսկ քաղաքի ու գյուղի միջև զոդումն ամրապնդելու գծով։

* * *

Այժմ համառոտակի ծանոթանանք ստդյունաբերության վերականգնման արդյունքներին ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջում։

Որպես կարևոր մոմենտ, անհրաժեշտ է նշել, որ Սովետական Հայաստանի արդյունաբերությունը 1921—1925 թթ. չի սահմանափակվել միայն վերականգնումով։ Ձնի վերականգնման զուգընթաց, տեղի է ունեցել արդյունաբերության մի շարք նոր ճյուղերի ստեղծումը (տեքստիլ, կարբիդի արդյունաբերություն, էլեկտրակայանների շինարարություն, շինանյութերի արդյունաբերություն, պանրագործարանների կառուցում և այլն)։ Այդ ճյուղերից մի քանիսի շինարարությունը 1925 թ. դեռևս չէր ավարտվել՝ Լենինականի տեքստիլ գործարան, Երևանի կաթսիաի գործարան, էլեկտրակայան։ Նրանց մի մասի վրա կատարված կապիտալ ներդրումները, որոնք խոշոր գումարների էին հասնում, 1925 թ. դեռևս իրենց արտադրական էֆեկտով չէին կարող արտահայտվել։ Այդ տեղի է ունենում հետագա տարիներին։

Ինչպես տեսանք, ալկնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները սկսվում են որոշ ուշացումով՝ 1924 թվականից, երբ, շնորհիվ Անդրկովկասյան Ֆեդերացիայի և ՍՍՌՄ-ի կազմակերպման ու սովետական ժողովուրդների եղբայրական համագործակցության ամրապնդման, զգալի չափով բարելավվել էր ռևսպուբլիկայի տնտեսական-ֆինանսական դրությունը։

Կարևորագույն նշանակություն տալով ալկնձարդյունաբերության վերականգնման գործին, Հայաստանի Կոմունիստական պարտիան, կառավարությունը, բացի նրա ֆինանսական ապահովությունից, մոբիլիզացնում են բոլոր հնարավորությունները արագ կերպով վերականգնելու ռևսպուբլիկայի արդյունաբերության այդ գլխավոր ճյուղը։ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, որոնք հատկապես արտահայտվում էին թույլ տեխնիկական վինվածության, անհրաժեշտ սարքավորումների բացակայության, ինժեներա-տեխնիկական անձնակազմի և բանվորական որակյալ ուժի պակասության մեջ և այլն, Հայաստանի Կոմունիստական պար-

միայն ղեկավարության ռեսպուբլիկայի պղնձարդյունաբերության աշխատողները հաստատ կերպով առաջ էին տանում նրա վերականգնման գործը։ Դրա շնորհիվ կարճ ժամանակամիջոցում ստացվում են լավագույն արդյունքներ։ Արագ կերպով աճում էր նրա մեջ աշխատող բանվորների քանակը և բարձրանում էր պղնձի արտադրանքը։ 1924—25 տնտեսական տարում բանվորների միջին թիվը Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ եղել է 792 հոգի, իսկ հաջորդ տնտեսական տարում այն հասել էր 2.082-ի [1]։ Ճիշտ է, այդ թվերը դեռևս բավական հետու էին 1913 թ. մակարդակից, բայց դրանք ցույց էին տալիս այն կարևոր փաստը, որ պղնձարդյունաբերությունը բռնել էր արագ և անշեղ վերականգնման ուղին, որի շնորհիվ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հասավ նախապատերազմյան մակարդակին և հետագայում մեծ չափով անցավ նրանից։

Պղնձարդյունաբերությունից հետո, այն ժամանակ արդյունաբերության մյուս կարևոր ճյուղը հանդիսանում էր գինու-ապրանկունյակի արտադրությունը, որի վերականգնման արդյունքները 1925 թ. հետևյալ պատկերն ունեին։ Ինչպես նշեցինք նախորդ գլխում, մինչև 1924 թ. արդյունաբերության այս ճյուղում աշխատում էր միայն Երևանի «Արարատ» գործարանը՝ հին բազայի վրա։ Այդ գործարանի վերականգնման և խաղողի բերքի ավելացման, նրա մշակումն ապահովելու նպատակով նույն թվականին տեղի է ունենում «Արարատ» գործարանի ընդարձակումը։ Բացի դրանից, 1924 թ. վերականգնվում և գործարկվում են Դամարլուի գինու գործարանը և Դավալուի գինեգործական բաժանմունքը։ 1924—25 տնտեսական տարում ռեսպուբլիկայում գինու-ապրանկունյակի արտադրության մեջ աշխատում էին 101, իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 114 բանվորներ [2]։ Այս ճյուղի ընդհանուր արտադրանքի արժեքը (նախապատերազմյան դներով) եղել է՝ 1924—25 տնտեսական տարում 965,6 հազար ռուբլի, որը կազմում է նախապատերազմյանի 55,3 տոկոսը, իսկ բանվորների տարեկան միջին քանակը եղել է նույն տնտեսական տարում նախապատերազմյանի 57,7 տոկոսը [3]։ Ինչպես ցույց են տալիս թվերը, 1925 թ. գինու-

---

[1] Տե՛ս «Հայաստանի Սովետական տնտեսություն 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 26։

[2] Նույն տեղում, էջ 27։

[3] Նույն տեղում։

ապիրտի-կոնյակի արտադրությունը նույնպես չէր հասել նախապատերազմյան մակարդակին: Այդ դլխավորապես բացատրվում է նրանով, որ դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության և երկարատև պատերազմների հետևանքով երկրում խիստ չափով տուժել էր նաև այդեղործությունը, հատկապես խաղողի մշակությունը: Մեծ չափով ընկել էր նրա բերքատվությունը, որի վերականգնման, բերքատվության բարձրացման համար համեմատաբար երկար ժամանակ էր պետք: Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ձեռք առած լուրջ միջոցառումների շնորհիվ հետագա տարիներին արագ կերպով բարելավվում է խաղողի մշակության գործը, բարձրանում նրա միջին բերքատվությունը և դրանով իսկ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում դինու-սպիրտի-կոնյակի արտադրության վերականգնումը ավարտելու և նրա հետագա զարգացումն ապահովելու համար:

Կաշվի մշակման արդյունաբերությունը այդ ժամանակ ավարտել էր իր վերականգնումը: 1924—25 տնտեսական տարում նրա մեջ աշխատում էին 108 բանվոր, 1925—26 տնտեսական տարում՝ 96: Արդյունաբերության այդ ճյուղի ընդհանուր արտադրանքի արժեքը նախապատերազմյան դներով 1924—25 տնտեսական տարում եղել է 264,6 և 1925—26 տնտեսական տարում՝ 396,0 հազար ռուբլի, որը կազմում էր նախապատերազմյան արտադրանքի արժեքի 99 տոկոսը [1]:

Բամբակազման արդյունաբերությունը նույնպես ավարտել էր իր վերականգնումը և նույնիսկ անցել նախապատերազմյան մակարդակից: Նախապատերազմյան դներով նրա ընդհանուր արտադրանքի արժեքն է եղել 1924—25 տնտեսական տարում՝ 2.645 հազար ռուբլի կամ նախապատերազմյան արտադրանքի արժեքի 81,5 տոկոսը, իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 3.325 հազար ռուբլի կամ նախապատերազմյան արտադրանքի արժեքի 102 տոկոսը [2]:

Արագ կերպով առաջ էր գնում պանրատործարանների շինարարությունը և նրա արտադրանքի աճումը, որի շնորհիվ այդ ժամանակ ոչ միայն ավարտվել էր նրա վերականգնումը, այլև այն իր արտադրանքով զգալի չափով անցել էր նախապատերազմյան մա-

---

[1] Տե՛ս «Հայաստանի Սհհ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ», էջ 26 և 27:

[2] Նույն տեղում:

կարգակից։ 1924—25 տնտեսական տարում նրա արտադրանքի արժեքը նախապատերազմյան դներով կազմել է 1913 թ. արտադրանքի արժեքի 108,3 տոկոսը, իսկ 1925—26 տնտեսական տարում 111,8 տոկոսը[1]։

1913 թ. համեմատությամբ 1925—26 տնտեսական տարում ռևոպուբլիկայում էլեկտրէներգիայի արտադրությունը նոսպատկվել էր։ Պոլիգրաֆ արդյունաբերության արտադրանքը արագ կերպով աճելով, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ, ավելացել էր մոտ տասն անգամ, փայտամշակության արտադրանքը ավելի քան 3,5 անգամ։ Արագ կերպով աճում էին կապիտալ ներդրումները ռևոպուբլիկայի արդյունաբերության մեջ։ Միայն 1924—25 տնտեսական տարում արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի բնագավառում կապիտալ ներդրումների գումարը կազմել է 2.706 հազար ռուբլի[2], իսկ 1925—26 տնտեսական տարում այդ գումարն աճելով, հասել էր 4.051 հազար ռուբլու[3]։

Այդ բոլորի հետևանքով ռևոպուբլիկայի արդյունաբերության գլխավոր ճյուղերի տեսակարար կշիռը՝ նրանց արտադրանքի արժեքային արտահայտությամբ, 1913 թ. համեմատությամբ 1924—25 և 1925—26 տնտեսական տարիներում կրել է հետևյալ փոփոխությունները։

Արդյունաբերության գլխավոր ճյուղերի տեսակարար կշիռը ընդհանուր արտադրանքի մեջ՝ pus նախապատերազմյան արժեքի (տոկոսներով)[4]

ՀՀԱ	Արդյունաբերության ճյուղը	1913 թ.	1924—25 տնտեսական տարում	1925—26 տնտեսական տարում
1	Պղնձի արդյունաբերություն . . .	34,2	7,6	8,0
2	Գինու — օղերի — կոնյակի արտադրություն	17,5	16,2	10,8

[1] Տե՛ս «Հայաստանի Սովհ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 26—27։

[2] См. «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», стр. 39.

[3] Նույն տեղում։

[4] Տե՛ս «Հայաստանի Սովհ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ», էջ 30։

Սկիզբը նախորդ էջում

№№	Արդյունաբերության ճյուղը	1913 թ.	1924—25 տնտեսական տարում	1925—26 տնտեսական տարում
3	Համթակազուման արդյունաբերություն	32,5	44,5	45,4
4	Պանրագործարաններ	5,0	9,1	7,6
5	Կաշվի մշակման արդյունար. . . .	4,0	4,5	5,4
6	Պոլիգրաֆ արդյունաբերություն . .	0.5	4,8	5,9
7	Էլեկտրէներգիայի արդյունաբերություն	0,4	1,5	1,7
8	Տեքստիլ արդյունաբերություն . .	—	0,4	3,3
9	Արդյունաբերության մնացած ճյուղեր (օճառի արտ., սիմգայի, սրողոցանյութերի արտադր. և այլն) .	5,9	11,4	11,9
		100,0	100,0	100,0

Բերված աղյուսակից երևում է, որ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ 1913 թ. համեմատությամբ 1924—1926 թվականներին զգալի չափով նվազել էր պղնձարդյունաբերության տեսակարար կշիռը։ Այդ հետևանք էր նախ և առաջ խոպան քայքայված պղնձարդյունաբերության վերականգնումն ուշ սկսելուն։ Սակայն արագ վերականգնման շնորհիվ պղնձարդյունաբերությունը սկսում է աստիճանաբար բարձրացնել իր տեսակարար կշիռը արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ։

Այնուհետև, աղյուսակը ցույց է տալիս, որ գինու-սպիրտի-հոնյակի արտադրության տեսակարար կշիռը նույնպես որոշ չափով պակասել էր, որ զգալի չափով բարձրացել էր բամբակաղրտման, պոլիգրաֆ արդյունաբերության, պանրագործարանների տեսակարար կշիռը, որ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ իրենց տեսակարար կշռով սկսում էին որոշ տեղ գրավել արդյունաբերական նոր ճյուղերը՝ տեքստիլ արդյունաբերությունը, չինանյութերի արտադրությունը և այլն։

Վերջապես, ինչպես ակնառու կերպով ցույց են տալիս թվերը, 1921—1925 թթ. Սովետական Հայաստանում արդյունաբերական հին ձեռնարկությունների վերականգնման դուրգնթաց, մեկ կողմից նրանց մի մասը զգալի չափով ընդարձակվել էր, մյուս կողմից, տեղի էր ունենում նոր ճյուղերի — արդյունաբերական նոր ձեռ-

նարկությունների շինարարությունը, որը ավելի լայն ծավալ է ընդունում հետագա տարիներին։

Հայկական ՍՍՌ-ի խոշոր արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1925—26 տնտեսական տարում, հավասար է եղել նախապատերազմյան արդյունաբերության ընդհանուր արտադրանքի 74,4 տոկոսին։ Իսկ ամբողջ արդյունաբերության արտադրանքը 1925 թ. կազմում էր նախապատերազմյան արդյունաբերության արտադրանքի 75,5 տոկոսը։

Սովետական Հայաստանի արդյունաբերության այդպիսի արագ ընթաց վերականգնումը արդյունք էր Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման, սովետական ժողովուրդների միջև հաստատված եղբայրական համագործակցության և առա մեծ ժողովրդի մշտական օգնության, որը դնալով ավելի ու ավելի աճում էր։

Հաջող կերպով առաջ էր գնում նաև ռևոլուցիկայի երկաթուղային տրանսպորտի վերականգնումը, նրա աշխատանքների բարելավումը։ 1922 թ. համեմատությամբ, վագոնների վերանորոգումն 1925 թ. ավելացել էր 3,8 անգամ, շոգեքարշերինը՝ 5,2 անգամ։ Վերանորոգվել էին հին գծերը և քանդված ու քայքայված շատ կամուրջներ։ Իր աշխատանքներով երկաթուղային տրանսպորտն արդեն հիմնականում կարողանում էր ապահովել արագ կերպով աճող բեռների և մարդկանց փոխադրումները։ Զգալի չափով ավելացել էր վագոնների և շոգեքարշերի քանակը։

1925 թ. մարտին Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների 4-րդ համագումարը լսում է ՀՍՍՌ ժողովրդական Տնտեսության խորհրդի վերկուցումը ռևոլուցիկայի արդյունաբերության և տրանսպորտի վերականգնման աշխատանքների ընթացքի մասին։ Այդ զեկուցման առթիվ ընդունված որոշման մեջ համագումարը նշել է, որ խոշոր աշխատանքներ են կատարված ռևոլուցիկայի արդյունաբերության և տրանսպորտի վերականգնման, ինչպես նաև արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման գործում։ Իր որոշման մեջ համագումարը կառավարության առաջ խնդիր է դնում մեծ թափով առաջ տանել պղնձարդյունաբերության վերականգնումը և զարգացումը, լայնացնել պեմզայի արտադրությունը, արագացնել Լենինականի տերմիկ գործարանի կառուցումը, ընդարձակել գինու-սպիրտա-կոնյակի արդյունաբերությունը, արագ տեմպերով առաջ տանել Երևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանների կառուցման գործը, ըն-

դարձակել կաշվի արդյունաբերությունը և Երևանի մեխանիկական գործարանը։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 4-րդ համագումարը (1925 թ. դեկտեմբեր) ամփոփելով ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքները ռեսպուբլիկայում, այդ մասին իր ընդունած բանաձևում նշել է.

«Կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը մեր երկրում առաջ բերեց տնտեսական վերելք։ ... Ընթացիկ տարում մեր տնտեսությունն ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը։ Տնտեսության բարձրացումը առաջադրում է մեզ արագացնելու ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերի զարդացումը. ներկայումս կուսակցության համար իր ամբողջությամբ դրված է այն խնդիրը, որ ավելացվեն մեր տնտեսության մեջ սոցիալիստական էլեմենտները ինչպես քաղաքում, նույնպես և դյուղում, որի համար համագումարն առաջարկում է ձեռք առնել մի շարք տնտեսական ձեռնարկումներ»[1]։

Այդ խնդիրները մեծ հաջողությամբ կենսագործվում են հետագա տարիներին։

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Հայկական ՍՍՌ-ում նշանակալից հաջողություններ էին ձեռք բերվել Սովետական պետական և կոոպերատիվ առևտրի, ապրանքաշրջանառության ծավալման գործում։

Ընդհանուր ապրանքաշրջանառությունը Հայաստանում եղել է 1923—24 տնտեսական տարում 31 միլիոն ռուբլի, որից մեծածախ՝ 11,5 միլիոն ռուբլի, մանրածախ՝ 19,5 միլիոն ռուբլի։ Արագ կերպով աճելով, նրա ընդհանուր դումարը 1925—26 տնտեսական տարում հասել էր 74 միլիոն ռուբլու, որից 39,7 միլիոնը մեծածախ, 34,3 միլիոնը մանրածախ[2]։ Բերված թվերից ակնառու կերպով երևում է, նախ՝ թե ռեսպուբլիկայում ինչպիսի արագությամբ է աճել ապրանքաշրջանառությունը, երեք տարում ավելանալով մոտ երկու և կես անգամ և երկրորդ՝ ինչպես է մեծացել նրա մեջ մեծածախ առևտրի տեսակարար կշիռը, 1923—24 տնտեսական տարվա մոտ 28 տոկոսից 1925—26 տնտ. տարում հասնելով մոտ

---

[1] ՍՄԿՊ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, 1925, ֆ. 1, գ. 1, թ. 336։

[2] Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 44։

60 տոկոսի։ Ըստ որում, մեծածախ առևտրի մեջ պետական առևտուրը կազմել է 1923—1924 տնտեսական տարում՝ 73,9, իսկ 1924—25 տնտեսական տարում՝ 77,8 տոկոս[1]։ Արագ կերպով աճում էր նաև կոոպերացիայի տեսակարար կշիռը մեծածախ առևտրի մեջ։ Եթե 1923—24 տնտ. տարում նրա տեսակարար կշիռը մեծածախ առևտրի ընդհանուր շրջանառության մեջ կազմում էր 8,7 տոկոս, ապա 1924—25 տնտ. տարում այն հասել էր 11 տոկոսի[2]։ Մեծածախ առևտրի մեջ պետական և կոոպերատիվ առևտրի բաժինը 1925—26 տնտեսական տարում կազմում էր 89,9 տոկոս, իսկ մասնավոր կապիտալը՝ 10,1 տոկոս (1923—24 տնտեսական տարում այն եղել է 17,4 տոկոս)[3]։ Այդ նշանակում է, որ ինչպես բոլոր, նույնպես և մեծածախ առևտրի բնագավառում մրցության մեջ մասնավոր կապիտալը չէր դիմանում և դուրս էր մղվում տապարեզից և նրա փոխարեն հաստատ կերպով աճում ու զարգանում էր սոցիալիստական սեկտորը։

Պատկերը որոշ չափով այլ էր մանրածախ առևտրի բնագավառում։ Նրա մեջ պետական առևտրի տեսակարար կշիռը 1923—24 տնտեսական տարում եղել է 7,7, իսկ կոոպերացիայինը՝ 30,8 տոկոս[4]։ Շարունակելով ծավալուն պայքարը մասնավոր կապիտալի դեմ նաև այս բնագավառում, պետական և կոոպերատիվ առևտուրը կարճ ժամանակամիջոցում հասնում են զգալի հաջողությունների։ Նրանց տեսակարար կշիռը մանրածախ առևտրի մեջ 1923—24 տնտեսական տարվա 38,5 տոկոսի փոխարեն, 1925—26 տնտեսական տարում հասել էր 49 տոկոսի[5]։

Բերված թվերից երևում է, որ չնայած պետական ու կոոպերատիվ առևտրի դիրքերի ամրապնդմանը և անշեղ աճմանը նաև մանրածախ առևտրի մեջ, բայց այնտեղ դեռևս զգալի դեր էր խաղում մասնավոր կապիտալը, որի տեսակարար կշիռը մանրածախ առևտրում 1925—26 տնտեսական տարում կազմում էր 51 տոկոս։ Դրանից հետևում է, որ հետագա տարիներում պետք է շարունակվեր և իրոք շարունակվեց սոցիալիստական սեկտորի կողմից ծավալուն պայքարը առևտրի, հատկապես մանրածախ առևտրի բնա-

---

[1] Տե՛ս «Հայաստանի Սհշ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 45։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 16։

[5] Նույն տեղում։

գավառից մասնավոր կապիտալը դուրս մղելու, պետական ու կոոպերատիվ առևտրի հաղթանակը մինչև վերջ ապահովելու համար։ Ջարգացման հետագա ընթացքը ցույց է տալիս, որ այդպես էլ լինում է։

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և մյուս ճյուղերի վերականգնման ղուգընթաց ռեսպուբլիկայում մեծ չափով ավելացել էր բանվոր-ծառայողների թիվը։ Այդ մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը.

Ինչպես իր տեղում տեսանք, եթե 1913 թ. Հայաստանում արդյունաբերության մեջ աշխատել են 4956 բանվոր[1], ապա 1925—26 տնտեսական տարում այդ թիվը հասել էր 6000-ի։ Նույն տնտեսական տարում տրանսպորտի և կապի բնագավառում աշխատում էին 5000 բանվոր-ծառայողներ, շինարարության մեջ 4400, պետական հիմնարկ ձեռնարկներում և պետական-կոոպերատիվ առևտրի ցանցում՝ 12300 հոգի, ընդամենը 27.700 հոգի[2]։

1925 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տոնում են երկրում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձը։ Ամփոփելով անցած հինգ տարիների ընթացքում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իրենց խաղաղ ստեղծագործական աշխատանքի արդյունքները, ռեսպուբլիկայի աշխատավորները նոր թափով առաջ էին տանում սոցիալիստական շինարարությունը։

Սովետական Հայաստանի աշխատավորների տոնը, նրանց ձեռք բերած հաջողությունները անցած հինգ տարիների ընթացքում ջերմորեն ողջունում են եղբայրական սովետական ժողովուրդները, ՍՍՌՄ-ի Կենտգործկոմը, Ռկ(բ)Պ Անդրկովկասյան երկրային Կոմիտեն ու Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։

«Սրանից ուղիղ հինգ տարի առաջ խորհրդային իշխանությունը քայքայված, ավերված ու արյունլվա Հայաստանին խլեց նրա արյունռուշտ թշնամիների ձեռքից — ասված է կոմունիստական կազմակերպությունների Անդրկովկասյան երկրային Կոմիտեի քարտուղար Ս. Օրջոնիկիձեի ողջույնի հեռագրում։

Այժմ, մի հետադարձ հայացք ձգելով անցած տարիների վրա, մենք հպարտությամբ ենք արձանագրում, որ մեր կուսակցության

---

1 См. «Соц. строительство Армянской ССР», стр. 29.

2 См. «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», стр. 42.

ջանքերով Հայաստանի աշխատավորները խաղաղ կյանք են թևակոխել և այժմ զբաղված են իրենց քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնումով: Հայաստանի աշխատավոր բանվորն ու գյուղացին զարմանալի եռանդով ու տոկունությամբ վերականգնելով իրենց ավերված տնտեսությունը, հիացմունք են պատճառում իրենց բոլոր բարեկամներին: Այնտեղ, որտեղ միայն ավերակներ էին, այնտեղ այժմ կառուցված են և դեռ կառուցվում են նոր գյուղեր ու ավաններ... .

Ողջունում եմ ձեզ, թանկագին ընկերներ, Հայաստանի աշխատավորության, ձեր նվաճումների համար և արտանց ցանկանում եմ ձեզ նորանոր հաջողություններ, նոր ուժ ու եռանդ ժողովրդական տնտեսության վերականգնման ասպարեզում»[1]:

* * *

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության արագ ընթաց վերականգնումը և սոցիալիստական շինարարության առաջին հաջողությունները ակնառու կերպով ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը, ձեռք բերելով ազատություն, դառնալով իր հայրենիքի իսկական տերը, Սովետական Միության բազմազգ և բազմամիլիոն ժողովուրդների օգնությամբ կարճ ժամանակամիջոցում ավերված երկիրը ոտքի կանգնեցրեց:

Սովետական Հայաստանի հաջողությունները հայտնի էին ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում:

Նվաճողական-իմպերիալիստական պատերազմների և բյուրքական զավթիչների բարբարոսություններին զոհ դարձած և իրենց հայրենիքից հեռացած հարյուր հազարավոր հայ աշխատավորներ, որոնք շահագործվում ու տառապում էին կապիտալիստական տարբեր երկրներում, մեծ ուշադրությամբ հետևում էին Սովետական Հայաստանի զարգացման ու նոր, սոցիալիստական կյանքի կառուցման ընթացքին: Հակառակ ժողովրդի ոսոխիմ բշնամի դաշնակիների և մյուս կոնտրռևոլյուցիոն ուժերի ամեն տեսակի հակասովետական պրոպագանդայի, արտասահմանյան հայ աշխատավորությունը մեծ խանդավառությամբ ողջունում է Սովետական Հայաստանի առաջին հաջողությունները և հայտնում իր պատրաստակամությունը՝ սիրելի հայրենիքում մասնակից դառնալու սոցիալիս-

[1] «Խորհրդային Հայաստան», 1925, 29 նոյեմբերի:

տական շինարարության մեծ գործին։ Այդ ժամանակվանից արտասահմանյան հայության մեջ ավելի ծավալուն շարժում է սկսվում հայրենիք վերադառնալու համար։

Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի տարբեր երկրներում գտնվող հայ աշխատավորության կողմից Սովետական Հայաստանի կառավարության անունով բազմաթիվ դիմումներ ու նամակներ են ուղարկվում՝ հայրենիք վերադառնալու թույլտվություն ստանալու համար։

«Մենք, համաշխարհային պատերազմի և դրամատեր պետության ննջեցյալ քաղաքականության զոհերս,— ասված է ՀՍՍՌ կառավարության անունով ուղարկված դիմումներից մեկում,— քաջ համոզված ենք, որ վերջնական ու ապահով բնակության համար միակ հարմար վայրն է Հայաստանը, որ օժտված է ներկայիս աշխատավորության շահերը պաշտպանող և ընկերավարական օրենսդրությամբ օժտված վարչությամբ մը։

Մեր քայքայված բույներուն տեղ նորերը կառուցելու, մեր քայքայված տնտեսությունը վերականգնելու միակ հնարավորությունն ու միջոց մենք կգտնենք այն, որ հաստատվենք Հայաստանի մեջ և հոն ապրինք որպես պարկեշտ ու աշխատավոր քաղաքացիներ, մասնակցելով վերաշինության ընդհանուր գործին։ Այս խոր համոզումով ահա կդիմենք ձեզ, որպեսզի բարյացակամ տրամադրությամբ մը նկատի առնեք մեր դիմումը և տաք մեզ անհրաժեշտ արտոնություն մտնելու Հայաստան»[1]։

Սեբաստիայի հայ աշխատավորության դիմումի մեջ, ուղղված ՀՍՍՌ ժողկոմսովետին, ասված է.

«Ստորագրյալ բնիկ սեբաստացի և շրջանի հայրենակիցներս, կյանքի բնական պահանջմունքին ու զմեզ շրջապատող քաղաքական և տնտեսական պայմաններեն հարկադրված Ձեզի կուգանք ներկայացնելու մեր խնդիրքը՝ որպես Ձեզ և Ձեր սկզբունքներու և աշխարհայացքներուն հավատարիմ մշակներ ու զավակներ։ Գիրկը դալ կբաղձանք Խորհրդային Հայաստանի,— այս է մեր խնդիրքը, որոշումը և անհուն բաղձանքը։

Հիացած ենք Ձեր 4 տարիներու կատարած հսկայական գործերով...

Կողջունենք այն հոյակապ աշխատանքը, որ հիացում պատճառած է ոչ միայն Ձեր զավակներուն, այլ ամբողջ աշխարհին»[2]։

---

[1] Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40c/113, գ. 367, թ. 62։

[2] Նույն տեղում, գ. 252, թ. 101։

Բավական շատ են այդպիսի դիմումները։ Տասնյակ հազարավոր հայեր բուռն ցանկություն են հայտնում վերադառնալու հայրենիք և մասնակից լինելու սոցիալիստական շինարարությանը։

Սովետական Միության կառավարության և Կոմունիստական պարտիայի կոմիտեի այդ հարցը շուտով առանում է իր դրական լուծումը։ Բուլլետենում է ներգաղթը։

Արտասահմանյան հայ աշխատավորությունն սկսում է առաջին մեծ ներգաղթը դեպի Սովետական Հայաստան։ Չնայած մի շարք դժվարություններին, ներգաղթը իրականացվում է հաջող և կազմակերպված կերպով։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին, հատկապես նրա վերջին շրջանում, կապիտալիստական տարբեր երկրներից Սովետական Հայաստան են ներգաղթում մոտ 25 հազար հայ աշխատավորներ[1], որոնք տեղավորվում են գլխավորապես Երևանում, Էջմիածնում, Լենինականում և Վեդիբասարի շրջանում։ Սովետական իշխանության կողմից առանալով հող և աշխատանք, իրենց հայրենիքի օջախում նրանք դառնում են սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցները։

* * *

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, նույնպես և նրա բոլշևիզացիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնումը տեղի ունեցավ Սովետական պետության զարգացման առաջին փուլում, որը ընդգրկում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից մինչև շահագործող դասակարգերի լիկվիդացումն ընկած ժամանակաշրջանը։ Ինչպես ցույց է տվել Ի. վ. Ստալինը, ավյալ ժամանակաշրջանում ամբողջ սովետական պետության հիմնական խնդիրն էր ճնշել տապալված դասակարգերի դիմադրությունը, կազմակերպել երկրի պաշտպանությունն ինտերվենտների հարձակումից, վերականգնել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, պայմաններ նախապատրաստել կապիտալիստական էլեմենտների լիկվիդացման համար։ Այդ խնդրին համապատասխան մեր Սովետական պետությունն ուներ երկու հիմնական ֆունկցիա՝ տապալված դասակարգերի ճըն-

[1] Հայկական ՍՍՌ ՊԿՄ., ֆ. 40c/113, գ. 494, թ. 7 և «Սովետական Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 30։

շումը երկրի ներսում և երկրի պաշտպանությունը արտաքին հարձակումից: Կար նաև մի երրորդ ֆունկցիա՝ մեր պետության օրգանների տնտեսական-կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակչական աշխատանքը, որը այդ ժամանակամիջոցում դեռևս լուրջ զբաղացում չստացավ:

Հանդիսանալով սոցիալիստական հասարակության վերնաշենքի վճռական էլեմենտներից մեկը, Սովետական պետությունը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ կատարել և կատարում է հսկայական գործ: Սովետական պետությունը հանդիսանում է սոցիալիստական հասարակության հիմնական ու ղլխավոր կազմակերպող ուժը: Նրա ձեռքումն է կենտրոնացված երկրի քաղաքական, տնտեսական ղեկավարությունը: Նա իր հսկայական կազմակերպական դերը մեծ հաջողությամբ իրականացրել և իրականացնում է հզոր պետական ապարատի միջոցով, աշխատավորների դեպուտատների սովետների, մինիստրություններ, դիտա-կուլտուրական հիմնարկությունների, մամուլի և մյուս օղակների ու կազմակերպությունների միջոցով:

Գնահատելով Սովետական պետության առանձնահատուկ դերը սոցիալիստական տնտեսության ստեղծման և նրա հարատևուն պարզացման գործում, Ի. վ. Ստալինը գրել է.

«Սովետական իշխանության առանձնահատուկ դերը բացատրվում է երկու հանգամանքներով՝ առաջին, նրանով, որ Սովետական իշխանությունը պետք է ոչ թե փոխարիներ շահագործման մի ձևը մյուս ձևով, ինչպես այդ տեղի ուներ հին ռևոլյուցիաներում, այլ պետք է լիկվիդացներ սմեն մի շահագործում. երկրորդ, նրանով, որ երկրում սոցիալիստական տնտեսության պատրաստի սաղմերի խոպան բացակայության պատճառով նա պետք է, այսպես ասած, «սկսյի տեղում» ստեղծեր տնտեսության նոր, սոցիալիստական ձևեր:

Այդ խնդիրը անշուշտ դժվարին էր և բարդ, նախադեպեր չունեցող: Այնուամենայնիվ Սովետական իշխանությունը պատվով կատարեց այդ խնդիրը»[1]:

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ ամեն մի հասարակական-տնտեսական ֆորմացիա ունի իրեն հատուկ հիմնական տնտեսական օրենքը, որը որոշում է տվյալ ֆորմացիայի բուն էու-

---

[1] Ի. վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, Հայպետհրատ, 1952, էջ 7:

թյունը: Ըստ որում, այդ հիմնական օրենքը, ինչպես և տնտեսական զարգացման մյուս օրենքները, քաղաքատնտեսության օրենքները, ոչ թե ստեղծվում են մարդկանց կողմից, այլ օբյեկտիվ օրենքներ են, որոնք արտացոլում են մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող տնտեսական զարգացման պրոցեսը:

Պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի շնորհիվ մեր երկրում կապիտալիստական սիստեմի վերացմամբ և տնտեսության սոցիալիստական սիստեմի հաստատմամբ կապիտալիզմի տնտեսական օրենքները մեզ մոտ իրենց տեղը զիջեցին հասարակության զարգացման նոր, ավելի բարձր աստիճանի՝ սոցիալիզմի տնտեսական օրենքներին:

Մեր երկրի ժողովրդական տնտեսության արագ վերականգնման, սոցիալիստական շինարարության ծավալման և նրա հետագա մեծագույն հաղթանակների գործում վճռական նշանակություն է ունեցել և ունի Սովետական պետության կողմից արտադրության գործիքների ու միջոցների հանրայնացումը, դրանք ամբողջ սովետական ժողովրդի սեփականություն դարձնելը: Այդ պատմական ակտով, ի հակադրություն կապիտալիստական երկրների, Սովետական երկրում լիակատար առաջավ արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքը և տեղի ունեցավ արտադրողական ուժերի նոր, հզոր զարգացում:

Ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո հնարավոր չեղավ մեր երկրում կապիտալիզմը միանգամից լիկվիդացնել: Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանը մեզ մոտ տևեց մոտ երկու տասնամյակ, որը հարուստ է զարգացող սոցիալիզմի և տապալված, բայց միանգամից չոչնչացված կապիտալիզմի միջև տեղի ունեցած սուր պայքարով:

ՍՍՌՄ-ում կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանը բնորոշ է եղել տարբեր կացութաձևերի առկայությամբ: Ինչպես ցույց է տվել Վ. Ի. Լենինը, այն ժամանակ մեր երկրում գոյություն ունեին հինգ կացութաձևեր՝ նահապետական, մանրանքային արտադրություն, մասնավոր կապիտալիզմ, պետական կապիտալիզմ և սոցիալիստական կացութաձև: Առաջատար կացութաձևը հանդիսանում էր սոցիալիստականը, որը ստեղծվել էր Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո: Արտադրության միջոցների հանրայնացումը, որը հենց առաջին իսկ շրջանում իրա-

կանացվեց պրոլետարիատի դիկտատուրայի կողմից և սկսեց վճռական դեր կատարել ժողովրդական տնտեսության մեջ, նշանակում էր, որ մոնոպոլիստական կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը, որի գլխավոր գծերն ու պահանջներն են, ինչպես բնորոշել է Ի. Վ. Ստալինը, կապիտալիստական առավելագույն շահույթի ապահովում՝ տվյալ երկրի բնակչության մեծամասնության շահագործման, քայքայման ու աղքատացման միջոցով, ուրիշ երկրների, հատկապես հետամնաց երկրների ժողովուրդների ստրկացման և սիստեմատիկ կողոպտման միջոցով, վերջապես, պատերազմների և ժողովրդական տնտեսության ռազմականացման միջոցով, մեզ մոտ կորցրեց ուժը, իր տեղը զիջելով սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքին, որի էական գծերն ու պահանջներն են «ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարատեւուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովում՝ բարձրագույն տեխնիկայի բազայի վրա սոցիալիստական արտադրության անընդհատ աճման ու կատարելագործման միջոցով»[1]:

Այսպիսով, սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքը սկսեց գործողության մեջ մտնել Սովետական պետության գոյության առաջին իսկ շրջանից: Բայց քանի որ ՍՍՌՄ-ում այն ժամանակ դեռևս գոյություն ունեին հինգ կացութաձևեր, այդ պատճառով էլ սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքը ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին, ինչպես և կապիտալիզմից սոցիալիզմին անցման հետագա ժամանակաշրջանում, իր գործողության համար դեռևս լայն ասպարեզ չստացավ: Սակայն զարգացման այդ էտապում նա ոչ միշտ է մնացել նույն շրջանակներում: Սոցիալիստական շինարարության բուռն ծավալման, երկրի էկոնոմիկայի մեջ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշռի ավելացման զուգընթաց, սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքը աստիճանաբար ավելի ու ավելի ուժ էր ստանում իր գործողությունների համար: Իսկ հետագայում, սոցիալիզմի լիակատար հաղթանակի շնորհիվ, նա գործողության մեջ մտավ իր ամբողջ ուժով:

Ժողովրդական տնտեսության վերականգնման և նրա հետագա զարգացման գործում կարևորագույն նշանակություն է ունեցել և ունի ժողովրդական տնտեսության պլանաչափ (պրոպորցիոնալ)

---

[1] Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, էջ 44:

զարգացման տնտեսական օրենքը, որը գործողության մեջ մտավ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման շնորհիվ արտադրության միջոցների հանրայնացման բազայի վրա, այն բանից հետո, երբ կապիտալիզմի ժամանակ գործող կոնկուրենցիայի ու արտադրության անարխիայի օրենքը կորցրեց իր ուժը։ Ժողովրդական տնտեսության պլանաչափ (պրոպորցիոնալ) զարգացման տնտեսական օրենքը գործողության մեջ մտավ այն պատճառով, որ սոցիալիստական ժողովրդական տնտեսությունը կարելի է վարել միայն նրա հիման վրա։ Ըստ որում այդ օրենքը կարող է հարկ եղած էֆեկտը տալ միայն այն դեպքում, երբ կա որոշակի խնդիր և երբ ժողովրդական տնտեսության պլանավորումը և զարգացումը բխում է այդ խնդրից։ Իսկ այդ խնդիրը կա սոցիալիզմի հիմնական էկոնոմիկական օրենքում։ Ուստի ժողովրդական տնտեսության պլանավորումը դրական արդյունքներ կարող է տալ միայն հետևյալ երկու պայմանը պահպանելու դեպքում՝ «ա) եթե պլանավորումը ճիշտ է արտացոլում ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացման օրենքի պահանջները, բ) եթե նա համապատասխանեցվում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի բոլոր պահանջներին»[1]։

Առաջնորդվելով այդ պահանջներով և Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ճիշտ կերպով պլանավորելով ամբողջ երկրի, բոլոր ազգային ռեսպուբլիկաների, այդ թվում նաև Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման գործը, Սովետական պետությունը կարողացավ հաջողությամբ իրականացնել այն, մեր երկիրը կանգնեցնելով զարգացման մի նոր էտապի՝ սոցիալիստական ինդուստրացման էտապի առաջ։

Սովետական Հայաստանի ծայրահեղ քայքայված ժողովրդական տնտեսության արագ վերականգնումը և դրան դուրընթաց տեղի ունեցող տնտեսության ռեկոնստրուկցիան, ռեսպուբլիկայում ինդուստրիալ շինարարության ծավալումը արդյունք էին Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման, ուս մեծ ժողովրդի գլխավորությամբ Սովետական երկրի բոլոր ժողովուրդների միջև հաստատված եղբայրական սերտ համագործակցության և փոխադարձ օգնության։

Սոցիալիստական ռևոլյուցիայի մեծագույն առաջնորդ

---

[1] *Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, էջ 45։*

680—21

Վ. Ի. Լենինը Կոմունիստական պարտիայի, Ռուսաստանի բանվոր դասակարգի և Սովետական պետության առաջ մարտական խնդիր էր դրել՝ բազմակողմանի օգնություն կազմակերպել մեր երկրի բոլոր այն ժողովուրդներին, որոնք երկար ժամանակ ճնշվել ու կեղեքվել են ցարական Ռուսաստանի տիրող դասակարգերի և օտարերկրյա բուրժուազիայի կողմից և զուրկ են եղել ոչ միայն զարդացման, այլև իրենց գոյությունը պաշտպանելու հնարավորությունից։ Այդպիսի ժողովուրդների թվին է պատկանել նաև բազմադարյա պատմություն ունեցող հայ ժողովուրդը։

Դեռևս ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի սկզբում՝ 1921 թվականին, ՌԿ(բ)Պ 10-րդ համագումարում ազգային հարցի մասին զեկուցման մեջ Ի. Վ. Ստալինը նշել էր, որ Ռուսաստանում ազգային հարցի լուծումը կայանում է նրանում, որպեսզի լիկվիդացնենք մի շարք ազգերի տնտեսական, քաղաքական և կուլտուրական այն փաստական հետամնացությունը, որ նրանք ժառանգել են հին կարգերից և այդ ազգերին ամեն կերպ օգնելով, նրանց հնարավորություն տալ կարճ ժամանակամիջոցում հասնելու կենտրոնական Ռուսաստանին ինչպես պետական, նույնպես տնտեսական ու կուլտուրական տեսակետից։ Դրա համար անհրաժեշտ էր, որպեսզի յուրաքանչյուր ժողովուրդ, յուրաքանչյուր ազգային սովետական ռեսպուբլիկա ունենար զարդացման նյութական պայմաններ, կուլտուրական միջոցներ, իր ազգային կադրերը, որոնք հանդիսանում են ժողովուրդների միջև փաստական հավասարություն ստեղծելու կարևոր նախադրյալները։

1921—1925 թթ. Սովետական Հայաստանում ձեռք բերված հաջողությունները կարևորագույն առաջընթաց քայլ հանդիսացան այդ ուղղությամբ։

Ինչպես Սովետական Հայաստանի, նույնպես և Ադրբեջանի ու Վրաստանի ժողովրդական տնտեսության արագ վերականգնման, նրա ռեկոնստրուկցիայի և ամբողջ երկրամասում ինդուստրիալ շինարարության ծավալման, նրա հետագա նորանոր հաջողությունների գործում պատմական խոշոր դեր է կատարել Անդրկովկասյան Ֆեդերացիան, որը փայլուն կերպով լուծեց Կոմունիստական պարտիայի կողմից իր առջև դրված խնդիրները տվյալ ժամանակաշրջանում։ Հանդիսանալով մեր բազմազգ սոցիալիստական հզոր պետության՝ ՍՍՌՄ-ի իրավահավասար անդամներից մեկը, Անդրկովկասյան Ֆեդերացիան, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իր շուրջը համախմբելով երկրամասի բազմազգ աշխատա-

վորությանը, մոբիլիզացնելով նրա ուժերը, 1922—1925 թվականների ընթացքում երկրամասում հսկայական ստեղծագործական աշխատանք ծավալեց քայքայված ժողովրդական տնտեսության արագ վերականգնման, նրա ռեկոնստրուկցիայի ուղղությամբ։

«... Եթե այսօր Անդրկովկասը հանդիսանում է համախորհրդային մեծ Միության անդամներից մեկը, եթե նրա տնտեսությունը զարգանում է անընդհատ և հաստատուն քայլերով,— ասված է Անդրկովկասյան Ֆեդերացիայի 3—րդ տարեդարձի առթիվ Հայաստանի Սովետների 4—րդ համագումարի (1925 թ.) կոչում,— ու եթե նա իր խորհրդային հեղափոխական պարտականությունը կատարում է հանդեպ այդ միության, ապա անկասկած այդ դեպքում նա պարտական է առաջին հերթին իր Անդրկովկասի Հանրապետությունների Ֆեդերացիային»[1]։

Սակայն Անդրկովկասյան Ֆեդերացիայի դերը չէր սահմանափակվում միայն դրանով։ Նա մեծագույն դեր կատարեց երկրամասի աշխատավորական մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության և ժողովուրդների իրավահավասարության ու եղբայրական համագործակցության գաղափարները ամրապնդելու գործում ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի և մյուս բոլոր թշնամական հոսանքների։

Սոցիալիստական շինարարության բնագավառում նոր, ավելի մեծ հաջողությունների հասնելու նպատակով Կոմունիստական պարտիան մեր պետության ու ամբողջ սովետական ժողովրդի առաջ մարտական խնդիր դրեց՝ արձակել տեղերում թաքնված արտադրական շինարարության բոլոր ուժերը, յուրաքանչյուր շրջանում, օկրուգում, նահանգում, մարզում և ազգային ռեսպուբլիկայում աշխուժացնել արդյունաբերական կյանքը, զարգացնել արտադրողական ուժերը, կենտրոնի շահերն ու օգուտները սերտորեն զուգել տեղերի շահերի ու օգուտների հետ, ծավալուն կերպով առաջ տանել երկրի սոցիալիստական ինդուստրացումը։

Ամբողջ Սովետական Միության, նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Անդրկովկասյան Ֆեդերացիայի ու Սովետական Հայաստանի հետագա զարգացումը անշեղ կերպով ընթացավ այդ ուղիով։

---

[1] «ՀՍԽՀ խորհուրդների չորրորդ համագումարը, զեկուցական հաշվետվություն», Երևան, 1926, էջ 254։

2. ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՒՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ մեր երկրում արտադրության կապիտալիստական եղանակը փոխարինվեց սոցիալիստական եղանակով։ Լիկվիդացվեցին կապիտալիստական արտադրական հարաբերությունները և հաստատվեցին նոր, սոցիալիստական արտադրական հարաբերություններ, որոնց հիմքում ընկած է արտադրության միջոցների հանրային սեփականությունը։ Արմատական փոփոխություններ տեղի ունեցան հասարակական արտադրության նպատակի մեջ։ Ինչպես նշում է Ի. Վ. Ստալինը, եթե կապիտալիստական արտադրության նպատակն է շահույթներ կորզելը, իսկ մարդը իր պահանջմունքներով չքանում է նրա տեսադաշտից, ապա «սոցիալիստական արտադրության նպատակը ոչ թե շահույթն է, այլ մարդն իր պահանջմունքներով, այսինքն՝ նրա նյութական ու կուլտուրական պահանջմունքների բավարարումը։ Սոցիալիստական արտադրության նպատակը... ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովումն է»[1]։

Բուրժուազիայի և կալվածատիրության տնտեսական հզորությունը ոչնչացնելու և պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական հզորությունը ամրապնդելու, նոր, սոցիալիստական արտադրություն կազմակերպելու նպատակով, Սովետական իշխանությունը իր գոյության առաջին իսկ օրերից ազգայնացրեց խոշոր արդյունաբերությունը, հողը, երկաթուղին, բանկերը, հաստատեց արտաքին առևտրի մենաշնորհ։ Անվճար կերպով պետության կողմից հողը հանձնվեց դյուղացիության օգտագործմանը, որի համար նա երազել ու պայքարել էր դարեր շարունակ։

Սովետական պետությունը արմատական միջոցներ ձեռք առավ բանվորների աշխատանքի պայմանները և կենցաղը բարելավելու ուղղությամբ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի առաջին իսկ օրերին հրատարակվեց Սովետական կառավարության դեկրետը 8-ժամյա բանվորական օրվա մասին։ 1918 թ. հունիսի 14-ին Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետը դեկրետ է հրատա-

[1] Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, էջ 84։

րակում բանվորներին յուրաքանչյուր տարի արձակուրդ տալու մասին՝ արձակուրդի ժամանակամիջոցում պահպանելով նրանց աշխատավարձը: Նույն թվականի դեկտեմբերին Սովետական կառավարությունը հաստատեց Աշխատանքային Օրենսգիրքը, որը վերանայվեց և լրացվեց 1922 թվականին: Այդ Օրենսգրքով օրենսդրականորեն ամրապնդվեցին բանվոր գասակարգի նվաճումները 8-ժամյա բանվորական օրվա, աշխատանքի պաշտպանության, յուրաքանչյուր տարի հերթական արձակուրդ տառնալու և այլ բնագավառներում:

Կապիտալիստական ոչ մի երկրում չի իրականացվել և հնարավոր չի իրականացնել աշխատանքային այնպիսի օրենսդրություն, ինչպիսին մեր երկրի օրենսդրությունն է:

Ահա թե ինչու Ի. Վ. Ստալինը, գնահատելով Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության նշանակությունը ժողովրդական մասսաների նյութական դրության բարելավման տեսակետից, նշել է, որ հեղափոխությունն ոչ միայն փշրեց կապիտալիզմի շղթաները, ազատություն տվեց ժողովրդին, այլև նյութական պայմաններ ստեղծեց նրա ունևոր կյանքի համար:

Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ ժողովրդական անտեսության արագ վերականգնման դուրընթաց, Սովետական Միությունում անշեղ կերպով տեղի ունեցավ աշխատավորական մասսաների նյութական բարեկեցության բարձրացում ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում: Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ Սովետական պետությունը հետևողականորեն կենսագործում էր բոլոր այն միջոցառումները, որոնք նպատակ ունեին բարելավելու աշխատավորական մասսաների նյութական դրությունը: Այդ միջոցառումներն էին՝ լայն ապահովագրության դների սիստեմատիկ իջեցումը, բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձի բարձրացումը, արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների դների միջև եղած անհամաչափության լիկվիդացումը, կայուն դրամական սիստեմի հաստատումը, աշխատավորների սոցիալական ապահովագրության համար հատկացված միջոցների ավելացումը, նրանց առողջապահության դրության բարելավումը և այլն:

Աշխատավորական մասսաների նյութական դրության բարելավմանը զգալի չափով խանգարում էր Սովետական Միությունում միանգամայն և կայուն դրամի բացակայությունը: Ինչպես տեսանք, մինչև 1924 թ. սկիզբը Սովետական Միությունում դոյություն ունեին

դրամական երկու միավոր՝ սովետական հին դրամանիշը, որը ապահովված չէր ոսկու և ապրանքային ֆոնդերով, այդ պատճառով էլ շատ անկայուն էր, և չերվոնեցը, որը բաց թողնվեց 1922 թ. և ապահովված էր ոսկու ու ապրանքային ֆոնդերով։ Սակայն, 1922 թ. չերվոնեցը դեռևս սահմանափակ քանակությամբ էր բաց թողնված (50 և 100 ռուբլուց չերվոնեցներ), այդ պատճառով էլ նա լայն տարածում չուներ և շուկայում դեռևս իշխող էր։

1924 թ. սկզբներին անհրաժեշտություն առաջացավ Սովետական Միությունում դրամական ռեֆորմ անցկացնել, որի նպատակն էր երկրում հաստատել միասնական և կայուն դրամ։

Վճռական հակահարված հասցնելով սոցիալիզմի բոլոր թշնամիներին, Սովետական պետությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ 1924 թ. անցկացրեց դրամական ռեֆորմ։ Ամբողջ Սովետական Միության մեջ վերացվեցին հին դրամները և սահմանվեց միասնական կայուն դրամ՝ չերվոնեցը։ Միաժամանակ պարտիայի կենտկոմի որոշմամբ տեղի ունեցավ լայն սպառման ապրանքների գների իջեցում։ Նշվեցին մի շարք նոր միջոցառումներ պետական և կոոպերատիվ առևտրի հետագա ընդարձակման և առևտրի բնագավառից կուլակային-նէպմանական էլեմենտներին դուրս մղելու համար։

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության կողմից ձեռք առնված այդ և մի շարք ուրիշ միջոցառումների անշեղ կենսագործման շնորհիվ, ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի վերջում Սովետական Միությունում ձեռք էին բերվել առաջին լուրջ հաջողություններն աշխատավորների նյութական դրության բարելավման բնագավառում։

Անդրադառնալով այդ հարցին, պարտիայի 14-րդ համագումարում Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ Ի. Վ. Ստալինը նշել է, որ մեր երկրում ժողովրդական տնտեսության զարգացումը հնարավոր դարձրեց ամենից առաջ ամբողջ բանվոր դասակարգի նյութական դրության բարելավմանը, որ վերջ է տրված բանվոր դասակարգի ապադասակարգայնացման պրոցեսին և արագ կերպով տեղի ունի նրա աճման պրոցեսը[1]։ Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Սովետական պետության կողմից խոշոր շինարարություն է կատարվում և ֆինանսական մեծ միջոցներ են ներդրվում բանվորների համար բնակարանների կառուցման, բանվոր-

[1] Տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 353—354։

ների նյութական-կենցաղային պայմանների բարելավման գործում։ Այդ տարիներին Սովետական պետության կողմից կազմակերպված սանատորիաներում և հանգստյան տներում բուժվում և հանգստանում են հարյուր հազարավոր աշխատավորներ։ Հսկայական դումարներ են հատկացվում ժողովրդի առողջապահության գործին։

Գյուղատնտեսության վերականգնման ասպարեզում ձեռք բերված առաջին լուրջ հաջողությունների և գյուղատնտեսության արտադրանքի բարձրացման շնորհիվ զգալի չափով բարելավվել էր աշխատավոր գյուղացիության նյութական դրությունը։ Սովետական պետությունը խոշոր օգնություն էր ցույց տալիս չքավոր ու միջակ գյուղացիությանը, անբերրիությունից տուժածներին։ 1924—25 տնտեսական տարում պետության կողմից չքավոր գյուղացիությանը ցույց տված ֆինանսական օգնությունը կազմել է 100—105 միլիոն ռուբլի, իսկ 1924 թ. անբերրիությունից տուժածներին ցույց տված օգնությունը 108—110 միլիոն ռուբլի։

Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ, ինչպես բոլոր ազգային սովետական ռեսպուբլիկաներում, նույնպես և Սովետական Հայաստանում, ժողովրդական տնտեսության արագ վերականգնման դուրգնթաց ձեռք բերվեցին առաջին լուրջ հաջողությունները աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման բնագավառում։

Այդ հաջողությունները ռեսպուբլիկայում հիմնական գծերով արտահայտվում են հետևյալում.

Պետական բյուջեի աճումը. ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքներին անցնելով, ռեսպուբլիկայում հնարավորություն է ստեղծվում պետական բյուջե ստեղծել և ֆինանսական միջոցները զարգացնել, այն պլանաչափ կերպով ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում և պետական աշխատանքի մյուս բնագավառներում գործադրել։ Սովետական Հայաստանում առաջին բյուջեն կազմվել է 1921 թ. փետրվարյան ամենատարրայի լիկվիդացումից անմիջապես հետո՝ նույն թվականի ապրիլ-հուլիս ամիսների համար։ Դրանից հետո, մինչև 1923 թ. վերջերը ռեսպուբլիկայում ևս մի շարք անգամ կազմվել են բյուջեներ՝ կարճատև ժամանակամիջոցի համար (6 ամսով, 9 ամսով և այլն)։

1923—24 տնտեսական տարվանից՝ երբ տեղի ունեցավ դրամական ռեֆորմ և հաստատվեց կայուն դրամ՝ չերվոնեցը, Սովետական Հայաստանում հաստատվում է կայուն բյուջե։ Ռեսպուբլիկա-

յի բյուջետային սիստեմը, նրա եկամուտներն ու ծախսերը որոշակիորեն ստորաբաժանվում են ըստ միութենական, ֆեդերատիվ, ռեսպուբլիկական և տեղական բյուջեների։ Կայուն բյուջեի հաստատման ղուգընթաց, տեղի է ունենում նրա արագ աճումը՝ մեկ կողմից ռեսպուբլիկայի ընդհանուր եկամուտների ավելացման, մյուս կողմից Համամիութենական միջոցներից դոտացիա ստանալու շնորհիվ։

Կայուն ռուբլուն անցնելուց հետո, Սովետական Հայաստանի ռեսպուբլիկական և տեղական բյուջեի զարգացման դինամիկան արտահայտվում է հետևյալ թվերով (ցույց է տրված կատարողականը)։

1924—25 տնտեսական տարում բյուջեի եկամտային մասը կազմել է 6.781 հազար ռուբլի (որից 1.510 հազար ռուբլին եղել է դոտացիա Համամիութենական միջոցներից), 1925—26 տնտեսական տարում բյուջեն աճում է ավելի քան երկու անգամ, հասնելով 14.667 հազար ռուբլու (որից 4.907 հազար ռուբլին դոտացիա էր Համամիութենական միջոցներից)[1]։ Որպես նշանակալից փաստ պետք է նշել այն, որ գնալով արագ կերպով աճում էին պետական արդյունաբերությունից, առևտրից ու բանկերից ստացվող շահույթները, որոնց ընդհանուր գումարը, եթե 1923—24 տնտեսական տարում եղել էր 30 հազար ռուբլի, ապա 1925—26 տնտեսական տարում արդեն հասել էր 229 հազար ռուբլու[2], այսինքն աճել էր մոտ 8 անգամ։

Սակայն, ինչպես ցույց են տալիս թվերը, ռեսպուբլիկայի պետական բյուջեում այն ժամանակ դեռևս խոշոր տեղ էր գրավում Համամիութենական միջոցներից ստացվող դոտացիան։ Այդ բացատրվում է նրանով, որ Սովետական Հայաստանը իր ժողովրդական տնտեսությունից ստացված սեփական եկամուտներով դեռևս չէր կարողանում ապահովել ռեսպուբլիկայի զարգացման աճող պահանջները և այդ պատճառով էլ նա Համամիութենական և Անդրկովկասյան Ֆեդերացիայի բյուջեից ստացվող դոտացիայի միջոցով հնարավորություն է ստանում ծածկելու բյուջեի եկամուտների և ծախքերի միջև առաջացած ճեղքվածքը, հաստատ կերպով առաջ տանելով ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Դո-

---

[1] Խորհրդային Հայաստանը թվերով, Վիճակագրական տեղեկատու, հրատ. ՀՍԽՀ Կենտվիճակագրության, Երևան, 1928, էջ 242 և 244։

[2] Նույն տեղում, էջ 242։

տացիայի կարգով Համամիութենական և Անդրկովկասյան Ֆեդերացիայի բյուջեներից ստացված այդ ֆինանսական միջոցները մեծադույն օգնություն էին Սովետական Հայաստանին։ Այդ հանգիստանում է սովետական ժողովուրդների բարեկամության և համագործակցության վայրկյան օրինակներից մեկը։

Ռեսպուբլիկական և տեղական բյուջեի ավելի քան 50 տոկոսը ծախսվել է բնակչության նյութական դրության բարելավման և կուլտուրական շինարարության վրա։ Խոշոր չափով աճել էին կոմունալ շինարարության վրա կատարված ծախսերը, որոնց դումարը 1924—25 տնտեսական տարում եղած 403 հազար ռուբլու փոխարեն մեկ տարի հետո հասել էր 1.440 հազար ռուբլու[1], ավելանալով մոտ 3,2 անգամ։ 1926 թ. մարդահամարի տվյալներով 1923—1926 թվականներին՝ 4 տարվա ընթացքում ռեսպուբլիկայի բազաքատիպ վայրերում պետության կողմից կառուցվել են 498 նոր շենքեր, որոնցից 371-ը բնակելի՝ 21.910 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ[2]։ Սովետական կարգերի հաստատման առաջին տարվանից մինչև 1927—28 տնտեսական տարին ռեսպուբլիկայում կոմունալ շինարարության գծով կապիտալ ներդրումներ են կատարվել 15,2 միլիոն ռուբլի, որից 12,2 միլիոնը միայն բնակարանային շինարարության մեջ[3]։ Այն ժամանակվա պայմաններում դա մի խոշոր դումար էր, որը Սովետական պետությունը ներդրել էր ռեսպուբլիկայի աշխատավորների բնակարանային-կենցաղային պայմանները բարելավելու համար։

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության հոգատարության շնորհիվ հասատա կերպով բարձրանում էր բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձը։ Եթե 1925 թ. հունվարին ռեսպուբլիկայում մեկ բանվորի միջին աշխատավարձը եղել է 40,12 հերվոն ռուբլի, ապա նույն թվականի դեկտեմբերին այն հասել էր 44, 72 ռուբլու, իսկ 1926 թ. դեկտեմբերին՝ 46,62 ռուբլու[4]։

Սովետական Հայաստանի կառավարությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ վճռական միջոցներ է ձեռք առնում գործազրկության դեմ, որն այն ժամանակ դեռևս չէր լիկվիդաց-

---

[1] Հարհրդային Հայաստանը թվերով, Վիճակագրական տեղեկատու, էջ 244։

[2] Նույն տեղում, էջ 264։

[3] См. «Соц. строительство Арм. ССР (1920—1940 гг.)», стр. 19.

[4] Հարհրդային Հայաստանը թվերով, Վիճակագրական տեղեկատու, 1923—1927 թթ., էջ 160։

ված։ Եթե 1923 թ. հոկտեմբերին Երևանի և Ալեքսանդրոպոլի (Լենինականի) աշխատանքային բորսաներում հաշվառման մեջ էին 4269 գործազուրկներ, ապա մեկ տարի հետո՝ 1924 թ. հոկտեմբերին այդ թիվը նվազելով, արդեն հասել էր 2025-ի[1]։ Ըստ որում, գործազուրկների մեջ որակյալ բանվորներ-մասնագետներ համարյա չկային։ Նրանք մեծ մասամբ սեզոնային բանվորներ էին։ Սովետական պետությունը գործազուրկներին ցույց էր տալիս կազմակերպված օգնություն։ Աշխատանքային որոշ ստաժ ունեցող գործազուրկները պետությունից ստանում էին նպաստ։ Բացի դրանից, պետության օգնությամբ գործազուրկներից կազմակերպվում էին տարբեր տեսակի աշխատանքային-արտադրական արտելներ՝ կոշկակարների, կառուցողների և այլն։

Սովետական պետության կողմից դեպի չքավոր ու միջակ գյուղացիությունը ցուցաբերած հոգատարության և օգնության շնորհիվ ռեսպուբլիկայում զգալի չափով բարելավվել էր նաև աշխատավոր գյուղացիության դրությունը։ Ինչպես նշեցինք իր տեղում, գյուղում տեղի ունեցած շերտավորման ընթացքում մեկ կողմից չքավոր գյուղացիության զգալի մասը միջականում էր, մյուս կողմից բարելավվում էր միջակ գյուղացիության վիճակը։ Բացի դրանից, պետության ձեռք առած վճռական միջոցների շնորհիվ չքավոր ու միջակ գյուղացիության որոշ մասը, որը կախում ուներ վաշխառուներից ու կուլակներից, աստիճանաբար աղատվում էր այդ կախումից։ Դա իր հերթին նպաստում էր աշխատավոր գյուղացիության տնտեսական դրության բարելավմանը։

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության հոգատարության շնորհիվ գնալով բարելավվում էր նաև սովետական ինտելիգենցիայի՝ ուսուցչության, գիտական աշխատողների, բժիշկների, պետական ապարատի աշխատողների և մյուս շերտերի նյութական-կենցաղային պայմանները։

Ռեսպուբլիկայի բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի նյութական դրության անընդհատ բարելավումով պետք է բացատրել այն փաստը, որ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Սովետական Հայաստանում զգալի չափով անհատական բնակարանային շինարարություն է կատարվել։ 1923—1926 թթ. այսինքն՝ 4 տարիների ընթացքում, Սովետական Հայաստանի միայն քաղաքատիպ վայրերում 3065 անհատական շեն-

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 352.

քեր են կառուցվել՝ 61.575 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ[1]։

Որոշ կոմունալ շինարարություն է կատարվել նաև հասարակական ու կոոպերատիվ կազմակերպությունների կողմից։ Բված այդ չորս տարիների ընթացքում Սովետական Հայաստանում պետության, հասարակական-կոոպերատիվ կազմակերպությունների կողմից և անհատական շինարարության կարգով կառուցվել են 3579 շենք, 83859 քառակուսի մետր ընդհանուր տարածությամբ[2], որի խոշորագույն մասը օգտագործվել է որպես բնակելի տարածություն։ Այդ շինարարության հիմնական մասը կատարվել է Երևանում, Լենինականում, Դարաքիլիսայում, Դափանում և Ալավերդում։ Դրան զուգընթաց, ինչպես տեսանք, նշված վայրերում սկիզբ էր առել արդյունաբերական նոր ձեռնարկությունների շինարարությունը, որը հետագա տարիներին աննախընթաց վերելք է ապրում։

Նշանավոր հարտարապետ Ա. Թամանյանը 1923 թ. Սովետական Ռուսաստանից գալիս է Հայաստան՝ մշտական աշխատանքի։ Սովետական Հայաստանի կառավարության հանձնարարությամբ նա նույն թվականից ձեռնամուխ է լինում ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանի սոցիալիստական վերակառուցման հատակագծի, նրա զարգացման պլանավոր պլանի մշակմանը։ Այդ պլանի մշակումը Ա. Թամանյանն ավարտում է մեկ տարի հետո և 1924 թ. այն հաստատվում է Սովետական Հայաստանի կառավարության կողմից։ Բացի դրանից Ա. Թամանյանը, սկսած 1925 թ., ձեռնամուխ է լինում սովետահայ հարտարապետության առաջին կոթողների՝ Երևանի առաջին հիդրոկայանի, Անատնաբուժական, Բժշկական (անատոմիկումի), Տիպիո-Թերապևտիկ ինստիտուտների, Աստղաֆիտարանի և մի շարք այլ կառուցումների նախագծերի մշակմանը, որոնց մի մասի կառուցումները տեղի են ունենում այդ ժամանակ, իսկ մյուս մասինը՝ հետագա տարիներին։

Ժողովրդական անտեսության վերականգնման ժամանակաշրջանում ռեսպուբլիկայում մեծ չափով աճում են բնակչության առողջապահության սպասարկող հիմնարկների ցանցը և Սովետական պետության կողմից նրանց վրա կատարվող ծախսերը։ Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում առող-

---

[1] Խորհրդային Հայաստանը թվերով, Վիճակագրական տեղեկատու, 1923—1927 թթ., էջ 264։

[2] Նույն տեղում, էջ 264—265։

ջապահական հիմնարկների թիվը շատ չնչին էր։ 1913 թ. Հայաստանում եղել են ստացիոնար առողջապահական վեց հիմնարկ, ընդամենը 212 մահճակալով[1] և 16 պոլիկլինիկա[2] շատ փոքր կարողությամբ։ Առողջապահական այդ հիմնարկների կարողության մասին պատկերացում է տալիս այն փաստը, որ 1913 թ. ամբողջ Հայաստանում աշխատել են միայն 57 բժիշկ[3]։ Ըստ որում աշխատավորական մասսաների առողջապահության գործը շահագործողների տիրապետությանը՝ ցարական կառավարությանը չէր հետաքրքրում և չէր կարող հետաքրքրել։ Այդ առողջապահական ձեռնարկությունները մեծ մասամբ գտնվում էին մասնավոր մարդկանց ձեռքում և միանգամայն անմատչելի էին աշխատավորներին՝ բժշկական օգնության բարձր գների պատճառով։ Իսկ ժողովրդի արդահատելի թշնամի դաշնակների բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային կառավարության ժամանակ, առողջապահական այդ ձեռնարկությունների մեծ մասը նույնպես քայքայվել և ոչնչացվել էր։ Երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր, առողջապահության սիստեմից համարյա ոչինչ չէր մնացել։

Իր գոյության առաջին իսկ օրերից Հայաստանի Սովետական կառավարությունը ձեռնամուխ է լինում աշխատավորական մասսաների առողջապահության գործի կազմակերպմանը։ Այդ աշխատանքները կատարելու համար ստեղծվում է Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատ։

Սովետական Հայաստանի կառավարությունը և Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատը ձեռնամուխ լինելով ռեսպուբլիկայում աշխատավորների առողջապահության գործի կազմակերպմանը, իրենց գործունեության հիմքում դրեցին Կոմունիստական պարտիայի ծրագրի պահանջները։

Հետևողականորեն առաջնորդվելով պարտիայի ծրագրի պահանջներով, կարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանում ձեռք են բերվում նշանակալից հաջողություններ աշխատավորների առողջապահության գործի բարելավման բնագավառում։ Այդ ցույց են տալիս հետևյալ թվերը։

1921 թ. դեկտեմբերին Սովետական Հայաստանում Առժողկոմատի դծով գործել են բժշկա-սանիտարական 77 հիմնարկություն-

---

[1] См. «Соц. строительство Арм. ССР (1920—1940 гг.)», стр. 100.

[2] *Նույն տեղում, էջ 102։*

[3] *Նույն տեղում, էջ 106։*

ներ[1] (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, դիտական ինստիտուտներ, բուժկայաններ, լաբորատորիաներ և այլն), 1923 թ. դեկտեմբերին դրանց թիվը հասնում է 95-ի՝ 878 աշխատակիցներով, որից 108-ը՝ բժիշկ[2], իսկ 1925 թ. դեկտեմբերին՝ 151-ի — 1026 աշխատակիցներով, որից 187-ը բժիշկ[3]։

Հիվանդների բժշկական օգնության գործը դիտական բարձր հիմունքների վրա դնելու նպատակով լուրջ ձեռնարկումներ են կատարվում դիտական-առողջապահական հիմնարկների կազմակերպման ուղղությամբ։ Կառավարության որոշմամբ 1923 թ. օդոստոսին Երևանում կազմակերպվում է հանրապետության առաջին խոշոր դիտահետազոտական հիմնարկը առողջապահության գծով՝ Տրոպիկական ինստիտուտը[4], որը իր գոյության առաջին իսկ շրջանից ծավալուն աշխատանք է կատարում դեռ հին ժամանակներից հանրապետության մի շարք շրջաններում, հատկապես Արարատյան դաշտում, բնակչության մեջ լայն տարածում գտած ջերմախտ (մալարիա) հիվանդության բուժման դիտական մեթոդների մշակման ուղղությամբ և խոշոր չափով նպաստում է հետագայում այդ հիվանդությունը բնակչության միջից լիկվիդացնելուն։ Ջերմախտով վարակված շրջաններում արագ կերպով աճում էր տրոպիկական կայանների թիվը, որը 1923 թ. եղել է 1, 1924 թ. 5, իսկ 1925 թ. 9-ը[5], մինչդեռ նախահեղափոխական շրջանում Հայաստանում չի եղել ոչ մի տրոպիկական կայան։ Այդ և մյուս ձեռնարկումների շնորհիվ 1921—1925 թթ. ընթացքում Սովետական իշխանությունը հակահայկական օդնության է հասցրել ավելի բնակչությանը ջերմախտ հիվանդությունից բուժելու գործում։ Միայն 1925 թ. տրոպիկական կայանները և այլ բուժական հիմնարկները ջերմախտով հիվանդ այցելողների ընդհանուր թիվը հանրապետությունում եղել է 285 հազար[6]։ Սովետական կառավարության կողմից բնակչությանը հասցրած ձրի և սիստեմատիկ բժշկական օդնության շնորհիվ հանրապետությունում արագ կերպով պակասում էր ջերմախտով հիվանդների թիվը, որը հետագա տարիներին ամբողջությամբ լիկվիդացվում է։

---

[1] Խորհրդային Հայաստանը թվերով, Վիճակագրական տեղեկատու, 1923—1927 թթ., էջ 44։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 332։

[5] Նույն տեղում, էջ 343։

[6] Նույն տեղում, էջ 243։

Այդ օգնության շնորհիվ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին զգալի չափով պակասել էր նաև այդ հիվանդություններով տառապողների թիվը։

Աշխատավորների առողջապահության գործը բարելավելու նպատակով Սովետական իշխանությունը ձեռնամուխ է լինում ռեսպուբլիկայում առաջին սանատորիաների ու հանգստյան տների կազմակերպմանը։ 1923 թ. Ծաղկաձորում կազմակերպվում է հանգստյան տուն, որն առաջինն էր ռեսպուբլիկայում։ 1924 թ. սկսում է գործել Դիլիջանի սանատորիան [1]։

Աստիճանաբար ծավալվում, բարելավվում և ավելի հաստատ հիմքերի վրա էր դրվում աշխատավորների ապահովագրության, նրանց բժշկական օգնության գործը։ 1924 թ. հոկտեմբերին ռեսպուբլիկայում բժշկական օգնություն ստացած ապահովագրվածների թիվը հավասար է եղել 13.130-ի, իսկ 1925 թ. հոկտեմբերին այն հասել էր 20.894-ի [2]։

Սովետական իշխանության կողմից աշխատավորների առողջապահության գործի նկատմամբ ցույց տրված մեծագույն հոգատարության օրինակներից մեկը հանդիսանում է այն փաստը, որ 1921—1925 թթ. ինչպիսի արագությամբ են աճել ժողովրդական առողջապահության վրա ծախսված գումարները ռեսպուբլիկայում։ Միայն Առժողկոմատի գծով այդ ուղղությամբ ծախսվել է՝ 1921 թվականին 117.134 ռուբլի, 1923—24 տնտեսական տարում՝ 777.699 ռուբլի, իսկ 1924—25 տնտեսական տարում՝ 1.124.124 ռուբլի [3]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Սովետական իշխանության կողմից Հայաստանում խոշոր ծախսեր են կատարվել նաև աշխատավորների սոցիալական ապահովության գծով։

Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման, ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության հաջող վերականգնման և աշխատավորների նյութական բարեկեցության լավացման անմիջական և կարևորագույն արդյունքներից մեկը հանդիսացավ այն, որ Սովետական Հայաստանում 1921—1925 թթ. տեղի ունեցավ բնակչության ուժեղ բնական աճ և զգալի չափով պակասեց մահացությունների

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 345։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 344։

տոկոսը։ Ռևսպուբլիկայի բնակչության բնական աճը կազմել է՝ 1923 թ. 2,52, 1924 թ. — 2,92, 1925 թ. — 3,53 և 1926 թ. — 3,69 տոկոս[1]։ Եթե Սովետական կարգերի հաստատման ժամանակ Հայաստանի բնակչության թիվը 700 հազար հոգի էր, ապա 1926 թ. տեղի ունեցած մարդահամարի տվյալներով այն հասել էր 881.290-ի[2]։ Այսպիսով, Սովետական իշխանության դոյության հինգ տարիների ընթացքում ռևսպուբլիկայում բնակչության քանակը աճել էր 181.290 հոգով, գլխավորապես բնական աճման միջոցով։

Բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության և սովետական ինտելիգենցիայի նյութական դրության բարելավման զուգընթաց, տեղի ուներ կուլտուրական վերելք, բարձրանում էր նրանց քաղաքական ակտիվությունը։

3. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՊ-ՈՒՄ 1921—1925 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Լուսավորությունը, կրթությունը, արվեստը և մասսաների քաղաքական դաստիարակությունը Կոմունիստական պարտիան և Սովետական պետությունը դիտում են որպես նոր մարդկանց՝ կոմունիստական հասարակություն կառուցող մարդկանց, բազմակողմանիորեն զարգացած մարդկանց ձևավորման միասնական, անբաժանելի պրոցես, որպես կոմունիստական հասարակության համար մղվող պայքարի ամենակարևոր հարցերից մեկը։ «Սովետական բանվորա-գյուղացիական ռևսպուբլիկայի մեջ լուսավորության գործի ամբողջ դրվածքը ինչպես քաղաքական-լուսավորական բնագավառում առհասարակ, այնպես էլ հատկապես արվեստի բնագավառում,— գրել է Վ. Ի. Լենինը,— պետք է տոգորված լինի պրոլետարիատի դասակարգային պայքարի ոգով՝ հանուն նրա դիկտատուրայի նպատակների հաջող իրագործման, այսինքն՝ հանուն բուրժուազիայի տապալման, հանուն դասակարգերի ոչնչացման, հանուն մարդու կողմից մարդու ամեն տեսակ շահագործման վերացման»[3]։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության տեղծից բոլոր անհրաժեշտ պայմանները մեր երկրում կուլտուրական հեղափոխության ծավալման, սոցիալիստական կուլտուրայի հարաճուն

[1] Խորհրդային Հայաստանը թվերով, վիճակագրական տեղեկատու, էջ 23։

[2] См. «Соц. строительство Арм. ССР», стр. 9.

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 388։

զարգացման համար, կրթությունը, դիտությունը. արվեստը բարձր հիմունքների վրա դնելու, նրանք ժողովրդական լայն մասսաների շահերին ծառայեցնելու համար, մարքսիզմ-լենինիզմի դաղափարները աշխատավորական մասսաների սեփականություն դարձնելու և կյանքում կենսագործելու համար:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի առաջին իսկ օրերից, որպես կուլտուրական շինարարության առաջնահերթ խնդիրներ տվյալ ժամանակաշրջանում, Վ. Ի. Լենինը Սովետական պետության և աշխատավորական մասսաների առաջ խնդիր դրեց ոչնչացնել բուրժուա-կալվածատիրական հին ապարատը նաև կուլտուրական բնագավառում և դրա փոխարեն ստեղծել նոր, սովետական ապարատ, նախորդ սերունդների առաջավոր կուլտուրական նվաճումները դարձնել ժողովրդական լայն մասսաների սեփականություն և բազմակողմանի, հետևողական և սիստեմատիկ աշխատանք ծավալել նյութական, կուլտուրական ու հոգևոր նոր արժեքներ ստեղծելու, այն հարաճուն կերպով զարգացնելու համար:

Այդ նպատակին ծառայեցին ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո Սովետական Ռուսաստանի կառավարության հրատարակած լենինյան դեկրետները մամուլի, ժողովրդական լուսավորության, անդրադիտության վերացման, գեղարվեստական հիմնարկների և դրադարանների ազգայնացման, գրքային ֆոնդի և դիտական արժեքների պահպանության ու կուլտուրական շինարարության մյուս հարցերի վերաբերյալ:

Կուլտուրական շինարարության մասին լենինյան այդ դեկրետների և նրանց կենսագործման ուղղությամբ Սովետական Ռուսաստանի կուտակած չորսամյա հարուստ փորձի հիման վրա Սովետական Հայաստանի կառավարությունն իր դոյության առաջին իսկ օրերից արմատական ձեռնարկումներ է կատարում ռևսպուբլիկայում կուլտուրական շինարարությունը կազմակերպելու և ծավալելու ուղղությամբ: Այս գործում առաջնահերթ խնդիրներ էին համարվում դպրոցական ցանցի, կուլտուր-լուսավորական հիմնարկների, մամուլի, հրատարակչական գործի, արվեստի և մյուս բոլոր կուլտուրական հաստատությունների արմատական վերակառուցումը, այդ բոլորը աշխատավորական մասսաների կոմունիստական դաստիարակության հզոր միջոց դարձնելը:

Հայաստանի Սովետական կառավարությունը հիմնովին ոչնչացնում է դպրոցական ցանցի ղեկավարման հին ապարատը, դպրոցը անջատում է եկեղեցուց և օրենքով արգելում է այնտեղ կրո-

նական առարկաների դասավանդումը[1], հոգևորականներին զրկում է դպրոցներում դասավանդելու իրավունքից[2]: Կառավարության դեկրետով ազդայնացվում են հոգևոր հաստատությունների պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները: Դեկրետում ասված է. «ՀՍԽՀ-ում գտնված բոլոր ազգությանց հոգևոր հաստատությունների պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գույքով համարվում են պետական սեփականություն և փոխանցվում են Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի անօրինության»[3]:

Առաջնորդվելով Կոմունիստական պարտիայի ծրագրով, ուր ասված է «լիովին իրագործել միասնական աշխատանքային դպրոցի սկզբունքները՝ կատարելով դասավանդումը մայրենի լեզվով, երկու սեռի երեխաներին միասին սովորեցնելով, անպայման աշխարհիկ, այսինքն որևէ կրոնական ազդեցությունից ազատ, ուսուցման և հասարակական-արտադրողական աշխատանքի միջև սերտ կապ հաստատելով, կոմունիստական հասարակության համար բազմակողմանի զարգացում ունեցող անդամներ պատրաստելով»[4], Սովետական Հայաստանի կառավարությունը, նյութական բավականին դժվարին պայմաններում, ձեռնամուխ է լինում նաև, սովետական դպրոցի կազմակերպման և նրա աշխատանքների ամրապնդման գործին:

Լիկվիդացնելով դպրոցական ցանցի ղեկավարման հին ապարատը, Սովետական Հայաստանի կառավարությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ դպրոցը հասարակության նեղ շրջանակներին՝ շահագործող դասակարգերի շահերին ծառայելու գործիքից գործիք ժողովրդական լայն մասսաներին սպասարկելու, նրանց կուլտուրական-քաղաքական մակարդակը բարձրացնելու, կոմունիստական հասարակարգի ակտիվ ու գիտակից կառուցողներ պատրաստելու կարևորագույն միջոց: Չնայած նյութական-ֆինանսական մեծ դժվարություններին, Սովետական իշխանությու-

---

[1] Տե՛ս «ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածուն», պրակ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 43:

[2] Նույն տեղում, էջ 44:

[3] Նույն տեղում, էջ 16:

[4] Համկ(բ)Կ ծրագիրը և կանոնադրությունը, Հայկոհրատ, Երևան, 1936, էջ 45:

680—22

նը ծավալուն աշխատանքներ սկսեց տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների ցանցի կազմակերպման և ամրապնդման համար։ 1914—15 ուսումնական տարում Հայաստանում եղել են 446 տարրական, 6 ոչ լրիվ միջնակարգ և 7 միջնակարգ դպրոցներ՝ 34.739 սովորողներով և 1146 ուսուցիչներով[1]։ Դաշնակների տխրահռչակ տիրապետության ժամանակ, նրանց ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով փակվեցին եղած դպրոցների խոշորագույն մասը։ 1919 թ. Հայաստանում մնացել էր միայն 166 դպրոց՝ 18.600 աշակերտով։ Այդ բոլոր դպրոցներն էլ գտնվում էին ծայրահեղ քայքայված վիճակում։ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման առաջին՝ 1921—1922 ուսումնական տարում մասսայական դպրոցների թիվը ռեսպուբլիկայում հասնում էր 506-ի, 1923—24 ուսումնական տարում՝ 649-ի, իսկ 1925—26 ուսումնական տարում՝ 758-ի[2]։ Այդ դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվը 1921—22 ուսումնական տարում եղել է 47,462, 1923—24 ուսումնական տարում՝ 58.508, իսկ 1925—26 ուսումնական տարում՝ 76.989[3]։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում, 1925—26 ուսումնական տարում, նախապատերազմյան շրջանի համեմատությամբ, տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների քանակը ավելացել էր մոտ 63 տոկոսով, նրանցում ընդգրկված աշակերտների թիվը՝ ավելի քան երկու անգամ, իսկ 1919 թ. համեմատությամբ, այդ նույն ուսումնական տարում Հայաստանում եղած դպրոցների թիվը ավելացել էր ավելի քան 4,5 անգամ, նրանցում սովորողների թիվը՝ 4 անգամ։

Ի հակադրություն նախկին դպրոցի, որը սովորողներին տալիս էր սահմանափակ գիտություն և պատրաստում էր շահագործող դասակարգերին հլու ծառաներ, սովետական դպրոցը առաջնորդվելով մարքսիստական-լենինյան գաղափարներով և դրանց հիման վրա կազմված նոր ծրագրերով, աշակերտությանը դաստիարակում է կոմունիստական ոգով։ Կառավարության որոշմամբ դասավանդումը դպրոցում սկսվեց տեղի ունենալ մայրենի լեզվով[4]։ Սահմանվեց

---

[1] См. «Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 гг.)», стр. 108, 109 и 112.

[2] «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 292։

[3] Նույն տեղում։

[4] Տե՛ս «ՀՍՀՀ Դեկրետների և հրամանների ժողովածու» պրակ 2-րդ, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 20։

ձրի ուսուցում։ Այդ բոլորով ավելի լայն հնարավորություն տրվեց բանվորներին, դյուղացիներին և աշխատավորական մյուս շերտերին ու նրանց երեխաներին բարձրացնելու իրենց կուլտուրական մակարդակը, տիրապետելու աշխարհում ամենաառաջավոր դիտությանը՝ սովետական դիտությանը։ Դպրոցական ցանցի այդպիսի ընդարձակումը, ձրի ուսուցման սահմանումը, մայրենի լեզվով դասավանդելը Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության խոշորագույն հաղթանակներից մեկն էր մեղ մոտ։

1921 թ. հունիսից ռեսպուբլիկայում հիմնադրվում է պատանի կոմունարների (պատկոմների) կազմակերպությունը, որը սկսում է խոշոր դեր կատարել պատանեկության մեջ՝ ուսուցման գործը լավ կազմակերպելու, դպրոցում դիտակցական կարգապահություն ամրապնդելու, պատանեկության դպրոցական և արտադպրոցական աշխատանքները բարելավելու, դպրոցին և ուսուցչությանը օգնելու գործում։ 1921 թ. պատկոմական կազմակերպության մեջ էին ընդգրկված՝ Երևանում 1600, Ալեքսանդրապոլում 500, Նոր Բայազետում 250, Ղարաքիլիսայում 100 պատանի[1]։ 1922 թ. մայիսին ձևավորվում է Համամիութենական պիոներական կազմակերպությունը, որի մեջ է ձուլվում՝ որպես նրա բաղկացուցիչ մասերից և ակտիվ չոկատներից մեկը, Հայաստանի պատկոմական կազմակերպությունը, այդ ժամանակվանից կրելով պիոներական կազմակերպության անունը։ Նույն թվականին պիոներների թիվը Երևանում հասնում էր 2000-ի, Ալեքսանդրապոլում 1000-ի։ Այդպիսի աճում է տեղի ունենում նաև ռեսպուբլիկայի մյուս գավառներում։ 1923 թ. ամբողջ ռեսպուբլիկայում պիոներական կազմակերպության անդամների թիվը հասնում է 4050-ի[2]։ Պիոներական կազմակերպության աշխատանքները դնում էին Կոմերիտմիության անմիջական ղեկավարության։

Նոր, սովետական դպրոցը իր խնդիրը կարող էր հաջողությամբ իրականացնել միայն այն դեպքում, երբ ապահովված լիներ անհրաժեշտ քանակությամբ և որակյալ ուսուցչական կազմով, երբ ուսուցչությունը, դպրոցի այդ հիմնական ու վճռական ուժը, հասկանար Սովետական իշխանության պատմական դերը և ակտիվ կերպով ընդգրկվեր սոցիալիստական շինարարության մեջ։ Սա-

---

[1] Տե՛ս «ՀՍԽՀ ժողովրդական Կոմիսարիատների 1921—1922 թթ. հաշվետվությունը», Երևան, 1923, էջ 125։

[2] Նույն տեղում, էջ 267։

կայն Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ շրջանից զգացվում էր մանկավարժական կադրերի խիստ պակաս։ Հին կադրերի միայն մի մասն էր համակրում Սովետական իշխանությանը։ Նրա որոշ մասը դեռևս տատանվում էր, իսկ մյուս մասը թշնամաբար էր տրամադրված Սովետական իշխանության նկատմամբ։ Ահա այդ պատճառով էլ հենց սկզբից Սովետական իշխանությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ առանձնահատուկ ուշադրություն է դարձնում մանկավարժական կադրերի, նրանց ընտրության, որակի բարձրացման ու դաստիարակության գործի վրա։ Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունները միաժամանակ մերկացնում և անհրաժեշտ հակահարված են հասցնում գաղակարդային թշնամու՝ դաշնակների, կուլակների և մյուս տականքների մեքենայություններին, որոնց նպատակն էր քայքայում առաջացնել ուսուցչության մեջ, նրան ուղղել Սովետական իշխանության դեմ, դրանով իսկ կազմալուծել նոր, սովետական դպրոցը։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին մասսայական դպրոցների արագ աճմանը զուգընթաց, խոշոր չափով աճել են նաև ուսուցչական կադրերը։ 1914—15 ուսումնական տարում Հայաստանի դպրոցներում աշխատել են 1146 ուսուցիչ։ 1921—22 ուսումնական տարում Սովետական Հայաստանում աշխատող ուսուցչության թիվը 1081 էր, իսկ 1925—26 ուսումնական տարում այն արդեն հասել էր 2232-ի[1]։ Այսպիսով, 1925—26 ուսումնական տարում, նախապատերազմյան շրջանի համեմատությամբ, Սովետական Հայաստանում ուսուցչության թիվը ևս կրկնապատկվել էր։ Ըստ որում ուսուցչական աշխատանքի առաջ էին քաշվել մեծ քանակությամբ նոր կադրեր բանվորների ու գյուղացիների զավակներից։ Այդ ևս խոշոր հաջողություն էր, որ ձեռք էր բերված աշխատավորական մասսաների կրթության բնագավառում։

Սակայն այդ ասպարեզում կային մի շարք լուրջ դժվարություններ։ Առանձնապես աչքի էր ընկնում այն փաստը, որ մանկավարժական կադրերի միայն չնչին մասը ուներ բարձրագույն կրթություն։ Նրանց զգալի մասը ուներ միջնակարգ կրթություն, իսկ որոշ մասն էլ՝ միջնակարգ[2], որը զգալի չափով աղղում էր դասավանդման որակի վրա։ Այդ մեծ բացը որոշ չափով լրացնելու նպա-

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ., ժողովածու, էջ 293։

2 Նույն տեղում։

տակով Հայաստանի Սովետական կառավարությունը 1921—1925 թթ. կազմակերպում է մի շարք դասընթացներ ուսուցիչների վերապատրաստման նպատակով: Այդ թվականների ընթացքում հանրապետությունում 2004 ուսուցիչներ անցել են վերապատրաստման կուրսերով: Սակայն դրանով հարցը չէր կարելի լուծել: Այդ միայն որոշ չափով կարող էր բարելավել դրությունը:

Եղած ուսուցչական կադրերին մասնագիտական միջնակարգ ու բարձրագույն կրթություն տալու և նորերը պատրաստելու նպատակով Սովետական կառավարությունը խոշոր ուշադրություն է դարձնում մանկավարժական տեխնիկումների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպման, նրանց աշխատանքի բարելավման գործին: 1923—24 ուսումնական տարում մանկավարժական տեխնիկումներ են բացվում Երևանում, Լենինականում և Սեւանավանում: Այդ գործում եղած պակասը լրացնելու նպատակով միջնակարգ դպրոցների վերջին դասարաններում դասավանդվում էին մանկավարժական առարկաներ: Միջնակարգ դպրոցների շրջանավարտների որոշ մասը ևս ուղարկվում էր մանկավարժական աշխատանքի:

1921—1922 ուսումնական տարում Երևանում և Ալեքսանդրապոլում բացվում են ինդուստրիալ տեխնիկումներ, որոնց առաջ խնդիր էր դրված ժողովրդական անտնտեսության աճող պահանջները բավարարելու համար պատրաստել միջին որակի տեխնիկական կադրեր: Այդ առաջին տեխնիկումները հաջողությամբ կատարում են իրենց խնդիրը:

Արտադրության մեջ աշխատող բանվորներին միջնակարգ կրթություն տալու նպատակով 1923 թ. Երևանում և Ալեքսանդրապոլում բացվում են բանվորական ֆակուլտետներ (բանֆակներ), որոնցում հենց սկզբից ընդգրկվում է հանրապետության այդ երկու արդյունաբերական կենտրոնների բանվոր երիտասարդության զգալի մասը: 1925—1926 ուսումնական տարում Երևանի բանֆակում սովորում էին 370, Լենինականի բանֆակում 320 հոգի[2]: Հետագա տարիներին ինչպես բանֆակների, նույնպես և նրանցում սովորողների քանակը ավելի է մեծանում: Այդ բանֆակները խոշոր դեր են կատարում բանվոր երիտասարդությունից ավելային կուլտուրական կադրեր՝ բանվորական ինտելիգենցիա պատրաստելու գոր-

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Ժողովածու, էջ 294:

2 Նույն տեղում, էջ 327:

ծում, կադրեր, որոնք հետագայում ավելի կատարելագործվելով, ակտիվ դեր են կատարում ռեսպուբլիկայում արտադրական-տեխնիկական աշխատանքներում, դիտության և կուլտուրայի բնագավառում, պարտիական և պետական ապարատի աշխատանքներում։

Ժողովրդական տնտեսության, լուսավորության և սովետական գիտության տարբեր բնագավառներում աշխատելու համար բարձր որակի մասնագիտական կադրեր պատրաստելու նպատակով Սովետական իշխանության կողմից կազմակերպվում և 1921 թ. հունվարի 21-ին իր աշխատանքներն է սկսում Երևանի Պետական համալսարանը՝ ռեսպուբլիկայի առաջին բարձրագույն դպրոցը։

Սկզբնական շրջանում համալսարանն ուներ երկու ֆակուլտետ՝ բնագիտական և հասարակագիտական — գրական։ 1922 թ. այնտեղ սովորում էին 490 հոգի։ Կազմակերպման առաջին շրջանում համալսարանը կանգնած էր մի շարք լուրջ դժվարությունների առաջ։ Պակասում էին ուսումնա-արտադրական հարմարությունները, ֆինանսական միջոցների մեծ պահանջ էր զգացվում, բարձրագույն դպրոցի համար չկար ազգային լեզվով գրականություն, բարձր որակի պրոֆեսորա-դասախոսական կազմի մեծ պակաս էր զգացվում և այլն։

Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության հոգատարության ու ձեռք առած լուրջ միջոցառումների շնորհիվ աստիճանաբար հաղթահարվում էին այդ և մյուս դժվարությունները։ Գնալով ավելի ընդարձակվում և ամրապնդվում էին Երևանի պետական համալսարանի աշխատանքները։ Նրա շուրջն են համախմբվում ռեսպուբլիկայի լավագույն գիտական կադրերը։ Բացի դրանից, կառավարության հրավերով սովետական մյուս ռեսպուբլիկաներից համալսարանում մշտական աշխատանքի են հրավիրվում մի շարք լավագույն մասնագետներ։

Սովետական իշխանության կողմից դեպի բարձրագույն կրթությունը և գիտությունը, դեպի գիտական աշխատողները ցուցաբերած մեծ հոգատարության և օգնության շնորհիվ Երևանի պետական համալսարանում իրենց մանկավարժական, գիտական-ստեղծագործական աշխատանքներն են ծավալում պատմաբան Հ. Մանանդյանը, լեզվաբաններ Հ. Աճառյանը, Գր. Ղափանցյանը, գրականագետ Մ. Աբեղյանը, որոնք հետագայում դառնում են անվանի գիտնականներ և ուրիշները։

---

1 Տե՛ս «ՀՍԽՀ ժողովրդական Կոմիսարիատների հաշվետվություն 1920—1922 թթ.», էջ 134։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի և ՍՍՌՄ կազմակերպման, սովետական ռեսպուբլիկաների, առանձնապես ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնության և ժողովրդական տնտեսության հաջող վերականգնման շնորհիվ դնալով բարելավվում էր Հայկական ՍՍՌ ֆինանսական-տնտեսական վիճակը: Դրան զուգընթաց արագ կերպով աճում էին Պետական համալսարանի ֆինանսական միջոցները և ուսումնա-արտադրական հնարավորությունները: Աճում էին նաև համալսարանի ֆակուլտետները, ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի քանակը: Այնտեղ ուսուցումը աստիճանաբար դրվում էր ավելի բարձր հիմունքների վրա: «Երկրի ընդհանուր տնտեսական բարգավաճման, Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Խորհրդային Ռուսաստանի եղբայրական աջակցության շնորհիվ,— ասված է ՀՍՍՌ Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի հաշվետվության մեջ,— համալսարանը կարողանում է թևակոխել իր գործունեության երկրորդ շրջանը, երբ հնարավորություններ են ստեղծվում կազմակերպելու բոլոր ֆակուլտետները, և գործնական աշխատանքներ տանելու համար ստեղծվում են փոքր ի շատե բարեհաջող պայմաններ ու նախադրյալներ»[1]:

1925—1926 ուսումնական տարում համալսարանն ուներ հինգ չորս ֆակուլտետները. 1. գյուղատնտեսական, 2. տեխնիկական, 3. բժշկական և 4. հասարակագիտական, որի մեջ մտնում էին պատմագրական, իրավաբանական և մանկավարժական բաժինները: Վերջինս իր հերթին բաժանվում էր ֆիզիկո-մաթեմատիկական, բիոլոգիական և պատմա-գրական մասերի[2]:

Այդ ուսումնական տարում համալսարանի բոլոր ֆակուլտետներում սովորում էին 1195 ուսանող[3]: Պրոֆեսորա-դասախոսական կազմի քանակը 104 էր, որից 10-ը պրոֆեսորներ էին[4]:

1925—1926 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանը տալիս է իր առաջին շրջանավարտները, թվով 37 հոգի, որից 15-ը գյուղատնտեսական, իսկ 22-ը հասարակագիտական ֆակուլտետից[5]:

Այն ժամանակ հանդիսանալով ռեսպուբլիկայի գիտական կադրերի պատրաստման ու գիտական մտքի կենտրոնը, Երևանի պե-

---

[1] «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Ժողովածու, էջ 305:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 306:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, էջ 307:

տական համալսարանը խոշոր դեր է կատարում գիտական և բարձրորակ մանկավարժական նոր կադրերի պատրաստման և սովետական գիտության տարածման գործում: Նա հանդիսացել է այն հիմքը, որից հետագայում աճեցին ռեսպուբլիկայի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ պյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական, պոլիտեխնիկական ինստիտուտները:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Հայաստանի Սովետական կառավարության կողմից ժողովրդական լուսավորության մեջ ներդրված դրամարկղերը տարեց-տարի ավելացել են: Այսպես, 1921—1922 ուսումնական տարում ՀՍՆՀ Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի գծով ծախսվել է 540.305 ռուբլի ոսկով, 1923—1924 ուսումնական տարում այդ գումարը կազմվել է 997.106 ռուբլի, իսկ 1925—1926 ուսումնական տարում 2.150.256 ռուբլի[1]: Այդ նշանակում է, որ 1921—1922 ուսումնական տարվա համեմատությամբ 1923—1924 ուսումնական տարում ռեսպուբլիկայում ժողովրդական լուսավորության մեջ ներդրված դրամարկղերը ավելացել էին մոտ երկու անգամ, իսկ 1925—1926 ուսումնական տարում՝ չորս անգամ:

Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ տնտեսական, քաղաքական կապերի ամրապնդման ղուրբնթաց, գնալով ավելի ու ավելի էին ամրապնդվում նաև կուլտուրական կապերը Սովետական ռեսպուբլիկաների միջև: Այդ գործում ևս առաջատար դերը պատկանում է ռուս մեծ ժողովրդին, որը ինչպես բոլոր ազգային ռեսպուբլիկաներին, նույնպես և Սովետական Հայաստանին մեծ օգնություն է ցույց տալիս կուլտուրական շինարարության գործում: Այդ օգնությունը արտահայտվում էր ֆինանսական-նյութական միջոցներով, դրականությամբ, դպրոցական պիտույքներով և այլն: Ռուսական առաջավոր կուլտուրայի բարերար ազդեցությամբ մեզ մոտ տեղի ունեցավ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի արագ զարգացում:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիների հենց սկզբից Սովետական Հայաստանի երիտասարդության զգալի մասը գործուղվում է Մոսկվա, Լենինգրադ և Սովետական Ռուսաստանի այլ քաղաքները, ինչպես նաև սովետական մյուս ռեսպուբլիկանե-

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 313:

րը՝ բարձրագույն կրթություն ստանալու համար: Ավարտելով ուսուցումը, նրանք վերադառնում են Սովետական Հայաստան՝ ակտիվ դեր կատարելով ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման, սովետական դիտության, տեխնիկայի ու կուլտուրայի զարգացման գործում: Այդ միջոցառումը նա դպրի չափով նպաստում է ազգային կուլտուրական կադրերի աճման գործին:

1921 թ. դեկտեմբերին Երևանում հիմնադրվում է Սովետական Հայաստանում առաջին երաժշտական ուսումնական հաստատությունը՝ երաժշտական ստուդիան: Աճելով և ամրապնդվելով, կարճ ժամանակամիջոցում նա ձեռք է բերում դպրի հաջողություններ, իր շուրջը համախմբելով լավագույն երաժշտագետներին: Կառավարության որոշմամբ 1923—1924 ուսումնական տարում այդ երաժշտական ստուդիայի բազայի վրա կազմակերպվում է Երևանի պետական Կոնսերվատորիան՝ ռեսպուբլիկայի երկրորդ բարձրագույն ուսումնական հաստատությունը:

Կոնսերվատորիայի կազմակերպումը մի նոր հաղթանակ էր ազատագրված հայ ժողովրդի կուլտուրական կյանքում:

Կոնսերվատորիայից բացի, այդ ժամանակ Սովետական Հայաստանում կազմակերպվում են մի շարք այլ երաժշտական հաստատություններ՝ կուլտուրայի տան համերգային բյուրոն, ռեսպուբլիկայի Ռադիո-հաղորդման Կոմիտեի երաժշտական բաժինը, Լենինականի երաժշտական ստուդիան և այլն,— որոնք, Կոնսերվատորիայի հետ միասին, խոշոր դեր են կատարում սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացման, այն աշխատավորական լայն մասսաների սեփականությունն դարձնելու գործում:

1921—1925 թթ. Սովետական Հայաստան են կենտրոնանում երաժշտական ինտելիգենցիայի նշանավոր գեմքերը՝ Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը, Ն. Տիգրանյանը, Սպ. Մելիքյանը, Ս. Տեր-Դևոնդյանը, Ս. Մանուկյանը և ուրիշները, որոնք ստեղծագործական նոր վերելք են ապրում, խոշոր չափով նպաստելով սովետահայ երաժշտական կուլտուրայի զարգացմանը: Մյուս կողմից, հանձին Երևանի կոնսերվատորիայի և Մոսկվայի ու Լենինգրադի կոնսերվատորիաների [1], խոշոր աշխատանք է ծավալվում հայկական

[1] Այդ տարիներին, ինչպես և հետագայում, մեծ քանակությամբ հայ երիտասարդներ սովորել և սովորում են Մոսկվայի, Լենինգրադի կոնսերվատորիաներում և երաժշտական այլ հաստատություններում:

երաժշտական նոր կադրերի աճեցման, ռեսպուբլիկայում նրանց ստեղծագործական աշխատանքների ծավալման ուղղությամբ։

Ստեղծագործ հայ ժողովուրդը նոր հնարավորություններ է ստանում զարգացնելու, առաջ տանելու իր երաժշտական կուլտուրան, այն ծառայեցնելով կոմունիստական հասարակության կառուցման շահերին։

1923 թ. կազմակերպվում է Երևանի Գեղարվեստական տեխնիկումը, ՀՍՍՌ Ժողկոմսովետի որոշմամբ 1925 թ. հիմնադրվում է Գիտության և Արվեստի ինստիտուտը։

1922 թ. նոյեմբերի 7-ին՝ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 5-րդ տարեդարձի օրը Երևանում բացվում է Պետական Հանրային գրադարանը[1], որը հետագայում վերանվանվում է Ա. Մյասնիկյանի անվամբ։ Այդ ժամանակ նրանում եղած գրքերի ընդհանուր քանակը հավասար էր 50.000-ի[2], իսկ 1925 թ. այնտեղ արդեն կար ավելի քան 200 հազար հատոր գիրք[3]։ Այդ գրադարանը դառնում է մայրաքաղաքի կուլտուրական կարևորագույն կենտրոններից մեկը։ Երիտասարդությունը մեծ հետաքրքրությամբ հաճախում է այնտեղ և օգտագործում եղած հարուստ գրականությունը։ Ըստ պաշտոնական տվյալների, այն ժամանակ, միջին հաշվով, ամիսը 9—10 հազար հոգի է հաճախել Ա. Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանը[4]։

Մասսայական գրադարաններ են կազմակերպվում նաև Լենինականում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Դիլիջանում և մի շարք այլ խոշոր կենտրոններում։ Այդ գրադարանները խոշոր դեր են կատարում աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացման գործում։

Այդ տարիներին շարունակվում էր Մատենադարանի ունեցած ձեռագրերի և պատմական խոշոր արժեք ներկայացնող մյուս ֆոնդերի կարգավորումը և նրանց հարստացումը նոր, կարևոր նյութերով, որոնք ձեռք էին բերվում ինչպես Հայաստանի տարբեր շրջաններից, նույնպես և սովետական մյուս ռեսպուբլիկաների, և հատկապես Սովետական Ռուսաստանի հայաբնակ վայրերից։ «Ձեռագրատունը հաջող կերպով շարունակում է հայերեն ձեռագրերի

---

[1] Տե՛ս «ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարիատների 1922—1923 թթ. հաշվետվությունը», էջ 233։

[2] Նույն տեղում, էջ 234։

[3] «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողվածու, էջ 314։

[4] Նույն տեղում։

հավաքման դործը,— ասված է ՀՍՍՌ Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի 1921—1925 թթ. դործունեության հաշվետվության մեջ։— Խորհրդային իշխանության օրոք՝ 1921—1925 թվականների ընթացքում, ավելացած ձեռագրերի միջին թիվը ներկայացնում է տարեկան 105 հատոր, մինչդեռ 1863-ից մինչև 1914—15 թթ. ավելացումը, խառն արխիվային նյութերի և պատառիկների հետ, տարեկան 52 հատոր է եղել»[1]։ Մատենադարանը միաժամանակ սկսում է ղգալի օգնություն ցույց տալ ձեռագրերի ուսումնասիրությամբ և հայ ժողովրդի պատմությամբ զբաղվող գիտնականներին։

1921 թ. հիմնադրվում է Երևանի պետական թանգարանը, որը արագ կերպով աճում և հարստանում էր նոր նյութերով և էքսպոնատներով։ 1925 թ. թանգարանն ուներ հնագիտական, ազգագրական, պատմական-գրական, numismatic և դեղարվեստական բաժիններ[2]։ Այդ տարիներին թանգարանը դգալի աշխատանք է կատարում կուլտուրական արժեքների հավաքման, պահպանման և նրանց ցուցադրման ուղղությամբ, հանդիսանալով մայրաքաղաքի կուլտուրական կարևոր օջախներից մեկը։

Հայաստանի Սովետական կառավարության որոշմամբ, 1923 թ. ապրիլին կազմակերպվում է Հայկական ՍՍՌ Պետկինոն, որը ձեռնամուխ է լինում աշխատավորության կինոսպասարկումը կազմակերպելու և լայնորեն ծավալելու գործին։ Այդ ժամանակ Երևանում հիմնադրվում են երկու կինո-թատրոն («Նաիրի» և «Պրոլետար»)։ Կինոթատրոններ են կազմակերպվում նաև Լենինականում, Դարաբլիխաչում, Դիլիջանում, Նոր Բայազետում, Ստեփանավանում և Գորիսում։ Բացի դրանից, սիստեմատիկ կերպով կինո նկարներ են ցուցադրվում Երևանի, Լենինականի և մյուս գավառանների բանվորական ակումբներում, որոնց թիվը այն ժամանակ հասնում էր 13-ի։ Այսպիսով, ռեպուբլիկայի աշխատավորության կինո սպասարկման գործը նոր, հաստատուն հիմքերի վրա է դրվում, որը հնարավոր տարիներին էլ ավելի է ծավալվում։

Ժողովրդական անտանության վերականգնման շրջանի վերջին տարիներին Հայաստանի Պետկինոն, որը 1924 թ. ապրիլից վերանվանվում է Պետուսկինո, սկսում է արտադրել առաջին կինոնկարները, որոնց մեջ հիշատակության արժանի է «Նամուս» կինոնկարը (ըստ վիպասան Շիրվանզադեի համանուն վեպի)։

---

1 «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 316—317։

2 Նույն տեղում, էջ 314։

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում կազմակերպված թատրոն և տեւական թատերական խումբ չի եղել: Ներկայացումները կրել են ոչ սիստեմատիկ ու պատահական բնույթ, որոնք կազմակերպվել են կամ սիրողներից ստեղծված տեղական խմբերի կամ ուրիշ վայրերից եկած այս կամ այն պերատանական խմբերի կողմից: Ինչպես կուլտուրական բնագավառի բոլոր հարցերը, նույնպես և թատրոնը, ավելի ճիշտ այդ ներկայացումները, անմատչելի են եղել աշխատավորության համար, մեծ մասամբ նրանք ծառայել են շահագործող դասակարգերին՝ թե՛ իրենց բովանդակությամբ և թե՛ իրենց խնդիրներով: Տալանդավոր դերասանական ուժերը մատնված էին անուշադրության, ոչ ոք նրանց մասին հոգ չէր տանում: Այդ պատճառով էլ ինչպես մյուս բոլոր բնագավառներում, նույնպես և թատրոնի ասպարեզում ժողովրդի ծոցից աճած տաղանդավոր դեմքերի խոշոր մասը ի վիճակի չէր զարգացնելու իր հնարավորությունները, այն ի սպաս դնելու աշխատավորական մասսաներին:

Միայն Սովետական իշխանության հաստատումով ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ պայմանները թատերական արվեստի զարգացման, այս բնագավառում ևս ժողովրդի ծոցից դուրս եկած տաղանդների հարաճուն աճման, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական թատերական կուլտուրայի ստեղծման համար, կուլտուրա, որը կոչված է ծառայելու կոմունիստական հասարակարգի կառուցման, նոր, սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության մեծ գործին:

ՀՍՍՌ ժողկոմսովետի որոշմամբ 1921 թ. օգոստոսին Երևանում հիմնադրվում է ռեսպուբլիկայում առաջին Պետական թատրոնը, որը հետագայում կոչվում է նշանավոր դրամատուրգ Գ. Սունդուկյանի անվամբ: Կազմակերպման առաջին իսկ շրջանից թատրոնն իր շուրջն է համախմբում տարբեր վայրերում գրված լավագույն դերասանական ուժերը: Հանձինս Երևանի Պետական թատրոնի, ստեղծվում է Սովետական Հայաստանի կուլտուրական օջախներից մեկը, որը խոշոր աշխատանք է կատարում աշխատավորության կուլտուրական սպասարկման, նրա կուլտուրական աճման գործում, նպաստելով նրա կոմունիստական դաստիարակությանը: 1921—1925 թթ. ընթացքում Երևանի Պետական թատրոնը մայրաքաղաքի և ռեսպուբլիկայի մյուս շրջանների աշխատավորների համար տվել է 482 ներկայացում, որոնց ներկա են եղել 164 հազար

հոգին։ Գ. Սունդուկյանի, Ա. Շիրվանզադեի, Դ. Դեմիրճյանի պիես-ներին զուգընթաց, թատրոնը այդ տարիներին բեմադրել է ռուսա-կան և եվրոպական կլասիկների մի շարք գործեր։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին, ռուսական սովետական դրականության բարերար ազդեցության տակ, տեղի է ունենում սովետահայ դրականության և դրամատուր-գիայի ձևավորումն ու զարգացումը։

Այս շրջանի սովետահայ դրականության նշանավոր դեմքերն են եղել Հ. Հակոբյանը, Հովհ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Հ. Հով-հաննիսյանը, Մ. Ալազին, Ստ. Զորյանը, Ե. Չարենցը, Շ. Ոկսրին-յանը, Ա. Վշտունին, Խնկո-Ապերը և ուրիշները, որոնք իրենց գրա-կան գործունեությունն սկսել էին նախքան սովետական կարգերի հաստատումը։ Սովետական կարգերի հաստատումով այս գրողների համար, գրողներ, որոնք ողջունեցին այդ կարգերի հաստատումը, ստեղծագործական նոր հնարավորություններ ստեղծվեցին։ Ժողո-վրդական տնտեսության վերականգնման տարիներին երիտասարդ սովետական գրողներից իրենց ստեղծագործություններով աչքի են ընկնում Ն. Զարյանը, Վ. Ալազանը, Գ. Սարյանը, Հմ. Սիրասը, Արաքսը և ուրիշները։

Մեզ մոտ սկիզբ է առնում պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանի գրականությունը, ձևով ազգային, բովանդա-կությամբ սոցիալիստական նոր, սովետահայ գրականությունը։ Հայ ժողովրդի պատմական զարգացման որոշ հարցերը և շահագործող-ների տիրապետության, հատկապես օտարերկրյա իմպերիալիստա-ների վարձկան գաղնակների տիրապետության ժամանակ Հայաս-տանի աշխատավորության ծանր վիճակը, իրենց ապագայի հա-մար նրանց մղած պայքարի առանձին հարցերը պատկերելուն զուգ-ընթաց, սովետահայ գրողները իրենց մի շարք նոր ստեղծագործ-ություններով արտացոլում են սոցիալիստական շինարարության ընթացքը ռեալ-պատկերում (Հ. Հակոբյան, Ե. Չարենց, Ն. Զարյան, Գ. Սարյան, Սարմեն և այլն)։ Բանաստեղծ Հակոբ Հակոբյանն իր ստեղծագործություններով հաջողությամբ արտացոլում է նաև արև-տեսական շինարարությունը եղբայրական սովետական ռեսպուբ-լիկաներում («Վալխավատոյ» պոեմը)։

Իրենց դեղարվեստական ստեղծագործություններով սովետա-հայ գրողները պատկերում են բանվոր դասակարգի աշխատանքա-յին սխրագործությունները, աշխատավոր մասսաների քաղաքական

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 318։

և կուլտուրական վերելքը, նրանց ակտիվացումը գյուղում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սոցիալիզմի թշնամիների դեմ մղվող պայքարի առանձին հարցերը, Կոմերիտմիության, պիոներական կազմակերպության աշխատանքները և այլն։ Այդ հարցերին զուգընթաց, սովետահայ գրականության հիմնական թեմաներից մեկն էլ դառնում է 1920—1921 թվականներին Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներում բանվորների և գյուղացիների հերոսական պայքարը։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին հրապարակ են գալիս նաև սովետահայ գրողների մի շարք դրամատիկական գործեր, ինչպես օրինակ, Ան. Վարդանյանի «Պարտիզանները», Լ. Սաղաթելյանի «Մի կտոր հողի համար», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ը և այլն։

Այդ տարիները նշանավոր են նաև նրանով, որ տեղի է ունեցել սովետահայ ժողովրդական բանահյուսության ձևավորումը և հրապարակ են գալիս արժեքավոր մի շարք ժողովրդական ստեղծագործություններ։ «Լենին փաշա» նշանավոր վիպերգը, ուր ցույց է տրված ժողովրդի անսահման վստահությունը, սերն ու նվիրվածությունը իր մեծ ազատարարի նկատմամբ, հայ ժողովուրդը ստեղծագործել է այդ տարիներին, թեև այն գրի է առնվել բ/չ ավելի ուշ շրջանում։ Բացի «Լենին փաշա»-ից, տվյալ ժամանակաշրջանում հրապարակ են եկել ժողովրդական մի շարք ստեղծագործություններ, որոնցում ժողովուրդը երգում է իր ազատությունը, նոր կյանքը, սովետական ժողովուրդների բարեկամությունը, մեր հաղթանակների կազմակերպիչ ու ոգեշնչող Կոմունիստական պարտիային։

Սովետահայ գրականության ձևավորումը և նրա հետագա զարգացումը տեղի է ունեցել թշնամական իդեոլոգիայի և նրա կրողների դեմ մղած անհաշտ պայքարում։ Այն ժամանակ ինչպես մյուս սովետական ռեսպուբլիկաներում, նույնպես և Սովետական Հայաստանում գոյություն ունեին տարբեր գրական կազմակերպություններ և խմբակներ՝ յուրաքանչյուրն իր «ալյատֆորմայով»։ Նրանց շարքերում կային տատանվող և նույնիսկ թշնամական տարրեր։ Թշնամական տարրերը իրենց դաղափարական զինանոցում ունենալով բուրժուական նացիոնալիզմի, տրոցկիզմի և վարոնսկիականության հայացքները, ամեն կերպ ձգտում էին քայքայել սովետական գրականությունը, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, ձախողել Կոմունիստական պարտիայի

քաղաքականության կենսագործումը գրականության, կուլտուրական շինարարության և, ամբողջությամբ վերցրած, սոցիալիզմի կառուցման գործում:

Այդ թշնամիների դեմ մղված պայքարում Հայաստանի Կոմունիստական պարտիան, Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ, ձեռք բերեց վճռական հաջողություններ՝ միերկացնելով և ջախջախելով նրանց, իսկ տատանվող տարրերին դրավելով Սովետական իշխանության կողմը:

Այդ պայքարում կարևորագույն նշանակություն ունեցավ ԻԿ(բ)Պ կենտկոմի 1925 թ. հունիսի 18-ի ծրագրային բանաձևը «Պարտիայի քաղաքականության մասին դեղարվեստական գրականության բնագավառում», որը հրատարակվեց «Պրավդա» թերթում նույն թվականի հուլիսի 1-ին: Պատմական այդ կարևորագույն փաստաթղթում հանրագումարի էին բերված պարտիայի ղեկավարությամբ նախորդ տարիների ընթացքում սովետական գրականության համար մղված պայքարի արդյունքները և ցույց էր տրված այն ուղին, որով ընթանալով, հետագայում պետք է էլ ավելի ծավալվեր ու զարգանար սովետական դեղարվեստական գրականությունը ամբողջ Սովետական երկրում: Որոշման մեջ առանձնապես նշված էր, որ դասակարգային հասարակության մեջ գրականությունը դասակարգային է, որից և բխում են սովետական գրականության որոշակի խնդիրները, որ սովետական գրականության մեջ պետք է ապահովել պրոլետարական իդեոլոգիան, գյուղացիական գրողներին և «ուղեկիցներին» կապել այդ իդեոլոգիայի հետ: Կենտկոմի որոշումը պարտիական կազմակերպությունների և սովետական գրողների ուշադրությունը հրավիրում է գրականության բնագավառում բուրժուական իդեոլոգիայի մնացորդների դեմ անողոր պայքարի և գրականության մեջ բոլշևիկյան ինքնագատության ծավալման անհրաժեշտության հարցերի վրա:

Սովետահայ գրականության ակզբնավորման և նրա հետագա զարգացման գործում խոշոր դեր է կատարել ռուսական սովետական գրականությունը՝ Մ. Գորկու, վ. Մայակովսկու և մյուս ականավոր գրողների ու պոետների ստեղծագործությունների բարերար ազդեցությունը, այն ստեղծագործական կապերը, որոնք հաստատվել էին Սովետական Ռուսաստանի, Հայաստանի ու սովետական մյուս ռեսպուբլիկաների գրողների միջև, կապեր, որոնք դնալով, ավելի ու ավելի ամրապնդվում էին ոչ միայն գրականության, այլև կուլտուրայի բոլոր բնագավառներում:

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում կազմակերպված հրատարակչական դործ գոյություն չի ունեցել: Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ շրջանից, մեծ անհրաժեշտություն առաջացավ կազմակերպելու հրատարակչական դործը, այն վերցնելու պետության ձեռքը և տպագիր խոսքի միջոցով օգնելու աշխատավորական մասսաների կոմունիստական դաստիարակությանը, սոցիալիզմի կառուցմանը: ՀՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշմամբ 1921 թ. հուլիսին կազմակերպվում է Ռևպուբլիկայի Պետական հրատարակչությունը (Պետհրատը): Հրատարակչական դործը ռևպուբլիկայում սկսում է վերելք ապրել, 1921 թ. մինչև 1925 թ. վերջը Հայկական ՍՍՌ Պետական հրատարակչության դծով լույս են տեսել 356 անուն քաղաքական, դիտական, դեղարվեստական դրքեր և դասագրքեր, մոտ երկու միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով[1]:

Սովետական կարդերի հաղթանակով կոմունիզմի դաղափարների, մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների պրոպագանդան դարձավ պետական խոշորադույն նշանակություն ունեցող դործ, Կոմունիստական պարտիայի կողմից մեր հրատարակությունների, պարբերական մամուլի, դպրոցների, դիտա-հետազոտական հիմնարկների առաջ դրված ամենալուրջ և ամենակարևոր խնդիրներից մեկը: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները բանվորների և դյուղացիների սեփականություն դարձնելու նպատակով, Հայաստանի Պետհրատը ձեռնամուխ է լինում մայրենի լեզվով այդ աշխատությունների հրատարակմանը: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ղգալի աշխատանք է կատարվել այդ ուղղությամբ: 1921 թ. հայերեն լեզվով լույս է տեսնում Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունը», 1922 թ. Մարքսի և Էնդելսի դրած «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», Վ. Ի. Լենինի «Պարենհարկի մասին» աշխատությունը, 1924 թ. Վ. Ի. Լենինի «Երիտասարդության մասին» ճառերի և հոդվածների ժողովածուն, ուր տպված են 19 հոդված և ճառ, «Կոոպերացիայի մասին» պատմական հոդվածը, «Մարքսի և մարքսիզմի մասին» հոդվածների ժողովածուն, Ի. Վ. Ստալինի «Լենինի մասին» ճառը, «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատությունը, «Կուսակցության 13-րդ համագումարի որոշումները», «Տրոցկիզմ թե լենինիզմ» աշխատությունը, 1925 թ. Վ. Ի. Լենինի «Ձևուցում

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 321:

ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ ս. պ. մասնակցության մասին։ Պրոլետարիատի կուսի նպատակը մեր հեղափոխության մեջ», «1905 թվի մասին», «Հունվարի ինը», «Նամակներ հեռվից», «Պետություն և հեղափոխություն» աշխատությունները, «Սոցիալիստական հեղափոխությունը և ազատվորության խնդիրները» ժողովածուն, ուր տպագրված են 18 հոդված և ճառ կամ որոշ հատվածներ նրանցից, այդ թվում «Երիտասարդության միությունների խնդիրները», «Էչեր օրագրից», «Մեր հեղափոխության մասին», «Լավ է քիչ, բայց լավ», «Կոոպերացիայի մասին» և այլն։ 1925 թ. Ի. Վ. Ստալինի աշխատություններից հայերեն լեզվով լույս են տեսել «Արևելքի ժողովուրդների համալսարանի քաղաքական խնդիրների մասին» և «Ռկպ 14-րդ կոնֆերենցիայի աշխատանքների արդյունքները» աշխատությունները[1]։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններից հայերեն լեզվով լույս են տեսել ավելի քան 70 անուն աշխատություն[2]։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հրատարակումը մայրենի լեզվով, որը հետագա տարիներին էլ ավելի լայն ծավալ է ընդունում, վճռական նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի աշխատավորների կոմունիստական դաստիարակության, նրանց քաղաքական ակտիվության բարձրացման, դասակարգային շնամու և նրա ամեն կարգի գործակալների՝ բուրժուական նացիոնալիստների, տրոցկիստների, պինովիևականների, բուխարինականների ու մյուս թափթփուկների դեմ մղվող պայքարում, ռևոլյուցիայի ժողովրդական տնտեսության հետագա վերականգնման և նրա հետագա բարգավաճման գործում։

Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ Հայաստանի Սովետական կառավարությունը, իր հաստատման առաջին իսկ օրերին ռևոլյուցիայում օրենքից դուրս հայտարարելով կոնտռևոլյուցիոն մամուլը, աշնչացնելով նրա օրգանները և տպագործնելով տպարանները, ձեռնամուխ է լինում նոր, սովետական մամուլի կազմակերպման և ամրապնդման գործին։ 1920 թ. դեկտեմ-

---

[1] Տե՛ս Լ. Բ. Մելքումյանի և Վ. Ն. Կարմենյանի կազմած «Մարքս, Էնգելս, Լենին, Ստալինի աշխատությունների հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիան», Պետհրատ, Երևան, 1950։

[2] Նույն տեղում։

բերի սկզբից Երևանում սկսում է հայերեն լեզվով լույս տեսնել ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի, Երևանի Քաղաքային Կոմիտեի և ՀՍՍՌ Ռևկոմի օրգան «Կոմունիստ» օրաթերթը, որը 1921 թ. մայիսից վերանվանվում է «Խորհրդային Հայաստան», իսկ 1940 թվականից՝ «Սովետական Հայաստան»:

1925 թ. ռեսպուբլիկայում հայերեն լեզվով լույս էին տեսնում տասնյակ թերթեր և ամսագրեր, բազմահազար տիրաժով[1]:

Այդպիսի մեծ մասշտաբի հրատարակությունների համար Սովետական Հայաստանն այն ժամանակ դեռևս չուներ անհրաժեշտ նյութական բազա՝ պոլիգրաֆ արդյունաբերություն, թուղթ և այլն: Այս հարցերում ևս հայ ժողովրդին մեծագույն եղբայրական օգնություն է ցույց տալիս ռուս մեծ ժողովուրդը, Սովետական Ռուսաստանի կառավարությունը՝ Հայաստան ուղարկելով մեծ քանակությամբ տպագրական սարքավորում, թուղթ և այլ անհրաժեշտ նյութեր:

Կոմունիստական պարտիայի կողմից սովետական մամուլի առաջ դրված կարևորագույն խնդիրների կենսագործման ուղղությամբ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին սովետահայ պարբերական մամուլը նշանակալից աշխատանք է կատարել: Նա սիստեմատիկաբար պրոպագանդել է մարքսիզմ-լենինիզմի դաղափարները, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության որոշումները, բշնամիների դեմ մղվող պայքարում աշխատավորական մասսաներին մոբիլիզացրել և համախմբել է պարտիայի շուրջը, պարտիայի ղեկավարությամբ մերկացրել է այդ բշնամիներին, բացահայտել մեր աշխատանքներում եղած թերությունները և սխալները, ծավալել անհաշտ պայքար հին մնացորդների դեմ, խոշոր չափով նպաստել աշխատանքային կարգապահության ամրապնդման, դեպի աշխատանքը նոր, սոցիալիստական վերաբերմունք ունենալու գործին և այլն: Այդ բոլորով նա մեծ չափով նպաստել է աշխատավորության կոմունիստական դաստիարակության կարևորագույն գործին, ակտիվ կերպով մասնակցել է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին, սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման ու սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարին: Այդ ուղղությամբ առանձնապես աշքի ընկնող գործ են կատարել «Խորհրդա-

[1] Տե՛ս Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության (1794—1934), կազմեց Գարեգին Լևոնյանը, Երևան, 1934, էջ 118—135:

յին Հայաստան», «Աշխատանք»[1], «Ավանգարդ»[2] և «Բանվոր»[3] թերթերը։

Ռևոլյուցիայում ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական շինարարության ծավալման, մայրենի լեզվով մեծ քանակությամբ քաղաքական գրականության, հատկապես մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հրատարակման և պարբերական մամուլի լայն ծավալման գործընթաց ընթացման նոր, ավելի բարձր շրջան է մտնում Հայոց լեզուն, որը Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի 9-ի դեկրետով ռևոլյուցիայում ճանաչվեց որպես պետական լեզու[4]։ Հայոց լեզվի զարգացման գործում վճռական դեր է կատարում ռուսական առաջավոր կուլտուրայի և ռուսաց լեզվի ազդեցությունը։

Ժողովրդի կուլտուրական զարգացման գործում անհրաժեշտ և դիմավոր նախադրյալը հանդիսանում է գրագիտությունը։

Ինչպես բոլոր մյուս ռևոլյուցիաներում, նույնպես և Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, կուլտուրական շինարարության ամենահիմնական հարցերից մեկը հանդիսացավ ժողովրդի միջից անգրագիտության վերացումը, խամարի և կուլտուրական հետամնացության վերացումը։

Սովետական կարգերի հաստատման առաջին շրջանում Հայաստանի բնակչության մոտ 60 տոկոսը անգրագետ էր։ Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ ռևոլյուցիայում ծավալուն աշխատանք է սկսվում անգրագիտության վերացման գործի քաղաքական մեծ կարևորությունը բացատրելու և այն ինչպես հարկ է կազմակերպելու, առաջ տանելու համար։ 1921 թ. սեպտեմբերի 21-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրատարակվում է ՀՍՍՌ ժողկոմսովետի դեկրետը ռևոլյուցիայում անգրագիտությունը վերացնելու մասին։ Այդ դեկրետի համաձայն 16—50 տարեկան հասակ ունեցող բոլոր անգրագետ և կիսագրագետ քաղաքացիները, ներառյալ նաև կարմիրբրանակայինները, պարտավոր էին սովորել

---

[1] Օրգան Հայաստանի Արհեստակցական Միությունների խորհրդի, լույս է տեսել 1922—1926 թվականներին։

[2] Օրգան Հկկմ Կենտկոմի և Երբադկոմի, սկսել է լույս տեսնել 1923 թվականից։

[3] Օրգան Հկ(բ)Կ Լենինականի Գավկոմի և Գավգործկոմի, սկսել է լույս տեսնել 1923 թվականից։

[4] Տե՛ս Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Պետհրատ, Էջմիածին, 1921, էջ 7։

հատուկ դպրոցներում՝ լիկկայաններում, գրագիտական խմբակներում, երեկոյան դպրոցներում և այլ օղակներում։ Դեկրետում սահմանվում էր, որ լիկկայաններում ու գրագիտական այլ խմբակներում սովորողների աշխատանքային օրը ուսուցման ընթացքում կրճատվում է երկու ժամով՝ պահպանելով ամբողջ աշխատավարձը։ Չնայած տնտեսական-ֆինանսական մի շարք դժվարություններին, Հայաստանի Սովետական կառավարությունը խոշոր միջոցներ է ներդնում անգրագիտության վերացման գործում։ Պարտիական ու սովետական ապարատից, Կոմունիստական պարտիայի անդամներից ու կոմերիտականներից մոբիլիզացվում են լավագույն ուժեր՝ անգրագիտության վերացման ճակատում աշխատելու համար։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ձեռք առած լուրջ միջոցառումների շնորհիվ ռեսպուբլիկայի ամբողջ հասարակայնության, հատկապես ուսուցչության և ինտելիգենցիայի մյուս շերտերի ուշադրությունը կենտրոնացվում է այդ կարևորագույն գործի վրա։ Անգրագիտության վերացման աշխատանքները գլխավորելու և այն կազմակերպված հունի մեջ դնելու նպատակով ռեսպուբլիկայի մասշտաբով կազմակերպվում է «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը, որը գավառներում ուներ իր բաժանմունքները։

Որպես արդյունք այդ բոլորի, Սովետական Հայաստանում լայն ծավալ է ընդունում անգրագիտության և կիսագրագիտության վերացման գործը, որը մեծ հաջողությամբ առաջ էր գնում։ 1922—1923 ուսումնական տարում ռեսպուբլիկայում եղել է 316 լիկկայան՝ 6403 սովորողներով և 322 ուսուցիչներով[1]։ Մեկ տարի հետո՝ 1923—1924 ուսումնական տարում լիկկայանների թիվը հասնում է 429-ի՝ 8499 սովորողներով և 398 ուսուցիչներով[2]։ Բացի լիկկայաններից, արագ կերպով աճում էին նաև կիսագրագիտության վերացման և երեկոյան դպրոցները։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջում՝ 1925—1926 ուսումնական տարում Սովետական Հայաստանում արդեն գործում էին 535 լիկկայան՝ 17.439 սովորողներով, 46 կիսագրագիտական դպրոց՝ 1385 սովորողներով, չորս երեկոյան դպրոց՝ 890 սովորողներով[3]։ Այդ ժամանակ ավելի քան

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Ժողովածու, էջ 309։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

500 ուսուցիչներ նահանգն կերպով աշխատում էին անգրագիտության և կիսագրագիտության լիկվիդացման բնագավառում։

Այդ բոլորին զուգընթաց ռևոլուցիկայի բոլոր գավառներում արագ կերպով ծավալվում էր կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցը, որպիսիք մինչռևոլուցիոնական շրջանում չեն եղել։ 1925 թ. Հայաստանում կար 328 խրճիթ-ընթերցարան, 37 ակումբ, 207 գրադարան, 13 թատրոն և 16 կինո[1]։ Այդ հիմնարկները ևս կուլտուր-լուսավորական բնույթի խոշոր աշխատանքներ են կատարել։

Հաղարավոր ու տասնյակ հազարավոր աշխատավորներ ստանալով գրագիտություն և բարձրացնելով իրենց կուլտուրական մակարդակը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, էլ ավելի ակտիվ և արդյունավետ կերպով շարունակում էին իրենց աշխատանքն ու պայքարը ժողովրդական տնտեսության վերականգնման, սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման համար։

1921—1925 թվականներին Հայկական ՍՍՌ-ում սկսված կուլտուրական ռևոլյուցիան, աշխատավորական մասսաների մեջ գնալի կուլտուրան ու գիտությունը սկսված այդ վերելքը էլ ավելի լայն հանգամով ու խորությամբ շարունակվում է հետագա տարիներին։

4. ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԸ. ՍՍՌՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ԿՈՒՐՍԸ

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Սովետական Միության բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հերոսական աշխատանքի շնորհիվ ավարտվում էր մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը հասնում էր նախապատերազմյան արտադրանքի մակարդակին։

Սակայն այդ մակարդակը դեռևս հետամնաց, ապրարային երկրի մակարդակ էր։ Երկրի ժողովրդական տնտեսության մեջ մանր, անհատական գյուղացիական տնտեսությունների արտադրանքը, ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսության արտադրանքը, դեռևս չափով ավելի էր, քան սոցիալիստական արդյունաբերության, ամբողջությամբ վերցրած սոցիալիստական սեկտորի արտադրանքը, չնայած վերջինիս անշեղ վերելքին։ Ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանի վերջում երկրի

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», ժողովածու, էջ 310։

ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի երկու երրորդը տալիս էր գյուղատնտեսությունը և միայն մեկ երրորդը՝ արդյունաբերությունը։

Անհրաժեշտ էր պատմական ամենակարճ ժամանակամիջոցում երկիրը ևնթարկել սոցիալիստական ինդուստրացման և դրա հիման վրա կենսագործել բազմամիլիոն մանր, անհատական գյուղացիական տնտեսությունների սոցիալիստական վերափոխությունը, գյուղը դնելով սոցիալիստական զարգացման ուղու վրա։ Առանց դրան անհնարին էր հետագա առաջընթացը կոմունիստական հասարակարգի կառուցման գործում։

Գնահատելով ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում Սովետական Միությունում սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերված հաջողությունների միջազգային բացառիկ նշանակությունը, հաջողություններ, որոնց շնորհիվ մեր երկրում հաստատված էր կայուն ստաբիլիզացիա, Ի. Վ. Ստալինը 1925 թվականի դեկտեմբերին ասել է. «...մեր սոցիալիստական շինարարության հաջողություններով մենք ցույց տվինք և ապացուցեցինք, որ բանվոր դասակարգը, տապալելով բուրժուազիային և իշխանություն իր սեփական ձեռքն առնելով, ընդունակ է վերակառուցելու կապիտալիստական հասարակությունը սոցիալիզմի հիմունքներով։ Այդ բանին մենք հասել ենք և այդ ոչ ոք չի կարող խլել մեզնից, ինչ էլ որ լինի։ Եվ այդ մի անգնահատելի հաջողություն է։ Որովհետև ի՞նչ է նշանակում այդպիսի հաջողության հասնել։ Այդ նշանակում է կապիտալիստական երկրների բանվորներին տալ հավատ իրենց ուժերի նկատմամբ. իրենց հաղթանակի հավատ։ Այդ նշանակում է նոր զենք տալ նրանց ձեռքն ընդդեմ բուրժուազիայի»[1]։

Այդ նոր իրադրության մեջ, երբ Սովետական Միության ժողովրդական տնտեսությունը արդեն մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին, ամբողջ սրությամբ դրվեց մեր երկրի զարգացման, նրա սոցիալիստական շինարարության հեռանկարների, բնույթի հարցը, սոցիալիզմի ճակատագրի հարցը Սովետական Միությունում։

Համաշխարհային պատմական նշանակություն ունեցող այդ հարցը Կոմունիստական պարտիան մշակել էր սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղած պայքարի ընթացքում։ Վճռական ու

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 388։

անհաշտ պայքար ծավալելով սոցիալիզմի ամեն տեսակի թշնամիների դեմ, հետևողականորեն պաշտպանելով և զարգացնելով, նոր տատիճանի հասցնելով մարքսիզմը, իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում Վ. Ի. Լենինը Կոմունիստական պարտիային դինեց մեկ երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին հզոր թեորիական զենքով։ «Լենինը պատմական ծառայությունն այն է, որ նա իմպերիալիզմը վերլուծելիս, հենվելով կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափության՝ իր հայտնաբերած օրենքի վրա, կատարեց պրակտիկ մեծ հայտնագործություն՝ ձևակերպեց ու հիմնավորեց իմպերիալիզմի համաշխարհային ճակատի շղթան նրա առավել թույլ օղակում ճեղքելու հնարավորության վերաբերյալ հանճարեղ հեռատեսությունը, այն հեռատեսությունը, որ սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է սկզբում մի քանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած, կապիտալիստական երկրում։ Դա սոցիալիստական ռևոլյուցիայի նոր, ավարտված թեորիան էր։ Նա հարստացրեց մարքսիզմը և այն առաջ շարժեց, առանձին երկրների պրոլետարների համար բացեց ռևոլյուցիան հեռանկար, աղատություն տվեց նախաձեռնությանը իր՝ ազգային բուրժուազիայի վրա դրոհելու դրծում, ամրապնդեց նրանց հավատը պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի նկատմամբ»[1]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը մեր երկրում ամբողջությամբ հաստատեց սոցիալիստական ռևոլյուցիայի մասին լենինյան թեորիայի ճշտությունը։ Ջինված մեկ երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին լենինյան թեորիայով, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ ստեղծված Սովետական պետությունը իր գոյության հենց սկզբից, Կոմունիստական պարտիայի դեկավարությամբ ձեռնամուխ եղավ մեր երկրում սոցիալիզմի կառուցմանը։

Սոցիալիզմի հաղթանակի հնարավորության հարցը մեր երկրում 1925 թվականին նորից բարձրացավ ոչ թե այն պատճառով, որ դրացվում էր նրա թեորիական հիմնավորման կարիքը, այլ կյանքի կողմից դրվեց որպես ամենօրյա տնտեսական շինարարության հրատապ հարց։ Ինչպե՞ս և ո՞ր չափով կարող էր անդրադառնալ ռևոլյուցիայի ձգձգումը կապիտալիստական երկրներում և

---

[1] Սովետական Միության Կոմունիստական պարտիայի հիսուն տարին (1903—1953), Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 17

կապիտալիզմի ժամանակավոր, մասնակի ստաբիլիզացիան Սովետական Միության տնտեսական և քաղաքական զարգացման ճանապարհի ու հեռանկարների վրա։ Ինչ ուղղությամբ և ինչպե՞ս պետք է ընթանար տնտեսական շինարարությունը մեզ մոտ։ Արդյո՞ք մեր երկրի սեփական ուժերով ու միջոցներով հնարավոր էր ապահովել սոցիալիզմի կառուցումը, թե մեզ վիճակված էր հող պատրաստացնել կապիտալիզմի համար։ Կապիտալիստական շրջապատման պայմաններում մեր երկրում սոցիալիզմի կառուցումը լիակատար էր լինելու, թե՝ վերջնական։ Այդ և դրանցից բխող մի շարք այլ հարցեր պահանջում էին պարզ ու որոշակի պատասխաններ։

Այդ բոլոր հարցերին Կոմունիստական պարտիան պարզ և որոշակի պատասխաններ տվեց, ընդգծելով, որ մեր երկրում սոցիալիստական տնտեսություն կարելի է և պետք է կառուցել, որովհետև դրա համար մենք ունենք բոլոր հնարավորությունները։ Կապիտալիստական շրջապատման պայմաններում մենք կարող ենք Սովետական Միությունում լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցել։

Մերկացնելով և ջախջախիչ հարվածներ հասցնելով մարքսիզմ-լենինիզմի ամեն տեսակի թշնամիներին՝ տրոցկիստներին, բուխարինականներին, զինովևականներին և մյուս թշնամիներին, Կոմունիստական պարտիան, Վ. Ի. Լենինի գործի մեծ շարունակող Ի. Վ. Ստալինի գլխավորած Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ, պաշտպանեց լենինիզմը և վերցրեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման վճռական կուրս։ Ի. Վ. Ստալինը ցույց տվեց, որ մեկ երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին խոսելիս, անհրաժեշտ է տարբերել այդ հարցի երկու կողմերը՝ ներքին և միջազգային։ Ներքին կողմ ասելով, պետք է նկատի ունենալ սոցիալիզմ կառուցող երկրի ներսում դասակարգերի միջև տեղի ունեցող փոխհարաբերությունները։ Միջազգային կողմ ասելով, պետք է նկատի ունենալ հարաբերությունները սոցիալիզմ կառուցող երկրի՝ Սովետական Միության և կապիտալիստական երկրների միջև։ Մեր երկրի բանվոր դասակարգը և գյուղացիությունն իրենց սեփական ուժերով կարող են տնտեսապես հաղթահարել երկրում եղած բուրժուազիային, վերացնել ներքին հակասությունները և իրականացնել լիակատար կոմունիստական հասարակություն։ Ինչ վերաբերում է խնդրի մյուս կողմին՝ սոցիալիզմ կառուցող երկրի և կապիտալիստական երկրների միջև գոյություն ունեցող հակասություններին, ինտերվենցիայի վտանգին,

ապա այդ հնարավոր է վերացնել մի շարք կապիտալիստական երկրներում պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակով։ Բանի դեռ գոյություն ունի կապիտալիստական շրջապատում, ինտերվենցիայի վտանգն անխուսափելի է։ Հնարավոր ինտերվենցիային հակահարված տալու համար սոցիալիզմ կառուցող երկիրն էլ ավելի պետք է ուժեղացնի բանվոր դասակարգի դիկտատուրան, նրա պինված ուժերը և պաշտպանության այլ միջոցները։

«Բայց դրանից հետևում է,— ասված է Համ(բ)Պ պատմության համառոտ դասընթացում,— որ ՍՍՌՄ-ում սոցիալիզմի հաղթանակը, որն արտահայտվում է տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայով և տնտեսության սոցիալիստական սիստեմի կառուցմամբ, այնուամենայնիվ չի կարող համարվել վերջնական հաղթանակ, քանի որ օտարերկրյա պինված ինտերվենցիայի և կապիտալիզմի ռեստավրացիայի փորձերի վտանգը մնում է չվերացված, քանի որ սոցիալիզմի երկիրը մնում է այդպիսի վտանգից չապահովված։ Օտարերկրյա կապիտալիստական ինտերվենցիայի վտանգը ոչնչացնելու համար պետք է ոչնչացնել կապիտալիստական շրջապատումը»[1]։ Սովետական Միությունում լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորության մասին այդ դրույթը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի 14-րդ կոնֆերենցիայի (1925 թ. ապրիլ) հայտնի բանաձևի հիմքը, որը սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր երկրում հաստատեց որպես պարտիայի գիտորոշում և օրենք, որը պարտադիր է նրա բոլոր անդամների համար։

Ջարդոցման հետագա շրջանում, նոր, հարուստ փաստերի հիման վրա Ի. Վ. Ստալինը դուրս եկավ, և պարտիան միահամուռ կերպով հաստատեց, որ մեր երկրում հնարավոր է նաև կոմունիստական հասարակության ավելի բարձր փուլի՝ կոմունիզմի լիակատար կառուցումը, որը ներկայումս իրականացվում է սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցման միջոցով։

Պարտիան առանձնահատուկ սրությամբ դրեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում բանվոր դասակարգի գլխավորության պյուղացիության ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը։

Մեր երկրում սոցիալիզմի հաղթանակի մասին Կոմունիստական պարտիայի այդ պարզ ու որոշակի դրույթները շմեկնաբան-

---

[1] Համ(բ)Պ պատմություն, Համառոտ դասընթաց, 1950, էջ 369։

ազդեցություն Լենինիզմի մոլի թշնամիների՝ տրոցկիստների, բուխարինականների և մյուսների վրա։ Կատաղաբար հանդես գալով պարտիայի դեմ, տրոցկիստները կրկնում էին Կոմունիստական պարտիայի կողմից մերկացված և դատապարտված իրենց հին դրույթները։ Նրանք ժխտում էին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, գյուղացիությանը դիտում էին որպես բանվոր դասակարգի հակառակորդ, թերագնահատում էին Սովետական Միության բանվոր դասակարգի սեփական ուժերը և նորից առաջ քաշեցին մենշևիկյան «պերմանենտ ռևոլյուցիայի թեորիան», ժխտելով սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մեր երկրում։ Բուխարինականները առաջ քաշեցին սոցիալիզմի մեջ բուրժուազիայի խաղաղ ներաճման «թեորիան», անտագոնիստական դասակարգերի խաղաղ համագործակցության թեորիան, որը ուղղված էր դասակարգերի և դասակարգային պայքարի մասին մարքսիստական-լենինյան թեորիայի դեմ։

Կոմունիստական պարտիան մեր երկիրը հաստատ կերպով առաջ տարավ սոցիալիզմի ուղիով։ Այս գործում պատմական նշանակություն ունեցան պարտիայի 14-րդ կոնֆերենցիայի և 14-րդ համագումարի որոշումները։

14-րդ կոնֆերենցիան իր որոշումներում նշեց, որ մեր երկրում սոցիալիստական շինարարության հիմնական օղակը երկրի ինդուստրացումն է, առանց որի անհնարին է հետագա զարգացումը։ Քննարկելով Ց. Ջերժինսկու զեկուցումը մետաղամշակման արդյունաբերության մասին, կոնֆերենցիան որոշեց, որ նախորդ տարվա համեմատությամբ 1924—1925 տնտեսական տարում Սովետական Միությունում մետաղամշակման արդյունաբերության արտադրանքը ավելացել է 26 տոկոսով։ Կոնֆերենցիան կոչ արեց պարտիական կազմակերպություններին և ամբողջ սովետական ժողովրդին էլ ավելի աչալուրջ լինել, բարձրացնել ղեկավարությունը սոցիալիզմի համար տեսակի թշնամիների դեմ մղվող պայքարում։

Պարտիայի 14-րդ կոնֆերենցիայի և 14-րդ համագումարի միջև ընկած ժամանակամիջոցում պայքարը պարտիայի ներսում ավելի սուր բնույթ ընդունեց։ Պարտիայի դլխավոր ծծի դեմ, նրա Կենտրոնական Կոմիտեի դեմ հանդես եկավ, այսպես կոչված, «նոր օպոզիցիան», որն իր շուրջն էր համախմբել բոլոր հակալենինյան տարրերը և քարոզում էր պարտիայի կողմից մերկացված ու ջախջախված տրոցկիստական օպոզիցիայի կոնտրռևոլյուցիոն պլատֆորմը։ «Նոր օպոզիցիայի» գլուխ կանգնած էին շտեյնբերգներ Զինովևը

և Կամենևը: «Նոր օպոզիցիայի» կոմինտերնիները ներքին և միջազգային բուրժուազիայի նոր ջոկատն էին, նրա գործակալությունը, որը սոցիալիզմի հնձամիներին ծառայում էր միշտ այնպես, ինչպես ամբողջ պատմության ու սովետական ժողովրդի առաջ գալոփարապես մերկացված տրոցկիստները: Քողարկված «ձախ» ֆրազներով և կեղծավորաբար ցույց տալով իրենց «անհամաձայնությունը» տրոցկիստների հետ, այդ վիժվածքները գործադրելով բոլոր տեսի միջոցները, ամենակատաղի կերպով պայքարում էին Կոմունիստական պարտիայի, նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի դեմ, ժխտելով մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորությունը, հյուսելով իրենց նենգ դավերը Սովետական պետության տապալման համար, մեր երկրում կապիտալիստական կարգերի վերականգնման համար: Նրանք նույնպես հույս ունեին պատակել պարտիան, ջլատել նրա միասնությունը, խորխորել պարտիայի ու սովետական ժողովրդի միջև հաստատված ամուր կապերը, քայքայել պարտիայի հեղինակությունը մասսաների մեջ և դրանով իսկ հասնել իրենց տեսր նպատակների կենսագործմանը: Սակայն այդ վիժվածքները խորտակեց սխալվեցին: Կոմունիստական պարտիայի շարքերը անսասան մնացին: Ամբողջ պարտիան և Սովետական Միության բոլոր աշխատավորները էլ ավելի կուռ շարքերով համախմբվեցին պարտիայի Կենտրոնական Կոմիտեի շուրջը՝ անշեղորեն կերտով առաջ ընթանալով սոցիալիզմի ուղիով:

Հայաստանի Կոմունիստական պարտիան Համ(բ)Կ Կենտկոմի և Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի զեկավարությամբ անհաշտ պայքար տարավ ընդդեմ տրոցկիստական-զինովևական օպոզիցիայի, որը Հայաստանի պայմաններում միահյուսվում էր բուրժուա-նացիոնալիստական-դաշնակցական կոնտրռևոլյուցիոն տարրերի հետ: Այդ պայքարում կուռ շարքերով համախմբվելով Ռկ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի շուրջը, Հայաստանի բոլշևիկները մերկացրին ու ջախջախեցին իրենց շարքերում խոկված տրոցկիստական-զինովևական-նացիոնալիստական թաիթիսևականերին և մոբիլիզացնելով ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորներին, հաջողությամբ առաջ տարան սոցիալիստական շինարարությունը:

1925 թ. զեկտեմբերին կայացավ Կոմունիստական պարտիայի 14-րդ Համագումարը, որը պատմական խոշորագույն նշանակություն ունեցող որոշումներ ընդունեց Սովետական Միության ինդուստրացման՝ որպես սոցիալիզմի կառուցման հիմնական ուղու, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հետագա ամրա-

պնդման, դրանով իսկ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման, պարտիայի շարքերի միասնության և մի շարք այլ կարևոր հարցերի մասին:

Կոմունիստական պարտիան իր 14-րդ համագումարին նկատի ունենալով մեծ հաջողություններով՝ ինչպես երկրի ներքին ու միջազգային դիրքերի ուժեղացման, նույնպես և իր շարքերի ամրապնդման տեսակետից: 13-րդ և 14-րդ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում պարտիան զգալիորեն ամրացել էր ոչ միայն կազմակերպչորեն, այլև գաղափարապես: Այն միահամուռ հակահարվածը, որ նա տվել էր և շարունակում էր տալ լենինիզմի թշնամիներին, ցույց էր տալիս նրա գաղափարական հարաճուն ամրապնդումը, նրա հզորացումը, որպես պրոլետարիատի դիկտատուրայի ղեկավար ուժի, որպես Սովետական Միությունում սոցիալիստական շինարարության կազմակերպչի և ոգեշնչողի:

Բնութագրելով Կոմունիստական պարտիայի մեծադույն դերը Սովետական Միության ներքին և արտաքին քաղաքականության հաջողությունների գործում, այն ժամանակ Ի. Վ. Ստալինն ընդծել է, որ «... այդ հաջողություններն անհնարին կլինեին, եթե մեր պարտիան կանգնած չլիներ խնդիրների բարձրության վրա, եթե նա չաճեր ու չամրանար: Պարտիայի՝ որպես ղեկավար ուժի նշանակությունն այս տեսակետից անսահման է: Պրոլետարիատի դիկտատուրան կիրառվում է ոչ թե ինքնահոսով, այլ, ամենից առաջ, պարտիայի ուժերով, նրա ղեկավարությամբ: Առանց պարտիայի ղեկավարության, կապիտալիստական շրջապատման արդի պայմաններում, պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կլիներ: Բավական է միայն տատանել պարտիային, թուլացնել նրան, որպեսզի մի ակնթարթում տատանվի ու թուլանա պրոլետարիատի դիկտատուրան»[1]:

Հավանություն տալով 14-րդ կոնֆերենցիայի որոշումներին Սովետական Միությունում մետաղամշակման, խոշոր արդյունաբերության զարգացնելու մասին, պարտիայի 14-րդ համագումարը, հետևողականորեն առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով Սովետական երկրում ծանր ինդուստրիան զարգացնելու անհրաժեշտության մասին, բազմակողմանիորեն քննարկեց այդ հարցը և իր պատմական որոշումներում, հակառակ տրոցկիստական-ինովևական վիժվածքների, նշեց Սովետական Միության ինդուստրիալ զար-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 7, էջ 378:

դայման ձանապարհը, պատմական ամենակարճ ժամանակամիջոցում մեր երկիրը ապրարային երկրից ինդուստրիալ, կապիտալիստական երկրներից անտեսապես անկախ և ինքնուրույն երկիր դարձնելու միջոցները։

Երկրի ինդուստրացման գործում պարտիան հսկայական նշանակություն է ունել ու տալիս է մեքենաշինությանը, արտադրության միջոցների արտադրության անընդհատ աճմանը։ «Արտադրության միջոցների արտադրության առաջին աճումն անհրաժեշտ է ո՛չ միայն այն պատճառով,— ասում է Ի. Վ. Ստալինը,— որ նա պետք է սարքավորումով ապահովի ինչպես իր սեփական ձեռնարկությունները, այնպես էլ ժողովրդական տնտեսության մնացած բոլոր ճյուղերի ձեռնարկությունները, այլև այն պատճառով, որ առանց նրան առհասարակ անհնարին է ընդլայնված վերարտադրություն իրականացնելը»[1]։

Առանց դրա օգնության, առանց մյուս երկրների ու նրանց ժողովուրդների կողոպտման, որը հատուկ է կապիտալիզմին, սեփական ուժերով պատմականորեն ամենակարճ ժամանակամիջոցում տնտեսական տեսակետից հետամնաց մեր հսկայածավալ երկրի ինդուստրացումը վիթխարի դժվարություններ էր ներկայացնում։ Սակայն Կոմունիստական պարտիան ցույց տվեց, որ այդ դժվարությունները հաղթահարելի են, որի համար մոբիլիզացրեց ամբողջ սովետական ժողովրդին և հաղթական կերպով նրան առաջ տարավ։

Ի հակադրություն կապիտալիստական երկրների, որ ինդուստրացումը կատարվում է բանվոր դասակարգի և գյուղացիության կողոպտման, գաղութային ժողովուրդների կողոպտման, պատերազմների և թալանի միջոցով կուտակված միջոցների հաշվին, Սովետական երկրում ինդուստրացման աղբյուրներն են հանդիսանում սոցիալիստական արդյունաբերությունից, տրանսպորտից, ներքին և արտաքին առևտրից, բանկերից ստացվող շահույթները, կոլվածատիրական-կապիտալիստական շահագործումից ազատագրված աշխատավոր գյուղացիության օգնությունը Սովետական պետությանը, իշխանության կողմից հետևողականորեն կենսագործվող խնայողության ռեժիմից ստացվող կուտակումները և ժողովրդի օգնությունը պետությանը վոխառությունների ձևով։

Ինդուստրացումը մեր երկրում իրագործվեց նոր, սովետական մեթոդով, որը արմատապես տարբերվում է ինդուստրացման կապի-

[1] Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում, Հայպետհրատ, Երևան, 1952, էջ 72։

տալիստական մեթոդից: Ինչպես ցույց է տվել Ի. Վ. Ստալինը, ին-
դուստրացումը կապիտալիստական երկրներում սովորաբար սկըս-
վում է թեթև արդյունաբերությունից, որովհետև նրանում քիչ ներ-
դրումներ են պահանջվում և կապիտալը ավելի արագ է շրջա-
պտույտ կատարում, հետևապես շահույթի ստացումն այնտեղ ավե-
լի հեշտ է, քան ծանր արդյունաբերության մեջ: Այդ պատճառով էլ
թեթև արդյունաբերությունը կապիտալիստական երկրներում դառ-
նում է ինդուստրացման առաջին օբյեկտը: Երկարատև ժամանակա-
միջոցից հետո միայն, երբ թեթև արդյունաբերությունը որոշ շա-
հույթներ է կուտակում, սկսվում է կուտակումների աստիճանական
տեղաշարժը ծանր արդյունաբերության մեջ, սկսվում է ծանր ար-
դյունաբերության շինարարությունը: Ինդուստրացման այդ ուղին
չէր կարող ապահովել սոցիալիզմ կառուցող երկրի արագ պար-
պացման բազմակողմանի պահանջները:

Մերժելով ինդուստրացման կապիտալիստական ուղին, Սովե-
տական Միությունը, առաջնորդվելով Կոմունիստական պարտիայի
որոշումներով, ինդուստրացումն սկսեց ծանր ինդուստրիայի ծա-
վալումից:

Առանց ինդուստրացման նոր, սովետական մեթոդի, որը հա-
մարձակորեն կենսագործվեց մեզ մոտ, անհնարին էր պատմական
պարպացման ամենակարճ ժամանակամիջոցում Սովետական Միու-
թյունը դարձնել ինդուստրիալ, տեխնիկապես հզոր և տնտեսապես
ինքնուրույն երկիր:

Սովետական Միության ինդուստրացման վիթխարի պլանը
պարտիայի շինամիների մեջ մեծ շփոթություն առաջացրեց, որով-
հետև նա գործնականում ցույց տվեց, որ Սովետական Միությունը
աներեր կերպով ընթանում է դեպի սոցիալիզմը և դրանով իսկ խոր-
տակեց այդ շինամիների հույսերը մեր երկրում կապիտալիզմի վե-
րականգնման մասին: Այդ պատճառով էլ Կոմունիստական պար-
տիայի շինամինները, որոնք 14-րդ համագումարի ժամանակաշըր-
ջանում համախմբվել էին «նոր օպոզիցիայի» մեջ, ավիններով դի-
մավորեցին մեր երկրի ինդուստրացման պլանը: Նրանք ջանքեր
չէին խնայում այդ պլանին հակադրելու իրենց «պլանը», ըստ որի
Սովետական Միությունը պետք է մնար կապիտալիստական երկըր-
ների համար հումք և մթերքներ արտադրող երկիր, ագրարային,
տնտեսապես հետամնաց, կապիտալիստական երկրներից կախման
մեջ գտնվող, այնտեղից մեքենայական սարքավորում ներմուծող
երկիր: Դրանով իսկ կապիտալիստական շրջապատման պայման-

նեղում մեր երկիրը՝ պրոլետարիատի դիկտատուրայի երկիրը կմնար անառնապես ու պաշտպանական տեսակետից թույլ և անզեն մի երկիր։ Հասկանալի է, որ նման պայմաններում անհնարին կլիներ պրոլետարիատի դիկտատուրայի գոյությունը, անհնարին կլիներ սոցիալիզմի կառուցումը և մեզ մոտ տեղի կունենար կապիտալիզմի ռեստավրացիա, որին և մղելին կերպով ձգտում էին տրոցկիստները, ինովլեականները, բուխարինականները, և մյուս թշնամիները։

«Նոր օպոզիցիայի» կողմից առաջադրված այդ «պլանը» Կոմունիստական պարտիայի, նրա պատմական 14-րդ համագումարի կողմից մինչև վերջ մերկացվեց, վճռական հակահարված ստացավ ու միահամուռ կերպով մերժվեց՝ որպես կապիտալիզմի ռեստավրացիայի պլան։

Ջինված 14-րդ համագումարի պատմական որոշումներով, սովետական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի, նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ Ի. Վ. Ստալինի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ մեր երկրի ինդուստրացման վիթխարի պլանի իրականացմանը։ Տնտեսության պլանաչափ (պրոպորցիոնալ) զարգացման օրենքի գործողության շնորհիվ Սովետական Միության բոլոր մասերում, բոլոր ազգային ռեսպուբլիկաներում, այդ թվում նաև Սովետական Հայաստանում, լայն ծավալ ընդունեց նոր շինարարությունը, սոցիալիստական ինդուստրիայի նոր ձեռնարկությունների կառուցումը։

Երկրի սոցիալիստական ինդուստրացման պլանի փայլուն կենսագործումով պատմական ամենակարճ ժամանակամիջոցում Սովետական Միությունը դարձավ ինդուստրիալ հզոր երկիր, հաղթանակած սոցիալիզմի երկիր։

ՎԵՐՋԱԲԱՆ

Գնահատելով Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո անցած 10 տարում՝ մինչև 1928 թվականը Սովետական Միությունում Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ կատարված հսկայական շինարարական աշխատանքները, Ի. Վ. Ստալինն ասել է. «Մինչև այդ ժամանակ մենք հարկադրված էինք զբաղվել ավերված արդյունաբերության վերականգնմամբ և առաջին համաշխարհային պատերազմի ու քաղաքացիական պատերազմի հետևանքով ստացած վերքերի բուժմամբ»[1]։

Առաջնորդվելով Ի. Վ. Ստալինի այդ դրույթով, անհրաժեշտ ենք համարում համառոտակի տալ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման հիմնական արդյունքները նաև 1926—1928 թվականներին, երբ ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, նույնպես և Սովետական Հայաստանում ոչ միայն ամբողջապես ավարտվել էին ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքները, այլև առաջին խոշոր հաջողություններն էին ձեռք բերվել երկրի սոցիալիստական ինդուստրացման գործում, երբ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն իրենց արտադրանքով զգալի չափով գերազանցում էին նախապատերազմյան մակարդակը։

1921—1925 թվականներին ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ձեռք բերած հաջողությունների հիման վրա 1926—1928 թվականներին նոր, ավելի լայն ծավալով շարունակելով ստեղծագործական աշխատանքները մեկ կողմից ժողովրդական տնտեսության վերականգնումը ամբողջապես ավարտելու, մյուս կողմից նորը կառուցելու, այդ տնտեսությունը ռեկոնստրուկցիայի ենթարկելու համար, Սովետական Հայաստանի բանվոր դա-

[1] *Ի. Վ. Ստալին, Ճառ Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1946 թ. փետրվարի 9-ին, Հայպետհրատ, 1950, էջ 15—16։*

սակարկը, աշխատավոր դյուղացիության և ինաելիգենցիան[1] կոմունիստական պարտիայի զեկավարությամբ նշանակալից հաջողություններ են ձեռք բերում:

Գյուղատնտեսության բնագավառում այդ հաջողությունները հանգում էին հետևյալին: Այդ ժամանակ ցանքատարածությունները Հայաստանում արդեն հասել էին նախապատերազմյան մակարդակին: Իսկ բերքատվության ընդհանուր արտադրանքը դեռևս չափով անցել էր 1913 թ. մակարդակը: 1928 թ. Սովետական Հայաստանի գյուղատնտեսության արտադրանքի ընդհանուր արժեքը կազմում էր 72,4 միլիոն ռուբլի, 1913 թ. 65,8 և 1919 թ. 11,3 միլիոն ռուբլու փոխարեն (1926—27 թթ. անփոփոխ գներով)[1]: Սովետական իշխանության ձեռք առած մի շարք միջոցառումների շնորհիվ — ոռոգելի տարածությունների ավելացում, ագրոտեխնիկական միջոցառումների բարելավումն և այլն,— այդ թվականին գյուղատնտեսության մի շարք կարևոր ճյուղերը իրենց արտադրանքով դեռևս չափով անցել էին նախապատերազմյան մակարդակը: Այսպես, 1928 թ. Հայաստանում մոտ 30 տոկոսով ավելի հացահատիկ է արտադրվել, քան 1913 թվականին[2]: Անասնապահության արտադրանքի ընդհանուր արժեքը նախապատերազմյան 27 միլիոն ռուբլուց 1928 թ. հասել էր 29,9 միլիոն ռուբլու[3]: Այդ նույն ժամանակամիջոցում կարտոֆիլի արտադրանքն ավելացել էր ավելի քան երկու անգամ, բամբակի արտադրանքը գրեթե մոտեցել էր 1913 թ. մակարդակին[4]: Որոշ չափով հետ էին մնում խոզաբուծությունը և այգեգործության մյուս ճյուղերը: Չնայած դրան, ինչպես տեսանք, ռեսպուբլիկայի գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը միասին վերցրած, 1928 թ. անցել էր 1913 թ. մակարդակը:

1928 թ. Սովետական Հայաստանում զգալի հաջողություններ էին ձեռք բերվել գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման գործում: Այդ թվականի հուլիսին ռեսպուբլիկայում արդեն կային 55 կոլտնտեսություն, որոնց մեջ ընդգրկված էին 1200 աշխատավորական տնտեսություններ[5]: Նրանց արտադրության

---

[1] См. «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 гг.)», стр. 47.

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում, էջ 51:*

680—24

հիմնական միջոցների արժեքը կազմում էր 1,1 միլիոն ռուբլի, իսկ ամբողջ ցանքատարածությունները հասնում էին 1400 հեկտարի[1]։

1926 թ. 30.566 չքավոր ու միջակ գյուղացիական տնտեսություններ ընդգրկված էին գյուղատնտեսական կոոպերացիայի պարզ ձևերի մեջ, 18.000 տնտեսություն վարկային ընկերությունների անդամ էին։ Իսկ 1928 թվականին՝ 1926 թվականի համեմատությամբ, կոոպերացված տնտեսությունների քանակը կրկնապատկվել էր[2]։

1926—1928 թվականներին ռեսպուբլիկայում զգալի չափով աճել էին սովխոզները՝ ինչպես իրենց քանակով, նույնպես և տրնտեսական-տեխնիկական կարողությամբ։ 1925 թ. եղած 4 սովխոզների փոխարեն 1928 թ. արդեն կային 15 սովխոզ, որոնք ունեին 8200 հեկտար հողային ֆոնդ, 1100 գլուխ անասուն։

Գյուղատնտեսության վերականգնման և նրա մեջ սոցիալիստական սեկտորի աստիճանական աճման ու ամրապնդման ղուգընթաց, 1928 թ. որոշ փոփոխություններ էին տեղի ունեցել նաև նրա տեխնիկական զինվածության գործում։ Եթե 1924—1925 թվականներին ռեսպուբլիկայում կային մի քանի տրակտորներ, ապա 1928 թ. նրանց թիվը հասել էր 166-ի, որոնց ընդհանուր կարողությունը հավասար էր 1807 ձիու ուժի։ Տրակտորների այդ քանակից 157-ը աշխատում էին սովխոզների ու սետական-կոոպերատիվ այլ տնտեսությունների և 9-ը կոլտնտեսությունների դաշտերում[3]։ Բացի դրանից, կոլտնտեսություններն ունեին 26 բարդ կալսիչներ, սովխոզները՝ 1։

Ճիշտ է, գյուղատնտեսության տեխնիկական զինվածության հսկայական պահանջի տեսակետից դրանք դեռևս չնչին մեծություն էին, բայց ակնառու կերպով ցույց էին տալիս, որ սոցիալիստական տնտեսությանը ուղեկցում է ժամանակակից և առաջավոր տեխնիկան, որ այդ սիստեմի հետագա անշեղ ու հաստատ առաջընթացն էլ ավելի է հզորացնելու մեր գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը։

1920—1928 թթ. Սովետական Հայաստանի գյուղատնտեսության մեջ կատարված կապիտալ ներդրումների գումարը կազմել է 17,8 միլիոն ռուբլի, որից 8,5 միլիոնը իռիգացիոն շինարարության համար, 5 միլիոնը սովխոզների և 4,3 միլիոնը այլ նպա-

[1] См. «Социалистическое строительство Армянской ССР», стр. 51.

[2] Հայգյուղկոոպի գործունեության հաշվետվությունը, Երևան, 1928, էջ 20։

[3] См. «Социалистическое строительство Армянской ССР», стр. 48.

տակների համար[1]։ Ոռոգման նոր սիստեմի շինարարության ծավալման և հին ջրանցքների վերանորոգման ու ընդարձակման շնորհիվ, 1928 թ. Հայաստանում ոռոգելի հողերի տարածությունը հասել էր 110,6 հազար հեկտարի՝ 1913 թ. 97 հազար և 1919 թ. 60,4 հազար հեկտարի դիմաց[2]։

1926—1928 թվականների ընթացքում արդյունաբերության վերականգնման և նրա ռեկոնստրուկցիայի ուղղությամբ կատարված աշխատանքներն իրենց արդյունքներով հիմնականում հանգում էին հետևյալին։ Շնորհիվ Հայաստանի բանվոր դասակարգի հերոսական աշխատանքներին ու ջանքերին, դասակարգ, որը այդ տարիներին զգալի չափով աճեց ու ամրապնդվեց, ռեսպուբլիկայի ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1927—28 արտադրական տարում մեծ չափով անցել էր նախապատերազմյան մակարդակը։ Դրամական արտահայտությամբ (1926—1927 թթ. անփոփոխ գներով) Սովետական Հայաստանի ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1927—1928 տնտեսական տարում եղել է 28,2 միլիոն ռուբլի՝ 1913 թ. 20,7 և 1919 թ. 1,7 միլիոն ռուբլու դիմաց[3]։ Այդ նշանակում է, որ 1913 թ. համեմատությամբ այն ավելացել էր 40 տոկոսով, իսկ 1919 թ. համեմատությամբ՝ ավելի քան 16 անգամ։ Ըստ որում, այդ 28,2 միլիոն ռուբլու 68,8 տոկոսը կազմում էր խոշոր արդյունաբերության արտադրանքը, իսկ 31,2 տոկոսը՝ մանր արդյունաբերության արտադրանքը[4]։

Այդ բացատրվում է նրանով, որ ժողովրդական տնտեսության վերականգնման ընթացքում մեկ կողմից զգալի չափով ընդարձակվել, ռեկոնստրուկցիայի էին ենթարկվել արդյունաբերական հին ձեռնարկություններից շատերը, մյուս կողմից ստեղծվել էին մի շարք նոր ճյուղեր, որոնց ընդհանուր արտադրանքը միասին վերցրած ոչ միայն ծածկում էր իր վերականգնումը չավարտած պղպձաարդյունաբերության բուռն պակասը, այլև ավելի էր տալիս նախապատերազմյան արդյունաբերության ընդհանուր արտադրանքի համեմատությամբ։

Նախկինում եղած ճյուղերի զուգընթաց, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին՝ մինչև 1928 թվականը Սո-

---

1 См. «Социалистическое строительство Армянской ССР», стр. 23.

2 Նույն տեղում, էջ 43։

3 Նույն տեղում, էջ 62։

4 Նույն տեղում, էջ 23։

վետական Հայաստանում ստեղծվել էին արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր՝ տեքստիլ, քիմիական, շինանյութերի, փայտամշակման, պոլիգրաֆի և օճառի[1]։ Արտադրանքի տեսակարար կշռով 1927—28 տնտեսական տարում Հայաստանի արդյունաբերության մեջ առաջին տեղը գրավում էր տեքստիլ արդյունաբերությունը, որը տվել է 6,7 միլիոն ռուբլու արտադրանք (արդյունաբերության ընդհանուր արտադրանքի արժեքի 19,4 միլիոն ռուբլուց), երկրորդ տեղը՝ սննդի-համի արդյունաբերությունը՝ 4,7 մլ. ռուբլի, այնուհետև՝ ալղնձի արդյունաբերությունը՝ 2,8 միլիոն ռուբլի, կաշվի մշակման արդյունաբերությունը՝ 1,5 միլիոն ռուբլի և այլն[2]։

Հայաստանի խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների տարեկան միջին քանակը 1913 թվականի 4956 հոգուց 1927—28 տնտեսական տարում հասել էր 6124-ի, որից 2645 հոգի աշխատում էին պղնձարդյունաբերության, 1629 հոգի՝ տեքստիլ արդյունաբերության, 467 հոգի սննդի-համի արդյունաբերության, 474 հոգի անտառարդյունաբերության, 265 հոգի պոլիգրաֆի արդյունաբերության մեջ և այլն[3]։

Ինչպես ցույց են տալիս թվերը, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին հանրապետությունում տեղի է ունեցել բանվոր դասակարգի դգալի աճ։ Դրա հետ միասին անշեղ կերպով ուժեղանում և ամրապնդվում էր բանվոր դասակարգի դերը երկրի քաղաքական և տնտեսական կյանքում։

1926—28 թվականներին, հանրապետությունում խոշոր չափով աճել էր սոցրանքաշրջանառությունը, որի մեջ սոցիալիստական սեկտորը՝ պետական և կոոպերատիվ առևտուրը իշխող էին հանդիսանում, իսկ մասնավոր կապիտալը չնչին դեր էր կատարում՝ այն էլ մանրածախ առևտրում։

Հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ 1921—1928 թթ. կատարվել է 73,1 միլիոն ռուբլու կապիտալ ներդրում, որից 27,2 միլիոն ռուբլին արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի մեջ, 17,8 միլիոնը՝ գյուղատնտեսության մեջ, 4,2 միլիոնը՝ տրանսպորտում, 12,2 միլիոնը՝ բնակարանային շինարարության մեջ և այլն[4]։

Չնայած ժողովրդական տնտեսության վերականգնման դար-

---

1 См. «Социалистическое строительство Армянской ССР», стр. 26.

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 29։

4 Նույն տեղում, էջ 19։

ծում ձևոք բերված այդ հաջողություններին, Սովետական Հայաստանը դեռևս շարունակում էր մնալ որպես ագրարային երկիր։ Վերականգնելով ծայրահեղ քայքայված ժողովրդական տնտեսությունը, նա նոր էր հասել նախապատերազմյան մակարդակին։ Հետևապես արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան հարաբերակցությունը դեռևս մնում էր անփոփոխ, ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի մոտ երկու երրորդ մասը կազմում էր գյուղատնտեսության բաժինը։

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության ագրարային վերականգնումը և սոցիալիստական շինարարության առաջին հաջողությունները անսպասելիորեն փայլուն կերպով ցույց տվեցին, որ սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը ձևոք բերելով իր ազատությունն ու անկախությունը և դառնալով իր հայրենիքի իսկական տերը, Սովետական Միության բազմազգ և բազմամիլիոն ժողովուրդների հարազատ ընտանիքում կերտում էր իր երջանիկ ապագան։

Կուսակցության համախմբված Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, Սովետական Հայաստանի աշխատավորները, ամբողջ Սովետական Միության բազմազգի և բազմամիլիոն աշխատավորության հետ միասին, շարունակում էին հերոսական աշխատանքը՝ հանուն նորանոր հաջողությունների սոցիալիստական շինարարության գործում։

Կոմունիստական պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ պատմական ամենակարճ ժամանակամիջոցում նրանք հասնում են խոշոր հաջողությունների։ Սովետական Հայաստանը դառնում է զարգացած սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության երկիր, Սովետական Մեծ Միության առաջավոր ռեսպուբլիկաներից մեկը։

РЕЗЮМЕ

Создание научной истории величайших социалистических преобразований в Союзе ССР и в отдельных национальных советских республиках, являющихся составной частью Советского Союза,— одна из важнейших задач, поставленных Коммунистической партией перед советской историографией.

Глубокое изучение и освещение истории социалистического строительства имеет большое актуальное значение для воспитания трудящихся масс на богатейшем опыте этого строительства, для умножения их патриотических устремлений и творческих дерзаний в борьбе за коммунизм.

На примере крупнейших коренных преобразований в Армении за годы Советской власти ярко видно, что дало осуществление мудрой ленинско-сталинской национальной политики Коммунистической партии армянскому народу, в прошлом веками угнетавшемуся чужеземными захватчиками и господствующими классами, обрекавшемуся ими на бесправие и гибель.

В славной истории созидательного труда армянского народа, в борьбе его за построение коммунистического общества, совместно со всеми народами нашей страны, важное место занимает первый период социалистического строительства — 1921—1925 годы.

В братской семье советских народов, под руководством Коммунистической партии, в исторически короткий срок армянский народ, преодолевая многочисленные трудности, сумел успешно завершить восстановление крайне разоренного народного хозяйства и тем самым проложить путь к дальнейшему развертыванию социалистического строительства.

Несмотря на большую важность и актуальность этой темы, у нас до сих пор мало занимались ее научной разработкой,

вследствие чего и очень мало опубликованных работ, а серьезного монографического труда по этому вопросу и вовсе нет.

В данной монографии «Советская Армения в период восстановления народного хозяйства (1921—1925 гг.)» мы ставили целью осветить начальный период экономического и культурного развития Советской Армении, показать творческий, созидательный труд рабочего класса, крестьянства и интеллигенции в деле восстановления разрушенной промышленности, сельского хозяйства и транспорта страны и развертывания культурного строительства.

История восстановления народного хозяйства Армянской ССР разработана нами в тесной связи с историей всего Советского Союза соответствующего периода, в свете нерушимой дружбы и братского сотрудничества народов нашей великой Родины. Вместе с тем показана роль великого русского народа в развитии и укреплении этой дружбы, его бескорыстная братская помощь рабочим и крестьянам Армении в годы восстановления народного хозяйства.

* * *

Армянский народ — один из древнейших народов Советского Союза. Его история охватывает около трех тысячелетий и отражает многочисленные тяжелые испытания и героическую борьбу народа за свою свободу и независимость.

В истории армянского народа самым тяжелым и кошмарным периодом явились 1918—1920 годы, когда в стране воцарилось кровавое буржуазно-националистическое господство агентов иностранных империалистов — дашнаков. Эти заклятые враги армянского народа своей внутренней и внешней авантюристической политикой вели страну и народ к неминуемой гибели.

Рабочие и крестьяне Азербайджана, Грузии и Армении, под руководством закавказских коммунистичекских организаций, сплачивая свои боевые ряды, поднялись, по примеру и с братской помощью великого русского народа, на решительную борьбу за победу Великой Октябрьской социалистической революции в Закавказье.

В ряде уездов Армении (в Александрополе, Дилижане, Нор Баязете, Зангезуре и других местах) имели место вооруженные выступления рабочих, крестьян и солдат против кровавого господства дашнаков. Вспыхнувшее в мае 1920 года крупное восстание, охватившее всю Армению, блестяще доказало необходимость и могучую силу революционного союза рабочих и крестьян Армении с рабочими и крестьянами России против объединенных сил контрреволюции. С помощью американских, английских и французских империалистов дашнаки подавили Майское восстание, но им не удалось сломить продолжавшуюся под руководством Коммунистической партии и все растущую борьбу народных масс за победу советского строя.

Борьба за Советскую власть в Армении достигла своего наивысшего уровня в конце ноября 1920 года. Восстание началось в Каравансарайском районе, где были сосредоточены главные революционные силы и штаб восставших. Под руководством Коммунистической партии вооруженное восстание, начавшееся 29 ноября, быстро развертывалось. В тот же день Революционный Комитет Армении объявляет Армению советской социалистической республикой.

По просьбе Ревкома Армении и по указанию В. И. Ленина XI армия Советской России оказывает братскую помощь восставшим. Кровавое господство злейших врагов народа — дашнаков—было окончательно свергнуто.

Утверждение советского строя в Армении явилось победой Великой Октябрьской социалистической революции на одной из отсталых окраин царской России. Этой исторической победой армянский народ был спасен от грозившей ему гибели, обрел свою свободу и независимость и вместе с другими советскими народами приступил к строительству социалистического общества.

В период установления Советской власти в Армении страна находилась в исключительно тяжелых условиях, вызванных полной экономической разрухой. Советская власть приступает к разрешению аграрного и национального вопросов, предпринимает крупные шаги и в области культурного строительства.

В Армении Советская власть была установлена в то время, когда Советская Россия переживала последний период военно-

го коммунизма. Следуя примеру Советской России и используя ее более чем трехлетний опыт, правительство Советской Армении с декабря 1920 года начало осуществлять политику военного коммунизма.

Спустя два с половиной месяца после установления Советской власти в Армении началась гражданская война, которая явилась важным этапом борьбы рабочих и крестьян Армении за упрочение Советской власти и завершилась их полной победой. Эта победа была бы невозможна без поддержки со стороны героической XI армии, без братской помощи Советской России и других советских республик. В ходе гражданской войны в Армении все более укреплялся военный, политический и хозяйственный союз армянского народа с великим русским народом и с братскими народами Закавказья.

Благодаря победе в гражданской войне территория Советской Армении полностью освобождается от вооруженных банд контрреволюции и создаются необходимые предпосылки для перехода к мирной работе по восстановлению народного хозяйства республики.

* * *

Вследствие колониальной политики царизма промышленность и сельское хозяйство Армении в прошлом находились на низком уровне развития. Первая мировая война 1914—1918 гг. принесла разорение многим странам, в том числе и Армении, по территории которой проходил один из фронтов войны.

Отсталая и малоразвитая экономика Армении в период дашнакского буржуазно-националистического господства (1918—1920 гг.) достигла крайнего упадка.

Унаследовав от старого строя разоренное хозяйство, Армения в первый период установления Советской власти, как выше отмечалось, находилась в тяжелом положении. В 1921 году в некоторых уездах республики продолжался голод, который повторился и в 1922 г. В Армении насчитывалось 200 тысяч беженцев и 50 тысяч сирот. Благодаря предпринятым правительством Советской Армении решительным мерам и оказанию братской помощи Советской Россией, голод не принял широких размеров и быстро был ликвидирован.

Используя внутренние затруднения страны, классовый враг вел бешеную борьбу против советского строя. Под руководством Закавказского краевого комитета РКП(б) Коммунистическая партия Армении проводит в этот период большую работу по мобилизации трудящихся масс и по разоблачению врагов Советской власти.

На основе исторических решений X съезда РКП(б) в 1921 году в Советской стране был осуществлен поворот от военного коммунизма к новой экономической политике. Если мудрая политика Коммунистической партии по осуществлению военного коммунизма укрепила военно-политический союз рабочего класса и крестьянства Советской страны и на основе этого была обеспечена победа над внутренними и внешними врагами, то новая экономическая политика, как единственно правильная политика в переходный период от капитализма к социализму, укрепила экономический союз рабочего класса и крестьянства, обеспечила победное шествие советской страны по пути построения социалистического общества.

Руководствуясь решениями X съезда РКП(б) и используя опыт Советской России, Коммунистическая партия Армении и правительство республики начинают осуществлять переход к новой экономической политике. На этом пути важнейшее значение имело программное письмо В. И. Ленина коммунистам Азербайджана, Грузии, Армении, Дагестана и Горской республики (апрель 1921 г.).

Мирные строительные работы по восстановлению народного хозяйства Армении получают новый размах со второй половины 1921 года. В этот период (в июле 1921 г.) проводится новое административное деление Армении с целью еще больше приблизить партийный и советский аппарат к массам. Благодаря развернутой кипучей работе Коммунистической партии Армении, республика в 1921 году успешно выполняет план поступления продовольственного налога. Делаются первые шаги по восстановлению сельского хозяйства и промышленности. Постепенно улучшается экономическое положение республики. Быстро растут и крепнут профессиональные союзы, которые тесно сплачивают массы на выполнение задач, поставленных Коммунистической партией.

В конце 1921 г. происходит замена ревкомов, являвшихся назначаемыми органами власти, избранными органами — Советами рабочих, крестьянских и красноармейских депутатов. Выборы Советов происходят успешно, при активном участии трудящихся масс.

Руководствуясь решениями X съезда РКП(б), Коммунистическая партия Армении в январе—феврале 1922 г. проводит проверку и чистку своих рядов, что в значительной степени способствует их укреплению.

Работа по восстановлению народного хозяйства Армении успешно продвигалась в условиях всемерной помощи, оказываемой правительством Советской России, братской помощи великого русского и других советских народов армянскому народу, в условиях всемерного укрепления дружбы и сотрудничества между ними.

* * *

Чувства дружбы и взаимопомощи народов нашей страны зародились в глубине веков, однако основы подлинной дружбы и братского сотрудничества были заложены в конце XIX и начале XX столетий, когда во главе революционного движения стала Коммунистическая партия. Под знаменем пролетарского интернационализма, в борьбе за социалистическую революцию, она тесно сплотила вокруг себя трудящихся всех народов России.

Со всемирно-исторической победой Великой Октябрьской социалистической революции все нации и народы нашей страны обрели свое освобождение, стали на путь свободной и счастливой жизни, и еще более укрепилось их политическое и экономическое содружество.

В новых условиях исторического развития страны, в результате победы Октябрьской социалистической революции, В. И. Ленин гениально обосновал новое отношение Коммунистической партии к вопросу о федерации, выдвигая необходимость организации федерации советских республик, как принципиально отличающейся от буржуазной федерации.

Руководствуясь принципами ленинско-сталинской нацио-

нальной политики Коммунистической партии и учитывая богатый опыт первого многонационального социалистического государства — РСФСР, советские республики Закавказья — Азербайджан, Армения и Грузия—с первых дней своего существования предпринимают серьезные шаги по установлению крепких государственных связей между собой и сотрудничества, по ликвидации пережитков национальной замкнутости и вражды, оставшихся от царизма и разгромленных буржуазно-националистических партий—дашнаков, меньшевиков и муссаватистов.

Государственное сближение братских республик Закавказья началось уже в 1921 году с заключения ряда договоров. Но, не довольствуясь подобными формами союза, основываясь на решениях Центрального Комитета партии и указаниях В. И. Ленина, республики Закавказья под руководством Кавказского бюро ЦК РКП(б) начинают подготовку организации Закавказской Советской Федеративной Социалистической Республики, образование которой было завершено в декабре того же года на первом Закавказском съезде рабочих, крестьянских и красноармейских депутатов, проведенном в Баку. Организация Закавказской Федерации происходила в беспощадной борьбе против буржуазных националистов, троцкистов, бухаринцев и других врагов партии и народа. Объединившись в Закавказской Федерации, Грузинская, Азербайджанская и Армянская советские республики еще более укрепили связи между собой и, через Федерацию, с Советской Россией и другими советскими республиками, еще шире развернули социалистическое строительство в крае.

После победоносного окончания гражданской войны в Советской стране повсеместно развертывается всенародное движение за организацию крепкого союза между всеми советскими республиками, за организацию Союза Советских Социалистических Республик. Это движение началось после победы Октябрьской революции и до конца 1922 года прошло три фазы развития: фаза военного союза (1918—1921 гг.), фаза дипломатического союза (1921—1922 гг.) и последняя, третья фаза, начавшаяся с середины 1922 года, когда была поставлена задача образования крепкого государственного союза между советскими республиками по всем линиям.

В декабре 1922 года на первом Всесоюзном съезде Советов происходит оформление СССР; съезд с большим воодушевлением принимает Декларацию и Договор. Организация СССР явилась новой блестящей победой ленинско-сталинской национальной политики Коммунистической партии, осуществлявшейся в непримиримой и решительной борьбе против местного национализма и великодержавного шовинизма, троцкистов, бухаринцев и других врагов.

Являясь одним из равноправных членов Закавказской федерации, через нее Армянская ССР, так же, как и другие республики Закавказья вошла в состав Союза Советских Социалистических республик. Исторический акт создания Союза ССР имел решающее значение для всех народов нашей страны, способствовал их бурному экономическому, политическому и культурному развитию.

Советский Союз достиг в 1922 году значительных успехов в деле восстановления народного хозяйства. Однако, несмотря на неуклонное продвижение вперед, пока еще имелся ряд серьезных трудностей. Коммунистическая партия и Советское правительство, сплачивая вокруг себя трудящихся страны и ведя непримиримую борьбу против внутренних и внешних врагов, твердо и непоколебимо осуществляли дело восстановления народного хозяйства, преодолевали имеющиеся затруднения.

Благодаря мудрой внешней политике Коммунистической партии и Советского правительства в 1923 году значительно укрепилось международное положение Советского Союза.

Успешно продвигались также работы по восстановлению народного хозяйства Армянской ССР. Расширились посевные площади, были проведены первые ирригационные работы, повысилась урожайность сельскохозяйственных культур и продуктивность животноводства. Улучшилось положение бедняцких и середняцких хозяйств. Проводилась значительная работа по организации и укреплению первых социалистических хозяйств— совхозов. Результаты первых достижений по восстановлению сельского хозяйства республики были продемонстрированы

на Всесоюзной сельскохозяйственной выставке в Москве в 1923 году, где было представлено 1000 экспонатов из Армении.

В области промышленности первые шаги были сделаны в 1922—23 гг. Было восстановлено производство вина, коньяка и спирта, обработки кожи и был дан ход развитию полиграфического дела, быстро продвигались работы по восстановлению железнодорожного транспорта. Определенные успехи были достигнуты также в области развертывания государственной и кооперативной торговли.

Результаты работы по восстановлению народного хозяйства республики были подытожены на третьем съезде Советов рабочих, крестьянских и красноармейских депутатов Советской Армении в декабре 1923 года.

21 января 1924 года скончался организатор Коммунистической партии и Советского государства В. И. Ленин. Все народы нашей страны, глубоко скорбя о тяжелой утрате, еще теснее сплотились вокруг Коммунистической партии и Советского правительства, продолжая под руководством Центрального Комитета Коммунистической партии, во главе с И. В. Сталиным, великое дело Ленина.

Выполняя заветы Ильича, трудящиеся Армянской ССР в братской семье народов Советского Союза, еще шире развертывая созидательную работу, успешно восстанавливали народное хозяйство республики. В 1924 году в области сельского хозяйства, по сравнению с предыдущим годом, посевные площади увеличились на 10 процентов, при этом больше всего увеличилась площадь под хлопком. Урожайность зерновых приблизилась к довоенному уровню. Значительно увеличилось общее поголовье сельскохозяйственных животных. Были начаты первые серьезные работы по организации простых форм сельскохозяйственного кооперирования. Развернулись ирригационные работы, большой размах приняло строительство Ширакского канала. Постепенно улучшалось положение бедняцких и середняцких крестьянских хозяйств, ликвидировалась беспосевность.

В 1924 году, благодаря финансовой помощи Союзного правительства, начинается восстановление основной отрасли промышленности Советской Армении — медной промышленно-

сти в Кафане и Алаверди. В том же году начинается плавка меди в Алаверди. Значительные успехи имелись и в области производства вина, коньяка, спирта и обработки кожи. Продукция полиграфических предприятий уже превзошла продукцию довоенного 1913 года на 35 процентов. Наряду с восстановлением промышленности с 1924 года начинается строительство новых отраслей промышленности (текстильная промышленность, производство стройматериалов и др.). Новые успехи были достигнуты и в деле восстановления железнодорожного транспорта.

Успешно развивается государственная и кооперативная торговля, постепенно вытесняя из рынка частный капитал.

Как во всем Советском Союзе, так и в Советской Армении, являющейся его составной частью, восстановление народного хозяйства шло в условиях острой классовой борьбы.

Коммунистическая партия Армении, тесными рядами сплачиваясь вокруг Закавказского Краевого Комитета и Центрального Комитета РКП(б), мобилизовала трудящихся республики на выполнение народнохозяйственных планов, продолжала непримиримую и решительную борьбу против злейших врагов социализма — троцкистов, бухаринцев, буржуазных националистов и др., обеспечивая дальнейший ход социалистического строительства в Советской Армении.

* * *

В течение пяти лет мирного строительства (1921—1925 гг.) Советский Союз достиг крупнейших успехов по восстановлению разрушенного народного хозяйства. Выпуск продукции промышленности и сельского хозяйства в СССР приблизился к довоенному уровню.

В промышленности и торговле серьезные успехи были достигнуты в борьбе против частного капитала. Укрепились командные высоты социалистического сектора в народном хозяйстве. Значительно улучшилось материальное положение трудящихся.

На основе успехов во внутренней жизни нашей страны еще

более укрепилось международное положение Советского Союза и выросло его влияние на международную жизнь.

Вместе с общими доситжениями по восстановлению народного хозяйства Советского Союза крупные достижения имели также Закавказская Федерация, в том числе и Советская Армения.

Благодаря самоотверженному труду рабочего класса, бедняцкого и середняцкого крестьянства и интеллигенции, в основном завершилось восстановление крайне разоренного народного хозяйства республики. В 1925 г. общая посевная площадь Советской Армении составляла 85,5 процента посевных площадей 1913 года и по сравнению с 1919 годом увеличилась более чем в 3,5 раза. В основных отраслях сельского хозяйства урожайность приблизилась к довоенному уровню. Ощутительные результаты были достигнуты в деле увеличения поголовья скота и повышения его продуктивности. В сельском хозяйстве начали заметную роль играть простые формы сельскохозяйственной производственной кооперации и кредитные товарищества. Непрерывно росли капиталовложения государства в сельское хозяйство республики, в основном направленные на ирригационные и мелиоративные работы.

Преодолевая многочисленные трудности, рабочий класс Армении под руководством Коммунистической партии достиг крупных успехов в восстановлении промышленности. Продукция всей промышленности республики в 1925 году составляла 75,5 процента промышленной продукции 1913 года.

Значительны были достижения также в области железнодорожного транспорта, советской государственной и кооперативной торговли, развертывания товарооборота между городом и селом. Неуклонно увеличиваясь, число рабочих и служащих достигло 27.000 человек.

Улучшились материально-бытовые условия трудящихся, повысилась реальная заработная плата рабочих и служащих, сократилось количество безработных. Крупные суммы были вложены государством в коммунальное строительство и в дело здравоохранения. Заметно улучшилось положение бедняцких и середняцких крестьянских хозяйств. Расширилась сеть учреждений здравоохранения и значительно улучшилась медицин-

ская помощь трудящимся. Одним из результатов улучшения материального положения трудящихся явился естественный рост населения республики, который в 1926 году составлял 3,69 процентов.

В восстановительный период крупные успехи были достигнуты и в области культурного строительства Советской Армении. По сравнению с довоенным периодом, в 1925/26 учебном году в республике количество неполных средних и средних школ увеличилось почти на 63 процента, количество учащихся в них — более чем в два раза; по сравнению с 1919 годом количество школ увеличилось в 4,5 раза, учащихся — в 4 раза. По сравнению с довоенным периодом удвоилось число учителей, дойдя до 2232 человек. Началась организация и развертывание сети техникумов, специализированных школ, рабочих факультетов (рабфаки). Были созданы и с большим успехом работали первые высшие учебные заведения Советской Армении — Ереванский государственный университет и Государственная консерватория. Кроме того, значительная часть молодежи республики училась в вузах Москвы, Ленинграда и других городов Советского Союза. Были организованы и действовали многочисленные научные и культурно-просветительные учреждения и разные очаги искусства и сделаны первые серьезные шаги по ликвидации безграмотности.

Под благотворным влиянием русской советской литературы происходит формирование и развитие армянской советской литературы. Укреплялись культурные связи армянского народа с великим русским народом и другими братскими советскими народами.

Организуется издательское дело, достигая большого подъема. Успешно развертывается работа советской печати.

Как во всем Советском Союзе, так и в Армянской ССР работы по восстановлению народного хозяйства и культурному строительству шли в обстановке острой классовой борьбы. В этой борьбе рабочий класс, трудящееся крестьянство и интеллигенция, тесными рядами сплачиваясь вокруг Коммунистической партии и Советского правительства, разоблачали и наносили решительные удары классовому врагу, его агентам-троцкистам.

Успешное восстановление народного хозяйства Советской Армении осуществлялось благодаря последовательному выполнению ленинско-сталинской национальной политики Коммунистической партии, в обстановке дружбы и братского сотрудничества советских народов, при бескорыстной помощи великого русского и других советских народов армянскому народу.

Организатором и вдохновителем побед социалистического строительства являлась Коммунистическая партия.

Успешно завершив восстановление народного хозяйства, советский народ, под руководством Коммунистической партии, твердо и уверенно шел по пути социалистической индустриализации страны.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբեղյան Մ.— 342
Աղիպրենկով Մ.— 16
Աթաբրենկյան Գ.— 74, 92, 96, 109
Ալազան Վ.— 349
Ալավերդյան Ս.— 23
Ամազասպյան — 46
Ամճաուլյան Հ.— 342
Ամրազի Մ.— 349
Ամրաքս — 349
Բահալդդին — 77, 89
Բաղդասարյան — 46
Բաղդասարյան Ա.— 94
Բաղդասարով — 18
Բաղրամյան Ի.— 109
Բաուեր — 192
Բնբրի-Սամի-բեյ — 78
Բուդաղյան Ա.— 100, 110
Գենիինա Է. Բ.— 197, 232
Գուրկի Մ.— 351
Դադասով — 46
Դարբինյան Ս.— 110
Դեմիրճյան Գ.— 349, 350
Դենիկին — 20, 111
Սասապով — 36,
Սրմոլենկո — 80, 83, 84, 110
Զարյան Ն.— 349
Զորյան Մա.— 349
Ինգելս Ֆ.— 189, 190, 352
Իվոյան Ս.— 62, 64
Քաղիանոսյան — 100
Քամանյան Ա.— 331
Քայլրով — 46
Քումանյան — 46
Քումանյան Հովհ.— 79, 80, 97, 349
Ժորդանիա Ն.— 86
Լենին Վ. Ի.— 7, 16, 21, 26, 27, 29, 30—32, 53—55, 57, 67, 71, 98, 125, 128—131, 137—143, 145, 146, 153, 154, 158, 170, 175, 176, 182—184, 186, 188, 190, 191, 194, 198, 201—203, 207, 208, 214, 215, 228, 233, 246, 253, 264, 267—273, 275, 276, 319, 322, 335, 336, 350, 352, 359, 360, 364, 367, 376, 378, 379, 380, 382
Լևոնյան Գ.— 354
Լլյոդ-Ջորջ — 78
Խաչատրյան Հ.— 110
Խնկո-Ապեր — 349
Խուշոյան Մ.— 298, 299
Կալինին Մ. Ի.— 167, 265
Կասյան Ս.— 29
Կամենյան Վ. Ն.— 353
Կաուցկի Կ.— 61
Կիրով Ս. Մ.— 21, 33, 68, 69, 163, 211, 213, 221, 225
Կլյուչնիկով Յու. Վ.— 226
Կոպան — 179
Կոլչակ — 111
Կուլբիշև Վ.— 286
Կուրդինյան Շ.— 349
Հակոբյան Հ.— 349
Հովհաննիսյան Լ.— 92
Հովհաննիսյան Հ.— 349
Չերժինսկի Ֆ.— 362
Պարիկյան Ա.— 110
Պարիոջանյան Բ.— 21, 23
Պափանցյան Դր.— 342
Պուկասյան Պ.— 21, 28
Մալիաշանով — 80
Մակարյան Ս.— 110
Մայակովսկի Վ.— 351
Մանանդյան Հ.— 342
Մանուկյան Ա.— 345
Մարտիրոսյան Ս.— 109
Մարքս Կ.— 189, 190, 352

Մելիք-Ղարագյոզյան — 46
Մելիք-Մուրադյան — 81
Մելիքյան Ռ.— 345
Մելիքյան Սպ.— 345
Մելքոմյան Լ. Բ.— 353
Միկոյան Ա. Ի.— 16, 21, 225
Միրիմանով — 81
Մխչյան Լ.— 85, 94, 95
Մյասնիկյան Ա. Ֆ.— 21, 38, 102, 104, 105, 109, 163, 165, 169, 179, 211, 213, 216, 235, 252, 273, 275, 346
Մոլոտով Վ. Մ.— 213
Մռավյան Ա.— 64, 125, 130, 170, 174, 217
Մուսայելյան Ս.— 21
Յարոսլավսկի — 243, 288
Նժդեհ — 72, 101, 107
Շահումյան Ս. Գ.— 14—16, 200, 201
Շեվալյե Ա.— 67
Շիրվանզադե Ա.— 347, 349
Շպրինգեր — 192
Չախոյան Գ.— 110
Չալխալյան Գ.— 109
Չարենց Ե.— 349
Չիչերին — 125
Պեպս — 23
Պիլսուդսկի — 226
Պողոսյան Ռ.— 100, 110
Ջափարիձե Ա.— 16
Ռուբեն — 72
Սաբախտարաշվիլի — 75, 86
Սաքանին Ա. Վ.— 226
Սաղաթելյան Լ.— 350
Սաշկով Գ.— 280
Սարգսյան Ս.— 64
Սարմեն — 349
Սարյան Գ.— 349
Սարուխանյան Հ.— 22
Սեմյոնով — 95
Սևյան Ե.— 21, 23
Սիրաս Հմ.— 349
Սպենդիարյան Ա.— 345
Ստալին Ի. Վ.— 7, 10, 11, 13, 14, 20, 23, 25, 26, 27, 31, 32, 47, 70, 71, 111, 131, 132, 136, 139, 141, 143, 149, 150, 170, 176, 181, 182, 186, 187, 190—193, 196—199, 201—203, 208, 209, 224, 230, 233, 234, 238—240, 245, 247, 248, 271, 272, 275, 294, 296, 297, 298, 300, 304, 317, 318, 320, 321, 322, 324—326, 353, 358, 360, 361, 364—366, 368, 382
Վարդանյան Ա.— 350
Վելիկանով — 105
Վիլսոն — 32
Վշտունի Ա.— 349
Վորոշիլով Կ. Ե.— 42
Վրանգել — 67
Վրացյան Ս.— 85, 86, 89, 90, 95
Տեր-Վահդյան Ա.— 345
Տիգրանյան Ն.— 345
Տիմչենկո — 81
Ուսուրյալով — 267
Փիրումով — 19
Քաջազնունի Հ.— 267
Քեմալ — 73
Քյազիմ Կարաբեկիր փաշա — 76, 89
Օլիճեցյան Ն.— 100, 110
Օհանյան — 46
Օրջոնիկիձե Ս.— 21, 33, 60, 62, 65, 68, 69, 85,, 86, 95, 97, 98, 109, 110, 130, 162, 163, 168, 211, 213, 214, 221, 225, 229, 231, 275, 288, 289, 290, 314
Ֆիշիևիչ — 94, 110

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազիա — 65
Ադրբեջան — 10, 14, 15, 20—22, 28, 31, 32, 34, 41, 42, 47, 50, 51, 61, 62, 66, 68, 71, 102, 105, 110, 111, 123, 129, 131, 132, 145, 161—163, 168, 177, 178, 187, 205—212, 214—223, 225, 226, 229, 230, 237, 252, 253, 273, 288, 322
Ախան — 61
Ալագյազ — 70
Ալավերդի — 33, 60, 62, 64, 113, 116, 259, 281, 284, 305, 331, 383
Ալեքսանդրոպոլ — 19, 21, 22, 26, 33, 38, 41, 49, 62, 68, 74, 89, 102, 117, 119, 121—126, 150, 156, 159, 161, 166, 180,, 181, 216, 258, 261, 262, 271, 330, 339, 341, 376
Ալեքսանդրովկա — 92, 96
Ախթալա — 62, 257
Ախալքյան — 102
Ախուռա — 82, 85, 93, 95—97
Աղդամ — 62
Աղհամզալու — 83
Աղջաղլաղ — 93
Աղփարա — 96
Ամերիկա — 26, 133, 181, 185, 224, 316
Ամրոմ — 62
Անգեղակոթ — 101, 106, 107
Անգլիա — 24, 26, 32, 66, 67, 78, 132, 133, 185, 186, 249, 288
Անդրկովկաս — 9, 10, 12—16, 20, 24, 25, 27, 35, 47, 50, 60, 67, 76, 73, 97, 101, 108, 111, 115, 124, 131, 135, 144, 145, 149, 150, 161—163, 165—167, 174—178, 189, 200, 205—217, 219—225, 227—233, 235, 237, 248, 273, 275, 289, 290, 293, 323
Անկարա — 76, 78, 123
Աշտարակ — 27, 44, 72, 80, 81—85, 93, 95, 98, 99, 112
Աչաջուր — 91
Ասլանյան — 82, 85, 93, 95, 96, 98, 112, 253
Աջարստան — 65
Ասիա — 104, 316
Ավդանստան — 134
Ավշար — 81
Արագած — 42, 70, 74, 81, 82
Արմանիս — 63
Արամուս — 82, 98
Արարատ — 98
Արևմտյան Եվրոպա — 167
Արմկ — 100
Բազարչայ — 101
Բաթում — 47, 156
Բաշ-Ապարան — 80, 92
Բաշ-Գյառնի — 39, 42, 70, 72, 74—76, 81—83, 99, 100, 127, 153
Բաշգյուղ — 82, 106
Բասարգեչար — 99, 299
Բարու — 13, 16, 21, 27, 33, 41, 50, 51, 78, 91, 95, 131, 156, 211, 221, 225, 229, 231
Բելոռուսիա — 187, 225, 226, 228, 230, 232, 233, 235, 237
Բեյուկ-Վեդի — 85, 92
Բիչանակ — 107
Բուրչալու — 60
Բուխարա — 31, 187, 227
Գերմանիա — 78, 133, 187, 224
Գյամրնդ — 82, 98
Գյանջա — 68, 69
Գյառնիբասար — 253
Գյոգակլու — 80
Գյոգլու — 88
Գնդեվազ — 101

Գորի — 65
Գորիս — 25, 107, 347
Գուրիա — 65
Դաղստան — 71, 145, 207, 253
Դանադիրմազ — 80
Դաշլու — 85
Դավալու — 81, 282, 307
Դարալագյազ — 39, 70, 72, 74, 81, 82, 85, 94, 97—99, 101—106, 112, 122, 150, 156, 180, 266, 299
Դմանիսին — 87
Դիլիջան — 17—19, 22, 27, 29, 38, 82, 88, 91, 92, 104, 122, 262, 266, 277, 334, 346, 347, 376
Դսեղ — 64
Դուշեթ — 65
Ելենովկա (Սևան) — 81, 82, 87, 91—93, 95—97
Ելիզովետոպոլ — 69
Ենգիջա — 85, 94, 106
Եվրոպա — 156, 316
Երանոս — 96
Երևան — 18, 30—32, 38, 41, 45, 51, 53, 56, 57, 59, 60, 67, 72, 74, 75, 77, 79, 80—86, 89, 90, 93—93, 97—100, 103—105, 107, 110, 112, 118, 121, 123, 130, 137, 148, 150—152, 156, 157, 159, 160, 162, 166, 167, 168, 176, 217, 226, 229, 230, 237, 243, 248, 251, 252, 255, 256—262, 264, 265, 270, 276, 278, 282—286, 288, 290, 299, 305—307, 311, 312, 317, 323, 330, 331, 333, 337, 339, 341—343, 345, 346—348, 353, 354, 359
Զակաթալա — 69
Զանգեզուր — 19, 22, 24, 25, 33, 41, 51, 59, 72, 75, 81, 92, 97, 99—108, 112, 151, 266, 376
Զանգիբասար — 104, 253
Զինջրլու — 94
Զոդ — 18, 19
Էլար — 82, 98
Էջմիածին — 27, 29, 38, 39, 45, 72, 80, 82—85, 87, 88, 95, 99, 112, 128, 146—148, 150, 151, 155, 156, 180, 253, 259, 261, 278, 317, 338, 355
Իտոննիա — 132
Իվչիլար — 254
Թալա — 91
Թալին — 87, 88
Թայբան — 94
Թավրիզ — 73, 156
Թեզկարաբ — 98
Թիֆլիս — 15, 47, 50, 60, 66—68, 73, 91, 95, 97, 98, 131, 149, 150, 156, 208, 212, 229
Թուրքմենստան — 237
Թյուրքահայաստան — 198—200
Թյուրքիա — 26, 28, 30, 76—78, 89, 90, 117, 123—126, 134, 161, 162, 200, 249
Իգդիր — 22
Իջևան — 22, 28, 41, 91, 95, 150, 189
Իտալիա — 189, 190
Իվանովո-Վոզնեսենսկ — 159
Լատվիա — 132
Իտալիա — 90, 134
Լեհաստան — 132, 189, 190
Լենինական — 19, 284, 285, 305, 306, 311, 317, 330, 331, 341, 345—347
Լենինգրադ — 197, 344, 345, 385
Լեչում — 65
Լիտվա — 132
Լոզան — 250
Լոնդոն — 78
Լոռի — 33, 61, 62, 64, 65, 78, 88, 91, 92, 119, 121, 150, 156, 180, 257
Լոռի-Փամբակ — 53, 277, 280
Լորուտ — 61
Խարկով — 232
Խորեզմ — 187, 227
Խոր-Վիրապ — 94
Ծաղկաձոր — 334
Կալինինո — 33, 258, 280
Կաղզվան — 22
Կարաբաղլար — 85, 94
Կարալար — 85
Կարայորան — 97
Կարս — 21, 22, 26, 30, 162

Կենտրոնական Եվրոպա — 190
Կիրովական — 22
Կոնգ — 84
Կոնֆուցիոսականություն — 156
Կովկաս — 14, 15, 50, 63, 65, 68, 74, 92, 105, 145, 146, 207, 208
Կոտայք — 85, 95, 99, 112, 253, 257, 299
Կոտայք-Բուլաղ — 63
Կրոնշտադտ — 136
Կուբան — 68
Հաագա — 186, 187, 238
Հաղպատ — 62
Համամլու — 93, 95, 96, 98
Հայաստան — 9—12, 14, 15, 17, 19, 20, 21, 24—39, 41—53, 55, 58—64, 66—83, 85, 86, 88—95, 99—111, 113—132, 144—146, 148, 150—175, 178—181, 184, 187, 199, 205—208, 210—212, 214—223, 225—227, 229—230, 233, 236, 237, 247, 251—256, 258, 259, 262, 263, 264—268, 273—278, 280—286, 288, 291—293, 295, 302, 304, 306, 307, 310—312, 314—317, 321—323, 327—334, 337—341, 344—348, 350—356, 363, 367—373
Հարավ-Օսեթիա — 65
Հնդավոր Արևելք — 187
Հյուսիսային Կովկաս — 20
Հնդկաստան — 36, 189, 249
Հունաստան — 21, 78, 190
Հունգարիա — 133, 189, 190
Ջաուջիկաու — 33
Ղասախ — 88
Ղաթար — 284
Ղամարլու — 45, 81, 83, 85, 88, 91, 92—96, 98, 99, 109, 130, 259, 282, 307
Ղաչաղան — 98
Ղարաբաղ — 102, 107
Ղարանլուղ — 96, 99
Ղարաբիլիսա — 22, 38, 46, 63, 64, 78, 88, 91, 92, 95, 119, 121, 150, 180, 229, 230, 305, 331, 339, 346, 347
Ղափան — 24, 25, 27, 107, 113, 116, 259, 281, 284, 305, 331,
Ղշլաղ — 92
Ղրխլուլաղ — 253
Ղուլալի — 92
Ճաթզուան — 82
Ճապոնիա — 78, 249, 288
Ճննոմա — 186, 187, 238
Մադրա — 107
Մալիշկա — 106
Մամախաթուն — 123
Մանևս — 54
Մարտունի — 96, 99
Մարքսվանք — 96
Մեղրի — 106, 107
Մերձավոր Արևելք — 25, 134, 181, 213, 249, 250
Միխայլովկա — 17, 18
Մհուր — 82, 257
Մոսկվա — 20, 78, 129—132, 161, 162, 187, 197, 224, 226, 232—234, 247, 258, 264, 269, 271, 344, 345, 368, 382, 385
Նախիջևան — 76, 82, 85, 102, 106, 229
Ներքին Ախտա — 45, 74, 81, 87, 95, 96, 112
Ներքին Աղջավայա — 298
Ներքին Նեջրու — 81
Նոմո-Միխայլովկա — 63
Նոմո-Նիկոլաևկա — 98
Նոմո-Պոկրովկա — 63
Նորադուս — 92
Նոր Բայազետ — 18, 19, 22, 27, 38, 70, 74, 81, 82, 85, 91, 93, 95, 96, 97, 106, 112, 150, 156, 180, 339, 346, 347, 376
Նորք — 84
Շահալի — 61—63
Շահթախթի — 76, 83
Շաղամի — 107
Շամխոր — 16
Շամշադին — 22, 27, 41, 91
Շիկահեր — 24
Շիրակ — 159, 254, 291
Շնող — 64

Շուրրուվաղ — 82—84
Շուշի — 69, 107
Ողջաբերդ — 82
Որթնավ — 98
Որնակ — 62
Չանախչի — 94
Չարբախ — 93
Չինաստան — 189, 190
Չոբուր — 98
Պոլսժչն — 179
Պրիվոլնոե — 63, 65
Չալալօղլի — 61, 63
Չանաթլու — 82
Չարխեջ — 91
Չուլֆա — 85
Ռատպոլո — 131
Ռնդամալ — 87, 96
Ռոստով — 131
Ռումինիա — 249
Ռուսաստան — 10—12, 14, 15, 21—24, 26, 27, 29, 31, 32, 34, 35, 43, 44, 47, 50, 51, 53, 55, 57, 58—62, 66, 70, 71, 74, 78—80, 102, 104, 110, 115, 120, 123—126, 129—135, 140, 144, 145, 154, 159, 161, 162, 167, 168—170, 173, 175, 178, 179, 180, 181, 187, 191, 194—200, 202—209, 212, 219, 224, 237, 247, 250, 261, 212, 219, 224, 226—228, 230, 231, 234, 237, 247, 250, 261, 262,, 288, 322, 325, 331, 336, 344, 346, 351, 354
Սամաղար — 88, 253
Սանահին — 62
Սարդարաբադ — 80, 253
Սարիղամիշ — 22, 26, 123
Սևան — 115
Սև Քար — 91
Սիսիան — 25, 102, 106, 107
Սպիտակ — 98
Սանիանավան — 33, 61, 341, 347
Սոսթում — 156, 229
Վաղարշապատ — 104, 298
Վեդի — 85, 88, 91—96, 98—100, 106, 109, 130
Վեդիբասար — 253, 317
Վերին Աղբաշ — 82, 83, 93, 94, 96
Վերին Նեջրլու — 81
Վերին Շենգավիթ — 93
Վլադիկավկազ — 33
Վորոնցովկա — 60, 63—65, 258, 280
Վրաստան — 12, 14, 15, 20, 32, 47, 49—51, 59—62, 64—69, 71, 75, 76, 88, 89, 91, 97, 102, 105, 110, 111, 129, 131, 132, 145, 150, 161, 162, 168, 177, 187, 205—212, 214—223, 225, 227, 229, 230, 237, 252, 253, 288, 322
Տարև — 100, 101, 107
Ուղրևկաստան — 237
Ուզունլար — 60, 64
Ուլուխանլու — 83, 93, 96
Ուկրաինա — 20, 135, 187, 225, 226, 228, 230, 232, 233, 235, 237
Փամբակ — 98, 156
Փարաբար — 157
Քանաքեռ — 81—84, 99, 100
Քարվանսարա — 22, 28, 29, 87, 90, 91, 96
Քեշիշքենդ — 82, 100, 106
Քերփլու — 82
Քեչիկ Վեդի — 85, 94
Քոլագերան — 62
Օշական — 44, 80, 258
Օրդուբադ — 106
Ֆինլանդիա — 132
Ֆրանսիա — 24, 26, 66, 67, 76, 78, 113, 132, 185, 186, 224, 249, 288

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան . . . . . 5—8

Գլուխ առաջին

Սովետական իշխանության հաղթանակը և ամրապնդումը Հայաստանում . . . . . 9—112

1. Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում . . . 9

2. Սովետական ապարատի կազմակերպումը։ Սոցիալիստական շինարարության առաջին քայլերը։ Ռազմական կոմունիզմ . . . 33

3. Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում 59

Գլուխ երկրորդ

Անցումը խաղաղ տնտեսական շինարարության . . . . . 113—188

1. Սովետական Հայաստանի դրությունը քաղաքացիական կռիվներից հետո 113

2. Անցումը նոր տնտեսական քաղաքականության 132

3. Խաղաղ շինարարության առաջին հաջողությունները. նվպի առաջին արդյունքները 148

Գլուխ երրորդ

Սովետական ռեսպուբլիկաների եղբայրական համագործակցության ամրապնդումը։ Անդրկովկասյան Ֆեդերացիայի և ՍՍՌՄ-ի կազմակերպումը . . . . . 189—242

1. Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները։ Ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության հարցը 189

2. Անդրկովկասյան ՍՍՌ Ֆեդերացիայի կազմակերպումը. Սովետական Հայաստանը Անդրկովկասյան Ֆեդերացիայի իրավահավասար անդամ 205

3. ՍՍՌՄ-ի կազմակերպումը. Անդրֆեդերացիան ՍՍՌՄ-ի իրավահավասար անդամ 223

Գլուխ չորրորդ

Ժողովրդական տնտեսության վերականգնման ընթացքը 1923—1924 թթ. 243—286

1. Սովետական երկրի ներքին և միջազգային դրության ամրապնդումը ՍՍՌՄ-ի կազմակերպումից հետո 243

2. Հայկական ՍՍՌ-ի հաջողությունները ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ 1922—1923 տնտեսական տարում։ Դասակարգային պայքարի սրումը 250
3. Վ. Ի. Լենինի հիվանդությունը և մահը. Հայաստանի աշխատավորության ավելի սերտ համախմբումը Կոմունիստական պարտիայի շուրջը 268
4. Ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ձեռք բերած հաջողությունները 1923—1924 տնտեսական տարում . . . 275

Գլուխ ինգերորդ

Հայկական ՍՍՌ-ն ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքի անցնելու ժամանակաշրջանի վերջում . . . 287—367
1. Ժողովրդական տնտեսության վերականգնման հիմնական արդյունքները 287
2. Հաջողությունները աշխատավորների նյութական բարեկեցության և առողջապահության գործի բարելավման բնագավառում . . 324
3. Կուլտուրական շինարարությունը Հայկական ՍՍՌ-ում 1921—1925 թվականներին 335
4. Մեր երկրում սոցիալիզմի կառուցման հարցը. ՍՍՌՄ սոցիալիստական ինդուստրացման կուրսը 357
Վերջաբան 368
Резюме 374
Անձնանունների ցանկ 387
Տեղանունների ցանկ 389



ԱՐՇԱՎԻՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

«Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.»

Պատ. խմբագիր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Հրատ. խմբագիր Վ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեխն. խմբագիր Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ Ա. Հ. ՇԱՂԴԱՄՅԱՆ

Տ Ց 12126։ Հշ 267։ Հրատ. 1172։ Պատվեր 680։ Տիրաժ 3 000։

Հանձնված է արտադրության 24/V—1955 թ.։
Տպագրված է տպարդության 4/VIII—1955 թ.։
Թուղթ՝ 60×92¹/₁₆։ Տպագր. 24,75 մամ., հրատ. 20 մամ.։
Գինը 12 ռ. կազմը 2 ռ.։

Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆպոլոգիանության գլխավոր վարչության Պոլիգրաֆիկոմբինատ, Երևան, Տերյան փ., № 91։

ԱՐՇԱՎԻՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆ

«Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.»

Պատ. խմբագիր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Հրատ. խմբագիր Վ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեխն. խմբագիր Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ Ա. Հ. ՇԱՂԴԱՄՅԱՆ

Պ Հ 12126։ Ինվ 267։ Հրատ. 1172։ Պատվեր 680։ Տիրաժ 3 000։

Հանձնված է արտադրության 24/V—1955 թ.։
Ստորագրված է տպագրության 4/VIII—1955 թ.։
Թուղթ՝ 60×92¹/₁₆։ Տպագր. 24,75 մամ., հրատ. 20 մամ.։
Գինը 12 ռ. կազմը 2 ռ.։

Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության Հրատարակչության պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆիկոմբինատ, Երևան, Տերյան փ., № 91։

In. 404.

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0014769

ЦЕНА
11347